[39] Alexandre Khatissian (1874-1945), maire de Tiflis depuis 1907, sera Président de l'Union des villes du Caucase et Premier Ministre de la République d'Arménie. Hovhannès Toumanian (1869-1923) est le plus aimé des poétes arméniens. Samson Haroutounian est un dirigeant du parti Populaire. Léo (Arakel Babakhanian) (1860-1935)

est un historien fécond à la manière de Michelet etc. Le Bureau a ses locaux dans un immeuble cossu, au n° 12 de la rue Lermontovskaïa, à Tiflis.

[40] Simon Vratsian, *Gianki Oughinérov* (Par les chemins de la vie), Beyrouth, 1963, t. 3, pp. 38-44.

[41] "Pisma I. I. Vorontsova-Dashkova Nikolaiu Romanovu, 1905-1915" (Lettres de I.I. Vorontsov-Dachkov à Nicolas Romanov, 1905-1915), *Krasnyi Arkhiv*, 1928, XXVI, pp. 118-120.

[42] Archag Tchobanian (1872-1954), poète,"ambassadeur des lettres arméniennes" en France où il est installé depuis 1893 (Edmond Khayadjian, *Archag Tchobanian et le Mouvement Arménophile en France*, Marseille 1986).

[43] Archives du Ministère des Affaires Etrangères, *Turquie NS XVI (nov 1912-avril 1913)*, fol. 80-81. Notons que la Question arménienne et sa relance par la Russie sont traitées dans le monumental ouvrage de documents diplomatiques publiés, à partir de 1929, par le Ministère des Affaires Etrangères français, sous l'autorité de la *Commission de Publication des Documents Relatifs aux Origines de la Guerre de 1914*, le point de départ étant le traité de Francfort (1871) et la problématique portant sur la formation des deux camps antagonistes, la Triple Alliance et la Triple Entente.

[44] Akabi Nassibian, *Pridania yèv Haygagan Hartse* (La Grande Bretagne et la Question Arménienne), Beyrouth 1994; Noel and Harold Buxton, *Travel and Politics in Amenia*, London, 1914.

[45] Dont les fameuses "*Statistiques du Patriarcat Arménien*" (1912), contreversées par les autorités ottomanes et les historiens turcs. Elles ont servi de base à l'ouvrage de Raymond Kévorkian et Paul Paboudjian, *Les Arméniens dans l'Empire Ottoman à la Veille du Génocide*, Paris, ARHIS, 1992.

[46] La Commission bénéficie des conseils de Mourad Boyadjian, de H. Chahrikian et de Krikor Zhorab (Gabriel Lazian, pp. 145-146); Vahan Papazian, *Im Houchère* (Mes Mémoires), Beyrouth, 1952, t. II, pp. 203- 266; Raymond Kévorkian, *Le Génocide des Arméniens*, Paris, Odile Jacob, 2006, pp. 194-195.

[47] André Mandelstam, *Le Sort de l'Empire Ottoman*, Lausanne, Paris, Payot, 1917. Dans cet ouvrage publié entre les deux révolutions russes de 1917, André Mandelstam, juriste et *drogman* de l'ambassade de Russie à Constantinople donne d'amples détails sur les minutieuses négociations entre les Puissances et le gouvernement ottoman, ainsi que le texte du projet final (inspiré de celui de 1895) dont il a été le rédacteur. Il est l'intermédiaire entre son ami Krikor Zohrab (1861-1915), célèbre, avocat, parlementaire, journaliste, écrivain arménien et les ambassadeurs de Russie de Giers, puis Goulkevitch. Ce que confirme le *Journal (Orakroutiunnèr)* de K. Zohrab (Albert Charourian (éd.), Krikor Zohrab, *Yérgèr* (Oeuvres), Erévan, 2004, t. IV).

[48] Grâce à Enver Pacha qui a repris la ville-symbole d'Edirné, le 22 juillet 1913.

[49] cf. Zaven Arkebs. (Archevêque), *Badriarkagan Houchèress. Vavérakirnère yèv Vgayoutiounnère* (Mes mémoires patriarcales: documents et témoignages), Le Caire 1947. L'archevêque Zaven (1868-1947) a été patriarche de Constantinople de 1913 à 1916, puis de 1919 à 1922.

[50] Mandelstam, p. 244.

[51] Destinée à soulever les musulmans des empires britannique, français et russe, cette *fatwa* n'aura pas une grande incidence à l'extérieur de l'empire ottoman, mais contribuera à rendre suspects les chrétiens vivant à l'intérieur de l'empire.

[52] Cf. Simon Vratsian, *Hayastani Hanrabédoutioun* (République d'Arménie), Paris, 1928.

[53] David Ananoun dresse un véritable réquisitoire contre cette politique (*op. cité*, pp. 540-596).

[54] Vratsian, *Hayastani Hanrabédoutioun*, pp. 38-44.

[55] Le 21-23 septembre 1914. Vratsian, *Hayastani Hanrabédoutioun*, Paris, 1928, p. 577 et sq.

[56] Léon Trotsky, *Les Guerres Balkaniques, 1912-1913*, Paris, ed. Science Marxiste 2002 (trad. fr. de l'édition russe, Moscou-Léningrad, 1926), pp. 250-267. Trotsky correspondant de guerre pour la presse socialiste russe parle avec admiration d'Andranik rencontré à Sofia à la tête de 250 volontaires arméniens.

[57] Zaven Arzoumanian, tome IV, livre I (1910-1930), pp. 140-141.

[58] Zaven Messerlian, "Kévork Hinkérort Gatoghigossi Hérakire yév Tachnakitsnérou Miatsial Haydararoutiune" (Le télégramme du catholicos Kévork V et la déclaration commune des membre de l'Entente), *Haigazian Armenological Review*, vol. 17, Beyrouth, 1997, pp. 117-125.

[59] Nom d'une province arménienne de l'empire ottoman traversée par le haut-Euphrate.

[60] Philippe Sukiasyan, "A Propos d'un Rapport Secret de Béria sur l'Eglise Arménienne", *Revue du Monde Arménien Contemporain*, 1995-1996, tome II, p. 117, note 1.

[61] Voir supra note 7.

[62] Cette entrevue prépare le *nerkaght* ou raptriement de 100 000 Arméniens de la diaspora en Arménie soviétique (1946-1947).

[63] Sandro Béhboutian (éditeur), *Vavérakrèr Hay Yégéghétsou Badmoutian* (Documents de l'histoire de l'Eglise arménienne) vol. V, *Mayr Ator Sourp Etchmiadzine Aratchin Hanrabédoutian Darinérin, 1918-1920*) (Le Saint-Siège Ste. Etchmiadzine durant la Première République, 1918-1920), Erévan, 1999, (560 p.); Avak Haroutounian, "Aménayn Hayots Gatoghigosoutioune; 1918-1920) Irèn Bédakan Tivavanakidagan Kordzounéoutioune" (Le catholicossat de tous les Arméniens; son activité diplomatique et politique dans les années 1918-1920), *Armenia Church and State*, Erevan 2000, pp. 164-183.

[64] L'hiver 1918-1919 fut apocalyptique en Arménie où le froid, la famine et les épidémies firent disparaître près d'un cinquième de la population.

[65] Richard Hovannisian, *The Republic of Armenia. The First Year 1918--1919*, University of California Press, 1971, pp. 460-463.

[66] Nigol Aghpalian (1875-1947), brillant représentant de l'intelligentsia dachnak. Cofondateur (1929) du *Djémaran* de Beyrouth où il enseigna jusqu'à sa mort.

[67] Behboutian, p. 282.

[68] Ibidem, pp. 273-276. Voir le très beau discours de l'évêque Karékine Hovsépian intitulé "*Rêve ou Réalité*".

[69] Ibidem, pp. 514-516.

[70] Ibidem, pp. 363-364.

[71] Claire Mouradian, "La Mémoire en République d'Arménie. Les Contraintes de la Politique", *L'Actualité du Génocide des Arméniens, Actes du Colloque Organisé par le CDCA, à Paris-Sorbonne, les 16, 17, et 18 avril 1998*, Préface de Jack Lang, Créteil, 1999, p. 273.

[72] Behboutian, pp. 481-482.

[73] Le 18 février 1921, une insurrection ramène les dachnaks au pouvoir à Erevan. Il y aura une deuxième soviétisation de l'Arménie, en avril 1921. Une tâche confiée par Lénine à Alexandre Miasnikian.

[74] Comité révolutionnaire bolchévik qui a proclamé la soviétisation de l'Arménie.

[75] Sur l'Eglise arménienne en URSS dans les années 20 et 30, cf. la série des documents d'archives publiés par Sandro Behboutian, *op. cité,(1921-1938)*, vol. I, Erevan, 1994.

[76] cf. Stépan Stépanian, *Hay Arakélagan Yégérétsin Sdalinian Prnabédoutian Orok* (L'Eglise apostolique arménienne durant les jours du despotisme stalinien), Erévan, 1993. Voir aussi les pages 741-748 du chapitre XVIII de l'*Histoire du Peuple Arménien*.

[77] Andranik Ozanian (1866-1927), le plus célèbre des *fédaïs* arméniens de l'Empire ottoman. La carrière mouvementée de cet homme courageux mais fruste, le mène des rang de la FRA à la tête du mouvement des Volontaires (1914). Nommé général par les Russes, il se bat sur tous les fronts contre les Turcs et les Azeris qu'il contribue avec sa Division Spéciale à chasser du Zanguézour. N'accepte pas la création de la République "caucasienne" d'Arménie (1918). Il est finalement éloigné du Caucase par les Anglais (printemps 1919). Il gagne la France, la Grande-Bretagne, puis les EU, demandant inlassablement la libération de l'Arménie turque. Il meurt à Fresno en 1927. Son corps transféré à Paris est enterré au Père-Lachaise (1928). Il sera transféré en Arménie et enseveli dans le "cimetière des héros" au début de l'an 2000!

[78] Lougachine (Srabonian Sarkis) (1883-1937), né à Nor-Nakhitchévan, diplômé de droit de l'Université de Saint-Petersbourg, marxiste de première heure, entré au POSDR en 1906, membre du Commissariat aux affaires arméniennes créé par Staline à Moscou (décembre 1917). Il est secrétaire du Comité central du PC d'Arménie (1921-1922). Premier Ministre (1922). Victime des purges staliniennes.

[79] Bibliothèque et Musée des manuscrits arméniens.

[80] Gazer, pp. 157-161.

[81] Un périodique illustré publié de 1928 à 1934 à Erévan. A pour sous-titre "*Revue pour les Masses Antireligieuse, Scientifique, Politique, Littéraire, Artistique.*" Par ailleurs des brochures et des manuels anti-religieux tirés à plusieurs millions d'exemplaires sont édités dans les diverses langues de l'URSS.

[82] Sur la collectivisation agraire et le début du stalinisme au Caucase cf. Paolo Vita-Finzi, *Journal Caucasien (1928-1931), Suivi de Carnet Moscovite (1953)*, préface de Sergio Romano, Paris, 2000. Traduction française de l'édition italienne d'un livre dont l'auteur fut consul général d'Italie à Tiflis, de 1928 à 1931.

[83] On désigne ainsi un style de construction d'édifices publiques ou d'immeubles d'habitation inspiré des monuments de la ville médiévale Ani, la capitale des rois arméniens Bagratouni, que la nouvelle frontière avec la Turquie (1921) a séparée de l'Arménie.

[84] cf. L. Doloukhanian, "Boghos-Bédros Yégéghétsi, Mi Houchartsani Gordzanman Badmoutioun, Pasdateghter," (L'église Paul-Pierre, l'histoire de la destruction d'un mémorial), *Mechagouyt*, 1990, n°1, p.22.

[85] Karékine Sarkissian, futur catholicos de Cilicie sous le nom de Karékine II, puis futur catholicos d'Etchmiadzine sous celui de Karékine I, a porté un jugement sévère sur Kévork V qu'il a présenté comme un homme du passé, incapable de négocier avec les autorités soviétiques, de trouver avec elles un *modus vivendi* (Karekin Sarkissian, *The Armenian Church in Contemporary Times*, New York, 1970).

[86] Kévork Tcheurékdjian, Mesrob Ter Movséssian, Khorène Mouradbékian, Karékine Hovsépian, Mattéos Mattéossian, Bagrat Vartazarian (Stépan Stépanian, Erevan, 1993).

[87] 11 novembre 1922.

[88] 9 novembre 1923.

[89] Ces *kontak* ont été ratifiés par le Concile de 1932.

[90] Arzoumanian, pp. 303-304.

[91] Philippe Sukiasyan, "Conciles dans l'Histoire de l'Eglise Apostolique Arménienne et Organisation de l'Eglise Autour du Catholicos," *Unité Chrétienne*, n° 121, février 1996, pp. 13-29.

[92] Béhboutian, p. 8.

[93] Dirigée par l'archevêque Dirayr Der Hovhanissian du thème américain, elle comprend l'evêque Ghévond Dourian de Manchester et l'évêque Krikoris Balakian de Marseille (Arzoumanian, pp. 316-323). Notons que Ghévond Dourian a aussi participé à la VIe Conférence anglicane de Lamberth (juillet 1930) où plusieurs questions interconfessionnelles étaient à l'ordre du jour.

[94] Créé à Erevan, en 1921, le HOK ou *Hayastani Ognoutian Komité* (Comité d'Aide à l'Arménie), destiné d'abord à obtenir de la SDN et des communautés arméniennes de la dispersion les fonds nécessaires à la reconstruction de l'Arménie, devient très vite un instrument de propagande efficace au service de l'URSS et du communisme et un instrument de lutte contre la FRA. Parallèlement la bourgeoisie arménienne de la diaspora, "neutre" ou regroupée dans le parti *Ramgavar (Démocratie-libérale)* ou dans l'UGAB, s'engage dans de multiples actions d'aide à l'Arménie soviétique, désormais protégée par le "bouclier russe", et se montre, en diaspora, le ferme soutien de l'Eglise arménienne (Taline Ter Minassian, *Colporteurs du Komintern, L'Union Soviétique et les Minorités au Moyen-Orient*, Presses de Sciences Po, Paris, 1997).

[95] Voir supra note 5.

[96] Nikita Struve, *Les Chrétiens en URSS*, Paris, 1963, pp.225.

[97] Taline Ter Minassian.

[98] Kégham Torossian, *L'Eglise Apostolique Arménienne et l'Eglise-Cathédrale de Paris Saint Jean-Baptiste*, Paris, 1994, pp. 39-40. Pour Balakian, voir supra notes 30 et 88. Entre 1926 et 1930 il a consacré neuf églises à Marseille et une à Nice.

[99] Sahak II (1849- 1939), avait été élu catholicos de Cilicie en 1902.

[100] *Guiligian Gsgidznèr. 1903-1915* (Douleurs ciliciennes, 1903-1915), Zakaria Bezdigian (ed.), Beyrouth, 1927.

[101] Zaven Archeps., pp. 365-370. Le patriarche de Constantinople, Zaven, qui avait lui-même rejoint à Londres, où se tenait une session de la Conférence de la Paix, Boghos Nubar Pacha et Avédis Aharonian, présidents des deux Délégations arméniennes, a jugé sévèrement cette initiative de Sahak II. Effectivement, elle n'eut aucun effet.

[102] Paul du Véou, *La Passion de la Cilicie*, Paris (réed.) 1954; Claude Mutafian "La France en Cilicie: Histoire d'un Échec," *Les Temps Modernes*, juillet-août-septembre 1988, pp. 90-108.

[103] Rappelons qu'un nombre inconnu d'enfants survivants des massacres et des déportations ont été accueillis ou enlevés par des familles musulmanes ou encore rassemblés par les autorités ottomanes dans quelques orphelinats turcs. Il faut aussi rappeler le cas des jeunes filles et des jeunes femmes arméniennes enlevées, "épousées" et converties de force. Après l'armistice de Moudros (30 octobre 1918) les organisations arméniennes et les oeuvres des missionnaires occidentaux se sont lancées dans la recherche et la récupération de ces enfants dont les plus jeunes avaient perdu tout souvenir de leurs origines (Dzovinar Kévonian, *Réfugiés et Diplomatie Humanitaire: Les Acteurs Européens et la Scène Proche-Orientale Pendant l'Entre Deux - Guerres*, Paris, Publicationsde la Sorbonne, 2004).

[104] R. Aubert, J. Bruls, P. E. Crunican, etc. *L'Eglise Dans le Monde Moderne (1848 à Nos Jours)*, t. 5 de la *Nouvelle Histoire de l'Eglise*, Paris 1975, p. 529. En Syrie et au Liban, Etats réputés indépendants mais sous mandat français, prévaut un système de réprésentation communautaire qui partage les Arméniens entre trois confessions, apostolique, catholique et protestante.

[105] Depuis les traités de Kars (octobre 1921), les républiques soviétiques transcaucasiennes sont séparées de la Turquie par la première frontière de la Guerre froide: république

enclavée, l'Arménie est coupée du monde (André Fontaine, *Histoire de la Guerre Froide*, t. I. *De la Révolution d'Octobre (1917) à la guerre de Corée (1950)*, Paris, 1965).

[106] Archevêque Torkom (Kouchaguian), *Yéghiché Badriark Tourian* (Le Patriarche Yéghiché Dourian), Jérusalem, 1932. Yéghiché Tourian est né à Constantinople en 1863. Entré dans les ordres, il enseigne à Armache de1890 à 1904, il est evêque du thème de Smyrne de 1904 à 1908, patriarche de Constantinople de 1910 à 1911. Devenu patriarche de Jérusalem en 1921, il réorganise le patriarcat.

[107] Voir supra note 25.

[108] Vahé Tachjian, "La Question de l'Établissement du Catholicossat de Cilicie en Syrie et au Liban, d'Après les Matériaux d'Archives Françaises," *Hask*, 2001, pp. 363-373.

[109] Le catholicos coadjuteur Papgen I, auteur d'une monumentale *Histoire du Catholicossat de Cilicie*, (publiée en arménien, à Antilias, en 1939) est mort en 1936, trois ans avant Sahak II. La disparition de ce dernier ouvrira une période d'incertitudes qui prendra fin avec l'élection de Karékine I (1943-1952). En 1941, le catholicossat de Cilicie a été doté d'une Constitution et s'est ainsi structuré.

[110] A. Hadidian, "Hamarod Agnarg Mayr Ator S. Etchmiadzni Badmoutian vra (1920-1967)" (Bref aperçu sur l'histoire du Saint Siège de Ste. Etchmiadzine) *Etchmiadzine*, décembre 1967, pp. 37-48 et janvier 1968, pp. 32-42; Cf. *Tertaktsoutioun Sahak II yèv Papgen I Gatoghigosnérou* (Correspondance des catholicos Sahak II et Babken I), préface de Krikor Chahinian, Antilias 1999. Les débuts du catholicossat de Cilicie, à Antilias, furent modestes. Le catholicos s'installe d'abord dans les locaux d'un orphelinat prêtés pour une période de cinq ans par le Near East Relief. Son avenir fut assuré par la création d'un Grand Séminaire et le droit reconnu au catholicos d'introniser de nouvaux évéques.

[111] Cité par Claire Mouradian, "L'Arménie Soviétique et la Diaspora", *Les Temps Modernes*, p. 271.

[112] Exaltation de la Sainte Croix.

[113] Saint Sahak et Saint Mesrob dont les noms sont liés, au début du Ve siècle, à l'invention de l'alphabet arménien et à la traduction de la Bible, deux événements fondateurs et deux "marqueurs" de la culture arménienne. La construction à Erevan, en 1957, d'un monument-symbole de la culture arménienne, le nouveau *Madénataran* (cf. supra note 72), précédé des statues monumentales des deux saints "laïcisés," consacre la revendication par l'Arménie soviétique du lien entre culture et nation, au moment de la première déstalinisation.

[114] L'Eglise arménienne consacre au souvenir des morts le jour qui suit chaque grande fête religieuse.

[115] Comme nous l'avons nous-même constaté au cours d'un voyage en Arménie soviétique, en 1966 (Anahide Ter Minassian, *Nation et Religion*, Venezia, Icom, 1980).

[116] Sacrifice rituel de mouton ou de volaille à des fins thérapeutiques, prophylactiques ou incantatoires. Une pratique antérieure au christianisme et qui n'a pas disparu même à l'époque stalinienne.

[117] Stèles de pierre-croix magnifiquement ouvragées, dressées dans les cimetières et les sanctuaires. Aujourd'hui font office de mémoriaux du génocide de 1915 dans les colonies de la diaspora.

[118] Danièle Hervieu-Léger, *La Religion Pour Mémoire*, Paris, 1993.

[119] Le consul italien, Paolo Vita-Finzi, est reçu par Kévork V à Etchmiadzine en 1929. Il témoigne ainsi. *"Celui qui me reçut en présence d'un fonctionnaire ironiquement courtois se nommait Georges V: c'était un bel homme imposant à la grande barbe blanche. L'église était vide"*, op. cité, p. 97.

[120] Fridtjof Nansen (1861-1930), un explorateur et un océanographe norvégien. Après la première guerre mondiale, chargé par la SDN de la question des réfugiés et père du "passeport Nansen" qui leur permit de se déplacer.

[121] Bureau International du Travail, un autre organisme de la SDN, dirigé par le socialiste Albert Thomas et chargé d'installer les réfugiés dans les pays en quête de main-d'oeuvre.

[122] Fridtjof Nansen, *L'Arménie et le Proche Orient*, Paris, 1928, pp. 235-236.

ԳԷՈՐԳ ՎԶՏԱԼԻԻ ՊԱՑՔԱՐՆԵՐԸ· ԳԷՈՐԳ Ե· ՍՈՒՐԷՆԵԱՆՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԶՏԱԼԻ (1911-1930)

(Ամփոփում)

ԱՆԱՀԻՏ ՏԷՐ ՄԻՆԱՍԵԱՆ

Գէորգ Ե· Սուրէնեանց կաթողիկոսի կղերական կեանքի շրջանը կը զուգադիպի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ յատկանշական փոփոխութիւններու, որոնց ընթացքին ան յաջողեցաւ պահպանել ու փոխանցել Հայ Եկեղեցին իր յեռնորդներուն։

Օսմանեան եւ Ռուսական կայսրութեանց վերացումով անհրաժեշտ դարձաւ եկեղեցական նուիրապետութեան վերամշակումը։ Աւելին, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան գոյավիճակի փոփոխութեան, Հայաստանի Հանրապետութեան հետ յարաբերութեան, Սփիւռքի հայութեան գոյառումին եւ նորաստեղծ համայնքներու կարգաւորման խնդիրներուն կողքին, Եկեղեցին դիմագրաւեց բարեկարգման չարժումներ։

1910ականներուն Եկեղեցին կ'ապրի երիտասարդ եւ երէց վարդապետերու բարեկարգչական առճակատումը։ Ասոր հետեւանքով Գարեգին Յովսէփեան կը դադրեցուի Հրատարակի խմբագրութենէն, իսկ Երուանդ Տէր Մինասեան կը հանէ իր սքեմը։

Մատթէոս Իզմիրլեան կաթողիկոսի վախճանումով՝ Դեկտեմբեր 1910ին, Գէորգ Ե· Սուրէնեանց կը դառնայ կաթողիկոսական Տեղապահ եւ կ'ընտրուի կաթողիկոս՝ Ագատ Եկեղեցիի Խմբագրութեան անուան տակ գործող բարեկարգչականներու պատուիրակութեան կաթողիկոսական ընտրութենէն քաշուելէ ետք։

Նոյն շրջանին, թափ կ'առնէ Հայկական Հարցը։ Կաթողիկոսը Կոնդակով մը Պօղոս Նուպարին իրաւասութիւն կու տայ կազմելու եւ գլխաւորելու Ազգային Պատուիրակութիւնը։ Ա· Աչխարհամարտը կը յեղաշրջէ առնուած քայլերը։ Գէորգ Ե· կը ճգնի ապահովել աջակցութիւնը Ռուսաստանին, թափ կու տայ կամաւորական չարժումին։·

Պոլշեւիկեան յեղափոխութեամբ կը վերափոխուի արեւմտահայ ճակատագրին ընթացքը, էջմիածինը կ'անջատուի պետութենէն եւ վեհափառը կը լծուի ինքնիշխան կառոյցի վերածել Եկեղեցին։ Միւս կողմէ, հակակշռելու համար արեւմտեան միսիոնարներու առաքելութիւնը, ան կը լծուի եկեղեցական բարեկարգութեան։ 1918 Մայիսին Հայաստանի Հանրապետութեան հռչակումը Եկեղեցին կը դնէ նոր իրավիճակի մէջ։

1920 Ապրիլ 11ին, Վրթանէս Փափազեանի թելադրանքով բոլոր հայ եկեղեցիներուն մէջ կը կատարուի հոգեհանգստեան արարողութիւն՝ այն 760 մտաւորականներուն համար, որոնք նահատակուեցան 1915ին։

1920 Յունուարին լոյս կը տեսնէ Էջմիածինը։ Հայ Եկեղեցին կը դիմագրաւէ փորձութեան նոր շրջան մը, ու Գէորգ Ե· իր անուան կը կցէ Վշտալի մակդիրը։ Հարկադրաբար Եկեղեցին ամբողջ քսան տարի կ'ենթարկուի ծանր հալածանքի՝ Հայաստանի, Վրաստանի եւ Ազրպէյճանի մէջ։ կը գրաւուին անոր կալուածներն ու ինչքերը։ Նոյն շրջանին, կը վերազասաւորուի Սփիւռքը, 1924ին կը կազմուի Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը, Եկեղեցիին կը տրուին կարգ մը իրաւասութիւններ՝ արտասահմանի թեմերու առնչութեամբ։ Դժուարութիւնները կը յառաջանան Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համար։ Գէորգ Ե· Կաթողիկոս Եղիշէ Պատրիարք Դուրեանի հետ համախորհուրդ, կ'աջակցի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան վերակառուցման։

ՀԱՅ ԾԱՂՐԱԾՈՒԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԻ ՁԵՒԱԲԱՆԱԿԱՆ ՓՆՆՈՒԹԻՒՆ. ԼԷՈՆԻԴ ԵՆԳԻԲԱՐԵԱՆ

ԳՐԻԳՈՐ ՕՐԴՈՑԵԱՆ
gregor6712@rambler.ru

Կրկէսային բոլոր խաղերն էլ իրենց բնոյթով արտակենտրոն են, քանի որ խախտում են մարդու հաւասարակշիռ վարքագծի առօրէական պատկերացումները: Այստեղից էլ, բնականաբար, հետեւում է, որ ամէն մի կրկէսային ժանրին յատկանշական է խաղի արտակենտրոն կառուցուածքը: Եւ, այդուհանդերձ, կրկէսի նորաձեւ ժանրային համակարգն առանձնացնում է արտակենտրոնութիւնը իբրեւ գաւեշտային բնոյթի այնպիսի խաղատեսակ, երբ գործողութեան արտասովոր նկարագիրը ոչ թէ գարմանք կամ հիացմունք է առաջացնում հանդիսատեսի մէջ, այլ իր անհեթեթութեամբ՝ ծիծաղ կամ հեգնանք:

Փորձենք պարզել, թէ ինչպէ՞ս են ձեւաբանօրէն առանձնացել այդ կարգի խաղատեսակները հայկական կրկէսում:

Հասկանալի է, որ ի սկզբանէ գործողութեան կրողն այստեղ հիմնականում ծաղրածուն է (clown, *անգլերէն նշանակում է գեղջուկ, անտաշ մարդ*), *թէեւ ծիծաղաշարժ, արտակենտրոն իրավիճակներում կարող էին յայտնուել նաեւ կողմնակի անձինք, իրեր կամ կենդանիներ: Ծաղրածուական այս տիպը, ըստ էութեան, ձեւաւորուել է դեռեւս միջնադարում, ապա նոր ժամանակներում՝ ենթարկուելով ձեւաբանական որոշ փոփոխութիւնների, մտել է կրկէս եւ արդէն ԺԹ. դարասկզբին դարձել անգամ այս արուեստի իւրօրինակ խորհրդանիշը:*

«Աւանդաբար,- *գրում է կրկէսի պատմաբան Դոմինիկ Ժանդօն*,- ծաղրածուական արուեստը համեմատում են կոմեդիա դել'արտէի (*դիմակների թատրոն - Գ.Օ.*) հետ՝ ըստ երեւոյթին, նկատի ունենալով այս թատրոնի գլխաւոր գործող անձանց, որոնց խաղը հարուստ էր ծաղրածուական հնարքներով: Սակայն, պէտք է զգուշանալ այդ առերեւոյթ ընդհանրութիւնից եւ աւելի խորամուխ լինել ծաղրածուական արուեստի ձեւաւորման պատմական ընթացքի մէջ: Ծաղրածուն միջնադարեան միմոսների անմիջական յետնորդն է... սկզբում նա ոչ այնքան ծաղրածու էր, որքան՝ լարախաղաց. նրա զէնքն աւելի շուտ ճարպկութիւնն էր, քան կատակը: Այնուամենայնիւ, իտալացի կատակերգակները որոշ ազդեցութիւն թողեցին անգլիացի ծաղրածուների վրայ եւ նպաստեցին անգլիական մնջախաղի ձեւաւորմանը, որի նախահայրն է Ջուզեպպէ Գրիմալդին՝ միմոս, մարմնամարզիկ, պարող, «երկաթեայ ոտքեր» մականունամբ յայտնի Ջիովանա Բատիստ Նի-

կոլինի Գրիմալդիի որդին: Ջուզեպպէ Գրիմալդին, որը երգիչ էր, լարախաղաց եւ ձեռնածու, ԺԸ. դարի կէսին նորոգեց խեղկատակային ծաղրաբանութեան հնագոյն աւանդոյթները. զանազան իրեր խաղարկելու նրա հմտութիւնը, փաստօրէն, ծաղրախաղում ձեռնածուական արուեստի հնարքներն օգտագործելու առաջին փորձերից էր: Մասնագէտները կշտամբում էին Գրիմալդիին, թէ նրա խաղը չափից դուրս զաւեշտալի է. նախատինք, որին շատերն այսօր կ'երազէին արժանանալ»[1]:

Ուշագրաւ է, որ անուանի կրկէսագէտը, հենց սկզբից զգուշանում է ուղիղ կապ տեսնել Դիմակների-թատրոնում[2] հանդէս եկող ծիծաղաշարժ հերոսների եւ կրկէսային ծաղրածուների միջեւ, թէեւ առաջին հայեացքից, այդ կապը կարծես ակնառու է: Ցիշենք, որ արդէն ԺԹ. դարասկզբին, երբ ֆրանսիական կրկէսներում, համարների միջեւ ընկած ընդմիջումների ժամանակ խաղահրապարակ էին դուրս գալիս առաջին կատակարանները՝ Օրիոլը, Լոուրենսն ու Ռեդիչան, կրկէսի շրջանին կից գտնուող փոքրածաւալ բեմահարթակին խաղարկում էին նաեւ կարճամփոփ մնջախաղային գաւեշտներ՝ հիմնականում փոխառնուած իտալացի կատակերգակների խաղացանկից[3]:

Կ.ՊՈԼՍՈՑ ԱՐԱՄԵԱՆ ԹԱՏՐՈՆ-ԿՐԿԷՍԸ

Այդ կարգի գաւեշտներ կարելի էր դիտել Կոստանդնուպոլսի Արամեան Թատրոն-Կրկէսում նոյնպէս, որը 1846ին հիմնել էր լարախաղաց, մարմնամարզիկ եւ ձեռնածու Յովհաննէս Գասպարեանը (1826-1867): «Յայտագրին իբր երրորդ ու վերջին մաս,- նչել է յետագայում Գասպարեանի կենսագիր Յարութիւն Ճիւանեանը[4],- սիրահարական զուարճալի գաւեշտ մը ներկայացուեցաւ՝ որուն մէջ Բալիաչոյի դերը Յովհաննէս կատարեց. Աղասի Մինասեան կատարելապէս հօր դեր մը կը ներկայացնէր, Միքայէլ Բամպուքճեան՝ սիրահարի, մինչդեռ Չեննէ Գէորգ կատարեալ նմանութեամբ իբր աղջիկ կը ներկայանար բեմին վրայ»[5]: Գաւեշտային այս տեսարանում հանդէս եկող գործող անձանց հպանցիկ թուարկումն իսկ ենթադրել է տալիս, որ դիպաշարային բովանդակութեամբ եւ, հաւանաբար, նաեւ խաղարկման եղանակով այն շատ նման պէտք է եղած լինէր եւրոպական թատրոն-կրկէսներում ներկայացուող թատերական տեսարաններին: Բալիաչոն այստեղ, ակներեւաբար, իտալերէն pagliacco (ծաղրածու) բառի հայերէն տառադարձումն է[6], որ այդ շրջանում հենց ծաղրածու հասկացութեան իմաստով էլ գործածուել է: Ուստի, բնական է, որ յօդուածի հեղինակը՝ Ճիւանեանը, Գասպարեանի դերատեսակին այն անուանումն է տալիս, որը ծանօթ էր թէ՛ իրեն, թէ՛ իր ժամանակակիցներին: Ցիշենք նաեւ, որ այդ անուան տակ (բնագրում հանդիպում է նաեւ փայլաչօ ձեւը) ԺԹ. դարասկզբին, յատկապէս ֆրանսիական միջավայրում ենթադրել են

արտակենտրոն ժանրի ուրոյն մի դերատեսակ՝ ծաղրածուական լարախաղացութիւն: Սրա հիմնադիրը Օլիմպիկ կրկէսի հմուտ մարմնամարզիկ եւ լարախաղաց Օրիոլն էր[7], որին էլ, հաւանաբար, հետեւել է Արամեան Թատրոն-Կրկէսի ղեկավարը: Ի դէպ, ԺԹ. դարի 30-40ականներին կրկէսային հրապարակ դուրս եկող այս կարգի ամէն մի ծաղրածու կատարելապէս դրսեւորել է իրեն մարզական մի քանի ժանրերում, յատկապէս՝ լարախաղացութեան մէջ:

Ահաւասիկ, Յովհաննէս Գասպարեանին տրուած այն բնութագիրը, որ կարդում ենք «Էջ Մը Հայ Թատրոնի Պատմութենէն» յօդուածում. «Առաջնակարգ լարախաղաց, մարմնամարզ եւ միմոս (ունկու փայլաչօ): Այժի փորձերու մէջ առաջին կարգի վարպետ, որ կը ստանձնէր նաեւ դիւցազներգութեանց մէջ ամէնէն գլխաւոր դերը» (*ընդգծումները մերն են - Գ.Օ*)[8]: *Ինչպէս տեսնում ենք, լարախաղացութեան, մարմնամարզութեան կողքին, հեղինակը նպատակայարմար է գտել նշելու նաեւ միմոսութեան ժանրում Գասպարեանի հանդէս գալու պարագան եւ միայն յետոյ է յիշատակել, որ նաեւ՝* «առաջին կարգի վարպետ» *էր ուժի փորձեր կատարելիս, իսկ դիւցազներգութեան մէջ՝* «ամէնէն գլխաւոր» *դերն էր ստանձնում:*

Մինչդեռ խմբի միւս ծաղրածուներին յօդուածագիրն անուանել է հոպիտ.

«Միքայէլ Բամպուքճեան. - Առաջնակարգ լարախաղաց եւ հրտպիտ. կը ստանձնէր սիրային դերեր, որոնց մասին միակն էր խումբին մէջ: Յովհաննէսէ ետքը առաջինն էր մարմնամարզի համար, եւ կրնար երկրորդ կարգի ձիամարզիկ մը համարուիլ:

Մելքոն Գասպարեան. - Երկրորդ կարգի լարախաղաց, իբր հրտպիտ կը մասնակցէր նաեւ զաւեշտներու:

Ալիքսան Սվաճեան. - Առաջնակարգ բաքառուբա[9] եւ հոպիտ:

Յակոբ Սվաճեան. - Երկրորդական լարախաղաց եւ հոպիտ:

Մարտիրոս Խանճեան. - Նոյնպէս:

Գէորգ Չիլինկիրեան (Ջեննէ). - Առաջնակարգ պարող, երկրորդ կարգի միմոս եւ հոպիտ. կը կատարէր նաեւ բէրէնտէի[10] դերը (ինչպէս յայտնի է, խումբին նոր սկսած ատեն, Ջեննէ Գէորգ միայն կը կատարէր կնոջ դերեր):

Ադասի Մինասեան. - Առաջնակարգ հոպիտ. կը ստանձնէր միշտ ծեր մարդերու եւ հօր դերերը:

Համբարձում Իսարիճեան. - Երկրորդ կարգի միմոս եւ հոպիտ:

Յարութիւն Պաղտասարեան. - Երկրորդ հոպիտ եւ բեմական նկարիչ:

Կարապետ Տէօքմէճեան. - Առաջնակարգ լարախաղաց եւ երկրորդ կարգի հոպիտ:

Քերովբէ Հիւսէյինճեան. Երկրորդ կարգի լարախաղաց եւ հոպիտ:

Մկրտիչ Էլմաեէմիզ. - Երկրորդ կարգի մարմնամարզ եւ հոպիտ:

Մարանկոզ Գրիգոր. – Նոյնպէս:

Հաճի Սահակ Սկիւտարցի. – Նոյնպէս:

Հաճի Ղազարոս Բըլածեան. - Առաջին կարգի լարախաղաց եւ հոպիտ:

Խաչատուր Գրիգորեան. - Երկրորդ կարգի մարմնամարզ եւ հոպիտ:

Ճարտօն Բեքրի. - Երկրորդ կարգի լարախաղաց եւ հոպիտ. բաւական յաջողութեամբ կը ներկայացնէր նաեւ տարեց մարդու եւ հօր դերեր» (*ընդգծումները մերն են - Գ.Օ.*)[11]:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ իրականում Բալիաչոյի դերակատարն էապէս տարբերուել է միւսներից թէ՛ իր արտաքին նկարագրով, թէ՛ խաղի մէջ օգտագործած հնարքներով: Ցաւօք, մեր ձեռքի տակ եղած նիւթերն այսքանն են, ինչը հնարաւորութիւն չի տալիս հանգամանալից քննարկելու այս խնդիրը, սակայն ձեւաբանական հայեցակէտից դերատեսակի անուանումն էլ բաւական է՝ կռահելու համար, թէ ի՞նչ կարող էր ենթադրել այս տարանջատումը:

Նախ, նշենք, որ հոպիտների այս առատութիւնը պատահական չէ. ԺԹ. դարասկզբի եւրոպական, յատկապէս ֆրանսիական եւ անգլիական կրկէսներում, առանձնակի կարեւորութիւն էր տրւում գաւեչտային համարներին, որոնց մասնակիցները սովորաբար հմուտ հեծեալներ էին ու մարմնամարզիկներ: Այդ ժամանակ էլ Փարիզի կրկէսներում, անուանի ծաղրածուների կողքին, սկսեցին հրապարակ գալ, այսպէս կոչուած, «օժանդակ կարգի հոպիտներ», որոնց խաղին յատուկ էր խիստ արտասովոր ֆիզիկական հնարքների առատութիւնը[12]: *Իսկ Կոստանդնուպոլիսն այդ նոյն ժամանակաշրջանում, կրկէսային արուեստի տեսաբան Թրիսթան Ռեմիի բնորոշմամբ, «ծաղրածուների Մեքքան էր»*[13]: *Ճիւանեեանի բերած ցուցակում յատակ նշուած է, որ Ալիքսան Սվաճեանի ու Գէորգ Ջիլինկիրեանի (Ջեննէ) խաղն աչքի է ընկել հենց այդպիսի բացառիկ հնարքների ցուցադրումով (տե՛ս՝ Թաթաուրքա եւ բէրէնտէ հասկացութիւնների բացատրութիւնը՝ ծնթ. թիւ 8 եւ 9): Ըստ երեւոյթին, միւսներն էլ իրենց խաղը հմտօրէն գուգորդել են ծաղրածուական հնարքներով, սակայն գերակշռողը նրանց ելոյթներում, այնուամենայնիւ, մարզական վարժութիւններն էին: Նկատենք, որ նմանատիպ մի համար, «որ բաւական խնդուք կը պատճառէր հանդիսականներուն», ներկայացրել է նաեւ Յովհաննէս Գասպարեանը, սակայն յօդուածագիրը նրա այդ խաղը ծաղրածուական չի համարել. հաւանաբար այն նկատառումով, որ ձեւաբանօրէն տարբերուել է մարզիկ-հոպիտների խաղից: Ճիշտ այնպէս, ինչպէս յետոյ նորագոյն կրկէսում շատ յաճախ մարզական ժանրի արտիստները սկսեցին օգտագործել արտակենտրոն ձեւեր՝ կատակային երանգ հաղորդելով խաղին: Իհարկէ,*

գարմանալի չէ, որ ԺԹ. դարասկզբին այս կարգի որոշ խաղեր, ուր գաւեշտային պահերն ընդգծուած էին, համարուել են ծաղրածուական. պարզապէս, կրկէսային այդ հերոսի դերատեսակն իր ժանրային յատկանիշներով դեռեւս ձեւաւորման փուլում էր:

Այդուհանդերձ, հիմնուելով անգամ եղած նիւթի վրայ, կարելի է վստահ ասել, որ Արամեան Թատրոն-կրկէսի գործունէութեան ժամանակաշրջանում արդէն ձեւաւորուել էին արտակենտրոն խաղերով հանդէս եկող երկու ծաղրածուական տիպեր՝ մարգիկ ծաղրածուն եւ ծաղրածու մարգիկը: Առաջինն իր խաղը կառուցել է գերագանցապէս հնարամտութեան ու ճարպկութեան վրայ. նրա ցուցադրածը մարզական վարժութիւններից բաղկացած արտակենտրոն կատակախաղ էր: Մինչդեռ երկրորդի դէպքում մարզական վարժութիւնները, որոնք աչքի էին ընկնում իրենց ծայր աստիճան արտասովոր հնարքներով, առաջին պլանում էին, եւ արտակենտրոն գործողութիւնը կառուցւում էր գլխաւորապէս հակադրութիւնների (contrast) վրայ, ինչն էլ կատակային բնոյթ էր հաղորդում ամբողջ խաղին: Ասենք. մարգիկներից մէկը անչարժ կանգնում էր հրապարակի կենտրոնում եւ «20-ի չափ մեծ ու պզտիկ դերակատարներ, սոսկալի արագութեամբ կ'անցնէին իր առջեւէն. ոչ մէկը կը փախցնէր անոնցմէ, եւ մէկ ձեռքով իւրաքանչիւրին գօտիէն բռնելով բարձրութեամբ օդին մէջ կը նետէր՝ ուրկէ անոնք այլ եւ այլ դարձուածքներով երկու ոտքի վրայ բեմ կը ցատկէին՝ առանց բնաւ վար իյնալու»[14]: Իհարկէ, երկուսի արածն էլ, ըստ էութեան, միմոսութիւն էր, ուստիեւ նրանց խաչաձեւումից էլ աստիճանաբար ձեւաւորուեց դասական ծաղրածուի դիմակը: ԺԹ. դարավերջին նրա կողքին իրրեւ խաղընկեր յայտնուեց աւգուստը (august) կամ, ինչպէս արեւելաեւրոպական կրկէսում են անուանել՝ չիկահերը: Այնուհետեւ ասպարէզ եկաւ ծաղրածուի մի նոր տիպ՝ չիկահերի ուղիղ ժառանգորդը՝ մնջկատակը, որի խաղը բնութագրող ձեւաբանական առանձնայատկութիւնների մասին կը խօսենք աւելի ետք:

Մինչ այդ, նկատենք նաեւ, որ Արամեան Թատրոն-կրկէսի խաղահրապարակ դուրս եկող զանազան հոպիտների ելոյթներն աչքի են ընկել եւս մի առանձնայատկութեամբ. այս ծաղրածուներն անձնաւորուած չէին: Նրանց գաւեշտային արարքները, անչուշտ, առանցքային նշանակութիւն ունէին կրկէսային խաղի աչխոյժ ռիթմն ապահովելու համար, սակայն, իրրեւ ծիծաղաչարժ գործողութեան կրողներ, նրանք չունէին որեւէ անհատական դիմագիծ՝ ի տարբերութիւն այն Աւելքինների ու Պիէռօների, որոնք եւրոպական կրկէս եկան հիմնականում Փարիզի բուլուարային թատրոններից: Իսկ ահա, անգլիական ծաղրածուն, որի նախահայրը, թերեւս, Ջուգեպպէ Գրիմալդին էր, չարունակեց միջնադարեան հրապարակային հանդիսախաղերի աւանդոյթը. իր գեղջկական կոպտութեամբ եւ հնարամտութեամբ նա խախտեց հենց այն թա-

տերականութիւնը, որ յատուկ էր Դիմակների-թատրոնին[15]: Կարծում ենք՝ այս հանգամանքն էլ նկատի ունի Դոմինիկ Ժանդօն, երբ նշում է, թէ ծաղրածուն «միջնադարեան միմոսների անմիջական յետնորդն է» (տե՛ս՝ թիւ 1 յղումը). չէ՞ որ վաղեմի միմոսներին, գուսաններին ու հիատրիոններին նոյնպէս յատկանշական չէր ինչ-որ մի բնութագրական գիծ ունենալը. այս հրապարակային արտիստները տարբերւում էին խաղի մէջ միայն իրենց դերակատարումով, որպէս երկու հակադիր՝ ակտիւ եւ պասիւ դիմակներ՝ կեղծաւոր խարերայի եւ ճաղատ յիմարի[16]: Ըստ Էութեան, ԺԹ. դարում այդ նոյն պայմանաձեւով կառուցուեց նաեւ ծաղրածու - չիկահեր գուգախաղը: Նրանց կողքին ճանաչուած էր մի նշանաւոր կատակային դիմակ նոյնպէս, որին պայմանաւոր անուանել ենք ժողովրդական ծաղրածու՝ նկատի ունենալով ժողովրդի մէջ նրա չափազանց սիրուած եւ ճանաչուած լինելը: Իսկ թէ յետագայում ի՞նչ պայմանաձեւերի է ենթարկուել այս դիմակը, մենք դեռ կ՝անդրադառնանք:

Առայժմ մեզ հասած տեղեկութիւնները թոյլ են տալիս ընդամէնը եզրակացնել, որ Արամեան Թատրոն-Կրկէսում գաւեշտային համարների պակաս թէեւ չի զգացուել, սակայն բուն կրկէսային ծաղրածուական արուեստը դեռեւս սաղմնաւորման փուլում էր: Թատրոնի եւ յատկապէս Դիմակների-թատրոնից եկող աւանդոյթների ներթափանցումը կրկէս մի կողմից նպաստել է թատերային կերպարների ձեւաւորմանը, ինչը բազմազանութիւն մտցրեց արտակենտրոն արտիստների արուեստում, միւս կողմից նաեւ ազատագել է մաքուր կրկէսային խաղի լեզուն: Պատահական չէ, որ Գրիմալդին, հեռանալով թատերական մենախաղի սկզբունքներից, ի վերջոյ յայտնուեց Ասթլէյի կրկէսում, բայց ահա Ժան-Բատիստ-Գասպար Դեբիւրօն, սկսելով իր արտիստական գործունէութիւնը Փարիզի նշանաւոր Լարախաղացների թատրոնում (Theatre des Funambules) որպէս լարախաղաց, յետագայում հակուեց դէպի Պիէռոյի դիմակը եւ համաչխարհային համբաւ ձեռք բերեց դրամատիկական մենախաղի ասպարէզում[17]:

Այս է պատճառը, որ Գոստպարեանի կրկէսում, թէեւ հոպիտների պակաս չի զգացուել, այդուհանդերձ, արտակենտրոն գործողութիւն կառուցելու մասին՝ որպէս ծաղրածուական արտայայտչաձեւի, եւ գաւեշտախաղի՝ որպէս կրկէսային ժանրի մասին, դեռեւս չունէին յստակ պատկերացում: Կատակերգական այն տեսարանները, որոնք նախատեսուած են եղել բեմահարթակի համար, ակներեւաբար կրել են թատերական արուեստի ազդեցութիւնը, մասնաւորապէս՝ Դիմակների-թատրոնի, ինչը գալիս էր եւրոպական թատրոն-կրկէսներում ձեւաւորուած աւանդոյթներից: Իհարկէ, ծաղրածուական խաղը՝ իրրեւ կրկէսային ինքնուրոյն ժանր, այդ ժամանակ ամէնուր դեռ նոր էր սկսում ձեւաւորուել: Սակայն, եթէ Եւրոպայում այդ ձեւաւորման ընթացքն ունեցել

է անընդմէջ ձեռքբերումների եւ կորուստների պատմութիւն, ապա հայ իրականութեան պայմաններում ԺԹ. դարի 60ականների վերջին այն ընդհատուել է, եւ տասնամեակներ շարունակ հայկական կրկէսի մասին ոչ մի խօսք չկայ, քանի որ հայ ժողովրդի ողջ ուշադրութիւնն ուղղուած է դէպի նորաստեղծ ազգային դրամատիկ արուեստը։ Հետեւաբար, հայ ծաղրածուական արուեստի ձեւարանական քննութիւնն էլ այս փուլում կարող ենք աւարտուած համարել։

Այսպիսով, հայ կրկէսային արուեստում գրեթէ մի ամբողջ դար՝ մինչեւ Ի. դարի 50ականները, վերոնշեալ Բալիաչոյի եւ Հապիտի ծաղրածուական դերատեսակներից բացի, ուրիշ որեւէ այլ դերատեսակ ասպարէզ չի եկել։ Բալիաչոյի կերպարը՝ իրրեւ դասական կրկէսային ծաղրածուի նախատիպ, այդպէս էլ մնացել է սաղմնային վիճակում։ Իր կերպաձեւով այն յիշեցրել է եւրոպական լարախաղաց ծաղրածուներին, որոնց արուեստում նոյնպէս օգտագործուել են կրկէսային արտակենտրոն խաղի տարրեր։ Սակայն ժանրային առումով՝ իրրեւ կրկէսային դերատեսակ, այդ կատակերգական տիպը դեռեւս յստակ գծագրուած չէր, քանի որ հիմնականում գործում էր թատերական տարրերով յագեցած գաւեշտախաղերի շրջանակում։ Այլ կերպ ասած, Յովհաննէս Գասպարեանի ելոյթները չէին կարող կատարելապէս համապատասխանել ծաղրածուական ժանրի պահանջներին։ Հանդէս գալով սիրահարի (Միքայէլ Բամպուքճեան), երիտասարդ աղջկայ (Ջեննէ Գէորգ) եւ նրա հօր (Աղասի Մինասեան) կողքին՝ այս դիմակը, ամենայն հաւանականութեամբ, յիշեցրել է կոմեդիա դել՝արտէի ճարպիկ, հնարամիտ եւ գործունեայ ծառաներին, որոնց խաղը կառուցւում էր գաւեշտախաղի դիպաշարային հենքի վրայ։ Ի վերջոյ, սրանով էլ պայմանաւորուած են եղել նաեւ Բալիաչոյի դիմակին բնորոշ բոլոր յատկանիշները։ Մինչդեռ կրկէսում ծաղրածուական դիմակն է կանխորոշում արտիստի արտակենտրոն վարքագիծը, այլ ոչ թէ հակառակը, ինչպէս թատրոնում, ուր հերոսների բնութագիրը («դիմակը») ձեւաւորւում է՝ ըստ նրանց վարքագծի։

Բացի այդ, անգամ Դիմակների-թատրոնում (Commedia dell'arte), որտեղ դերասանները յաճախ են դիմել մարգական վարժութիւնների եւ ծաղրածուական արարքների, դիպաշարը (sujet) առանցքային նշանակութիւն ունէր, իսկ ծաղրածուական գաւեշտախաղերում սիւժէտային գիծը խիստ պայմանական է, քանի որ գործողութիւնն այստեղ կառուցւում է ոչ թէ իրադարձութիւնների, այլ հիմնականում ծաղրածուական արարքների՝ հնարքների (truc) հիման վրայ։

Եւ, վերջապէս, երրորդ՝ ամենակարեւոր հետեւութիւնը. «Բալիաչոյի դեր» ասուածը վկայում է, որ Գասպարեանի խաղը պէտք է համապատասխանեցուած լինէր բեմական պայմաններին՝ բեմահարթակի պահանջներին, ինչը կը նշանակի՝ այն պէտք է կառուցուած լինէր դիմահայեաց։ Իսկ սա արդէն ուղղակի խախտում է կրկէսին յատուկ

չրջանակենտրոն խաղառճի սկզբունքը եւ կրկին տանում է դէպի թատրոն։

Արամեան Թատրոն-Կրկէսում բուն կրկէսային ծաղրածուի դերատեսակին, ըստ էութեան, աւելի մօտ էին կանգնած հոպիտները՝ ծաղրածու մարգիկները, որոնք հանդէս են եկել հենց չրջանաձեւ խաղահրապարակում։ Նրանց մնում էր ընդամէնը մի քայլ անել, որպէսզի վերջնականապէս այստեղ ձեւաւորուէր դասական կրկէսային ծաղրածուի նկարագիրը։ դրա համար անհրաժեշտ էր ստեղծել համապատասխան դիմակ, ինչպէս որ Եւրոպայում, դա, ի վերջոյ յաջողուել է Ժ.Թ. դարի ֆրանսիական կրկէսի նշանաւոր վարպետներ Ժան-Բատիստ Օրիոլին եւ Թոմաս Քեմփին։

Պատահական չէ, որ հոպիտների այդ դերատեսակը, ի տարբերութիւն Բալիաչոյի, աւելի կենսունակ գտնուեց։ Նրանց միջից, ի վերջոյ, դուրս եկան ոչ միայն տաղանդաւոր ծաղրածուներ, այլեւ վարպետ մարմնամարզիկներ։ Ի. դարասկզբին արդէն նրանց եկան փոխարինելու, այսպէս կոչուած, «արտակենտրոն մարմնամարզութեան» ժանրում հանդէս եկող արտիստները, ինչպիսին, դիցուք, ռուսական կրկէսում Արթուր Մինասովն էր, որն աչքի է ընկել ծիծաղաչարժ հակադրութիւնների վրայ կառուցուած, բացառիկ մարզական հնարքներ ցուցադրելու վարպետութեամբ[18]*։ Այդօրինակ մի խաղ է ներկայացրել նաեւ հայկական կրկէսում Համլէտ Խասխագեանն իր «Ուրախ Ներկարարներ» համարով՝ Ի. դարի 50ականներին։ Սակայն, այս տիպի խաղերը նորագոյն կրկէսի ժանրային համակարգում արդէն բոլորովին այլ ձեւարանական հիւսուածք ունէին եւ բնաւ չէին յաւակնում ներկայանալու իրրեւ ծաղրածուական համարներ։ պարզապէս մարզական տարրերն այստեղ գուգորդուել են կատակային հնարքներով, որոնց արտակենտրոն շեշտադրումն աւելի է ընդգծել մարզական վարժութիւնների արտասովոր բնոյթը։*

ՀԱՅ ԾԱՂՐԱԾՈՒԱԿԱՆ ԱՐՈՒՍՏԸ Ի. ԴԱՐՈՒՄ

Ի. դարում հայկական կրկէսային արուեստին վիճակուած էր նորովի վերածնունդ ապրել։ Սա նշանակում է, որ մի կողմից պէտք է իւրացուէր համաշխարհային նորագոյն կրկէսի գեղարուեստական փորձն ու ժանրային համակարգը, միւս կողմից՝ երկարատեւ ընդմիջումից յետոյ կեանքի կոչուէին այս ասպարէզում ձեռք բերուած ազգային աւանդոյթները։ Սակայն, որքան յատակ էին նորաստեղծ (Երեւան, 1956) Հայկական Կրկէսային Կոլեկտիւի առջեւ ծառացած խնդիրները, նոյնքան յատակ չէին այն միջոցները, որոնցով պէտք է արդիւնաւէտ լուծուէին դրանք։ Մասնաւորապէս, արտակենտրոն ժանրերի կապակցութեամբ յատկանշական է դեռեւս 1970ականներին չրջանառուող այն տեսակէտը, թէ իրր ազգայինն ընդգծելու համար անհրաժեշտ է ասպարէզ հա-

նել միջնադարեան հայ ծաղրածուական դիմակները։ «Բրոնզաձոյլ արձաններն ու միջնադարեան բազմաթիւ մանրանկարները,- *մի յօդուածում գրել է թատերագէտ Գէորգ Գոյեանը,-* մեզ համար պահպանել են այդ դերասանների արտաքին կերպը՝ խեղկատակային կոնաձեւ բարձրաձայր թասակները գլխներին։ Մեզ են հասել նաեւ դրանց սրամիտ ելոյթների նկարագրութիւնները։ Օգտագործելով այդ նիւթերը եւ մեր ժամանակի նոր խնդիրների համապատասխան վերամշակելով դրանք՝ սովետահայ կրկէսի ծաղրածուները կարող էին ստեղծել ինքնատիպ եւ տպաւորիչ կերպարներ»[19]։

Առաջին հայեացքից միանգամայն համոզիչ է երեւում թատերագէտի այն կարծիքը, թէ հեռաւոր անցեալում ծնունդ առած ինչ-ինչ խաղարկային ձեւեր կարելի էր կիրառել նաեւ նորագոյն կրկէսում։ Ծաղրածուական ժանրի պատմութիւնն էլ վկայում է, որ մեզ յայտնի մի չարք ծաղրածուական հնարքներն ընդամէնը հնագոյն հրապարակային խաղերի նորացուած պայմանաձեւերն են։ Վերջապէս, արտառոցութիւնը (grotesque), *ծաղրանմանակումը* (parodia), *հակադրութիւնը* (contraste) *ծաղրածուական խաղի այն հիմնական եղանակներն են, որոնք կիրառուել են բոլոր ժամանակներում։ Սակայն, խնդիրը փոխւում է, երբ խօսքը վերաբերում է ծաղրածուական դիմակներին։ Թէ՛ հնում, թէ՛ նոր եւ նորագոյն ժամանակներում ծաղրածուն հանդէս է գալիս իբրեւ սոցիալական տիպ՝ դիմակ, որն իր վարքագծով յստակ ճանաչելի է ժամանակակիցներին։ Նրա կատակաբանութիւնների բովանդակութիւնը կարող է լինել ծայր աստիճան անհեթեթ, սակայն հումորն ու երգիծանքը պէտք է որոշակիօրէն ուղղուած լինեն այնպիսի նշանակէտի, որն առանձնապէս ծանօթ է եւ կարող է յուզել տուեալ հանդիսականին։*

Համաշխարհային կրկէսի պատմութեան ընթացքում քիչ թէ շատ աչքի ընկած որեւէ մի ծաղրածու երբեք չի գործել կամ խօսել (միեւնոյն է՝ մնջախաղի, թէ գաւեշտային կատակաբանութեան ժանրում) վերացական նշանների լեզուով։ Նրա արտաքինը կարող էր արտառոց լինել, խաղն՝ անհեթեթ, սակայն ամէն մի չարժում, ամէն մի արարք կամ խօսք պէտք է լինէր նաեւ խիստ արտայայտիչ ու պարզ ընկալելի՝ հանդիսատեսի մէջ ցանկալի արձագանգ գտնելու համար։ Արդեօ՞ք կարելի էր այս խնդիրը լուծել՝ վերականգնելով միջնադարեան հայ միմոսների արտաքին նշանները ու խաղի նկարագիրը։ Ջենք կարծում, քանի որ նրանց ընկերային միջավայրը անվերադարձ ծածկուած էր հարիւրամեակների փոշու տակ։

Բայց, կրկնում ենք, սա չի նշանակում, թէ արտառոցութիւնը, ծաղրանմանակումը եւ հակադրութիւնը՝ որպէս ծաղրածուական արուեստի ձեւաբանական միաւորներ, ժամանակի ընթացքում կորցնում են իրենց կիրառական նշանակութիւնը։ Պարզապէս ժամանակ առ ժամանակ փոխւում է այս կամ այն ծաղրածուական դիմակի հասարակական

դերը, եւ համապատասխանարար փոխւում են նաեւ նրա արտաքին նշանները ու խաղի դրսեւորման պայմանաձեւերը։ Ահաւասիկ, դիտարկենք 1950ականների վերջին հայկական կրկէսում թիֆլիսեան կինտօների դիմակի տակ հանդէս եկող գոյգի՝ Ռուբէն Յարութիւնեանի (ծաղրածու) եւ Լեւոն Մինասելեանի (չիկահեր) խաղը, որն էլ ժամանակին Գոյեանի քննադատութեան թիրախն է դարձել։ «Սիկոն ու Սաքոն,- կարդում ենք «Ո՞րն է Ազգային Թատրոնը» յօդուածում,- հանդէս էին գալիս «կինտօների» - հին Թիֆլիսի շուկայի նատուրալ վաճառողների տարազով։ Նախայեղափոխական Թիֆլիսում մանր առեւտրով ու արհեստներով, իրօք, շատ հայեր էին զբաղւում։ Սակայն, կինտօների մէջ կային ոչ միայն հայեր, այլեւ ուրիշ ազգութիւնների ներկայացուցիչներ։ «Կինտօներին» բնորոշ կեցուածքները, շարժուձեւը, խօսքի ինտոնացիան, տարազը եւ այլն - բնաւ էլ տիպական չեն անցեալի հայ իրականութեան համար։ Ինչո՞ւ է հապա նախայեղափոխական Թիֆլիսի «կինտոյի» կերպարը յանկարծ բնորոշ համարւում հայ կլօունադայի համար»[20]։ Թէեւ միեւնոյն յօդուածում հեղինակը նշում է, որ «արտիստները (Ռ. Յարութիւննեանն ու Լ. Մինասելեանը - Գ.Օ.) մի քանի սրամիտ համարներ էին պատրաստել», այնուամենայնիւ վիճարկում է նրանց դիմակների հայկական համարուելու փաստը, որ, կարծում ենք, այս պարագայում բոլորովին անհիմն է։ Դեռեւս ոչ-վաղ անցեալում թիֆլիսահայ կինտոյի կերպարը ԺԹ. դարի արեւելահայ քաղաքային կեանքի խորհրդանիշներից մէկն էր (յիշենք, թէկուզ, Սունդուկեանի թատերգութիւնները), որը հանդէս էր գալիս թէ՛ դրամատիկական արուեստում, թէ՛ պարային արուեստում՝ ոչ մի բողոք չառաջացնելով։ Եւ, իհարկէ, այստեղ չէ, որ պէտք է արտայայտուէր հայկական կրկէսի ազգային դիմագիծը։ Ջմռուանանք, որ ֆրանսիական կրկէսն իր վերելքն ապրեց, երբ նրա ստեղծագործական կազմում աշխատում էին մեծ թուով անգլիացի եւ իտալացի արտիստներ, որոնք բնաւ էլ պարտաւորուած չէին ֆրանսիական ծաղրածուի տիպ ստեղծել։ Նրանց միակ մտահոգութիւնը հասարակութեան մէջ ճանաչում ձեռք բերելն էր եւ հանդիսական ունենալը։ Իսկ, ընդհանուր առմամբ, կրկէսային արուեստում եւ, մասնաւորապէս՝ ծաղրածուական դիմակի ստեղծման գործում կարեւորը ոչ այնքան ազգային նկարագրի ընդգծումն է, որքան տուեալ միջավայրի համար խիստ բնութագրական լինելը։ Ահա թէ ինչու, այսօր կինտօների դիմակները, գուցէեւ այնպիսի արձագանգ չգտնէին, ինչպիսին կարող էր լինել տասնամեակներ առաջ, երբ նրանց ոչ միայն յիշում էին, այլեւ շատ լաւ ճանաչում արուեստի բազմաթիւ այլ գործերից։

Այնուամենայնիւ, համաշխարհային կրկէսի պատմութեանը յայտնի են նաեւ մի քանի, այսպէս ասած, անմահ ծաղրածուական դիմակներ՝ բոլոր ժամանակների համար, որոնք գալիս են ժողովրդական հեքիաթ-

ներից ու գրողներից, ինչպիսիք են Թիլ Օյլենշփիգելը՝ Հոլանդիայում, Հանսվուրսթը՝ Գերմանիայում, Յիմար Իւանուչկան՝ Ռուսաստանում, Քալջ Նագարը՝ Հայաստանում եւլն.: Նրանց աւանդոյթին սկիզբ է առնում դեռեւս հնագոյն «ժողովրդական» ծաղրածուների[21] անուան հետ կապուած բանահիւսական պատումներից, եւ ժամանակի ընթացքում, պահպանելով իրենց բնութագրական գծերը, նրանք չեն հնանում, քանի որ համամարդկային արժէքների կրող են: Իրենց կատակերգական նկարագրի եւ մարդկային յատկանիշների խտացումով են նրանք այդքան կենսունակ, ուստի ամէն մի նշանաւոր ծաղրածու ինչ-որ չափով նրանցից օգտուել է:

Արտաքնապէս վառ արտայայտուած մի քանի գծերով, որոնք միայն առանձին դիտելիս կարող են արտառոց երեւալ, սակայն ընդհանուր համադրութեան մէջ ներդաշնակ են տուեալ դիմակի բնութագրին, ծաղրածուն կառուցում է իր հերոսի անհատական պատկերը եւ այստեղից սկսում է կերտել նրա իրական վարքագիծը: Այդ իսկ պատճառով էլ, որքան արտայայտիչ է նրա կերպարանքը եւ ճանաչելի՝ որպէս ծաղրածուական տիպ, նոյնքան տպաւորիչ են նրա արտաստաւոր բնութագիրն ու ծիծաղաշարժ արարքները: Այսպիսի դիմակների շարքին են պատկանել Ռաֆայէլ Յակորեանի[22], Յակոբ Ուգունեանի[23], Վիլեն Մելիքյանեանի[24] եւ Անտոն Փիլոսեանի[25] կատակարան հերոսները, որոնցից իւրաքանչիւրն առանձնանում էր թէ՛ իր գգեստով, դիմայարդարմամբ, սանրուածքով, թէ՛ շարժուձեւով, վարքագծով եւ միայն իրեն պատկանող ծաղրածուական հնարքների գինանոցով: Մէկը երկայնաճիգ լարի վրայ ներկայացնում էր բալետային ծաղրախաղ, միւսը՝ ծաղրանմանակումի եւ խեղկատակային մնջախաղի վարպետ էր, երրորդն իր ծաղրածուական հնարքները կառուցում էր ձեռնածուական վարժութիւնների օգնութեամբ, չորրորդն աշխատում էր երաժշտական գաւեշտախաղի ժանրում: Նրանցից ամէն մէկն էլ իւրովի ազգային էր, քանի որ բերում էր հայկական միջավայրում ձեւաւորուած վարքագծի այնպիսի տեսակ՝ խաղի չեշտագրում ու հնչերանգ, որ ամէն մի ծաղրածուական վարժութիւն աչքի էր ընկնում իր ինքնատիպութեամբ, թէեւ օգտագործած հնարքները կարող էին բնաւ էլ եզակի չլինել, այլ պարզապէս՝ կրկէսի նշանաւոր վարպետների փորձը իւրացնելու արդիւնք: Սա ընդունուած եղանակ է կրկէսային ծաղրախաղում եւ բոլորովին չի նսեմացնում արուեստագէտի ստեղծագործական դիմանկարը:

Նկատենք նաեւ, որ թուարկուած ծաղրածուներին յատկանշական է եղել մենախաղը, ուստիեւ իրենց դերատեսակով նրանք դասուել են, այսպէս կոչուած, մնջկատակ ծաղրածուների շարքը, որոնք ծագումնաբանօրէն պատկանում են չիկահերների ճիւղին: Միեւնոյն ժամանակ, կրկէսային կատակարանի այս տիպը սկզբունքօրէն տարբերւում է ծաղրածու եւ չիկահեր գոյգից մի էական առանձնայատկութեամբ. նրա

խաղը կառուցւում է անմիջական եւ միջնորդաւորուած ձեւերի գուգորդմամբ: Այսինքն՝ եթէ ծաղրածուն սովորաբար ակտիւ հերոս է, որի արարքները ներգործական բնոյթի են, իսկ չիկահերը պասիւ է՝ կրաւորական գործողութեան կրող, ապա մնջկատակ ծաղրածուն իր դիմակի տակ երկուսին բնորոշ յատկանիշներն էլ կրում է: Այս դերատեսակով երոյթի ունեցող արտիստը ոչ միայն անմիջականօրէն ինքն է հանդէս գալիս արտակենտրոն արարքներով, այլեւ նրա միջնորդութեամբ գաւեշտախաղի մէջ են ներգրաււում գանագան իրեր, առարկաներ, երբեմն էլ՝ կողմնակի մարդիկ: այս ամէնը նրա համար միեւնոյն նշանակութիւնն ունի, ինչ որ չիկահերը՝ ծաղրածուի:

ԼԷՈՆԻԴ ԵՆԳԻԲԱՐԵԱՆ

Ինչպէս երեւում է, նորագոյն շրջանում հայ ծաղրածուներն առաւելապէս նախընտրում են այս դիմակը, եւ նրանց շարքում դասական օրինակ կարող է ծառայել Լէոնիդ Ենգիբարեանի (1935-1972) հերոսը՝ Լէոնիան, որի ստեղծման պատմութիւնն իսկ չատ ուշագրաւ է: Պատրաստուելով առաջին անգամ ոտք դնել կրկէսային խաղահրապարակ՝ իւրաքանչիւր ծաղրածու ամէնից առաջ պարտաւորուած է լուծել մի գերագոյն խնդիր՝ ի՞նչ դիմակով է հանդէս գալու: «Կինոյի, թատրոնի եւ նոյնիսկ էստրադայի դերասանը անհամեմատ աւելի շահեկան վիճակում է.- *խոստովանել է մի առիթով Ենգիբարեանը,*- նրա հերոսի կերպարն ու բնոյթը հեղինակի տեքստում արդէն կանխորոշուած է: Ծաղրածուն ինքն է իր հերոսի հեղինակը: Բայց ինչի՞ց սկսել: Իմ առաջ ծառանում էին զանազան հարցեր, ասենք՝ իմ հերոսը ունենալո՞ւ է ծաղրածուական շպար: Ես մտովի ընտրում էի հանրայայտ ծաղրածուների շպարներն ու դիմակները: Ինձ յատկապէս գրաւում էր Գրոկի դիմակը՝ սպիտակ դէմք եւ ճաղատ գլուխ, մանաւանդ՝ Մարսէլ Մարսոյի շնորհիւ սպիտակ շպարը մոդային էր դարձել: Բայց ծանրութեթեւ անելուց յետոյ հրաժարուեցի շպարուելու մտքից ու որոշեցի իմ հերոսին կոչել Լէոնիդ Ենգիբարեան ու հենց ինձ ներկայացնել»[25]:

Այստեղից էլ աստիճանաբար սկսել է գծագրուել Լէոնիայի ծաղրածուական դիմանկարը, որը թէեւ ինքնատիպ էր, բայց եւ չատ «սովորական» իր բնութագրով, իսկ վարքագծով՝ հանդիսականի համար խիստ համակրելի: «Իմ հերոսը,- *կարդում ենք նոյն յօդուածում,*- լինելու էր տասնութ-քսան տարեկան տղայ, որի կենսագրութիւնը որոշ չափով նման է իմին: Նա եւս ծնուել ու հասակ է առել մեծ քաղաքում եւ ինչ-որ չափով խամրել են նրա վառ արտայայտուած ազգային գծերը, թէեւ նա ծագումով ակնյայտօրէն հարաւցի է: Ես ջանում էի լաւ հասկանալ, թէ ի՞նչ մարդ է իմ հերոսը. ի՞նչ է սիրում եւ ի՞նչ չի սիրում, ինչո՞վ է ապրում, ի՞նչ հակումներ ու աշխարհայեացք ունի: Ես նրան օժտեցի մանկական հետաքրքրասիրութեամբ եւ հարցասիրութեամբ: Այդ հե-

տաքրքրասիրութիւնը նրան յաճախ մղում է չմտածուած քայլերի, որը մեծացնում է ծիծաղելի թիւրիմացութիւնների հնարաւորութիւնը: Բայց հերոսի բնաւորութեան կոմիկական գիծը հարկաւոր էր խորացնել: Ուրեմն նա համեստ մարդ է լինելու եւ կրկէսային բոլոր համարները կրկնելու է՝ նշանակութիւն չտալով իր արածին: Իմ ապագայ հերոսի բնաւորութիւնը կամաց-կամաց պարզւում էր: Նա կոմիկական դրական հերոս է եւ բարի ծիծաղ է յարուցում»[27]:

Սակայն, որքան էլ Լէոնիա անունը կրող ծաղրածուական դիմակը ձեւուած լինէր Ենգիբարեանի խառնուածքին ու նախասիրութիւններին համապատասխան, ըստ էութեան, այն կատարեալ յօրինուածք էր՝ կրկէսային գործող անձ, եւ նախատեսուած էր ապրելու այնպիսի դերարուեստական միջավայրում, ուր իւրաքանչիւր առաջադրուած իրական հանգամանք կարող էր նախապայման հանդիսանալ մի նոր գաւեշտախաղի համար: Մնջկատակ ծաղրածուի կերպաձեւին բնորոշ այդ առանձնայատկութիւնն այսպէս է արտիստը բացատրել. «Ես կայտող եմ պատմել եւ անգամ ցոյց տալ, թէ ինչպէս է դա արւում... Գլխաւորն այն է, որ ձանձրալի չլինի, իսկ մնացածը... Դիցուք, վերցրէք մի շատ սովորական իր՝ դէ, ասենք, աւել, հիմա շրջէք այն ձեր ձեռքում: Ինչպէս տեսնում էք, սա արդէն աւել չէ, այլ կիթառ է: Հիմա ձգէք այն ձեր ուսին: Ինչպէս տեսնում էք, սա արդէն հրացան է: Ձեր աւելը կարող է դառնալ տապար, եւ դուք կը նետուէք հինգ հարիւր տարով ետ: Այնուհետեւ անսպասելիօրէն այն դառնում է հոկէյի մական, իսկ վայրկեան անց՝ պլակատ, որով սպորտասէրները սատարում են իրենց թիմին... Երբ այդ առարկայի փոխակերպումները կը սպառուեն, վերցրէք աւելի բարդ մի բան, ասենք՝ փողոցային լապտեր... Այն կարող է վերածուել երազանքի եւ տանել ձեզ հեռու-հեռու... Եթէ դա էլ յաջողուեց, ապա կարող էք վերցնել աստղաշատ երկինքը, որն անչափ նման է մաղի, սեւ մաղի՝ անհաւասար ծակոտիներով: Շաղ տուէք նրա մէջ ձեր երեւակայութիւնը եւ ցոյց տուէք բարեկամներին: Ու եթէ նրանց աչքերում կը տեսնէք թախծոտ ծիծաղի մէջ շաղախուած տխրութեան լուսաւոր կաթիլներ, ուրեմն դուք արդէն... Բայց գլխաւորն այն է, որ ձանձրալի չլինի»[28]:

Ահաեղ Ենգիբարեանն անդրադարձել է ոչ միայն իր ծաղրածուական խաղի ձեւակերտման եղանակներին, այլեւ դրանց յատուկ այն քնարական տրամադրութեանը, որն առանձնակի համայք է հաղորդել Լէոնիայի նկարագրին եւ նպաստել նրա ժողովրդականութեանը: Արտիստի ստեղծած այդ առինքնող հերոսը, թերեւս, համեմատելի էր «ժողովրդական ծաղրածուների» հետ, որոնց անհեթեթ արարքներին սովորաբար նոյնպէս «բարի ծիծաղով են» նայել: Բայց սա արդէն միայն մնջկատակ ծաղրածուի դիմակին բնորոշ գիծ չէր, այլ գալիս էր առաւելապէս արուեստագէտի անհատականութիւնից:

Իսկ ահա ձեւաբանօրէն Ենգիբարեանի արտիստական նկարագիրն իր հիմնորոշ յատկանիշներով իրապէս համապատասխանել է արտակենտրոն գաւեշտախաղի ժանրին, ուր առանձնակի են կարեւորւում. ա.՝ հակադիր իրավիճակները, բ.՝ միջնորդաւորուած գործողութիւն կառուցելու եղանակները, գ.՝ խաղի տեմպառիթմը, դ.՝ ծաղրածուական հնարքները: Այդպէս են ձեւաւորուել նրա ստեղծագործական նախասիրութիւնները ի սկզբանէ: Դեռեւս ուսումնառութեան ժամանակ, երբ պարտաւոր էր համատանալու կրկէսային բոլոր ժանրերին, նա գերադասել է մնջախաղը, մարգախաղը, հաւասարակշռութեան վարժութիւնները ու ձեռնածուական արուեստը, որոնց էլ, բնականաբար, դիմել է իր յաւագոյն համարները կառուցելիս:

Դիտարկենք այդ չարքից մի քանիսը:

Նախ, հակադիր իրավիճակներից կառուցուած գաւեշտախաղի դասական օրինակ կարող է ծառայել «Գլաններ» համարը: Լէոնիան կրկէսային խաղահրապարակ էր դուրս գալիս գործնական քայլուածքով՝ հայեացքը կենտրոնացած, հասնում էր չրջանաձեւ պատուանդանին, որը մնացել էր նախորդ էյմիից, եւ բարձրանում, կանգնում էր վրան: Նրա ձեռքին գլաններ էին, ինչպիսիք սովորաբար օգտագործում են էկուիլիբրիստները (aequilibrist): Միաւոր պարզ էր. պատանին պատրաստւում էր ցուցադրել հաւասարակշռութեան բարդ մի վարժութիւն: Փորձում էր, սակայն չէր ստացւում: Յաջորդ փորձը կրկին աւարտւում էր ապարդիւն: Ձախողւում էր նաեւ երրորդ փորձը: Լէոնիան խիստ վշտանում էր, յուսահատւում, իսկ դահլիճը քրքջում էր: Առաջին ամէն ինչ ընթանում էր «միջակ» գաւեշտի սահմաններում: Բայց, ահա չորրորդ փորձն անսպասելիօրէն յաջողութեամբ էր պսակւում. նա մի կերպ կարողանում էր պահպանել հաւասարակշռութիւնը: Եւ դա բաւական էր, որպէսզի անյաջողութիւնից ծայրայեղ ընկճուած այդ պատանին ակնթարթօրէն կերպարանափոխուի: Նրա տեղը, կարծես, յայտնւում էր մէկ ուրիշը՝ պայծառադէմ, ինքնավստահ ու յանդուգն: Նրա անբռնազբօս ուրախութիւնը հասնում էր այնպիսի չափերի, որ ինքն իրեն պարգեւատրում էր չքանչանով: Այնուհետեւ, փորձում էր հաւասարակշռութիւն պահպանել երկու գլանների վրայ: Դա նրան նոյնպէս յաջողւում էր, ուստիեւ նորից կրծքին չքանչան էր փակցնում: Աստիճանաբար, գլանների թիւը հասնում էր հինգի, իսկ կրծքի չքանչանները բազմապատկւում էին: Ընդ որում, հանդիսատեսը նրա ցուցադրած հաւասարակշռութեան այդ չափազանց բարդ վարժութիւններին, կարծես, այնքան էլ կարեւորութիւն չէր տալիս. նրա համար շատ աւելի էական էին Լէոնիայի արտասովոր վարքագիծն ու արտառոց չափերի հասնող փառասիրութիւնը: Բանն այն է, որ այստեղ եւս, ինչպէս ամէն մի գեղարուեստօրէն մշակուած կրկէսային համարում, նիւթը՝ որպէս ֆիզիկական վարժութիւն, յաղթահարւում էր ձեւի, տուեալ դէպքում ար-

տակենտրոն արարքների միջոցով, ինչն էլ առաջացնում էր համապատասխան զեղագիտական յուզմունք (affectus), տուեալ դէպքում՝ ծիծաղ։

Ծաղրածուի արտասովոր արարքները, իհարկէ, կարող են չատ բազմազան լինել. իւրաքանչիւր ծաղրածու ստեղծագործում է իր տաղանդի ու վարպետութեան չափով, սակայն, «ձանձրալի չլինելու» խնդիրը բոլորի համար էլ մէկ է, ուստի տեսնենք, թէ ինչպէս է այն լուծել Ենգիբարեանը՝ միջնորդաւորուած գործողութիւն կառուցելիս։ Վերցնենք «Հովանոցներ» կոչուած գաւեշտախաղը, ուր Լէոնիան հանդէս էր գալիս իրրեւ ձեռնածու։ Այստեղ նա ցուցադրում էր իրեր խաղարկելու բացառիկ վարպետութիւն՝ ոչ միայն ձեռքերի, այլեւ ոտքերի օգնութեամբ։ Գործողութիւն կառուցելու այս կերպը համեմատելի է թատերարուեստի այն տեսակների հետ, ուր նոյնպէս խաղը ներկայացւում է միջնորդաւորուած եղանակով (տիկնիկային թատրոն, սուուերների թատրոն եւն.), սակայն մի էական վերապահութեամբ. ձեռնածուն չի անձնաւորում այդ իրերը եւ իր խաղը չի կառուցում դիպաշարային հենքի վրայ։ Այդ իսկ պատճառով էլ, իրեր խաղարկելու այդ արուեստը, թերեւս, աւելի մօտ է պարարուեստին. երկու դէպքում էլ խաղը, յիրաւի, պատկերանում է՝ իրրեւ «կենդանութիւն առած գարդանկար», դինամիկ նախշ[20]։

Այդուհանդերձ, այս համեմատութիւնները խիստ պայմանական են։ Ըստ էութեան, ձեռնածուական արուեստում գործողութիւնը կառուցւում է բոլորովին այլ սկզբունքներով. խաղի ձեւակերտման անմիջական եւ միջնորդաւորուած եղանակները այստեղ չեն տարանջատւում, այլ հանդէս են գալիս որպէս միասեռ կառոյցի բաղադրիչներ։ Կրկէսային արուեստի այս ձեւաբանական առանձնայատկութիւնը յատակ կարելի է դիտել յատկապէս արտակենտրոն խաղերում, երբ առարկայ խաղացնողը եւ խաղացուող առարկան առաւելագոյնս յրացնում են միմեանց։ Եւ այլ կերպ չի էլ կարող լինել. չէ՞ որ այդ երկու հակադիր բեւեռների չափումից էլ ծնւում է բուն կրկէսային խաղը։

Թւում էր՝ հովանոցները Լէոնիայի համար իսկապէս շնչաւոր էակներ են, որոնք թռչկոտելով օդում՝ ակրոբատիկ պար էին բռնում, յետոյ էլ մէկը միւսի ետեւից, ասես վարժեցուած շնիկներ, յայտնւում էին նրա ուսին դցած պայուսակի մէջ։ Բայց սա բնաւ էլ տիկնիկավարի նման առարկաներ անձնաւորելու խաղ չէր։ Առերեւոյթ, իհարկէ, կարող էր թուալ, թէ հովանոցներն այստեղ ապրում են իրենց ինքնուրոյն կեանքով, սակայն իրականում Լէոնիայի վերաբերմունքն էր վճռորոշը. արտիստի խաղն էր այդպիսի տպաւորութիւն ստեղծում։ Հանելով պայուսակից իր ձեռնածուական իրերը՝ նա խնամքով ու առանձնակի հոգատարութեամբ դասաւորում էր յատակին, յետոյ քնքշօրէն դրանք դիրկն էր առնում եւ կամացուկ հեռանում խաղահրապարակից։

Այս վերջին պահը իր զգացմունքային յագեցուածութեամբ յիշեցնում էր «Ափսէներ» գաւեչտը, երբ խաղի աւարտին, իրը՝ ալիւմինէ ափսէն, նոյնպէս այլարանօրէն իմաստաւորւում էր։ Այստեղ արդէն Ենգիբարեանի ձեռնածուական հմտութիւնը դրսեւորւում էր ճիշտ հակառակ ձեւով՝ առարկաներ խաղարկելու՝ Էդոնիայի «անճարակութեամբ»։ Մէկը միւսի ետեւից ճենապակէ ափսէները ջարդուփշուր անելուց յետոյ՝ նա վերջնականապէս յուսահատւում էր եւ ձեռք քաշում իր ապարդիւն փորձերից։ Աչխոյժ ու գուարթ պատանին անմիջապէս դառնում էր մռայլ ու թախծոտ։ Մինչ այդ դահլիճում տիրող անգուսպ ծիծաղին ակնթարթօրէն յաջորդում էր քար լռութիւնը։ Էդոնիան տխուր հայեացքով որոնում էր իր ալիւմինէ ափսէն, որն սկզբում արհամարհաբար դէն էր նետել։ Վերջապէս, գտնելով այն՝ դանդաղ մօտենում էր, գգուշօրէն բարձրացնում եւ մաքրում վրայի փոշին՝ խորապէս գղջալով մինչ այդ արածի համար, ապա, ինչպէս նախորդ գաւեչտախաղում, դանդաղ հեռանում էր ասպարէզից։

Մտարերենք անմիջական եւ միջնորդաւորուած ձեւերի զուգորդմամբ արտակենտրոն գաւեչտախաղ կառուցելու եւս մի օրինակելի նմոյշ։ Տխուր գբօսնելիս Էդոնիան յանկարծ տեսնում էր գետնին գլորուող կարմիր մի փուչիկ։ Նրա տրամադրութիւնը կտրուկ փոխւում էր, դէմքը՝ պայծառանում։ Փորձում էր վերցնել փուչիկը, բայց քամին խանգարում էր՝ ամէն անգամ այն փախցնելով Էդոնիայի ձեռքից։ Մի շարք ծիծաղաշարժ հնարքներից յետոյ նրան, վերջապէս, յաջողւում էր բռնել փուչիկը. գրկում էր եւ պար էր գալիս, ասես, իր սիրած աղջկայ հետ։ Առարկան կենդանանում էր նրա աչքում եւ դառնում ամենամտերիմ ընկերը։ Բայց հենց այդ պահին փուչիկն անսպասելիօրէն դուրս էր պրծնում նրա թեւի տակից, մի քանի պտոյտ էր տալիս օդում, ապա եւ պայթելով ընկնում էր ցած։

Այսպիսով, Ենգիբարեանի հերոսը գալիս էր ոչ միայն խախտելու առօրեական պատկերացումները, այլեւ գլխիվայր շրջելու ամենաստվորական իրերը։ Սա, իհարկէ, ընդհանրապէս յատկանշական է կրկէսային արուեստին, իսկ մնջկատակ ծաղրածուի խաղում կատակերգականի հիմնական տարրերից մէկն է։ Սակայն, կեանքի առօրեայ ըմբռնումներն ու չափանիշները «աղաւաղելով», տրամագծօրէն հակառակը շրջելով՝ Ենգիբարեանը հասնում էր փիլիսոփայական ընդհանրացումների, որոնք շատ հեռու էին խաղի առերեւոյթ բովանդակութիւնից։ Ահա թէ ինչու, ամէն մի խաղի աւարտին ներկայացուող այդ տեսարանները, դեռ յետոյ էլ շարունակում էին արձագանգել հանդիսատեսի հոգում ու մտքում։ Թերեւս, այդ է պատճառը, որ Էդոնիայի ելոյթները կարծես չէին աւարտւում, այլ պարզապէս մի հարթակից տեղափոխւում էին մէկ ուրիշ հարթակ։ Այս առումով, ուշագրաւ են «Բռնցքամարտ» եւ «Խօսափող» գաւեչտախաղերը։

Վերցնենք առաջինը եւ, նախ, տեսնենք, թէ ինչո՞ւ է այն յայտնուել Ենգիբարեանի խաղացանկում։ «Ծիծաղաշարժ ծեծկռտուքի տեսարաններ կառուցելու առումով, բոնցքամարտը հնուց ի վեր շահեկանօրէն օգտագործել են թէ՛ կրկէսում, թէ կինոյում,- *գրել է արտիստը,*- սակայն ինձ այդ խաղը հետաքրքրեց ուրիշ տեսանկիւնից: Բանն այն է, որ այստեղ մեծ հնարաւորութիւններ էին բացւում առաւելագոյնս դրսեւորելու իմ հերոսի բնաւորութեան գծերը: Եւ ամենից առաջ՝ նրա ռոմանտիկական խառնուածքը»[30]: *Խօսքն այն պատանեկան ռոմանտիզմի մասին է, որ առանձնայատուկ հերոսականութիւն էր հաղորդում Լէոնիայի վարքագծին, բայց եւ չէր խախտում ծաղրածուական ժանրի գեղագիտական չափանիշները։ Երկչոտ ու նիհարակազմ պատանին՝ մենամարտի բռնուելով թիկնեղ ու մկանուտ ախոյեանի հետ՝ հակառակ առողջ տրամաբանութեանը, ի վերջոյ դուրս էր գալիս յաղթանակած։ Եւ ամենակարեւորը. վերջնախաղում, երբ երկուսն էլ կանգնում էին դատաւորի կողքին՝ աջ ու ձախ, Լէոնիան, գրեթէ ուշաթափ, ոտքերն էր ծալում, մինչդեռ հակառակորդն առոյգ վիճակում էր եւ նրան կարծես հարուած անգամ դիպած չլինէր։ Այդուհանդերձ, դատաւորը բարձրացնում էր Լէոնիայի ձեռքը՝ իբրեւ յաղթողի։ Կարո՞ղ էր նրա այդ որոշումը բողոք առաջացնել՝ ոչ, իհարկէ։ Ենգիբարեանն այս գաւեշտախաղում անհեթեթ իրավիճակը արտակենտրոն արարքների միջոցով այնպէս էր գեղարուեստօրէն յաղթահարել, որ էական էր դարձրել խաղի ոչ թէ առերեւոյթ բովանդակութիւնը, այլ արտայայտչաձեւը՝ կառուցուած բոլորովին հակառակ իմաստային չեչտադրումներով։*

Ենգիբարեանական հերոսի վարքագծին յատուկ այդ կոմիկական հերոսականութեան վերաբերեալ ժամանակին ուշագրաւ դատողութիւններ է արել Ն. Ռումեանցեւան. «Երբ հանդիսատեսը ծիծաղում էր նրա արարքների վրայ, դրաման թաքուն ու անտեսանելի մօտենում էր ծաղրածուին, բայց չգտնելով այն պահը, երբ հնարաւորութիւն կ'ունենայ բացայայտուելու գործողութեան մէջ՝ նոյնպէս թաքուն հեռանում էր: Խաղը բարեյաջող էր աւարտւում: Գործողութիւնը զարգանում էր կատակերգականի կանոններով, բայց ինչ-որ դրամատիկական տարրեր, այնուամենայնիւ, նշմարւում էին: Այդպիսին էր, օրինակ, «Բռնցքամարտ»ի տեսարանը, երբ ծաղրածուի բոլոր արարքներն ուղեկցւում էին ծիծաղով: Բայց առկայ էր նաեւ երկրորդ՝ զուգորդական պլանը, դրամատիկական վերջնախաղով: Չէ՞ որ ֆիզիկապէս թուլակազմ Լէոնիան հեշտութեամբ կարող էր իր իսկ վեհանձնութեան զոհը դառնալ: Սակայն Ենգիբարեանը չէր մոռանում, որ ծաղրածու է, ուստի երբեք չէր խախտում իր ժանրի սահմանները»[31]: *Իսկ դա նշանակում էր, որ իւրաքանչիւր գաւեշտ պէտք է հեքիաթի պէս վարակիչ լինէր ու պարզ, այստեղ ամէն ինչ պէտք է այնքան յստակ լինէր ու հասկանալի, որ հեշտութեամբ չարժէր հանդիսատեսի երեւակայութիւնը։*

Միայն տպաւորիչ արտայայտչամիջոցներն են առաջացնում գեղագիտական յուզմունք. հանդիսատեսի մէջ արթնացնում համապատասխան խոհեր ու ապրումներ, նպաստում նրա ոչ միայն գեղայական, այլեւ փիլիսոփայական ընկալմանը:

Մի անգամ, ներկայացման ժամանակ Ենգիբարեանին խնդրում են գրաղեցնել հանդիսատեսին, քանի որ յաջորդ համարի արտիստներն ուշանում էին ելոյթից: Արտիստը ստիպուած է լինում տեղնուտեղը յանպատրաստից որեւէ բան յօրինել: Նկատելով, որ բանուորները խաղահրապարակը կարգաւորելիս խօսափողը դրել են արգելապատին, նա վերցնում է այն եւ սկսում ինչ-որ կրակոտ ճառ արտասանել: «Խօսքերը չէին լսում,- մտաբերել է յետագայում արտիստը,- եւ յանկարծ պարզուեց, որ խօսափողն անսարք է: Ես մատով տկտկացրի, յետոյ փչեցի, իսկ ուղեղումս անընդհատ պտտւում էր. «էլ ի՞նչ անեմ»: «Լարի վրայ կանգնիր»,- յուշեց պրպտուն միտքս: Յիշեցի, թէ ինչպէս են ճոպարարները շեղում հանդիսատեսի ուշադրութիւնը, եւ բարձրացրի լսափողը՝ իբրեւ թէ լոյսին աւելի մօտ: Այդպիսով, հանդիսատեսի հայեացքն ուղղեցի դէպի վեր, իսկ ես աննկատ ոտքս դրեցի լարին: Գործողութիւնն աւելի հեշտ ընթացաւ: Քիչ անց պարզուեց նաեւ անսարքութեան պատճառը: Ոտքս վերցրի լարից, եւ խօսափողը սկսեց աշխատել: Ես ձեւ արեցի, թէ պատրաստւում եմ ելոյթ ունենալ, բայց հենց այդ պահին ծնկներս թուլացան, լեզուս կապ ընկաւ: Շփոթուած նայեցի հանդէսը վարող տեսուչի կողմը: Նա հայեացքով փորձեց քաջալերել ինձ: Ես նրան հասկացրի, որ խիստ յուզւում եմ եւ մեքենայաբար խօսափողը տարայ սրտիս կողմը: Հենց այդ պահին միտքս փայլատակեց. զգուշօրէն եւ բոլորից աննկատ մատով արագ-արագ խփեցի խօսափողին: Կրկէսով մէկ լսուեց՝ «տուկ-տուկ-տուկ»: Դա իմ սիրտն էր բաբախում: Այնուհետեւ ես որոշեցի ստուգել նաեւ տեսուչի սրտի աշխատանքը: Այս անգամ ռիթմն արդէն բոլորովին այլ էր՝ մեծ ընդմիջումներով. «բում...բում...բում»[32]:

Արտիստի խոստովանութեամբ՝ «լաւագոյն ստեղծաբանութիւնն այն է, որը նախապէս մանրակրկիտ մշակուել է փորձի ընթացքում»[33]: *Բայց, ինչպէս երեւում է, մնջկատակ ծաղրածուն չի կարող խաղառ մերժել յանպատրաստից խաղը: Նկարագրուած տեսարանն էլ այն ոչ բացառիկ դէպքերից է, երբ ապագայ գաւեշտը ծնւում է հենց կրկէսային հրապարակում՝ ներկայացման ժամանակ:*

Մի չարք չարաճճի արարքներից յետոյ, երբ բացայայտւում էին խօսափողի աներեւակայելի հնարաւորութիւնները, Լէոնիայի սրտի բարախումը վախից սկսում էր աստիճանաբար մարել: Նա ուշաթափ ընկնում էր: Անմիջապէս ջուր էին տալիս, ուշքի բերում, որից յետոյ սրտի աշխատանքը վերջապէս կանոնաւորւում էր, եւ նա երջանիկ վերադարձնում էր խօսափողը տեսուչին ու հեռանում: Այս գաւեշտային տեսարա-

նր ամբողջովին կառուցուած էր խօսափողի այլակերպումների վրայ, ինչն էլ դառնում էր գործողութեան առանցքը: Ուստի բնական է, որ խօսափողով էլ պէտք է եզրափակուէր խաղը. այն յայտնւում էր իր ճիշտ տեղում եւ չարունակում առօրեայ աշխատանքը, որը չափազանց հեռու էր քիչ առաջ ներկայացուած արտակենտրոն հնարանքներից:

Ինչպէս տեսնում ենք, իրերը Ենգիբարեանի արուեստում երբեք հանդէս չեն եկել իրենց առօրէական նշանակութեամբ: Սակայն խօսքն այստեղ առարկաներին ծաղրանկարային կամ էլ չափազանցուած ձեւեր տալու մասին չէ, որ յաճախ կարելի է տեսնել ծաղրածուների խաղում: Ընդհակառակը, Ենգիբարեանը միտումնաւոր խուսափել է դրանց արտաքին նկարագիրը աղաւաղելուց՝ թերեւս համարելով այդ եղանակը հնացած եւ ծիծաղ կորզելու էժան հնարանք: Նրա գաւեշտախաղերում օգտագործուող իրերն արտաքնապէս չեն փոխուել. փոխուել են դրանց առերեւոյթ բովանդակութիւնն ու կիրառական նշանակութիւնը, ինչն էլ հենց պայմանաւորուած էր ծաղրածուի արտակենտրոն վարքագծով: Լինէր դա հովանոց, փուչիկ, խօսափող, թէ սովորական աւել՝ արտիստի ձեռքին, ասես, այլակերպւում էր, վերաիմաստաւորւում, դառնում փոխաբերութիւն:

Այս ամէնը ենթարկւում էր համապատասխան ռիթմի եւ չափի, ինչը կարգի էր բերում խաղի արտակենտրոն շեշտադրումները: Վաղուց ի վեր ապացուցուած է, որ կրկէսում իւրաքանչիւր ծաղրածուական հնարք պէտք է ոչ միայն բխի տուեալ հերոսի բնութագրից, այլեւ լինի գեղարուեստօրէն տպաւորիչ, գրաւի հանդիսատեսի ուշադրութիւնը: Ուստիեւ Ենգիբարեանը նկատել է. «Ծաղրածուին եւ յատկապէս ծաղրածու-միմոսին անհրաժեշտ է յիշել, որ յաճախ ստիպուած ենք լինում աշխատել այնպիսի պայմաններում, երբ մեր շուրջը՝ այս ու այնտեղ, խաղահրապարակի յարդարանքով են զբաղուած... Իսկ դա նոյնն է թէ՝ խօսել աղմկալի սենեակում, ուր բոլորը միաժամանակ բարբառում են: Մեր ձայնը՝ մնջախօսութեան ձայնը, պէտք է տարբերուի միւս բոլոր ձայներից, մեր շարժումները՝ կրկէսի բանուորների շարժումներից, մեր ռիթմը՝ նրանց ռիթմից: Ծաղրածուն միայն այդ դէպքում կարող է տեսանելի դառնալ...»[34]:

Ահա թէ ինչու Լէոնիայի արտակենտրոն արարքներն ընդգծելիս Ենգիբարեանն առաջնային կարեւորութիւն է տուել նաեւ խաղի ընդհանուր ռիթմին եւ չափին: Դրա վառ օրինակներից մէկն էլ «Հովանոցներ» գաւեշտախաղն էր: «Սովորաբար,- գրել է նա,- հովանոցները ես խաղարկում էի միջին ռիթմով: Բայց մի օր, երբ մենք բոլորս էլ մի փոքր շտապում էինք (գնացքից էինք ուշանում), ես սկսեցի սովորականից աւելի արագ հովանոցները ոտքերով օդ նետել եւ նկատեցի, որ հանդիսատեսն աւելի ջերմ արձագանգեց դրան: Այդ հանգամանքը հաշուի առնելով՝ ես յետագայում վերակառուցեցի ամբողջ խաղը: Հիմա,

ելոյթի ընթացքում աստիճանաբար աւելացնում եմ տեմպը... Ապա խիստ արագ տեմպից անցնում եմ հանդարտ ռիթմի»[35]:

Մաղրածուական խաղի գեղարուեստական արտայայտչականութիւնն են եկել ընդգծելու երաժշտական եւ լուսագունային ձեւաւորումները նոյնպէս: Ընդ որում, Ենգիբարեանը դիմել է դրանց ոչ թէ սոսկ իրրեւ լրացուցիչ գեղարուեստական միջոցների՝ օժանդակ հնարքների, այլ՝ խաղի ձեւակերտման հիմնական լծակների: Այստեղ նրա համար ոչ մի մանրուք աւելորդ չէր: «Մի անգամ,- կարդում ենք արտիստի գրառումներում,- ես լսեցի Լուի Արմսթրոնգի հանրայայտ բլուզը... Ինձ չափազանց գրաւեց այդ մեղեդու սրտառուչ թախիծը. ես քայլում էի եւ անընդհատ կիսաձայն երգում: Ինքնաբերաբար, երեւակայութեանս մէջ սկսեց գծագրուել տխուր ակրոբատի մասին պատմող մանրապատում մի դիպուածաշար. նա կեանքում այնքան յաճախ է անյաջողութեան մատնուել, որ նոյնիսկ հիմա, երբ իր գործի վարպետն է՝ ուժեղ է, ճարպիկ եւ ճկուն, այնուամենայնիւ, յաջողութեանը նայում է թերահաւատօրէն...»[36]: Այդպիսով, Արմսթրոնգի երաժշտութեան ուղեկցութեամբ, Լէոնիան դանդաղ դուրս էր գալիս կրկէսային հրապարակ, կանգնում էր կենտրոնում. դահլիճը մթնում էր, եւ լուսարձակից ընկած ճառագայթի ներքոյ ծաղրածուն սկսում էր ցուցադրել ակրոբատիկայի իր բացառիկ հնարքները: Լոյսն ու երաժշտութիւնը, օրգանապէս միահիւսուելով խաղին, դառնում էին ամբողջական մի կառոյց, ուր ձեւն ինքնին գեղարուեստօրէն իմաստաւորուած էր:

Ձաւեչտային հնարքներն ընդգծելու եւ տեսարանի արտայայտչականութիւնը խտացնելու նպատակով Ենգիբարեանն այդ նոյն միջոցներն է կիրառել նաեւ «Բռնցքամարտ»ում: Երբ հանդիսասրահից անծանօթ գեղեցկուհին ծաղիկ էր նետում խաղահրապարակ, գործողութիւնն անսպասելիօրէն կանգ էր առնում. դահլիճը ողողւում էր լուսային գունագեղ գարդանախշերի մէջ, հնչում էր մի քնարական մեղեդի, եւ Լէոնիան ասես տեղափոխւում էր երազային աշխարհ. վարդի յայտնուելուն պէս նա ընկնում էր սիրային պատրանքների գիրկը: Այս տեսարանի գաղափարական ազդեցութիւնն այնքան մեծ էր, որ Ենգիբարեանը անգամ մտադիր է եղել վարդը իրրեւ խորհրդանիշ, ասպարէզ հանել իր բոլոր ելոյթների ժամանակ[37]:

Երաժշտական եւ լուսագունային ձեւաւորումները, որպէս խաղի կերպաւորմանը նպաստող միջոցներ, Ենգիբարեանի համար միշտ էլ առաջնային կարեւորութիւն են ունեցել: Այսպէս, գլանների վրայ հաւասարակշռութեան վարժութիւններ կատարելիս, երբ գործողութիւնը ծայր աստիճան լարւում էր, գլանների թիւը հասնում էր հինգի, իսկ հերոսի կրծքին անհամար շքանշանները պսպղում էին շլացուցիչ փայլով, յանկարծ տիրում էր քար լռութիւն. թւում էր՝ բոլորը, մի մարդու պէս,

սպասում են ինչ-որ արտակարգ իրադարձութեան: Լէոնիան չրջում էր նուագախմբի կողմը եւ դիմախաղով հասկացնում, թէ ինչ երաժշտութիւն պէտք է հիմա հնչի, ապա արտառոց ընդգծուածութեամբ՝ չքանչաններով գարդարուած կուրծքն աւելի էր դուրս ցցում: Այդ պահին նուագախմբի չեչտակի մուտքն իր խեղկատակային հանդիսաւորութեամբ նոյնքան գաւեչտալի էր:

Ենգիբարեանը խիստ արտայայտիչ լուծում էր գտել նաեւ «Ափսէներ» գաւեչտախաղում: Առհասարակ ափսէներ կոտրելը՝ որպէս կոմիկական արարքներ կառուցելու չարժառիթ, մնջկատակ ծաղրածուների ամենահին հնարքներից է[38]: Այստեղ էլ հերոսի ապաշնորհութեան հետեւանքով մէկը միւսի ետեւից ջարդուփշուր էին լինում ափսէները, ինչը հնարաւորութիւն էր տալիս արտիստին՝ փայլուն խաղարկելու մի շարք ծիծաղելի իրավիճակներ: Սակայն, յաջողութեան հասնելու Լէոնիայի ցանկութիւնն այնքան մեծ էր, որ, ի վերջոյ, յուսահատ եւ ինքն իրենից հիասթափուած, նա երեխայի պէս կուչ էր գալիս, իսկ լիաթոք ծիծաղող հանդիսատեսն ակամայ սկսում էր կարեկցել միամիտ պատանուն: Այդ ժամանակ յոյսերը սկսում էին մարել, եւ կիսախաւարի մէջ կրկին միայն լուսարձակի ճառագայթն էր ընկնում Լէոնիայի վրայ: Նա դանդաղ, թախծոտ երաժշտութեան հնչիւնների ներքոյ մօտենում էր իր ափսէին, վերցնում էր այն եւ գլխիկոր հեռանում: Սա արդէն միանգամայն նոր լուծում էր՝ էքսցենտրիկ խաղի մի նոր տեսակ:

Այս օրինակները, կարծում ենք, բաւարար են՝ եզրակացնելու, որ Ենգիբարեանի արուեստում անմիջական եւ միջնորդաւորուած մնջախաղի արտակենտրոն հնարքները կառուցուել են ոչ միայն հակադրութիւնների, արտառոցութեան եւ ծաղրանմանակումների հիման վրայ, այլեւ ռիթմի եւ չափի, երաժշտութեան եւ յոյսի համադրութեամբ: Սրանք էին այն հիմնորոշ բաղադրատարրերը, որոնցով հիւսւում էր ներկայացման ողջ կերպաճեւը, ուստիեւ դրանց կազմութեան խտութեամբ էլ պայմանաւորուած էր ընդհանուր խաղի արտայայտչականութեան աստիճանը:

ՏԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] D. Jando, *Histoire Mondiale du Cirque*, Jean-Pierre Delarge, Փարիզ, 1977, էջ 149:

[2] *Վերածննդի գարաշրջանում ձեւաւորուած թատրոնի տեսակ, որ յայտնի է նաեւ* Commedia dell'arte *անուանումով*:

[3] Ye. Kuznetsov, *Tsirk. Proiskhojdenie. Razvitie* (Կրկէս. ծագումը, զարգացումը), Մոսկուա, 1971, էջ 82:

[4] *Յարութիւն Ճիւանեանի մասին մանրամասն տե՛ս՝ Բախտիար Յովակիմեանի «Մ՛վ է Կ.Պոլսի «Արամեան Թատրոնի»ի Պատմութեան Հեղինակը» յօդուածը, Հանդէս Գրականութեան եւ Արուեստի, Թեհրան, 2006, թ. 14, էջ 20-21:*

[5] *Արեւելք*, 19.03.1899, թ. 3967, Կ.Պոլիս:

[6] *Համմո.՝ Հենրիկ Յովհաննիսեան, Թատրոնը Միջնադարեան Հայաստանում, Երեւան, ՀԳԱ հրատ., 1978, էջ 256:*

[7] T. Rémy, *Les Clowns*, Bernard Grasset éditeur, *Փարիզ*, 1945, էջ 16-23:

[8] *Արեւելք*, 1899, 3 *Ապրիլ*, *թ. 3980*, *կ.Պոլիս:*

[9] «Տեսակ մը բազմակողմանի մարմնամարզական փորձ՝ որ կատարեալ ընդունակութիւն ու վարժութիւն կը պահանջէր. պէտք էր բոլորովին նմանիլ կրիայի, գորտի եւ կամ ուրիշ ո եւ է սողունի մը. թաթառուբայի դերը կը կայանար նաեւ ուրիշ շատ դժուարին փորձի մը մէջ. այսինքն՝ գլուխը մարմնին տակ առնելով, պէտք էր ձիգ բռնել ոտքերը եւ թեւերուն հետ զանոնք շարժտկելով աջ ու ձախ բալել՝ մողէսի մը պէս, միշտ գլուխը անտեսանելի պահելով» *Յովհաննէս Գասպարեան*, «*Էջ Մը Հայ Թատրոնի Պատմութենէն*», *Արեւելք*, 3.03.1899, *թ. 3980*, *կ.Պոլիս:* (*Այս եւ յաջորդ ծանօթագրութիւնը «Էջ Մը Հայ Թատրոնի Պատմութենէն» յօդուածի հեղինակինն են - Գ.Օ.*):

[10] «Տեսակ մը պար, ուր պէտք էր վեր ցատկելով օդին մէջ դառնալ», *նոյն:*

[11] *Արեւելք*, 3.03.1899, *թ. 3980*, *կ.Պոլիս* (*ընդգծումները մերն են - Գ.Օ.*):

[12] Kuznetsov, էջ 80-81:

[13] Rémy, էջ 56 (*տե՛ս՝ հեղինակի ծանօթագրութիւնը*):

[14] *Արեւելք*, 6.04.1899, *թ. 3982*, *կ.Պոլիս:*

[15] *Տե՛ս՝* A. Rumnev, *O Pantomime. Teatr. Kino* (*Մնջախաղի մասին. Թատրոն. Կինոարուեստ*), *Մոսկուա*, «*Իսկուստվո*», 1964, էջ 87:

[16] *Տե՛ս՝ Գ. Վ. Օրդոյեան*, «*Միջնադարեան Կատակային Դիմակները Կիլիկեան Միջավայրում*», *Պատմաբանասիրական Հանդէս*, 1984, *թ. 4*, էջ 119-123:

[17] Rumnev, էջ 107:

[18] *Տե՛ս՝* Yu. Dmitriev, *Sovetskiy Tsirk* (*Խորհրդային կրկէսը*), *Մոսկուա*, «*Իսկուստվո*», 1963, էջ 346:

[19] *Գ. Գոյեան*, *Մ՛րն ի Ազգային Թատրոնը*, *Երեւան*, «*Հայաստան*», 1970, էջ 158:

[20] *Նոյն*, էջ 157-158:

[21] «*Ժողովրդական*» *բառն այստեղ ենթադրում է ժողովրդի մէջ նրանց ճանաչուած լինելը:*

[22] *Հայաստանի վաստակաւոր արտիստ: Կրկէսում սկսել է հանդէս գալ 1952ին, սկզբնապէս մարզական ժանրում՝ իբրեւ լարախաղաց, ապա եւ համտացել է ծաղրածուական արուեստին:*

[23] *Հայաստանի վաստակաւոր արտիստ: Հայկական կրկէսում հանդես է եկել Ի. դարի 60ականներից սկսած: Նրա խաղին յատուկ էին ծաղրանմանակումն ու վարքգծի արտասովոր ընդգծուած կերպաձեւերը:*

[24] *Հայաստանի վաստակաւոր արտիստ: 1974ին աւարտել է Մոսկուայի Թատերական Արուեստի Պետական Ինստիտուտի բեմադրական բաժինը: Սկզբնապէս հանդէս է եկել մարզական ժանրի համարներում, ապա ուսանելով Ենգիբարեանի արուեստանոցում՝ մասնագիտացել է մնջկատակ ծաղրածուի դերատեսակին:*

[25] *Վերոնշեալ ծաղրածուների չարքում ամենաերիտասարդն է (ծն. 1964ին): Աւարտել է Մոսկուայի Կրկէսային Արուեստի Ուսումնարանը՝ որպես երաժշտական ժանրի ծաղրածու: Նրա խաղն աչքի է ընկնում նաեւ արտասովոր ֆիզիկական վարժութիւնների ցուցադրումով:*

[26] *Գարուն*, 1980, *թ. 4*, էջ 68-69, *Երեւան:*

[27] *Նոյն:*

[28] L. Yengibaryan, *Posledniy Raund* (*Վերջին ռաունդը*), *Երեւան*, 1984, էջ 68:

[29] M. Kagan, *Morfologiya Iskusstva* (*Արուեստի ձեւաբանութիւն*), *Լենինգրադ*, «*Իսկուստվո*», 1972, էջ 360:

[30] *Sovetskaya Estrada i Tsirk*, 1965, թ. 12, էջ 17։
[31] *Նույն*, 1982, թ. 2, էջ 6։
[32] L. Yengibaryan. "Rajdumya Klouna Mima" (*Մաղրածու մնջախաղորդի խորհրդածութիւններ*), *Iskusstvo Klounady* (*Մաղրածութեան արուեստը*) ժողովածուում, «*Իսկուստվո*», 1968, էջ 279։
[33] *Նույն*։
[34] *Sovetskaya Estrada i Tsirk*, թ. 12, էջ 18։
[35] *Նույն*։
[36] *Նույն*, էջ 17։
[37] *Տե՛ս* R. E. Slavskiy, *Leonid Yengibarov*, *Մոսկուա*, «*Իսկուստվո*», 1989, էջ 162։
[38] *Դեռևս ԺԹ. դարավերջին դանիացի ծաղրածու Կառլ Բաշլոէներ քսան տարի չարունակ «Ափսէներ կոտրող մարդը» արտակենտրոն գաւեշտախաղով յաջողութեամբ հանդէս է եկել եւրոպական տարբեր կրկէսներում* (Rémy, էջ 289)։

ASPECTS OF ARMENIAN CLOWN ART: LEONID YENGIBARIAN
(Summary)

GRIGOR ORDOYAN

Circus distinguishes eccentricism as a farcical act, whereby the unnatural character of the actor does not create surprise or wonder but makes the audience mock or laugh due to his stupidity. The "Aramian Theater-circus" back in the late-19th Century had already developed two joker characters, the clown and the athlete clown, whose performances were distinguished by eccentric acts. The clown constructed his performance mostly on ingenious, skillful acts, and his show was composed of eccentric athletic humorous acts. The athletic clown's acts, on the other hand, were at the forefront and were characterized by superb skills. His eccentric act was mainly constructed on contrasts, which gave a humorous nature to the whole performance. The overlapping of these two styles of performance gradually developed into the classical character of the bufoon. Later on jesters showed up alongside the clown, particularly in the Eastern-European circus. Gradually a new type of clown-pantomime was developed. It is this character that the world-renowned artist, Leonid Yengibarian personified and performed as of the 1960s. The artistic devices in his eccentric pantomime acts, which have become classics, are constructed on contrasts, wierdness and mimicing, as well as on unique rhythm and scale, in coordination with light and music scenes. These were the basic ingredients which wove the style of his performance. The degree of expression of the whole play depended on the extent of the dense construction of these elements.

ԱՐԵՒՄՏԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՏՐԻՊՈԼԻՏԱՆԱԿԱՆ ՈՒ ՊԱԼՔԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

ԵՂԻԿ ՃԷՐՃԷԱՆ

Համաշխարհային Ա. Պատերազմէն անմիջապէս առաջ, Օսմանեան Կայսրութիւնը կը մղէ երկու պատերազմներ, որոնց պատճառով «ընդհանուր առմամբ, սակայն բառացիօրէն, օսմանցիներուն համար Համաշխարհային Ա. Պատերազմը կը սկսի 1912ին, որմէ ետք, միայն մէկ տարուան դադարով, թուրքերը յաջորդ տասը տարիներուն կը գտնուին պատերազմի մէջ»[1]: Չոյզ Պատերազմները, իրենց արդիւնքներով չրջադարձային նշանակութիւն կ'ունենան թուրք քաղաքական մտածողութեան վրայ եւ այդ ձեւով ճակատագրական կ'ըլլան ինչպէս Օսմանեան Կայսրութեան յետագայ պատմութեան, այնպէս նաեւ արեւմտահայութեան համար:

ՏՐԻՊՈԼԻՏԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

1911 Սեպտեմբեր 29ին[2] Իտալիա պատերազմ կը յայտարարէ Օսմանեան Կայսրութեան դէմ եւ կը յարձակի անոր ափրիկեան նահանգներէն Տրիպոլիտանիոյ (Լիպիա) վրայ: Իտալիոյ սանձագերծած պատերազմը զուտ գաղութատիրական պատերազմ մըն էր:

Պատերազմի հռչակման յաջորդ օրն իսկ վարչապետ Հաքքի փաշայի կառավարութիւնը կը հրաժարի: Պատերազմի յայտարարութիւնը կը զուգադիպի նաեւ իշխող կուսակցութեան՝ Իթթիհատ Վէ Թերաքքիի (միութիւն եւ յառաջդիմութիւն) երրորդ համագումարի բացման նիստին (Սեպտ. 30): Համագումարը ինքգինք կը հռչակէ Ագգային Պաշտպանութեան Կոմիտէ եւ նախաձեռնութիւն կը վերցնէ՝ ընդդիմութեան հետ կազմելու համաձայնական կառավարութիւն մը: Այս նպատակով Իթթիհատի դեկավարներէն Թալաաթի հանդիպումները ընդդիմութեան յայտնի դէմքերէն իշխան Սապահէտտինի հետ, արդիւնք չեն տար: Նոր դահլիճը 8րդ անգամ կը դիխաւորէ անկուսակցական Սայիտ փաշան:

Պատերազմի առաջին օրէն, արեմտահայութիւնը իր բոլոր հատուածներով կը քննադատէ Իտալիոյ ծաւալապաշտ քաղաքականութիւնը եւ կը պաշտպանէ օսմանեան հայրենիքը: Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (ՀՅԴ) Արեմտեան Բիւրօն, չրջաբերականի մը մէջ քննադատելէ ետք Իտալիան կը գրէ· «բոլոր օսմանցիները պարտաւոր են մէկդի թողուլ իրենց ներքին վէրքերը եւ առանց ցեղի թէ ազգի խտրութեան միաբանիլ, ապահովելու երկրի ներքին անդորրութիւնը եւ աջակցելու

կառավարութեան»[3]: *Քանի մը օր անց, դարձեալ ՀՅԴ Արեւմտեան Բիւրոն, 1911 Հոկտեմբեր 5 թուակիր իր «Օսմանցի Հայրենակիցներուն» յայտարարութեան մէջ, կոչ կ'ընէ ամրապնդել ներքին միասնականութիւնը, դադրեցնել հակակառավարական ելոյթները՝ հակառակ անոր որ 1908ին վերահաստատուած սահմանադրութիւնը իրմէ եղած ակնկալութիւնները չէր արդարացուցած*[4]:

Պատերազմին հանդէպ, արեւմտահայութեան մէջ կշիռ ունեցող կուսակցութիւններ՝ ՀՅԴի եւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան (ՍԴՀԿ) կեցուածքներուն վրայ ազդեցութիւն կ'ունենայ իր կառավարութեան գաղութատիրական քաղաքականութիւնը քննադատող Իտալիոյ Սոցիալիստ Կուսակցութեան կեցուածքը: Սա այն դէպքն էր երբ պատերազմի ժամանակ երկրի մը սոցիալիստական կուսակցութիւնը, դուրս գալով հայրենասիրութեան դասական ըմբռնումներէն, կը քննադատէր իր երկրի իշխանութիւններուն վարած գաղութատիրական քաղաքականութիւնը: Իտալիոյ սոցիալիստական շարժման յայտնի դեկավարներէն Ամիլքար Ճիփրիաննիի «Անկայ՝ թագաւորը, կեցցէ՝ Թուրքիան» յօդուածը, տպուած Ֆրանսայի սոցիալիստներու պաշտօնաթերթ L'Humanité-ի մէջ , կը գտնէ մեծ ժողովրդականութիւն: Կ.Պոլսոյ հնչակեան պաշտօնաթերթ Նոր Աշխարհը անդրադառնալով անոր, դրուատիքով կը գրէ Իտալիոյ եւ Եւրոպայի սոցիալիստներուն մասին, որոնք կը դատապարտէին «միջազգային պատմութեան մէջ չտեսնուած այս կողոպուտը»[5]:

Պատերազմի դաշտին վրայ սակայն, Օսմանեան բանակները, որոնք Տրիպոլիտանիոյ մէջ ունէին թոյլ ներկայութիւն մը միայն, կ'ենթարկուին չատ արագ պարտութիւններու: Իթթիհատական խումբ մը սպաներ, որոնց կարգին Էնվէր եւ Մուսթաֆա Քեմալ, կը մեկնին Լիպիա՝ արաբ ցեղախումբերով - յատկապէս Սինուսի ցեղախումբին միջոցով — ժողովրդային ընդդիմութիւն կազմակերպելու համար: Այս նախաձեռնութիւնը կու տայ սահմանափակ արդիւնք մը միայն: Գրգռելու համար արաբ ցեղախումբերուն կրօնական զգացումները, սինուսիներու կրօնապետը Ճիհատ կը յայտարարէ քրիստոնեաներուն դէմ: Այս լուրը լայնօրէն կ'արձագանգուի Կ.Պոլսոյ մէջ: ՀՅԴ Կ.Պոլսոյ պաշտօնաթերթը Ազատամարտ իր դժգոհութիւնը կը յայտնէ միջնադարեան այդպիսի գաղափարի մը հրապարակ նետուելուն առթիւ, եւ գտնելէ ետք թէ նման քայլ մը չի նպաստեր միջազգային հանրային կարծիքին մօտ Թուրքիոյ վարկին, իր «Ե՛ւ Անօգուտ Ե՛ւ Վնասակար» խմբագրականին մէջ կը գրէ «քափիտուլասիոն մը կրօնապետէն չի կարելի սպասել քաղաքական հեռատեսութիւն: Սակայն ամէն իրաւունք ունինք պահանջելու Պոլսի ղեկավար շրջանակներէն, մտաւորականներէն եւ բոլոր խելահաս հայրենասէրներէն, քիչ մը հեռատեսութիւն եւ զգուշութիւն»[6]: *Ազատամարտի այս միտքին Տրիպոլիտանիոյ չրջանի երեսփո-*

խան Սատրք Էֆենտին համաձայն չ՛ըլլար ու Թանինի էջերուն մէջ կը գտնէ թէ սինուսիներու մասին Ագաթամարտի գրածը անարգանք է օսմանցիներուն հանդէպ[7]:

Պատերազմի ընթացքին, կրօնական գագաթները միայն Տրիպոլիտանիոյ արաբական ցեղախումբերուն մօտ չէ որ կը գրգռուին, այլ՝ ամբողջ Կայսրութեան տարածքին: Ագաթամարտին յղած իր նամակին մէջ, նամակագիր Լ. Կ. Հինդլեան կը գրէ թէ Ռումելիհիսարի իթթիհատական ակումբին մէջ ներկայ եղած է Իթթիհատի ղեկավարներէն Ապտուլ Ռաչիտ Էֆենտիի դասախօսութեան, ուր ան ըսած է որ պատերազմին ժամանակ եթէ եւրոպական երկիրները յարձակին Թուրքիոյ վրայ, ապա քրիստոնեաներուն հանդէպ իրենք կը գործեն «ինչպէս որ պէտք է»: Նամակագիրը կ՛աւելցնէ. «ասկէ զատ, յարգելի հոճան ըրաւ կարգ մը խօսքեր՝ համիսլամական թոնով, որ անհամապատասխան գտանք այս երկրին ներքին քաղաքականութեան հետ: Հայերս, որ ընդհանրապէս ջերմ վերաբերմունք ցոյց կու տանք դէպի Իթթիհատի, ցաւելով լսեցինք իր անունով խօսող այդպիսի բանախօս մը, երբ անյետաձգելի անհրաժեշտութիւն մը կը նկատուի համերաշխութիւնը զօրացնել այս այլատարր երկրին մէջ»[8]:

Պատերազմի ամբողջ ընթացքին, ռազմական գործողութիւններուն իրենց մասնակցութիւնը կը բերեն օսմանեան բանակ զօրակոչուած հայ զինուորները: Սա առաջին անգամն էր որ քրիստոնեայ զինուորը իր իսլամ հայրենակիցին կողքին կը մասնակցէր պատերազմի, որովհետեւ 1908ի սահմանադրութենէն առաջ քրիստոնեաները չէին զօրակոչուեր, այլ փոխարէնը կը վճարէին տուրք՝ պեհէր: Դասալքութեան որոշակի դէպքեր չեն արձանագրուիր: 1911 Դեկտեմբերին, երեսփոխանական ժողովը կը վաւերացնէ օրէնք մը, որուն համաձայն բանակ կը զօրակոչուին 1883էն ետք ծնած բոլոր տղամարդիկ, իրրեւ պահեստի զինուորներ: Սա կը նշանակէր թէ բանակ կը զօրակոչուէին նաեւ իրենց բանակային պարտադիր ծառայութիւնը 1901-1908ին կատարած տղամարդիկ. մինչդեռ, այդ թուականներուն քրիստոնեաները բանակ չէին զօրակոչուեր, հետեւաբար՝ անոնք զինուորական կրթութիւն չունէին: Այս կապակցութեամբ 1912 Մայիս 19ին Յովհաննէս Արշարունի պատրիարք հանդիպումներ կ՛ունենայ պատերազմական նախարար Մահմուտ Շեւքէթ փաշայի եւ Ներքին Գործոց փոխնախարար Թալաաթ փաշայի հետ եւ կը խնդրէ անոնցմէ 30-45 տարեկան հայերը ազատ կացուցանել զինուորական ծառայութենէն[9]: Յաջորդ ամիս, հայերէ եւ յոյներէ կազմուած պատուիրակութիւն մը նոյն հարցով կը դիմէ վարչապետ Սայիտ փաշային[10]: Մեհմէն Թերթը (որ կախակայման պատճառով կը փոխարինէր Թանինը), 1912 Հոկտեմբեր 16ի թիւին մէջ կը տեղեկագրէ թէ հայոց պատրիարքարանը սպառնացած է եկեղեցիները փակ պահել, եթէ 30-45 տարեկան զօրակոչիկներուն հարցին չ՛ընդառաջուի[11]: Հոկտեմբերի վեր-

ջերուն, յունաց պատրիարքարանը կը տեղեկագրէ որ նորանշանակ վարչապետ Քամիլ փաշա պաշտօնապէս յայտնած է թէ 30-45 տարեկան քրիստոնեաները ազատ կացուցուած են զինուորական ծառայութենէն[12]:

Բանակային ծառայութեան կոդքին, հայերը կը մասնակցին նաեւ բանակին նիւթականն ու բարոյականը բարձրացնելու նախաձեռնութիւններու: Բանակին ի նպաստ կատարուած հանգանակութեան կը մասնակցի եւ այդ մասին ՀՅԴ Արեւմտեան Բիւրոյին «ուրախութեամբ» կը գեկուցէ 1909ի Ատանայի եղեռնին խորունկ վէրքէն դեռ չապաքինած Ատանայի ՀՅԴ կոմիտէն[13]: Վիեննայի մէջ տեղի ունեցած հակապատերազմական հաւաքի մը ընթացքին ելոյթ կ'ունենայ ՀՅԴ յայտնի դէմքերէն Միքայէլ Վարանդեան: Այդ օրերուն Պարսկաստանի սահմանադրական յեղափոխութեան մէջ արդէն հռչակ ստացած Եփրեմ խան (Դաւիթեան), էնվէր եւ Նիազի պէյերուն յղած իր հեռագրին մէջ կը խոստանայ որ Աթաթուրքատի չրջանի խաղաղեցումէն ետք պիտի գայ ու օգնէ «հայրենիքին»[14]: Մէկ այլ հեռագրի մէջ, Եփրեմ խան ցաւ կը յայտնէ որ Պարսկաստանի մէջ գրաղած ըլլալով չի կրնար գալ եւ «օգտակար ըլլալ օսմանեան հայրենիքին»[15]: Նչենք թէ Եփրեմ արեւմտահայ չէր. ան ծնած է Գանձակ եւ օսմանեան երկիրը իր «հայրենիքը» նկատելու ոչ մէկ պարտաւորութեան տակ կը գտնուէր:

Իտալօ-թրքական պատերազմի զինուորական վճռորոշ գործողութիւնները կը գուգադիպին սահմանադրութեան վերահաստատումէն ետք երեսփոխանական Բ. ընտրութիւններու թէժ քարոզարշաւին (Մարտ-Ապրիլ ամիսներ): Ընտրութիւնները հիմնականին մէջ իրար դէմ կը հանեն իշխանութեան վրայ գտնուող Իթթիհատը (որուն հետ ընտրական դաշինքի մէջ կը մտնէ ՀՅԴն) եւ ընդդիմադիր Հիւրիյէթ վէ Իթիլաֆ (ազատութիւն եւ համաձայնութիւն) կուսակցութիւնը (որուն հետ ընտրական դաշինքի մէջ կը մտնէ ՍԴՀԿը)[16]: Ընդդիմադիրները իրենց քարոզարշաւին մէջ կ'օգտագործեն պատերազմի ճակատներէն հասնող պարտութեան լուրերը եւ իշխանութիւններուն հանդէպ հրապարակ կը նետեն «Տրիպոլիտանիան կը ծախեն» մեղադրանքը: Այս կապակցութեամբ ՍԴՀԿ յայտնի դեկավարներէն Ստեփան Սապահ Գիւլեան իր «Անջատականութեան Զրոյցը» յօդուածին մէջ կը գրէ. «Իթթիհատին կարելի է, եւ պէտք է քննադատել, նրա պակասութիւնները, սխալները քօղազերծել, բայց ենթադրել անգամ թէ նա՝ որպէս կուսակցութիւն ընդունակ է լինել այս երկրի էն փոքրիկ մասը ծախել, - դա արդէն՝ անագնութիւնից աւելի՝ տմարդութիւն է»[17]:

Իթթիհատ ընտրական բացայայտ խարդախութիւններով ձեռք կը ձգէ երեսփոխանական ժողովին բացարձակ մեծամասնութիւնը: Նոր երեսփոխանական ժողովն ու Սայիտ փաշայի գլխաւորած կառավարութիւնը կը դիմագրաւեն արտաքին եւ ներքին լուրջ դժուարութիւններ[18]:

Երեսփոխանական ժողովի առաջին նիստի օրը՝ 1912 Ապրիլ 12ին, Իտալիան ընդարձակելով պատերազմին ծիրը կը ռմբակոծէ Տարտանէլի օսմանեան ամրութիւնները եւ յաջորդ ամիս կը գրաւէ Եգէական Ծովու Երկոտասան Կղզիները։ Ներքին ճակատին վրայ, Իթթիհատի կամայականութիւններուն հանդէպ դժգոհութիւնը կ'աճի եւ բանակային ստորաբաժանումներ ապստամբական դրօշ կը պարզեն։ Յուլիս 17ին Սայիտ փաշայի կառավարութիւնը կը հրաժարի եւ նոր վարչապետ կը նշանակուի Ղազի Ահմէտ Մուխթար փաշան, որ իր դահլիճը կը կազմէ ընդդիմադիր եւ չէզոք տարրերով։ Սուլթանին եւ ծերակոյտին մօտ կատարած ջանքերուն չնորհիւ, Օգոստոս 4ին կառավարութիւնը կը յաջողի ձեռք բերել նորընտիր երեսփոխանական ժողովին լուծարման որոշումը։ Իշխանութիւնը կ'անցնի Իթթիհատի ընդդիմադիրներուն ձեռքը։

1912 Հոկտեմբեր 17ին պատերազմը կ'աւարտի Օսմանեան Կայսրութեան եւ Իտալիոյ միջեւ կնքուած համաձայնագրով, ըստ որուն Օսմանեան կայսրութիւնը կը կորսնցնէ Տրիպոլիտանիան եւ Երկոտասան Կղզիները։

ՊԱԼՔԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Այն պահուն երբ օսմանեան վարիչները կը գտնուէին տրիպոլիտանական պատերազմն ու ներքին քաղաքական տագնապները դիմակայելու դժուարութիւններուն դիմաց, անդին, Պալքանեան Թերակղզիին վրայ կ'ուրուագծուէր Օսմանեան Կայսրութեան սպառնացող նոր վտանգ մը։ Այդ վտանգը ամրողջապէս անտեսանելի չէր։ Տակաւին 1912 Ապրիլին, երբ Արտաքին Գործոց նախարար Ասըմ պէյ Daily Chroniclեին տուած հարցազրոյցին մէջ կ'ըսէր թէ «մենք այս պատերազմը կը նկատենք յարձակում մը քաղաքակրթութեան եւ մարդկային յառաջդիմութեան դէմ», հնչակեան գործիչ Գարեգին Կոզիկեան իր «Իրականութիւնը Ի՞նչ կ'ըսէ» յօդուածին մէջ, ընդունելէ ետք թէ Իտալիոյ սանձազերծած պատերազմը գաւթողական է, կ'աւելցնէ. «Ասըմ պէյ թող գիտնայ, որ միայն Իտալիան չէ օսմանեան երկրին դէմ, այլ պալքանեան փոքր պետութիւնները արդէն սկսած են դաշնակցութիւն կազմել, որը անկասկած ուղղուած է Թուրքիոյ դէմ։ «Եւրոպական նահանգներու» մէջ երբ բնդանօթները գոռան, ոչ մէկ ապահովութիւն կայ, որ այդ բնդանօթները պիտի չբնդան նաեւ Յունաստանի, Սերպիոյ, Գարատաղի (Ջեռնոգորիա կամ Մոնթէնեկրօ - Ե.Ա.), Պուլկարիոյ սահմանագլխին վրայ»[19]։

Այս կանխատեսութիւնը տեղին էր։ 1912 Սեպտեմբեր 30ին, Պալքանեան Զինակցութեան երկիրները՝ Պուլկարիա, Յունաստան, Սերպիա եւ Ջեռնոգորիա կը յայտարարեն ընդհանուր գօրակոչ։ Հոկտեմբեր 2ին անոնք Օսմանեան կայսրութենէն կը պահանջեն 1878ի Պերլինի Պայմանագրին 23րդ յօդուածին եւ 1880 Յուլիս 5ին Օսմանեան Կայսրութեան,

Ռումելիի պատուիրակութեան եւ մեծ տէրութիւններուն միջեւ կրնքուած Մակեդոնիոյ մէջ բարեկարգումներ խոստացող պայմանագրին գործադրութիւնները[20], գումիջերիացի կամ պելճիքացի ընդհ. կառավարիչ մը Մակեդոնիոյ համար, չրջանային օրէնսդիր մարմիններ, տեղական ոստիկանութիւն եւ ընդհ. բարեկարգումներ մեծ պետութիւններու հովանաւորութեան տակ: Նոյն օրն իսկ թուրք-պուլկարական սահմանին վրայ տեղի կ'ունենան գինուորական առաջին բախումները, որուն ի տես, ՀՅԴ «պատչաճ մարմինը» իր մասնաճիւղերուն կը հրահանգէ. «Պալքանեան պատերազմը հաւանական կը թուի: Հայրենիքի սպառնացող այս վտանգին առջեւ՝ կը հրաւիրենք ձեզ գործակցիլ բոլոր կուսակցութեանց եւ նպաստել տեղական անդորրութեան»[21]:

Հոկտեմբեր 4ին Իթթիհատի կազմակերպութեամբ Կ.Պոլսոյ մէջ տեղի կ'ունենայ ժողովրդային հաւաք: Ռազմատենչ լոգունգներով կայացող հաւաքին Թալաաթի կողքին ելոյթ կ'ունենան Մապահ թերթի խմբագիր Տիրան Քելէկեան, նախկին երեսփոխան Յակոբ Պոյաճեան եւ ՀՅԴի կողմէ՝ Տոքթ. Կարապետ Փաչայեան: Հաւաքը կը վերածուի ցոյցի: Երբ ցուցարարները կ'անցնին Արտաքին Գործոց նախարար Գաբրիէլ Նորատունկեանի տան մօտէն, Արտաքին Գործոց նախարարը կ'ողջունէ ցուցարարները ու իր խօսքին մէջ կ'ըսէ. «Օսմանեան մեծ ազգը պիտի չքողղու որ իր իրաւունքները ոտքի տակ երթան»[22]: Իթթիհատականները՝ Թալաաթի եւ Իթթիհատական երեսփոխան (աւելի ուշ նաեւ նախարար) Պետրոս Հալաճեանի գլխաւորութեամբ ցուցարարներուն կը բաժնեն «մենք պիտի ըլլանք յաղթողները», «մահ կամ Սոֆիա» լոգունգները կրող գլխարկներ[23]: Ռազմատենչ հաւաքներ կը կազմակերպէ նաեւ Իթթիհատ: Ուսանողութեան կողմէ կազմակերպուած ցոյցերուն կը վանկարկուի «անկցի՛ն բարեկարգումները, կեցցէ՛ պատերազմը» լոգունգը:

Ռազմատենչ այդ մթնոլորտին անդրադառնալով, հնչակեան գործիչ Յակոբ Արծրունի (Աւետիսեան), իր «Պէտք է Շրջահայեաց Ըլլալ» յօդուածին մէջ, կը քննադատէ ցուցադրականութիւնն ու ամբոխավարային հայրենասիրութիւնը[24]: Նոյն թերթին մէջ, Տիգրան Զաւէն (Զուգասգեան) իր «Անկցի Պատերազմը» յօդուածով կը քննադատէ հարցերը պատերազմով լուծելու սկզբունքը[25]: Ագաթամարտ եւս, իր «Մեծ Պետութիւնները Վարագոյրին Ետեւ» խմբագրականին մէջ, հաստատելէ ետք թէ պալքանեան «ռազմատենչ» կառավարութիւնները սուր բարձրացուցած են յանուն մակեդոնացի իրենց ազգակիցներուն, հարց կու տայ. «Ենթադրենք որ հնարաւոր է եւ իրաւացի այս յայտարարութիւնը: Շատ լաւ. միթէ եւրոպական կառավարութիւնները չէի՞ն կրնար, աւելի մարդկային եւ աւելի բնական միջոցներու կիրառութեամբ՝ ստեղծել այդ բարեկարգութիւնը Մակեդոնիոյ կամ օսմանեան պետութեան որեւէ մէկ երկրամասին մէջ»[26]:

Հոկտեմբեր 6ին, կառավարութիւնը կ'որոշէ գործադրութեան դնել Պերլինի 23րդ յօդուածն ու 1880ի Ռումելիի համաձայնագիրը։ Յաջորդ օր, Թանին եւ Իթամամ Թերթերը բարեկարգութիւններու անհրաժեշտութեան համաձայն կը գտնուին, սակայն կը գտնեն թէ «այդ պէտք է ըլլայ արգիլելու համար եւրոպական միջամտութիւնը։ Բարեկարգումները պէտք չէ տեղի տան ինքնավարութեան եւ ապակեդրոնացման»[27]։

Շատ հաւանարար, կառավարութեան վերոյիշեալ որոշումը օսմանեան իրերայաջորդ իշխանութիւններուն խոստմնադրուժ ընթացիկ մէկ քայլը նկատելով, պալքանեան երկիրները լուրջ ուշադրութիւն չեն դարձներ անոր եւ Հոկտեմբեր 8ին Ջեռնոգորիան պատերազմ կը հռչակէ Օսմանեան կայսրութեան դէմ։ Յաջորդող օրերուն նոյն քայլին կը դիմեն գինակցութեան միւս երկիրները՝ Սերպիան, Յունաստանը եւ Պուլկարիան։

Հոկտեմբեր 17ին, Լոնտոնի մէջ Օսմանեան կայսրութեան եւ Իտալիոյ միջեւ կը կնքուի խաղաղութեան պայմանագիր։ Օսմանցիները գիջումներու կ'երթան նախագգալով պալքանեան աւելի մեծ վտանգը։ Այդ նախագգացումը տեղին էր։ Համաձայնագրի յաջորդ օրն իսկ, լայն ծաւալով կը սկսի Պալքանեան Ա. Պատերազմը։

Պատերազմի նախօրեակին, ռումանացի սոցիալիստներուն նախաձեռնութեամբ որոշուած էր Կ.Պոլսոյ մէջ կայացնել պալքանեան երկիրներու եւ Թուրքիոյ սոցիալիստական կուսակցութիւններուն միջեւ խորհրդաժողով մը։ Պատերազմին պատճառով իշխանութիւնները այդ ժողովը կ'արգիլեն, երբ արդէն կարգ մը կուսակցութիւններու պատուիրակները Կ.Պոլիս հասած էին։ Մէկտեղուած պատուիրակները կը բաւարարուին հրապարակելով «Պալքանեան եւ Փոքր Ասիոյ Աշխատաւոր Ժողովուրդի Հանրային Կարծիքին» վերնագրով յայտարարութիւնը, որ «Թուրքիոյ եւ Պալքաններու Սոցիալիստներուն Յայտարարութիւնը» խորագրին տակ լոյս կը տեսնէ Սոցիալիստական Ինտերնացիոնալի բիւրոյի պաշտօնաթերթ Պիւլեթինի 1912ի 9րդ թիւին մէջ[28]։ Յայտարարութիւնը, որ կը կրէ Սալոնիկի Աշխատաւորական Ֆետերացիայի, Ռումանիոյ Սոցիալ-Դեմոկրատ Կուսակցութեան, ՄԴՀԿի, ՀՅԴի եւ Պադեստինի Սոցիալ-Դեմոկրատ Բանուորական Հրեայ Կուսակցութեան ստորագրութիւնները, պատերազմին հիմնական պատճառը կը նկատէ օսմանեան իշխանութիւններուն վարած ազգայնամոլական եւ կեդրոնաձիգ քաղաքականութիւնը։ Յայտարարութիւնը կը գտնէ որ պատերազմին արդիւնքը ինչ որ ալ ըլլայ՝ պիտի ըլլայ ի վնաս ժողովուրդին։ Որովհետեւ եթէ պալքանեան երկիրները յաղթեն, ապա անոնք պիտի դառնան դրամատիրական մեծ տէրութիւններուն թիրախը եւ դարձեալ կորսնցնեն իրենց անկախութիւնը. եթէ Թուրքիան յաղթանակէ՝ ապա, տարածաշրջանին մէջ պիտի աճին ազգայնական մոլեգնութիւնները ու քաղաքական ճնշումները։ Յայտարարութիւնը կը նշէ նաեւ որ օսմանեան իշ-

խանութիւնները Ռումելիի եւ Անատոլիայի մէջ միայն թշուառութիւն, տգիտութիւն, գաղթականութիւն, աւազակութիւն եւ հաւաքական ջարդեր յառաջ բերած են, որոնք օտար միջամտութեանց եւ պատերազմներու պատրուակ կը ծառայեն։ Սոցիալիստները Թուրքիոյ մէջ տիրող կացութեան որպէս լուծում կ'առաջարկեն ազգային մշակութային ինքնավարութիւնը, տեղական ինքնակառավարումները, համեմատական ընտրութիւնները, հողային բարեկարգումները, հարկային դրութեան բարենորոգութիւնը եւ քաղաքական գործունէութեան ազատութիւնը[29]։

Պատերազմի առաջին օրէն, օսմանեան բանակները ռազմաճակատին վրայ կը կրեն ծանր պարտութիւններ։ Հոկտեմբեր 28ին պուլկար բանակը կը հասնի Էտիրնէ (Ադրիանուպոլիս)։ Յաջորդ օր Ահմէտ Մուխթար փաշայի կառավարութիւնը կ'իյնայ եւ գայն կը փոխարինէ անգլիասէր նկատուող Քամիլ փաշայի կառավարութիւնը, որ հակակառավարական չարժումներու առաջքը առնելու համար կը ձերբակալէ Իթթիհատի գործիչները, որոնց չարքին՝ Թալաաթ փաշան։ Իթթիլաֆական իշխանութեան մօտիկ կանգնած Ճէմալ Ազմի թերթը, Թալաաթի ձերբակալման լուրը կը համարէ իշխանութեան հասցէին հնչող գրպարտանք եւ լուրը հաղորդող Ագաթամարար կը մեղադրէ ազգային դաւաճանութեան մէջ։ Ագաթամարար կը պատասխանէ թէ լուրը ինք չէ որ առաջին անգամ տուած է, այլ իր կարգին քաղած է այլ աղբիւրէ[30]։ Նոյեմբեր 8ին յունական բանակը կը գրաւէ Սալոնիկը։

Այն պահուն երբ Էտիրնէի չուրջ ընթացող կռիւներուն թնդանօթի ձայները կը լսուէին Կ.Պոլիս եւ մեծ տէրութիւնները իրենց դեսպանատուները պաշտպանելու համար նաւագներ ցամաք կը հանէին, ՀՅԴ յայտնի դէմքերէն Է. Ակնունի (Յաչատուր Մալումեան) իր «Արեւելեան Համադաշնակցութիւնը - Մեծ Երազի Սկիզբը» առաջնորդող յօդուածին մէջ հարց կու տայ թէ արդեօ՞ք ճիշդ չէր ըլլար բախտը պալքանեան դաշնակցութեան հետ կապել ու թիւրք, հայ, արար, յոյն եւ քիւրտ միասնաբար արեւելեան դաշնակցութիւն կազմել. «Պալքանեան այսօրուան դաշնակցութեան եւ փոքր ասիական վաղուան դաշնակցութեան միացումը, մէկը իբրեւ դրօշակակիր եւրոպական քաղաքակրթութեան, միւսը իբրեւ յառաջապահ ասիական վերածնութեան։ - Ահա մեծ երազը, երազների երազը»[31] կ'եզրակացնէ Ակնունի։

1912 Դեկտեմբերէն 1913 Յունուար, պատերազմող կողմերուն միջեւ Լոնտոնի մէջ տեղի կ'ունենան հաշտութեան բանակցութիւններ։ Վէճերը առաւելաբար կը կեդրոնանան Էտիրնէ քաղաքին պատկանելութեան չուրջ։ Յունուար 13ին, մեծ տէրութիւններու Կ.Պոլսոյ դեսպանները հաւաքական յուշագրով մը Բ. Դրան կ'առաջարկեն Էտիրնէն յանձնել Պուլկարիոյ։ Այս անգամ Իթթիհատին հերթն էր իշխանութիւնները «Էտիրնէն կը ծախեն»ով ամբաստանելու համար։ Յունուար 23ին, գաղտնօրէն եւ լաւապէս կազմակերպուած պետական հարուածով մը Իթթիհատ կը

վերադառնայ իշխանութեան։ Ինվէր փաշայի գլխաւորութեամբ սպաններու խումբ մը մուտք կը գործէ Բ. Դուռ. անոնք կը սպաննեն Պատերազմական նախարար Նազիմ փաշան եւ զէնքի սպառնալիքի տակ վարչապետ Քամիլ փաշային կը ստիպեն ստորագրել հրաժարական՝ որ շատ չուտով կը վաւերացուի սուլթանին կողմէ։ Նոր դահլիճը կը գլխաւորէ Իթթիհատի ամբողջական զօրակցութիւնը վայելող անկուսակցական Մահմուտ Շեւքէթ փաշա։ Կատարուած պետական հարուածին կապակցութեամբ, Ագաթամարտ որ այդ շրջանին կախակայուած ըլլալով լոյս կը տեսնէր Ագգակ անունով, իր «Պիտի Դատուիս, Ինչպէս Որ Դատես» խմբագրականին մէջ ցաւ կը յայտնէ որ Քամիլ փաշային նման «անկեղծօրէն ազատական եւ անբասիր անցեալի ու անկախ նկարագրի տէր» պետական գործիչ մը այս ճակատագրին արժանացաւ ու կ'աւելցնէ. «եթէ իրաւցնէ՝ Իթթիհատ՝ իր կրած պետական ու կուսակցական այնքան մեծակորուստ ձախողանքներէ ետք ալ, պիտի չլքէ հին գործելակերպը,- չենք վարանիր ըսելու իրեն ալ, ինչպէս ըսած ենք միշտ, եւ ինչպէս որ այս րոպէին կ'ըսենք տապալող նախարարութեան.- պիտի դատուիս, ինչպէս որ դատես»[32]։

Իթթիհատ իշխանութեան կը վերադառնայ պատերազմը շարունակելու եւ գայն իր յաղթական աւարտին հասցնելու խոստումներով։ Լոնտոնի մէջ բանակցութիւնները կ'առկախուին եւ կողմերը կը վերադառնան գէնքի լեզուին։ Իթթիհատի առաջին մտահոգութիւնը կ'ըլլայ բարձրացնել ժողովուրդին բարոյական կորովը, կազմակերպել թիկունքը եւ բանակը համալրել մարդկային ու գինական նոր միջոցներով։ Այս նպատակին համար, Յունուար 31ին Օսմանեան Համալսարանին մէջ տեղի կ'ունենայ ընդլայնուած խորհրդաժողով, որուն կը մասնակցի 1500 հոգի։ Հայրենասիրական թունդ ճառերէ յետոյ իթթիհատականները հրապարակ կը նետեն իրենց համագումարին մէջ որոշած Մուտաֆաայա Միլլիյէ Ձեմիյէթիի (Ազգային Պաշտպանութեան Կոմիտէի) գաղափարը։ Ագաթամարտ իր «Ազգային Ինքնապաշտպանութիւնը» խմբագրականին մէջ կը քննադատէ ԱՊԿի կազմութեան ձեւը, գտնելով որ անոր նախաձեռնութիւնը միայն մէկ կուսակցութեան կը պատկանի մինչ այլ կուսակցութիւններ եղած են միայն հետեւողի դերին մէջ. թերթը կը գրէ որ այս քայլը պատերազմը վերսկսելու նախապատրաստութիւն է. «հա՞րկ է վերսկսիլ պատերազմը, հա՞րկ է նոր ռիսկեր ընել» հարցին պատասխանելու համար, թերթը կը գտնէ թէ այդ հարցին չուրջ պէտք է բոլոր կուսակցութիւնները խորհրդակցէին[33]։ Իր կարգին ՀՅԴ ղեկավարներէն Ատոմ (Յարութիւն Շահրիկեան), իր «Անչեզ Ուղին» յօդուածին մէջ հաւասարապէս կը քննադատէ Իթթիհատն ու ընդդիմութիւնը, որոնք պատերազմի փողը հնչեցուցին առանց անոր հետեւանքներուն համար պատասխանատուութիւն զգալու եւ առանց այդ մասին ազգային փոքրամասնութիւններուն կարծիքը առնելու[34]։

ԱՊԿի Գործադիր Յանձնախումբին մաս կը կազմեն Շերիֆ Ալի Հայտար (նախագահ), Թալաաթ, Ահմէտ պէյ (Էնվէրի հայրը), իշխան Սապահէտտին, Ալի Հայտար պէյ (Միտհաթ փաշայի որդին), Պ. Հալաճեան, Վարդգէս (Սերենկիւլեան) եւ ուրիշներ։ Յատկանշական է որ ՀՅԴի յայտնի դէմքերէն եւ Էրզրումի երեսփոխան Վարդգէս Յունուարի սկիզբը Ազատամարտին մէջ գրած իր մէկ յօդուածին համար հակահեղափոխական իշխանութեան կողմէ ձերբակալուած եւ երկու ամսուան բանտարկութեան դատապարտուած էր. (երեսփոխանական ժողովը լուծուած ըլլալով Վարդգէս չէր վայելեր երեսփոխանական անձեռնմխելիութիւն)։ Հայկական ծնունդը իր ընտանիքին հետ անցընելու համար ան յատուկ արտօնութեամբ ազատ արձակուած էր ու ապա այդ արտօնութիւնը երկարաձգած...։ Գործադիր Յանձնախումբին կողքին կը ստեղծուին նաեւ այլ յանձնախումբեր։ Նուիրահաւաքի Յանձնախումբին մաս կը կազմէ յայտնի վաճառական Իրրիանոս Էֆենտին (Յանձնախումբի աշխատանքներուն կ'օժանդակէ Գրիգոր Զօհրապ), Հիւանդանոցային Յանձնախումբին կ'անդամակցի Տոքթ. Ատիլեան, Քարոզչական Յանձնախումբին՝ Տիրան Քելէկեան եւ Բիւզանդ Քէչեան։ ԱՊԿի տարբեր շրջաններու մասնաճիւղերուն կ'օժանդակեն Հայ Կարմիր Խաչի մասնաճիւղերը[35]։ Նուիրահաւաքի աշխատանքներուն անդրադառնալով, Սապահ Գիւլեան իր «Փաստեր եւ Իրողութիւններ» յօդուածին մէջ կը գրէ. «բացի իր վրայ ծանրացած խոշոր հարկերից՝ հայը առատաձեռնօրէն օգնած է «նաւատորմիղ»ի զօրացմանը եւ, մասնաւորապէս, ներկայ պատերազմի առթիւ բացուած նուիրատուութեանց (իյանէ) եւայլն։ - Այնտեղ, ուր բուրք աղան, պէկը, փաշան, ունեւորը 1ով, 5ով է տուել, հայը 10ով, 20ով է առաջ անցել։ Այդ բոլոր գոհաբերութեանց ժամանակ՝ համայնատարած ջարդի երկիւղը նրա գլխի վրայից մի օր պակսե՞լ է, տիրողը շարունակ իր սուրը չի՞ շողացրել նրա աչքին»[36]։ *Աւելի ուշ, նոյն հեղինակը, իր մէկ այլ աշխատութեան մէջ, դժգոհանքով կը նշէ թէ ինքնապաշտպանական գործին դժկամութեամբ մասնակցող հայ մեծահարուստները* «Պալքանեան Պատերազմի ատեն՝ մի քանի ժամուայ մէջ, 30 հազար ոսկիով պատասխանեցին Իթթիհատի բացած «ազգային հանգանակութեանը»։ Յայտնի վաճառական Ի-ը 10 հազար ոսկի թափեց սեղանի վրայ, հայ եւ բուրք ժողովականների առաջ, օսմանեան համալսարանի մէջ»[37]։

Պատերազմական ծախսերուն համար կատարուած նուիրահաւաքին հայութեան յօժար մասնակցութենէն դժգոհ հնչակեան ղեկավարին այս կեցուածքէն տարբեր էր ՀՅԴի կեցուածքը։ Բանակի կարիքներուն համար «Նուիրահաւաք»ի անուան տակ կը բռնագրաւուին բոլոր ձիերն ու ջորիները, կը գրաւուին նաեւ Պատրիարքարանի գոյգ ձիերը։ Արշարունի պատրիարք, խնդրագրով մը կայսերական ախոռէն երկու ձիեր կը

խնդրէ· խնդրանքը կը բաւարարուի· Թրքական մամուլը այս դէպքը կը ներկայացնէ որպէս հայութեան հանդէպ բարի տրամադրութեան արտայայտութիւն· Ագաթամարա կը գրէ թէ իրենք դէմ են արտօնեալ դասակարգերու գոյութեան եւ «Պատրիարքը կամ պատրիարքարանը չէր որ պիտի զլանային հայրենիքին պէտք ունեցած ձիերը տալ· ...Հայ ազգը ինքզինքը բացարձակապէս անպատուրուած կը զգայ այդպիսի շնորհներ խնդրելով եւ ստանալով»[38]· Այլ առիթով մը, Ագաթամարա իր «Ո՞վ Պիտի Հոգայ Անօգնական Ընտանիքները» խմբագրականով, կ'առաջարկէ կազմել օգնութեան յանձնախումբեր, գինուորներու չքաւոր ընտանիքներուն օգտակար դառնալու համար, նշելով որ այդ յանձնախումբերը կրնան ըլլալ ազգային դիմագծով կամ խառն[39]·

Բացի այն իրողութենէն որ գործող բանակին մէջ «8000 հայեր պարկեշտօրէն կը ծառայէին»[40], *հայերը կ'ընդառաջեն նաեւ կամաւորագրութեան արշաւին· Կամաւոր կ'ուզէ արձանագրուիլ նաեւ կաթողիկէ վարդապետ Հայր Յովսէփ Սիրահեան, զոր կը մերժեն միացնել գործող բանակին, իր պաշտօնին պատճառով ու կը կցեն Կարմիր Մահիկին*[41]· *Պոլսահայ թերթերուն մէջ գրեթէ ամէնօրեայ դրուեթամբ կը տպագրուին գերի ինկած եւ վիրաւորուած հայ գինուորներուն անուանացանկերը· Պատրիարքարանին կողմէ գինուորական հիւանդանոցներու հոգեւոր հովիւ կը նշանակուի Սահակ Քհնյ· Փափազեան· Դաստիարակութեան դէպքեր չեն պատահիր· Իր մասին մամուլին մէջ խօսիլ տուող միակ դէպքը կ'ըլլայ Ձին Թորոսի (Թորոս Տարտաղանեան) հրոսակախումբի պարագան*[42]· *Ագաթամարա «Քրիստոնեայ Զինուորը Հաւատարիմ Իր Հայրենիքին» խմբագրականին մէջ, լուսարձակի տակ կ'առնէ Իճմիհատ թերթի այն յօդուածը, ուր կ'ըսուի թէ սխալ է պատերազմի պարտութեան պատճառը քրիստոնեայ գինուորներուն վրայ բարդել, որովհետեւ անոնք կը կռուին քաջարար· իսկ դաստիարակութեան պարագաները քրիստոնեաներուն յատուկ չեն՝ այլ ընդհանրական*[43]·

Միւս կողմէ սակայն կրօնական զգացումներուն գրգռութիւնը կը շարունակուի· Այս կապակցութեամբ Ակնունի իր «Հայրենիքի Գաղափարը - Վտանգաւոր Ձամբայ» յօդուածին մէջ, գտնելէ ետք թէ «յանուն կրօնի եւ յանուն մարգարէի, յանուն մահիկի եւ Իճհատի» լոզունգը, բազմացեղ եւ բազմակրօն երկրի մը համար պատերազմին չափ աւերիչ է, կ'աւելցնէ· «արիւնառատ պատերազմը այսօր չէ վաղը պիտի վերջանայ - յաւիտենական չէ այն: Սակայն այդ «կրօնական» բորբոքումներով՝ հողակորուստի հետ միասին օսմանեան ժողովուրդները պիտի կորսնցնեն հայրենիքի մեծ գաղափարը...: Վաղը կռիւէն դարձող գինուորները պիտի պատմեն որ իրենք թշնամու դէմ քալեցին ոչ թէ վաթանն ու նրա պատիւը պաշտպանելու, այլ կռուելու «կեաւուրների» դէմ, ոչնչացնելու «կեաւուրները» որոնց միլիոնաւոր ներկայացուցիչները դեռ շարունակում են ապրել այս նոյն երկրի մէջ, դրկից մահմե-

տականին, նրա հանապազօրեայ կեանքին մասնակցող, իբրեւ զաւակ եւ տէր այս նոյն երկրի»[44]:

Ռազմատենչ եւ ամբոխավարական մթնոլորտին մէջ, առաջին անգամ հասարակական աչխուժութիւն հանդէս կը բերէ նաեւ թուրք կինը: Օսմանեան Համալսարանին մէջ տեղի կ'ունենան կանանց կողմէ կազմակերպուած երկու հաւաքներ, որոնք իրենց վրայ կը բեւեռեն հանրային կարծիքին ուշադրութիւնը: Ագաոամարտ իր «Թուրք Կիներու Հայրենասիրական Շարժումը»[45] խմբագրականով, «Պատերազմի Դաչտէն Վերադարձող Կամաւոր Թրքուհի Մը Իր Տպաւորութիւնները Կը Պատմէ»[46], Զապէլ Եսայեանի «Այդ Բաժակը - Թրքուհիներուն»[47], Է. Ակնունիի «Ազերական Բողոքներ - Նոյնիսկ Կանայք»[48] յօդուածներով, համակրանքով կ'անդրադառնայ թրքուհիներու նոր չարժումին:

Ամբոխային տրամադրութիւններէն հեռու, ռազմաճակատին վրայ իրողութիւնը այլ պատկեր կը պարգեր: Մարտ 26ին, բուռն կռիւներէ ետք Էսիրնէն կ'անցնի պուլկար-սերպ ուժերուն ձեռքը: Մայիս 30ին Լոնտոնի մէջ պատերազմող կողմերուն միջեւ կը ստորագրուի համաձայնագիր, ուր Օսմանեան կայսրութիւնը կ'ընդունի իր վիճակի կրուստները: Ժողովուրդին մօտ իշխանութիւններուն հանդէպ հակակրութիւնը կը մեծնայ: Ընդդիմութիւնը պահը հասած կը սեպէ խլելու իշխանութիւնը: Յունիս 11ին տեղի կ'ունենայ պետական հարուածի փորձ: Պատերազմական Նախարարութենէն դէպի Բ.Դուռ երթալու ճամբուն վրայ, վարչապետ Մահմուտ Շեւքէթ կը սպաննուի: Սակայն պետական հարուածը չի յաջողիր: Իթթիհատ կը չարժի չատ արագ եւ բիրտ: Մեծ թիւով ընդդիմադիրներ կը ձերբակալուին եւ անոնցմէ 12 հոգի Յունիս 24ին կախաղան կը հանուի Կ.Պոլսոյ Սուլթան Պայազիտ հրապարակին վրայ: Ընդդիմադիր այլ գործիչներ, որոնց չարքին Շերիֆ փաչա, իշխան Սապահէտտին, Ռաչիտ պէյ, Իսմայիլ Հաքքը եւն. կը յաջողին փախուստ տալ արտասահման:

Երբ օսմանեան վարիչները զրաղած էին երկրի ներքին տագնապներով, անդին, Պալքանեան Թերակղզիին վրայ տեղի կ'ունենան ճակատագրական չրջադարձեր: Օսմանեան կայսրութենէն խլուած տարածքներու բաժանման չուրջ վէճեր կը ծագին երէկուան դաչնակիցներուն միջեւ: Պուլկարիան, որ պատերազմին բերած էր ամէնէն մեծ մասնակցութիւնը, չի բաւարարուիր իրեն բաժին հասած հողատարածքով. Յունիսի վերջաւորութեան ան կը յարձակի Յունաստանի եւ Սերպիոյ վրայ: Պուլկարիոյ դէմ պատերազմի կը ներգրաւուի Ջեռնոգորիան: Պատերազմին կը մասնակցի նաեւ Ռումանիան: Կը սկսի Պալքանեան Բ. Պատերազմը: Օգտուելով առիթէն օսմանեան բանակները, Էնվէրի գլխաւորութեամբ, առանց լուրջ դիմադրութեան կը վերագրաւեն Էսիրնէն: Այս վերագրաւման հանդէպ Ագաոամարտ խանդավառութիւն ցոյց չի տար ու իր «Յետոյ, Ի՞նչ Պիտի Ըլլայ Հետեւանքը» խմբագրականին մէջ կը հար-

ցաղրէ թէ ի՞նչ չահ կրնայ տալ Էմիրնէի գրաւումը երբ մեծ տէրութիւնները դէմ են այդ գրաւման. «Ք. Դուռը որու՞ն կը վստահի»[49] հարց կու տայ թերթը: Այս վերագրաւումէն ետք, Օսմանեան կայսրութեան ընդհանուր կորուստը պատերազմին կը կազմէ չուրջ մէկ միլիոն քառ. քիլոմեթր տարածութիւն եւ 5.000.000 բնակչութիւն (Կայսրութեան ընդհ. տարածութիւնն էր երեք միլիոն քառ. քմ. իսկ բնակչութեան ընդհ. թիւը՝ 24 միլիոն)[50]:

Էմիրնէի վերագրաւումով եւ ընդդիմադիրներուն հանդէպ բիրտ հաշուեյարդարով Իթթիհատ կը դառնայ մենատէր: Թալեաթ, Էնվէր, Ջեմալ «կարմիր եռապետութիւնը կը սկսի երկիրը ղեկավարել կարմիր սուլթան Համիտին նմանողութեամբ»[51]:

* *

Պալքանեան Պատերազմին սկիզբը, գրագէտ եւ հասարակական գործիչ Արշակ Ջօպանեան Պուլկարիոյ կառավարութեան յղած իր նամակին մէջ կը գրէ. «մենք երբեք չենք մոռանայ ձեր ժողովրդի հիւրընկալութիւնը բազմաթիւ հայերի նկատմամբ, որոնք համիտեան ջարդերից յետոյ հանգրուան գտան Պուլկարիայում: Նրանց գաղթը եղեռնի արդիւնք էր: Այժմ այդ հայերը դժուարանում են իրենց զգացումները արտայայտել: Սակայն կովկասեան հայերն ամէնուրեք իրենց թերթերում համարձակօրէն գրում են եւ արտայայտում իրենց համարձակ որոշումները՝ օգնելու պալքանեան ժողովուրդներին: Ես համոզուած եմ, որ Ռուսաստանի ուսանողական մեծ խմբեր պատրաստ են որպէս կամաւորներ ռուսների հետ միասին մարտնչելու թուրքին դէմ»[52]: Ջօպանեան չէր սխալեր. հայ ժողովուրդը իր սրտին մէջ պալքանեան ժողովուրդներուն հանդէպ երախտագիտական զգացումներ կը տածէր. բայց ոչ միայն այդքան: Պալքանեան Պատերազմը կ՝արտայայտէր չրջանի ժողովուրդներուն ազատագրական ձգտումները Օսմանեան Կայսրութենէն: Այդ ձգտումները իրենց տարագումը գտած էին բարեկարգութեան պահանջքներով, որոնք միջազգային դիւանագիտութեան մէջ ամրագրուած էին Պերլինի եւ այլ դաշնագիրներով: Այդուհանդերձ, օսմանեան իշխանութիւնները, հակառակ տրուած խոստումներուն, բարեկարգութիւններու պահանջքը անտեսած էին: Այս բոլորով, արեւմտահայութեան եւ պալքանեան ժողովուրդներուն մղած պայքարները դէթ իրենց վախճանական նպատակներուն տեսակէտէն կը դառնային համանման. անոնք բնական դաշնակիցներ էին: Երեւոյթ մը՝ որ չէր կրնար գործնապէս իր արտայայտութիւնը չունենալ: Սակայն, արեւմտահայութիւնը չէր կրնար այդ համակրութիւնը արտայայտել. պատերազմի մէջ գտնուող երկրի մը համար այդ կրնար դաւաճանութեան համազօր նկատուիլ՝ իր բոլոր հետեւանքներով:

Պատերազմին հանդէպ հայութեան մօտ յառաջ եկած հակասական կեցուածքներուն կ'անդրադառնայ Միքայէլ Վարանդեան 14 Հոկտեմբեր 1912ին ժրնեւէն Սիմոն Զաւարեանին յղած իր նամակին մէջ, գրելով թէ Պալքանեան Պատերազմին հանդէպ հակասական կեցուածքներ կան ՀՅԴ կովկասի, Կ.Պոլսոյ եւ պալքաններու կազմակերպութիւններուն միջեւ եւ թէ պալքաններու մէջ դաշնակցական երիտասարդներ խանդավառութեամբ կը մասնակցին մարտական խումբերու կազմութեան՝ օսմանցիներուն դէմ կռուելու համար[53]: Պալքանեան ժողովուրդներու ազատագրական պայքարին հանդէպ համակրական եւ օսմանեան հայրենիքին հանդէպ օրինապահ քաղաքացիի կեցուածքներուն միջեւ ծնած հակասութիւնը երբեմն սխալ կ'ընկալուի նաեւ պալքանեան գինակցութեան երկիրներուն կողմէ: Օրինակի համար, յունական իշխանութիւնները, ի տես Օսմանեան Կայսրութեան մէջ բնակող հայութեան օրինապահ կեցուածքին, Յունաստանի մէջ կը ձերբակալեն կարգ մը թրքահայեր[54]:

Պալքանեան ժողովուրդներուն հանդէպ հայութեան համակրանքը իր արտայայտութիւնը կը գտնէ երբ Հոկտեմբեր 8ին Սոֆիայի մէջ պուլկարական բանակի կողքին կը կազմաւորուի հայ կամաւորներէ բաղկացած ջոկատ մը: 270 սպայ եւ գինուոր հաշուող կամաւորական ջոկատի հրամանատար կը նշանակուի ենթասպայ (փոտպորուչիկ) Գարեգին Նժդեհը իսկ հարիւրապետ (ծոյեւոյ)՝ Անդրանիկը (յետագային Անդրանիկ եւս կը ստանայ փոտպորուչիկի աստիճան): Ջոկատը կը մտնէ 12րդ Լոզենկրատեան Գումարտակի կազմին մէջ եւ նշանակալից մասնակցութիւն կը բերէ Ուգուն Համիտլար լեռնաշղթայի կռիւներուն, Կիւմիւրճինա քաղաքի ազատագրութեան, Մարիմա գետի եզերքին եւ Մելհամա գիւղին մօտ տեղի ունեցած ճակատամարտերուն: Դեկտեմբերին ջոկատը կը հասնի Մարմարայի ծովափին գտնուող Փանատաս գիւղը (Ռոտոսթոյի մօտ), ապա կը մասնակցի Շար-Քէօյի մօտակայքը տեղի ունեցած կռիւներուն ու կը ստանձնէ Փլատանոս գիւղին պաշտպանութիւնը: 1913 Մայիս 27ին ջոկատը կը զօրացուի: Պատերազմի ընթացքին իրենց գինուորական կարողութիւններով եւ քաջութեամբ Անդրանիկի ու Նժդեհի կողքին աչքի կ'իյնան Յովհաննէս Զաւուշը (Պօղոսեան), Սարգիս Արմաղանեանը եւ ուրիշներ: Ջոկատի շարք մը մարտիկներ կը պարգեւատրուին գինուորական չքանշաններով[55]: Նկատելի է որ կամաւորկան այս ջոկատի գործունէութեան մասին պոլսահայ մամուլը չ'անդրադառնար:

* *

Պալքանեան Պատերազմի ամրողջ ընթացքին, երբ մէկ կողմէ արտաքին թշնամիին առկայութիւնը կը ստիպէր աւելի ուշադիր ըլլալ ներքին կայունութեան՝ սիրաշահելով փոքրամասնութիւնները, իսկ միւս կողմէ՝ երբ հայկական նահանգներու բարեկարգման հարցը ենթադրել կու

տար յաւելեալ հոգատարութիւն գաւառի հայութեան հանդէպ, ամէն տրամաբանութենէ դուրս, խստօրէն կ'աճին հակահայ բռնարարքները։ Տակաւին սուլթան Համիտի օրերէն հռչակ ստացած աւազակախումբեր՝ Սայիտ պէկի, Միր Մհէի, Իսաւ Մրկէի, Կապարցի Մահմէտի, Թահիր աղայի եւ այլոց խումբերը կը ստուարանան ու կը դառնան հայ գիւղացիութեան պատուհասը[56]։ Միայն 6 ամսուան ընթացքին Վանի նահանգին մէջ կը սպաննուի 54 հայ[57]։ Պոլսահայ թերթերը կը լեցուին գաւառէն հասնող սպանութիւններու, առեւանգումներու, աւերումներու նկարագրութիւններով։ Պոլսոյ Հայոց Պատրիարքութիւնը այդ կապակցութեամբ բազմաթիւ յուշագիրեր կը յղէ վարչապետարան եւ Ներքին Գործոց Նախարարութիւն։ Կ'առեւանգուին ու կը բռնարարուին պատերազմի մեկնած հայ գինուորներու կանայք։ Սապահ Գիւլեան, իր «Փաստեր եւ Իրողութիւններ» յօդուածին մէջ կը գրէ. «հայ զինուորը պատերազմի դաշտը գնդակների տեղատարափին է կուրծք տալիս, սակայն Հայաստանի մէջ նրա կինը, քոյրը, մայրը անպատիժ կերպով բռնաբարւում են, իր ստացուածքները յափշտակւում, եւ այդ էլ «հայրենիքի փրկութեան» համար կեանք տուած ժամանակը»[58]։ Ռազմաճակատ մեկնած հայ գինուորներու կանանց բռնի կրօնափոխման հարցով Պատրիարքարանը երկու առիթներով յուշագիր կը յղէ Պատերազմական Նախարարութիւն, որ կը պատասխանէ թէ քանի որ քրիստոնեայ գինուորի մը ծառայութեան ժամանակ իսլամացումը օրինական չի նկատուիր, ուստի, բանակ մեկնած գինուորի մը կնկան իսլամացումը եւս չի կրնար օրինական նկատուիլ...[59]։

Պատերազմին հետեւանքով, մեծ թիւով իսլամ գաղթականներ Պալքանեան թերակղզիէն կ'ապաստանին Անատոլիա ու անոնցմէ մաս մը կը տեղակայուի հայկական նահանգներուն մէջ։ Հայութեան մօտ մտավախութիւն կ'առաջանայ, որ հայկական նահանգներուն ազգագրական պատկերը փոխելու նպատակով, օսմանեան կառավարութիւնը ծրագրուած ձեւով այդ գաղթականները կը վերաբնակեցնէ հայկական նահանգներուն մէջ։ Գաղթական այդ բազմութիւնները կը ստեղծէին նաեւ ապահովական մտահոգութիւններ, որովհետեւ անցած ըլլալով պատերազմի արհաւիրքէն, վրէժխնդրական զգացումներ ունէին քրիստոնեաներուն հանդէպ։ 1912 Մայիս 12ին Արշարունի Պատրիարք, պատուիրակութեամբ մը կը տեսակցի վարչապետ Մահմուտ Շեւքէթ փաշային հետ ու անոր կը փոխանցէ յուշագիր մը՝ հայկական գաւառներու վիճակին մասին։ Վարչապետը գովեստով կը խօսի հայ գինուորներու հաւատարմութեան եւ հայրենասիրութեան մասին ու կը խոստանայ միջոցներ ձեռք առնել գործուած չարիքները դարմանելու համար։ Ան կը յայտնէ նաեւ թէ Ռումելիի գաղթականները հայկական գաւառներ տեղաւորելու հարց չկայ։ Հանդիպումէն ետք Մահմուտ Շեւքէթ փաշա թղթակիցներուն կը կատարէ յայտարարութիւն եւ կը պատասխանէ անոնց հար-

ցումներուն։ Ան կ'ընդունի թէ «մէկ քանի նահանգներու մէջ հայ ազգը բռնութիւններու եւ յարձակումներու ենթակայ եղած է», սակայն անոնց պատասխանատուութիւնը կը դնէ անպատասխանատու պաշտօնեաներու ուսերուն, որոնք փոխարինելու համար կառավարութիւնը արդէն իսկ քայլերու դիմած է։ Վարչապետը կ'աւելցնէ. «պէտք է ըսել թէ հայերը չեն որ այս հարստահարութեանց զոհ կ'երթան, թուրքերն ու քիւրտերն ալ նոյն վիճակին ենթակայ են»։ Ան նաեւ կը ժխտէ պատերազմին մէջ արձանագրուած պարտութիւններուն հայերու պատասխանատուութիւնը ու կ'ըսէ. «պէտք է խոստովանիլ թէ օսմանցի քրիստոնեայ հպատակներուն մէջ հայերը միշտ ամէնէն հաւատարիմները եղած են եւ այս վերջին պատերազմին հերոսաբար կռուած են մեր բշնամիին դէմ»[60]։

Վերոյիշեալ հանդիպումը եւ վարչապետին յայտարարութիւնները լայն արձագանգ կը գտնեն մամուլին մէջ։ Ագաւամարտ, անուղղակի օրէն պատասխանելով վարչապետին, իր «Մուհաճիրները» խմբագրականին մէջ կը գրէ թէ Ռումելիի գաղթականները քրիստոնեայ շրջաններուն մէջ վերաբնակեցնելու հարցը լուրջ է, մանաւորաբար նչելով որ Արեւելեան Անատոլու ղրկուած են Ռումելիի գրաւուած տարածքներու պետական պաշտօնեաները[61]։ Լա Թուրք եւ Մհանպուլ թերթերը կը գտնեն թէ պատրիարքին յուշագիրը արդարացի է եւ կառավարութիւնը պէտք է այդ ուղղութեամբ գործնական քայլերու դիմէ[62]։ Թերճիւմանը Հաքիքաթ եւ Ժէօն Թուրք թերթերը չեշտը կը դնեն վարչապետին այն յայտարարութեան՝ որ միայն հայերը չեն չահատակութեանց ենթարկուողները ու կը նչեն թէ պատերազմին մէջ հայերը կը կռուին քաջաբար[63]։ Թասվիրի Էֆքյար կ'ըսէ թէ նման յուշագիրները պէտք է նկատի առնեն ժամանակաշրջանը ու կը մերժէ մտնել անոր բովանդակութեան քննարկման մէջ, որովհետեւ այդ մասին ինք ճչգրիտ տեղեկութիւններ չունի։ Թերթը կը տպէ նաեւ Արչարունի Պատրիարքին յուսանկարը եւ անոր մասին կը գրէ անպատչաճ լեզուով[64]։ Քիւրտ ծագումով ծերակուտական Ապտուլ Քատէր Օսմանչէր Հոյա թերթին մէջ կը բողոքէ որ պատրիարքը անարգած է քիւրտերը։ «Եթէ քիւրտերը ուզէին, շատոնց բնաջինջ ըրած կ'ըլլային հայերը» կ'ըսէ ան ու հողային հարցի կապակցութեամբ կ'աւելցնէ. «կարելի չէ քիւրտերուն ձեռքէն առնել իրենց հողերը -փոքորիկ կը պայթի» եւ քիւրտերը ամէն ինչ կ'ընեն այդ հողերուն վերատիրանալու համար[65]։ Արդարադատութեան Նախարարութիւնը, Պիթլիսի նահանգապետէն եկած տեղեկագիրի մը հիման վրայ կը հաղորդէ թէ պատրիարքը իր յուշագիրին մէջ եղելութիւնները չափազանցած է։ Պատասխանելով Արդարադատութեան Նախարարութեան, Արչարունի Պատրիարք կը հրապարակէ հակահայ վայրագութիւններուն մանրամասն նկարագրութիւնը[66]։ Ռուսական Տէն թերթը յոյս կը յայտնէ որ այս անգամ պատրիարքին յուշագիրը բարձիթողի չի մնար, որովհետեւ

Պալքանեան Պատերազմի պարտութեամբ Թուրքիա սորված պէտք է ըլլայ թէ ի՞նչ կը նշանակէ բազկացուցիչ ազգութիւններուն բողոքները նկատի չառնել։ «Փոքր Ասիայի տնտեսական զարգացման հետ Հայաստանը աւելի ու աւելի ապագրէզ կը դառնայ միջազգային ախորժակներու» կը գրէ Թերթը եւ յոյս կը յայտնէ թէ հայերը կը գիտնան որու՞ն կողքին դիրքորոշուիլ[67]։

Պատրիարքարանի յուշագիրներուն գուգահեռ, հայ գիւղացիութեան տառապալից իրավիճակին մասին բողոքի այլաբնոյթ ձեռնարկներ կը կազմակերպեն արեւմտահայ իրականութեան մէջ գործող կուսակցութիւնները՝ ՍԴՀԿ, ՀՅԴ, Վերակազմեալ Հնչակեան եւ Հայ Սահմանադրական Ռամկավար Կուսակցութիւն։ Կը կազմակերպուին նաեւ միջկուսակցական բնոյթի բողոքի ելոյթներ հակառակ անոր, որ 1912 Մարտ-Մայիս ամիսներուն հայ կուսակցութիւններուն միջեւ յարաբերութիւնները բաւական լարուած էին՝ երեսփոխանական ընտրութիւններուն բերմամբ։ Կայսրութեան տարածքին եւ անկէ դուրս միջկուսակցական բնոյթի նախաձեռնութիւններ կը կատարուին Վանի[68], Սոֆիայի[69], Ազեքսանդրիոյ[70], Իզմիրի[71], Էրզրումի[72], Կ.Պոլսոյ[73] մէջ եւ այլուր։

1913 Յուլիս 1ին (Դեսպանական Յանձնախումբի կազմութեան յաջորդ օրը) Ներքին Գործոց նախարար Թալաաթ կ'այցելէ Արշարունի Պատրիարքին ու կը հաղորդէ թէ գաւառներուն մէջ իշխանութիւնները սկսած են հետապնդել ու ձերբակալել աւազակները։ Պատրիարքը կը պատասխանէ թէ ինք տակաւին յայտնի աւազակապետի մը ձերբակալման լուրը ստացած չէ։ Թալաաթ կը բացատրէ թէ գործը դժուար է եւ աւազակախումբերը կ'ապաստանին Պարսկաստան ու կ'աւելցնէ թէ Անատոլուի մէջ բարեկարգումներ իրագործելու համար կառավարութիւնը Անգլիայէն եւ Զուիցերիայէն մասնագէտներ պահանջած է։ Պատրիարքի այն հարցին թէ բարեկարգութիւնները վարչականօրէն կեդրոնաձի՞գ թէ՝ ապակեդրոն դրութեամբ պիտի գործադրուին, Թալաաթ կը պատասխանէ թէ բարեկարգութիւնները ապակեդրոն դրութեամբ տեղի պիտի ունենան ու կ'աւելցնէ՝ «Ձերդ Սրբութենէն կը խնդրեմ որ մեզի օգնէք, եւ անանկ բան մը ընենք, որ եւրոպական տէրութիւնները չմիջամտեն»[74]։

1912 Յուլիս-1913 Յունուար միջոցին, երբ իշխանութիւնը կ'անցնի հակաիթթիհատականներուն ձեռքը, հակահայ արարքները կը ստանան նոր թափ։ Լուրջ կասկածներ կը շրջին թէ հակահայ վայրագութիւններու նոր ալիքին ետին կեցած է Իթթիհատը՝ իշխանութիւններուն հանդէպ հայութեան ատելութիւնը գրգռելու համար։ Անդրադառնալով այս մասին, Սպահ Գիւլեան իր «Պալքարի Ուղին» յօդուածին մէջ կը գրէ. «մենք չենք, որ Իթթիհատին այդպիսի փոքրոգութեան վկայական չտանք. նա ընդունակ է այդպիսի արարքի»[75]։ Պատասխանելով Նոր Աշխարհ եւ Ժամանակ թերթերու այսօրինակ պնդումներուն, Թանին կը

գրէ թէ անհիմն է հակահայ արարքներուն եաին Իթթիհատը տեսնել, ընդհակառակը՝ այդ արարքները նոր թափ ստացած են Իթթիհատին իշխանութենէն հեռանալուն պատճառով[76]: Թանին Տիարպեքիրի մէջ սպաննուած Հաննա Գագագեանի ոճիրը կը վերագրէ Իթթիւաֆին[77]: Հակադրուելով Թանինի այդօրինակ պնդումներուն, Յ. Արծրունի իր «Զրպարտիչները Բեմին Վրայ» յօդուածին մէջ կը գրէ, «Ոճիրներու փաստերը շատ ծանր կը կշռեն Իթթիհատի ուսերուն վրայ, որոնց տակ սոսկալիօրէն կքած է ան: Ուրեմն անոր գոյնը պարզ մէջտեղն է, արեւի լոյսին պէս, իբրեւ կատարուած իրականութիւն: Իսկ միւսը, Իթիւաֆը, բարեբախտաբար չէ մտած ոճիրի շրջանին մէջ, որով զայն մեղադրելու իրաւունք չունինք առ այժմ»[78]: Աւելի ուշ, Թանին կ'ամբաստանէ Ներքին Գործոց նախարար Թանիչ պէյը, որ Արշարունի Պատրիարքին բան է թէ հակահայ վայրագութեանց եաին կեցած է Իթթիհատը, իսկ պատրիարքը այդ տեղեկութիւնը յայտնած է ռուս թղթակից Քոչփինսկիին[79]: Պատրիարքարանը պաշտօնապէս կը հերքէ այս լուրը իսկ Թանին իր հայ պաշտօնակիցներուն կ'առաջարկէ տպել այդ հերքումը[80]:

Պատրիարքարանի յուշագիրերն ու բողոքի այլագան երկթները գործնական գեանի վրայ արդիւնք չեն տար: Հակահայ արարքները կը շարունակուին ու անմեղ քաղաքացիներու կողքին այդ արարքներուն զոհերը կը սկսին դառնալ նաեւ երեւելի հայեր:

1912 Հոկտեմբեր 11ին Սէյիտ Ալիի աւագակախումբին կողմէ կը սպաննուին Տէր Սարգիս քահանան եւ Աղթամարի թեմական դպրոցներու տեսուչ Ռաֆայէլ Երեմեանը: Նոյեմբեր 26ին Վանի մէջ կը սպաննուի ՀԲԸՄ Վանի մասնաճիւղի նախագահ Պետրոս Գափամաճեանը: Քանի որ Գափամաճեան տարակարծութիւններ ունէր ՀՅԴի հետ, իշխանութիւնները կը փորձեն ոճիրը վերագրել դաշնակցականներուն[81]: 1913 Յուլիսին, Մուշ կատարած իրենց այցելութեան ժամանակ, առանց լուրջ պատճառաբանութեան կը ձերբակալուին ՀՅԴ յայտնի դէմքերէն Ռոստոմն ու Արմէն Գարօն (Գարեգին Փաստրմաճեան): Ագատ արձակուելէն ետք, Գարօ Ներքին Գործոց նախարար Թալաաթ փաշայինն հասցէագրած իր բաց նամակին մէջ կը գրէ. «իմ վերջին ճամփորդութեանս ընթացքին, շրջելով Կարնոյ, Վանայ եւ Պիթլիսի վիլայէթները, ես վերջնականապէս համոզուեցայ որ մեր երկրի այս մասերը հիմնական բարեփոխութեան կարիքը ունին, եթէ չենք ցանկար Ռումելիի բախտին յանձնել նաեւ այս նահանգները»[82]: Օգոստոս 28ին Վանի մէջ դարանակալ գնդակներու զոհ կ'երթայ հնչակեան յայտնի գործիչ Ագատ Ոստանիկը (Մելքոն Միր-Սաաոյեան): Վանի չուկան առ ի բողոք երեք օր փակ կը մնայ: Շուրջ 5000 հոգիի մասնակցութեամբ տեղի ունեցող յուղարկաւորութիւնը կը վերածուի հակակառավարական ցոյցի: Իշխանութիւնները կը փորձեն խափանել թաղման երթը, սակայն կը հանդիպին վճռական հակազդեցութեան (թաղման թափօրին, հայ կուսակցութիւն-

ներուն կողմէ կը մասնակցէին նաեւ գինեայ խումբեր)[83]: Սեպտեմբեր 17ին Պատրիարքարանէն պատուիրակութիւն մը կ'այցելէ Ներքին Գործոց նախարար Թալաաթին ու անոր կը փոխանցէ Ոստանիկի սպանութեան մանրամասնութիւնները. Թալաաթ փաշա անոնց կ'ըսէ թէ իրեն հասած վերջին տեղեկութիւնները եւս կը հաստատեն թէ ոճիրը հայերը գործած չեն...[84]:

Հակահայ ոճիրներու մասին գաւառէն հասնող լուրերուն զուգահեռ, տեղեկութիւններ կը հասնին նաեւ ռազմաճակատէն, որոնց համաձայն Ռոտոսթոյի մէջ օսմանեան բանակը հակահայ ջարդեր կատարած է: Թրքական կարգ մը թերթեր կը գրեն թէ Ռոտոսթոյի վերագրաւումէն առաջ, հայերը իսլամ բնակչութեան դէմ վայրագութիւններ կատարած են[85]: Ռոտոսթոյի մէջ կատարուած դէպքերուն որպէս բողոք, Օգոստոս 1ին Արշարունի Պատրիարք կը հրաժարի[86]: Նոր պատրիարք կ'ընտրուի Զաւէն Եպս. Տէր Եղիայեան:

1908ին, սահմանադրութեան վերահաստատումէն ետք, արեւմտահայութեան մօտ արմատապէս հիմնաւորուած էր օսմանեան երկիրը «հայրենիք» ընդունելու գաղափարը: Այս գաղափարի ջատագովներէն էր ՀՅԴն[87]: Սակայն, իթթիհատականները աւելի յառաջ երթալով, «օսմանեան հայրենիք» գաղափարին կողքին, կը պաշտպանեն նաեւ «օսմանեան ազգ»ի տեսութիւնը, որ արեւմտահայութեան մօտ չի հիմնաւորուիր. այս տեսութեան արմատական ընդդիմախօս էր ՄԴՀկը: Սակայն, Պալքանեան Պատերազմին ընթացքին արեւմտահայութեան մօտ կը հասունայ նոր իրավիճակ մը. մէկ կողմէ ռազմաճակատին վրայ եւ թիկունքին՝ հաւատարմօրէն պաշտպանել հայրենիքը եւ միւս կողմէ իր տան ու ծննդավայրին մէջ մնալ անպաշտպան եւ անապահով: Հետզհետէ կ'աճի «օսմանեան հայրենիք»էն օտարումի զգացումը: Այս իրավիճակին գեղարուեստական պատկերումը կու տայ բանաստեղծ Սիամանթօ իր «Հայ Զինուորի Մը Թաղումը» գրութեամբ, ուր կը նկարագրուի ռազմաճակատին վրայ նահատակուած Խաչիկ անունով հայ զինուորի մը թաղումը՝ «թէ սիրե՛լի անծանօթս, ո՛չ ոք քու վրադ չի լացաւ, այլ բոլորն ալ լացին անոնց վրայ որոնց դէմքերը ցոյց տուիր մեզ՝ մահուան մեծ դուռը բանալով՝ անկէ ներս մտած պահուդ, հարիւր հազար հին զոհերուն, այս երկրին համար, եւ տասնեակ հազար մը նոր զոհերուն դէմքերը, դարձեալ այս երկրին համար ցոյց տուիր մեզի: Ակնթարթ մը դուն այդ դուռը մեր առջեւ բացիր: ...Զինուոր Խաչիկ, ըսէ՛, մահէդ չորս օր առաջ Վանայ մէջ սպանուած Ռաֆայէլ Երէմեանի մահը իմացա՞ր...: Ա՜հ եթէ իմացար Ռաֆայէլի եւ գեղջուկ բահանայիին մահը, քու մահդ դառնօրէն ահաւոր եղաւ, դառնօրէն միամիտ, դառնօրէն անպտուղ...»[88]:

* *

Պալքանեան Պատերազմը վերստին միջազգային դիւանագիտութեան ասպարէզ կը հանէ Օսմանեան Կայսրութեան մէջ բարեկարգութիւններ կատարելու հարցը։ Հարց մը՝ որ կը կազմէր արեւելեան Անատոլիայի հայ բնակչութեան առաջնահերթ պահանջը։

Պատերազմէն ետք հաշտութեան դաշինքի մը համար տարուելիք բանակցութիւններուն եւ ժողովներուն ընթացքին հայկական նահանգներուն մէջ բարեկարգութեան հարցը եւս արծարծելու առ ի նախապատրաստութիւն, 1912 Նոյեմբեր 10ին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե. Սուրէնեանց յատուկ կոնդակով մը Պօղոս Նուպար փաշան կը լիազօրէ կազմելու Ազգային Պատուիրակութիւն մը, որ կ'ընդգրկէ՝ Պօղոս Նուպար փաշան (նախագահ), Գէորգ Արք. Ութուճեանը, Յակոբ Արթին փաշան, Մինաս Ջերազը եւ Յարութիւն Մոստիչեանը։ Պատուիրակութիւնը եւրոպական մայրաքաղաքներուն մէջ կը ծաւալէ աչխոյժ գործունէութիւն՝ Պերլինի Դաշնագիրը ստորագրած պետութիւններուն հետ բանակցութիւններ վարելու տեսակէտէ։

Պատերազմական գործողութիւնները սկսելէն քանի մը օր առաջ, հաւանաբար պատերազմի մղձաւանջին ազդեցութեան տակ, Մուրատ պէյ Թանգիմաթ թերթին մէջ կը գրէ թէ Ռումելիի մէջ բարեկարգութիւնները անհրաժեշտութիւն են՝ «պատերազմ ըլլայ կամ ոչ»[89]։ Նոյն թերթին մէջ Լութֆի Նիքրի կը պաշտպանէ բարեկարգութիւնները Անատոլիայի մէջ եւս կատարելու գաղափարը։ Սակայն Հիւսէյին Ճահիտ Թանրիվի մէջ, անդրադառնալով եւրոպական Թուրքիոյ եւ Արեւելեան Անատոլիայի մէջ բարեկարգութիւններ պահանջող Պերլինի Դաշնագրին համապատասխանարար 23րդ եւ 61րդ յօդուածներուն, հարց կու տայ. «Ո՞վ պիտի ապահովցնէ մեզ թէ այսօր իրենց ողջնգնել ուզած 23րդ յօդուածին վաղը 61րդ յօդուածը չպիտի յաջորդէ եւ միջամտութեան միեւնոյն իրաւունքը չպիտի յայտնուի նաեւ արեւելեան Անատոլուի մէջ»[90]։ Ազատամարտ իր «Բարեկարգութիւնը Պատուհաս - 23րդէն Ետք 61երորդը» խմբագրականին մէջ կը գրէ. «եւ օսմանեան հայրենիքի այս նեղ ճգնաժամին, Թանին աւելի քան որեւէ օրկան յաւ պիտի ըմբռնէր թէ բոլոր այս արհաւիրքները ամէն բանէ առաջ ահաւոր դատապարտութիւն մըն են իր ներկայացուցած կուսակցութեան (Իթթիհատ - Ե.Ճ.) նեղ եւ կարճատես գործելակերպին, անոր քաղաքականութեան բացարձակ տհասութեանը»[91]։ Բանավէճին կ'ընդգրկուի նաեւ ընդդիմադիր Թասվիրնաթ թերթը որ պատասխանելով Թանինին կը գտնէ որ 1880ի Ռումելիի համաձայնութեամբ խոստացուած բարեկարգութիւններէն մնաս չկայ եւ ժողովուրդը անորմով պէտք չէ վախցնել։ Թերթը կը գտնէ թէ յառաջ եկած դժուարութիւնները հետեւանք են անոր, որ սահմանադրական երկիրը չղեկավարուեցաւ սահմանադրութեամբ. եթէ չորս տարիէ կիրարկուող «Թալաաթպէյական դրութիւնը

շարունակուի ... արդեօք վտանգը աւելի քի՞չ պիտի ըլլայ» հարց կու տայ Թաամինեան[92]:

Հայկական նահանգներուն մէջ բարեկարգումներ կատարելու պահանջքին՝ օսմանեան վարիչները կը հակադրուին մի քանի անուղղակի առարկութիւններով: Այդ առարկութիւններէն առաջինը, թէ՝ ընդհանուր բարեկարգութիւններու կարիքը ունի ամբողջ կայսրութիւնը, ուստի, առանձնաբար որեւէ շրջանի մէջ մասնակի բարեկարգումներու անհրաժեշտութիւնը չկայ, նոր տեսակէտ չէր:

Այդ պատճառաբանութեամբ երիտթրքական շարժման պարագլուխները կը հակառակէին հայկական նահանգներուն մէջ բարեկարգութիւններ կատարելու պահանջքին՝ տակաւին 1890ականներուն, երբ դեռ կը գտնուէին վտարանդիութեան մէջ[93]: Թերճիմանը Հաքիքաթ կը գտնէ թէ իշխանութիւնները միշտ ալ ցանկութիւն ունեցած են բարեկարգութիւններ կատարելու, սակայն դիւանակալութիւնը, վարանումները, դանդաղաշարժութիւնը ինչպէս նաեւ «մեր մէջ տարիներէ ի վեր իրենց անջատողական ձգտումները իրագործելու համար աշխատող կեդրոնախոյզ ուժերուն ազդեցութիւնը» խոչընդոտած են այդ: Թերթը կը գտնէ թէ Արեւելեան Անատոլուին չափ ամբողջ կայսրութիւնը պէտք ունի բարեկարգումներու, ուստի այն պէտք է ըլլայ ընդհանուր[94]: Ազատամարտ իր «Ընդհանուր եւ Մասնաւոր Բարեկարգութիւն Հայկական Նահանգներու Առիթով» խմբագրականով կը հակադրուի Թերճիմանը Հաքիքաթին ու հաստատելէ ետք թէ բարեկարգութիւնները պէտք է բխին տուեալ շրջանի իւրայատկութիւններէն եւ պահանջքներէն կ'եզրակացնէ. «ընդհանուր բարեկարգութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ մասնակի բարեկորոգումներու ամբողջութիւնը»[95]:

Օսմանեան վարիչներու միւս առարկութիւնը այն էր, թէ պատերազմի մէջ գտնուող երկրի մը համար բարեկարգութիւններու պահանջքը անժամանակ է: Մինչդեռ, հայերուն մօտ կ'ամրապնդուի այն համոզումը որ Պալքանեան Պատերազմը արտաքին ճնշման այն միջոցն է, որմով կարելի է օսմանեան իշխանութիւններէն բարեկարգումներ կորզել: Անդրադառնալով այս առարկութեան, Ակնունի իր «Խնդիր Մի Ցարուցէք... Անհիմն Մեղադրանք» յօդուածին մէջ կը գրէ. «մեզ ասում են.- մի՞թէ ռեֆորմների ժամանակ է: Մենք էլ հարցնում ենք.- մի՞թէ սպանելու ժամանակ է...: Հայը մեծ ռեֆորմ չի պահանջում այս րոպէիս: Նա պահանջում է չսպանել, չթալանել, չբռնաբարել: Մի՞թէ չսպանելու ու չթալանելու իրաւունքն էլ կարօտ է ռեֆորմների – սահմանադրական Թուրքիոյ մէջ»[96]: Հնչակեան գործիչ Վանիկ (Գեղամ Վանիկեան) եւս կը գարմանայ թուրք մտաւորականներու այն մտածելակերպին «որոնք կը պնդեն թէ դեռ բարեկարգումներու ժամանակը չէ, նախ ինքզինքնիս ազատենք սա պատերազմէն ու ապա մտածենք,- ու կ'աւելցնէ,- բարեկորոգում ըսուածը ի՛նչ ժամանակ ալ գործադրուի,

դարձեալ օգտակար է, քանի որ այդ միջոցով միայն Թուրքիան կրնայ փրկուիլ»[97]:

Օսմանեան վարիչները յատկապէս կը հակառակէին բարեկարգումները մեծ տէրութեանց վերահսկողութեան տակ իրականացնելու պահանջքին, գայն նկատելով օտարերկրեայ միջամտութիւն՝ որմէ կը գդուշանային ահաւոր կերպով: Մինչդեռ հայութիւնը՝ պատմական փորձէն ելլելով, իշխանութիւններու խոստումներուն հաւատք չէր ընծայեր եւ պահանջուած բարեկարգումներուն համար կը փափաքէր ունենալ մեծ տէրութեանց վերահսկողութիւնը: L'Asie Francaiseի մէջ դերկոմս Ռոպէր Տը Քէ իր «Հայկական Բարենորոգմանց Հնդիրը» յօդուածին մէջ կը գրէ. «մենք ըսինք, եւ մեզի հետ ըսին ո՛չ միայն Անգլիոյ եւ ուրիշ տեղերու հայասէրները, այլեւ Թուրքիոյ բոլոր ճշմարիտ բարեկամները, թէ առանց օտար քոնթրոլի օսմանեան բարենորոգումները թուղթի վրայ միայն գոյութիւն պիտի կրնան ունենալ»[98]: *Սակայն, իշխանութեան կարծիքը այդպէս չէր: Իթթիհատի յայտնի դէմքերէն, նախկին եւրեմտական նախարար Ճաւիտ պէյ, պաշտօնական պատուիրակութեամբ մը Փարիզ գտնուած միջոցին կու տայ մամլոյ ասուլիս մը ուր կ'ըսէ թէ տեսակցած է Պօղոս Նուպար փաշային ու անոր հետ խորհրդակցած հայկական բարեկարգումներուն մասին. Ճաւիտ պէյ կ'աւելցնէ.* «գրեթէ բոլոր կէտերու մասին համաձայն ենք իրեն հետ՝ բացի այդ երաշխաւորութեան կէտէն,- որովհետեւ եւրոպական վերահսկողութիւնը կամ երաշխաւորութիւնը,- գործին ամենափափուկ կէտն է»[99]: *Թուրք Ագգայնական Կուսակցութեան օրկան Իջհամ թերթին տրուած հարցազրոյցի մը մէջ Ներքին Գործոց նախարար Ռաչիտ պէյ անդրադառնալով եւրոպական վերահսկողութեան տակ Արեւելեան Անատոլիայի մէջ կատարուելիք բարեկարգումներու հարցին կ'ըսէ.* «այդ տեսակ խնդիր մը զայն յարուցանել ուզողներու ուղեղներուն մէջ միայն գոյութիւն ունի: ...Մենք չենք կրնար հանդուրժել որ օտարները մեր ներքին եւ ազգային հարցերուն համար ազդարարութիւն անգամ ընեն, ուր մնաց միջամտութիւն»:[100] *Օտար վերահսկողութեան դէմ էր նաեւ թուրք հանրային կարծիքին մեծ մասը, որուն արտայայտիչը դառնալով Թասֆիրը էֆքիար իր «Հայկական Հարցը» յօդուածին մէջ խօսքը ուղղելով հայերուն կը գրէ.* «կամ ըսէք Եւրոպային որ մենք արտաքին միջամտութիւն չենք ուզեր, կամ...»[101]: *Կախման կէտով լրացող այս «կամ»ը բացմիմաստ էր...: Սպառնական նոյն ոճը օգտագործելով իթթիհատական Արեմտահայ թերթը կը գրէ.* «երեւցածին նայելով կ'ուզուի արեւելեան նահանգներու խնդիր մը մէջտեղ հանել: Ասոնք ալ չափը կ'անցընեն կոր, արիւննիս գլուխնիս քող չցատկեցնեն»[102]: *Իջհամ եւ Արեմտահայ թերթերու գրգռիչ հրապարակումներուն դէմ պատրիարքարանը բողոքագիր կը յղէ Բ.Դրան*[103]:

Օսմանեան վարիչները մասնաւորապէս կը սարսափէին օտարերկրեայ վերահսկողութեան պատրուակին տակ պալքանեան գինակցութեան բացայայտօրէն թիկունք կեցած Ռուսիոյ ազդեցութեան Արեւելեան Անատոլիա ներթափանցումէն՝ գայն գտնելով տարածաշրջանը կայսրութենէն անջատելու եւ իրենց ոխերիմ թշնամիին կցելու հայերու թաքուն տրամադրութիւններուն արտայայտութիւնը: Օսմանեան վարիչներուն հակառուս տրամադրութիւնները սրելու քաղաքական նպատակին կը ծառայեն եւրոպական մամուլի կարգ մը օրկաններուն հաղորդումները: Աւստրիական Փեչթէր Լոյտ թերթը կը գրէ թէ Ռուսիա կը սպառնայ զօրք մտցնել հայկական նահանգներ՝ եթէ Թուրքիա չկրնդունի պալքանեան իր դաշնակիցներուն պայմանները[104]: Գերմանական Պերլինկէր Թակեպլաթթ թերթը կը գրէ թէ Հայաստան Թուրքիոյ խոցելի կէտը կը կազմէ եւ Ռուսիա հայկական բարեկարգութիւնները պատրուակելով կրնայ հոն զօրք մտցնել, ուստի, այս հարցով Թուրքիա պէտք է գործակցի եւրոպական երկիրներուն հետ, որոնք այլապէս ալ, Պերլինի Պայմանագրով, այդ կապակցութեամբ պատասխանատուութիւն ստանձնած են[105]: Ռուսական Նովոյէ Վրեմիա թերթը կը գրէ թէ ասիական Թուրքիան Ռուսիոյ համար առեւտրական հրապարակ մը չէ միայն. այն Ռուսիոյ հարաւն է, «այն հարաւը, որուն ա՛յնքան բուռն կերպով, ճակատագրականօրէն կը փափաքի ռուսը: Մենք արդէն մտեր ենք Փոքր Ասիոյ թերակղզին: Երեսունհինգ տարի առաջ ռուս զինուորները արդէն գրաւեցին ասիական Թուրքիոյ հիւսիսային պատուարը - Կարսը, եւ մեր սահմանը հասաւ մինչեւ Եփրատի ափունքը»[106]: Թանին կը յարձակի վերոյիշեալ յօդուածը թարգմանաբար տուած Ազատամարտին վրայ, գտնելով թէ այս յօդուածը տպողները «պէտք չէ տարակոյս ունենան որ օսմանեան հայրենիքին մէջ եղբայրութեան հաստատման գործին ամէնէն գէշ ծառայութիւնը կը մատուցեն»[107]: Ժէօն Թուրք, ծաղրելու համար հայերուն ռուսասիրութիւնը, կը տպագրէ ծաղրանկար մը, ուր կը պատկերուի ցարը կախաղանի մը քով կեցած՝ ուզելով ցոյց տալ թէ ռուսերուն ապաւինիլ փափաքող հայերուն ի՛նչ կը սպասէ[108]: Սա նաեւ անուղղակի ակնարկ մըն էր 1907-1912ին Ռուսիոյ տարածքին ՀՅԴի եւ այլ քաղաքական հայ հոսանքներու դէմ տեղի ունեցող հալածանքներուն: (Այս ծաղրանկարին պատճառով Ժէօն Թուրք կը կախակայուի եւ կը սկսի լոյս տեսնել Union անունով): Ազատամարտ կը գրէ թէ Ժէօն Թուրք պէտք չունէր օտար կախաղանով սպառնալ հայերուն, երբ մահուան սպառնալիքը Թրքահայուն ամէնօրեայ իրականութեան մաս կը կազմէ[109]:

Պալքանեան Պատերազմի ընթացքին եւ անկէ ետք բարձրացած հայկական նահանգներու բարեկարգութեան հարցով մեծ հետաքրքրութիւն ցոյց կու տայ եւրոպական հանրային կարծիքը: Հարցին մասին լսումներ կ՛ունենան Անգլիոյ, Իտալիոյ եւ Ռուսիոյ երեսփոխանական

ժողովները[110]: Այդ մասին լայնօրէն կ'անդրադառնայ եւ օսմանեան իշխանութիւններուն հասցէին սուր քննադատութիւններ կը կատարէ եւրոպական մամուլը: Օրինակի համար La Revue du Deux Mondes հանդէսին մէջ Ռրնէ Փինոն «Ասիական Թուրքիոյ Վերակազմութիւնը» յօդուածին մէջ կը քննադատէ սուտի եւ կեղծիքի յենած Իթթիհատի ձախող քաղաքականութիւնը ու կը գրէ. «երիտթուրքերը պէտք է ընդունին բարեկարգումներն ու ապակեդրոնացումը, եթէ չեն ուզեր ինքնասպանութիւն գործել»[111]: Օտար մամուլի այսօրինակ գրութիւնները եւ պոլսահայ մամուլին կողմէ անոնց թարգմանութիւնը (Ագաթամարտ եւ Արեւելք ունէին նաեւ թրքերէն բաժիններ, ուր որոշ յօդուածներ կը տպուէին նաեւ օսմաներէնով), մեծապէս կը ջղագրգռեն իշխանութիւնները: 1913 Յունուար 30ին, ՄԴՀԿ կեդրոնական Վարչութիւնը, «Եւրոպական Մեծ Պետութիւններուն եւ Ժողովուրդներուն» կը յղէ հայկական հարցի մասին իր կեցուածքները պարփակող ընդարձակ կոչ մը[112]: Այդ կոչը եւրոպական մամուլին կողմէ կ'արժանանայ աննախընթաց արձագանգի[113]: Մամլոյ տեսչութեան կողմէ առնուած որոշում մը կ'արգիլէ պետութեան հասցէին «անպատշաճ հրատարակութիւններէն» թարգմանութիւններ կատարել[114]: Աւելի ուշ, մամլոյ տեսչութիւնը կը հաղորդէ թէ «հայերէն թերթերէն ոմանք ճշմարտութեան հակառակ հատուածներ կը պարունակեն Անատոլուի մէջ գործադրուելիք վարչային բարեկարգումներու եւ կնքուելիք փոխառութեան մասին» եւ օրինական ծանր հետապնդումներու սպառնալիքով զանոնք զգուշութեան կը հրաւիրէ[115]:

Հակառակ իշխանութիւններուն դժկամութեան եւ ջղագրգիռ վերաբերմունքին, 1913 Յունիս 30ին հայկական նահանգներու բարեկարգութեան հարցով Կ.Պոլսոյ մէջ կը կազմուի Անգլիոյ, Ֆրանսայի, Գերմանիոյ, Ռուսիոյ, Աւստրիա-Հունգարիոյ եւ Իտալիոյ դեսպանատուներու ներկայացուցիչներէն բաղկացած դեսպանական յանձնախումբ: Կառավարութիւնը կ'աճապարէ ներկայացնել իր հայեացքներուն հաշտ բարեկարգութեան ծրագիր մը, որուն կը հակադրուի Գերմանիա-Ռուսիա համատեղ պատրաստուած ծրագրի նախագիծ մը: Մայր կ'առնէ բանակցութիւններու եւ ժողովներու չարք մը, որոնց ընթացքին կը քննարկուին այլեւայլ առաջարկութիւններ: 1914 Ապրիլին հայկական նահանգներու բարեկարգութեան ծրագիրը կը ստանայ իր վերջնական տեսքը, որուն համաձայն հայկական 6 նահանգները կը բաժնուին վարչական երկու միաւորներու, որոնց վրայ վերահսկիչներ կը նշանակուին Հոլանտացի Վեստենենկը (Louis Constant Westenenk) եւ Նորվեկիացի Հոֆը (Nicolai Hoff):

Բարեկարգութեան այս ծրագիրը գործադրութեան չի դրուիր՝ վրայ հասած Համաշխարհային Ա. Պատերազմին պատճառով: Սակայն, թուրք քաղաքական վերնախաւի մտայնութեան մէջ կ'ամրապնդուի այն տե-

սակէտը, որ որեւէ պատերազմի ժամանակ հայկական նահանգներու բարեկարգութեան հարցը կրնայ վերարծածուիլ, առիթ տալով օտար ուժերու՝ ընդհուպ գինուորական միջամտութեան: Ներքին Գործոց նախարար Ռաչիտ պէյ առիթով մը կ'ըսէ. «Պալքաններու եւ յոյներու յաջողութիւնը գլխապտոյտ պատճառած է հայ փոլիթիկոսներուն, որոնք յատկապէս բարելաջող րոպէ գտան Եւրոպայի ուշադրութիւնը գրաւելու հայոց խնդրոյն վրայ»[116]: Պալքանեան Թերակղզիի կորուստէն ետք, որեւէ «բարելաջող րոպէ»ի պարագային Արեւելեան Անատոլուի կորուստը եւս կը դառնայ թուրք քաղաքական վերնախաւին մտահոգութիւնը:

* *

Պալքանեան Պատերազմը խորունկ յեղաշրջում յառաջ կը բերէ թուրք քաղաքական մտածողութեան մէջ: Պատերազմը կը փաստէ որ քրիստոնեաները կը մնան անվստահելի տարր եւ օսմանիզմի գաղափարախօսութիւնը անոնց մօտ յուրջ փոփոխութիւն յառաջ բերած չէ: Իրերայաջորդ դէպքերը ցոյց կու տան որ ոչ-թուրք իսլամները եւս անհարազատ են Կայսրութեան: Ալպանացիները կը կռուին պալքանեան գօրակցութեան կողքին, որուն հետեւանքով Լոնտոնի Դաշնագրով քարտէսին վրայ երեւան կու գայ Ալպանիա պետութիւնը. եմէնի մէջ կը շարունակուի տասնամեակներու վրայ երկարող ապստամբական իրավիճակը. արաբներուն մօտ ազատատենչ ձգտումները օրաւուր կը ստանան նոր թափ: Այս բոլորը ցոյց կու տան որ կայսրութեան իսլամ ժողովուրդները մնայուն կերպով համախումբ պահելու առումով իսլամիզմի գաղափարախօսութիւնը երաշխիք չէր կրնար ըլլալ: Կր մնար յոյս դնել թուրք տարրին վրայ: Պետական հովանաւորութեամբ կը սկսի գարթօնք ապրիլ թուրք ազգայնամոլութիւնը որ ինքնաբերաբար կը յանգի փանթուրանիզմի գաղափարախօսութեան:

Փանթուրանիզմի գաղափարախօսութիւնը երիտթրքութեան համար նորութիւն մը չէր: Անոր տարրերը առկայ էին երիտթրքական շարժման գաղափարախօսութեան մէջ՝ երբ տակաւին վերջինս իշխանութեան հասած չէր: Սակայն, այդ շրջանին, երիտթրքական շարժումը կը ձգտէր ընդգրկել նաեւ Ապտիւլ Համիտի իշխանութեան դէմ պայքարի ելած բոլոր՝ նաեւ ոչ-թուրք իսլամ ու քրիստոնեայ ուժերը: Ուստի, այդ շրջանին, անոնց համար ձեռնտու չէր յառաջ քաշել փանթուրանիզմի գաղափարախօսութիւնը, որ բնականաբար վանելի պիտի ըլլար ոչ-թուրք տարրին կողմէ: Պալքանեան Պատերազմէն ետք այս մտահոգութիւնը իսպառ փարատած էր, որովհետեւ «ալպանացիները, յոյները, եւ սլաւները դժուար թէ այլեւս տեղի տային. կը մնային միայն հայերն ու արաբները: Երեք բաղկացուցիչները - օսմանականութիւն, իսլամիզմ, ազգայնականութիւն - կը շարունակէին մնալ [օսմանեան վարիչներուն] գաղափարախօսական կարկանդակին բաղադրատոմսի բաղկացու-

ցիչները. [*այդ բաղադրատոմսին միայն*] համեմատութիւնները փոխուած էին»[117] *իշահ ազգայնամոլութեան*։

Փանթուրանիզմի գաղափարախօսներէն Թեքին Ալփ անդրադառնալէ ետք Պալքանեան Պատերազմի պարտութեան հետեւանքներուն, կը գրէ. «Սակայն թուրքերը պատերազմին միջոցով շահեցան իրենց երազային հայրենիքը, իրենց Թուրանը՝ իրենց ազգին բնօրրանն ու գեղին բոյնը։ Ուշագրաւ շրջադարձով մը թուրք ազգը իր հայեացքը դարձուց կորսուած տարածքներէն՝ Սալոնիկէն, Իւսքիւփէն, Մոնաստիրէն եւ Իոնինայէն եւ սկսաւ նայիլ դէպի Թուրան՝ ապագայի երազային հայրենիքը»[118]։ *Զարեւանդի պատկերաւոր արտայայտութեամբ ալ* «Պալքանեան պատերազմը, այսպէս, հանդիսացեր էր այն պատմական դարձակէտը, ուր թուրքերը կը լքէին Քուրանը եւ անոր տեղ կ'ընդունէին Թուրանը»[119]։

Յաջորդող քանի մը տարիներուն փանթուրանիզմի գաղափարախօսութիւնը կ'աճի եւ իր ուրոյն տեղը կը գրաւէ թուրք քաղաքական մտածողութեան մէջ։ Համաշխարհային Ա. Պատերազմը եւ մասնաւորապէս ռուսական յեղափոխութիւնը մեծ հնարաւորութիւն կը ստեղծեն նախ՝ Թուրքիան թրքացնելու եւ ապա՝ փանթուրանիզմի երազները իրականացնելու համար։

Ջոյգ հնարաւորութիւններն ալ հայ ժողովուրդին համար կ'ըլլան աղէտալի։

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Justin McCarthy, *The Ottoman Peoples and the End of Empire*, London, Oxford, 2001, էջ 89։ *Ակնարկուած պատերազմական տասնամեայ ժամանակաշրջանը կ'աւարտի Մուսթաֆա Քեմալի յոյներուն դէմ տարած յաղթանակով՝ 1922ին, եւ նոյն տարուան աւարտին անգլիական գօրքին հետ կնքուած Մուտանիայի զինադադարով։*

[2] *Ան եւ յետագայ բոլոր թուականները տրուած են գրիգորեան նոր տոմարով։*

[3] *Ազատամարտ*, 1911, *Սեպտ*. 18/1 *Հոկտ*.։

[4] *Ազատամարտ*, 1911, *Սեպտ*. 22/5 *Հոկտ*.։

[5] *Նոր Աչխարհ*, 1912, *Մարտ* 31/13 *Ապրիլ*։

[6] *Ազատամարտ*, 1911, *Հոկտ*. 23/5 *Նոյ*.։

[7] *Ազատամարտ*, 1911, 3/16 *Նոյ*.։

[8] *Ազատամարտ*, 1912, 13/26 *Մարտ*։

[9] Recep Karacakaya, *A Chronology of the Armenian Problem with a Bibliography (1878-1923)*, Publication of the Prime Ministry General Directorate of State Archives of the Republic of Turkey, Ankara, 2002, էջ 83։

[10] *Նոյն*, էջ 84։

[11] *Նոյն*, էջ 85։

[12] *Նոյն*, էջ 86։

[13] *Ազատամարտ*, 1911, *Սեպտ*. 22/5 *Հոկտ*.։

[14] *Ազատամարտ*, 1911, *Նոյ*. 29/12 *Հոկտ*.։

[15] *Ազատամարտ*, 1911, 8/21 *Դեկտ*.։

[16] *1912ի Օսմանեան երեսփոխանական ընտրութիւններուն մասին տե՛ս՝* Ե. Ճէրէճեան *«1912ի Օսմանեան երեսփոխանական Ընտրութիւնները եւ Արեւմտահայութիւնը», Հայկազեան Հայագիտական Հանդէս, Իէ. հատոր, Պէյրութ, 2007, էջ* 103-160։

[17] *Նոր Աշխարհ*, 1912, 1/14 *Ապրիլ*

[18] *Այս մասին աւելի մանրամասն՝* Ճէրէճեան, *«1912ի Օսմանեան»*, *էջ* 14 *եւ ծանոթ.* 36։

[19] *Նոր Աշխարհ*, 1912, 3/16 *Ապրիլ*։

[20] *Պերլինի Դաշնագրի* 23րդ *յօդուածը կը նչէ.* «Բարձր Դուռը պարտաւորւում է Կրետէ կղզում բարեխղճօրէն մտցնել 1868 թուականի կազմակերպական կանոնադրութիւնը (1868 թ.ի Յունուար 10ին սուլթանական ֆերմանով Կրետէ կղզում մտցւում էր կազմակերպական ստատուս, ըստ որի Կրետացիներին տրւում էր վարչական մասնակի ինքնավարութիւն: Փաստօրէն Բ. Դուռը չէր կատարում այդ ֆերմանը), այն փոփոխութիւններով, որոնք կը ճանաչուեն արդարացի: Տեղական կարիքներին յարմարուած նմանօրինակ կանոնադրութիւններ, սակայն, երանգից ի բաց առեալ Կրետէին տրուած արտօնութիւններն ու առանձնաշնորհումները, կը մտցուեն նաեւ Եւրոպական Թուրքիայի միւս մասերում, որոնց համար սոյն պայմանագրով չէր նախատեսուել վարչական յատուկ կարգաւորում: Այդ նոր կանոնադրութիւնների մանրամասների մշակումը Բ. Դուռը իւրաքանչիւր մարզում կը յանձնարարի յատուկ յանձնաժողովների, որոնց մէջ տեղացի բնակչութիւնը կը ստանայ յայն մասնակցութիւն: Այդ աշխատանքների արդիւնքը հանդիսացող կազմակերպութիւնների նախագծերը կը ներկայացուեն Բ. Դրան քննարկմանը: Նախքան այն կարգադրութիւնների հրապարակումը, որոնցով նախագծերը կը մտցուեն գործողութեան մէջ, Բ. Դուռը կը խորհրդակցի Արեւելեան Ռումելիայի համար նշանակուած եւրոպական յանձնաժողովի հետ» (*Ջ. Կիրակոսեան եւ Ռ. Սահակեան, Հայաստանը Միջազգային Դիւանագիտութեան եւ Սովետական Արտաքին Քաղաքականութեան Փաստաթղթերում, Երեւան, «Հայաստան» Հրատարակչութիւն*, 1972, *էջ* 115-116)։

Ռումելիի Պայմանագիրը մեծ տէրութիւններու ներկայացուցիչներուն կողմէ կը ծանուցուի 1880 *Յուլիս* 5ին։ *Այդ ծանուցագրին մէջ կը նչուի նաեւ Պերլինի Պայմանագրի* 61րդ *յօդուածին գործադրութիւնը, որովհետեւ «պետութիւններու ներկայացուցիչներուն կողմէ ներկայացուած բոլոր տեղեկագիրները ցոյց կու տան որ հայկական նահանգներուն մէջ վիճակը ողբալի է» (Ազատամարտ*, 1912 *Սեպտ.* 24/7 *Հոկտ.)*։

[21] *Ազատամարտ*, 1912, *Սեպտ.* 21/4 *Հոկտ.։ ՀՅԴ կազմակերպչական կառոյցին նուիրուած աշխատութիւններուն մէջ, մենք «պատշաճ մարմին» հասկացութեան մասին բացատրութիւններ չգտանք։*

[22] *Ազատամարտ*, 1912, *Սեպտ.* 22/5 *Հոկտ.։*

[23] Handan Nezir Akmeshe, *The Birth of Modern Turkey*, London, I.B. Tauris, 2005, *էջ* 127։

[24] *Նոր Աշխարհ*, 1912, *Սեպտ.*22/5 *Հոկտ.։*

[25] *Նոր Աշխարհ*, 1912, *Սեպտ.* 19/2 *Հոկտ.։*

[26] *Ազատամարտ*,1912, *Սեպտ.* 25/5 *Հոկտ.։*

[27] Feroz Ahmed, *The Young Turks*, Oxford, 1969, *էջ* 112։

[28] Paul Dumont "A Jewish, Socialist and Ottoman Organization: the Worker's Federation of Salonica" *էջ* 72-73, 183; Mete Tuncay, Erik J. Zurcher, *Socialism and Nationalism in the Ottoman Empire 1876-1923*, London, British Academic Press in association with The International Institute of Social History (Amsterdam), 1994։

[29] *Ազատամարտ*, 1912,*Սեպտ.* 30/13 *Հոկտ.։*

[30] *Ազատամարտ*, 1912, *Հոկտ.* 23/5 *Նոյ.։*

[31] *Ազատամարտ*, 1912, *Նոյ.* 6/19։

[32] *Հզգակ (Ազատամարտ)* 1913, *Յունուար* 12/25։

[33] *Ազատամարտ*, 1913, *Յունուար* 20/2 *Փետր.։*

[34] *Ազատամարտ*, 1913, *Յունուար* 23/5 *Փետր.։*

[35] *Ազատամարտ*, 1913, *Յունուար* 23/5 *Փետր.*։
[36] *Հնչակ*, 1913, *Մարտ*։
[37] *Ստեփան Սապահ-Գիւլեան, Պատասխանատուները*, *Բ. տիպ.*, *Պէյրութ*, *Կ. Տօնիկեան եւ Որդիք Հրատարակչատուն*, 1974, *էջ* 23։
[38] *Ազատամարտ*, 1912, *Սեպտ.* 29/12 *Հոկտ.*։
[39] *Ազատամարտ*, 1913, *Յուլիս* 3/16։
[40] Christopher J. Walker, *ARMENIA- The Survival of a Nation*, New York, St. Martin's Press, 1990, *էջ* 193։
[41] *Արամ Անտոնեան, Պատկերազարդ Ընդարձակ Պատմութիւն Պաչքանեան Պատերազմին*, *Կ.Պոլիս*, 1912, *էջ* 442։
[42] *Ազատամարտ*, 1913, *Յունուար* 22/4 *Փետր.*։
*Ճին Թորոս, համխտեան չրջանին, որպէս հնչակեան ֆետայի կը մասնակցի Կիլիկիոյ չրջանի ազգային-ազատագրական չարժումներուն։ Սահմանագրութենէն ետք, ան կը նչանակուի Սիսէն ոտքով 6 ժամ դէպի արեւելք գտնուող Կարսպազար թրքաբնակ գիւղաքաղաքին ոստիկանութեան անդամ։ Ատանայի աղէտին ժամանակ, իր պաչտօնին բերումով, նախապէս կ'իմանայ գալիք վտանգը եւ յաջողութեամբ կը կազմակերպէ ու կը գլխաւորէ Կարսպազարի հայութեան ինքնապաչտպանութիւնը (Կարսպազարի մէջ բնակութիւն հաստատած էին չուրջ 1000 հայեր, մեծ մասամբ Հաճընէն եւ Մարաչէն)։ Ատանայի աղէտէն յետոյ պաչտօնէն ազատ կ'արձակուի ու կը վարէ թափառական կեանք։ Իրեն կը միանան բանակային ծառայութենէն խուսափած 5-6 հայ երիտասարդներ, որոնք հրոսակախումբ կազմած կը թափառին Հաճնոյ եւ Զէյթունի լեռներուն վրայ։ 1913 Յունուարին, խումբը բանակային ստորաբաժանումի մը կողմէ կը պաչարուի Հաճնոյ այրիանոցին մէջ։ (Այրիանոցը կառուցուած էր Ատանայի աղէտէն ետք եւ աչխատանք ու կեցութիւն կ'ապահովէր աղէտին զոհ գացածներու այրի կանանց)։ Տեղի կ'ունենայ փոխհրաձգութիւն, որուն ընթացքին խումբին մեծ մասը, ներառեալ Ճին Թորոս կը նահատակուի. մնացեալը կը ձերբակալուի։ Այս միջոցին այրիանոցը կը հրկիզուի։ Կառավարութիւնը այդ հրկիզումը կը վերագրէ փախստականներուն՝ բան մը որ ամբողջապէս անտրամաբանական էր։ Կ.Պոլսոյ Պատրիարքութեան հետապնդումներուն չնորհիւ, կառավարութիւնը առանց ընդունելու իր պատասխանատուութիւնը, որպէս «նուիրատուութիւն» 1000 օսմ. ոսկիով կը մասնակցի այրիանոցի վերաչինութեան (Ց. Պ. Պօղոսեան, *Հաճընի Ընդհանուր Պատմութիւն*, *Լոս Անճելըս*, *Հրտ.՝ Հաճընի Հայրենակցական Վերաչինաց Միութեան*, *ԱՄՆ*, 1942, *էջ* 580-583. նաեւ՝ Ց. Ց. Թերգեան, *Կիլիկիոյ Ազէտը*, *Պէյրութ*, *Մատենաչար Ալգի* (*Ա. տպագրթ.* 1912, *Կ.Պոլիս*) 1964, *էջ* 213-217. նաեւ՝ *Ազատամարտ*, 1913, *Յունուար* 22/4 *Փետր.* եւ *Մայիս* 2 15)։
[43] *Ազատամարտ*, 1913, *Յունուար* 23/5 *Փետր.*։
[44] *Ազատամարտ*, 1913, *Փետր.* 2/15։
[45] *Ազատամարտ*, 1913, *Յունուար* 29/11 *Փետր.*։
[46] *Ազատամարտ*, 1913, *Փետր.* 4/17։
[47] *Ազատամարտ*, 1913, *Փետր.* 13/26։
[48] *Ազատամարտ*, 1913, *Փետր.* 14/27։
[49] *Ազատամարտ*, 1913, *Յուլիս* 14/27։
[50] Ahmed, *էջ* 152։
[51] *Անտրէ Մանտելչթամ, Երիտասարդ Թուրքերը Պատերազմէն Առաջ*, *Կ.Պոլիս*, *Ազգային-Քաղաքական Մատենաչար Թիւ* 6, 1919, *էջ* 93-94։
[52] *Գէորգ Ղարիբջանեան, Ակնարկներ Հայ-Բուլղարական Բարեկամութեան Պատմութեան*, *Երեւան*, «*Հայաստան*» *Հրատարակչութիւն*,1989, *էջ* 114։
[53] Dikran Kaligian, "The Armenian Revolutionary Federation Under Ottoman Rule, 1908-1914" (dissertation for the degree of doctor of philosophy), Boston College, 2003, *էջ* 235։

[54] *Առաջամարտ (Ազատամարտ)* 1912, Նոյ. 21/4 Դեկտ.։

[55] *Հայկական կամաւորական ջոկատի գործունէութեան մասին տե՛ս՝ Հայ ժողովրդի Պատմութիւն*, հտր. 6, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Պատմութեան Ինստիտուտ, 1981, էջ 670-673. Նաեւ՝ Մ. Պ. Ազայեան, *Հայ ժողովրդի Ազատագրական Պայքարի Պատմութիւնից*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1976, էջ 297-323. Նաեւ՝ Հ. Սիմոնեան, *Անդրանիկի Ժամանակը*, հտր. 2, Երեւան, «ԿԱԻՄԱ», 1996, էջ 342-365. Նաեւ՝ Ա. Ջելեպեան, *Ջօր. Անդրանիկ եւ Հայ Յեղափոխական Շարժումը*, Պէյրութ, Կ. Տօնիկեան եւ Որդիք Հրատարակչատուն, 1986, էջ 263-269. Նաեւ՝ Ղարիբջանեան, *Ակնարկներ* էջ 105-125. Նաեւ՝ Կ. Գէորգեան, «Վերյիշումներ Պալքանեան Պատերազմի Յիսնամեակին Առթիւ», *Ամէնուն Տարեգիրքը*, Պէյրութ, 1962, Թ. տարի։

[56] *Ազատամարտ*, 1912, Սեպտ. 15/28։

[57] *Ազատամարտ*, 1912, Սեպտ. 19/1 Հոկտ.։

[58] *Հնչակ*, 1913 Մարտ։

[59] *Ազատամարտ*, 1913, Մարտ 2/15։

[60] *Ազատամարտ*, 1913, Ապրիլ 30/13 Մայիս։

[61] *Ազատամարտ*, 1913, Մայիս 1/14։

[62] Նոյն։

[63] Նոյն։

[64] *Ազատամարտ*, 1913, Մայիս 2/15 եւ Մայիս 3/16։,

[65] *Ազատամարտ*, 1913, Մայիս 9/22։

[66] *Ազատամարտ*, 1913, Մայիս 22/4 Յունիս։

[67] *Ազատամարտ*, 1913, Մայիս 24/6 Յունիս։

[68] *Ազատամարտ*, 1913, Մայիս 2/15։

[69] *Շանթ (Ազատամարտ)* 1913, Յուլիս 16/29։

[70] Նոյն։

[71] *Շանթ (Ազատամարտ)* 1913 Օգոստ. 27/9 Սեպտ.։

[72] *Ազատամարտ*, 1913, Նոյ. 26/9 Դեկտ.։

[73] *Ազատամարտ*, 1913, Նոյ. 29/12 Դեկտ.։

[74] *Ազատամարտ*, 1913, Յունիս 19/2 Յուլիս։

[75] *Նոր Աչխարհ*, 1912, Սեպտ. 9/22։

[76] *Ազատամարտ*, 1912, Սեպտ. 16/29։

[77] *Նոր Աչխարհ*, 1912, Սեպտ. 14/27։

[78] *Նոր Աչխարհ*, 1912, Սեպտ. 15/28։

[79] *Ազատամարտ*, 1912, Սեպտ. 19/1 Հոկտ.։

[80] *Ազատամարտ*, 1911, Սեպտ. 20/2 Հոկտ.։

[81] *Ազատ Համբարեան, Երիտթուրքերի Ազգային եւ Հողային Քաղաքականութիւնը եւ Ազատագրական Շարժումները Արեւմտեան Հայաստանում (1908-1914)*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Պատմութեան Ինստիտուտ, 1979, էջ 175։

[82] *Ազատամարտ*, 1913, Օգոստ. 28/10 Սեպտ.։

[83] *Խոսրով Թիւթիւնճեան, Անմահներու Հետ Վասպուրական Մեր Աչխարհին Մէջ*, Պէյրութ, Տպ. Սեւան, 1974, էջ 134-145, նաեւ՝ *Հնչակ*, 1914 Մայիս։

[84] *Շանթ (Ազատամարտ)* 1913, Սեպտ. 4/17։

[85] *Մեղու (Ազատամարտ)* 1913, Յուլիս 14/27։

[86] *Շանթ (Ազատամարտ)* 1913, Յուլիս 20/5 Օգոստ.։

[87] Անդրադառնալով այս ժամանակաշրջանին, ՀՅԴի յայտնի պատմագիրներէն Հրաչ Տասնապետեան կը գրէ. "In short, the Dashnaktsutiun thus associated itself with the concept of "ottomanism" (*Dasnabedian H., History of the Armenian Revolutionary Federation Dashnaktsutiun (1890-1924)*, 1989, Milan, էջ 87)։ 1910ին, Ժընեւի մէջ, ՀՅԴի հրատարակութեամբ լոյս կը տեսնէ Դաչնակցութեան յայտնի գաղափարախօսներէն

Միքայէլ Վարանդեանի վերածնուող Հայրենիքը եւ Մեր Դերը գիրքը, ուր «Հայրենիք» Հասկացութեան տակ ամբողջապէս կ՚ըմբռնուէր Օսմանեան Կայսրութիւնը։

[88] Բիւզանթիա (Ազատամարտ) 1912, Նոյ. 10/23։

[89] Ազատամարտ, 1912, Սեպտ. 29/12 Հոկտ.։

[90] Նոյն։

[91] Ազատամարտ, 1912, Սեպտ. 30/13 Հոկտ.։

[92] Ազատամարտ, 1912, Հոկտ. 1/14։

[93] Սապահ-Գիւլեան, Պատասխանատուները, էջ 152-159։

[94] Առաջամարտ (Ազատամարտ) 1912, Դեկտ. 4/17։

[95] Նոյն։

[96] Ազատամարտ, 1913, Փետր. 24/9 Մարտ։

[97] Հնչակ, 1913, Յունուար։

[98] Ազատամարտ, 1913, Սեպտ. 10/23։

[99] Առաջամարտ, 1913, Յուլիս 2/15։

[100] Առաջամարտ (Ազատամարտ) 1912, Դեկտ. 5/18։

[101] Ազատամարտ, 1913, Նոյ. 13/26։

[102] Առաջամարտ (Ազատամարտ) 1912, Դեկտ. 5/18։

[103] Առաջամարտ (Ազատամարտ) 1912, Դեկտ. 6/19։

[104] Ազատամարտ, 1913, Յունուար 3/16։

[105] Շանթ (Ազատամարտ) 1913, Սեպտ. 5/18։

[106] Ազատամարտ, 1913, Մայիս 28/10 Յունիս։ Այստեղ խօսքը կը վերաբերի 1877-1878ի ռուս-թրքական պատերազմին։

[107] Ազատամարտ, 1913, Մայիս 30/12 Յունիս։

[108] Ազատամարտ, 1913, Յունիս 2/15։

[109] Նոյն։

[110] Ազատամարտ, 1913, Ապրիլ 7/20, Մայիս 18/31, Մայիս 21/3 Յունիս, Յունիս 14/27։

[111] Ազատամարտ, 1913, Օգոստ. 25/7 Սեպտ.։

[112] Արսէն Կիտուր, Պատմութիւն ՄԲ Հնչակեան Կուսակցութեան, Ա. հտր., Պէյրութ, Շիրակ Հրատարակչատուն, 1962, էջ 352-358։

[113] Հնչակ, 1913 Փետր., 1913 Մարտ, 1913 Ապրիլ-Մայիս, 1914 Մայիս։

[114] Ազատամարտ, 1913, Մայիս 9/22։

[115] Ազատամարտ, 1913, Նոյ. 6/19։

[116] Ջոն Կիրակոսեան, Երիտթուրքերը Պատմութեան Դատաստանին Առաջ, Ա. հտր., Երեւան, «Հայաստան» Հրատարակչութիւն,1982, էջ 286։

[117] Ahmed, էջ 154։

[118] Tekin Alp, *The Turkish and Pan-Turkish Ideal*, Liberty Press, London, էջ 19։

[119] Զարեւանդ, Միացեալ Անկախ Թուրանիա, Աթէնք, «Յեղափոխական Գրադարան» թիւ 2, 1988, էջ 96։

THE ARMENIANS OF THE OTTOMAN EMPIRE AND THE TRIPOLITANIAN AND BALKAN WARS
(Summary)

YEGHIG DJEREDJIAN

Right before the outbreak of WWI the Ottoman Empire fought two wars, the Tripolitanian War in 1911 and the Balkan War in 1912-13. These wars caused the Empire the loss of large territories.

For the first time Armenian citizens of the Ottoman Empire participated in these wars as they were conscripted into the Ottoman army. Indeed, prior to the Constitution of 1908 Christians were not entitled to join the Ottoman army.

The Ottoman Armenians reacted to these two wars; they had specific views regarding their causes and related issues.

The author analyzes these views and stances by highlighting the declarations of the Armenian Patriarchate of Constantinople, the Armenian Revolutionary Federation and the Social Democrat Hunchagian Party. These had a dominant presence in Western Armenian public life.

The Balkan Wars reaffirmed the necessity of implementing reforms in the Ottoman Empire under international supervision. Reforms had been the demand of the Western Armenians from the time of the Berlin Conference of 1878.

During these two wars the Western Armenians generally, faithfully served in the Ottoman army and contributed to efforts and acts that aimed at enhancing the army's morale and strengthening it. However, during the Balkan War Armenian views were not uniform. Some Armenian volunteers fought in the Bulgarian army as a separate squad.

The author notes that both these wars impacted on Turkish political mentality, which underwent a significant change, replacing Ottomanism with Turkish nationalism.

THE INDUSTRIES IN ARMENIAN MUSA DAGH DURING THE 1920s-1930s

VAHRAM L. SHEMMASSIAN
Shemmassian@yahoo.com

In 1919 the Armenians of Musa Dagh in 1919 returned from the exile imposed by the World War I genocide. On arrival in their villages, namely, Bitias, Haji Habibli, Yoghunoluk, Kheder beg, Vakef, and Kabusiye, they found their homes, institutions, orchards, and fields in ruins, disrepair and/or neglect. They likewise faced existential threats of hunger, diseases, internecine bloodshed, and regional anarchy and insecurity. After oscillating between life and death for a while, they succeeded in reconstituting their shattered lives in relative peace under the French mandate. In the economic domain, they worked in agriculture and animal husbandry, hosted estivators and tourists, manufactured certain goods, and engaged in commerce. But while the future inspired some hope, global financial woes, shifting consumer demands, and changes in the regional political landscape kept the Armenian peasantry guessing and uneasy and rendered their economic progress untenable in the long run. This study sheds light on the three main industries of Musa Dagh that hinged on local resources and efforts as well as outside determinants. Comb and spoon making, other crafts, and agriculture merit separate treatment.

WOOD AND CHARCOAL PRODUCTION

Ընտանիքում արհեստավարժ երաժիշտներ չկային, սակայն սէրը երաժշտութեան, գեղանկարչութեան, բանաստեղծութեան հանդէպ մշտապէս ուղեկցել է Յովհաննիսեանին դեռ վաղ մանկութիւնից։ «Որքան ինձ յիշում եմ, երաժշտութիւն շատ էի լսում. ռադիոյով, համերգներում, միշտ լսում ու պատկերացնում էի գործիքները», հարցազրոյցներից մէկում ասել է երաժիշտը[1]։ Նոյն հարցազրոյցում, հաղորդավարի այն հարցին, թէ ինչով կը զբաղուէր, եթէ հնարաւորութիւն տրուէր կեանքի ուղին նորից սկսել, կոմպոզիտորը պատասխանում է. «Նախ կը զբաղուէի նկարչութեամբ. անպայման։ Փորր հասակում ես այդ ընդունակութիւնները ունեցել եմ, եւ դրսեւորելու տեղ, ինձ թւում է, կար...»։ Կերպարուեստի, գրականութեան, պարարուեստի, կինօարուեստի հանդէպ ունեցած մեծ սէրը յետագայում վճռորոշ դեր կատարեց Յովհաննիսեանի մեծակտաւ երաժշտաթատերական բեմականացումներում, վոկալ-սիմֆոնիկ եւ կամերային ստեղծագործութիւնների դրական հիմքերի բծախնդիր ընտրութեան եւ ամբողջ ստեղծագործական ժառանգութեան նրբաճաշակ գեղագիտական բովանդակութեան մէջ։

Դեռեւս մանկութեան տարիներին նրան վիճակուել էր շփուել յայտնի մտաւորականների ու արուեստագէտների հետ, որոնք Յովհաննիսեանների ընտանիքի մտերիմներն էին։ Նրանց մէջ էին երգչուհի Սեդա Քայանթարեանը, երգիչ, խմբավար, ազգագրագէտ Ստեփան Դեմուրեանը, Ովսաննա (Նոյնինքն Սոֆիա) Դեմուրեանը (Ս. Դեմուրեանի կինը), բանաստեղծ, թարգմանիչ Նուարդ Տէրեանը (Վահան Տէրեանի դուստրը)։ Յետագայում իր մտերիմ ընկերները դարձան ժամանակի նշանաւոր մտաւորականներ ու արուեստագէտներ՝ Մինաս Աւետիսեանը, Պարոյր Սեւակը, Սերգէյ Փարաջանովը, Գէորգ Էմինը, Ջիմ Թորոսեանը, Վիլեն Գալստեանը, Յակոբ Ոսկանեանը... նկարիչ, բանաստեղծ, ռեժիսոր, ճարտարապետ, բալէտմայստէր, դիրիժոր։ Նրանց հետ շփումները, մտերմիկ ու գործնական զրոյցներն էին գրաւում Էդգար Յովհաննիսեանին, որն այդ շփումներում գերադասում էր լինել լսողի, քան պատմողի դերում։ Անհատականութիւնների նման հարուստ ու բազմազան ընտրութիւնը խօսուն վկայութիւնն է արուեստագէտի լայն մտահորիզոնի ու գեղագիտական ճաշակի, որը փոխադարձաբար լրացւում ու յագեցւում է իր իսկ անհատականութեան անվիճելի գրաւչութեամբ ու համլքով։

Անվիճելի է արուեստագէտի կայացման գործում ուսուցիչների, աւելի ճիշտ՝ ուսուցչապետերի դերը։ Էդգար Յովհաննիսեանն այս իմաստով բացառիկ երջանիկներից է, որին վիճակուել է ոչ միայն մասնագիտութեան բերումով մեծագոյն երաժիշտների, այլեւ ժամանակի հանրայայտ անհատ-արուեստագէտների սանը լինել, վայելել նրանց հետ անմիջական շփումների բերկրանքը։ Գրիգոր Եղիազարեան, Արամ Խա-

չատրեան, Դմիտրի Շոստակովիչ. Նրանցից իւրաքանչիւրն իր անջնջելի հետքն է թողել երիտասարդ ստեղծագործողի վրայ, նրա անհատականութեան ձեւաւորման կարեւորագոյն ժամանակահատուածներում: Նրանցից իւրաքանչիւրի հանդէպ իր խորին ակնածանքի ու երախտագիտութեան զգացումն ուղեկցում էր կոմպոզիտորին նոյնիսկ այն ժամանակ, երբ ինքն էլ բազմիցս վայելել էր փառքի ու ճանաչման բերկրանքը:

Այսուհանդերձ, կոմպոզիտորի գեղագիտական սկզբունքների մասին լիարժէք պատկերացում կարող է տալ միայն ստեղծագործութիւնը: Էդգար Յովհաննիսեանի հարուստ ստեղծագործական ժառանգութեան մէջ տեղ են գտել երաժշտական գրեթէ բոլոր ժանրերը՝ օպերա, բալէտ, օրատորիա, կանտատ, սիմֆոնիա, կոնցերտ, կուինտէտ, կուարտէտ, սոնատ, խմբերգ, ռոմանս, երգ, երաժշտութիւն թատրոնի եւ կինոյի համար: Հարուստ եւ բովանդակալից է եղել նաեւ արուեստագէտի հասարակական գործունէութիւնը, որն ընդգրկել է ամենալայն ասպարէզ՝ մանկավարժական, դասախօսական, համերգային-կազմակերպչական (Օպերային թատրոն, Հայհամերգ, Երգի-Պարի Պետական Անսամբլ, Հեռուստառադիո, Կամերային Երգչախումբ, Երաժշտանոց), հասարակական-քաղաքական պատասխանատու պաշտօններ՝ ՀԽՍՀ, ԽՍՀՄ եւ ՀՀ Գերագոյն Խորհուրդների պատգամաւոր, Հայաստանի Մանկական Հիմնադրամի նախագահ եւն.: Վերջապէս, Էդգար Յովհաննիսեան մտաւորական-քաղաքացու-արուեստագէտի գործունէութեան մշտական ուղեկիցը եղել է հրապարակախօսութիւնը: Հրաչալի տիրապետելով գրչին՝ նա կարողանում էր լսելի դարձնել արուեստի, կեանքի, արուեստագէտի իր իդեալների հանդէպ ունեցած գուսպ, բայց եւ չափազանց դիպուկ ու յստակ ձեւակերպումները: Թերթերում եւ ամսագրերում տարբեր տարիներին հրապարակուած նրա յօդուածները, որոնք նուիրուած են երաժշտական կատարողական ու ստեղծագործական արուեստին վերաբերող հրատապ խնդիրներին, իրենց գեղագիտական ընդհանրացումների եւ հարցադրումների խորութեամբ ձեռք են բերում ազգային մշակոյթի, գեղագիտական մտածողութեան արժեւորման կարեւորութիւն:

* * *

Էդգար Յովհաննիսեանի մուտքը ստեղծագործական ասպարէզ համընկաւ Խորհրդային Միութեան 1950ականների «հալոցքի» վճռորոշ ժամանակաշրջանին եւ անմիջապէս գրաւեց մասնագէտներին՝ ընդունուած դրոշմները յաղթահարելու անսքող նպատակամիտուածութեամբ: Դա մի ժամանակաշրջան էր, երբ խորհրդահայ երիտասարդ արուեստագէտները հնարաւորութիւն ստացան իրենց հայեացքն ուղղել Արեւմուտք՝ անյագ հետաքրքրասիրութեամբ իւրացնելով երաժշտա-

լեզուական, յօրինուածքային ու տեխնոլոգիական նորարարական հնարքները։ Դրա հետ մէկտեղ, 50ականների չարժումը նշանաւորուեց ազգային նորովի վերաիմաստաւորելու եւ մեկնաբանելու փորձերով։ Հենց այս ասպարէզում կարեւորուեց Էդգար Յովհաննիսեանի գործունէութիւնը՝ շարունակելով հայ արհեստավարժ երաժշտութեան զարգացման կոմիտասեան աւանդոյթը եւ այն հարստացնելով իր մեծ ուսուցչապետերի հարուստ երանգապնակով։

Արդէն առաջին լուրջ ստեղծագործութիւններում մասնագէտները պարգորոշ դիտարկում են Յովհաննիսեանի գեղագիտական մտածողութեան, ուրոյն ստեղծագործական ձեռագրի եւ գաղափարական ուղղուածութեան անկիւնաքարային միտումները, որոնք պահպանւում, բիւրեղանում են նրա յետագայ ստեղծագործական ուղու ընթացքում։ Գէորգ Էմինի տեքստի հիման վրայ գրուած «Երկու Ափ» a capella կանտատի (1951) վերաբերեալ երաժշտագէտ Նելլի Շահնազարովան նշում է Յովհաննիսեանի ստեղծագործութեան բնորոշ գծերը. «հետաքրքրութիւնը ժողովրդի պատմութեան եւ կենցաղի հանդէպ, ակնյայտ ձգտումը էպիկականութեան, լուրջ միտքը, անդրադարձը ֆոլկլորի քիչ կիրառելի շերտերին»[2]։

Երիտասարդ երաժշտին յիրաւի համաչխարհային ճանաչում բերած ստեղծագործութեան մէջ՝ «Դաշնամուրային կուինտէտ»ում (1955) երաժշտագէտ Լիանա Գեննինան դիտարկել է հեղինակի նախասիրած կերպարային ոլորտը՝ «...անկեղծութիւնը, զսպուածութիւնը, էքստազից զուրկ քնարականութիւնը, արիութեամբ ներթափանցուած ողբը»[3]։ Այսինքն, ընդգծւում եւ բացայայտւում են կոմպոզիտորի գեղարուեստական մտածողութեան արտայայտուած ազգային էութիւնը եւ իւրօրինակ կերպարայնութիւնը, որոնք յետագայում խորանալով ու գարգանալով դառնալու են առանցքային՝ նրա ստեղծագործութեան գեղագիտական հայեցակարգում։

Այսպիսով, անդրադարձը ազգային մշակոյթին ու պատմութեանը, էպիկականութիւնը եւ գուսպ զգացմունքային արտայայտչաեղանակը Յովհաննիսեանի վաղ ստեղծագործութիւններում նախանշուած կարեւորագոյն բնորոշ յատկանիշներն են, որոնք էլ հիմք են հանդիսանում նրա հասուն ստեղծագործութիւնների գեղագիտական ուղղուածութեան համար։

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՐՈՆՈՒՄՆԵՐ

Յովհաննիսեանի բազմաստեղ ստեղծագործութիւններում ծանրակշիռ տեղ են գրաւում երաժշտաթատերական երկերը՝ յատկապէս բալէտները։ Նրա առաջին բալէտը՝ «Մարմար»ը (1957), երաժշտագէտ Գայիանէ Ջերոտարեանի բնորոշմամբ, նշանաւորեց հայկական նոր բալէտի ծնունդը։ Իրաւամբ, կոմպոզիտորը բալէտում կիրառեց կարեւորա-

գոյն գեղագիտական եւ թատերագրական նորամուծութիւններ, որոնք նոր, աննախադէպ բարձունքի հասցրին հայկական բալէտային արուեստը։ Ամենայն լրջութեամբ մօտենալով իր առջեւ ծառացած ստեղծագործական խնդիրներին, կոմպոզիտորն առանձնայատուկ ուշադրութիւն է դարձնում լիբրետոյի խնդրին։ Գիտակցելով, որ իր գործընկերներից շատերի ստեղծագործութիւններում նկատուած թերացումները մեծ մասամբ վերաբերում են գրական հիմքի անբաւարար գեղարուեստական մակարդակին՝ հարցազրոյցներից մէկում Յովհաննիսեանը նշել է. «Մարմար» բալէտի վրայ աշխատելիս ես համոզուեցի, որ լաւ օպերային կամ բալէտային լիբրետո չունենալու մէջ չի կարելի մեղադրել միայն գրողներին։ Լիբրետոն առանձնայատուկ ժանր է, եւ նրա ստեղծման մէջ մեծ դեր պիտի խաղայ ինքը՝ կոմպոզիտորը, որին գրողից աւելի լաւ են յայտնի երաժշտական դրամատուրգիայի պահանջները...»[4]։ Այսպիսով, Յովհաննիսեանն արտայայտում է իր կարեւորագոյն նորամուծութիւնը՝ բալէտային ժանրի բովանդակութեան, թատերագրական յագեցուածութեան վերաբերեալ, համաձայն որի բալէտը դիտարկւում է ոչ թէ որպէս առանձին պատկերներից եւ հնարքներից արհեստականօրէն միակցուած խորեոգրաֆիկ սուիտ, այլ «Յովհաննիսեանը բալէտի երաժշտութեան մէջ կենտրոնական դեր է յատկացնում դրամատուրգիական կոնցեպցիայի զարգացմանը՝ դրանով ընտրելով դժուարին, բայց ճիշտ ուղին»[5], նշել է Ջերոտարեանը։

Երաժշտագէտ-հրապարակագիր, Sovetskaya Muzika ամսագրի գլխաւոր խմբագիր Նիկոլայ Պէյկոն բնորոշել է «Մարմար»ը որպէս «քնարա-ֆանտաստիկական, երաժշտա-խորեոգրաֆիկ պոէմ»[6], որի մէջ նախանշւում էին թատերական սիմֆոնիզմի, սիմֆոնիկ կտաւի թատերագրութեան բնորոշ գծերը։

Այսպիսով, արդէն «Մարմար»ում կոմպոզիտորը նախանշում է խորեոգրաֆիկ երկերի թատերագրութեանը վերաբերող իր անկիւնաքարային գեղագիտական հիմնադրոյթը. լիարժէք թատերագրական ու գրական-գեղարուեստական հիմք հանդիսացող լիբրետոյից բխող երաժշտաթատերական արարի ստեղծում, որը յետագայում առաւել կատարեալ եւ բիւրեղացած մարմնաւորում ստացաւ միւս՝ «Յաւերժական կուռք» եւ «Անտունի» բալէտներում։

Եթէ «Մարմար»ի մտայղացման կարեւորագոյն առանձնայատկութիւնը համարուեց սիմֆոնիկ թատերագրութեան առկայութիւնը, ապա «Առաջին Սիմֆոնիա»յում ստեղծւում է միանգամայն նոր թատերագրական կառոյց, որն իր անսովոր թարմութեամբ եւ համարձակ յօրինուածքային լուծումներով գրաւում է մասնագէտների ուշադրութիւնը։ Արամ Խաչատրեանն առանձնացրել է Յովհաննիսեանի «Առաջին Սիմֆոնիա»ն հայ կոմպոզիտորների այս ժանրի ստեղծագործութիւններից՝ րնութագրելով այն որպէս կոնցեպցիոն (կանխադրոյթա-

յին) ստեղծագործութիւն: «Այստեղ կայ խորը մտայղացում եւ ձեւի իւրայատուկ կառուցուածք, կայ ոճի մոնումենտալութիւն,- *նչում է մեծ դասականը եւ եզրակացնում*,- Սիմֆոնիան ինքնատիպ է ու բարմ»[7]: Երաժշտագէտ, տեսաբան Եուրի Կորեւն ընդգծում է «Առաջին Սիմֆոնիա»յում պարզորոշ կերպով արտայայտուած ինտելեկտուալ սիմֆոնիզմի գիծը, որը «հարազատ է դարձնում Յովհաննիսեանի սիմֆոնիզմը Շոստակովիչի եւ Միասկովսկու սիմֆոնիզմին»[8]: *Երաժշտաքննադատների ուշադրութիւնը գրաւել էր Սիմֆոնիայի անսովոր կառուցուածքը: Աւանդական չորս մասերը երաժշտական մտքի զարգացման տրամաբանութեամբ ստեղծում են երկու անհաւասար բաժին, որի առաջին մեծ բաժինը նախաբանն ու առաջին մասն են, իսկ երկրորդը ներառում է միմեանց առանց ընդմիջման յաջորդող Սկերցօն, Անդանտէն եւ Ֆինալը: «Առաջին Սիմֆոնիա»յի կարեւոր առանձնայատկութիւնը նրա մէջ օգտագործուած միջնադարեան տագի մեղեդին է («Հաւիկ»): Կոմպոզիտոր Գէորգ Արմէնեանը այս հնարքը դիտարկել է որպէս* «Սիմֆոնիայում ազգային աւանդոյթի կիրառում ու զարգացում սիմֆոնիզմի բնագաւառում»[9]: *Թէեւ «Առաջին Սիմֆոնիա»ն չունէր փաստացի ծրագրայնութիւն, բայց նրա գաղափարական կենտրոնն այնքան վառ, այնքան տեսանելի է արտայայտուած, որ երաժշտագէտ Նիկողոս Թահմիզեանը ճարտարապետական կառոյց յիշեցնող այս մեծակերտ կտաւը բնորոշում է որպէս* «նորովի մեկնաբանուած ու մինչեւ մեր օրերը հասցուած մի հայապատում»[10]:

Անդրադարձը՝ հայ երաժշտութեան հինաւուրց չերտերին, հետեւողականօրէն նկատւում է Յովհաննիսեանի ողջ ստեղծագործական կեանքի ընթացքում, ամենատարբեր ժանրերում ու ձեւերում: Կամերային ստեղծագործութիւնների թւում այս սկզբունքի իւրօրինակ վերաիմաստաւորմանն ենք հանդիպում նաեւ «Երրորդ Լարային Կուարտէտ»ում: Ուշագրաւ է, որ հնագոյնի վերաիմաստաւորման ձգտումը առանձնայատուկ գնահատել են ոչ միայն հայ, այլեւ օտարազգի արուեստագէտները: Այսպէս, օրինակ, կոմպոզիտոր Սուլխան Նասիձէն (Վրաստան), Յովհաննիսեանի նչուած կուարտէտը համարելով ժանրի զարգացման նոր, բարձր մակարդակ, նչել է. «Յրդ Կուարտէտը, լինելով տիպիկ «յովհաննիսեանական», ուղղուած է ժողովրդական աւանդոյթի բոլորովին այլ շերտերին (հնագոյն երաժշտութեանը): Անդրադարձը հնութեանը Յովհաննիսեանի ստեղծագործութեան մէջ ներմուծեց խորութիւն, զսպուածութիւն, սակայն ընդլայնեց ոճը, առաւել ընդգծեց նրա ազգային սերուածութիւնը»[11]:

Այսպիսով, «Առաջին Սիմֆոնիա»յում (1959) *եւ նրանից մօտ երկու տասնամեակ աւելի ուշ ստեղծուած «Երկրորդ Սիմֆոնիա»յում* (1982) *եւ «Երրորդ սիմֆոնիա»յում* (1983), *ինչպէս նաեւ կամերա-գործիքային ստեղծագործութիւններում հեղինակը դրսեւորեց իր գեղագիտական*

կարեւորագոյն հիմնադրոյթը. մի կողմից աւանդական դասական ժանրերի եւ ձեւերի հանդէպ մշտարթուն հետաքրքրութիւնը, միւս կողմից՝ իւրաքանչիւր առանձին դէպքում այդ աւանդականի ինքնատիպ մարմնաւորում՝ կիրառելով ազգային փիլիսոփայական վերաիմաստաւորման արդիական գեղաձեւումները։

Ի՞նչ է, սակայն, ազգային վերաիմաստաւորման եւ կերպաւորման յովհաննիսեանական սկզբունքը։ Եթէ համեմատելու լինենք հայկական ստեղծագործական դպրոցի յետխաչատրեանական սերնդի՝ «Հայկական հնգեակի»[12] այս չրջանի ստեղծագործութիւններում գերիշխող վառ արտայայտուած յաւատեսութեամբ դրոշմուած ու կենսախինդ կերպարային ոլորտը Յովհաննիսեանի գեղարուեստական պատկերների հետ, ապա տեղին է մէջբերել անուանի երաժշտագէտ Լեւ Ռաաբէնի համեմատութիւնը. «Ունկնդրելով Կուարտէտի երաժշտութիւնը,- գրում է նա,- մտաբերում ես ոչ թէ ուրախ ու տօնական Արարատեան դաշտավայրը, այլ դաժան լեռները, Գեղարդի ժայռափոր վանքերի վեհ ու խստաբարոյ Հայաստանը»[13]։ Այստեղ էլ նկատւում է արուեստագէտի ներքին դիմադրութիւնը խորհրդային չրջանի արուեստում արտաքուստ լուսաւոր ու երջանիկ կեանքի գաղափարախօսական պարտադրանքին։

1960ականները Յովհաննիսեանի համար եղան ժանրային բազմազանութեամբ հարուստ ու բեղուն ստեղծագործական նորամուծութիւնների չրջան։ Այս տարիներին ստեղծուեցին իրենց տեսակի մէջ եզակի «Կոնցերտային Վարիացիաներ՝ Սաքսոֆոնի եւ Ջազային Նուագախմբի Համար»ը (1961-1962), «Կոնցերտ Լարայինների Համար»ը (1968), «Մոնատ Մենանուագ Թաւջութակի Համար»ը (1968), ինչպէս նաեւ հանրայայտ խմբերգերը, որոնց չնորհիւ կոմպոզիտորն արժանացաւ յիրաւի համաժողովրդական ճանաչման ու սիրոյ։

Թէեւ «Կոնցերտային Վարիացիաներ»ը Յովհաննիսեանի ստեղծագործական ժառանգութեան համատեքստում առանձնայատուկ տեղ են գրաւեցնում իրենց անսովոր մտայղացմամբ ու այսպէս կոչուած «թեթեւ» երաժշտութեանը դիմելու եզակի փորձերից են, սակայն անգամ այստեղ կոմպոզիտորը հաւատարիմ է մնում արուեստի հանդէպ լուրջ ու խստապահանջ երաժշտի բարձրաճաշակ դիրքորոշմանը։ Ինչպէս նկատել է երաժշտագէտ Մարինա Բերկօն, ջազային չի դիտւում որպէս գուարճացնող, թեթեւ երաժշտութիւն, այլ միաձուլւում է Յովհաննիսեանին բնորոշ սիմֆոնիկ մտորումներին։ «Ջազն ու սիմֆոնիան,- գրում է նա,- այստեղ մերթ մենամարտում են, մերթ՝ խաղաղ գոյակցում»[14]։ Ի դէպ, Ի. դարի երկրորդ կէսի տարածուած գեղագիտական հնարքներից է ոճերի սինթէզը, որը յատկապէս վառ է արտայայտւել Ալֆրէդ Շնիտկէի արուեստում, մասնաւորապէս նրա կոն-

ցերտներում («Կոնչերտո Գրոսսո N2»՝ ջութակի, թաւջութակի, մեծ սիմֆոնիկ նուագախմբի եւ ջազ բենդի մասնակցութեամբ)։ Առաջին հայեացքից այս երկու, թւում է՝ բացարձակապէս տարբեր արուեստագէտների առանձին ստեղծագործութիւնների մտայղացումներում եւ նրանց գեղագիտական դիրքորոշումներում չատ ընդհանրութիւններ կարելի է նկատել։ Նչենք Շնիտկէի կոնչերտօ գրոսսօները, Ցովհաննիսեանի «Կոնցերտ Բարոկկօ»ն, «Կոնցերտ Լարայինների Համար»ը, «Երրորդ Սիմֆոնիա»ն, Շնիտկէի «Երգչախմբային Կոնցերտ»ը՝ Գրիգոր Նարեկացու Մատեան Ողբերգութեանի տեքստերով, Ցովհաննիսեանի «Գրիգոր Նարեկացի» օրատորիան, մենանուագ սոնատները եւն.։ Ի. դարավերջի նորդասականութեան, ժանրերի սինթէզի իւրօրինակ մտայղացումների, արուեստագէտների ինքնատիպ կենսափիլիսոփայութեան վառ արտայայտութիւններ լինելուց բացի, թուարկուած ստեղծագործութիւնները միաւորում են երկու հեղինակներին գեղագիտական աչխարհընկալման ընդհանրութիւններով։

ԵՐԵՒԱՆԻ ՕՊԵՐԱՅԻ ԵՒ ԲԱԼԷՏԻ ԹԱՏՐՈՆ

60ականները Ցովհաննիսեանի կեանքում նչանաւորուեցին կարեւոր իրադարձութեամբ. 1962ին նրան վստահուեց Երեւանի Օպերայի եւ Բալէտի թատրոնի տնօրէնի պաչտօնը։ Ինչպէս յետագայում բազմիցս նչել է ինքը, այդ տարիները ստեղծագործական աչխուժութեան եւ գեղարուեստական մտայղացումների առատութեամբ ամենաերջանիկ տարիներն էին արուեստագէտի կեանքում։

Թատրոնի տնօրինութիւնը ստանձնելիս Ցովհաննիսեանը յստակ պատկերացնում էր բոլոր հիմնահարցերը։ Այդ են վկայում տարբեր առիթներով հրապարակուած հարցազրոյցներն ու հրապարակախօսական յօդուածները։ Առաջին իսկ օրուանից նա առանձնացրեց առաջնային կարեւորութիւն ունեցող խնդիրները եւ գործնականում սկսեց իրականացնել Թատրոնի բարեկարգման իր ծրագիրը՝ հիմնորոչ երեք ուղղութիւններով՝ բալէտ, վարչական մաս եւ խաղացանկ։

Նախ եւ առաջ, Ցովհաննիսեանը առանձնացրեց բալէտը՝ որպէս հեռանկարային ժանր եւ կիրթ հանդիսական գրաւելու հզօր միջոց։ «Բալէտն իր ամբողջութեամբ բոլոր արուեստներից ամենաարտայայտիչն է,- հարցազրոյցներից մէկում ասել է արուեստագէտը։- Ես լուրջ նչանակութիւն եմ տալիս ստեղծագործութեան եւ ժողովրդի անմիջական կոնտակտին, իսկ բալէտը տալիս է այդ հնարաւորութիւնը»[15]։ Սակայն ժանրը պէտք էր զարգացնել ոչ միայն դասական նմուչների նոր բեմականացումներով, այլեւ ժամանակակից բալէտային ներկայացումների պրեմիերաներով ու հայկական նոր բալէտների բեմադրման պատրաստակամութեամբ։ Դրա համար անհրաժեչտ էին նոր ուժեր թէ՛

կատարողական կազմում, թէ՛ գեղարուեստական, բեմադրական մասում։

Բալէտի հանդէպ Յովհաննիսեանի առանձնայատուկ վերաբերմունքը արտայայտուել է թէ՛ սեփական ստեղծագործութիւններում, թէ՛ ժանրի գեղարուեստական հնարաւորութիւնների մասին տարբեր առիթներով հրապարակուած յօդուածներում։ Եւ այժմ, ստանձնելով Թատրոնի գեղարուեստական մասի դեկավարութիւնը, նրա առաջ բացւում էին լայն հնարաւորութիւններ իրականացնելու ամենահամարձակ ու ամենանուիրական գեղարուեստական ցանկութիւնները՝ կապուած համաշխարհային բալէտային գրականութեան ու սեփական ստեղծագործութեան բեմականացման հետ։

Վարչական աշխատանքը Յովհաննիսեանը չէր դիտում որպէս զուտ ֆինանսական ու տնտեսական խնդիրների իրագործում։ Այն անմիջականօրէն կապուած էր ստեղծագործական աշխատանքի հետ։ «Ստեղծագործական կոլեկտիւում նախ եւ առաջ ստեղծագործական յարաբերութիւնները, ստեղծագործական մթնոլորտն է կարեւոր»,[16] հարցագրոյցում նշում է արուեստագէտը՝ վերյիշելով Թատրոնի տնօրինութեան տարիները։

Օպերայում աշխատելու համար ստեղծուել էին աննախադէպ նպաստաւոր պայմաններ. երիտասարդ տնօրէնի չուրջ համախմբուեցին կարող եւ խանդավառութեամբ լի համախոհ ուժեր։ Գլխաւոր բեմադրիչն էր Հրաչեայ Ղափլանեանը, գլխաւոր դիրիժորը՝ Սուրէն Զարեքեանը, գլխաւոր պարուսոյցը Եւգենի Զանգան, նկարիչները՝ Աշոտ Միրզոյեանը եւ Մինաս Աւետիսեանը, դիրիժորները՝ Արամ Քաթանեանը, Յակոբ Տէր-Ոսկանեանը, Եուրի Դաւթեանը՝ փայլուն արուեստագէտների համաստեղութիւն, որոնց գրաւել էին Յովհաննիսեան-գեղագէտի անձնական հմայքն ու ստեղծագործական սկզբունքների ընդհանրութիւնները։

Թատրոնում Էդգար Յովհաննիսեանի գործունէութեան կարեւորագոյն արդիւնքը եղաւ խաղացանկի քաղաքականութիւնը։ Շատ բան էր պէտք փոխել, աւելացնել, թարմացնել։ Շատ չուտով թատրոնի տարեկան երկացանկում կարելի էր հաշուել աւելի քան յիսուն ներկայացում, որոնց թւում՝ հայկական, ռուսական, արեւմտաեւրոպական դասական օպերաներ եւ բալէտներ, ժամանակակից գործերի պրեմիերաներ, ԽՍՀՄ-ում առաջին անգամ բեմադրուող հանրայայտ գործեր։ Տնօրէնի խաղացանկային քաղաքականութեան երկրորդ կարեւոր ուղղութիւնը հայ ժամանակակից հեղինակների երաժշտաթատերական ստեղծագործութիւնների բեմականացումներն էին։ Մի կողմից կոմպոզիտորներին ոգեւորում էին նոր օպերաների եւ բալէտների պատուէրներով, որոնք եւ անմիջապէս բեմական մարմնաւորում էին ստանում, միւս կողմից ստեղծագործողներն իրենք էին խանդավառւում՝ տեսնե-

լով Թատրոնի ժանրային բազմազանութիւնը եւ, ի դէմս Թատրոնի կոլեկտիւի, այն կարող ուժերը, որոնք ի վիճակի էին իրականացնել ամենահամարձակ ժամանակակից մտայղացումները։

Այդ ամէնն, անշուշտ՝ երիտասարդ տնօրէնի իմաստուն խաղացանկային քաղաքականութեան, մտաւորականի հեռատեսութեան, բարձր գեղագիտական ճաշակի ու անխոնջ աշխատասիրութեան շնորհիւ։

Յովհաննիսեանի նոր բալէտը՝ «Ցաւերժական կուռքը», գործնականում դարձաւ երաժշտաթատերական ներկայացման բացառիկ օրինակ, որտեղ նա կարողացաւ իրականացնել ժանրի միասնական մտայղացման եւ ժամանակակից մեկնաբանման իր գեղագիտական պատկերացումները։ Նախորդ բալէտի՝ «Մարմար»ի թատերագրական թերացումները հաշուի առնելով՝ ինքը դարձաւ լիբրետոյի համահեղինակը (Մարկ Մնացականեանի եւ Յովհաննէս Ղուկասեանի հետ)։ Հետաքրքրութեան է արժանի այն հանգամանքը, որ բալէտի դիպաշարի առանցքային գաղափարը՝ կեանքի կանխորոշուածութեան համոզմունքն է, որին փորձում են ընդդիմանալ մարդկային զգացմունքն ու կամքը։ Ճակատագրի կանխորոշուածութեան համոզմունքը արուեստագէտի աշխարհընկալման մէջ հետեւողականօրէն շարունակուող գաղափար է։ Հետաքրքիր է, որ տասնամեակներ անց, վերջին հարցազրոյցներից մէկում, արդէն իմաստաւորելով իր կեանքի ու ստեղծագործութեան անցած ուղին, կոմպոզիտորը խոստովանում է, որ հաւատում է ճակատագրի կանխորոշուածութեանը[17]։

Հեթանոսական դիպաշարին դիմելը Ի. դարի երաժշտութեան տարածուած գեղարուեստական հնարքներից է։ Ինչպէս դիպուկ նկատում է երաժշտագէտ Գէորգ Գեղոսկեանը, այստեղ Էդգար Յովհաննիսեանը շարունակում է Ի. դարի մեծ դասականների՝ Իգոր Ստրաւինսկու «Սրբազան Գարուն»ի եւ Սերգէյ Պրոկոֆեւի «Սկիւթական Սուիտ»ից եկող աւանդոյթը։ «Բալէտում նոյնպէս չատ բան գուգորդւում է նախաստեղծ ոյժի, «բարբարոսութեան» կերպարների հետ,- գրում է նա։- Պատահական չէ, որ բալէտի պարտիտուրում այդքան մեծ տեղ է յատկացուած ռիթմական հենքին...»[18]։

Բալէտի ամէնից կարեւոր բաղադրիչը գեղարուեստական ձեւաւորումն էր, որն իրականացրեց երիտասարդ մեծատաղանդ նկարիչ, քանդակագործ Արտօ Զաքմաքչեանը։ Ընդ որում, նկարիչը ոչ միայն ստեղծեց բալէտի երաժշտութեանը համահունչ գգեստներ, բեմագարդեր ու խորհրդապաշտական պատկերներ, այլեւ յատուկ այս ներկայացման համար ձեւաւորեց ծրագրերն ու հրաւիրատոմսերը։ Ամէն մի մանրուք մտածուած ու նպատակամիտուած էր ներկայացումը լիարժէք դարձնելուն։ Երաժշտագէտ Ռաֆայէլ Մտեփանեանը իր վերլուծականում ընդգծեց բալէտի կարեւորագոյն գեղարուեստական արժանիքը՝ բադրիչների համամասնական կիրառման ստեղծագործական արդիւն-

քր. «...Կոմպոզիտորը, բեմադրողը, նկարիչն ու դիրիժորը միասնական դիրքորոշում հանդէս բերեցին. երաժշտութեան տարրերը լրացուում էին ձեւաւորումով՝ միախառնուելով ողջ ներկայացման հունի մէջ եւ յառնում հանդիսականների առաջ այն աւարտուն սինթէզի ձեւով, որից կախուած է ամբողջի ընկալումը, ամէնի լիարժէքութեան եւ միասնականութեան զգացողութիւնը»[19]:

Բալէտային ներկայացման մէկ այլ նորամուծութիւն դարձան մէկմասնանի բալէտային երեկոները, որոնց ընթացքում ներկայացւում էին մէկ կամ մի քանի հեղինակների երաժշտութեան հիման վրայ ստեղծուած առանձին խորեոգրաֆիկ պատկերներ:

«Երկնագոյն Նոկտիւրն»ը երրորդ պատկերն էր Ալեքսանդր Սպենդիարեանի «Երեք Արմաւենի», Առնօ Բաբաջանեանի «Հերոսական Բալլադ» չարքում: Ներկայացման բեմադրութիւնն իրականացրեց Եւգենի Զանգան, գեղարուեստական ձեւաւորումը՝ Մինաս Աւետիսեանը: Բալէտի պատումը ինքնին նորարարական էր ոչ միայն Յովհաննիսեանի բալէտային ստեղծագործութեան համատեքստում, այլեւ հայկական բալէտի գարգացման ընթացքում: Չնայած լիրբետոյի փոքր-ինչ ուղղագիծ, պարզունակ մեկնարանմանը՝ բալէտն արժէքաւոր էր այնքանով, որ առաջին անգամ հայկական բալէտի հերոսը մարմնաւորում էր ժամանակակից արուեստագէտի կերպարը, որը, Գեոդակեանի բնորոշմամբ, «փորձում է գտնել իր կոչումը, հասկանալ արուեստի իմաստն ու նշանակութիւնը»[20]: Այստեղից էլ խորեոգրաֆիայի նորացումը, թարմացումը, կտրուկ, կոտրտուած պլաստիկայի գերիշխումը, անսպասելի գեղարուեստական հնարքների՝ ակրոբատային տարրերի ներմուծումը եւն., որոնք գեղագիտական առումով լիովին արդարացւում էին բովանդակութեան արդիականութեամբ:

Գեղարուեստական խնդիրների բեմական մարմնաւորման նոր խօսք դարձաւ «Անտունի» կոթողային բալէտի մտայղացումը: Բալէտի ստեղծման չարժառիթ դարձաւ Կոմիտասի ծննդեան հարիւրամեակը: Լիրբետոյի հիմքում Էդգար Յովհաննիսեանը միաւորեց հայ պոեզիայի մեծագոյն ներկայացուցիչների նուիրումները մեծն Կոմիտասին՝ Եղիշէ Չարենցի «Ռեքուիեմ»ը եւ Պարոյր Սեւակի Անդռնէյի Զանգակատունը: Կոմպոզիտորի կողմից Չարենցի ու Սեւակի ստեղծագործութիւններին դիմելու փորձը, այն էլ բալէտային ժանրում, յիրաւի գեղարուեստական խիզախում էր. Յովհաննիսեանը կարողացաւ վերացնել հոգերանօրէն կարծրացած անջրպետը, թէ իբր Սեւակի եւ կամ Չարենցի չափածոն անյարմար է երաժշտական մարմնաւորման համար: Բալէտի ստեղծման առթիւ հրապարակուած յօդուածներից մէկում Յովհաննիսեանը արտայայտել է իր պատկառանքը Սեւակի գրականութեան հանդէպ: «Պարոյր Սեւակը հայ երաժշտութեան մէջ մուտք գործեց նախ եւ առաջ իր «Անդռեյի Զանգակատուն»ով: «Զանգակատուն» ամէն մի

էջը զգացնել է տալիս, թէ որքա՜ն խորն էր հասկանում Սեւակը Կոմիտասին, որքա՜ն լայն էին Սեւակի գիտելիքները մեր երաժշտութեան եւ ֆոլկլորի ասպարէզում»[21]: *Սեւակի չափածոյում Յովհաննիսեանը տեսնում էր ապագայում ստեղծուելիք կոթողային երաժշտական ստեղծագործութիւնների գրական հիմքի անսպառ աղբիւր*· «Կոմպոզիտորները դեռ երկար տարիներ հպուելու են Սեւակի ազնիւ բանաստեղծութեանը, օգտուելու են նրա ստեղծած գեղարուեստական կերպարներից, հետեւելու են Սեւակի գործերի հզօր ներքին սիմֆոնիզմին,- *գրում էր նա*:- Ես երջանիկ եմ, որ դրա անդրանիկ փորձը հանդիսացաւ իմ «Անտունի» բալէտը»[22]:

Մտայղացման կոթողայնութեամբ, թատերագրութեան աննախադէպ վառ արտայայտուած սիմֆոնիզմի չնորհիւ «Անտունի»ն արժանացաւ մասնագէտների եւ երաժշտասէրների ամենաջերմ գնահատանքին: Այն ոչ միայն տուրք էր Կոմիտասին, նրա անձնուէր գործին ու կերպարին, այլեւ դարձաւ Ի· դարի արուեստագէտի երախտիքի վեհ արտայայտութիւնը հայ մտաւորականի, հայրենասէրի ու մարդասէրի հաւաքական կերպարին, որի տիպական խտացուած արտայայտութիւնն էին ինքը՝ Կոմիտասը, Նարեկացին, Սայեաթ-Նովան, Զարենցը, Սեւակը, Մինասը…

ԵՐԳԻ-ՊԱՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՍԱՄԲԼ

1970ի ամրանը Յովհաննիսեանը ստանձնում է Հայաստանի Երգի-Պարի Պետական Անսամբլի ղեկավարութիւնը՝ փոխարինելով Անսամբլի տարեց հիմնադիր Թաթուլ Ալթունեանին: Ինչպէս եւ Օպերայի ու Բալէտի Թատրոնի տնօրինութիւնը ստանձնելիս, այստեղ եւս Յովհաննիսեանը մուտք գործեց՝ յստակ պատկերացում ունենալով Անսամբլի ձեռքբերումների եւ թերացումների մասին, սեփական անելիքների որոշակի վճռական ծրագրերով: Առաջին հերթին նոր ղեկավարը առաջարկում էր լուծարել պարային խումբն ու նուագախումբը եւ հաւաքել երիտասարդ ու պրոֆեսիոնալ կազմ: Մասնակի փոփոխութիւններ էին առաջարկւում երգչախմբի կազմի վերաբերեալ, Անսամբլին արմատապէս նոր տեսք ու բովանդակութիւն էին հաղորդելու հագուստների գեղարուեստական ձեւաւորումն ու նորացուած երկացանկը:

Ըստ արժանւոյն գնահատելով երեք տասնամեակի պատմութիւն ունեցող Անսամբլի դերը հայկական ազգային երաժշտարուեստի տարածման ու գարգացման գործում, կարեւորելով Թաթուլ Ալթունեանի ներդրումը Անսամբլի ստեղծման ու կայացման գործում՝ Յովհաննիսեանը նրան համարում էր ժամանակի ամենագիտակ ու տաղանդաւոր խմբավարներից մէկը: Նա բարձր էր գնահատում անսամբլի իւրայատուկ տեմբրային հնչողութիւնը եւ երգչական ոճը, եւ հենց ձեռք բերածը պահպանելու եւ չկորցնելու, շարունակելու միտումով էր նա նախա-

ձեռնում կտրուկ փոփոխութիւնների, որոնց պատճառը ոչ թէ Ալթունեանի անձն էր, այլ ժողովրդական երգի-պարի անսամբլային կատարողականութեան ընդունուած ժանրերի սպառուածութիւնը, ժանրի ճգնաժամը։

Երկացանկի ժանրային ու ոճական հարստացման ճանապարհը Յովհաննիսեանը տեսնում էր հայկական բագմադարեան չերտերի հնամենի խորքերում՝ սկսած հեթանոսական երգերից՝ Երգք Առաստելաց, Երգք Վիպասանաց, քնարական գեղօններ, մրմունջներ, գողթան երգեր, երգուող «Սասնայ Ծռեր», տաղեր, չարականներ, ողբեր, գովքեր, հորովելներ, անտունիներ, հերոսական եւ հայրենասիրական երգեր։ Նա մեծ նշանակութիւն էր տալիս միջնադարեան երգարուեստին՝ սկսած Մովսէս Խորենացու, Խոսրովիդուխտի, Ներսէս Շնորհալու, Կոմիտաս Աղցեցու ու Գրիգոր Նարեկացու չարականներից մինչեւ Սայեաթ-Նովա, Ջիւանի ու Շերամ։

Երգերի մատուցման եղանակի բարենորոգման հիմքում Յովհաննիսեանը տեսնում էր հնագոյն սինկրետիկ արուեստների սկզբունքները, որոնք յայնօրէն կիրառուում էին հին Հայաստանի թատրոնում, միմոգուսանների թատրոնում, վարձակների, ձայնարկուների, կաքաւիչների պլաստիկ արուեստում։

Գեղարուեստական ղեկավարը մօտենում էր խնդրին՝ խորապէս հասկանալով նոր գեղագիտութեան պահանջներն ու սկզբունքները, յստակ պատկերացնելով գեղագիտական նպատակն իրականացնելու անհրաժեշտ արտայայտչամիջոցների ողջ երանգապնակը։

Յովաննիսեանին գրաւում էին աւանդական ժողովրդական ծէսերն ու տօնախմբութիւնները՝ Անահիտ աստուածուհու, Վարդավառի, Համբարձման, Վարդանանց հերոսներին նուիրուած հանդիսութիւններն ու հարսանեաց ծէսերը։ «Ժողովրդական Երգի-Պարի Անսամբլի նպատակը, կարճ ասած, ժողովրդական երգարուեստ եւ պարարուեստ պրոպագանդելն է,- պնդում էր Յովհաննիսեանը,- իսկ սրանք շատ ու շատ աւելի լայն, հարուստ ու բովանդակալից հասկացութիւններ են։ Ժողովուրդը պատմական տարբեր ժամանակաշրջաններում ստեղծել է ոճի, ձեւի, ժանրի, բովանդակութեան տեսակէտից տարբեր ստեղծագործութիւններ»[23]։

Ժողովրդական բանահիւսութեան, մշակութային անցեալի անգին արժէքները մոռացութիւնից փրկելու, կորստեան մատնուած նմուշները վերականգնելու եւ յարատեւ դարձնելու լաւագոյն միջոցը Յովհաննիսեանը տեսնում է «հայ ժողովրդական էպոսի, բանահիւսութեան, երաժշտական ֆոլկլորի, պարարուեստի թատրոն ստեղծելու» գաղափարում։ Եւ, փոխանակ նոր կատարողական խումբ ստեղծելու, նա առաջարկում է, որ այդ չնորհակալ գործն իրականացնի Երգի-Պարի Անսամբլի նորացուած կազմը։ «Բայց չէ՞ որ մենք ունենք ժողովրդական

Երգի-Պարի Անսամբլ, որ խեղդում է երկացանկի միօրինակութիւնից...

Ուրեմն թող հենց այդ Անսամբլն զբաղուի ժողովրդական արուեստի անհամար գանձերը վերածնելու, միաւորելու եւ ժողովրդին ներկայացնելու պատուաւոր գործով: Ես համոզուած եմ, որ ազգային հնագոյն արուեստի նմուշների իրագումն ու կատարումը նոր կեանք կը տայ Անսամբլին: Իսկ թէ դա կը կոչուի «անսամբլ» կամ «թատրոն», ի՞նչ նշանակութիւն ունի»[24]:

Էդգար Յովհաննիսեանը քայլ գիտակցում էր ընդդիմախօսների այն բոլոր յանդիմանութիւնները, որոնք ուղղուած էին Անսամբլի «ինքնատիպութեան» դէմ «մեղանչող» գեղարուեստական դեկավարին: Սովորութեան ոյժը, միշտ էլ մեծ դժուարութեամբ է յաղթահարւում, կամ բնաւ հնարաւոր չի լինում յաղթահարել: Յովհաննիսեանը, յամենայն դէպս, փորձեց յաղթահարել այդ միօրինակութիւնը, փորձեց թարմութիւն բերել լճացածութեան ու ազգային չինծու նկարագրի ընդունուած պատկերացումներում: Իր նորամուծութիւնները Յովհաննիսեանը գուգակցում էր անսամբլի կարեւոր ձեռքբերումների ու արժէքաւոր աւանդոյթների հետ: Հարցազրոյցը վարողի այն հարցին, թէ անսամբլի ո՛ր աւանդոյթները պիտի պահպանուեն եւ գարգացուեն, Յովհաննիսեանը համոզուած նչում է «ժողովրդական նիւթի մշակման եւ մատուցման բարձր ճաշակը... եւ մեր խնդիրն է՝ պահպանել այս յատկանիշը յետագայում եւս»:

Անսամբլի երկացանկը Յովհաննիսեանը ընդունում էր որոշ վերապահումներով: Մեծ մասամբ համաձայնելով երգի ու պարի գուգակցման սկզբունքին, այնուամենայնիւ նա գտնում էր, որ երկացանկը պէտք է կառուցուի որոշակի ներքին թատերագրութեան, անգամ դիպաշարային գծի հիման վրայ: Այստեղ յաւագոյն ձեւը ծիսական կամ կենցաղային թատերականացուած տեսարաններն են, որոնցում երգն ու պարը ներդաշնակօրէն գուգակցւում են միմեանց:

Յովհաննիսեանն առաջարկում է հայկական ժամանակակից պրոֆեսիոնալ կոմպոզիտորական ստեղծագործութիւններին աւելացնել պատմական անցեալի, մասնաւորապէս միջնադարեան երգարուեստի նմուշներն ու գուսանական երգերը: Նա առանձնապէս արժէքաւորում էր էպիկական բնոյթի ժողովրդական մեծակտաւ ստեղծագործութիւնները, որոնցում նա պարզորոշ նկատում էր սիմֆոնիզմի առկայութիւնը:

Ժողովրդական երգարուեստի մի իւրօրինակ ճիւղը, Յովհաննիսեանի համոզմամբ, քաղաքային ֆոլկլորն է, որին անսամբլը մասնակիօրէն էր անդրադառնում: Արուեստագէտին չէր գոհացնում նաեւ այդ մշակումների որակը: Ժողովրդական երգերի ու մեղեդիների մշակման յովհաննիսեանական սկզբունքը հիմնւում էր բազմաձայնութեան վրայ:

Այն բազմաձայնութեան, որի հիմնադիրը Կոմիտասն էր, որի ստեղծագործական դպրոցի բնական շարունակողը եղաւ նաեւ ինքը՝ Էդգար Յովհաննիսեանը։ «Բազմաձայնութեան սկզբունքը անսամբլի երկացանկում գրեթէ չի արտացոլուել,- ցաւով նշում էր նա։- ...Մեր ունկնդիրն արդէն այնքան է նախապատրաստուած, որ ժողովրդական երաժշտութեան մշակման կոմիտասեան սկզբունքները կարելի է կիրառել նաեւ երգի-պարի անսամբլում... Մշակումները պէտք է արուեն որքան կարելի է հարուստ, բազմազան, երաժշտական արտայայտչամիջոցների առաւելագոյն օգտագործմամբ»[25]։

Այլ է Յովհաննիսեանի մօտեցումը միջնադարեան երաժշտարուեստի մշակումների սկզբունքին։ Այստեղ կոմպոզիտորի ստեղծագործական նախաձեռնութիւնը նա հասցնում է նուազագոյնի, քանի որ միջնադարեան երգարուեստի նմուշներն, ըստ նրա, կարիք չունեն կոմպոզիտորական միջամտութեան։ «Այստեղ խնդիրն այդ ստեղծագործութիւնները ժամանակակից ունկնդրին մատչելի դարձնելն է»,- ասում է նա։ Մատչելի, բայց ոչ պարզունակ. Յովհաննիսեանի նպատակը այս մշակութային շերտին խորքային մօտեցում ցուցաբերելն է։

Անսամբլի կատարողական կազմի հարցում գեղարուեստական դեկավարի պահանջը մէկն է՝ ընտրել բարձրարուեստ, մասնագիտական կրթութեամբ երաժիշտ-կատարողներ, որոնք ի վիճակի կը լինեն յաւուր պատշաճի իրականացնել իրենց առջեւ դրուած գեղագիտական ու ստեղծագործական պահանջները։

Հետաքրքիր լուծումներ են առաջադրւում նաեւ Անսամբլի ծրագրային քաղաքականութեանը։ Խաղացանկային թատրոնների օրինակին հետեւելով՝ Յովհաննիսեանը մտադրութիւն է ունենում Անսամբլի երկացանկը կառուցել առանձին համերգային ներկայացումների ծրագրերով, որոնք թէ՛ բնոյթով, թէ՛ բովանդակութեամբ իրարից տարբեր էին լինելու։

Այստեղ եւս, Յովհաննիսեանը, ինչպէս եւ օպերային թատրոնում աշխատելիս, կարեւորում է համերգային ներկայացումների բեմականացման պրոֆեսիոնալ մօտեցումը, հիմնւում փորձառու ռեժիսորների, պարուսոյցների ու նկարիչների աջակցութեան ու համագործակցութեան վրայ։

Յաւօք, արուեստագէտի ստեղծագործական նոր մտածողութիւնը բախւում է «աւանդապաշտութեան» անուան տակ քօղարկուած կեղծ գաղափարախօսութեան ընդդիմութեանը, եւ կարճ ժամանակ անց նա ստիպուած է լինում հրաժարուել խմբի դեկավարի պաշտօնից։

1975ին ողբերգականօրէն զոհւում է նկարիչ Մինաս Աւետիսեանը՝ կոմպոզիտորի մտերիմ ընկերն ու համախոհը, որի անուան հետ էր կապւում համատեղ աշխատանքը Օպերայի եւ Բալէտի Թատրոնում։ Մեծ նկարչի, արուեստագէտի ու մտաւորականի յիշատակին նուիրուեց

«Սոնատ-էպիտաֆիա»ն՝ թաւջութակի եւ դաշնամուրի համար (1975)։ Կոմպոզիտորի՝ խորապէս վերապրուած անդառնալի կորստի շատ անձնական ցաւը երաժշտական մարմնաւորման մէջ վերածում է համամարդկային ողբերգութեան հասնող ընդհանրացումների։ Կոմպոզիտոր Տիգրան Մանսուրեանը, առանձնայատուկ չեշտելով սոնատի մտայղացման չարժառիթը՝ նուիրումի իրողութիւնը, միաժամանակ նկատել է, որ «դրամատուրգիական հիւսուածքի սրութիւնը, պատումի անհատականացման որակն ու ընդհանրացման տարածքը՝ սիմֆոնիկ շունչ եւ խորութիւն են հաղորդում սոնատին։ Սիմֆոնիկ մտածողութիւնը «Սոնատ-էպիտաֆիայի» իւրայատկութիւնն է,- *եւ եզրակացրել որ,-* Էդգար Յովհաննիսեանի «Սոնատ-էպիտաֆիայով» հայկական կամերային երաժշտութիւնը հարստանում է արժէքաւոր մի երկով»։[26]

Նկարագրելով «Սոնատ-էպիտաֆիայում» գերիշխող ծանր զգացողութիւնները ու հոգեվիճակները՝ երաժշտագէտ Էդուարդ Փաշինեանը դիտարկել է Յովհաննիսեանի ստեղծագործութեան գեղագիտական ուղղուածութեան կարեւորագոյն յատկանիշը՝ հումանիզմը։ «Նրա հոգեբանօրէն նրբանկատ ու խորաթափանց երաժշտութիւնը ապշեցնող արդիւնքի է հասնում,- *գրում է Փաշինեանը,-* այն ասես կոչ է անում մարդկանց՝ սիրել կեանքը»[27]։

Երաժշտագէտ Իրինա Տիգրանովայի գրախօսականում մէջբերում է Յովհաննիսեանի սեփական մեկնաբանութիւնը՝ Սոնատի կերպարային բովանդակութեան մասին։ Կոմպոզիտորն այս դէպքում էլ առաջին հերթին գեղագէտ է, նրա խօսքերով՝ «այստեղ առկայ է կորստեան ցաւը, այստեղ իմ վերաբերմունքն է այդ բացառիկ արուեստագէտի, իսկական հայրենասէրի յիշատակին։ Աւելի ճիշտ, իմ վերաբերմունքի մի մասը, քանզի մէկ սոնատում, ինչպէս նաեւ հակիրճ մահախօսականում, անհնար է արտայայտել ամէն ինչ։ Իհարկէ, ես գիտեմ եւ սիրում եմ Մինասի գրեթէ բոլոր աշխատանքները։ Մինչդեռ Սոնատը գրելիս աչքիս առաջ էր յատկապէս նրա մի կտաւը՝ «Թորոս Ռոսլինի Ծնունդը». կտաւի գաղափարական կենտրոնը՝ մայրն իմ առջեւ յառնում էր որպէս ողբացող մայր»[28]։ *Այսպէս, նկարչի մէկ կտաւից ոգեշնչուած «մահախօսականը» կոմպոզիտորի սիմֆոնիկ մտածողութեան չնորհիւ ձեռք է բերում համամարդկային նշանակութիւն։*

«ԱԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ»

Հայկական դիւցազնավէպի հիման վրայ մեծակերտ երաժշտաթատերական երկի մտայղացումը վաղուց հասունանում էր Յովհաննիսեանի ստեղծագործական ծրագրերում։ Նոր ստեղծագործութեան մասին իր մտքերը կոմպոզիտորը յայտնում է Սերգէյ Փարաջանովին՝ ի դէմս նրա տեսնելով ոչ միայն գրական նախահիմքի հեղինակի, այլեւ համախոհ արուեստագէտի, որը գերազանց կարող էր իրականացնել երաժշ-

տա-թատերական որմնանկարի գրական-բանաստեղծական հենքը: Ու, թէեւ Փարաջանովի լիրբեռոն մերժւում է խորհրդային գաղափարախօսական արգելքների հանդիպելով, այնուամենայնիւ, որոշ բաներ հնարաւոր է լինում օգտագործել բալէտի լիբրետոյի վերջնական տարրերակում:

Առաջին հերթին Յովհաննիսեանը փորձում է պահպանել Փարաջանովի գեղագիտական աշխարհընկալումը, այն, ինչ գրաւում էր իրեն Փարաջանովի ֆիլմերում, գրաֆիկական աշխատանքներում ու կոլաժներում: Դա պոեզիայի, թատրոնի, մնջախաղի, կինոյի գուտ «փարաջանովեան» աշխարհընկալումն էր, որը յուզում էր Յովհաննիսեան-արուեստագէտի երեւակայութիւնը եւ բանաստեղծական էութիւնը:

Էդգար Յովհաննիսեանի ստեղծագործութեան գեղագիտական բնորոշումներում ամէնից յաճախ հանդիպող եւ ամէնից դիպուկ բնորոշումը էպիկականութիւնն է: Եւ այս իմաստով «Սասունցի Դաւիթ» դիւցազնավէպին դիմելը լիովին արդարացուած էր եւ բոլորովին անսպասելի չընդունուեց: Օպերա-բալէտին նախորդող ստեղծագործական ուղին բնականոն հասունացնում էր նոր կոթողական երկի ծնունդը: Անգամ Երգի-Պարի Անսամբլում աշխատելու տարիները դրական արդիւնք տուեցին յետագայ ստեղծագործական քայլերի համար: Այն, ինչին ձգտում էր կոմպոզիտորը անսամբլում աշխատելու տարիներին, եւ այն, ինչ միայն ուրուագծուեց Անսամբլի ելոյթներում, լիարժէք դրսեւորուեց Օպերա-բալէտում:

Առաջին հերթին դիւցազնավէպի երաժշտական մարմնաւորման համար, երաժշտագէտ Կարինէ Խուդաբաշեանի գնահատմամբ, հեղինակը «ճիշտ էր ընտրել ձեւը՝ օպերա-բալետ, որի նախատիպն է մեր միջնադարեան գուսանական թատրոնը, ճիշտ է ընտրել երաժշտական ասքի ձեւը, որը յատուկ է հենց էպոսին: Չեւ, որի մէջ ասմունքը, մեներգը, խմբերգը (ապա նաեւ պարերը) վիթխարի գործողութիւն են կազմում»[29]:

«Սասունցի Դաւիթ» օպերա-բալէտի բեմականացման առիթով հրապարակուած հարցազրոյցում լրագրող Աննա Աւետիսեանի այն հարցին, թէ ո՞ր ժանրում ստեղծագործելն է աւելի հոգեհարազատ, Յովհաննիսեանը միանշանակ պատասխանում է. «Իհարկէ, բալետը, որը ես գրում եմ սիմֆոնիկ ոգով»: *Եթէ օպերային թատրոնի տնօրինութիւնը ստանձնելիս կոմպոզիտորի նախապատուութիւնը բալէտի հանդէպ կարելի էր գնահատել ինչ-որ չափով որպէս երիտասարդ արուեստագէտի ռոմանտիկական առաւելապաշտութեան արտայայտութիւն, ապա 70ականներին, արդէն հարուստ ստեղծագործական կենսափորձ ունեցող արուեստագէտի չուրթերից այս միտքը հնչում է որպէս գեղագիտական հաւատամք, որը հետեւողականօրէն ձգտում է մարմնաւորել իր երաժշտաթատերական ամենարազմազան ներկայացումներում՝*

հեքիաթ-բալէտ, հեթանոսական-դիցաբանական պատում, ժամանակակից քնարական խորեոգրաֆիկ պատկեր, ազգային քնարադրամատիկ պատում եւ, վերջապէս, էպիկական դիւցաղներգութիւն։

Հայ երաժշտութեան մէջ յատկապէս բալէտային արուեստի զարգացման ուղին Էդգար Յովհաննիսեանի գնահատմամբ նախանշել են Արամ Խաչատրեանն ու Գրիգոր Եղիազարեանը։ «Մասշտաբով եւ էսթետիկայով տարբեր այդ երկու կոմպոզիտորների բալէտները լուրջ ու բարձր արուեստի արտայայտութիւն են»[30],- հաւաստիացնում էր կոմպոզիտորը եւ իր ստեղծագործութիւններում չարունակում երկու ուսուցիչների աւանդոյթները՝ հասցնելով դրանք նոր գեղագիտական մակարդակի, արդիական հնչողութեան ու բեմական նորովի մարմնաւորումների։

Ստեղծագործական աշխատանքի հանդէպ հետեւողական եւ լուրջ վերաբերմունքը դրսեւորւում էր նաեւ ստեղծման բուն գործընթացին նախորդող աշխատանքի ժամանակ։ Ձգտելով հասնել առաւելագոյն գեղարուեստական ճշմարտացիութեան՝ կոմպոզիտորը երկար տարիներ ուսումնասիրում էր դիւցազնավէպի պատմութիւնը, ակադեմիական գրառումները, Յովհաննէս Թումանեանի, Աւետիք Իսահակեանի, Նայիրի Զարեանի գեղարուեստական մեկնաբանութիւնները, նաեւ՝ ժողովրդական ասացողների տարբերակները։ «Ես հնարաւորին չափ ձգտում էի դուրս բերել «արխիւային» վիճակից ժողովրդական երգերը»[31], պատմում է հեղինակը։ Կոմիտասի, Սպիրիդոն Մելիքեանի, Արամ Քոչարեանի ձայնագրութեամբ պահպանուած դիւցազնավէպի երաժշտական հատուածները, վիպերգուների կատարումները կուտակեցին այն պաշարը, որը հիմնանիւթ դարձաւ Օպերա-բալէտի համար։ Իր իսկ՝ հեղինակի խոստովանութեամբ, Երգի-Պարի Անսամբլում աշխատելու չորս տարիները նոյնպէս իրենց նշանակալի հետքը թողեցին։ «Ես քառասունից աւելի ժողովրդական երգեր մշակեցի։ Ու թէեւ դրանցից ոչ մէկը չմտաւ բալէտի երաժշտութեան մէջ, սակայն ֆոլկլորի հետ շփումն ինքնին ստեղծագործաբար հարստացրեց ինձ, հնարաւորութիւն տուեց յագենալու նրա ինտոնացիոն մթնոլորտով»[32]։

«Սասունցի Դաւիթ» օպերա-բալէտի երաժշտութեան մէջ գեղարուեստական համոզիչ արտայայտչականութեամբ է պատկերուած Արեւելքը՝ խորհրդանշելով հակամարտող ուժերի աշխարհը։ «...Արեւելքի (Մսըրի) երաժշտական մթնոլորտը պատկերելիս ես աշխատում էի ելնել ոչ այնքան նրանից, որ այն ոյժ է, որը հակամարտում է Սասունի հետ, որքան ձգտելով ներկայացնել Արեւելքը վառ, գունեղ ու գրաւիչ,- պատմում է հեղինակը,- ես ելնում էի յարգանքի այն աւանդական զգացումից, որը միշտ էլ Արեւելքի հարուստ մշակոյթի հանդէպ տածել է մեր ժողովուրդը»[33]։ Այս խօսքերում արտացոլւում է յայնախոհ մտաւորականի աշխարհայեացքը, կենսահայեցութիւնը, ամէն ինչում գեղե-

ցիկը տեսնելու, գգալու նրբանկատութիւնը: Նոյն բծախնդրութեամբ Յովհաննիսեանը ուսումնասիրում էր արաբական ֆոլկլորը: Արտայայտման առաւելագոյն ճշմարտացիութեան հասնելու նպատակով նա բազմիցս խորհրդակցում էր մասնագէտների՝ կահիրէի եւ Թունիսի երաժշտանոցների ռեկտորներ՝ դոկտոր էլ Հոլիի եւ դոկտոր էլ Մահդիի հետ: Օպերա-բալէտում ներմուծուեցին արաբական ֆոլկլորի նմուշներ՝ «Հեծեալների պար»ը, «Բեդուինական Բալլադ»ը, «Քարիւղի կանանց պար»ը, «Նուբիական պար»ը: Հետաքրքիր երաժշտական լուծում է ստացել Ծերունի արարի կերպարը՝ հարուստ արեւելեան ելեւէջներով: Այս ամէնը, սակայն, չի հակասում ընդհանուր ինտոնացիոն ոլորտին, այլ ծառայում է երանգապնակի հարստացմանը: Այլ մշակոյթի հանդէպ հիացական, նրբանկատ վերաբերմունքի աւանդոյթը նոյնպէս գալիս է հայկական բալէտի հիմնադիրներից. յիշենք Գրիգոր Եղիազարեանի «Արա Գեղեցիկ»ը, Արամ Խաչատրեանի «Գայիանէ»ն եւ «Սպարտակ»ը, որոնցում հակամարտող կողմերը ներկայացուել են ոչ թէ իբրեւ սկզբանէ որպէս միանշանակ բացասական կերպարների ոլորտ, այլ յառնել են իրենց ողջ հզօրութեամբ, վեհաշուք ու ինքնատիպ կերպարայնութեամբ: Ուշագրաւ են Յովհաննիսեանի մտքերը թատերագրական նման լուծում կիրառելու մասին. «Ինչ վերաբերում է Մսրայ Մելիքի կերպարին, ապա այն պէտք է լուծուի ոչ թէ մնջախաղային եւ դրամատիկական միջոցներով, այլ ելնելով այսօրուայ բալէտային արուեստի պահանջներից, պէտք է լինի խիստ ակտիւ, պարային ու դինամիկ: Ընդգծուելու է Մելիքի ուժը, կամքը, որպէսզի ընդգծուի Դաւթի յաղթանակի նշանակութիւնը: Եւ հենց դա է երաժշտական կերպարի լուծման բանալին»[34]:

ՎՈԿԱԼ ԱՐՈՒԵՍՏ. ԱԻԱՆԴՈՑԹ ԵՒ ՆՈՐԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Վոկալ արուեստն իր ժանրային եւ արտայայտչական բազմազանութեամբ գրաւեցնում է Յովհաննիսեանի ստեղծագործութեան առաջնային տեղերից մէկը: Տարբեր ժամանակահատուածներում դիմելով վոկալի ամենատարբեր ժանրերին ու գեղաձեւումներին, Յովհաննիսեանը տարբեր նշանակութեան գեղագիտական խնդիրներ է լուծել:

1960ականների վերջին ստեղծուեցին Յովհաննիսեանի «Երեւան-Էրեբունի», «Սարդարապատ», «Արփա-Սեւան», «Հայոց Լեռներում» խմբերգերը: «Երեւան-Էրեբունի»ն առաջին անգամ հնչեց 1968ի Հոկտեմբերին, Երեւանի հիմնադրման 2750ամեակին նուիրուած տօնակատարութեան օրերին: Երգն անմիջապէս տարածուեց ու սիրուեց ոչ միայն Հայաստանում, այլեւ արտասահմանում՝ յուգելով աչխարհասփիւռ հայերի հոգիները: Արդէն չորս տասնամեակ է՝ այն հնչում եւ յուզում է ունկնդրին. «1750 հոգի, մրճահարուող խազերու սարսուռէն

զսպանակուած, ոտքի կը կանգնին եւ քայլերգի վեհութեամբ կը հնչէ «Երեւան-Էրեբունի»ն մէկ հոգիի եւ մէկ մարմնի վերածուած»[35]: *Կոմպոզիտորի երգերի յաջողութեան գաղտնիքը, երաժշտագէտ Մարգարիտ Ռուխկեանի խօսքերով, այն՝ որ նա կարողացել էր գտնել ժամանակի ինտոնացիոն բանալին. «Զանգուածային երգին դիմել, կը նշանակի ներխուժել կեանք, կարողանալ ականջալուր լինել ժողովրդի մտքերին ու ձգտումներին, քաղել երաժշտական ստեղծագործութեան այն ծիլերը, որոնք սկիզբ են առել ժողովրդի կեանքի ընդերքում»*[36],- *գրել է նա:*

Բալէտային երաժշտութեան մէջ վոկալի ներմուծման հնարքը աստիճանաբար վերաճում է հետեւողականօրէն ու գիտակցուած կերպով կիրառուող թատերագրական ու գեղագիտական արտայայտչամիջոցի: «Մարմար» բալէտում երգչախումբը հանդէս էր գալիս գուտ որպէս նուագախմբային լրացուցիչ հնչերանգային արտայայտչաեղանակ: «Անտունի» բալէտում երգչախումբը երկրորդ գործողութեան մէջ հանդէս է գալիս որպէս իրաւահաւասար գործող անձ, բեմադրութեան ակտիւ մասնակից՝ խորհրդանշելով ժողովրդի ամբողջական, հարուստ ու բազմագան մարմնաւորումը: «Սասունցի Դաւիթ»ն ի սկզբանէ մտայղացուեց որպէս օպերա-բալէտ, քանի որ դիւցազնավէպի երաժշտական վերապատումը հնարաւոր էր իրականացնել միայն ժանրերի միախառնումի նմանօրինակ գեղարուեստական լուծումով:

Վոկալի արտայայտչաեղանակով թատերագրական-գեղագիտական հնարքի ենք հանդիպում միանգամայն այլ ժանրում՝ «Երկրորդ Սիմֆոնիա»յում, որը, սակայն, վերը նշուած ստեղծագործութիւններում հեղինակի իւրօրինակ ձեռագրի հետեւողական չարունակութիւնն է: Սիմֆոնիայում երգչախումբն ու մենակատարը (սոպրանօ) մեկնաբանւում են գործիքայնօրէն՝ համատեղելով գործիքային վիրտուոզ մենակատարային հատուածները բազմաձայն բազմաշերտ հնչողութեան հետ: Եւ եթէ «Սասունցի Դաւիթ» օպերա-բալէտը արժեւորուեց որպէս ժանրերի միախառնումի նախադէպը չունեցող յայտնութիւն հայ երաժշտութեան մէջ, ապա «Երկրորդ Սիմֆոնիա»ն ժանրի նոր ընթերցումն էր, որի մէջ ռեքուիեմի, կոնցերտի, սիմֆոնիայի տարրերը գոյակցում են համատեղ՝ նպաստելով միասնական թատերագրութեան գարգացմանը, չհեռանալով յովհաննիսեանական դիւցազներգական սիմֆոնիզմի աւանդոյթից:

Յովհաննիսեանի խմբերգային ստեղծագործութիւնն իր կատարելութեանը հասաւ 1980ականներին, երբ իրեն վիճակուեց հիմնել Հեռուստառադիոյի Հայ Երգի կամերային երգչախումբը, մի համոյթ, որն ամբողջութեամբ՝ ստեղծագործութեան ժանրային, գեղագիտական ու կատարողական ոճի առումով ենթարկուում էր գեղարուեստական դեկավարի նախասիրութիւններին: Սիրով, նուիրումով ու ոգեչնչուածու-

թեամբ ստեղծուեցին ժողովրդական երգերի մի քանի տասնեակի հասնող մշակումները։

Երգչախմբում ամէն մի մանրուք գեղարուեստական արտայայտչականութեան նշանակութիւն էր ստանում՝ իւրայատուկ հնչողութիւնը, երկացանկը, անգամ գգեստների ձեւաւորումը, որոնք հրաշալի իրականացրեց կոմպոզիտորի դուստրը՝ նկարիչ-ձեւաւորող Ռուբինա Յովհաննիսեանը։ Առանձնայատուկ բծախնդրութեամբ էին ընտրուում մենակատարները, յատուկ նրանց ձայներին ու խառնուածքին համապատասխան գրուում էին մեներգերը։ Յատուկ այս երգչախմբի համար գրուեցին ժողովրդական երգերի մշակումների շարքերը, եւ այս ժանրում գլուխգործոց հանդիսացող քսան խմբերգերը՝ Վահան Տէրեանի բանաստեղծութիւնների խօսքերով։ Ուշագրաւ են կոմպոզիտոր Դաւիթ Հայաջեանի յուշերը այդ տարիների մասին. «Մեր աչքի առաջ, մեր մասնակցութեամբ ծնւում էին Յովհաննիսեանի խմբերգերը... Տպաւորուել է իմ մէջ Էդգար Յովհաննիսեանի առանձնայատուկ էթիկան։ Փորձերի ժամանակ հիմնականում լուռ էր, չէր միջամտում, ուշադիր լսում էր։ Եւ դա հակառակ ազդեցութիւն էր թողնում։ Ամէն ինչ թողնում էր դիրիժորի ակտիւութեանը եւ ներքին զգացողութեանը։ Ինքը ներքուստ փիլիսոփայ էր, եւ այդ ամէնը կանխամտածուած էր անում՝ գիտակցելով արդիւնքը»[37]։ *Արուեստագէտի այդ նրբանկատութեան մէջ իսկապէս մեծ իմաստ կար, սակայն ստեղծագործական նախաձեռնութեան հարցում, իհարկէ, որոշիչ էր իր ճաշակը, իր ընտրութիւնը, իր ընթերցումն ու մեկնաբանումը։* «Ինքն ուներ Տէրեանի հանդէպ սեփական վերաբերմունքը, իր տէրեանական աշխարհը,- *նշում է Հայաջեանը,*- Տէրեանական շարքն իսկապէս որ ինքը պիտի գրէ»[38]։

Ո՞րն էր Վահան Տէրեանի պոեզիայի յովհաննիսեանական ընթերցման իւրայատկութիւնը։ Այս հարցի պատասխանը տալիս է ինքը՝ հեղինակը։ «Խոստովանւում եմ, իմ նոր շարքը յայտնի չափով նաեւ իմ բողոքն է՝ կոմպոզիտորների կողմից Տէրեանի որոշակի միակողմանի, քնարական, ինտիմ եւ կամերային-սալոնային ընթերցման դէմ։ Տէրեանը շատ աւելի խորն է, աւելի ուժեղ ու հզօր, աւելի էպիկական։ Այդ էպիկականութիւնն սպասում է ոչ միայն իր բացայայտմանը, այլեւ «ժամանակի մէջ» զարգացմանը։ Տէրեանը շատ «ենթատեքստային» բանաստեղծ է, եւ այդ ենթատեքստութիւնը պահանջում է համապատասխան պոլիֆոնիա՝ կոնտրաստային, փոխադարձ լրացնող... Եւ այս դիրքերից Տէրեանի պոեզիան դիտելու եւ այդ յատկանիշներն արտացոլելու փորձն անխուսափելի է»[39]։

Մէկ այլ առիթով հրապարակուած յօդուածներից մէկում արուեստագէտը մեկնաբանում է տէրեանական պոեզիայի եւ Տէրեան-մտաւորականի իր տեսակէտը։ «Դատողութիւնների եւ գործողութիւնների անզիջողականութիւնը Տէրեանի մէջ համատեղւում էր համեստութեան,

ամաչկոտութեան հետ, անզուգական կամքը՝ նրբութեան, նրբանկատութեան հետ: Հենց ինքը՝ Տէրեանի պոեզիան, նրա պոեզիայի նրբակերտութիւնը վկայում են նրա բարձրագոյն մտաւորականութեան մասին: Եւ, այնուամենայնիւ... Տէրեանի հիմքերը շատ ժողովրդական են, շատ գեղջկական»[40]:

Ցովհաննիսեանի յայնահայեաց աշխարհընկալումը չէր կարող սահմանափակուել Տէրեանի քնարերգութեան միակողմանի ընթերցմամբ: Հայ գրականութեանը եւ յատկապէս Տէրեանի պոեզիային քաջատեղեակ լինելով՝ երգաչարի բանաստեղծութիւններն ընտրելիս նա աչքի առաջ ունենում է Տէրեան-քնարերգուի, բնութեան ու սիրոյ երգչի, հայրենասէր քաղաքացու բարդ ու հակասական կերպարը, նրա անմնացորդ նուիրումի պատրաստակամութեան գիտակցումը. «Ինձ համար շատ կարեւոր էր մեծ բանաստեղծի մարդկային ու քաղաքացիական էութիւնը, նրա բուռն կենսագրութիւնը, նրա վեհ գաղափարները եւ նուրբ զգացումները, ինձ համար ոչ միայն կարեւոր, այլեւ որոշիչ էին Տէրեանի ժողովրդական, գեղջկական արմատները, նրա մշտական հաւատարմութիւնը հայրենի գիւղին եւ հողին, որոշիչ էին ոչ միայն խիստ տէրեանական կարօտը եւ թախիծը, այլեւ ոչ-պակաս տէրեանական հայրենասիրութիւնը, առնականութիւնը, տոկուն հաւատը»[41]:

Այսպիսով, դիմելով Վահան Տէրեանին, Ցովհաննիսեանը, ոչ միայն արուեստագէտի հոգու պարտքը կատարեց իր մեծանուն ազգակցի հանդէպ, այլեւ սկզբունքօրէն նոր մօտեցումով ընթերցեց նրա պոեզիան՝ ստեղծելով հայրենասէր-քաղաքացուն, մարտնչող մտաւորականին ու բացառիկ նրբագգած քնարերգուին արժանի գեղագիտական ընդհանրացումներով յագեցած երաժշտական նուիրում:

ՆՈՐԴԱՍԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ

80ականներին գրուած երկերում լիարժէք դրսեւորուեց Ցովհաննիսեանի ստեղծագործութեան մէկ այլ բնորոշ կողմը՝ հետաքրքրութիւնը հնագոյն դասական ժանրերի հանդէպ: Եթէ Առաջին Սիմֆոնիայում դրա արտայայտութիւնը հայկական միջնադարեան երգարուեստն էր, ապա Կոնցերտ-բարոկոյում, Երկրորդ եւ Երրորդ Սիմֆոնիաներում, վերջին չրջանի՝ «Գողգոթա» պասակալիայում եւ «Գրիգոր Նարեկացի» օրատորիայում եւրոպական դասական եւ բարոկո չրջանին յատուկ ժանրերն ու ձեւերն են, որոնք կոմպոզիտորի ինքնատիպ ձեռագրի չնորհիւ վերաիմաստաւորում ու նոր գեղագիտական արժէք են ստանում:

Այսպիսով, Ցովհաննիսեանի ստեղծագործութեան բնորոշ կողմը դառնում է ի. դարավերջի երաժշտական մտածողութեան ամենատարածուած ու տիպական ուղղութիւններից մէկը՝ նորդասականութիւնը: Այլ կերպ չէր կարող լինել: Իր մեծ ուսուցիչների՝ Գրիգոր Եղիազար-

եանի, Խաչատրեանի, Շոստակովիչի դասերը ձեւաւորեցին ու կոփեցին երիտասարդ ստեղծագործողի մէջ հաւատամքը դասական ձեւի պարզութեան, յստակութեան, ասելիքի գաղափարական խորութեան հանդէպ, իսկ բնատուր պայծառատեսութիւնը, նորը, հետաքրքիրն ու բացառիկը գտալու, իւրացնելու տաղանդը թոյլ էր տալիս արտաքուստ դասական պարզութիւնը յագեցնել նորարարական հնարքներով ու բարդ տեխնոլոգիական գիւտերով։

Եւ ամէնից գնահատելին այն է, որ կոմպոզիտորը չէր սահմանափակւում նորդասական ձեւերի միայն արտաքին դրսեւորումների կիրառմամբ՝ ռեքուիեմ (Երկրորդ Սիմֆոնիա), հնագոյն սուիտ (Կոնցերտ-բարոկո), ռիչերկար, մենուէտ, չակոնա (Երրորդ Սիմֆոնիա), Dies Irae (Սոնատ-էպիտաֆիա), պասակալիա («Անտունի») եւն.։ Ժանրային այս անուանումները՝ որպէս հաստատուն յաւիտենական գեղագիտական արժէքների խորհրդանիշ, ներդաշնակօրէն ներհիւսւում են երաժշտալեզուական ու թատերագրական առումով բարդ ու բազմագան ժամանակակից կտաւներում։ Երաժշտագէտ Սուետլանա Սարգսեանի դիպուկ բնորոշմամբ, «Դրանք կազմում են հին արժէքների նոր ընկալում, իւրօրինակ գեղարուեստական իրողութիւն, որի արարողն է Էդգար Յովհաննիսեանը»[42]։

«ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ԷՐԶՐՈՒՄ»

Էդգար Ցովհաննիսեանը խորհրդահայ չրջանի այն սերնդի ստեղծագործողներից է, որոնց կրթութիւնը, ստեղծագործական կայացումն ու գեղագիտական սկզբունքների ձեւաւորումն ընթացել են նաեւ ռուսական (կամ խորհրդային) մշակոյթի անմիջական ազդեցութեան ներքոյ։ Ընդ որում, եթէ կրթական ու ստեղծագործական հասունացման չրջաններն արդիւնք էին առարկայական գործօնների ազդեցութեան, ապա ենթակայական գործօնները, ինչպիսիք էին ստեղծագործական ու բարեկամական փոխյարաբերութիւնները ժամանակի նշանաւոր գործիչների հետ, անձնական նախասիրութիւնները, միագումարուելով ստեղծեցին Ցովհաննիսեան-մտաւորականի գեղագիտական-մշակութաբանական երեւոյթը։

Գրողներ Պուշկին, Լերմոնտով, Կուպրին, կոմպոզիտորներ Շոստակովիչ, Պրոկոֆեւ, պարուսույց Եակոբսոն, բեմադրիչներ Վարկովիցկի, Աբրատով, բալէտի մենապարողներ Վասիլեւ, Մաքսիմովա եւ չատ ուրիչ անուններ ձեւաւորեցին կարեւորագոյն ենթակայական նախապայման, որը խթան դարձաւ ստեղծելու օպերային ժանրում նրա միակ, սակայն անգերագանցելի թարմութեամբ ու վիպական ընդգրկումով օպերան՝ «Ճանապարհորդութիւն Դէպի Էրզրում»։ Ստեղծագործութիւնը նուիրուեց Արեւելեան Հայաստանը Ռուսաստանին միաւորելու 160ամեակին, այստեղից էլ՝ լիրբետոյում առկայ հայ-ռուսա-

կան բարեկամութեան ինչ-որ չափով կարգախօսային գաղափարը։ Օպերայի գրական նախահիմքում Պուշկինի գրառումներն են, որոնք, սակայն, բեմադրիչ Գէորգի Անիսիմովի ազատ ստեղծագործական մեկնաբանութեամբ եւ կոմպոզիտորի հմուտ միջամտութեամբ վերածուեցին հզօր էպիկական-դրամատիկ արարի։

[121] During the electoral campaign of 2000, many people assumed, rightly or wrongly, that Joukhadarian was penalized by the Tashnag Party, for he had not stopped the Armenian Catholic Mesrobian School, in the center of Bourdj Hammoud, from inviting Hariri, to preside over their commencement on 9 July 2000. Tickets were distributed with Hariri's name on them and public announcements were published. It was rumoured that the Tashnag Party had asked the Director, to cancel the invitation or postpone it. Upon the latter's refusal, they had allegedly contacted the patriarch, Nerses Bedros XIX, who had ordered the postponement of the commencement, which was postponed to 4 September. However, Hariri refused to attend the commencement which was conducted but not under his auspices. MP Joukhadarian did not attend the Armenian Bloc meeting held after the elections but before the newly elected parliament met. His name was not mentioned among those present in the Bloc's meeting (*Aztag*, 23 September 2000) and *Zartonk* (28 September 2000) referred to this.

[122] Sabine Darrous, "Joukhadarian Bows Out of the Race" *The Daily Star*, 8 August 2000.

[123] *Aztag*, 73rd year, 9 August 2000, № 126(20589).

[124] Sabine Darrous, op.cit. the Daily Star, 8 August 2000.

[125] Sabine Darrous, 8 August 2000, № 125(20588).

[126] *Aztag*, 73rd year, 8 August 2000 ,№ 125 (20588).

[127] *The Daily Star*, 8 August 2000, *Aztag* 73rd year, 9 August 2000, № 126(20589); *Ararad*, 63rd year, 10 August 2000, № 188(17074); *Zartonk*, 63rd year, 5 August 2000.

[128] Sabine Darrous, "Makhzoumi Presents his" Sons of Beirut List", *The Daily Star*, 11 August 2000; *L'Orient-Le Jour*, 11 August 2000, № 9944; *Ararad*, 63rd year, 11 August 2000, № 189(17075).

[129] *L'Orient-Le Jour*, 10 August 2000, № 9943.

[130] *Aztag*, 73rd year, 9 August 2000, № 126(20589).

[131] Ibid, 73rd year, 12 August 2000, № 129(20592).

[132] Ibid, 73rd year, 19 August 2000, № 135(20598).

[133] Ibid.

[134] Ibid, 73rd year, 22 August 2000, № 137(20600).

[135] *Aztag*, 73rd year, 31 July 2000, № 118(20581); *The Daily Star*, 7 August 2000.

[136] Nafez Kawas, "Salam Lashes Hariri's Heavy Spending", *The Daily Star*, 8 August 2000.

[137] Ibid.

[138] *Ararad*, 63rd year, 12 August 2000, № 190(17076).

[139] *The Daily Star*, 16 August 2000.

[140] *L'Orient-Le Jour*, 11 August 2000, № 9944.

[141] *Ararad*, 12 August 2000, № 190(17076).

[142] *Zartonk*, 63rd year, 12 August 2000, № 179(17878).

[143] Ibid, 63rd year, 10 August 2000, № 177(17876).

[144] Ibid, 63rd year, 12 August 2000, № 179(17878).

[145] *Ararad*, 63rd year, 13 August 2000, № 191(17077).

[146] Ibid.

[147] Ibid, 63rd year, 17 August 2000, № 194(17080).

[148] Mona Ziade, "Heavyweights Line up with MP Lahoud", *The Daily Star*, 14 August 2000.

[149] When Nassib Lahoud's list was published in *Aztag* (14 August 2000, № 13(20593) Raffy Madeyan's name was given as Raffy Haoui, the surname of his stepfather Georges Haoui, former chief of the Communist Party. This was repeated on a few other occasions, apparently to create the impression that he was part-Armenian or to attract attention to his link with the Communist leader.

[150] *The Daily Star*, 14 August 2000.

[151] *Gantch*, 19 August 2000 № 429(285) translation of the article of Ahmed Zein, "The story of a picture" from *Safir*.

[152] *The Daily Star*, 14 August 2000.

[153] Ibid.

[154] *Aztag*, 73rd year, 16 August 2000, № 132(20595).

[155] *The Daily Star*, 21 August 2000.

[156] *Aztag*, 73rd year, 12 August 2000, № 129(20592).

[157] Ibid.

[158] *Ararad*, 63rd year, 16 August 2000, № 193(17079); *Aztag*, 73rd year, 15 August 2000, № 131(20594).

[159] *Aztag*, 73rd year, 16 August 2000, № 132 (20595); *Ararad*, 63rd year, 17 August 2000, № 194(17080).

[160] *Aztag*, 73rd year, 17 August 2000, № 133(20596); *Ararad*, 63rd year, 18 August 2000, № 195(17081).

[161] Ibid.

[162] Ibid, 73rd year, 18 August 2000, № 134(20597).

[163] Ibid, 73rd year, 19 August 2000, № 135(20598); *Ararad* 63rd year, 20 August 2000, № 197 (17083).

[164] *Aztag*, 73rd year, 22 August 2000, № 137(20600).

[165] Ibid, 73rd year, 24 August 2000, № 139(20602).

[166] Ibid, 73rd year, 24 August 2000, № 139(20602); *Ararad*, 63rd year, 26 August 2000, № 202(17088).

[167] *Ararad*, 63rd year, 27 August 2000, № 203(17089).

[168] *Aztag*, 73rd year, 21 August 2000, № 136(20599); *Ararad*, 63rd year, 22 August 2000, № 198(17084).

[169] *Aztag*, 73rd year, 29 August 2000, № 143(20606).

[170] Ibid, 73rd year, 30 August 2000, № 144(20607). In the Huntchag daily *Ararad* 5 September 2000, № 214(17100) Avedis Razmig, after the elections, condemned the waste of money used to organize a dinner for 5000 people and wrote that with the money spent there, teachers and schools could have been kept and Armenian unity and the younger generations would have been served better. A year later an intellectual, Ara Ardzrouni praised Catholicos Aram I for his evenhandedness and criticized the spiritual leaders of the Armenian denominations, and priests from Bourdj Hammoud and Khalil Badawi-Hadjen for attending electoral meetings or taking sides. He also criticized Ambasador Navasartian for participating in one sided electoral events (*Ardziv*, Beirut, 8th year, 6 December 2001, № 19-20(187-88).

[171] Ibid, 73rd year, 18 August 2000, № 134(20597); *Ararad*, 63rd year, 18 August 2000, № 195(17081).

[172] *Ararad*, 63rd year, 17 August 2000, № 194(17080); *Aztag*, 73rd year, 16 August 2000, № 132(20595).

[173] *Ararad*, 63rd year, 18 August 2000, № 195(17081).

[174] *Aztag*, 73rd year, 24 August 2000, № 139(20602).
[175] Ibid, 73rd year, 29 August 2000, № 143(20606).
[176] Ibid.
[177] *Aztag*, 73rd year, 24 August 2000, № 134(20597) and 18 August № 134(20602).
[178] *Aztag*, 73rd year, 25 August 2000, № 140(20603).
[179] *Ararad*, 63rd year, 27 August 2000, № 203(17089).
[180] *Aztag*, 73rd year, 29 August 2000, № 143(20606).
[181] Ibid.
[182] *Aztag*, 73rd year, 24 August 2000, № 139(20602); *Ararad*, 63rd year, 24 August 2000, № 200(17086).
[183] *Zartonk*, 63rd year, 10 August 2000, № 177(17876).
[184] Ibid.
[185] Ibid.
[186] *Gantch*, 19 August 2000, № 429(285); *Zartonk*, 63rd year, 18 August 2000, № 184(17883).
[187] *Zartonk*, 63rd year, 19 August 2000, № 184 (17883).
[188] Ibid.
[189] Ibid, 63rd year, 23 August 2000, № 188(17887).
[190] Ibid, 63rd year, 25 August 2000, № 190(17889).
[191] Ibid, 63rd year, 12 August 2000, № 179(17878).
[192] Ibid, 63rd year, 19 August 2000, № 185(17884); *L'Orient-Le Jour*, 19 August 2000, № 9951.
[193] *Zartonk*, 63rd year, 20 August 2000, № 186(17878).
[194] Ibid.
[195] Ibid.; *The Daily Star*, 19 August 2000, № 10266.
[196] *Aztag*, 73rd year, 21 August 2000, № 136 (20599).
[197] *Ararad*, 63rd year, 22 August 2000, № 198(17084).
[198] *Zartonk*, 63rd year, 20 August 2000, № 186(17885).
[199] *Ararad*, 63rd year, 22 August 2000, № 198(17084).
[200] *Nayiri*, 8 August 2000, № 130.
[201] *Aztag*, 73rd year, 13 August 2000, № 129(20592).
[202] Ibid, 73rd year, 16 August 2000, № 132(20595).
[203] *Zartonk*, 63rd year, 23 August 2000, № 188(17887).
[204] *Aztag*, 73rd year, 24 August 2000, № 139(20602).
[205] *The Daily Star*, 18 August 2000, № 10265.
[206] Marlin Dick, "Madeyan Shakes up Armenians," *The Daily Star*, 23 August 2000, № 10269.
[207] Ibid.
[208] Ibid.
[209] Marlin Dick "Murr Takes Low Road with Dwarf Jibe Against Armenian Candidate," *The Daily Star*, 24 August 2000, № 10270.
[210] Maha Al Azar, "MP Lahoud Rallies Metn Against Murrs", *The Daily Star*, 25 August 2000.
[211] *Gantch*, 25 August 2000, № 430(286).
[212] Mona Ziade, "Metn Clash of Convictions" *The Daily Star*, 26 August 2000, p. 3.
[213] Ibid.
[214] Ibid.
[215] Tilda Abou Rizk "Dans le Metn Bataille Politique et Tactique Electorale"; *L'Orient-Le Jour*, 26 August 2000, № 9957, p. 4.

[216] *The Daily Star*, 23 August 2000, № 10269.

[217] According to persistent rumours, Varoujan Manoukian had told the Tashnag Party not to use the Armenian Yeghishe Manoukian College at Dbaye as an electoral center. The rumours had it that on election day he had come to the school and had seen his demand had been ignored; the school, whose benefactors were the Manoukian family, was being used as an electoral center. He started to take photographs when two or three party members pushed him into a room locking him up, after confiscating his camera. Later party chiefs heard of the incident and ordered his release with apologies. However it was assumed by some that this incident led his brother, the well known benefactor Vatche Manoukian to severe his links with the party and affiliate organizations.

[218] Al Wikala al-Wataniya Lil Aelem, "Nataij Rassmiya Li Intikhabat Jabal Lubnan Wa Lubnan el Shimali, 31 August 2000.

[219] *L'Orient-Le Jour*, 28 August 2000, № 9958.

[220] Ibid.

[221] Ibid.

[222] Mona Ziade, "Political Battle 'Par Excellence' in Metn. Rhetoric Fuels Violence in Bourj Hammoud," *The Daily Star*, 23 August 2000, № 10269.

[223] *The Daily Star*, 28 August 2000,

[224] *L'Orient-Le Jour*, 28 August 2000, № 9958.

[225] *L'Orient-Le Jour*, 29 August 2000, № 9959.

[226] *Aztag*, 73rd year, 29 August 2000, № 143(20606).

[227] *L'Orient-Le Jour*, 29 August 2000, № 9959.

[228] *The Daily Star*, 31 August 2000.

[229] *Aztag*, 73rd year, 28 August 2000, № 142(20605).

[230] Ibid, 73rd year, 29 August 2000, № 143(20606).

[231] *Ararad*, 63rd year, 29 August 2000, № 204(17090).

[232] Ibid, 63rd year, 30 August 2000, № 205(17091).

[233] *Gantch*, 27 September 2000, № 431(287) as translated from *Safir*, 29 August 2000.

[234] *Zartonk*, 63rd year, 31 August 2000, № 194(17893).

[235] *Gantch*, 9 September 2000 № 432; *Ardziv*, 8th year, 6 December 2001, № 19-20(187-188), insulting words used included "reptile, snake, sultan of money."

[236] *Aztag*, 73rd year, 31 August 2000, № 145(20608).

[237] *Zartonk*, 63rd year, 1 September 2000, № 196(17895).

[238] Aztag, 73rd year, 28 August 2000, № 142(20605); *Ararad*, 63rd year, 1 September 2000, № 207(17093).

[239] *Zartonk*, 63rd year, 2 September 2000, № 195(17894).

[240] Ibid., 63rd year, 1 September 2000, № 196(17895).

[241] Ibid., 63rd year, 2 September 2000, № 197(17896).

[242] *Gantch*, 2 September 2000, № 431(287).

[243] *Ibid.*

[244] *Ararad*, 63rd year, 3 September 2000, № 209(17095).

[245] *Ibid.*, 63rd year, 20 August 2000, № 197(17083).

[246] *Diar, Safir, Mustaqbal, Nahar* and *Bayrak*, 22 August 2000, as quoted by *Spurk* periodical, Beirut, July-Seprtember 2000, № 7-9, p. 15.

[247] Al Wikala al Wataniya Lil Aelem, "Nataij Rassmiya Li Intikhabat Beirut Wal Junub Wal Biqaa, 5 September 2000.

[248] *L'Orient-Le Jour*, 4 September 2000, № 9964.

[249] *The Daily Star*, 4 September 2000, № 10279.

[250] *Zartonk*, 63rd year, 5 September 2000, № 1995(178984).

[251] *Aztag*, 73rd year, 4 September 2000, № 148(20611).
[252] *Ararad*, 63rd year, 5 September 2000, № 210(17096).
[253] *L'Orient-Le Jour*, 2 September 2000, № 9963.
[254] *Ibid.*, 4 September 2000, № 9964.
[255] *Ibid.*, 28-29 May 2005, № 11376.
[256] *Ibid.*
[257] *Gantch*, 30 September 2000, № 435(291), p. 4.
[258] *Aztag*, 73rd year, 6 September 2000, № 150(20613), gave different figures. In Beirut I 3046 Armenians had voted for the Armenian Unity Front and 253 for Hariri. In Beirut II 1574 Armenians had voted for the Front and 422 for Hariri's list, and in Beirut III 6366 Armenians had voted for the Front and 1405 for Hariri's list. Thus a total of 10986 had voted for the Front (84%) and 2080 for Hariri's lists (16%). *Ararad*, 63rd year, 7 September 2000 gave the same numbers as *Aztag*.
[259] *Aztag*, 73rd year, 4 September 2000, № 148(20611).
[260] Michel Touma, in a post-elections analysis in *L'Orient-Le Jour* (8 September 2000, № 9968) indicated that in the Christian areas of Beirut I, 7107 persons had voted for Dedeyan, out of about 15500 voters. Dedeyan, received more votes than Fleihan, who received most of the Sunni votes. Dedeyan continued his activities in the Armenian Bloc after his defeat and on 2 October visited PM Hoss and complained about the «confessional and sectarian atmosphere prevalent in the country not favorable to anyone».
[261] Marlin Dick, "The Armenian Party Machines Swing into Action again," *The Daily Star*, 4 September 2000, No 10279.
[262] *Zartonk*, 63rd year, 6 September 2000, № 200(17899).
[263] Ibid.
[264] *Ararad*, 63rd year, 10 September 2000, № 215(17101).
[265] *Zartonk*, 63rd year, 10 September 2000, № 204(17903).
[266] Ibid., 63rd year, 14 September 2000, № 207(17906).
[267] *Ibid.*, 63rd year, 7 September 2000, indicated that Mr. and Mrs. Haygaz Yardemian, who had supported the Armenian Unity Front, donated 100.000LL to *Zartonk*, congratulating their brother in law and brother Hagop Kassardjian.
[268] *Zartonk*, 63rd year, 8 September 2000, № 202(17901).
[269] *L'Orient-Le Jour*, 5 September 2000, № 9965.
[270] Al Wikala al Wataniya Lil Aelem, "Nataij Rassmiya Li Intikhabat Beirut Wal Janub Wal Biqaa, 5 September 2000.
[271] *Aztag*, 73rd year, 9 September 2000, № 153(20616); *Ararad*, 63rd year, 10 September 2000, № 215(17101); *Zartonk*, 63rd year 10 September 2000, № 204(17903).
[272] *Aztag*, 73rd year, 12 September 2000, № 155(20618).
[273] *Zartonk*, 63rd year, 14 September 2000, № 207(17906).
[274] Ibid.
[275] *Ararad*, 63rd year, 14 September 2000, № 218(17104).
[276] *Aztag*, 73rd year, 15 September 2000, № 158(20621).
[277] *Gantch*, 16 September 2000, № 433(289).
[278] *Ararad*, 63rd year, 17 September 2000, № 221(17107).
[279] *Aztag*, 73rd year, 27 October 2000, № 194(20657).
[280] Ibid.
[281] *Ararad*, 63rd year, 28 October 2000, № 256(17142).
[282] Ibid.
[283] *Ararad*, 63rd year, 28 October 2000, № 256(17142).

[284] Ibid.
[285] *Zartonk*, 63rd year 28 October 2000.
[286] Ibid.
[287] *Ararad*, 63rd year, 28 October 2000, № 256(17142).
[288] *Zartonk*, 63rd year 8 November 2000.
[289] *The Daily Star*, 7 November 2000, № 10334.
[290] *Aztag*, 73rd year, 5 December 2000, № 226(20689).
[291] *Zartonk*, 63rd year 7 December 2000.
[292] *Aztag*, 73rd year, 23 December 2000, № 242(20705).
[293] *Aztag*, 74th year, 2 February 2001, № 270(20732).
Dr. Hovnanian said the second Armenian minister would be appointed soon (*L'Orient-Le Jour*, 10 February 2001, № 10094). There was persistent talk at the beginning of February 2001, that the industrialist Garbis Markarian, vice-president of the AGBU District Council of Lebanon, would be appointed as the second minster, but this did not materialize.
[294] *Zartonk*, 64th year, 1 June 2001, № 118(18108).
[295] Ibid., 63rd year, 20 November 2000.
[296] Ibid.
[297] Ibid., 63rd year, 22 November 2000.
[298] *Aztag*, 73rd year, 7 February 2001, № 274(20736).
[299] *Zartonk*, 63rd year, 16 November 2000, as translated from *Safir*, 15 November 2000.
[300] *Aztag*, 74th year, 19 April 2001; *Ararad*, 64th year, 19 April 2001; *Zartonk*, 64th year 19 April 2001.
[301] *Aztag*, 75th year, 20 May 2002.
[302] *Zartonk*, 65th year, 29 May 2002, № 113(18397).
[303] Ibid., 65th year, 28 May 2002, № 112(18396).
[304] *Gantch*, 25 May 2002, No 520 (376).
[305] Ibid.
[306] *Zartonk*, 65th year, 2 June 2002, № 117(18401).
[307] *L'Orient-Le Jour*, 3 June 2002, № 10481.
[308] Ibid.
[309] Ibid.
[310] *Nahar*, Beirut, 5 June 2002, p. 5.

ՀԱՑՈՑ ՄԱՄԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԷՄԻԼ ԼԱՀՈՒՏԻ (1998-2007) ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ (Ա.) (ԱՄՓՈՓՈՒՄ)

ՋԱՒԷՆ ՄՍԸՐԼԵԱՆ

Հեղինակը հիմնուելով ժամանակակից լիբանանահայ, առաւել՝ Լիբանանի մէջ լոյս տեսնող մի քանի ֆրանսատառ եւ անգլիատառ թերթերու, հայկական թերթերու մէջ թարգմանաբար տրուած տեղեկութիւններու, ինչպէս նաեւ անձնական հաղորդակցութեամբ կատարուած տեղեկութիւններու վրայ, հանգամանօրէն կը ներկայացնէ Լիբանանի 2000 թուականի խորհրդարանական ընտրութիւններուն հայկական մասնակցութիւնը Պէյրութի, Հիւսիսային Մեթնի եւ Զահլէի ընտրաշրջաններուն մէջ։

1996ին, այս կամ այն ձեւով հնարաւոր եղած էր որ ազգային երեք կուսակցութիւնները մասնակցին ընտրութեանց միասնական թեկնածուներով Պէյրութի մէջ, վարչապետ Հարիրիի ցանկին վրայ։ 2000ին այդ հնարաւոր չեղաւ։ Հարիրի ընդդիմադիր էր։ ՌԱԿը եւ ՍԴՀԿի երեսփոխանին կողմնակիցներն ու անկուսակցականներ մտան Հարիրիի ցանկին մէջ, իսկ ՀԲ Դաշնակցութեան կուսակցականներով եւ անկուսակցականներով կազմած «Միասնականութեան Ցանկ»ը միացաւ վարչապետ Սելիմ Հոսսին, որուն մասնակից էր նաեւ ՍԴՀԿ կեդրոնական Վարչութիւնը։ Հարիրի եւ իր հայ ցանկակիցները՝ Յակոբ Գասարճեան, Սերժ Թուրսարգիսեան, Եղիա Ճէրէճեան եւ Ժան Օղասափեան յաջողեցան Պէյրութի մէջ։ Միշէլ Մուրի ցանկին վրայ ՀԲ Դաշնակցութեան սեփական թեկնածուն՝ Սեպուհ Յովնանեան, յաջողեցաւ Հիւսիսային Մեթնի մէջ, իսկ Իլիաս Սքաֆի ցանկին վրայ ՀՑԴի որդեգրած թեկնածուն՝ Ճորճ Գասարճի, յաջողեցաւ Զահլէի մէջ։

Լիբանանահայ գաղութին մէջ առժամեայ լարուածութիւն մը տիրեցէ ետք ազգային երեք կուսակցութիւնները գանազան առիթներով իրարու հետ կապեր պահեցին եւ Ապրիլ 24ի յատուկ միասնական ձեռնարկներ ալ կազմակերպեցին։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԳԻՃԱՆՔԸ ԳՈՒՐԳԷՆ ՄԱՀԱՐՈՒ ԱՐՁԱԿՈՒՄ

ՍԵՐԳԷՅ ԱՂԱՋԱՆԵԱՆ

Գուրգէն Մահարու գրականութեան մէջ քաղաքական թեմատիկան եղել է ամենախնդրայարոյցը: Նոյնիսկ նրա ինքնատիպ տաղանդով հիացողների համար էլ լրջագոյն հարց է եղել դրան անդրադառնալը, իսկ իր ե՛ւ անձնական, ե՛ւ ստեղծագործական կեանքում՝ ամենաղառը բաժակներից մէկի պատճառը: Իհարկէ, խնդիրն անպայմանօրէն քննելի է՝ անկախ նրանից, թէ որքանով է այն ցաւոտ գրողի համար եւ որքանով բարդ՝ ուսումնասիրողների համար: Միայն թէ պէտք է առաջնորդուել հաւասարակշիռ մօտեցմամբ՝ հարցը չկարեւորելով աւելի, քան այն ինքնին կարեւոր է Մահարու ստեղծագործութեան համար: Հակառակ դէպքում անխուսափելի կը լինի նրա ստեղծագործութեան եւ քաղաքական հայեացքների գնահատականների նոյնացումը: Այսինքն՝ այն կարեւոր հանգամանքի անտեսումը, որ գործ ունենք գեղարուեստի հետ եւ ոչ թէ քաղաքական բովանդակութեան գրականութեան հետ:

Մահարին ճշմարիտ ստեղծագործող է. իմանալով իր տեսակէտի վիճարկելիութիւնը՝ չի քծնել, չի կեղծել, ազնուօրէն անկեղծացել է ընթերցողի առաջ: Դրա համար էլ նրա ներքին ազատութիւնը յաճախ դրսեւորուում է որպէս խոստովանութիւն: Նա իրեն թոյլատրել է ազատութեան այն առաւելագոյնը, որով միայն հնարաւոր էր երգիծել անթոյլատրելի թուացողը, յաղթահարել բարոյական եւ գաղափարական արգելքները: Ունէ՞ր իրաւունք: Այո: Ուրիշ հարց, թէ դրա արդիւնքում ինչ է ստացուել: Մեր պարտքն է հասկանալ նրա ասածը, դրա հոգեբանական, գաղափարական դրդապատճառները, յետոյ նոր միայն գնահատել: Չի կարելի միամտաբար կարծել, թէ նա իր ասելիքը չի կառուցել հասարակական կեանքի գոնէ մի երեսի, կենսական ճշմարտութեան գոնէ մի մասի վրայ, եւ նրա խօսքը այնքան անհիմն է, որ մերժելի է հենց սկզբից: Այլապէս ինքներս կը սխալուենք՝ փորձելով նրա ճշմարտութիւնը խցկել ճշմարտութեան մեր կաղապարի մէջ՝ զրկելով նրան այլ ճշմարտութիւն ասելու իր իրաւունքից:

Մահարու ազգային-քաղաքական հարցադրումները վերաբերում են պատմական սահմանափակ ժամանակահատուածի՝ քսաներորդ դարի սկզբին: Դրանից դուրս անդրադարձները սակաւաթիւ են, առաւելա-

պէս խորհրդանիշների ձեւով։ Դրանք վերաբերում են պատմական անցեալից յայտնի գործիչների կամ ինչ-ինչ իրադարձութիւնների, որոնք գուգադրւում են արդիականութեանը՝ յանուն ազգային ճակատագրի օրինաչափութիւնների ցուցադրման, սեփական ըմբռնումների արտայայտման։ Ուրեմն Մահարու ազգային-քաղաքական գաղափարները գեղարուեստօրէն մարմնաւորւում են հիմնականում սեփական կենսափորձի իմաստաւորումներով։ Ըստ ժամանակագրական յաջորդականութեան հետեւելով գրողի ստեղծագործութիւններին՝ հնարաւոր է ճչտել նրա առաջադրած ազգային-քաղաքական խնդիրները եւ դրանց վերաբերեալ իր տեսակէտները։ Ինչպէս չատ բան, իր կենսափորձի այդ մասն էլ նրա արձակում ներկայանում է առաւելապէս երգիծական գուներանգներով։

Մկրտիչ Արմէնը 1920ականների ալեքսանդրապոլեան գրական մթնոլորտի վերաբերեալ յիշողութիւններում մեզ հետաքրքրող խնդիրներին առնչուող մի դիտարկում ունի. «Մահարին, նախքան իր մեկնելը (Երեւան - Մ.Ա.), Ալեքպոլում հրատարակել էր երկու գիրք։ Առաջինը, 1923 թուին, «1920?-1923!» վերնագրով, որ նշանակում էր, թէ ես 1920 թուին չգիտէի ինչպէս կողմնորոշուել խորհրդային կարգերի հանդէպ, իսկ 1923 թուին կողմնորոշուեցի...»[1]։ Դժուար է ասել՝ սա Արմէնի՞ բացատրութիւնն է, թէ՞ Ալեքսանդրապոլում Մահարու հետ յաճախակի հանդիպումների ու զրոյցների ժամանակ հենց հեղինակից լսածի գրառումը։ Բայց մի բան ակնյայտ ու անվիճելի է. այս տարիներին էր, որ Հայաստանի խորհրդայնացման փաստի առաջ կանգնած իւրաքանչիւրի պէս Մահարին էլ, ուզէր, թէ ոչ, քաղաքական կողմնորոշման ընտրութիւն պիտի կատարէր։ Թէեւ երկրում մնացողի համար, ըստ էութեան, ընտրութեան հնարաւորութիւն չէր էլ թողնուել, բայց ըստ Արմէնի՝ Մահարին ընտրութիւնն արել էր չօգուտ «խորհրդային կարգերի»։ Ինչ խօսք, նկատի ունենալով գրողի չետագայ տարիների «խորհրդային թեմատիկա»յի արձակը, մանաւանդ չափածոն, դժուար չէ գլխի ընկնել, որ այստեղ չի կարող լրջօրէն խօսք լինել քաղաքական աւարտուն համրողջական աշխարհայեացքի մասին։ Մահարին որոնումների դեռ երկար ու տանջալի ճանապարհ ունէր անցնելու թէ՛ գրականութեան մէջ, թէ՛ կեանքում։ Նա չի եղել խորհրդայնացման անցուդարձերի մասնակից, առաւել եւս՝ գաղափարակիրը։ Արմէնի վկայակոչած մահարիական կողմնորոշումն առաւելագոյնը կարող էր խարսխուած լինել մեծ հայրենիքի չնչին ու թշուառ մասի վրայ վերընձիւղուող կեանքի եւ Բ. Հանրապետութեան դեկավարներ Ալեքսանդր Միասնիկեանի (1886-1925) եւ Ադասի Խանջեանի (1901-1936) գործունէութեան առօրեայ իմացութեան փորձի վրայ։

Միւս կողմից այդ նորն էլ լի էր բազմաթիւ հարցականներով, նոր բացուող ճանապարհի տեղին ու անտեղի դժուարութիւններով, որոնցից

գյուխ հանելը հեշտ գործ չէր։ Կարծում ենք՝ աւելի ճիշտ կը լինի Արմէնի վկայութիւնը հասկանալ որպէս Մահարու հակադաշնակցական համոզմունքների եւ կողմնորոշման վերջնական ամրակայում, քան՝ դասակարգային պայքարի գաղափարախօսութեան վրայ խարսխուած քաղաքական համոզմունքի ձեւաւորում։ Իսկ եթէ աւելի հետեւողական լինենք եւ Արմէնի վկայութեանը լրիւ վստահելով՝ այն հասկանանք բառացի, ապա պիտի նկատի ունենանք, որ խօսքն ընդամէնը կողմնորոշման, համակրանքի մասին է եւ ոչ թէ աւարտուն գաղափարական համոզմունքի։

Մահարու քաղաքական հայեացքների ձեւաւորման ընթացքի վերաբերեալ որոշ մանրամասնութիւններ կարող ենք քաղել իր իսկ արձակից։ Երիտասարդութեան Սեմին (1952-55) վէպի 35րդ գլխում («Պոկուած էջեր Յուշատետրից») կայ խոստովանութեան հաւասար մի գրառում. «Այսպէս թէ այնպէս, հարկաւոր է տեսակէտ ունենալ, քաղաքական այս կամ այն ուղղութիւն եւ ճանապարհ, իսկ մենք (*որբերը - Մ.Ա.*) զուրկ ենք դրանցից։ Մի բան պարզ է,- մենք հակադաշնակցական ենք, ուրեմն, անկցի՝ դաշնակցութիւնը, մնացածը կը պարզուի» (2, 376)[2]։ Այս մտորումը Ռուսաստանում 1917ին յաղթանակած բուրժուա-դեմոկրատական յեղափոխութեան լուրն ստանալուց յետոյ է գրառուել։ Տեսակէտ ունենալու անհրաժեշտութեան գիտակցումը յանգեցնում է «Ռամկավար աշակերտական միութեան» (2, 382) անդամակցելուն։ Կողմնորոշիչ հանգամանքները երկուսն էին՝ այդ կուսակցութեան դեկավարների «կատաղի հակադաշնակցականներ» (2, 382) լինելը եւ այն, որ ... «ռամկավարների «Հայրենիք» տպարանը երկրորդ որբանոցից տասնհինգ քայլի վրայ է։ Մենք յաճախ գնում ենք տպարան, Սիրարփուն եւ Զարիկին տեսնելու յոյսով» (2,382)։

Քաղաքական կողմնորոշման չարժառիթների «լրջութիւնն» առաւել քան խօսուն է։ Մի բանում միայն անսասան լինելու չափ վճռական են. իրենք հակադաշնակցական են։ Իհարկէ, անլուրջ կը լինի պնդելը, թէ նրանց այդ համոզմունքը պատճառաբանուած է դաշնակցական գաղափարախօսութեան իմացութեամբ, դրանցից տարբեր համոզմունքների կայացածութեամբ։ Այդպիսի վճռականութիւնը մի հիմք ունէր միայն. աշխարհն իրենց համար նոր-նոր յայտնագործող պատանիների դառը կենսափորձը։

Որբանոցային «քաղաքական» խմորումների նկարագրութիւնները (օրինակ՝ «Մեծ Գործի Սկիզբը» (1934) պատմուածքը եւն.), որոնց ընթացքում յիշատակւում են նաեւ բոլշեւիկները, դարձեալ լրջօրէն որեւէ բան չեն նշանակում։ Այս ամէնը նշանակալի են թերեւս միայն մի առումով. Մահարին եւ իր հասակակիցները սկսում են հասունանալ հասարակական եւ քաղաքական անցուդարձով հետաքրքրուելու, դրանց նկատմամբ ուշադիր լինելու չափով։

Երիտասարդութեան Մեմին վիպակի վերը յիշատակուած հատուածից մի քանի էջ յետոյ Մահարին առաջին անգամ հնչեցնում է իր բացայայտ համակրական պաթետիկ խօսքը բոլշեւիկների հասցէին. «Քաղաքից դուրս, մոայլ բանտի անարեւ կամարներում, բանտարկուած բոլշեւիկների հերոսական բազուկներին հնչում էին ժանգոտ շղթաները. Էր առաւօտ» (2,399):

Հասկանալի է, որ սա արդէն ոչ թէ հերոսի (այսինքն՝ Մահարու) այդ տարիների (1918-20) գիտակցուած քաղաքական համակրանքի, այլ վիպակի գրութեան ժամանակ (1952-55) հեղինակի յետադարձ հայեացքով գնահատականն է ոչ-հեռու անցեալի քաղաքական անցուդարձին:

Մահարու եռապատումից ամէնից շատ Երիտասարդութեան Մեմին վիպակում է, որ հերոսի կենսապատումը չփման եզրեր է գտնում հասարակական-ազգային կեանքի հետ: Ինչ խօսք, որ տարիքային հասունութեան եւ կենսափորձի հետ ձեւաւորւում է նաեւ համարժէք վերաբերմունք քաղաքական ուժերի նկատմամբ: Իհարկէ այն դեռ չի կարող քաղաքական-գաղափարական հիմնաւոր համոզմունք լինել, որովհետեւ դիխաւորապէս դրսեւորւում է առօրեայ փորձի հիմքով, գգալիօրէն նաեւ գգացմունքային է, բայց, բոլոր դէպքերում, վերաբերմունք է, ինչպէս եւ է Ռամկավար աշակերտական միութիւնից դուրս գալը «բազմաթիւ «նկատի ունենալով»ներով» (2, 407):

Ազգային-քաղաքական կեանքի իրողութիւնների վերաբերեալ Մահարու պատանի հերոսի վերը նշուած ընկալումները վերաբերում են Հայաստանի մինչխորհրդայնացման շրջանին: Հետաքրքիր է, որ գրողի 20ականների մի շարք արձակ գործերում էլ նոյն անորոշութիւնն ու հպանցիկութիւնն է գերիշխում: «Անգոյն Մարդիկ կամ Մի Ջոյգ Կօշիկների Պատմութիւնը» (1923) պատմուածքի պայմանականութիւնը (կօշիկներն են պատմում յեղափոխական անցուդարձի մասին) կարծես թէ յատուկ մտածուած է հենց այն պատճառով, որ գրողը չէր կարող աւելի լուրջ հերոսով ներկայացնել յեղափոխական թոհուբոհի պատկերներ, որովհետեւ չունէր դրա ոչ միայն կենսափորձը, այլ նաեւ ամբողջական պատկերացում նոր հասարակութեան վերաբերեալ: Իսկ երբ կօշիկներն են պատմում, ապա հոգեբանօրէն կարելի է հանդուրժել ներկայացուածի հպանցիկութիւնը: Նոյնիսկ 1930-31ին գրուած «Ձիգզագներում» ստեղծագործութեան մէջ էլ քաղաքական գաղափարների եւ պայքարի պատկերներում գերիշխողը մակերեսայնութիւնն է, անորոշութիւնը, կերպարների ծանօթ տարրերակը (խմբապետի եւ տանուտիրոջ դէմ ըմբոստանում է ռազմաճակատում կռուած գինուորը):

Մահարու քաղաքական հայեացքների խնդիրը մանրակրկիտ եւ ողջ ժառանգութեան ուսումնասիրութեամբ լուծելի հարց է[3]*: Դա այս յօդուածի առանցքային նպատակադրումը չէ: Սակայն Մահարու աշխարհայեացքին այս հպանցիկ անդրադարձն աւելորդ չէ: Նրա երգիծանքը*

յաճախ վերաբերում է հենց քաղաքական անցուդարձին, հերոսների գաղափարական կողմնորոշումներին, կուսակցական վարքագծին:

Մահարու քաղաքական երգիծանքի առանցքային գաղափարներից մեկն այն է, որ հայ ժողովրդի համար ճակատագրական Ի. դարի սկզբում յուրջ սխալ էր միջկուսակցական պայքար մղելը, կուսակցականութիւնը համազգային չահից գերակայելը: Այն յանգեցնում էր անհանդուրժողականութեան, մասնատման՝ ժողովրդին թշնամու առաջ անպաշտպան ու ջլատուած թողնելուն: Սա միայն Մահարու դառը փորձից ծնուած եզրակացութիւն չէր: Ի. դարասկզբի ճակատագրական ժամանակաշրջանը գգալիօրէն պայմանաւորուած էր կուսակցութիւնների գործունէութեամբ: Այդ ժամանակաշրջանի հայութեան ձեռքբերումների եւ կորուստների ամփոփումները տուեալ ժամանակի երեւելի ազգային գործիչների յետադարձ հայեացքով տրուած գնահատականներն են: Ցիշարժան է Գարեգին Նժդեհի կարծիքը: Այն գգալիօրէն կտրուկ է, առարկութիւն չհանդուրժող, բայց իհարկէ վստահելի՝ իր կենսափորձային ճչմարտացիութեամբ: «Մի ամբողջ յիսնամեակ է, ինչ հայութիւնը միջկուսակցական պայքարներով, ներքին ճակատի վրայ, սպառում է իր ուժերը եւ բաց աչքով ծառայում իր գոյութեան թշնամիներին: Մեր վերջին կիսադարն եկաւ հաստատելու, որ հայ մարդը, ընդհանրապէս, ատակ չէ կուսակցականանալու՝ առանց չարիք դառնալու իր ժողովրդի համար...

Ծոյելով կուսակցական պատկանելիութեան զգացումը՝ կուսակցութիւնները իրենց հետեւորդների մէջ տկարացրին ցեղ-ազգային գիտակցութիւնը...

Իսկ մեր ժողովրդի թուական տկարութիւնը, մեր հայրենիքի աշխարհագրական դիրքը եւ երէկուայ մեր Եղեռնը կը բաւեն գիտակցելու, որ հայը կուսակցականանալու նաեւ իրաւունք չունի»[4]:

Մահարու ասելիքը եւս այս դատողութիւնների սահմաններում է՝ միայն մի կարեւոր տարբերութեամբ: Եթէ Նժդեհի խօսքը վերաբերում է հայկական միջավայրում ընդհանրապէս կուսակցականութեան բացասական հետեւանքներին, ապա Մահարին այդ հետեւանքները քննարկում է յատկապէս Դաշնակցութեան եւ գործիչների օրինակով: Բայց չի կարելի կարծել, թէ նրա բացասական վերաբերմունքը տարածւում էր միայն Դաշնակցութեան եւ որոշ չափով էլ ազգային աւանդական միւս կուսակցութիւնների վրայ: 1919ին Մահարին, բոլորովին էլ ոգեւորուած չլինելով ազգային կուսակցութիւնների եւ դաշնակիցների գործունէութեամբ, «Մենք Սոցիալիստնե՛ր ենք...» հրապարակախօսական յօդուածում տագնապալի մտահոգութեամբ էր գրում հայութեան հասնող քաղաքական նոր ալիքի մասին, որը կարող էր աղէտ լինել հայ ժողովրդի համար: «Ընաւ կը մտածե՞ն այդ համամարդկութեան մասին մտածող պարոնները, որ եթէ յանկարծ դաշնակիցներն հեռանան մեզմէ, մենք

մարդկային ազգերու պատմութեան մէջ աղօտ յիշատակ մը պիտի ըլլանք եւ բոլոր այլ ազգի պրոլետարներն իրենց թերթերու մէջ անկիւն մը պիտի շնորհեն մեր ազգի բնաջնջման մասին պատմութեան էջերը արիւնելու, այն պրոլետարները, յանուն որոնց մենք կը շեփորենք այժմ, սակայն պայմանով՝ որ մեր որոտները միայն մեր ականջները խլացնելու կարող ըլլան»[5]: *Ակնյայտ է, որ Մահարին յեղափոխականութեան, Հայաստանում քաղաքական իշխանութեան հնարաւոր փոփոխութեան հեռանկարի մէջ ազգի մնացորդի գոյատեւմանը լուրջ սպառնալիք է տեսել: Այլ կերպ ասած՝ ակնյայտ է, որ նա 1919ի այս գրառմամբ քննադատելի, բայց ծանօթ իշխանութիւնն ու իրավիճակը նախընտրել է անխմանալի անծանօթից:*

Ազգի պառակտուածութեան եւ միջկուսակցական տարաձայնութիւնների բացասական հետեւանքների վերաբերեալ Մահարին իր տեսակէտի այլաբանական մարմնաւորումը՝ որպէս մանկական խաղ, տուել է դեռեւս Մանկութիւն (1928) *վիպակի «Հասարակական Աշխատանք» գլխում: ...Վանեցի 8-10 տարեկան երեխաների առօրեան գգալիօրէն տարբեր է այդ տարիքին բնորոշ կենցաղից: Նրանց կրքոտ զրոյցները, դերային բաժանումներով խաղերը վերածւում են իրենց տարիքի առումով լուրջ բախումների, յարաբերութիւնների պարզաբանումների: Այդ ընթացքում վկայակոչւում են ազգային գործիչների, կուսակցութիւնների անունները, մեծավարի հնչեցւում քաղաքական կարգախօս («Յարդել թուրքերին եւ ստեղծել իսկական Հայաստան») եւն.: Այսինքն՝ Վանի մանուկները գրկուել էին իրենց տարիքին բնորոշ անգիտութեամբ երջանիկ կեցութեան հնարաւորութիւնից: Մահարին դրանում եւ յետագայ իրադարձութիւններում տեսնում է չկայացած մանկութեան ողբերգութիւնը: Ասես չբաւարարուելով գեղարուեստական պատկերով աստուածով, Մահարին գլուխն աւարտում է հեղինակային խօսքով՝ հակադրելով սովետական երկրի մանուկների անհոգ ու երջանիկ կեցութիւնը.* «... Հիմա ես էլ եմ ապրում ձեզ հետ եւ կրում ձեր պայծառ իմաստութիւնը, չնայած, որ իմ մանկութեան օրերին ինձ վիճակուած էր ապրել դեղին զառանցանքում եւ շնչել թունաւոր խաշխաշներ» (2, 24): *Ազգային մասնատուածութեան բացասական հետեւանքների վերաբերեալ իր ասածի ճշմարտացիութիւնն ապացուցելու համար Մահարին բերում է հակառակը՝ ազգային միասնութեան բարիք լինելն ապացուցող օրինակ.* «Եւ ի՞նչ էր Սարդարապատը, եթէ ոչ անծայրածիր, խաւար գիշերում փայլատակող մի արեւ, որը մի աւելորդ անգամ ցոյց տուեց աշխարհին, թէ ինչի է ընդունակ միասնական հայը» (5,9): *Ազգի գոյութեանն սպառնացող վտանգի առաջ համախումբ հայութիւնը, ինչպէս Վանի պաշտպանութեան օրերին, անհնարին թուացողն է իրականացրել, որովհետեւ բոլորը գիտակցել են, որ ազգային չահը վեր է ցանկացած կուսակցականութիւնից:*

Ինչպէս նախորդ՝ Մանկութիւն վիպակից բերուած հատուածում, այդպէս էլ այստեղ՝ Երիտասարդութիւն վէպից բերուող «Խառն Օրեր» հատուածում (1969) Մահարին իր մտորումները բերում-հասցնում է սովետական իրականութեանը: Թէեւ դիտարկուող վէպը անաւարտ է եւ հնարաւոր չէ ենթադրել, թէ ինչպիսին կը լինէր նրա վերջնական տարբերակը, յամենայնդէպս ուշադրութեան արժանի է Սարդարապատի մասին ասուած մտքին յաջորդող հետեւեալ հատուածը. «Ուրեմն փա՛ռք, հազա՛ր փառք արեան ու զրկանքի այն տարիներին, որոնք իրենց ծանրութեամբ փորձութեան ենթարկեցին մեր խոշտանգուած ժողովրդի կամքի ու լինելիութեան ամրութիւնը: Երբ ծագեց արեւը հիւսիսից, այդ փրկարար, ազատարար արարիչ արեւը հաւասարապէս տաքացրեց մեզ հետ՝ նաեւ թշնամուն: Գործն այնպէս էր դրուած, որ հայկական պրոլետարիատը, միացած բուրք պրոլետարներին, համայն աշխարհի պրոլետարների հետ՝ կանգնէին պիտի ուս ուսի եւ մի հարուածով համաշխարհային բուրժուաների եւ կալուածատէրերի հայրիկները անիծէին: Ահա թէ ինչու..» (5, 9-10):

Առաջին նախադասութիւնը հակասական է թւում, եւ չի համոզում կշէռքի նժարներին դրուած համեմատելիների (կորուստների ահագնութիւն եւ ձեռքբերում) հաւասարարժէքութեամբ: Շարունակութիւնը կարծես համաշխարհային յեղափոխութեան բոլշեւիկեան գաղափարախօսութեան ու այդ նպատակով իրականացուած գործունէութեան երգիծանքն է: Սակայն խօսքին բնորոշ է նախ մահարիական թերասացութիւնը, հպանցիկութիւնը եւ յետոյ՝ ամենակարեւորը՝ այն ոչ մի կերպ չի համադրւում նախորդ նախադասութեան մտքին. «Երբ ծագեց արեւը հիւսիսից, այդ փրկարար, ազատարար արարիչ արեւը հաւասարապէս տաքացրեց մեզ հետ նաեւ թշնամուն»:

Բառացի տեքստի հակասականութիւնը թոյլ չի տալիս վստահարար պնդել, թէ ինչն է հեղինակի ասելիքը: Սակայն մեր օրերում այն կարող է ընկալուել իբրեւ բանուոր դասակարգի միջազգային համերաշխութեան եւ համաշխարհային յեղափոխութեան հասցէին կիսարերան ասուած հեգնանք:

Մահարու քաղաքական երգիծանքի ամենասկզբունքային մասը վերաբերում է Դաշնակցութեան գործունէութեանը եւ Առաջին Հանրապետութեան յատկապէս արտաքին քաղաքականութեանը, միջազգային հեղինակութեանը: Այս-այն հզօր երկրի փէշերից կախուած, խեղճ ու խնդրարկու, ծուռվիզ արհամարհուածի մի պատկերով է անձնաւորուած Հայաստանը Լորդ Քերզոնի գրոյցի տեսարանում (2,387-388): Դրան յաջորդող գլուխը («Արարատեան Միֆի կամ Ապագայ Պատմաբանի Համար Հում Նիւթեր») ծայրէծայր ծաղրն է դաշնակցական գաղափարախօսութեան, որը ներկայացւում է որպէս պաթետիկ ճամարտակութիւն, կեանքից կտրուած անլրջութիւն: Աւելի ընդգծելու համար

դաշնակցականների երկդիմի գործունէութիւնը՝ գրողը մի քանի էջում ներկայացնում է Դաշնակն ե՛ւ դրսում, ե՛ւ տանը: Հանրապետութեան միֆական պատկերն ամբողջականանում է արտաքին գործոց նախարարի պատրանքով: Մահարու ստեղծած պատկերում ինչը որ միֆ է՝ պատրանքային է, իսկ ինչն իրողութիւն է՝ հակամիֆ է, այդ միֆի քայքայումը: Այդ միֆական պատրանքի քայքայման միջազգային դրսեւորումը հայկական հարցի նկատմամբ եւրոպական երկրների հիասթափեցնող ու քամահրոտ վերաբերմունքի գեղարուեստական խօսուն պատկերն է. «Ծող հայերը ինքնուրոյն կերպով իրենց գլխի ճարը տեսնեն, ծլեն, ծաղկեն, բարգաւաճեն եւ ապացուցեն, որ արժանի են մեծ պետութիւնների ուշադրութեանը...,- կամ,- Ջանըմ, հասկացանք, թուրքերը բարբարոս են, արիւնռուշտ են, սինլքոր են, դրա համար պիտի գնալ եւ կոտորուե՞լ»: Ինչ մնում է հայերի նկատմամբ Եւրոպայի վերաբերմունքին, ապա՝ «մենք խորապէս կը յարգենք հայ ժողովուրդը» (2, 403): Ասել է թէ՝ վերաբերմունք էք ակնկալում, խնդրեմ, եւ ոչինչ աւելի. բարի եղէք երջանկանալ այդքանով: Երկրի ու ժողովրդի համար ցաւով լի երգիծանք է սա, որի մէջ եթէ նոյնիսկ ծայրայեղութիւն կայ, ապա միայն Հանրապետութեան վարիչների անճարակութիւնից ու կորուստների ահագնութիւնից: «Էջեր Ցուշատետրից» գլուխը նախորդի շարունակութիւնն է, որը կարծես մտածուած է յանուն նրա, որ ուժեղացնի ու հիմնաւոր դարձնի երգիծանքը փաստական նիւթով: Դրանք դաշնակցական կառավարութեան դիւանագիտական ձախողումների եւ տարածքային կորուստների համառօտ փաստագրումներն են: Այս մթնոլորտում յոյս ներշնչողը Եղիչէ Չարենցն է, Ազատի Խանջեանը, իսկ փրկութիւնը՝ Քանաքեռի բարձունքից իջած «ձիաւոր կարմիրբանակայինները» (2, 410): 1919ի «Մենք Սոցիալիստնե՛ր ենք...» հրապարակախօսական յօդուածից ժամանակներ էին անցել եւ Մահարին կատարել էր իր քաղաքական ընտրութիւնը:

Ստեղծագործութեան կառուցուածքի առումով անհրաժեշտ է նկատել հետեւեալը: Երիտասարդութեան Մեմին վիպակի վերջին երկու գլուխներում բոլոր այն կտորները, որոնք կենսագրական, պատմական անցուդարձ են ներկայացնում, փաստագրական պատումի բաղադրիչներ են՝ միաճոյլ ու համոզիչ, հերոսի տարիքի ու կենսափորձի առումով: Միւս հատուածները, որոնք դաշնակցական կառավարութեան ներքին ու միջազգային գործունէութեան երգիծանքն են, ակնյայտօրէն յետագայի, վիպակի գրութեան ժամանակների (1952-55) հեղինակի վերաբերմունքն ու յետադարձ հայեացքով գնահատականներն են:

Այրուող Այգեստաններ (1935-64) վէպը Մահարու քաղաքական երգիծանքի առանցքային ստեղծագործութիւնն է: Հայութեան մի հատուածի ամէնօրեայ կեցութեան, ազգային նկարագրի ու ճակատագրական անցեալի համապատկերներում դրսեւորուեցին գրողի քաղաքական

երգիծանքի ոյժն ու թուլութիւնը։ Թէեւ ստեղծագործութիւնն արդէն եղած-անցածին ուղղուած յետադարձ հայեացքի արդիւնք էր, բայց առաջադրած քաղաքական խնդիրների՝ Արեւմտահայաստանի, Մեծ Եղեռնի եւ այլ հարցերի չլուծուածութեամբ, վէպը մշտապէս ընկալուելու է իրբեւ ժամանակակից պրոբլեմատիկայի ստեղծագործութիւն։

Վէպում Մահարու քաղաքական երգիծանքը դրսեւորւում է գեղարուեստական տարբեր միջոցներով՝ բառ-բնութագրերից մինչեւ ծաւալուն պատկերներ։ Բառի դիպուկ եւ յանկարծակի գործածութեան իր վարպետութիւնն արձակագիրը հմտօրէն գործադրում է նաեւ երգիծելու նպատակով։ Բնորոշ օրինակ է տասներորդ ասքում Օհանէս աղայի եւ Արամի հանդիպման ու զրոյցի տեսարանը։ Օհանէսի համար պահը յղի է ողբերգական հետեւանքներով։ Թուրք խորամանկ ոստիկանապետը «բարեկամական» այցով պատուել է այս երեւելի վանեցուն։ Սա էլ յանկարծ գլխի է ընկնում, թէ նման այցելութիւններն ինչպէս են իմաստաւորում դաշնակցական կասկածամիտ առաջնորդները։ Եւ ահա խուճապահար Օհանէս աղան յայտնուել է Արամի զբաղեցրած բնակարանում եւ փորձում է բացատրել, որ թուրքական իշխանութիւններին իր մատուցած ծառայութիւնների համար չէ, որ ինքն արժանացել է ոստիկանապետի ուշադրութեանը։ Հոգեբանական իրադրութիւնը յարաբերուող իւրաքանչիւր կողմի համար միանգամայն այլ բովանդակութեամբ է իմաստաւորւում։ Օհանէս աղան գլուխը կորցրել է։ Վախից ու գայթոյթից ինքնամոռացութեան հասած՝ Արամի երեսին չպրտում է խօսքեր, որոնք այլ հանգամանքներում երբեք չէր ասի. այլեւս ոչինչ չունի կորցնելու։ Մինչդեռ Արամի աչքում անմեղութիւնն ապացուցելու համար իրեն կտրատող այս վանեցին ընդամէնը... «անկատար նահատակ» է, իսկ նոյն հանգամանքների արդէն գոհ վանեցիները՝ «անցեալ կատարեալ նահատակներ»[6]։

Պատկերի երգիծանքն աւելի է թանձրանում իրադրութիւնը գնահատող երկրորդ՝ զուգահեռ հայեացքի մասնակցութեամբ։ Դա գրողինն է։ Օհանէսի հետ զրուցող, երբեմն յետադարձ հայեացքով համանման դէպքերը վերագնահատող եւ իրենց վարքագծի ճշմարտացիութեանը կասկածել սկսած Արամին գրողը «մեծարում է» տարբեր մակդիրներով։ Հակառակ իրենց բառիմաստային լրջութեանը՝ դրանք միանշանակ երգիծական են, որովհետեւ ընդգծուած հակասում են այդ իրադրութեան մէջ դրսեւորուող մարդկային նկարագրին, վարքագծին, քաղաքական գործունէութեանը։ Սա երգիծանքի ամենայայտնի լեզուական միջոցներից մէկն է՝ հեգնանքը (իրոնիա)։ Այսպէս, երբ Արամը մտածում է, թէ ինչպէս պէտք է վարուի «անկատար նահատակ» Օհանէսի հետ եւ չի՞չում «անցեալ կատարեալ նահատակներին», «ազդեցիկ եւ յայտնի քաղաքական գործիչ» է։ Իսկ երբ վերջապէս Օհանէսին ճանապարհում է դռների մէջ ուսը մեծավարի ծեծելով՝ Արամը «մեծ գործիչ» է[7]։

Բառագործածութեան մակարդակում Մահարու քաղաքական երգիծանքի մի առանձնայատկութիւնն էլ երկդիմի, թափանցիկ ակնարկն է: Յարմար տեղում նա Դաշնակցութեան գործունէութիւնը հեգնում է հենց իրենց բառապաշարին բնորոշ արտայայտութիւնների գործածութեամբ: Սակայն նա ընտրում է այնպիսի բառեր ու բառակապակցութիւններ, որոնք ներքին, հպանցիկ մի ակնարկ են պարունակում նաեւ սովետական իրականութեան վերաբերեալ: Կամ էլ գոնէ կարող են ընկալուել այդպէս[8]:

Սակայն հարկ է նկատել նաեւ, որ Մահարու քաղաքական երգիծանքի դրսեւորման այս հնարանքը երբեմն դարձել է չափազանց անգիջում եւ ակնյայտօրէն կծու: Բնորոշ օրինակ է հետեւեալ պատկերը: Երեք նշանաւոր վանեցիները՝ Օհանէս, Սիմոն եւ Փանոս ադաները, համապատասխան մարդկանցից ստանալով «քոլոգներից» պաշտպանուած լինելու երաշխիքներ, աւանակներին բազմած, Քաղաքամէջ-Այգեստան պոդոտայով երջանիկ ու հանդիսաւոր ընթանում են «Ակերան» կազինօ՝ նչելու իրենց անձի եւ կայքի վերագտնուած ապահովութիւնը: Ահա մահարիական պատկերի չարունակութիւնը. «Լուռ են նրանք, եւ այդ լռութիւնն աւելի զգալի եւ հոգեպարար դարձաւ, երբ սկսեց տեղալ խոշոր, բամբակէ փաթիլներով ձիւնը: Սակայն այս լռութիւնը, պէտք է ենթադրել, անտանելի ու խեղդիչ էր ազնուական երկարականջների համար. ապացո՞յց.- ապացոյցը չուշացաւ:

Հայկավանքի հրապարակի վրայ Օհանէս ադայի աւանակը մի քիչ դանդաղեցրեց քայլերը, դունչը յառեց Վարագայ սարի ուղղութեամբ, խոր չունչ քաշեց եւ այնպիսի մի խորապէս ապրուած զռինչ արձակեց, որ Օհանէս ադան մի քանի անգամ բարձրացաւ եւ նորից իջաւ իր գովական աւանակի կռնակին: Ետ չմնացին եւ Սիմոն ու Փանոս ադաների մարդատարները եւ ոչ պակաս կամ քիչ պակաս եռանդով արձագանգեցին նախաձեռնող մարմնին [*ընդգծումը մերն է - Մ.Ա.*]: Քիչ յետոյ նորից լռութիւն էր, եթէ չհաշուենք գանգուլակների ոռնաձիգները, որոնք կարծես տիրող լռութեան մասն էին կազմում»[9]:

Գեղարուեստական պատկերի ենթատեքստը տեսանելի է անչափթեւիօրէն: Լռութիւն, որ անտանելի է ու խեղդիչ ազնուական երկարականջների համար: Ցետոյ դունչը Վարագայ սարին յառած ու գոռացող աւանակ, որը «մեծարւում է» «նախաձեռնող մարմնին» խօսուն արտայայտութեամբ:

Ընդամէնը մէկ էջ յետոյ Մահարին ստեղծել է համանման փոխաբերական մի պատկեր եւս: Այն մտայղացուել է հարրուխ ընկած այծով: Կենցաղային իրադրութեան նկարագիրն արձակագիրը վերահմաստաւորում է քաղաքական երգիծանքի: Հարրուխ ընկած այծը չի գգում մսագործից տարածուող սպանդանոցային արեան հոտը եւ հրու-հնագանդ հետեւում է նրան: Սակայն մի էական տարբերութիւն կայ այս եր-

կու պատկերների միջեւ: Երկրորդն, ի տարբերութիւն առաջինի յագեցած է հեղինակի միջամտութիւն-բացատրութեամբ: Դա նախագգուշացում-մտահոգութիւն է. չլինի՝ հայ ժողովուրդը յայտնուի հարբուխ ընկած այծի վիճակում: Բայց Մահարին լռում է այն մասին, թէ ում նկատի ունի մսագործի խորհրդանիշի ենթատեքստում:

Քաղաքական երգիծանքի գլուխգործոց է «Վասպուրական»ի մեկնութեամբ կառուցուած պատկերը հինգերորդ ասքում: Մեկնիչը Գէորգ վարժապետն է: Մահարու մտայղացած համաչնապատկերի մթնոլորտում տեղանուան ստուգաբանութեան սարկազմն աւելի է ընդգծւում:

Վանայ ալեկոծուող լիճն է, կտուց կղզու ափը: Խաւարամած, անձրեւոդ երկինք, ջրերի վրայ տարուբերուող նաւակ: Միայն տհաճ զգացողութիւն առթող այս պատկերը լրացւում է նաւակի երեք հոգիանոց անձնակազմի խորհրդաւոր, առայժմ անհասկանալի ներկայութեամբ: Նրանք ասես աննպատակ, պարապ բաղադրիչներ են տեսարանի, եւ դրանից է որ մէկը հենց այնպէս, իմիջայլոց ձգում է ժամանակի տարածուած երգերից մէկը.

Ստամբոլը պիտի լինի արեան ծով,
Ամէն կողմից կռիւ կը սկսի շուտով...[10]

Ինչ-որ որոշակիութեամբ լրացւում է պատկերը. ուրեմն ազգային ազատագրութեան նուիրեալներ են: Բայց ժամանակն ասես կանգնել է, ձանձրոյթն՝ անփարատ, որից հենց երգողը՝ Դլրոշ-Շաւարշը, ելք է գտնում՝ դիմելով Գէորգ վարժապետին.

«- Վարժապետ, մէկ էլ ասա, ի՞նչ ասել ի Վասպուրական...»[11]:

Հարցնելու ձեւից երեւում է, որ հարցն առաջին անգամ չէ, որ տրւում է: Ուրեմն պատասխանն ինչ-որ հետաքրքիր բան ունի իր մէջ, որից պատասխանն իմացողը նորից է հարցը տալիս: Մինչդեռ նոյն ձանձրոյթից տեղը չգտնող Գէորգ վարժապետը դրա սիրտը չունի: Նա այդ պահի իր վիճակի համար որպէս երանելի, բայց անհաս դարման, յիշել է վարժարանի տեսուչի հումորաչափ նախատինքը («-Պարոն Գէորգ,... քո տեղը Նեղոս գետն է, պայմանաւ, որ,... Նեղոսը օղի հոսէր, դուն ալ կոկորդիդ ըլլայիր...»[12]) *ու տառապում է: Գինով է, բայց չի յագեցել. իրենից ակնկալուող գիտելիքի դիմաց օղի է ուզում: Խմիչքը, թէեւ նախատինքով* («- Առ, սարխո՛շ Թաքոս, խմի...»[13]), *տրւում է, որովհետեւ առագաստանաւում ձանձրացող երեքն էլ գիտեն, որ օրուայ իրենց առաքելութեան մէջ գլխաւորը վարժապետն է լինելու* («-... Էսօր քո օրն ի...»[14]): *Թէեւ նագ ծախելով, իրենից առնելիքն իրեն տրուածից քիչ համարելով՝ վարժապետը ստուգաբանում է «Վասպուրական» բառը:*

«- *Վասպուրական*,- ցուցամատը սեփական գլխից բարձր բռնած, հատիկ-հատիկ սկսեց խօսել Գէորգ վարժապետը, միջին մեծութեան գաւաթով օղին կուլ տալուց յետոյ, - *Վասպուրական* բարդ բառ է եւ

բաղկացած է երեք մասերէ - *վաս* կը նշանակէ մեծ, մեծամեծ, *պուր* կը նշանակէ որդի, *քեաճ* երկիր, այսպիսով, մենք ունենք Վասպուրական, որ թարգմանի՝ երկիր որդուց մեծամեծաց... Կրցի՞նք հասկցնել: Պարսկերէնն է, չմոռնանք»[15]:

Յետոյ նաեւ լրջացնում է գրուցակցի ծաղրը.

«- Մաշալլահ,- գոռաց Քոլոչօ-Ալէմքալէմեանը,- քեզ վրայ նայելով՝ չի կարելի չհաւատալ. այդ մեծամեծ որդիներից մէկն էլ դու ես, վարժապետ:

- Ես եմ, դու ես, նա է, մենք ենք, դուք էք, նրանք են... հասկցուեցա՞նք»[16]:

Այսպիսի բովանդակութիւն ունի ազգային հպարտութեան պոռթկումը Գէորգ վարժապետի, ով իրեն «գաղափարական մարդ»[17] է համարում եւ եկել է... սպաններու հոգեւորական առաջնորդին ու եկեղեցի թալանելու:

Աղրակը գրաւելու, Ստամբուլն արեան ծով դարձնելու ահաղդորդ երգ-սպառնալիքով այս մարդիկ իրենց ազգի տունն են քանդում: Դա նաեւ արժեգրկումն է այն ազնիւ արժանապատուութեան ու արդար հպարտութեան, որով Մովսէս Խորենացին չարադրում էր ծննդաբանութիւնը հայոց մեծերի: Դաժանութեան չափ անգիջող է Մահարու ստեղծած պատկերի երգիծանքը: Այն երկասյրի սուր է. ողբալի է երկիրը, որի մեծամեծ որդիները սրանց պէսերն են: Հերոսի անհարկի պաթետիկ ոճն աւելի է ընդգծում ազգային սնապարծութեան ողբերգական բովանդակութիւնը՝ անկախ կուսակցականութիւնից, մասնագիտութիւնից ու գրաղմունքից: Կարծում ենք՝ պատկերի ամբողջականացման առումով ոչ-պակաս կարեւոր է եւ հետեւեալ հոգեբանական հանգամանքը: Մահարին ակնյայտօրէն դիմել է իր հերոսին նոյն հերոսի բերանում դրուած խօսքով ոչնչացնելու հնարանքին: Նախորդ էջերում արդէն աւարտուն ու կայացած գեղարուեստական փաստ է, որ վարժապետ Գէորգը հոգին եւ մարմինը սատանային ծառայեցնելուն պատրաստ չարիք է: Նրա կեանքի մնացեալն ընդամէնը դրա հաստատումն է: Նոյնիսկ գողման առանձին բռնկումներն էլ հենց դա են ապացուցում, նաեւ այն, որ ինքը գիտակցում է իր չարիք, ինքն իր ու միւսների գլխին պատուհաս լինելը: Համաշխարհային գրականութիւնը լի է հզօր, ինքնատիպ բացասական կերպարներով: Բայց Մահարու վարժապետը եզակիներից է երգիծականի եւ ողբերգականի համադրութեամբ, սեփական ոչնչութիւնը գիտակցողի եւ ամէն պահ էժանը, ցածրը, մարդկային ծախու վարքն ու էութիւնը բարձրարժէք ապրանքի տեղ վաճառելու, ուրիշների վզին փաթաթելու մեքենայութիւններով: Կերպարը ողբերգական չէ, բայց մարմնաւորում է ազգային ողբերգութեան պատճառներից մէկը:

Ահա այս հերոսի բերանում Մահարին դնում է գնահատանքի անեբեւակայելի պատասխանատուութիւն եւ միայն անչափելի վաստակով հիմնաւորուած իրաւունք ենթադրող մի խօսք՝ «Վասպուրական՝ երկիր որդուց մեծամեծաց»։ Ինքն ինչ էր, որ իր գնահատանքն էլ արժէք ունենար։ Իր համար մեծամեծ կարող էին լինել իր չափ ու կշռի ոչնչութիւնները։ Իր թուարկումը («- Ես եմ, դու ես, նա է, մենք ենք...») դրա ապացոյցն է։ Ինչ խօսք, արձակագիրը հրաշալի գիտէր, որ Վասպուրականն իհարկէ մեծամեծ որդիների երկիր է եղել։ Նրա երգիծանքը տարածւում է ոչ թէ իրական արժէքների, այլ այս թշուառ վարժապետի, նրա երեւակայած երկրի ու գաւակների վրայ։ Խօսքը ոչնչացնում է իրեն յուրջ չվերաբերուող, արժեգրկող, օգտագործելու համար համարժէք լրջութիւնից եւ արժանապատուութիւնից զուրկ հերոսին։ Միայն թէ այստեղ Մահարին, ի տարբերութիւն Զարենցի, հերոսի խօսքը կառուցել է ոչ թէ «պաթետիկ հեգնանքի»[18] (Մագութի Համօ), այլ պաթետիկ սարկազմի չափանիշով։

«Վասպուրական» բառին Մահարին «հանգիստ չի թողնում»։ Եթէ Գէորգ վարժապետի խօսքում, Մահարին դա օգտագործում է քաղաքական սարկազմի իմաստաւորումով, ապա Ակրուող Ակգեստաններ վէպի տասնհինգերորդ ասքի կառոյցում այն նորից հանդէս է գալիս էականօրէն տարբեր ընկալումով։ Քաղաքի կենտրոնները, բնակիչների ոչ-միանշանակ, յաճախ ծիսական բնոյթ ունեցող յարաբերութիւնները նկարագրելիս արձակագիրը մի քանի անգամ բնաբանի կամ կրկներգի պէս մէջ է բերում «Վասպուրական» բառը։ Սակայն այս անգամ այդ յիշատակումները քաղաքական բովանդակութիւնից զուրկ են։ Նա առանձնակի հիացումով է յիշում ու թուարկում բնաշխարհի, քաղաքի գեղեցկութիւնները, բնակիչների վարք ու կենցաղում բարձրն ու ծիծաղելին, անցեալի փառքին վկայ պատմական յուշարձանները, Վասպուրականի մեծամեծերին։ Այս կտորներում արդէն «Վասպուրական»ի իւրաքանչիւր յիշատակումը հեղինակի անչար ժպիտի եւ հիացումի, հպարտութեան դրսեւորում է։ Ըստ էութեան՝ այս մենախօսութիւն-նկարագրութիւնները մտայղացուել են ի հակակշիռ վարժապետի խորհրդանշած աշխարհի։

Կարծում ենք՝ դաշնակցական գործիչների վերաբերեալ Մահարու քաղաքական երգիծանքի ոլորտում կարելի է քննարկել նաեւ պատմական անցեալի եւ վէպի ժամանակաշրջանի փոխյարաբերութեան հարցը։ Վերեւում արդէն ասուեց, որ նրա արձակը հարուստ չէ պատմական անցեալին անդրադարձներով։ Ակրուող Ակգեստաններ վէպում դրանք խորհրդանիշ-պատկերներ են առաւելապէս, եթէ անգամ դրսեւորւում են պատմական որոշակիութեամբ (անցեալի վկայութիւն, յուշարձաններ, պատմական գործիչներ ու ինչ-ինչ փաստեր)։ Վէպում իհարկէ դրանց առկայութիւնը իմաստաւորուած է խորհրդանիշի արժէքով։ Հե-

դինակն այդպէս աւելի հեշտութեամբ է ընդարձակում պատմական փորձի ընդհանրացման տարածքն ու ժամանակը: Վանի Ուրարտական բերդը, Շամիրամը, դարաւոր եկեղեցիները, Սեներքերիմ արքան, ազգային սրբութիւններ կամ խորհրդանիշներ դարձած աշխարհագրական տարածքները, նաեւ «երկիր որդուոց մեծամեծաց» արտայայտութիւնը մեր անցեալի միֆականացուած ընկալման խորհրդանիշներից են: Այդ միֆը աւանդաբար մի բովանդակութիւն ունի՝ փառաւոր-հերոսական: Դա մի մասով համապատասխանում է իրականութեանը, մի մասով՝ հաճելի է մեզ (չոյում է մեր ազգային արժանապատուութիւնը) եւ հարիւրամեակներ չարունակ ծառայեցուել է ազգային-քաղաքական արդիական խնդիրների լուծմանը՝ մեր մէջ ազգային արժանապատուութիւնը արթուն պահելու, արհաւիրքներին դիմակայելու կամք ձեւաւորելու նպատակաուղղուածութեամբ:

Այդպիսին է այս ամէնը մահարիական մտայղացումից դուրս ու անկախ: Սակայն դժուար չէ նաեւ նկատելը, որ աւանդական այդ ընկալումը չէր կարող համապատասխանել վէպի գաղափարական հիմնադրոյթին: «Հակա-հերոսական ներշնչումով յղացուած»[19] վէպին յարիր չէր գալու աւանդական ըմբռնում-իմաստաւորումը: Արձակագիրը գիտակցաբար գնացել է ճիչտ հակառակին՝ միֆի քայքայմանը, կեցութեան ապամիֆականացմանը: «Ուղղուած լինելով ժամանակակից իրականութեան արտացոլմանը՝ միֆը գրականութեան մէջ բացայայտում է նաեւ կեանքի, պատմութեան զարգացման *պարբերականութիւնը, կրկնելիութիւնը*»[20] (ընդգծումը հեղինակինն է - Ս.Ա.): Ապամիֆականացումը սրա բացառումն է, հայութեան անցեալի իրական-չափազանցուած ընկալման ժխտումը ոչ թէ անցեալի մէջ, այլ վիպական ներկայի: Փառաւոր անցեալը *Այրուող Այգեստաններ* վէպում ներկայացւում է ծաղրանմանութեամբ, վերաիմաստաւորուած, որը Ի. դարասկզբում հայ ժողովրդի փառաւոր անցեալի կրկնելիութեան հաւանականութեան ժխտումն է: *Երիտասարդութեան Սեմին* վէպի վերջին գլուխներում Արարատեան միֆի (Հայաստանի Ա. Հանրապետութեան) քայքայմամբ Մահարին ցոյց է տալիս Հանրապետութեան անմխիթար վիճակը: Ապամիֆականացումը վերաբերում էր հենց նկարագրուող ժամանակաշրջանին ու կենսական հանգամանքներին: *Այրուող Այգեստաններ* վէպում ապամիֆականացումը դրսեւորուում է մի քիչ այլ կերպ: Այս դէպքում Մահարին պատկերներ է կառուցում ժամանակների համադրման սկզբունքով՝ հակառակ նախապէս քննարկուած *Երիտասարդութեան Սեմին* վիպակի «Արարատեան Միֆի Կամ Ապագայ Պատմաբանի Համար Հում Նիւթեր» հատուածի: Մահարին աւերում, ոչնչացնում է անցեալի միֆականացուած ընկալումն ու իմաստաւորումը՝ այդպիսով ցոյց տալով ներկայի թշուառութիւնը, անցեալի ոգու կորուստը, ժամանակների մէջ պատմական ընթացքի խզուածութիւնը: Այսպիսի իմաստա-

ւորմամբ «երկիր որդուց մեծամեծաց» արտայայտութեան մասին վերեւում ասուեց։ Գրողի ասելիքը, որը մարմնաւորուել է որպէս երգիծանք, ակնյայտ է. լրջագոյն սխալ է նոր ժամանակներում մեր պարտուողական կենսակերպի, խեղճութեան պատճառը օտարների մէջ փնտռելը։ Մենք առաջին հերթին մեզ պիտի լաւ ճանաչենք, մեր սխալները եւ թուլութիւնները ընդունել-խոստովանելու չափ արիութիւն, սթափութիւն ունենանք։

Ուստի, ժամանակ պէտք չէ կորցնել: Դէպքերը կարող են շատ աւելի արագ զարգանալ քան մենք կարծում ենք: Իսահակեանի նամակը ղրկած է ճիշտ ժամանակին: Հասկանանք:

Ջերմ բարեւներով
Կ. ՋԱՐԵԱՆ

Ջ.

1-V-43
15 W 76th St. N.Y.

Սիրելի Վրացեան,

Վէպիս մասին ձեր յայտնած կարծիքը ինձ համար շատ թանկագին է, որովհետեւ դուք անծամբ ապրած էք այդ ժամանակաշրջանը եւ եթէ ժամանակի ոգու արտայայտութեան տեսակէտից որեւէ անհարազատ բան լինէր, անմիջապէս կ[ը] նշմարէիք: Ասեմ նաեւ, որ դուք առաջին հայն էք, որ կարդում էք վէպս, ուստի ձեր գնահատանքը ինձ համար կրկնակի արժէք ունի, որի համար յայտնում եմ ձեզ իմ շնորհակալութիւններս:

Գանք ձեր արդարացի նկատողութիւններին.

1) Ուղղագրական սխալները գիտեմ որ բազմաթիւ են: Նրանք առաջ են գալիս մի քիչ անփ[ո]յթութիւնից եւ մի քիչ էլ տգիտութիւնից: Բանը նրանումն է, որ ես հայ դպրոց չեմ տեսել եւ հայերէնս սովորել եմ աւելի ականջով քան գրքով: Այդ պատճառով էլ տաճկահայ եւ ռուսահայ արտասանութիւնները խառնելով՝ առաջ են եկել այդպիսի սխալներ ինչպէս կրակոտ-հրեղէն, ասեց-ասաց եւ այլն: Միշտ երազել եմ ո[ռ]ւսահայ մի քերականութիւն ունենալ՝ երբէք չեմ յաջողած: Իբրեւ սրտի մխիթարանք՝ ասեմ, որ Զօլա[յ]ի[44] եւ նոյնիսկ Ռընանի[45] նման գրողներն էլ այդ թերութիւնը ունէին...

2) Կարծում եմ որ ռուսերէն բառերը պէտք է մեծ մասամբ թողնել առանց թարգմանելու[46], նախ որովհետեւ տպագրական տեսակէտից տգեղ է, ապա որովհետեւ այս գործը ռուսահայ գրողի գործ է եւ պէտք է տպւի, ինչպէս տպւէր Հայաստանում: Մի քանի տեղ, ինչպէս Господи помилуй[47], կարելի է եւ թարգմանել իբրեւ բացառութիւն:

3) Վէպը պէտք է միշտ պահի անցեալ կատարեալը: Ես նկատել եմ որ ո-րոշ տեղեր, նիւթով տարուած, այդ կարեւոր պարագան մոռացել էի եւ սկսել էի ուղղել, բայց դուք եկաք եւ յանձնեցի ձեզ առանց ընթերցումս շարունակելու:

Ցաւը նրանումն է, որ երբէք մօտս ոչ մի բանիմաց հայ չեմ ունեցել, որին գրածներս կարդամ եւ որը ի վիճակի լինի թերութիւնները մատնանշել: Երբ մարդ մտածում է, որ մի Տոլստոյի[48] գործերը տպագրում էին 30-40 անգամ եւ որ իր կինը, աղջիկը, քարտուղարներ ուղղում էին փուած սխալները կամ մատնանշում նրան՝ մարդ շատ չի յուսահատւում ... (սրտի երկրորդ մխիթարանք...)

Ես բախտաւոր եմ, որ ձեզ նման գրականութիւնը հասկացող եւ սիրող մի բարեկամ ժամանակ է գտնում սրտին մօտ առնել իմ գրածս եւ իր հմուտութեան [sic] աջակցութիւնը բերել:

Շատ ուրախ պիտի լինեմ ձեզ ունենալ իբրեւ անկեղծ բարեկամ՝ սրտի եւ մտքի բարեկամ ինչպէս դուք ասում էք: Հայերի մէջ իսկական եւ ոչ մի բարեկամ չեմ ունեցած եւ հայութեան հետ խօսել եմ մի տեսակ փակուած բերդից՝ պաշարուած բերդից: Զարմանալի չէ՞: Ընդունեցէք իմ եւ ընտանիքիս ջերմ բարեւները: Սպասում ենք ձեզ Նիւ Եորկում:

Ձեր անկեղծ
Կ. ՋԱՐԵԱՆ

Թող Դարբինեանը կարդայ Admer Emin Yalman-ի[49] յօդուածը Free World-ում[50]: Տեսէք ի՞նչ աներեսութիւն եւ այդ ամերիկացիները եւ պրինցիպները...

Է.[51]

22/VI/1943/Բոստոն

Սիրելի Զարեան,

Ցաւում եմ, որ, կամքիցս անկախ, նամակս ուշացաւ:

Կարծում էի՝ թէ պիտի կարողանամ Նիւ Եորք գալ եւ տեսնուել Ձեզ հետ - դժբախտաբար, անկարելի եղաւ:

Ընթացիկ գործերս, ճամբորդութիւններս, վերջերս էլ փոքրիկ տկարութիւնս պատճառ եղան, որ «Նաւը լերան վրա[յ]» վէպի ընթերցումը ուշ աւարտեմ: Նորերս միայն լրացրի եւ պէտք էի զգում գրելու Ձեզ այդ մասին: Երանի՝ թէ հնարաւոր լինէր անձամբ խօսել, թերեւս, աւելի դիւրին կը լինէր բացատրել: [*մտքերս արտայայտել*]:

Վէպը կարդացի լարուած հետաքրքրութեամբ, սկզբից մինչեւ վերջ. յաճախ, վիճելով Ձեզ հետ, երբեմն բողոքելով [*ըմբոստանալով ձեր կարծիքների դէմ*], շատ անգամ համակարծիք լինելով [*Ձեզ*] եւ միշտ ապրելով ու յուզուելով Ձեր ապրումներով ու յուզումներով: Իբրեւ արուեստի գործ՝ մնայուն ու լիարժէք երկ էք ունիրել [*տուել*] Հայոց գրականութեան, որի համար շնորհաւորում եմ Ձեզ սրտանց: [*Վէպը երեւոյթ պիտի լինի մեր արդի գրականութեան մէջ, պիտի զբաղեցնէ հանրային միտքը եւ պիտի ապրի մեր գրականութեան պատմութեան մէջ, առանց մաշելու ժամանակի ժանգից*][52]:

Եւ սակայն, մի քանի [*հիմնական ու երկրորդական*] բաներ կան, որոնք, իմ կարծիքով, պէտք չէ որ [*տեղ գտնէին*] վէպի մէջ [*իբրեւ օրգանապէս ոչ-անհրաժեշտ*] եւ որոնք, ըստ իս, մեծապէս վնասում են գործին, եւ [*որոնք*]

կարող են [*սրբագրել*] Ձեր կողմից, եթէ [*Դուք էք*] համամիտ գտնուէք ինձ եւ կամենաք.

Այսպէս - Ձեր երկը յղացումով եւ իրացումով ազգային դիւցազնավէպ է - épopée[53]: Դիւցազնավէպը պատկերացնում է դարաշրջանի [*պատմական*] հանգամանքներն ու ոգին՝ իրենց բնորոշ ու հարազատ յատկանիշներով՝ լուսաւոր թէ ստուերաւոր: Դիւցազնավէպի մէջ պայման չէ, թ հարկէ, որ անպատճառ պատմական փաստեր արձանագրուեն: Բայց եթէ պատմական փաստ է յիշւում, պէտք է որ հարազատ*[օրէնք արձանագրի, կամ գոնէ միտումնաւոր կերպով չխեղաթիւրի]* լինի իրականութեան: Մանաւանդ ոգին, մթնոլորտը, climat-ն[54] չպէտք է լինեն միտումնաւոր, այլ [*բնական,*] ճշմարտութեան համապատասխան, այլապէս կը ստացւի ծուռ հայելի, միտումնաւոր մի գործ:

Իմ տպաւորութիւնս այն է, որ այս տեսակէտից Ձեր վէպը մեղանչում է իրականութեան [դէմ] [*խոցելի կէտեր ունի*]: Սկզբից մինչեւ վերջ նկատւում է մենակ [*վէպում տիրական է*] հեգնական [*ու յոռետես*], չասելու համար բացասական վերաբերում դէպի Հայաստանի մարդիկ ու ժամանակի պայմանները: Հայաստանի գիւղացին՝ տգէտ, բթամիտ, խորամանկ, ընչաքաղց, պետական բնագդից զուրկ: Հայաստանի բանւորը՝ նոյն բանը: Հայաստանի քաղքենին՝ հայրենասիրութիւն չունեցող, շահախնդիր, որկրամոլ, շւայտ Տաճիբարով-ներ ու Ստեփան Մարկոսովիչներ[55]: Հայաստանի մտաւորականութիւնը՝ տժգոյն, անգիտակից, զրաբան, անգործնական: Պետական վարիչները՝ խեղճ, [*վարժապետներ*] «սահմանափակ մտքով վարժապետներ» եւ «նեղմիտ կուսակցականներ»: Կառավարութիւնը - «երկու շաբաթը մի անգամ կառավարութիւնը փոխւում էր»[56]: Պարլամենտը - «Պարլամենտի նիստերը շարունակւում էին գիշեր ու ցերեկ», ուր դատարկամիտ մարդիկ «հրավառ ճառեր» էին արտասանում[57]: Վարչապետը - «Աշոտ Երկաթ»ի[58] հանդէսին ճառող ծիծաղելի մի մարդ[59]: Հայաստանի մայրաքաղաքը՝ մի մեծ գաղթականական, լեցուած մեռնող գաղթականներով, խուժանով ու մաուզերիստներով... Է՞, եղա՞ւ: Հապա, ուրեմն, ինչպէ՞ս ստեղծուեց հայոց պետութիւնը «անձեւ քաոսից»[60]:

Վէպը չի ներկայացրել ու բաւարար չափով չի հիմնաւորել այն օրերին Հայաստանում ոգին - հայրենասիրութիւն, զոհաբերութիւն, անսահման ոգեւորում ու խանդավառութեան բարձր ոգին, այն արտասովոր տենդը, հոգեկան բոիչքն ու պաֆոսը, որ յատուկ էր Հանրապետութեան շրջանին եւ որով միայն կարելի է բացատրել Հայկական պետութեան ստեղծման հրաշքը [*փաստօրէն՝ «անձեւ քաոսից»*][61]: Դուք առել էք արտաքին երեւոյթները, ծովի երեսի [*պղպջակները*] փրփուրը, մինչդեռ խորքը բոլորովին տարբեր [*բան*] էր: [*Ձեր տպաւորութիւնները 1919-ի առաջին շրջանի Հայաստանից են*[62]*, մինչդեռ մի տարուայ մէջ Հայաստանը կերպարանափոխուեց*]: Երկ[ու]սից մէկը - կամ Հայաստանն ու հայ ժողովուրդը այն են ինչ որ պատկերացուած են վէպում, այդ դէպքում ասել է որ թէ հայ ժողովուրդը ոչնչութիւն է եւ Հայաստանը դատարկ [*ն էլ պարապ*] մի անուն, կամ եթէ այդպէս չէ, այն ժամանակ վէպի պատկերացումը [*ճիշտ չէ*] սխալ է: Եւ, թ հարկէ, ճիշտը վերջինն է, որովհետեւ, անտարակոյս, «բազում գործք արութեան գտանէին գործեալ եւ ի մերում աշխարհիս»[63]:

Վէպի այդ մռայլ [*պատկերը*] ֆոնը, կարծես, աւելի ցայտուն դարձնելու համար Ձեր բոլոր դրական տիպերը [*հերոսները*] համարեա դրսից եկած մարդիկ են՝ Հէրեան, Թումանեան, խորհրդաւոր հնդկահայը... Ներսիսները անճարակ ու խեղճ մարդիկ են, [*որոնք*] դրսեցիներն էլ գոհ գնացին անողոք պայմաններին եւ իրենց անգործնականութեան: Տակը ի՞նչ մնաց: Ո՞ւր է, որեմն, դիւցազնավէպը [*դիւցազներգութիւնը*], ո՞ւր են հերոսները, ո՞ւր է այն ամէնը, որից ծնունդ առաւ, ապրեց ու գարգացաւ հայոց պետութիւնը: [*Ու յետոյ ձեռք առին ու շարունակեցին բոլշեւիկները*]: Վերջ ի վերջոյ, մեր օրերի պատմական մեծագոյն դէպքը - հրաշքը - հայոց պետութեան ստեղծումն է, որ գլուխ եկաւ ժողովրդի եւ անհատների ճիգ[*եր*]ով եւ շատերի [*յօժարակամ*] ինքնազոհումով: Բոլշեւիկները [*խորհրդային մարդիկ*] շարունակեցին ստացած ժառանգութիւնը, եւ կը համաձայնիք, [*անշուշտ*], յուսամ, ինձ, որ հերոսական ու դիւցազն[*երգ*]ական ոչինչ կայ նրանց գործի մէջ: Ի դէպ՝ վէպը այս կէտն էլ թողնում է խորհրդաւոր անորոշութեան մէջ:

Ձեր դրսից եկած հերոսները Հայաստանում ո՛չ մի լուսաւոր բան չգտան: Բայց կարող էին գտնել: Ինչո՞ւ, օրինակ, Հէրեանը ներկայ չեղաւ Հայաստանի համալսարանի բացման հանդէսին: Յետամնաց եւ աշխարհի յոյսից զրկած եւ աթարի ծխի մէջ խեղդուող Հայաստանը, առաջին անգամ իր պատմութեան մէջ, [*ազգային*] պետական համալսարան էր հիմնում[64], հայ անվարտիք մտաւորականութեան խանդավառ ջանքերով, ամենափայլուն հայ դէմքերից [*մտաւորականներից*] մէկի՝ կրթական նախարար Նիկոլ Աղբալեանի[65] նախա[*ձեռնութեամբ*]գահութեամբ եւ Հէրեանների ու Մարկ Պետրոսների հոգեկից [*արիւնակից ներկայացուցիչ*] փրոֆ. Ի. Ղամբարեանի[66] տեսչութեամբ: Ես կարծում եմ, Հէրեանը բոլորովին այլ ներշնչումներ կը ստանար այդ հանդէսից:

Կամ ինչո՞ւ Հէրեանը, փոխանակ բուլվառում եւ խուժանի հետ ժամանակ անցնելու, գէթ մի անգամ չմտաւ [*չի մտել*], օրինակ, Գիւղատնտեսութեան եւ պետական գոյքերի նախարարութիւնը, ուր մի քանի տասնեակ բարձրորակ հայ մասնագէտներ, շատերը փայլուն գիտնական համբաւով, ծրագիրներ էին կազմում Հայաստանի վերաշինութեան, քաղաքների եւ գիւղերի վերակառուցման, ոռոգումի, ելեկտրականացման, երկրագործութեան զարգացման, նոր մշակոյթների ներմուծման, երկրագործական [*գործիքների ու*] մեքենաների ներածման եւայլն: Եւ ոչ միայն ծրագիրներ էին կազմում, այլեւ գործի ձեռնարկում: 1920-ին Հայաստանը աւելի հող էր ցանել, քան պատերազմից առաջ[67]. [*պատերազմի ընթացքին*] խանգարուած հաղորդակցութեան ու ոռոգման միջոցները վերականգնուած էին, դպրոցների ցանցով ծածկուած էր երկիրը, Երեւանում սկսուած էր [*ստեղծուած էր*] մշակութային կեանք՝ մամուլ, գրադարաններ, թանգարան, թատրոն, գրական միութիւն, մասնագիտական դպրոցներ եւայլն: Հայ գիւղերում ու քաղաքներում չէնութիւն էր սկսուած: Ու եւ, առհասարակ, [*հանրային, պետական եւ անհատական*] կեանքը այն չէր՝ ինչ որ Հէրեանն էր տեսած:

Ինչո՞ւ Հէրեանը այդպէս է տեսած: Այդ ես վերագրում եմ երկու բանի.- 1) Դուք տեսած էք Հայաստանը վատ օրերին եւ տրամադիր եղած էք տեսնելու կեանքի եւ մարդոց ստերաւոր կողմերը. 2) Ազդուած էք մամուլի քննադատութիւններից եւ [*կամ*] մարդկանց յայտնած դժգոհութիւններից:

Խօսք չկայ՝ Հայաստանում ստեղծուող ու քննադատելի կողմեր շատ կային: Բայց՝ չպէտք է մոռանալ, թէ ինչ էր Հայաստան ցարական իշխանութեան տակ եւ ինչ արհաւիրքների ենթարկուեց պատերազմի ու յեղափոխութեան տարիներին: Երկրորդ՝ դարաւոր ստրկութիւնից յետոյ էր երկիրը անկախ կեանքի կոչւում, այն էլ անակնկալ կերպով: Եւ, վերջապէս, հայ մտաւորականութեան մեծ մասը Հայաստանից դուրս էր, եւ Հայաստանում Քաւուրներ[68] չկային ([*եւ ի՞նչ իրաւունքով պահանջում էք Դուք, որ լինէին*][69] եւ ինչո՞ւ պիտ[ի] լինէին) - կային միայն Արամի[70], Խ. Կարճիկեանի[71], Մինաս Բերբերեանի[72], Սիլիկեանի[73], Դրոյի[74], Նազարբէգեանի[75], Թամանեանի[76] եւ բազում այլոց պէս հայրենասէր ու անձնազոհ մարդիկ: Այս բոլորը ճիշտ է, բայց ճիշտ է եւ այն, որ սրանց աշխատանքով ու կեանքի գնով ստեղծուեց պետութիւն: Ճիշտ է նաեւ, որ Հայաստանում կար բարձր տեսակի հայրենասիրութիւն, անսահման ուիրում ու պաֆոս: Հէրեանը այդ բոլորի մօտից անցել է առանց նկատելու: Ինչո՞ւ:

Այս, ըստ իս, վէպի հիմնական խոցելի կողմն է, բայց կան երկրորդական խոցելի կէտեր: Օրինակ՝ [*երկրորդական կէտերից յիշեմ*] «Աշոտ Երկաթի» հանդէսը (էջ 179)[77]: - Նման հանդէս իրապէս տեղի է ունեցել՝ ժողովրդական ու խանդավառ: Դուք տուել էք [*նրա*] ծաղրանկարը, որ ոչ իրական է, ոչ էլ ներդաշնակում է վէպի ընդհանուր [*բովանդակութեան*] նպատակին:

Էջ 245: - Այդ ժամանակները Հայաստանում եւ վագոններ կային, եւ շոգեշարժ մեքենաներ[78]. գաղթականներ համարեա չկային, եւ կովերը յայտարարութեան թղթի ալիւրը չէին ուտում[79]:

[*Կամ*] Էջ 247ը - «երկու շաբաթը մի անգամ կառավարութիւնը փոխւում էր»: «Պարլամենտի նիստերը շարունակւում էին գիշեր եւ ցորեկ»: Պարլամենտը մայիսից մինչեւ դեկտեմբեր արձակուրդի մէջ էր եւ հազիւ 2-3 բացառիկ նիստ է ունեցել, այն էլ շատ կարճ: Կառավարութիւնն էլ չի փոխուել «երկու շաբաթը մի անգամ»:

Էջ 373 - «Կարմիր Չէկայի տեղ ազգային մի տեսակ Չէկա էր կազմուած: Մարդի որս էր, ինչպէս առաջ»...[80] Արդար չէք: Այդպէս չէր: Եւայլն:

Կ[՚]ասէք, դրանք փոքր բաներ են: Այո՛: Բայց - Капля дегтя портит бочку меда![81] *[Այդ փոքր բաներից կը տուժի մեծ գործը]*:

Այսքան երկար գրեցի միայն մէկ մտահոգութեամբ - որ Ձեր մեծ գործը բան չկորցնէ իր մեծութիւնից: Ես կարծում եմ, որ վէպը մեծապէս կը շահի, եթէ համաձայնիք ինձ հետ եւ մի անգամ էլ աչքէ անց[*կաց*]նէք ձեռագիրը՝ մի քիչ էլ իմ ասած տեսակէտից նայելով գործին: Հաւատացէ՛ք, որ ոչ անձնական արշինով եմ մօտենում գործին (իբրեւ ժամանակի համեստ դերակատարներից մէկը), ոչ էլ՝ կուսակցական: Ինձ համար Հայաստանի Հանրապետութիւնը այլեւս պատմութիւն է եւ մէջս քաջութիւն [*զգում եմ*] ունեմ դէպքերի ու դէմքերի վրա[յ] նայելու սոսկ պատմական [*տեսակէտից*] հայեացքով: Իմ միակ ցանկութիւնը այն է, որ Ձեր [*պատմութիւնը*] վէպը լինի անխոցելի, եւ նիւթի ոգիով ու փաստերով՝ ներկայացուած լինի համապատասխան [*իրականութեան*] ճշմարտութեան եւ ժամանակի ու գործի մեծութեան:

Ճիշտ է, յառաջաբանի մէջ Դուք ասում էք, թէ պատմական վէպ չէ Ձեր գրածը, եւ, ուրեմն, պայման չէ, որ վէպի անձերն ու դէպքերը [*լինեն*] նկատուեն իրական: Բայց, ըստ իս, պայման է, որ եթէ յիշում է որեւէ պատմական դէպք,

նրանք [*պէտք է*] լինեն իրականութեան համապատասխան: Նաեւ [*ճոյնպէս*] ժամանակի ոգին, բարքերն ու կենցաղը: [*եւ գործիչները*]:

Գուցէ ես սխալւում եմ - չգիտեմ, բայց շատ եւ շատ ուրախ պիտի լինեմ, եթէ, առանց վշտանալու, ներողութեան առնէք իմ այս ըստ ամենայնի բարեմիտ ու բարեացակամ դիտողութիւնները եւ, մանաւանդ, եթէ համամիտ լինէք ինձ[82]:

Ջերդ անկեղծօրէն՝
Ս. ՎՐԱՑԵԱՆ

Ը.[83]

8-I-1944
Woodstock, N.Y.

Սիրելի Վրացեան,

Ես էլ կարծում եմ, ձեզ պէս, որ տպագրութեան եւ ձեւի տեսակէտից, «Նաւր» ներկայանալի է եւ, նոյնիսկ, աչքի առաջ ունենալով հայկական պայմանները, շատ լաւ[84]: Շնորհաւորութեան արժանի են «Հայրենիքի» տպարանը եւ նրա վարիչները: Շատ շնորհակալ եմ ձեզ, որ ամէն կերպով աջակցեցիք գրքի հրատարակութեան եւ վերաբերուեցիք իբրեւ իսկական եւ անկեղծ բարեկամ: Ասեմ նաեւ, որ ձեր գնահատութիւնը ինձ համար թանկագին է, մանաւանդ որ, իբրեւ քաղաքական գործիչ, դուք իրաւունք ունէիք որոշ վերապահումներ անել: Ինչ որ ասում էք քննադատների մասին՝ միանգամայն ճիշտ է: Հայ գրականութիւնը մինչեւ հիմա - շատ քիչ բացառութեամբ - իսկական քննադատներ չէ ունեցած եւ, այս պատճառով էլ, մտքերի մէջ մեծ խառնաշփոթութիւն է տիրում եւ արժէքների դասաւորման պակաս: Ի՞նչ արած, պէտք է սպասել լաւագոյն օրերի...

Գալով Բոստոն[85] գալու հարցին՝ ես դէմ ոչինչ չունեմ. միայն թէ այս իմ գալս կապում էք դասախօսութեան հետ, ինչ որ նշանակում է ամէն ինչ թողնել եւ դասախօսութիւն պատրաստել: Նաեւ, նշանակում է առաջ բերել իմ շատ սահմանափակ նիւթական միջոցներիս մէջ մեծ անհաւասարակշ[ռ]ութիւն: Ես այդ պատճառով մինչեւ հիմա Նիւ Եորկ իսկ չկարողացայ գնալ: Այդ ասում եմ իբրեւ բարեկամի, entre nous[86], ոչ որովհետեւ մտահոգուած եմ նիւթականով: Գլուխիս մէջ կայ մի նիւթ. «Լեօնարդօ դա Վինչին եւ Հայաստանը»[87], բայց չգիտեմ ինչքան այդ կարող է հետաքրքրել «մասսաներին»... Կամ եթէ սարքէիք մի գրական երեկոյ, կարող էի կարդալ անտիպ բանաստեղծութիւնների մի շարք, ինչպէս սովոր են անել ո[ւ]սները: Այնտեղի պայմաններին ծանօթ չեմ եւ որոշումը թողնում եմ ձեզ:

Նորից յայտնում եմ ձեզ իմ անկեղծ շնորհակալութիւնները:

Ջերմ բարեւներով իմ եւ կնոջս կողմից

Մնամ ձեր
Կ. ՋԱՐԵԱՆ

Ծնած եմ 21 Փետր[ուար] 1887-ին[88], Շամախի՝ վարդերի, սոխակների եւ սոսկալի երկրաշարժների քաղաքում: Նախնական կրթութիւնը ստացած եմ ո[ւ]սական դպրոցում[89] ապա Ֆրանսիայում: Համալսարանական կրթութիւնը ստացած եմ Բելգիայում, ուր նաեւ սկսած եմ գրական արտադրութիւն-

ներս, աշխատակցելով "Le Thyrse", "La Revue Intelectuelle", "La Revue Sociale" եւ ուրիշ պարբերականներին, ֆրանսերէն լեզուով[90]:

1910-ին, իմ բարեկամ եւ վարպետ, մեծ բելգիացի բանաստեղծ Էմիլ Վերհարէնի հետ ունեցած վիճաբանութիւնից յետոյ բանաստեղծութեան բնոյթի մասին, որոշած եմ սովորել հայերէն: Մեկնած եմ Պոլիս: Աշխատակցած եմ տեղական թերթերին, միշտ ֆրանսերէն գրելով: 4 ամիս յետոյ[91] գնացած եմ Վենետիկ, ուր Մխիթարեան հայրերի մօտ սկսել եմ լրջօրէն սովորել գրաբառ [sic] եւ աշխարհաբառ [sic]: 1912-ին[92] վերադարձել եմ Պոլիս եւ շուրջս ժողովելով մի խումբ երիտասարդ գրագէտներ սկսել եմ հրատարակել «Մեհեան»[93]:

Պատերազմի սկզբին յաջողել եմ մեկնել Պոլսից եւ 6 ամիս[94] Բուլգարիայում մնալուց յետոյ վերադարձել եմ Իտալիա: Այն տարին լոյս է տեսել, իտալերէն թարգմանութեամբ, «Երեք երգեր»[95], որ աւելի ուշ Օտօրինօ Րէսպիգին վերածել [է] երաժշտութեան: (Universal Edition):

1921-ին՝ Պոլիս:

1922-ին - Հայաստան ուր Համալսարանում աւանդել եմ «Ընդհանուր եւրոպական գրականութեան բաղդատական պատմութիւն»:

1924 - Իտալիա, Ֆրանսիա:

1926 - Հոլանդա դասախօսած եմ գրեթէ բոլոր մեծ քաղաքներում:

Ապա անդադրում ճամբորդութիւններ. Սպանիա, Պօրտուգալ, Բելգիա, Աւստրիա, Չիխերիա, Սերբիա, Ամերիկա եւ այլն եւ այլն:

Աշխատակցած եմ բազմաթիւ օտար հրատարակութիւնների, գանազան ծածկանուններով տակ[96], միշտ արուեստի, գրականութեան, փիլիսոփայութեան մասին:

Գրած եմ հայերէն եւ մեծ մասամբ «Հայրենիք» ամսագրում հրատարակուած.-

«Անցորդը եւ իր ճամբան»[97].

«Հայաստանում» - պօէմա[98].

«Արեւմուտք»[99].

«Տատրագոմի հարսը» - պօէմա[100].

«Երկիրներ եւ աստուածներ»[101].

«Բանկօօպ եւ մամութի ոսկորները»[102]

«Նաւը լերան վրայ» եւ բազմաթիւ բանաստեղծութիւններ ամէն տեղ:

Ահա չոր կենսագրական նիշեր, որ շատ բան չեն ասում: Չեմ սիրում այդ տեսակ բաներ գրելը: Իմ իսկական կենսագրութիւնս իմ գրուածքներիս մէջն են [sic]:

Կ.Չ.

Թ.

4-II-44
Woodstock, N.Y.

Սիրելի Վրացեան,

Այս վայրկեանիս ստացայ ձեր նամակը եւ շտապում եմ պատասխանել: Հարցը նրանումն է, որ երեք օրից ի վեր է, կինս գտնւում է Կինգստոնի[103] հիւանդանոցում, ուր ենթարկւել է լուրջ վիրաբուժական գործողութեան: Այդ պայմաններում, կարո՞ղ էք երեւակայել դրութիւնս, մենակ զաւկիս հետ եւ նա-

եւ շատ մտահոգւած: Գործողութիւնը լաւ է անցել եւ յուսամ մի երկու շաբաթից կը կարողանայ տուն վերադառնալ: Առ այժմ, ստիպւած եմ, ամէն օր գնալ քաղաք եւ դէս ու դէն վազել: Այդ պայմաններում, դուք հասկանում էք, որ անկարելի է տեղից շարժուել եւ տղաս էլ մենակ թողնել անկարելի է: Ուստի, պէտք է սպասել: Հազիւ կինս կարողանայ տուն գալ, ես անմիջապէս ձեզ իմաց կ[ը] տամ եւ օրը կ[՚]որոշենք: Ցաւում եմ, այդպէս դուրս եկաւ:

Ջերմ բարեւներով
Կ. ՋԱՐԵԱՆ

Ժ.

10-II-44
Woodstock, N.Y.

Սիրելի Վրացեան,

Անցեալ օր գրած էի ձեզ կնոջս հիւանդութեան մասին, որ արգելք է հանդիսանում իմ Բոստըն գալուս: Այսօր ինձ իմաց տւին, որ հիւանդը լաւանալու վրայ է եւ մի քանի օրից տուն կ[ը] վերադառնայ: Մտածում էի, որ եթէ դասախօսութիւնը տեղի ունենայ ոչ թէ 20-ին, ինչպէս գրած էիք, այլ 27-ին, այն ժամանակ կարելի կ[ը] լինէր գալ: Պատասխանեցէք եթէ այդ թւականը ձեզ յարմար է, որպէս զի ըստ այնմ շարժւեմ:

Ջերմ բարեւներով
Կ. ՋԱՐԵԱՆ

ԺԱ.

19-II-44
Woodstock, N.Y.

Սիրելի Զարեան,

Շատ լաւ. կարծում եմ Մարտ 2-ը, Հինգշաբթին ամենից յարմար օրն է դասախօսութեան համար[104]: Ես այստեղից կ[ը] մեկնեմ Մարտ 1-ին, եւ Նիւ Եորկ չգնալու համար, կ՚առնեմ Albany-ի[105] վրայով գնացող Greyhound bus-ը, որ կ՚հասնի [sic] Բոստըն ժամը, երեկոյեան, 9-ին: Լաւ կ[ը] լինէր եթէ մէկը գար ինձ առնէր եւ առաջնորդէր նշւած հիւրանոց.- Արմէն-Վահէն, օր[ինակի] համար:

Կինս ապաքինելու վրայ է եւ, բարեւներով, շնորհակալութիւն է յայտնում ձեզ ձեր մաղթանքների համար:

Ի միջի այլոց, ինչպէս է որ մինչեւ հիմա մէկը գոնէ մի երկու տող չգրեց «Նաւի» մասին եւ արդեօք յայտարարութիւններից յետոյ ամէն ինչ գոցւեց բանձր լռութեան տակ: Հիմա էլ, երբ գամ դասախօսելու, ուշադրութիւնը պիտի կեդրոնանայ նրա վրայ եւ վերջը պիտի մոռացւի...[106]

Արմէն-Վահէին ասացէք՝ «ես նրանց ցո՛յց կ[ը] տամ»...[107]

Դէ, ցտեսութիւն:

Սիրով
Կ. ՋԱՐԵԱՆ

ԺԲ.

28-VIII-44
Woodstock, N.Y.

Սիրելի Վրացեան,

Այս անգամ ես էլ մի քիչ ուշացայ. գլուխս խառն էր, հիւրեր եկան եւ այլն: Երէկ դ[ոկտո]ր Ալիխանեանը[108] ես այստեղ էր, բաւական երկար խօսեցինք ընդհանուր հարցերի մասին եւ շատ բան, որ կռահում էի, նա աւելի պարզ կերպով բացատրեց: Ինչ որ է. լաւ կ[ը] լինէր, որ շուտ տեսնուէինք եւ ամէն բանի մասին մանրամասն խօսէինք: Ուստի ձեր այցելութիւնը մի յետաձգէք եւ գոնէ մի երկու օրով այս կողմերը անցէք: Եկող երկու շաբաթւայ ընթացքին պէտք է որոշումներ առնեմ՝ տան եւ տեղի հարցերի շուրջ եւ, յետոյ, այլեւս դժուար կ[ը] լինի ամէն բան փոխել:

Պատգամի համար մի բան կ[ը] մտածեմ[109]: Յուսամ որ շուտով պիտի տեսնուենք:

Մնամ սիրով
Կ. ՋԱՐԵԱՆ

ԺԳ.

27-XI-44
Woodstock, N.Y.

Սիրելի Վրացեան,

Լռութեանդ համար իսկի չեմ էլ մտածել քեզ մեղադրել՝ գիտնալով դրութիւնդ եւ մտահոգութիւններդ, սակայն, ախպէր, գոնէ մի բացիկ չէի՞ր կարող ղրկել...

Նիւ Եորկ, որտեղից գրել ես, պիտի գամ եւ նոյնիսկ կարող է պատահի՝ դեռ վստահ չեմ՝ որ գամ Հինգշաբթի օրը, ընտանեօք: Հարցը նրանումն է, որ կինս պէտք ունի գնալու քաղաք Յովանի հետ[110] եւ ուզում է այս առիթից օգտուել: Գրել ենք սենեակի համար բարեկամներին եւ եթէ տեղ ունենան կը գանք:

Պօէմը եւ բանաստեղծութիւնները՝ պիտի ուզէի միասին հրատարակել՝ հետս կ[ը] բերեմ, թէպէտ պէտք ունեն արտագրելու: Դարբինեանը ինձ նամակ էր գրել ասելով որ իր ինչ որ մի բարեկամը, Կալիֆորնիայից, ցանկութիւն է յայտնել իմ մի վէպը հրատարակելու[111]: Պատասխանեցի որ, առայժմ, պիտի ուզէի մանաւանդ հրատարակել պօէմը[112] եւ բանաստեղծութիւնները, բայց նա նամակիս դեռ չպատասխանեց:

Ուրիշ մի հարց. ինձ համար անտանելի բան է պառկել անծանօթ մարդկանց տանը եւ նա էլ երեւի ուրիշների հետ. կարելի չէ՞ր քո պանդոկում[113] մի սենեակ ճարել:

Դէ, ցր: Կը խօսենք:

Կինս եւ Յովանը շատ բարեւում են քեզ:

Մնամ սիրով
Կ. ՋԱՐԵԱՆ

ԺԹ.

12-II-45
Woodstock, N.Y.

Սիրելի Վրացեան,

Հիւանդութիւնս աւելի բարդ բնոյթ առաւ քան կարծում էի. բարդ ա՛յն մտքով, որ տեղի[,] ժամանակի եւ խնամքի պէտք ունեմ բոլորովին ապաքինելու համար քան ենթադրում էի: Թւում է ինձ, որ մի երկու շաբաթից յետոյ բոլորովին կազդուրուած կ[ը] լինեմ եւ Մարտի սկիզբներին ի վիճակի կ[ը] լինեմ նոյնիսկ Նիւ Եորկ գալու: Пришла беда, открывай ворота-ն[114] շատ ճիշտ է եւ մեր բժիշկի[115] արկածն էլ մեծ ցաւ պատճառեց ինձ: Այսօր իրեն էլ գրեցի:

Ինչ վերաբերում է ընդհանուր հարցերին, ես, մեր ժողովի գիշերն իսկ հասկացայ, որ ամէն ինչ պիտի ընթանայ մեր ազգային մտայնութեան ժանգոտած երկաթագծերի վրայով[116]: Նախ այն տպաւորութիւնը առի որ այդ մարդիկ, ինչքան էլ յարգելի անձնաւորութիւններ լինեն, բոլորովին դուրս են այն աշխարհից ուր ապրում են եւ մտայնութեամբ դեռ հայ գաւառացիներ են, որոնց հորիզոնը սահմանափակ է: Մի մոռանաք որ հայերի մեծամասնութիւնը տարիներով ապրում է այս երկրում առանց շփում ունենալու բուն ամերիկացիների հետ եւ, իրենք էլ, ամերիկացիների համար, այնքան գիտութիւն ունեն ինչքան որ պատերազմական bond-եր են գնում[117]: Աւելացնեմ նաեւ, որ ամերիկեան ընդհանուր հասարակութիւնը, աֆրիկեցի սեւամորթների նման, կարող է հաշուել միայն մինչեւ հինգը. վեցը այլեւս անհասկանալի առեղծուած է, անհասանելի խորհուրդ: Ուստի, ըստ ինձ, այդ մտայնութեան վրայ ազդելու համար եւ ի նպաստ մեզ որեւէ հոսանք ստեղծելու համար պէտք են առանձնայատուկ միջոցներ, որոնց մասին մեր ժողովի անդամների մեծ մասը գաղափար իսկ չունէին: Եւ եթէ ես, վերադարձիս, գրեցի իմ հրաժարականս[118], ոչ թէ անձնական պատճառներով էր -- ինչպէս, ըստ հայկական չարչիական մտայնութեան[,] շատերը կարծել են -- այլ որովհետեւ, պարզապէս որեւէ հաւատք չունէի որ գործը պիտի առաջ գնայ եւ, այդ պայմաններում, չէի ուզում որեւէ պատասխանատուութիւն առնել: Քաղաքական կամ մշակութային բնոյթ կրող այդպիսի գործը պէտք չէ որ յանձնի երեք կամ չորս մարդկանց եւ թողնել որ անեն ինչ որ հնարաւոր է անել: Իսկ մասնակցել ժողովներին ուր «ֆրակցիան»[119] արդէն ամէն ինչ որոշած է, թւում է ինձ երեխայական: Չե՞ս կարծում: Բոստընից որ եկայ, եւ այստեղ տեսնուեցայ բաւական կարեւոր մարդկանց հետ՝ այդպիսի մարդիկ մեր տունը շատ յաճախ են գալիս՝ մարդիկ, որոնք մօտ են Ստէտինիուսին[120] եւ ուրիշներին, եւ որոշ գաղափար կազմեցի այն ուղղութեան մասին որ պէտք է տալ գործին: Ժողովի գիշերը, առաջի շփումից հասկացայ, որ աւելորդ էր այդ մասին խօսելն իսկ, այնքան տիրող մտայնութիւնը տարբեր է:

Այդ մասին, երբ գամ Նիւ Եորկ, երկար կ[ը] խօսենք եւ աւելի մանրամասն կերպով կ[ը] բացատրեմ իմ տեսակէտս: Աւելացնեմ անմիջապէս, որ ես ինձ երբեք չեմ համարած քաղաքական մարդ եւ այդ ուղղութեամբ ոչ մի բան չեմ ակնկալած եւ ոչ մի հաւակնութիւն [sic] չունեմ: Գրող եմ եւ ուրիշ բան չեմ:

Ինչ վերաբերում է պօէմայի եւ բանաստեղծութիւնների հրատարակման հարցին, Դարբինեանը ինձ նամակ գրել էր, որ մէկը ուզում է ինձ իմ մէկ գիրքս հրատարակել: Ես նրան պատասխանեցի, բայց ինքը ինձ այլեւս ոչինչ չգրեց: Գիտեմ որ Դարբինեանը շատ պիտի ուզէր, որ հրատարակեմ «Քան-

կօօպը»[121]: Գիտեմ նաեւ ինչու[122] եւ մերժումս ստանալով «գրականութեան ծառայելու» իր միտումը մի կողմ թողեց: «Ամենայն ինչ հոգիներով եւ դեւերով է լեցուած»...[123] Պօէմը եւ բանաստեղծութիւնները հետս կ[ը] բերեմ երբ գամ Նիւ Եորկ, միաժամանակ պիտի ուզէի քեզ եւ դոկտորին մի մասը կարդալ եւ կ[ը] տեսնենք ինչ կարելի է անել:

Ի միջի այլոց, դու ինձ ասել էիր եւ Վահէ-Արմէնն[124] էլ ինձ գրած էր, որ շուտով «Նաւի» շուրջը արդար համաձայնութեան կը գանք եւ հաշիւները կ[ը] վերջացնենք: Մինչեւ հիմա դեռ բան չեղաւ: Ինչո՞ւ:

Դէ, նամակս շատ երկարեց: Ընդունիր մեր ամէնքի ջերմ բարեւները:

Մնամ սիրով
Կ. ԶԱՐԵԱՆ

ԺԵ.

28-4-45
Ն.Ե.

Սիրելի Վրացեան,

Շիկագոյի բաներդ ստացանք եւ յոյս ունենք ամէնքս, որ ողջ եւ առողջ տեղ հասնի: Ես մտադիր էի քեզ նամակ գրել, կրկնելով Պուշկինի[125] զեկուցումը.- եկան, խօսեցան, գնացին: «пришли, поговорили, ушли»: «Պրիշլի, պակավարիլի, ուշլի» ... Բայց մինչ այդ երկու կարեւոր նամակներ եկան, որ շտապում եմ արտագրել եւ ղրկել քեզ ի գիտութիւն:

1

British Embassy
Washington, D.C.
April 24, 1945

Dear Sir,

I write on behalf of Lord Halifax[126] to acknowledge receipt of your letter of April 20th, forwarding a memorandum on the Armenian question.

Yours very sincerely
C.E. King

2

Departement [sic] of State
Washington
April 26, 1945

My dear Dr. Alickanian:

I have received your letter of April 11, 1945 in which you present on behalf of the Arm[enian] National Committee and the Armenians in America an outline of various problems relating to the Armenian question.

I have noted your views and have brought your letter to the attention of the officials of the Department concerned with the subjects dealt with in your letter.

Sincerely yours,
For the Acting Secretary of State
Elbridge Durbrow
Chief, Division of Eastern European Affairs

Նկատի առ ա՛յդ. գործը յանձնուած է ոչ թէ Near East-ի[127] մասնաճիւղին այլ Eastern European Affairs[128], այսինքն ռ[ուս]ական գործերի մասնաճիւղին...

Անհամբեր սպասում եմ նամակներիդ: Ջերմ բարեւներով՝

Կ. ՋԱՐԵԱՆ

ԺՋ.

[Մայիս 1945]

Սիրելի Վրացեան,

Սպասուած նամակը չստացանք. ամէնքը անհամբեր սպասում են եւ զարմանում... Այս նամակները պէ՞տք է շարունակել ղրկել քեզ:

Մնամ սիրով
Կ. ՋԱՐԵԱՆ

ԺԷ.

21-5-45
N.Y.

Սիրելի Վրացեան,

Այդ նամակը որ գրած ես ինձ եւ որին անհամբեր սպասում էինք, ինչպէս երեւում է, կորած է: Վերջին նամակդ, ուղղուած Ասատուրին[129], կարդացինք անխառն հաճոյքով եւ յոյս առինք: Bureau-ի[130] գործերը շարունակւում են ինչպէս առաջ. ես ամէն օր գործի ժամերին կանոնաւոր այստեղ եմ եւ շփման մէջ եմ մեր յանձնաժողովի անդամների հետ: Բացի դրանից գրեթէ ամէն օր դրսի մարդիկ եմ տեսնում, նոր կապեր հաստատում եւ ստանում այն նախապատրաստական աշխատանքը, որ անհրաժեշտ է բուն պրօպագանդի գործին անցնելու համար: Մերոնք չեն ուզում ոչինչ անել՝ մինչեւ քո վերադարձը: Ես ուզում էի մեր "memorandum"ը[131] ղրկել բոլոր թերթերին եւ "commentator"ներին[132], բայց ա՛յդ էլ որոշուեց անել միայն այն ժամանակ երբ քեզանից հրահանգ կայ: East and West-ի հետ եւ ուրիշ կազմակերպութիւնների հետ երկայն խօսակցութիւններ ունեցայ եւ կարծում եմ մեզ համար շատ օգտակար կ[ը] լինեն, երբ որոշենք լայն պրօպագանդի սկսել: Լաւ հող կայ եւ կարելի է օգտագործել, բայց, ինչպէս ասացի, անորոշութեան մէջ ենք եւ մեր յանձնախմբի մարդիկն էլ, բացի քննաղատութիւնից, ուրիշ գործ չեն կարող անել: Երբ գաս այդ մասին կ[ը] խօսենք:

Վիլսօնեան զեկուցման գործը տպագրուեց վերջացած է[133], սխալները ուղղեցինք, բայց քարտէսը դեռ պատրաստ չէ, որովհետեւ այդ հարցումն էլ «Վրացեանին սպասենք» կայ: Հիմա որ քո նամակդ ստացուեց ասացի որ շտապեն եւ մի քանի օրից երեւի ի վիճակի կ[ը] լինենք քեզ ղրկելու[134]:

Ի միջի այլոց ասեմ, քանի անգամ հեռախօսով զանազան հիմնարկութիւնների կողմից մեր "bulletin"ը[135] ուզած են եւ ես պատասխանել եմ որ շուտով յոյս պիտի տեսնի[136]: Պէտք է մի բան անել: Ե՞րբ պիտի վերադառնաս: Մի քանի օր առաջ գրիր, որպէս զի սենեակդ պարպեմ եւ տուն վերադառնալու պատրաստութիւններս տեսնեմ:

Դելեգացիօնների կողմից ղրկած պատասխանները կանոնաւոր ղրկում եմ քեզ: Ի միջի այլոց Department of State-ից[137] ստացել էինք մի ուրիշ նամակ, այս բովանդակութեամբ.-

Department of State
Washington

May 14, 1945

My dear Dr. Alichanian:

The receipt is acknowledged of your letter of April 20 with which you enclosed "A Memorandum Relating to the Armenian Question" issued by the Armenian National Committee.

Let me assure you that the views presented in this Memorandum have been carefully noted by the appropriate officers of the Department of State. Your courtesy in making the Memorandum available to the Department is appreciated.

Sincerely yours,
For the Acting Secretary of State
Francis H. Russell
Chief
Division of Public Liaison

Դէ, ջերմ բարեւներ եւ գրիր...

Կ.ԶԱՐԵԱՆ

ԺԸ.

24-5-45
N.Y.

Սիրելի Վրացեան,

Այսօրուայ Ասատուրին գրած նամակիցդ վերջնականապես [sic] յայտնի եղաւ, որ Մայիս 10-ին իմ անուանս ղրկած զեկուցումդ եւ նաեւ ինձ ուղղած նամակդ կորել են... Այդ բանը թէ ինձ եւ թէ ուրիշ յանձնաժողովի անդամներին մտահոգութիւն պատճառեց. արդեօք դիտմամբ գողացած կ[ր] լինե՞ն[138]: Փաստելու համար բարի եղիր մի երկու նամակ ղրկելու office-ի[139] հասցէին անձնական բովանդակութիւնով, տեսնելու համար թէ նորից պիտի գողանա՞ն, իսկ կարեւոր նամակները գրիր Ալիխանեանի հասցէով կամ Ասատուրի:

Ես եւս նամակ գրած էի քեզ. արդեօք ստացա՞ր:

Ես գործ[ու]նէութիւնս շարունակում եմ եւ ծանօթութիւններիս շրջանը գնալով ընդլայնում է, բայց վճռական քայլեր չեմ անում, սպասելով քո վերադարձիդ:

Սնտուկները դեռ այնտեղ են[140], բայց չեմ կարող ապահովել նրանց ոտք մնալը...

Մնամ սիրով
Կ. ԶԱՐԵԱՆ

ԺԹ.

Մայիս 28 - 45
Վուդստոկ

Սիրելի Վրացեան,

Նորից ստիպուած եմ «Նաւի» հրատարակութեան գործի մասին գրել: Չեմ հասկանում ինչո՞ւ համար ձերոնք անպատճառ ուզում են ինձ դէմ անբարեացակամ գտնել. վերջը վերջով «Նաւը» մի գիրք է որ «Հայրենիք» հրատարակչութեան կարող է միայն պատիւ բերել: Խօսում ես պայմանագրութեան մասին. ես այդ պայմանագրութիւնը երբ ստորագրեցի՝ չգիտէի որ մէկը կար, որ ամբողջ ծախսերը պիտի վճարէր[141]: Մեր առաջի ժողովին Նիւ Եորկում Դարբինեանը ինձ ասեց, որ պայմանագրութիւնը ինձ առաջարկելու ժամանակ դու եւ Արմէն-Վահէն գիտէիք այդ դրամի մասին եւ ինձ ոչինչ չէք ասած: Ես շատ զարմացայ, զարմացայ նաեւ երբ կարդացի Էջմիածինցու[142] երկայն յօդուածը, ուր մանրամասն պատմում է այս ներդրութեան մասին[143]: Լաւ, ուրեմն - այդ մասին փաստաբանս էլ նոյն բանն է ասում - եթէ գրքիս գլխին մեծ տառերով տպուած է որ բոլոր ծախսերը վճարած է Յակոբեանը[144], ուրեմն ինչ որ ծախուած է՝ իմս է: Այդ պարզ է ինչպէս 2 x 2 = 4: Ի՞նչ պիտի շահի «Հայրենիքի» նման կէս դար կեանք ունեցող հաստատութիւնը անիրաւութիւն գործելով հայ գրագէտի դէմ, որ տարիներով աշխատակցած է այդ հանդէսին եւ աջակցած է նրա տարածման:

1935-ին ըստ իմ հաշիւներիս 250 դ. պարտք էին ինձ եւ չվճարեցին[145]: «Տատրագոմի Հարսը» հրատարակեցին եւ, Դարբինեանի նամակներին հակառակ, մի սենթ չվճարեցին: Հիմա էլ «Նաւը»: Ի՞նչ ես մտածում. ազնուութիւն է այս...

Մնամ սիրով
Կ. ԶԱՐԵԱՆ

Ի.

ARMENIAN
NATIONAL
COMMITTEE

ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

11 West 42nd St., New York 18, N.Y.
Telephone - Chickering 4-7712

8/VIII/1946/ Նիւ Եորք

Սիրելի Զարեան,

Ի՞նչ է պատահել քեզ, մարդ Աստծոյ: Մտահոգ եմ՝ արդեօք առողջութի՞ւնդ է պատճառը, որ գոնէ մէկ տող չգրեցիր: Այսօր, վերջապէս, ճարեցի հասցէդ. հասցէ էլ չէիր թողել:

Առանձին նորութիւններ չկան: Ջուլիանը[146] միայն երեւում է, յաճախ, ջղայնացած: Ես էլ au courant[147] չեմ, որ օգնեմ իրեն: Պէտք է գոնէ որոշ կարգադրութիւններ անէիր, որպէսզի Quarterly-ն[148] ժամանակին լոյս տեսնէ: Վախնամ՝ ուշանայ եւ նորից ասէ-կոսէների դռուռ բացի: Եթէ առողջութիւնդ լաւ չէ, գրիր, թէ ինչը ինչոց է եւ ինչ պէտք է անել Ջուլիանի գործը փութացնելու համար:

Քաղաքական աշխարհից, թերթերից դուրս, նոր տեղեկութիւններ չունենք. սպասում ենք, թէ ի՞նչ ընթացք պիտի ստանան Փարիզի ժողովի գործերը[149]: Թերեւս, կացութիւնը դրանից յետոյ, աւելի յստակ դառնայ:

Այս Կիրակի նշանակել ենք Յանձնախմբի լիագումար նիստ յառաջիկայ աշխատանքների ծրագիրը որոշելու համար: Ըստ երեւոյթին, վերջ ի վերջոյ, պէտք պիտի լինի դիմելու UN-ին[150] եւ այդ ուղղութեամբ պէտք է պատրաստուիլ:

Ամէնքը դեռ ողջ են եւ պայքարում են Նիւ Եորքի շոգերի դէմ: Անդամները ասում են. «Ի՞նչ եղաւ մեր մարդը: Կարօտել ենք արդէն»:

Յուսամ մտահոգութիւններս առողջութեանդ մասին հիմնաւոր չեն, եւ կազդուրած կը վերադառնաս:

Ջերմ բարեւներս Տիկնոջ, Յովանին:

Սիրով՝ Ս. ՎՐԱՑԵԱՆ

ԻԱ.

S. Vratzian

8/III/1950/Բոստոն

Սիրելի Զարեհ ս,

Արմէն Վահէն այսօր ասաց, թէ Իսրայէլ Օրիի մասին տեղեկութիւն ես ուզում ինձանից: Առիթ է, ուրեմն, որ մեր դարաւոր լռութիւնը խզի: Ինչո՞ւ այսպէս եղաւ, չեմ հասկանում: Գահիրէից վերադարձիս[151] չկարողացայ Իտալիայում մնալ անցագրային պատճառով. օդակայանից քեզ մի բարտ գրեցի: Ո՞ւ ահա տարիներ անցան - ո՛չ դու գրեցիր, ոչ ես: Բայց՝ աչքից հեռու, մտքից հեռու չէ, ի հարկէ: Մեծ յոյս ունիմ՝ այս ամառ՝ Իտալիա հանդիպիլ, քանի որ արդէն քաղաքացի եմ, եւ ուրեմն, նաեւ քեզ այցելել: Եթէ Տէրը կամենայ...

Յուսամ՝ նամակս առիթ կը լինի, որ դու էլ գրես քո եւ գործերի, ինչպէս նաեւ Տիկնոջ եւ սիրելի Յովհաննի [sic] մասին: Անշուշտ, երեքդ շատ լաւ էք ամէն տեսակէտից եւ ո՛չ միայն «լաւ ծուկ ու լաւ գինի» էք վայելում, այլեւս այդ գեղեցիկ երկրի մթնոլորտից էլ էք օգտւում: «Լա՛ւ գինի» կարո՞ղ ես ճաշակել[152]. Նիւ Եորքի դայէտից[153] ազատեցա՞ր:

Գալով Իսրայէլ Օրիին՝ նիւթ շատ կայ: Բայց, Վենետիկից դուրս, այն մեզ ո՞ւր կարելի է ճարել: Օրինակ՝ Экономические Отношения Петра Великого с армянским[154], Աշոտ Յովհաննիսեանի հատորը[155], Լէոյի Հայոց Պատմութեան երրորդ հատորը՝ տպւած Երեւան[156]:

Չեմ իմանում՝ յատկապէս ի՞նչն է հետաքրքրում քեզ, որ ըստ այն[մ] գրեմ: Իսրայէլ Օրիով, տարիներից ի վեր, զբաղւում է Հայկ Օհանեանը (Բերլինից)[157]. ունի Օրիի մասին ամբողջ գրականութիւնը՝ նաեւ վաւերագրային նոր գիւտեր է արել[158]: Եթէ նրան գրես, վստահ եմ, որ ըստ ամենայնի կը գոհացնի քեզ: Նրա հասցէն է.-

Mr. H. Ohanian
Ziegelh Landstr[asse], 29
Heidelberg
Germany, U.S. Zone

Իմ մասին շատ բան չկայ գրելիք. զէն լէ Կիկօ, զէն լէ Կիկօ: Վերջապէս, քաղաքացի դարձայ[159] եւ, ուրեմն, շարժելու ազատութիւն ստացայ: Յոյս ու-

ցիմ՝ այս ամառ ճամբորդութիւն կատարել դէպի Եւրոպա եւ Արեւելք: Ես էլ առողջական տագնապ անցրի՝ Դարբինեանի պէս. առատ արիւն կորցրի բքից եւ բաւական թոյլ եմ: Մտածում եմ մի-երկու ամսով Քալիֆորնիա անցնիլ՝ հանգստանալու:

Ջերմ յարգանքներս Տիկ. Զարեանին: Համբոյրներ՝ Յովհաննին:

Սիրով՝ Ս. ՎՐԱՑԵԱՆ

ԻԲ.

15-3-50
Forio d'Ischia
Italia

Սիրելի Վրացեան,

Մազալու[160] բան է, մի երկու օր առաջ քեզ երազումս տեսայ եւ այսօր նամակդ ստացայ: Հա՛ էլի, էլ ոչ գրեցիր եւ ոչ էլ հարցրիր իմ մասին: Աչքից հեռու՝ սրտից հեռու, ինչպէս ասում են: Իսկ ես «Հայրենիք»ներից տեսնում էի, որ ողջ առողջ, էստեղ էնտեղ խօսում ես, էս մեր ազգի տրամադրութիւնը էդպէս ասած վեր պահելու համար: Մինչ եկ տես, որ դու էլ հիւանդ ես եղել: Ինչպէս երեւում է ամէնքս էլ վատ եւ թշնամական մի շրջան ենք մտել: Նախ ես, ինչպէս միշտ բաւականի լուրջ հիւանդ եղայ, ապա Արմէն Վահէն գրեց, որ Դարբինեանի բքից արիւն է գալիս եւ լաւ չի[161]: Երէկ Նաւասարդեանից[162] շատ տխուր նամակ ստացայ. խեղճը քոռանալու վրայ է: Ասում է, աջ աչքը էլ չի տեսնում եւ կատրակտ[163] ունի: Այսօր էլ դու ես գրում, որ հիւանդ ես եղել: Աղա, չլինի՞ որ ծերանում ենք...

Գալով այդ երանելի Իսրայէլ Օրիին, ճիշդ ասած, երբ յօդուածներդ կարդացի[164], մէջս նորից որդը սկսեց ուտել, թէ ի՞նչ լաւ կ[ը] լիներ մի մեծ վէպ գրել նրա մասին: Ուստի ամէն կողմ գրեցի, որ նիւթ հասցնեն: Չօպանեանը միակը եղաւ, որ մի բան դրկեց[165], միւսները կամ գրքերի անուններ տուին, որ ես գիտէի վաղուց, կամ այնպիսի գներ ասացին, որ մարդ պէտք է միլիոնատէր լինի կարողանալ գնելու համար: Ուստի մտածեցի թէ դա ի՞նչ բախտ է. ոչ միայն գրականութիւնը հայ գրագէտին չի կերակրում, այլ դեռ պէտք է հարուստ լինել, որպէս զի հայ գրականութիւնով մարդ զբաղուի: Եւ այդ հարցը մի կողմ դրի[166]:

Մենք ամէնքս լաւ ենք: Յովանը ուսանում է Հռոմա[յ] համալսարանում եւ մենք էլ ապրում ենք այս մենակեաց կղզում, որպէս զի կարողանանք նրա ծախսերին հոգալ: Աժան եւ աշխարհից կտրուած տեղ է: Այս կողմերը անցնելու ժամանակ անպատճառ եկ մեզ տեսնելու. շատ եւ շատ ուրախ պիտի լինենք եւ կարող ենք քեզ մի քանի օրով հիւրասիրել:

Գրի՛ր: Ջերմ եւ բարեկամական բա[ր]եւներ մեր ամէնքի կողմից:

Կ. ԶԱՐԵԱՆ

Այդ մեր Ար[մէն] Վահէն ինչո՞ւ մնացած հօնօրարս (25 դ[ոլար]) չի դրկում: Երեւի սպասում է Զատիկին, որպէս զի դրամը ևւէրի ձեւով դրկի...[167] Եւ նաեւ ինչո՞ւ շաբաթաթերթը[168] մինչեւ հիմա Հոլանդա են դրկում[169]:

[1] Տե՛ս «Ամերիկա-Հայկական Մշակութային Ընկերակցութիւնը» (խմբագրական), *Հայրենիք*, 6 Նոյեմբեր 1945, էջ 4:

[2] Տե՛ս օրինակ՝ Վարդան Մատթէոսեան, *Կոստան Զարեանի Շուրջ (Ուսումնասիրութիւն)*, Անթիլիաս, «Գէորգ Մելիտինեցի» Գրական Մրցանակ, 1998, էջ 370-427:

[3] «Անգլերէն Գրականութեան Պահանջը» (խմբագրական), *Հայրենիք*, 19 Մարտ 1944, էջ 4:

[4] Ըստ Հ.Յ.Դ. Արխիւներու Հիմնարկի նորանշանակ տնօրէն Վաչէ Բրուտեանի, «*Մօտակայ ամիսներուն, պիտի սկսինք չարունակել արխիւներու դասաւորումի եւ դասակարգումի աշխատանքը: Մէկիկ-մէկիկ պիտի բանանք տուփերը, որպէսզի տեսնենք թէ նախ ի՞նչ կը պարունակենատոնք: Օրինակ, քանի մը տուփերու մէջ գետեղուած են Սիմոն Վրացեանի թուղթերը: Մ՛ով գիտէ, թէ այդ մեր բանալիք տուփերէն ի՛նչ նոր հարստութիւն պիտի յայտնաբերուի*» (Աբօ Պօղիկեան, «"ՀՅԴ Արխիւը Պատմական Միլիոնատոր Էջերու Հաւաքածոյ Է..."», Կը Յայտնէ ՀՅԴ Արխիւներու Հիմնարկի Տնօրէն Վաչէ Բրուտեան», *Հայրենիք*, 20 Փետրուար 2009, էջ 9):

[5] Տե՛ս Մուշեղ Իշխան, *Իմ ուսուցիչները*, Պէյրութ, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան, 1984, էջ 187:

[6] Տե՛ս մեր հրապարակումը՝ Սիմոն Վրացեան, «Երեւանն է Խօսում...», *Յառաջ Միտք եւ Արուեստ*, Մայիս 2001, էջ 4:

[7] Այդ նամակին մասին, տե՛ս Նորիկ Սարգսեան, «Սիմոն Վրացեանի Մի Նամակի Մասին», *Դրօշակ*, Հոկտեմբեր 2002, էջ 42-46: Յաւելեալ ճշդումներու համար, տե՛ս Վարդան Մատթէոսեան, «Սիմոն Վրացեանի Նամակ Մը եւ Իր Առեղծուածային Հասցէատէրը», *Յառաջ - Միտք եւ Արուեստ*, Նոյեմբեր 2008, էջ 2-3:

[8] «"Հայրենիք" Ամսագրի Հիմնադրամը եւ Նպատակները» (խմբագրական), *Հայրենիք*, 12 Յունուար 1947, էջ 4:

[9] Անդրանիկ Անդրէասեան, «Փղշտացիներու Խուճապը Կոստան Զարեանի Դարձին Հանդէպ», *Պայքար Երամսեայ*, Աշուն 1964, էջ 67:

[10] Կ՛ակնարկէ երկրորդ կնոջ՝ ամերիկացի նկարչուհի Ֆրենսիս Պրուբս-Զարեանին (1900-1963):

[11] Այս վէպը լոյս պիտի տեսնէր իտալերէն թարգմանութեամբ Իտալիոյ մէջ, պատերազմին սկիզբը, բայց գրաքննական հարցեր թոյլ չտուին այս մտադրութեան իրականացումը, ինչպէս կը յայտնէ հեղինակը Պոստրնի հրատարակութեան յառաջաբանին մէջ: Տե՛ս Վարդան Մատթէոսեան, «Կոստան Զարեան, Մուսոլինի եւ Յարակից Առասպելներ», *Յառաջ Միտք եւ Արուեստ*, Փետրուար 2009, էջ 1:

[12] Կոստան Զարեան, *Տատրագոմի Հարսը*, Պոստրն, «Հայրենիք» տպարան, 1930:

[13] Նոյեմբեր 2, 1932ին *Հայրենիքի* խմբագիր Ռուբէն Դարբինեանը գրած էր Զարեանին, թէ «*Հագիւ մէկ թէ երկու օրինակ է ծախուած մինչեւ այժմ: Ամբողջ գրքերը հոս են: Եթէ ճամբու ծախսը յանձն առնէք, կրնանք Ձեզ դրկել (այս մասին կ[եդրոնական] կոմիտէի հետ չեմ խօսած, բայց վստահ եմ, չեն հակառակիր)*» (Վարդան Մատթէոսեան, «Նամականի Կոստան Զարեանի եւ Ռուբէն Դարբինեանի», *Բազմավէպ*, 1-4, 2003, էջ 248):

[14] Աւետիս Ահարոնեան (1866-1948), արեւելահայ նշանաւոր վիպագիր եւ քաղաքական գործիչ: Զարեանի հետ լայն նամակագրութիւն ունեցած է 1920-30ականներուն (տակաւին անտիպ):

[15] Կարօ Սասունի (1889-1977), արեւմտահայ գրագէտ, յեղափոխական-քաղաքական գործիչ: 1930ականներու սկիզբներուն բղաակցած է Զարեանի հետ: Սասունիին ուղղուած Զարեանի նամակները սկսած են լոյս տեսնել *Բագին* ամսագրին մէջ, 1978ին, բայց հրատարակութիւնը կիսատ մնացած է:

[16] Ռուբէն Տէր Մինասեան (1882-1951), յեղափոխական գործիչ: Զարեանի հետ բղաակցած է 1920-30ականներուն: Տե՛ս Վարդան Մատթէոսեան, «Կոստան Զար-

եանի Անտիպ Նամակը Ռուբէն Տէր-Միհասեանին», *Հորիզոն Գրական Յաւելուած*, Մայիս 2001, էջ 1-4:

[17] Կ՛ակնարկէ *Հայրենիք* ամսագրի 1939ի առաջին երեք թիւերուն մէջ Յակոբ Օշականի «Մինչեւ Ո՞ւր...» բատերախաղին հրատարակութեան, որուն նիւթը քաղուած էր Զարեանի անծնական կեանքէն: Որպէս հակազդեցութիւն, Զարեան խզած է իր յարաբերութիւնները ամսագրին հետ մինչեւ 1947: Այս մասին, տե՛ս Ռուբէն Դարբինեանի Ապրիլ 23, 1946ի նամակը Զարեանին (Մատթէոսեան, «Նամականի», էջ 251-252):

[18] Մեծի Տանն Կիլիկիոյ ապագայ Գարեգին Ա. կաթողիկոսը՝ բանասէր Գարեգին արք. Յովսէփեանցը (1867-1952), Ամերիկայի Հայոց Արեւելեան Թեմի առաջնորդն էր 1939-1943ին:

[19] Ռուբէն Դարբինեան (1883-1968), *Հայրենիք* օրաթերթի եւ ամսագրի երկարամեայ խմբագիր:

[20] Մշակութային կեդրոնի յիշեալ գաղափարը իրականացած չէ:

[21] Յակոբ Խաշմանեան (1888-1968), կուսակցական գործիչ՝ Նիւ Եորք բնակող:

[22] Արմէն Վահէ (Գալուստ Չպուքճեան, 1894-1976), *Հայրենիք*ի վարչական պատասխանատու:

[23] Յայտնի չէ, թէ Զարեան ի՞նչ վիրաբուժական գործողութեան ենթարկուած է:

[24] Հաւանաբար կ՛ակնարկէ համաշխարհային պատերազմի յարափոփոխ իրադարձութիւններուն:

[25] Ա[ետիք] Իսահակեան, «Արկածախնդիրները», *Լրաբեր*, Յունուար 8, 1943: Այս յօդուածը, որ Մոսկուայէն հեռագրուած էր, լոյս տեսաւ առանձին գրքոյկով եւ յարակից նիւթերու յաւելումով (Ա[ետիք] Իսահակեան, *Արկածախնդիրները*, Նիւ Եորք, հրատ. Ամերիկահայ Յառաջդիմական Միութեան, 1943): Յօդուածը նոյնպէս հեռագրուած էր Ֆրեզնոյի *Նոր Օր* շաբաթաթերթին, ուր լոյս տեսաւ 15 եւ 22 Յունուար 1943ի թիւերով, ապա՝ առանձին գրքոյկով, դարձեալ յարակից նիւթերու յաւելումով (Ա[ետիք] Իսահակեան, *Արկածախնդիրները*, տպարան «Նոր Օր»ի, Ֆրեզնօ, 1943): Յօդուածը նոյնպէս առաբուած էր ոչ-դաշնակցական ճակատի այլ թերթերու (հմմտ. *Ժողովուրդի Ձայն*, 28 Յունուար 1943): Իսահակեանի այս յօդուածը կոչ կ՛ուղղէր իր կուսակցական նախկին ընկերներուն գատորոշուիլ Գերմանիոյ մէջ նացիներու հետ գործակցող դաշնակցականներէն եւ ըստ Դաշնակցութեան հին աւանդներուն հայրենիքի պաշտպանութեան ի նպաստ կանգնիլ:

[26] *Հայրենիք* օրաթերթը իրերայաջորդ երեք խմբագրականներով անդրադարձած է Իսահակեանի յօդուածին. «Խորհրդ[ային] Կառավարութեան Հարցումները Դաշնակցութեան» (Յունուար 16, 1943), «Սխալ Հասցէի Ուղղուած Կոչ Մը եւ Յորդոր Մը» (Յունուար 17, 1943) եւ «Քանի Մը Ճշմարտութիւններ» (Յունուար 19, 1943):

[27] Այսինքն՝ բոլշեւիկներու (ռուս. «մեծամասնական»):

[28] Կ՛ակնարկուի Իսահակեանի յիշատակութեան՝ Ալեքսանդր Խատիսեանի, Զօր. Դրոյի եւ Արտաշէս Աբեղեանի գործակցութեան՝ նացիական Գերմանիոյ իշխանութիւններուն հետ:

[29] Սկզբունքներու (ռուս.):

[30] Atlantic Charter՝ Օգոստոս 1941ին ԱՄՆի նախագահ Ֆրանքլին Ռուզվելթի եւ Մեծն Բրիտանիոյ վարչապետ Ուինսթըն Չըրչիլի ստորագրած համատեղ յայտարարութիւնն էր, որ յետպատերազմեան աշխարհին համար նպատակներ կը դնէր: Ան կը յայտնէր, թէ երկու երկիրները հողային շահեր պիտի չհետապնդէին, տարածքային փոփոխութիւնները պիտի յարգէին շահագրգիռ ժողովուրդներու փափաքները/ցանկութիւնները, ամէն ժողովուրդի ինքնորոշման իրաւունքը պիտի ընդունուէր, եւն.: Յունուար 1942ին 26 երկիրներ եւս միացած էին յայտարարութեան («Պատմական Վաւերագրեր», *Հայրենիք Տարեգիրք*, 1944, էջ 215-217):

[31] Թերեւս կ՛ակնարկէ վաւերագրի երրորդ կէտին, որ կ՛ընդունէր, որ բոլոր ժողովուրդները ինքնորոշման իրաւունք ունէին, ինչ որ հակասութեան մէջ էր, օրինակ, Անգլիոյ գաղութային քաղաքականութեան հետ:

[32] Հմմտ. ԱՄՆի նախագահ Հ. Թրումընի Մարտ 1947ի յայտարարութիւնը («Թրումընեան Վարդապետութիւն»), որ ամերիկեան արտաքին քաղաքականութեան յենարան կը դարձնէր Յունաստանի եւ Թուրքիոյ ընծայուելիք օժանդակութիւնը՝ խորհրդային հակակշիռէն խուսափելու համար:

[33] *Christian Science Monitor*՝ ամերիկեան օրաթերթ, որ լոյս կը տեսնէ 1908էն, Պոստոնի մէջ: Կը հրատարակուի «Գիտական Քրիստոսի Եկեղեցւոյ» կողմէ եւ ծանօթ է միջազգային լուրերու (ի մասնաւորի՝ Միջին Արեւելքի) լայն տեղեկատուութեամբ: 2009ին վերածուած է համացանցային օրաթերթի, պահելով շաբաթական տպագիր հրատարակութիւններ:

[34] 1941-44ին, կառավարութեան բոյլտուութեամբ, համաթրքական շարժումը կրկին զարթօնք ապրած էր Թուրքիոյ մէջ: 1944ին, երբ խորհրդային հակայարձակումը արդէն Գերմանիոյ դիրքերը անվերադարձ կերպով վտանգած էր, շարժումը ճգմուեցաւ թուրք կառավարութեան կողմէ՝ սիրաշահելու համար իր դիրքերը վերականգնող արեւելեան հզօր դրացին:

[35] Ուենտէլ Լուիս Ուիլքի (1892-1944), ամերիկացի արդիւնաբերող եւ քաղաքական գործիչ: 1940ի ընտրութիւններուն Հանրապետական Կուսակցութեան թեկնածուն էր եւ պարտուած է Ռուզվելթէն, որուն պատերազմական ջանքերուն զօրավիգ կանգնած է այնուհետեւ:

[36] Tories՝ Անգլիոյ Պահպանողական Կուսակցութիւնը:

[37] Լիպարիտ Նազարեանց (1877-1947), արեւելահայ գրագէտ եւ քաղաքական գործիչ: Զարեանի եւ իր յարաբերութեան մասին, տե՛ս՝ Վարդան Մատթէոսեան, «Կոստան Զարեան եւ Լիպարիտ Նազարեանց», *Հորիզոն - Գրական Յաւելուած*, Սեպտեմբեր 1994:

[38] Նազարեանց՝ 1910ականներու սկիզբներուն Պոլիս ապրելէ ետք, 1915ի Յունուարին եւ Մարտին գաղտնաբար վերադարձած է օսմանեան մայրաքաղաքը յատուկ առաքելութեամբ:

[39] 1871ին ֆրանսական Ալզաս-Լոռէնը (Alsace-Lorraine) գրաւուած էր Գերմանիոյ կողմէ ու Ա. Աշխարհամարտի վերջաւորութեան Ֆրանսան ետ առած էր զայն:

[40] Կ՛ակնարկէ ԱՄՆի նախագահ Վուտրօ Ուիլսընին (1856-1922), որ Ա. Աշխարհամարտի աւարտին համբաւաւոր «14 Կէտեր»ը հեղինակած էր, որոնք կոչուած էին յետպատերազմեան աշխարհը վերադասաւորելու:

[41] Komintern՝ Գ. Միջազգայնականը (1919-1943), որ կը համախմբէր աշխարհի համայնավար կուսակցութիւնները եւ կը գտնուէր Խորհրդային Միութեան անմիջական ղեկավարութեան տակ:

[42] Կ՛ակնարկէ «Քանի Մը Ճշմարտութիւններ» խմբագրականին (*Հայրենիք*, 19 Յունուար 1943, էջ 4): Այս նամակէն կարելի է հետեւցնել, որ այդ խմբագրականները, որոնք կ՛անդրադառնան Իսահակեանի յօդուածին մէջ արծարծուած հարցերուն, գրած է Վրացեանը եւ ո՛չ թէ Ռ. Դարբինեանը:

[43] Մաքսիմ Լիտվինով (1876-1951), հին բոլշեւիկ, ԱՄՆի մօտ Խորհրդային Միութեան դեսպան 1941-1943ին:

[44] Էմիլ Զոլա (1840-1902), ֆրանսացի վիպասան:

[45] Էրնեստ Ռընան (1823-1892), ֆրանսացի փիլիսոփայ:

[46] Կ՛ակնարկէ ռուսերէն բառերու տառադարձութեան եւ ո՛չ թէ թարգմանութեան:

[47] *Հոսփոտի փամփլոյ*. «Տէր ողորմեա» (ռուսերէն), թէեւ այստեղ կ՛ակնարկէ թարգմանութեան (հմմտ. Կոստան Զարեան, *Նայր Լերան Վրայ*, Պոստըն, «Հայրենիք» տպարան, 1943, էջ 352):

[48] Լեւ Տոլստոյ (1828-1910), ռուս վիպասան:

[49] Հաւանաբար Ահմէտ Էմին Եալման (1888-1972), թուրք լրագրող:
[50] Ամերիկեան ամսաթերթ (Նիւ Եորք, 1941-1946): Յօդուածը տեսած չենք:
[51] Նամակին վերեւը գրուած են «պատճէն» եւ «Կոստան Զարեանին» բառերը: Նամակը յայտնապէս սեւագրութիւն է: Իրենց կարեւորութեան համար, շեղատառ եւ սուրանկիւն փակագիծերու մէջ կը ներկայացնենք Վրացեանի ջնջած բառերը կամ նախադասութիւնները:
[52] Հմմտ.՝ Վրացեանի հաստատումը *Նաւը Լերան Վրայ*ի նուիրուած իր գրախօսականին մէջ. *«Բայց իր նեղ սահմաններուն էլ Զարեանի վէպը խոշոր երեւոյթ է արդի հայ գրականութեան մէջ՝ թէ որպէս արուեստի գործ եւ թէ իբրեւ հայ կեանքի փիլիսոփայութիւն»* (Սիմոն Վրացեան, «"Նաւը Լերան Վրայ". Կոստան Զարեանի Նոր վէպը», *Հայրենիք*, 1 Մարտ 1944), էջ 1):
[53] Հմմտ.՝ Վրացեանի գրախօսականին հետեւեալ տողերը. *«Հէնց սկզբից ընթերցողը վէպի մէջ սպասում է տեսնել հայ կեանքի մօտիկ անցեալի, ամենայուզումնալից մի շրջանի ազգային վէպը* (epopée), *ինչպէս Լ. Տօլստոյի "Պատերազմը եւ խաղաղութիւնը" իր ժամանակաշրջանի համար»* (Վրացեան, «"Նաւը Լերան Վրայ"», էջ 1):
[54] Կլիմա (ֆր.):
[55] Տաճկահպարով մահացած անձնաւորութիւն մըն է, ըստ երեւոյթին՝ ռուսացած հայ մը, որուն մասին ակնարկութիւն կայ վէպին մէջ (Զարեան, *Նաւը*, էջ 324-326), իսկ Ստեփան Մարկոսովիչը՝ նոյն վէպի հերոս՝ Հերեանի գացած մէկ ճաշկերոյթին բամատան (անդ, էջ 330-335):
[56] Այս նախադասութիւնը հանուած է վէպէն (հմմտ.՝ անդ, էջ 360):
[57] Հմմտ.՝ հետեւեալ պարբերութիւնը, որ կը վերաբերի խորհրդայնացումի նախօրեակին. *«Պարլամենտի եւ կառավարութեան նիստերը չարունակւում էին գիշեր եւ ցորեկ։ Ճառեր էին արտասանում, որոշումներ էին առնում, որ անհնարին էր գործադրել»* (անդ, էջ 360):
[58] «Աշոտ Երկաթ»՝ 1920ին Սեւանայ լիճը նաւարկող ռազմանաւ (տե՛ս՝ Մատթէոսեան, *Կոստան Զարեանի Շուրջ*, էջ 371-372):
[59] «Աշոտ Երկաթ»ի հանդէսին, ըստ վէպին, խօսք առած է նախարար մը (կամ *«նախարարութեան ժողովի նախագահը»*. ինքնութիւնը անորոշ է), որ *«ծիծաղելի մի մարդ»*ու տպաւորութիւն չի ձգեր (հմմտ.՝ *Նաւը*, էջ 269-270):
[60] Կ՛ակնարկէ Հայաստանի Հանրապետութեան առաջին վարչապետ Յովհաննէս Քաջազնունիի առաջին ճառի նշանաւոր բանաձեւումին, թէ՝ Հայաստանը *«անձեւ քաոս»* էր:
[61] Հմմտ. Վրացեանի գրախօսականին հետեւեալ տողերը. *«Վէպի Ֆոնը, գրեթէ ամբողջապէս, մռայլ ներկերով է գունաւորուած, ինչ որ իրական չէ բնաւ. Զարեանի առած պատմական շրջանում, Հայաստանում միայն աւեր ու խուժան, պատերազմ ու գաղթականութիւն չէ եղած, այլեւ պետական կառուցման ու շինարարութեան պաճուճ* (...)» (Վրացեան, « «"Նաւը Լերան Վրայ"», էջ 1):
[62] Զարեան Հայաստան այցելած էր Հոկտեմբեր 1919ին իբրեւ իտալական թերթերու թղթակից (Մատթէոսեան, *Կոստան Զարեանի շուրջ*, էջ 114):
[63] Մովսէս Խորենացիի նշանաւոր խօսքը (*Պատմութիւն Հայոց*, Ա. գիրք, Գ. գլուխ):
[64] Հայաստանի (այսօր՝ Երեւանի) Պետական Համալսարանը հիմնուած է Յունուար 1920ին Ալեքսանդրապոլի (այժմ՝ Գիւմրի) մէջ:
[65] Նիկոլ Աղբալեան (1873-1947), արեւելահայ գրաքննադատ, մանկավարժ եւ քաղաքական գործիչ:
[66] Եուրի Ղամբարով (1850-1926), նշանաւոր իրաւաբան, Հայաստանի (Երեւանի) Պետական Համալսարանի առաջին տեսուչը:
[67] Հմմտ.՝ Հանրապետութեան պատմութեան լաւագոյն գիտակ Ռիչըրտ Յովհաննէսեանի հետեւեալ հաստատումը.- «1920ի գարնան տրամադրելի բոլոր հողերը ցանե-

յու կառավարութեան արշաւը յարաբերական յաջողութիւն ունեցաւ, քանի որ շուրջ 350.000 փութ (6.000 բոն) սերմ բաժնուեցաւ գիւղացիական համայնքներուն եւ գիւղական ինքնաբարելաւման վարչական յանձնաժողովներուն՝ *զեմստուա*ներուն» (Richard G. Hovannisian, *The Republic of Armenia, vol. III: From London to Sèvres, February-August 1920*, Berkeley-Los Angeles-London, University of California Press, 1996, p. 6):

[68] Քամիլլօ Պենսօ, կոմս Քաւուր (1810-1861), քաղաքական գործիչ, իտալական միասնական թագաւորութեան հիմնադիրներէն մէկը:

[69] Այս ակնարկութիւնը չկայ վէպին մէջ եւ կը թուի ջնջուած ըլլալ: Հմմտ.՝ սակայն էջ 398 (*«Ջկար ուժգին անձնաւորութիւնը, որ ժողովուրդների կեանքի դժւարին վայրկեաններին, պատմութեան փոթորկած ծովում կանգնում է ինչպէս փարոս եւ ցոյց տալիս փրկութեան ճանապարհը»*) եւ էջ 440 (*«Մեզ պէտք էր մի Գարիբալդի…»*):

[70] Արամ Մանուկեան (1879-1919), յեղափոխական-կուսակցական գործիչ, կը համարուի Հայաստանի Ա. Հանրապետութեան հիմնադիրը:

[71] Խաչատուր Կարճիկեան (1882-1918), հանրային գործիչ, Հայաստանի Հանրապետութեան Պարենաւորման, ապա՝ Ելեմտական նախարար:

[72] Միհաս Բէրբէրեան (1871-1919), գրականագէտ, հանրային գործիչ, Հայաստանի Հանրապետութեան Պետական Վերահսկիչ:

[73] Մովսէս Սիլիկեան (1872-1937), գինուորական, Ղարաքիլիսէի ճակատամարտի հրամանատար:

[74] Դրօ (Դրաստամատ Կանայեան, 1884-1956), յեղափոխական գործիչ, Բաշ Ապարանի ճակատամարտի հրամանատար:

[75] Թովմաս Նազարբէկեան (1855-1931), գինուորական, Հայաստանի Ա. Հանրապետութեան բանակի գլխաւոր հրամանատար:

[76] Ալեքսանդր Թամանեան (1878-1936), ճարտարապետ, Երեւանի գլխաւոր յատակագծի հեղինակ: Հեղինակած է Հայաստանի Հանրապետութեան գինանշանը:

[77] Հմմտ.՝ Զարեան, *Նաւը*, էջ 268-270:

[78] Հմմտ.՝ անդ, էջ 358. *«Վառելիք չկար, վագոններ չկային, շոգեշարժ մեքենաներ չկային: / Ո՛չինչ չկար»*:

[79] Հմմտ.՝ անդ, էջ 356, ուր կովերը անհետացած են. *«Պատին կպցրած կոչերը եւ յայտարարութիւնները անձրեւից յետոյ վայր էին թափւում: Թուղթը ալիւր էր հոտում: Գաղթականները նետւում էին նրանց վրայ, իրենց բերանը լեցնում, ծամում»*:

[80] Այս պարբերութիւնը հանուած է վէպէն:

[81] Kapliia degtiia portit bochku meda: Ռուսերէն ասացուածք. բառացի՝ «Դգալ մը կոպրը մեղրի տակառը կը փճացնէ»:

[82] Բացառելով մանր ճշդումներ (հմմտ.՝ ծանօթ. 44 եւ 61), Զարեան էական վերանայումի ենթարկած չէ վէպը:

[83] Այս նամակին կից կենսագրական նոթերը ներկայացուած են նամակէն անմիջապէս ետք, առանձին էջերու վրայ:

[84] Վէպը լոյս տեսած է Դեկտեմբեր 31, 1943ին:

[85] Միայն այստեղ է, որ Զարեան «Բոստոն» գործածած է:

[86] Ֆրանսերէն՝ «մեր միջեւ»:

[87] 1944ի դասախօսութիւնը Զարեանի առաջին հրապարակային ելոյթը պիտի ըլլար այս նիւթին շուրջ: Իր ուսումնասիրութեան հիմնական դրոյթները ամփոփուած են 1967ին լոյս տեսած յօդուածին մէջ (*Սովետական Արուեստ*, 4, 1967, էջ 42-48 եւ 5, 1967, էջ 28-31: Հմմտ.՝ Կոստան Զարեան, *Նաւատոմար*, Երեւան, 1999, էջ 537-557):

[88] Գրչավրէպ կամ յիշողութեան վրիպում պէտք է նկատել ասիկա, քանի որ Զարեան ստուգապէս ծնած է 8 (նոր տոմարով՝ 21) Փետրուար 1885ին, ինչպէս գրուած է մեր հրատարակած ծննդեան վկայականին մէջ («Թուղթ Ծննդեան», *Յառաջ Միտք եւ*

Արուեստ, Դեկտեմբեր 1994, էջ 4. հմմտ.՝ Մատթէոսեան, *Կոստան Զարեանի Շուրջ*, էջ 23-24):

[89] Պարուի մէջ:

[90] Այս երեք անուններէն ցարդ ուսումնասիրողներուն միայն յայտնի է *Le Thyrse*ի աշխատակցութիւնը (տե՛ս՝ Մատթէոսեան, *Կոստան Զարեանի Շուրջ*, էջ 43):

[91] Զարեան Պոլիս գտնուած է Հոկտեմբեր 1910էն մինչեւ Յունիս 1911:

[92] Ճիշդը՝ Փետրուար 1913ին:

[93] «Մեհեան» ամսագիրը լոյս տեսած է Յունուար-Յուլիս 1914ին:

[94] Զարեան Պուլկարիա գտնուած է Նոյեմբեր 1914էն մինչեւ Հոկտեմբեր 1915:

[95] *Երեք Երգեր Ասելու Համար Վիշտը Երկրի եւ Վիշտը Երկնքների* վիպերգին իտալերէն թարգմանութիւնը առաջին անգամ լոյս տեսած է 1916ին:

[96] Զարեանի ցարդ յայտնի աշխատակցութիւնը օտար (արեւմտեան) մամուլին ընդհանրապէս Constant Zarian կամ C.Z. ստորագրուած է: Ռուսալեզու մամուլին մէջ գործածած է *Կոստար* ծածկանունը: Այլ ծածկանուններ յայտնի չեն մեզի:

[97] *Հայրենիք* ամսագիր, 1926-1928:

[98] *Հայրենիք* ամսագիր, 1925:

[99] *Հայրենիք* ամսագիր, 1930:

[100] *Հայրենիք* ամսագիր, 1930 (միաժամանակ՝ առանձին գիրքով):

[101] *Հայրենիք* ամսագիր, 1935-1938:

[102] *Հայրենիք* ամսագիր, 1931-1933:

[103] Kingston, փոքր քաղաք Նիւ Եորք նահանգին մէջ՝ Նիւ Եորք քաղաքէն շուրջ 150 քիլոմեթր դէպի հիւսիս:

[104] Դասախօսութիւնը՝ «Լէոնարտօ Տա Վինչիի եւ Հայաստանը», տեղի ունեցաւ Մարտ 2, 1944ին (տե՛ս՝ «Կոստան Զարեանի Դասախօսութիւնը «Հայրենիք»ի Սրահին Մէջ», *Հայրենիք*, 4 Մարտ 1944, էջ 1): Դասախօսութեան լրագրական ամփոփումը տե՛ս՝ «Լէոնարտօ Տա Վինչի եւ Հայաստան», *Հայրենիք*, 10 Մարտ 1944, էջ 1-2:

[105] Ալպըն՝ Նիւ Եորք նահանգին մայրաքաղաքը:

[106] Վէպը լոյս տեսած է Դեկտեմբեր 31, 1943ին: Առաջին գրախօսականը գրած է Նոյեմբեր Վրացեանը եւ լոյս տեսած է Զարեանի Պոստըն տուած դասախօսութեան նախօրեակին (Սիմոն Վրացեան, «"Նաւը Լերան Վրայ". Կոստան Զարեանի Նոր Վէպը», *Հայրենիք*, 29 Փետրուար եւ 1 Մարտ 1944):

[107] Կը թուի թէ կ'ակնարկէ իր դէմ եղած թշնամանքի մը:

[108] Արմենակ Ալիխանեան (1890-1977), բժիշկ ու հրապարակագիր: Վրացեանէն ետք, *Նաւը Լերան Վրայ*ի երկրորդ գրախօսականը հրատարակած է *Հայրենիք* օրաթերթին մէջ (Մուսասիրցի, «Կոստան Զարեանի Գիրքը «Նաւը Լերան Վրայ», *Հայրենիք*, 15 եւ 16 Օգոստոս 1944):

[109] Ակնարկութիւնը պարզ չէ:

[110] Յովան Զարեան (1930), բուաբանագէտ, Կոստան Զարեանի երկրորդ ամուսնութենէն ծնած զաւակը:

[111] Այդ նամակին ճակատագիրը անյայտ է:

[112] Թերեւս կ'ակնարկէ «Սրտի Ճանապարհը» վիպերգին, որ 1948ին լոյս տեսած է *Նայիրի* ամսագրին մէջ:

[113] Այսինքն՝ Վրացեանի ապրած պանդոկին մէջ:

[114] Prishla beda, otkrivaii vorota: Ռուսերէն ասացուածք, բառացի՝ «փորձանքը որ եկաւ՝ բաց դարպասները» (հայերէն՝ «փորձանքը միեւնակը չի գար»):

[115] Կ'ակնարկէ Ալիխանեանին:

[116] Հաւանաբար կ'ակնարկէ Հայ Դատի Յանձնախումբի կազմակերպական ժողովներէն մէկուն: Յանձնախումբը հիմնուած ու իր առաջին նիստը գումարած էր Դեկտեմբեր 1944ին:

[117] Կառավարական պարտաթուղթեր, որոնք Բ. Աշխարհամարտի ընթացքին թողարկուեցան՝ ԱՄՆի պատերազմական գործունէութիւնը ֆինանսաւորելու նպատակով: Ըստ տուեալներու, 85 միլիոն ամերիկացիներ գնած են զանոնք՝ 185.700 միլիոն տոլարի արժէքով:

[118] Ըստ երեւոյթին, Չարեան տարակարծութիւններ ունեցած ու Հայ Դատի Յանձնախումբի կազմէն իր հրաժարականը տուած է, զոր, դատելով դէպքերու յետագայ ընթացքէն, յետս կոչած է:

[119] Այսինքն՝ կուսակցական կազմը:

[120] Էտուըրտ Ստեթինիուս (1900-1949), ԱՄՆի Պետական Քարտուղար 1944-1945ին:

[121] *Հայրենիք* ամսագրին մէջ լոյս տեսնելէ ու անաւարտ մնալէ ետք (1931-1933), *Բանկօօպը եւ Մամուլի Ոսկորները* առանձին գիրքով հրատարակուած է աւելի քան կէս դար ետք (Անթիլիաս, 1987):

[122] Չարեան նկատի ունէր, հաւանաբար, վէպին հակախորհրդային քննադատութիւնը:

[123] Յոյն փիլիսոփայ Հերակլիտի նախադասութիւնը, որ *Նաւը Լերան Վրայ*ի բնաբանը կը կազմէ:

[124] Այսինքն՝ Արմէն-Վահէն:

[125] Այեքսանդր Պուշկին (1799-1837), ռուս հռչակաւոր բանաստեղծ:

[126] Է. Ֆ. Լ. Վուտ, լորտ Հալիֆաքս (1881-1959), անգլիացի քաղաքական գործիչ, ԱՄՆի մօտ Անգլիոյ դեսպան (1942-1946):

[127] Մերձաւոր Արեւելքի (անգլ.):

[128] Արեւելեան Եւրոպայի Գործեր (անգլ.):

[129] Ասատուր Խտրեան (1893-1955), կուսակցական գործիչ:

[130] Կ՚ակնարկէ Հայ Դատի Յանձնախումբի գրասենեակին:

[131] Յուշագիրը (անգլ.): Կ՚ակնարկէ Հայ Դատի Յանձնախումբի պատրաստած հրատարակութեան՝ «Հայկական Հարցի Վերաբերեալ Յուշագիր Մը» (տե՛ս՝ այս նամակին կից գրութիւնը):

[132] Մեկնաբանութիւններուն (անգլ.):

[133] *The Frontier Between Armenia and Turkey as Decided By President Wilson*, New York, Armenian National Committee, 1945.

[134] Վրացեան Սան Ֆրանսիսկօ էր, ուր կը գլխաւորէր Հայ Դատի Յանձնախումբի պատուիրակութիւնը որ շփումներ կը հաստատէր Միացեալ Ազգերու Կազմակերպութեան հիմնադրութիւնը նախապատրաստող ու հոն ժողով գումարած երկիրներու պատուիրակութիւններուն հետ: Յունիս 7, 1945ին պատուիրակութիւնը Հայ Դատը արծարծող յուշագիր մը կը ներկայացնէր ժողովին:

[135] Տեղեկատու (անգլ.):

[136] Հայ Դատի Յանձնախումբի հրատարակած *Armenian Bulletin*էն լոյս տեսած են 8 թիւեր մինչեւ 1947:

[137] ԱՄՆի Արտաքին Գործոց Նախարարութիւն:

[138] Յիշեալ նամակը գողցուած էր ռուսական դեսպանատան աշխատակիցներուն կողմէ եւ ղրկուած՝ Մոսկուա (հմմտ.՝ Սարգսեան, «Սիմոն Վրացեանի Մի Նամակի Մասին», էջ 42:

[139] Գրասենեակ (անգլ.):

[140] Այսինքն՝ Վրացեանի պանդոկի սենեակին մէջ:

[141] Ինչպէս վկայած է Լեւոն Յակոբեանի մահուան առիթով գրուած *Հայրենիք*ի խմբագրականը, հանգուցեալը ուզած էր *Հայրենիք* ամսագրին մէջ հրատարակուած Ռուբէնի *Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները* շարքին մեկենասութիւնը ստանձնել.- «*Խմբագրութիւնս նամակով մը իրեն բացատրեց, թէ պատերազմի այս օրերուն, երբ մենք կտրուած ենք Ռուբէնէն, կարելի չէ իրագործել իր այդ փափաքը, որովհետեւ Ռուբէնի հաւանութիւնը, սրբագրութիւններն ու լրացումները պէտք են իր յուշերը հատորներու ձեւով վերհրատարակելու համար: Բայց միաժամանակ մենք*

թելադրեցինք մեր ողբացեալ ընկերոջ, որ իր ծախքով հրատարակէ Կոստան Զարեանի Հայաստանի Հանրապետութեան կեանքէն առնուած մէկ մեծ վէպը («Նաւը Լերան Վրայ»), որ գրական գլուխգործոց մըն է եւ, սակայն, դրամական միջոցներ չըլլալու պատճառով, կը մնայ ձեռագիր վիճակի մէջ։ Ընկ. Լեւոն Յակոբեան, առանց վէպին հետ ծանօթանալու, նամակով մը խոստացաւ ստանձնել անոր հրատարակութեան ծախքերը, ինչ որ ե՛ւ կատարեց իրեն յատուկ խղճմտութեամբ» («Ընկ. Լեւոն Յակոբեան», *Հայրենիք*, 1 Նոյեմբեր 1944, էջ 4)։ Լ. Յակոբեան 1500 տոլարի նուիրատուութիւն կատարած է այդ նպատակով (Մ. Վրոյր, «Ընկեր Լեւոն Յակոբեան», *Հայրենիք*, 7 Նոյեմբեր 1944, էջ 2)։

[142] Ճիշդը՝ Էջմիածնեցի (Տրդատ Գազանճեան, 1892-1966), *Հայրենիքի* աշխատակից։

[143] Էջմիածնեցի, «Ընկ. Լեւոն Յակոբեան», *Հայրենիք*, 25 Նոյեմբեր 1944, էջ 1-2։

[144] Լեւոն Յակոբեան (?-1944), կուսակցական գործիչ, *Ասպարէզ* օրաթերթի հիմնադիրներէն։

[145] Նկատի ունի *Բանկօօսը եւ Մամուրի Ոսկորները* հրատարակութեան առիթով (1931-33) պատուագիներու պարտքը։

[146] Ճուլիանօ Պոնֆանթէ (1904-2005), իտալացի լեզուաբան, *Armenian Quarterly*ի խմբագրութեան անդամներէն մէկը։

[147] «Տեղեակ չեմ» (ֆրանսերէն)։

[148] *Armenian Quarterly*, Միացեալ Նահանգներու առաջին հայագիտական հանդէսը (խմբագիր՝ Կոստան Զարեան), որ լոյս տեսած է միայն երկու թիւով, 1946ին, եւ այնուհետեւ դադրած է ցարդ անյայտ պայմաններու մէջ։

[149] Կ՚ակնարկէ Յուլիս 29, 1946ին Փարիզի մէջ գումարուած ժողովին՝ ՄԱԿի հիմնադիր 21 պետութիւններու ներկայացուցիչներուն մասնակցութեամբ։

[150] UN (United Nations) - Միացեալ Ազգերու Կազմակերպութիւնը։ Օգոստոս 14, 1946ին Ֆրանսայի Հայ Դատի Պաշտպանութեան Յանձնախումբը (Comité de Defense de la Cause Arménienne) կոչ ուղղեց ժողովի մասնակիցներուն՝ Հայկական Հարցը օրակարգի նիւթ դարձնելու (տե՛ս՝ H. Thorossian, *Armenia y la Causa Armenia*, Buenos Aires, 1985, էջ 105)։

[151] Հաւանաբար կ՚ակնարկէ Հ. Յ. Դաշնակցութեան ԺԳ. Ընդհ. Ժողովին (Գահիրէ, 1947) իր մասնակցութեան։

[152] Կ՚ակնարկէ իտալական գինիներուն։ Զարեան գինիի լաւ գիտակ էր։

[153] Անգլ. diet («սննդակարգ»)։

[154] Գ. Ա. Եգով [Կ. Եգեանց], *Snocheniya Petra Velikogo s Armyanskim* [Պետրոս Մեծի յարաբերութիւնները հայ ժողովուրդին հետ] (ռուսերէն), Ս. Պետերբուրգ, 1898։

[155] Aschot Johannisjan, *Israel Ory und die Armenische Befreiungsidee*, Munchen, M. Muller und Sohn, 1913 (Աշոտ Յովհաննիսեան, *Հայ-Ռուս Օրիենտացիայի Ծագման Խնդիրը*, Էջմիածին, 1921)։

[156] Լէօ, *Հայոց Պատմութիւն*, հտր. 3, Երեւան, ՀՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիա, 1946։

[157] Հայկ Օհանեան (1883-1957), իրանահայ բժիշկ ու հանրային գործիչ։ 1935ին հաստատուած է Պերլին ու ապա Հայտելպերկ, ուր իր մահկանացուն կնքած է։

[158] Օհանեան Օրիի մասին գիրք մը գրած է, որ մնացած է անտիպ (տե՛ս՝ Կարօ Գէորգեան, *Ամէնուն Տարեգիրքը*, Պէյրութ, 1959, էջ 591)։

[159] Կ՚ակնարկէ ամերիկեան բաղաբացի դառնալուն։

[160] Զարմանալի (ժող.)։

[161] Տե՛ս՝ Արմէն Վահէի Դեկտեմբեր 16, 1949 թուակիր նամակը Զարեանին. *«Դարբինեանը քիթէն արիւնահոսութիւն ունեցաւ եւ չարունակուեցաւ մի քանի անգամներ»* (Գրականութեան եւ Արուեստի Թանգարան, Կոստան Զարեանի Ֆոնտ, թիւ 10ա)։

[162] Վահան Նաւասարդեան (1886-1956), կուսակցական գործիչ ու հրապարակագիր։ 1950ին աչքի տեսողութեան շատ լուրջ հարցեր ունեցած է, սակայն Եւրոպա կա-

տարուած ուղեւորութեան մը ընթացքին, բժշկական քննութիւնը հաստատած է, որ հիւանդութիւնը cataract չէր եւ անմիջական գործողութեան կարիք չկար (տե՛ս՝ Վարդան Մատթէոսեան, «Կոստան Զարեան եւ Վահան Նաւասարդեան», *Բազին*, 4, 1999, էջ 121-123. նոյն, «Բեգլար Նաւասարդեանի եւ Կոստան Զարեանի Նամակները», *Բազմավէպ*, 2007, էջ 353-368):

[163] Cataract (անգլ. < լատ.. «ջրվէժ»)՝ աչքի մէջ տեղի ունեցած մշուշացում, որ կ՛առաջնորդէ տեսողութեան նուազումի եւ հնարաւոր կուրութեան:

[164] Վրացեան Իսրայէլ Օրիի մասին յօդուածաշարք մը գրած է *Հայրենիք* օրաթերթին մէջ՝ Հոկտեմբեր 23, 25 եւ 26, 1949ին, իսկ նախապէս՝ «Իսրայէլ Օրիի Մասին» յօդուածը՝ Սեպտեմբեր 25ի թիւին մէջ: Իրեն պատասխանած է բանաստէր Յարութիւն Քիւրտեանը՝ Նոյեմբեր 17, 1949ի թիւին մէջ:

[165] Արշակ Չօպանեան (1872-1954), գրագէտ, թարգմանիչ ու հանրային գործիչ: Այս մասին, տե՛ս՝ Փետրուար 16, 1950ի իր նամակը Զարեանին (Վարդան Մատթէոսեան, «Կոստան Զարեանի եւ Արշակ Չօպանեանի Նամակներէն», *Հայկազեան Հայագիտական Հանդէս*, Հտր. ԻԷ., 2007, էջ 391):

[166] Այսուհանդերձ, յաջորդող ամիսներուն շարունակած է հետապնդել աղբիւրներու հարցը. տե՛ս՝ Բեգլար Նաւասարդեանի Սեպտեմբեր 14, 1950 թուակիր նամակը Զարեանին (Մատթէոսեան, «Բեգլար Նաւասարդեանի», էջ 366-368):

[167] Տե՛ս՝ Ռուբէն Դարբինեանի Ապրիլ 18, 1950 թուակիր նամակը Զարեանին, ուր յայտնած է, թէ «*չատ կը ցաւիմ, որ հոնօրարդ թիւրիմացութեամբ մը ուշացուցեր էն։ Ըսի իսկոյն Վահէին։ Այսօր իսկ չէկը պիտի առնէ եւ դրկէ*» (Մատթէոսեան, «Նամականի», էջ 258):

[168] *Hairenik Weekly* (1934)՝ *Հայրենիքի* անգլերէն շաբաթաթերթը (1969էն՝ *The Armenian Weekly*):

[169] 1949ին Զարեան որոշ ժամանակով Հոլանտա գտնուած է:

FROM THE CORRESPONDENCE OF KOSTAN ZARIAN AND SIMON VRATZIAN
(Summary)

VARTAN MATIOSSIAN

In 1942 the famous Armenian writer Kostan Zarian (1885-1969) fled from war-torn Italy and settled with his family in New York, where he lived for the next five years. In this period, he published his magnum opus, the novel *The Ship on the Mountain* (1943), worked as the editor of the *Armenian Quarterly*, the first journal of Armenian Studies in the US (1946) and was secretary of the Armenian National Committee, the organization sponsored by the Armenian Revolutionary Federation for the pursuit of the Armenian Cause.

The letters exchanged from 1942 to 1950 by Zarian and Simon Vratzian, noted ARF political leader and former Prime Mnister of the first Republic of Armenia, are an interesting source for Armenian literary and political history in the 1940s. This cache of letters is not complete (Vratzian's answers, as well as some letters by Zarian are yet undiscovered), but it offers new information about Zarian's political and literary views, the history of the publication of his novel, his involvement in the activities of the ANC, etc.

ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

Հայ Համայական եւ Ժողովրդական Աղօթքներ (աշխատութեամբ՝ Սարգիս Յարութիւնեանի), ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտ, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, Երեւան, 2006, 501 էջ:

«Գալուստ Գիլբենկեան» Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքի տնօրէն դոկտոր Զաւէն Եկաւեանի եւ Երեւանի Համալսարանի Հրատարակչութեան տնօրէն Պերճ Ստեփանեանի հովանաւորութեան ու սիրայօժար պատրաստակամութեան շնորհիւ վերջապէս իրեղէն տեսք ստացաւ հայ ժողովրդի բազմադարեան մտաւոր գործունէութեան եւ հոգեւոր գանձարանի եւս մէկ բիւրեղացած ոլորտ՝ հմայական աղօթքների բազմաշերտ աշխարհը: Հազարամեակների միջով հասնելով մեր օրերը՝ բանաւոր աւանդման կամ ցաքուցրիւ գրառումների միջոցով, հայ հին դիցաշխարհի այս ուրոյն բնագաւառն ունեցաւ իր առաջին գիտական մշակումն ու մեկնաբանութիւնը:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Սարգիս Բարթուղիմէոսի Յարութիւնեանի կազմած սոյն ժողովածուն մեծարժէք արգասիքն է նրա բազմամեայ տքնաջան աշխատանքի, Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտում արխիւների մանրազնին ուսումնասիրութեան, ինչպէս նաեւ սեփական գիտարշաւների ընթացքում հաւաքած նիւթի մանրակրկիտ դասակարգման: Երկար տարիներ լինելով նշուած ինստիտուտի բանահիւսութեան բաժնի վարիչ, իսկ այնուհետեւ ինստիտուտի փոխտնօրէն՝ Յարութիւնեանը ոչ միայն հնտօրէն ղեկավարել եւ կազմակերպել է իր ոլորտի աշխատանքները, այլեւ ինքն էլ շարքային մասնակցութեամբ նշանակալից աւանդ է ներդրել բանահաւաքչական ոլորտում:

Սակայն եթէ ուսումնասիրութիւնը սահմանափակուէր միայն այդքանով, այն կը լինէր գուտ բանագիտական բնոյթի մի ժողովածու՝ առանց յաւակնելու խորը վերլուծական հետազօտութիւն պարունակող մենագրութիւն լինելուն: Մինչդեռ Սարգիս Յարութիւնեանը վերոնշեալ ողջ նիւթն անցկացնելով իր էութեան միջով՝ հանրութեան դատին է ներկայացրել իսկապէս նոր մի երեւոյթ հայագիտութեան եւ հայ բանագիտութեան պատմութեան մէջ: Այս առումով՝ *Հայ Համայական եւ Ժողովրդական Աղօթքներ* աշխատութիւնը ոչ միայն համահաւաք է, որով նմանւում է Ա. Ղանալանեանի *Անանդապատում* եւ իր իսկ հեղինակած *Հայ Ժողովրդական Հաւնելուկներ* հետազօտութիւններին, այլեւ աղբիւրագիտական եւ առասպելաբանական լուրջ վերլուծութիւններ պարունակող մենագրութիւն է: Նրա գիտական մասը, որոշ առումներով նոր խօսք լինելով նաեւ համաշխարհային բանագիտութեան մէջ, զետեղուած է գրքի առաջին մասում՝ որպէս ներածական ուսումնասիրութիւն, մնացեալ չափով՝ նաեւ ծանօթագրութիւնների մէջ:

Շարունակելով իր աշխատասիրած վերոյիշեալ *Հայ Ժողովրդական Հաւնելուկներ* (1960, 1965), ինչպէս նաեւ *Անէծքի եւ Օրհնանքի Ժանրը Հայ Բանահիւսութեան Մէջ* (1975) հետազօտութիւններում կիրառուած օգտաւէտ աւանդոյթները՝ Յարութիւնեանն իր նոր մենագրութեան հենքը կազմող համահաւաքի նիւթը համեմել եւ օժտել է բազմաբնոյթ մեկնութիւններով ու ծանօ-

թագրութիւններով: Սրանցում հեղինակի կողմից պարզաբանւում է աղօթքների առանձին տեսակների ձեւաւորման կրօնահաւատալիքային միջավայրը (օրինակ՝ չար աչքի հետ կապուած հաւատալիքները, հմայական կապքի եւ պահպանութեան մասին պատկերացումները եւն.): Աղօթքների այս քննութիւնը զարմանալիօրէն ի յայտ է բերում հայոց վաղնջական առասպելաբանական պատկերացումների մնացուկները (մասնաւորապէս, օրինակ, ամպրոպային առասպելների հետ կապուած):

Հանելուկների, անէծքների, օրհնանքների եւ աղօթքների հանդէպ նշուած մօտեցումների ընդհանրութիւնը՝ առաջին հայեացքից տարբեր ուսումնասիրութիւններում, միանգամայն հասկանալի է դառնում հենց Ս. Յարութիւնեանի բացատրութիւնից յետոյ. «*Հիմնական տարբերութիւնն այն է, որ հմայքներում սիմվոլային պատկերները հանդէս են գալիս արարողութիւնների տեսքով, նախանշանային գուշակութիւններում՝ իրական եղելութիւնների, իսկ հանելուկային բանաձեւերում՝ պատկեր-խօսքի միջոցով: Այդ տարբերութիւնները, հարկաւ, էական նշանակութիւն չունեն երեքի էլ հոգեբանական մեխանիզմի նմանութիւնները հաւաստելու եւ բացատրելու տեսակէտից: Այսպիսի նմանութիւնները վկայում են մի կողմից՝ հանելուկների, հմայքների ու գուշակելի նախանշանների մտածողութեան միեւնոյն՝ սիմվոլային-փոխաբերական բնագաւառին պատկանելու մասին, միւս կողմից նաեւ՝ կիրառական միեւնոյն նպատակներ ունենալը, այն է՝ հանելուկների երբեւէ դիւթահմայական նկատառումներով կիրառուելը, որ հաւաստուած է նաեւ պատմաազգագրական որոշակի փաստերով*» (էջ 20):

Այս առումով՝ կիրառական բանահիւսութեան հիմնական տեսակներ են համարում հենց աղօթքները, երդումները, անէծքներն ու օրհնանք-բարեմաղթութիւնները: Սրանք անմիջականօրէն կապուած են հմայքի եւ նրանից բխող ծէսի ու արարողութեան հետ՝ ի տարբերութիւն, ասենք, առանդազրոյցների, որոնք բանաւոր ստեղծագործութեան շատ հին եւ տարածուած տեսակ լինելով հանդերձ՝ չեն կարող կոչուել կիրառական բանահիւսութեան նմուշներ:

Յարութիւնեանի կազմած համահաւաքն, ինչպէս նշուեց, ընդգրկում է ոչ միայն հմայական աղօթքների գրառուած տարբերակների տպագիր եւ արխիւային ողջ ժառանգութիւնը, այլեւ իր եւ իր գործընկերների գրառած՝ երբեւէ չհրատարակուած տարբերակները, ինչպէս նաեւ միջնադարեան ախթարային ժողովածուներից քաղուած նմուշները: Ներկայացուող աշխատութեան մէջ ժողովրդական աղօթքների ամբողջ նիւթը դասակարգուել ու համախմբուել է ըստ կիրառութեան բնագաւառների ու նպատակների՝ հետեւեալ ութ խմբերում.

ա) բուժաղօթքներ (այդ թւում՝ չար աչքի եւ ծննդկանի աղօթքներ),

բ) առողջապահութեան եւ մարմնի մասերի մաքրագործման աղօթքներ,

գ) փորձանք-պատահարների եւ բնական աղէտների կանխման աղօթքներ,

դ) հմայական կապքի եւ պահպանութեան աղօթքներ,

ե) գործնական նպատակների իրագործման աղօթքներ,

զ) երեկոյեան եւ առաւօտեան աղօթքներ,

է) օրուայ տարբեր ժամերի, երազի բարի կատարման, պանդուխտի, տարբեր սրբերի, ծիսական, նորալուսնի աղօթքներ,

ը) զաւեշտական աղօթքներ եւ պարոդիաներ:

Այս խմբերից մի քանիսն օժտուած են յատկութիւններով, որոնք համալրուած են միջնադարում գրաւոր աւանդուած աղօթքներով:

Ինչպէս յայտնի է, նախնադարեան առասպելաբանական մտածողութեամբ մարդն իրեն տակաւին չէր տարանջատում բնութիւնից՝ ընկալելով այն որպէս իր հետ փոխկապակցուած եւ սերտաճած մի օրգանիզմ: Այստեղից էլ սկզբնաւորում է վաղնջական աշխարհընկալման կարեւորագոյն բաղադրիչներից մէկը՝ հմայութիւնը կամ մոգութիւնը, որը կոչուած էր ապահովելու այդ ընդհանուր օրգանիզմի մէկ բաղադրիչի (տուեալ դէպքում՝ մարդու) ազդեցութիւնն ու ներգործութիւնը միւս բաղադրիչների վարքի վրայ:

Հմայական պատկերացումներն ու հաւատալիքները առկայ են եղել դեռ բարեճաւաքնակ մարդու ժամանակներում, երբ ծեւաւորուած չէր մարդկային յօդաբաշխ խօսքը: Սակայն հմայութիւնն իր «վերելքը» ապրեց յատկապէս լեզուների առաջացմանը զուգընթաց, քանի որ վաղնջական մարդու համար իւրաքանչիւր բառ, հնչիւն թէ ձայնարկութիւն ունէր արարչագործական, հետեւաբար նաեւ հմայական արժէք ու նշանակութիւն: Հենց այդ ժամանակաշրջանում էլ, ամենայն հաւանականութեամբ, գտնւում են ժողովրդական հմայական աղօթքների արմատները: Յետագայում «հմայութեան դարաշրջանին» փոխարինելու եկած կրօնները անխուսափելի կերպով իրենց մէջ ներառեցին ենթաշերտային հմայական տարրեր ու բաղադրիչներ, որոնք շարունակեցին գոյատեւել նոր ժողովրդական հաւատալիքներում, մարդկանց կենցաղում ու կրօնական ծէսերում՝ որպէս հմայութեան վերապրուկներ ու մնացուկներ:

Մարդկային մտածողութեան եւ հոգեբանութեան վրայ լեզուի զարգացման ունեցած յեղափոխիչ դերի արդիւնքում՝ հմայք կամ մոգութիւն հասկացութիւնն ինքնին տիպաբանօրէն կարելի է բաժանել հետեւեալ հիմնական բաղադրիչների՝ ա) հմայական պատկերացումներ ու հաւատալիքներ, որոնցից ծագում են հմայական արարողութիւնները, բ) հմայական արարողութիւններ, որոնք այդ «տեսական» հաւատալիքների գործնական կիրառումն են ներկայացնում, գ) հմայական արարողութիւններին ուղեկցող անկախ խօսքեր՝ կայուն բանաձեւերի տեսքով, որոնք կարող են հանդէս գալ թէ՛ գրաւոր, թէ՛ բանաւոր (սկզբնապէս, անշուշտ, միայն բանաւոր): Այս երեք հիմնական բաղադրիչներին կարելի է յատկել նաեւ չորրորդը՝ դ) հմայական արարողութիւններին ուղեկցող զանազան առարկաներ եւ իրեր (յուռութքներ, հմայիլներ, թալիսմաններ եւն.), որոնք օժտուած են զուտ կիրառական-պահպանական գործառոյթներով:

Նախամարդու պատկերացմամբ՝ առարկաների, երեւոյթների, մարդկանց, բոյսերի ու կենդանիների միջեւ գոյութիւն ունեն խորհրդաւոր անտեսանելի կապեր ու առնչութիւններ: Այս հիմքի վրայ են հենց ծեւաւորուել զանազան սնոտիապաշտութիւնները ու հմայական հաւատալիքները: Նման մտածելակերպի պատճառն այն էր, որ նախամարդն ի զօրու չէր ընկալելու առարկաների ու երեւոյթների բուն պատճառահետեւանքային կապը, այլ նրա համար գոյութիւն ունէին լոկ արտաքին մեխանիկական յաջորդականութիւնը եւ «հմայական տրամաբանութեան» վրայ հիմնուած երեւակայական կապը: Նման ըմբռնումից է բխում այն պատկերացումը, թէ որեէ ցանկալի իրաղրութիւն կամ երեւոյթ կարելի է առաջ բերել՝ դրան նախադրելով մէկ այլ գործողութիւն կամ իրաղրութիւն:

Ըստ այդմ, հմայութեան հոգեբանական մեխանիզմը բաղկացած է տրամաբանական երեք աստիճանից՝ ա) ցանկութիւն կամ նպատակ, բ) դա իրագործելուն միտուած հմայական արարողութիւն, գ) ակնկալուող հետեւանք: Տարբերութիւնն այստեղ իրական արտադրական-օգտակար գործունէութիւնից (երկրագործութիւն, արհեստագործութիւն եւն.) այն է, որ ակնկալուող արդիւնքը դիտւում է որպէս մարդու եւ գերբնական ուժերի համագործակցութեան հետեւանք: Ընդ որում, սկզբնապէս իրական-արտադրական եւ հմայական գործօնները եղել են շաղկապուած ու միահիւսուած մէկ գործողութեան մէջ՝ յետագայում միայն աստիճանաբար տարանջատուելով:

Այդ տարանջատման ընթացքում էլ հմայութիւնը վերածուել է մի ուրոյն արհեստի կամ արուեստի՝ ի տարբերութիւն առաւել հնագոյն ժամանակների, երբ իւրաքանչիւր մարդ, ըստ էութեան, միաժամանակ նաեւ հմայ էր կամ կախարդ: Այդ հեռաւոր դարաշրջանում գործածուող հմայական աղօթքները ի յայտ էին բերում հմայողի անսահմանափակ հնարաւորութիւնները բնութեան ուժերի վրայ՝ ընդհուպ մինչեւ այն, որ իւրաքանչիւր հմայող ընկալւում էր որպէս դեմիուրգ (արարիչ): Ժամանակի ընթացքում մարդիկ հասկացան, որ իրենցից ոմանք առաւել «արհեստավարժ» են մոգութեան ասպարէզում եւ նրանց հմայական գործողութիւններն առաւել դրական արդիւնք են տալիս: Բնական ընտրութեան արդիւնքում «զտուած» այդ անհատներն էլ դարձան հասարակութեան մէջ առանձին մի խաւ՝ հմայութեան աւանդոյթների կրողներ ու կիրառողներ:

Ինչպէս յայտնի է հոգեբանութեան մէջ, որոշակի պայմանների առկայութեան դէպքում մարդու պատկերացումներն առաջ են բերում նաեւ որոշակի շարժումներ, որոնք կարող են կապուել շրթունքների, լեզուի, ձայնալարերի հետ՝ սկիզբ դնելով խօսքին: Կամ էլ այդ շարժումները կարող են արտայայտուել ձեռքերի, ոտքերի կամ այլ մարմնամասերի միջոցով՝ սկիզբ դնելով գործողութեանը: Առաջին դէպքում հմայական պատկերացումների զուգորդումները վերարտադրւում են սոսկ խօսքով, որից ձեւաւորւում է հմայական բանաձեւը, իսկ երկրորդ դէպքում՝ վերարտադրւում են գործողութեամբ, որից էլ բխում է հմայական արարողութիւնը կամ ծէսը: Այդպիսով, «*Հմայական պատկերացումներն ու հաւատալիքները, հոգեբանական զուգորդումների չնորհիւ վերարտադրուելիս, կամազգայական ուժեղ մղումներից դրդուած՝ առաջ են բերում խօսք եւ արարողութիւն*» (էջ 24), որոնք յաճախ հանդէս են գալիս միահիւսուած:

Շրթունքների շարժումները, ձայնարկութիւնները, բացականչութիւնները, հնչագաղափարային բառերը երբեք էլ անկախ ձեւով հանդէս չեն եկել. դրանք միշտ էլ օժանդակ դեր են կատարել՝ ուղեկցելով բուն արարողութեանը: Այս առնչութեամբ Ս. Յարութիւնեանը բերում է խիստ բնորոշ մի օրինակ, որը հանդիպում է աշխարհի բազմաթիւ ժողովուրդների մէջ. այսպէս, «*Թու՛, թու՛, տաշտի ոռքը մաշի, / Սապոնինը չմաշի*», կամ՝ «*Թիւ՛, թիւ՛, թիւ՛, թիւ՛, / Մեռել՝ մեռելոցին, / Ես երթաս՝ առաջ չիգաս, / Տուշմընիս դուռ չի գաս*» հմայական բանաձեւերում՝ քքելու գործողութիւնը, իբրեւ չար ուժի սաստման կամ կանխման արարք, համադրուել է հմայական խօսքին որպէս բառահնչիւնային միաւոր եւ դարձել խօսքի բաղադրիչ (էջ 24): Անհմաստ շշունջներն ու բացականչութիւնները յետագայում աստիճանաբար վերահմաստաւորուել են՝ վերածուելով իմաստալից խօսքերի:

Ինչպէս նշում է Յարութիւնեանը, հմայական խօսքի սկզբնական տեսակները պէտք է լինէին հմայողի ցանկութիւնն ու կամքը արտայայտող պարզունակ բանաձեւերը, առաջին հերթին՝ աւէտքներն ու օրհնանքները, ապա երկրորդաբար դրանցից բաղկացած երդումները, որոնցից աստիճանաբար գերաճել են հմայական ծաւալուն բանաձեւերը կամ աղօթքները: Այս եւ մի շարք այլ նկատառումներից ելնելով՝ Յարութիւնեանը եզրակացնում է, որ *«բանաւոր Հմայութեան որոշ տեսակներ ի սկզբանէ գոյացել ու կենցաղավարել են արարողութիւններից անկախ»*: Առանձնակի հետաքրքրութիւն եւ արժէք են պարունակում հեղինակի բառաքննական մտորումները տարբեր ժողովուրդների մէջ «խօսք» նշանակող բառարմատների եւ դրանց հոմանիշների վերաբերեալ (էջ 27-29): Դրանցից պարզորոշ երեւում է, որ վաղնջական աւանդական մտածողութեամբ՝ տարբերութիւն չէր դրւում մտքի (համոզմունք), խօսքի եւ գործի միջեւ, ինչը ցայտունօրէն արտացոլուած է *հայերէն* բան հասկացութեան եռիմաստ (միտք, խօսք, գործ) ըմբռնման մէջ:

Այսպիսով, կառուցուածքային իւրայատկութիւնները հաշուի առնելով, Յարութիւնեանը հմայական-կիրառական բանահիւսութեան տեսակները բաժանում է երկու խմբի. ա) հմայական պարզ բանաձեւեր (աւէտքներ եւ օրհնանք-բարեմաղթութիւններ), բ) հմայական բարդ բանաձեւեր (երդումներ եւ հմայական զանազան աղօթքներ):

Աղօթք (աղաւթ-ք) բառն ինքը ծագում է *աղաչել* «աղերսել, խնդրել» բառից եւ բառացիօրէն նշանակում է «աղերս, աղաչանք»: Թէեւ ներկայիս *աղօթք* ասելով հասկանում ենք հիմնականում եկեղեցական ու ժողովրդական պաշտամունքային պաղատանքի աղօթքները, սակայն հնում այդ բառեզրով են կոչուել նաեւ հմայական բանաձեւերը (գիր կամ թուղթ ու գիր, հմայիլ): Ի սկզբանէ աղօթել հասկացութիւնն ինքնին ընկալուել է որպէս հմայելու, կախարդելու գործողութիւն, ինչի վկայութիւնն է հայերէնի ժողովրդախօսակցական լեզուում պահպանուած *աղօթած մարդ, աղօթած էշ* դարձուածների «թմրած, ապշած, հոլու» նշանակութիւնը, ինչպէս նաեւ աղօթել բառի՝ ընդհանուր «աղօթելով եւ կախարդութեամբ բժշկութիւն անել» իմաստը: Մէկ այլ տեսանկիւնից՝ աղօթքն ընկալուել է իբրեւ անարիւն զոհաբերութիւն, որը փաստօրէն փոխարինել է իրական գործողութեանը՝ ուղղուած գերբնական ուժերին սիրաշահելուն:

Աղօթքները ստորաբաժանւում են կրօնապաշտամունքային (հեթանոսական թէ քրիստոնէական) եւ հմայական աղօթքների: Կրօնապաշտամունքային աղօթքներն առաջին հերթին կապուած են որեէ որոշակի ծիսակատարութեան, պաշտմունքային արարողութիւնների հետ, որոնք ունեն հանրային բնոյթ, միտուած են հասարակութեան նիւթական կամ հոգեւոր պահանջմունքները բաւարարելուն եւ կատարւում են քրմական կամ եկեղեցական դասի ներկայացուցիչների կողմից: Մինչդեռ հմայական աղօթքները կապ չունեն պաշտօնական արարողութիւնների հետ եւ ունեն անհատական դիպուածային բնոյթ: Ըստ այդմ՝ հմայական աղօթքը կատարում է ոչ-բացայայտ, այլ գաղտնի՝ աղօթողի եւ աղօթքը պատուիրող անձի մտերմիկ, անհատական յարաբերակցութեամբ, ընդ որում՝ առանձին դէպքերում աղօթողն ու աղօթուողը միեւնոյն անձն են լինում:

Տիպաբանօրէն հմայական աղօթքները կարող են լինել. ա) հմայագործի բացարձակ ակտիւութեան աղօթքներ, որոնցում աղօթող անձը հանդէս է գա-

լիս հմայագործի ակտիւ դերով եւ բացառւում է գերբնական՝ աստուածային կամ դիւական ոգիների միջամտութիւնը, բ) հմայագործի յարաբերական ակտիւութեան աղօթքներ, որոնցում աղօթող հմայագործը ստիպում է որեւէ դիւային կամ աստուածային ոյժի՝ իրագործել իր ցանկացածը, գ) պաղատանքի աղօթքներ, որոնք կարելի է անուանել պասիւ «հմայագործի» աղօթքներ, քէպէտեւ դրանցում աղօթողն այլեւս արիեստավարժ հմայող անձ չէ, որին դիմում է պատուիրատուն, այլ իւրաքանչիւր սովորական անհատ, որը պարզապէս ապաւինում է Աստծոյ, սրբերի, հրեշտակների զօրութեանը:

Առաջին տիպի աղօթքներն ամենահինն են եւ սերում են նախնական հմայութիւններից, երբ սովորական անհատն ինքն էլ որպէս արարիչ էր հանդէս գալիս, երկրորդ տիպի աղօթքները պատմականօրէն համեմատաբար առաւել ուշ ժամանակների արդիւնք են եւ կազմում են հմայական աղօթքների գերակշիռ մասը (այս տիպին են յարում նաեւ հեթանոսական պաշտամունքային աղօթքները), իսկ երրորդ տիպի աղօթքների թուին են դասւում քրիստոնէական տէրունական աղօթքների ճնշող մեծամասնութիւնը եւ ժողովրդական համաբնոյթ պաղատանքի աղօթքները: Կարելի է ժողովրդական բոլոր աղօթքները բաժանել նաեւ երկու հիմնախմբի՝ հմայական եւ պաղատանքի:

Ժանրային-տիպաբանական կամ կառուցուածքային առումով հմայական աղօթքները լինում են պարզ եւ բաղադրեալ, որոնք իրենց հերթին ունեն բազմաթիւ ենթատիպեր, այն է՝ երկանդամ, եռանդամ, քառանդամ եւ նոյնիսկ աւելի կազմութիւն ունեցող (պարզ տիպերը): Բաղադրեալ տիպերը ձեւաւորւում են երկու հիմնական եղանակով՝ պարզ տիպերի վրայ նորանոր մոտիւներ յաւելելով եւ կրօնաառասպելաբանական զանազան մոտիւների, հաւատալիքների ու պատկերացումների հիման վրայ հիւսուած վիպական իրադրութեան եւ ցանկութեան խօսքի տարբեր ասոյթ-բանաձեւերի բաղարկումով: Վիպական այդ հատուածները յաճախ հմայական աղօթքներին հաղորդում են որոշակի բանաստեղծականութիւն: Օրինակ, չար աչքի խափանման աղօթքներից մէկում ասում է.

Մեր տան եօի կողմը մի ծով կայ,
Ծովի եօի կողմը մի կալ կայ,
Կալի միջին մի դէզ կայ,
Դէզի միջին եօթ խուրձ կայ,
Եօթ խրձան միջին եօթ հատկ կայ,
Եօթ հատկի միջին եօթ հատիկ կայ.
Հատի՛կ, հատի՛կ, վե՛ր ընկի՛,
Աչքի՛ հատիկ, վե՛ր ընկի՛:

Կան նաեւ վիպական իրադրութեամբ այնպիսի հմայական բանաձեւեր, որոնցում բացակայում են ցանկութեան ասոյթները, դեռ աւելին՝ ամբողջ իրադրութիւնը քօղարկուած է այլաբանական բանձր շղարշով՝ թողնելով անգուշակելի հանելուկային պատկերի տպաւորութիւն: Օրինակ՝ միգկապութեան բուժմանն ուղղուած հետեւեալ աղօթքը.

Մի տանն մի կրակ կայ՝ / Կէսը կայ, կէսը չկայ.
Վրէն մի կասկարենք կայ՝ / Կէսը կայ, կէսը չկայ.
Վրէն մի պղինձ կայ՝ / Կէսը կայ, կէսը չկայ.
Վրէն մի խուփ կայ՝ / Կէսը կայ, կէսը չկայ.
Վերնուց մի հաւք է անցկենում՝ / Կէսը կայ, կէսը չկայ:

Ըստ գեղարուեստական յատկանիշների՝ հմայական աղօթքների վիպական իրաղրութիւնները դրսեւորւում են ոճաբանական տարբեր ձեւերով.- 1՝ առարկաների եւ արարքների վիպական նկարագրութեամբ, 2՝ դիմումկոչականով, 3՝ երկխօսութեամբ, 4՝ նկարագրութեամբ եւ երկխօսութեամբ, 5՝ նկարագրութեամբ եւ հարցերով, 6՝ ժխտում-արգելումներով եւ հաստատումհերքումներով (էջ 36):

Հետաքրքիր է, որ հմայական աղօթքների ճնշող մեծամասնութիւնն ընդելուզուել է քրիստոնէական սրբազան բանաձեւերով: Այսպէս, բոլոր հմայական աղօթքները նոր ժամանակներում սկսուել եւ աւարտուել են տէրունական «Հայր Մեր» աղօթքով կամ մէկ այլ աղօթքային բանաձեւով (էջ 52): Աղօթելուց առաջ աղօթողը խաչակնքում է իրեն կամ աղօթուողին, երբեմն էլ՝ հմայուող անձին կամ կենդանուն խորհրդանշող առարկան, եւ կամ աշխարհի չորս կողմերը: Աղօթքի սրբազան ազդեցութիւնը զօրացնելու նպատակով աղօթքը պարտադիր կրկնում են երեք, երբեմն հինգ, եօթ կամ իննն անգամ, այսինքն՝ միշտ կենտ սրբազան թուերով: Բանաւոր հմայական աղօթքների մի մասն աւարտում է քրիստոնէական աղօթքների աւարտին բնորոշ «ամէն» բառով կամ «Յանուն Յիսուս Քրիստոսի» բանաձեւով, իսկ գրաւորները սրանց կարող են յաւելել նաեւ Ս. Երրորդութեան անուանակոչման օրհնաբանական բանաձեւերը:

Այս ամէնը ցոյց է տալիս, որ տիպաբանօրէն սերելով վաղնջական ժամանակներից՝ հմայական աղօթքներից շատերը ենթարկուել են քրիստոնէական վերափոխման ու վերաձորգման, կամ էլ հին նախատիպերով ստեղծուել են ամբողջապէս նոր աղօթքներ: Վերջիններիս բացայայտ վկայութիւններն են հմայական այն աղօթքները, որոնց սիժէտային հիմքում ընկած են քրիստոնէական հանրայայտ աւանդութիւններ, սրբախօսական ու պարականոն զրոյցներ:

Յարութիւնեանի գրախօսուող աշխատութիւնը բաղկացած է ընդարձակ ներածութիւնից (մօտ 50 էջ), որում ամփոփուած է տեսական-վերլուծական ուսումնասիրութեան մեծ մասը, առաջաբանից (3 էջ), որում տրւում են բուն նիւթի դասակարգման ու մեկնութեան սկզբունքները, այնուհետեւ՝ համառօտագրուած աղբիւրների եւ գրականութեան ցանկից (6 էջ), բնագրերի թեմատիկ ցանկից՝ ըստ աղօթքների կիրառական խմբերի (17 էջ), ինչպէս, օրինակ՝ ատամնացաւի, գորտնուկի, դիւահարի, սեռական կապի արձակման, մանկան լոգանքի, դաշտամկների դէմ, ծիածանը ծագելիս, շատախօսին լռեցնելու եւն., ապա՝ աղօթքների սկզբնատողերի այբբենական ցանկից (թուահամարներով) (13 էջ), բնագրերից (130 էջ), որոնք ընդգրկում են 463 աղօթք՝ աւելի քան 760 տարբերակներով, ընդ որում իւրաքանչիւր աղօթքի եւ նրա տարբերակների տակ պարտադիր նշում է սկզբնաղբիւրը, իսկ վերջում՝ ծանօթագրութիւններից եւ մեկնաբանումներից (237 էջ), որոնցում տրւում են համառօտ տեղեկութիւններ իւրաքանչիւր աղօթքի բանասացի, բանահաւաքի եւ գրառման հետ կապուած հանգամանքների վերաբերեալ, ինչպէս եւ կցւում են համահաւաքի հեղինակի զանազան մեկնութիւններն ու բացատրութիւնները, այնուհետեւ՝ բարբառային, օտար եւ խրթին բառերի բառարանից (25 էջ), աղօթքների տարածման ազգագրական շրջանների ցանկից (3 էջ), անուանացանկից (15 էջ), անգլերէն եւ ռուսերէն ամփոփումներից (մէկական էջ):

Սարգիս Յարութիւնեանը գրախօսուող աշխատութեան նիւթերի հաւաքումը սկսել է դեռ 1960ականներին եւ աշխատանքը որոշ ընդհատումներով շարունակել յաջորդ տասնամեակների ընթացքում: Անցումային շրջանի հետ կապուած դժուարութիւնները ու խոչընդոտները չեն կասեցրել նրա գիտական հետազօտութիւնների առաջընթացը: Եւ այսօր, շարունակելով ղեկավարել ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտի բանահիւսութեան բաժինը, Յարութիւնեանն իր ներկայութեամբ իսկ ոգեշնչում ու քաջալերում է գործընկերներին: 2008ին բոլորելով իր 80ամեակը՝ հայ բանագիտութեան եւ առասպելաբանութեան նահապետը տակաւին շարունակում է իր գիտական պրպտումները՝ միաժամանակ երիտասարդներին հաղորդելով իր գիտական փորձն ու վերլուծական մտորումները:

Տորք Դալլալեան

Ալբերտ Խառատեան, *Կոստանդնուպոլսի Հայ Գաղթօճախը (XV-XVII Դարեր)*, Երեւան, Երեւանի Պետական Համալսարանի Հրատարակչութիւն, 2007, 472 էջ:

Հայ պատմագիտութեան առանձին եւ կարեւոր ասպարէզներից է հայկական գաղթավայրերի պատմութիւնը, որի նշանակութիւնը հայ ժողովրդի պատմութեան համար անգնահատելի է: Հայ պատմաբանների կողմից արդիւնաւէտ աշխատանք է կատարուել առանձին գաղթօճախների պատմութիւնը ուսումնասիրելու ուղղութեամբ: Հարկ է նշել, որ այս ասպարէզի մէջ անելիքները դեռեւս շատ են: Այդ է պատճառը, որ հայկական գաղթօճախների պատմութեան հանգուցային շատ խնդիրները լուսաբանելու աշխոյժ հետաքրքրութիւնը շարունակւում է նաեւ այսօր: Ասուածի փայլուն ապացոյցն է պատմական գիտութիւնների դոկտոր Ալբերտ Խառատեանի *Կոստանդնուպոլսի Հայ Գաղթօճախը (XV-XVII Դարեր)*, ստուարածաւալ աշխատասիրութիւնը, ուր լուսաբանւում են Կ.Պոլսի հայ գաղթօճախի պատմութեան մի շարք հանգուցային հարցեր:

Ընդգրկուն է մենագրութեան բովանդակութիւնը: Այն բաղկացած է առաջաբանից, չորս գլխից եւ վերջաբանից: Աշխատասիրութիւնը ունի նաեւ ծանօթագրութիւնների, մատենագիտական, օգտագործուած նիւթերի, յատուկ անունների, տեղանունների հարուստ ցանկեր:

Հեղինակը իր մենագրութիւնը շարադրել է հայ եւ օտար աղբիւրների մենագրութիւնների, նիւթին առնչուող յօդուածների, հրապարակումների հիման վրայ:

Ուսումնասիրութեան արժէքները ակնյայտ են:

Օգտագործուած գրականութեան նիւթերի նկատմամբ դրսեւորուել են հեղինակի պատմա-քննական մօտեցումը եւ եզրակացութիւնների ինքնուրոյնութիւնը:

Կ.Պոլսի գաղթօճախի մի շարք հանգուցային հարցեր, ինչպիսիք են՝ գաղթօճախի կազմաւորումը, Կ.Պոլսի Հայոց Պատրիարքութեան հոգեւոր-վարչական նկարագիրը, եկեղեցիների պատմութիւնը, պատրիարքական իրաւասութիւնները, հայ համայնքի տեղը օսմանեան աւանդական հասարակութեան մէջ, գաղթօճախի բնակչութեան թուաքանակը, հայ համայնքի սոցիալ-տնտեսական կեանքը, հարկային համակարգը եւ այլ հիմնահարցեր ներկայացուած են խոր գիտական դատողութիւններով եւ համոզիչ եզրայանգումներով:

Աշխատութեան աւելի քան չորս տասնեակ էջ կազմող Յառաջաբանում, Խառատեան անդրադառնում է Կ.Պոլսի հայ գաղթավայրին նուիրուած պատկառելի պատմագիտական գրականութեան կարեւորութեանն ու նշանակութեանը, ուր աւելի կամ պակաս խորութեամբ քննարկուել են վերը նշուած եւ այլ հիմնահարցեր:

Գիտական պատշաճ մօտեցում ցուցաբերելով այդ գրականութեան, հեղինակը միաժամանակ ներկայացնում է իր առարկութիւնները եւ անհամաձայն է գտնում տեղ գտած որոշ սխալ գնահատանքների հետ:

Նման դէպքում հեղինակը պարզաբանում է հարցերը եւ ներկայացնում իր համոզիչ դատումները:

Աշխատութեան առաջին գլխում՝ «Գաղթօճախի Կազմաւորումը» վերնագրով, հեղինակը հանգամանօրէն քննարկում է գաղթօճախի առաւել ամբողջական պատկերը: Սոյն գլխի «Հայ Համայնքը Օսմանեան Մայրաքաղաքում» ենթաբաժնում լուսաբանուած է Կ.Պոլսում հայ համայնքի կազմաւորման հիմանահարցը: Խառատեանը Կ.Պոլսում հայկական համայնքի գոյութիւնը կապում է բիւզանդական ժամանակներին, որի առաջացման նախադրեալները համարում է հայ-բիւզանդական ռազմաքաղաքական եւ մշակութային յարաբերութիւնները: Ուշագրաւ է հեղինակի հետեւեալ միտքը. «*Անկախ համայնքը կազմող հայերի թուաքանակից՝ այն հանդէս է գալիս իրրեւ էթնակրօնական որոշակի միաւոր՝ հոգեւոր գլուխ ունենալով իր առաջնորդ եպիսկոպոսին*» (էջ 49-50): Այստեղ հեղինակը օգտագործած է ժամանակի գրաւոր վկայութիւնների եւ այլեւայլ յիշատակարանների տրամադրած յատուկ փաստերը:

Հեղինակը սպառիչ լուսաբանում տուած է թէ հայ համայնքը կարողացա՞ւ արդեօք պահպանել իրեն օսմանեան թուրքերի կողմից Կ.Պոլիսը գրաւելուց յետոյ: Հեղինակը նշում է որ Կ.Պոլսի համայնքի ստուարացումը եւ դրա համեմատ՝ որակական փոփոխութիւններով ի նորոյ կազմաւորումը սկսւում է բիւզանդական մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը սուլթան Մեհմէտի կողմից գրաւելուց յետոյ: Հեղինակը հանգամանալից ներկայացնում է Մեհմէտ Բ.ի բռնագաղթով Կ.Պոլսի վերաբնակեցման քաղաքականութիւնը:

Հիմնաւոր է հեղինակի այն տեսակէտը թէ «*Մայրաքաղաքի վերաբնակեցման միտքը յղանալիս սուլթանը հետապնդում էր եւ տնտեսական եւ կրօնաքաղաքական նպատակներ՝ իսլամի նոր կենտրոնում ապահովել մահմետականների տիրապետող դիրքին համապատասխան մեծամասնութիւն, թուլացնել նուաճուած տարածքների այլակրօններին՝ նրանց կարող ու կենսունակ ուժերը բռնի Կ.Պոլիս տեղափոխելով, թալանել նրանց ունեցուածքը, ջլատել ենթադրուելիք դիմադրական հնարաւորութիւնները*» (էջ 51-52):

1450-70ականներին սուլթան Մեհմէտի գործադրած բռնագաղթերի հետեւանքով բազմահազար հայեր բռնի Կ.Պոլիս տեղափոխուեցին Անկիւրիայից, Պրուսայից, Կարամանից, Կեսարիայից, Աղրիանուպոլսից, Սամսոնից, Թոքատից, Տրապիզոնից, Ղրիմից, Ակքերմանից, Ամասիայից, եւն. (էջ 54-59):

Հեղինակը այս ենթաբաժնում անդրադարձել է նաեւ Կ.Պոլիս բռնագաղթուած բնակչութեան, այդ թւում եւ հայ բնակչութեան բնակեցման հարցի պարզաբանմանը:

Արժէքաւոր է հեղինակի այն ընդգծումը որ «*Կ.Պոլիս բերուած ժողովուրդները, այդ թւում եւ հայերը, հիմնականում բնակեցուում էին հայրենակցական խմբերով, որ թելադրւում էր գաղթի տրամաբանութեամբ. գաղթականների կուտակումը միեւնոյն թաղերում՝ ամփոփում էր նրանց որոշակի սահմաններում: Դա համախումբ էր դարձնում տուեալ էթնիկական խումբը, որ նախընտրելի էր ոչ միայն իրենց՝ գաղթականների համար (ազգային, կրօնական ընդհանրութիւն, միեւնոյն զբաղմունքի՝ արհեստների, առեւտրի գործառական դիւրութիւն), այլեւ հեշտացնում էր օսմանեան իշխանութիւնների գործը՝ բնակչութեան հաշուառման ու ցուցակագրման, հարկեր գանձելու եւ, առհասարակ, համայնքների նկատմամբ վերահսկողութիւն հաստատելու տեսակէտից*» (էջ 69):

Հեղինակը մանրամասնօրէն անդրադարձած է նաեւ սուլթան Մեհմէտի յետնորդների ժամանակ իրականացուած բռնագաղթերին: Նշում է որ 1510ականներից վերսկսած թուրք-պարսկական պատերազմների հետեւանքով 1514, 1554, 1578-1579ին Կ.Պոլսում վերաբնակեցում են հայ գաղթականների նոր բազմութիւններ՝ Պարսկաստանի հայաբնակ շրջաններից, մասնաւորաբար Թաւրիզից, Արարատեան դաշտից՝ Նախիջեւանից, Երեւանից, դրանց յարող տարածքներից, Արցախից (էջ 70):

Հեղինակը այստեղ յուսաբանում է այն աղիտալի կացութիւնը որ ստեղծուեց կայսրութեան մէջ դէպի Կ.Պոլիս գաղթերի պատճառով: Այս հարցի հետ կապուած, յուսաբանուած է նաեւ 1609ի եւ 1635ի *սիւրգիւնի* աւսորի հարցը: Խառատեան նշում է որ «*Օտար եւ հայ աղբիւրներից երեւում է որ XVIդ. կէսին հայերի թիւը Կ.Պոլսում հասել է 40-50 հազար մարդու, եւ XVIդ. վերջին եւ XVIIդ. սկզբին 60-70 հազար մարդու, XVIIդ. վերջին աւելի քան 70 հազար մարդու*» (էջ 365):

Խառատեան յուսաբանելով օսմանեան մայրաքաղաքում հայ համայնքի կազմաւորման հարցը, եզրակացնում է. «*Այսպիսով Օսմանեան կայսրութեան մայրաքաղաքում հայ գաղթօճախի կազմաւորումը սկսում է 1450ական թթ. երկրոդ կէսից, երբ այնտեղ վերաբնակեցուեցին Մեհմէտ Բ.ի կողմից բռնագաղթի ենթարկուած հայերը ...*» (էջ 70): Առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում մենագրութեան Ա. գլխի «Հոգեւոր Վարչութիւն: Առաջնորդութիւնից Մինչեւ Պատրիարքութիւն» ենթաբաժինը:

Հեղինակը աղբիւրային հարուստ նիւթերի հիման վրայ ներկայացնում է Կ.Պոլսի գրաւումից յետոյ մայրաքաղաքում եւ կայսրութեան մէջ իսլամ ազգաբնակչութեան կողքին ձեւաւորուող յոյն, հայ, հրեայ համայնքներին պետութեան կողմից պաշտօնական ճանաչման ու իրաւական իմաստով միլլէթների - համայնքների համակարգի մէջ ընդգրկելու գործընթացը: Հեղինակը ընդգծում է, որ կրօնական այս համայնքները առանձնացուեցին դաւանական, աւանդութային եւ մշակութային կարգավիճակով՝ խմբուելով իրենց կրօնապետերի շուրջը. «*Ցոյն պատրիարքութիւնից յետոյ սկզբնաւորուեց Կ.Պոլսի հայ հոգեւոր վարչութիւնը՝ առաջնորդ կրօնապետի (հայրապետի) գլխաւորութեամբ*» (էջ 89):

Վերլուծուած է հայ պատմագրութեան մէջ տեւական վէճերի տեղիք տուած Յովակիմ հոգեւորականի (եպիսկոպոս, պատրիարք) պաշտօնավարութեան հանգամանքները: Հեղինակը ընդգծում է որ «*պէտք է կարծել, որ առաջինը Յովակիմն էր, որ հայ համայնքում օժտուել է պատրիարքական իրաւասութիւններով, եւ այս պատճառով է, որ Ջամչեանը նրան համարում է առաջին պատրիարք*» (էջ 366):

Հեղինակը աղբիւրների հաղորդած տեղեկութիւնների վրայ, գտնում է որ այս Յովակիմը միեւնոյն անձն է ինչ այդ անուամբ յայտնի Կուտինայի առաջնորդը (1445) եւ Պրուսայի ու Կ.Պոլսի առաջնորդը (1447) (էջ 366):

Վկայակոչելով ժամանակի ձեռագիր յիշատակարանները, Խառատեանը գտնում է որ 1461ից դարձեալ այս Յովակիմը Կ.Պոլսի հայերի առաջնորդն էր... «*Հետեւաբար Յովակիմն անընդմէջ չի վարել իր պաշտօնները, այլ ընդհատումներով*», եզրակացնում է հեղինակը (էջ 93):

Մենագրութեան հեղինակը այս ենթաբաժնում անդրադարձել է նաեւ հայ հոգեւոր առաջնորդների պատրիարքական տիտղոսի հարցին, որը ըստ հեղինակի «*բաւական չարչրկուած հարց է դարձել գաղթօճախի պատմութեանը նուիրուած ուսումնասիրութիւնների մէջ*» (էջ 94):

Այս գլխում հեղինակը հանգամանօրէն վերլուծած է Կ.Պոլսի գաղթօճախի պատմութեան համար երկու կարեւոր հարց.-

Արդեօ՞ք Կ.Պոլսի հայ հոգեւոր առաջնորդի իշխանութիւնը տարածւում էր ամբողջ կայսրութեան մէջ բնակող հայութեան վրայ, թէ՞ նրա հոգեւոր իրաւասութեան ներքոյ էին գտնւում կայսրութեան տարածքի մէջ մտնող հայկական միւս թեմերը: Սրան առնչւում է երկրորդ հարցը՝ Կ.Պոլսի հայ հոգեւոր պետին XVդ. արդեօք տրուել է «պատրիարք» տիտղոսը՝ «*որ նրան ոչ միայն կ՚առանձնացնէր կայսրութեան մէջ մտնող միւս վիճակների կամ թեմերի առաջնորդներից, այլեւ կը նշանակէր, որ այս վերջինները կամ դրանց մի մասը են թարկուել են նրա գերակայութեանը*», գրում է հեղինակը (էջ 95):

Խառատեան ընդունելի է գտնում այս հարցին առնչուող պատմական գրականութեան մէջ եղած այն տեսակէտը, թէ Կ.Պոլսի հայ առաջնորդների պատուանունը աւելի ուշ շրջանում է (սուլթան Մեհմէտից յետոյ) գործածութեան մէջ մտել:

Հիմք ընդունելով աղբիւրների հաղորդած տեղեկութիւնները՝ հեղինակը այնուհետեւ եզրակացնում է, որ «*Պատրիարք տիտղոսի գործածութեան սկիզբը պէտք է որոնել առայժմ 1526 եւ 1540 թուականների միջեւ: ...Այդ ժամանակից իսկ էջմիածնի կաթողիկոսները կորցրել են իրենց ազդեցութիւնը Կ.Պոլսի հոգեւոր առաջնորդների վրայ, որոնք նշանակուել են ոչ թէ եկեղեցական կանոնով՝ էջմիածնի կողմից, այլ՝ օսմանեան սուլթանների*» (էջ 97-98):

Ուշագրաւ են նաեւ հեղինակի տրամաբանական հետեւեալ դատողութիւնները. «*Անկախանալով էջմիածնի հոգեւոր վարչական գերակայութիւնից՝ Կ.Պոլսի հոգեւոր գլուխը անկախանում էր օսմանեան պետութեան դարաւոր ոսոխի՝ Պարսկաստանի եկեղեցական կեդրոնից՝ սրանից բխող բոլոր հետեւանքներով, որ համապատասխանում էր օսմանեան պետութեան շահերին: Դրա հետ կախուած, կոչուելով պատրիարք, իրրեւ մէկից աւելի վիճակների վերահսկող եւ հովուող կրօնական պաշտօնեայ, Կ.Պոլսի պատրիարքները ամէնամեայ հարկ (այդ թուում եւ վիճակներից կամ թեմերից ստացուող հարկը՝ մուքաթաան) պէտք է տային պետութեան...*» (էջ 98-99):

«*Օսմանեան հարկային համակարգում Կ.Պոլսի առաջնորդների գործառութային դերի ընդլայնումը այդպիսով ի վերջոյ պէտք է հասցնէր կայսրութեան մէջ նրանց իրաւունքների եւ պարտականութիւնների աննախրնթաց աճին՝ եւ համապատասխանաբար դրանց թուլացմանը՝ էջմիածնի կաթողիկոսի հետ ունեցած յարաբերութիւններում: ...Մնում էր, սակայն, բարոյական աւանդոյթի ուժով պատասխանատուութիւնը կաթողիկոսի առջեւ, որ, ի դէպ, արդէն XVIIդ. բազմաթիւ ճեղքեր պէտք է տար՝ օսմանեան մայրաքաղաքում կաթողիկոսի հեղինակութիւնը ոչ քիչ դէպքերում վերածելով ընդամէնը վերացական հասկացութեան*» (էջ 99):

Այս գլխի վերջին՝ «Եկեղեցիներ» խորագրով ենթաբաժնում, Խառատեան քննութեան է ենթարկում պոլսահայ հանրութեան սկզբնաւորման եւ յետագայ

պատմութեան ողջ ընթացքում կարեւոր նշանակութիւն ունեցող Կ.Պոլսի գաղթօճախի եկեղեցիների հիմնադրման կամ նոյնականութեան խնդիրը, որը ըստ հեղինակի «*տարակարծութիւնների տեղիք է տուել եւ չարունակում է տալ ուսումնասիրողներին*» (էջ 107-124):

Մենագրութեան Բ. գլխում՝ «Կ.Պոլսի Պատրիարքութիւնը», Խառատեան լուսաբանում է գաղթօճախի պատրիարքական իրաւասութիւնները, ներհակութիւնները. պայքար պատրիարքութեան համար, օսմանեան Թուրքիայի հայոց կաթողիկոսութեան շուրջ եւ Կ.Պոլսի երէցները եւ պատրիարքական իշխանութիւնը հիմնահարցերը:

Արժէքաւոր է հեղինակի այն ընդգծումը, որ «*Լինելով օսմանեան հասարակական համակարգի բաղկացուցիչ մաս՝ միլլէթները ամէնից առաջ հանդէս էին գալիս իբրեւ կրօնական կենտրոնացուած միաւորներ: Համայնքի գլխաւոր կրօնապետն էր, որն իր ժողովրդի իրաւական ներկայացուցիչն էր օսմանեան պետութեան առջեւ:*

Յոյն եւ հայ պատրիարքներն, ինչպէս եւ հրեայ խախամապետը, իբրեւ իրենց համայնքի գլխաւորներ հոգեւոր գերակայութեան ձեւի մէջ փաստօրէն իրականացնում էին աշխարհիկ քաղաքացիական գործառոյթներ» (էջ 126):

«*Այսպիսի երկփեղկուածութիւնը բխում էր օսմանեան քաղաքացիական ու կրօնական կառոյցների տրամադրութիւնից, որ յստակ չէր սահմանագատում կրօնական, օրէնսդիր ու գործադիր իշխանութիւնները*», եզրակացնում է հեղինակը (էջ 368):

Խառատեան անդրադառնալով Կ.Պոլսի գաղթօճախի պատրիարքների նշանակման եւ հաստատման հարցին, գտնում է որ պատրիարքների հաստատման գործում օսմանեան գործադիր իշխանութեան էական միջամտութիւնը պատրիարքական ընտրութիւն հասկացութիւնը դարձնում է զուտ ձեւական մի բան, որին աւելի մեծ յաջողութեամբ կարելի էր տալ պատրիարքի նշանակութեան իմաստ: «*Եւ այս տեսակէտից 'պատրիարքի ընտրութիւն' դարձուածքը կարծում ենք պէտք է ընկալել զուտ պայմանական բովանդակութեամբ*», շեշտում է հեղինակը (էջ 127):

Այս գլխում խօսում է նաեւ XVIIդ. Կ.Պոլսի գաղթօճախի պատմութեան լուսաբանման համար կարեւոր նշանակութիւն ունեցող հարցի՝ պատրիարքական կոիւների եւ դրանց հիմքում ընկած պատճառների մասին:

Հեղինակը գտնում է որ այդ կոիւների հիմքում ընկած են մէկից աւելի պատճառներ. «*այդ պիտիք են հայ կրօնական կենտրոնների մրցակցութեան բեւեռացումը Կոստանդնուպոլսում, որ ներկայացնում էին էջմիածինը եւ բաւական թուլացած, բայց դեռեւս իր յաւակնութիւններից չհրաժարուած Սիսը: Ապա հետեւ այդ հիմքերից էին կաթոլիկական Ֆրանսիայի միջոցով Հռոմի քաղաքականութեան հակումները՝ ստեղծելու օսմանեան Թուրքիայի տիրապետութեան տակ գտնուող հայերի առանձին կաթողիկոսութիւն, որ դրսեւորուելու էր երկիցս՝ Սահակի (1630) եւ Եղիազար Ախթապցու (1659-1670ական թթ.) գործունէութեան ընթացքում: Եւ վերջապէս, այս վերջին իրողութիւնը յստակօրէն ուրուագծուում էր ամբողջ XVII դարում՝ լատինասէրների եւ պահպանողականների միջեւ մղուող պայքարի ձեւով...*» (էջ 162-163):

Մենագրութեան այս գլխում գիտական խոր վերլուծութեան ենթարկուած են նաեւ վերը նշուած հարցի հետ սերտօրէն առնչուած՝ օսմանեան Թուրք-

իայի հայոց կաթողիկոսութեան շուրջ եւ Կ.Պոլսի երէցները եւ պատրիարքական իշխանութեան հարցերը:

Հեղինակը գտնում է, որ Օսմանեան Թուրքիայում կաթողիկոսութիւն ստեղծելուն հետամուտ Եղիազար Այնթապցու *«ձգտումները եւ դրանից ծայր առնող գործողութիւնները չունէին այլ նպատակ, քան էջմիածնի, որպէս ընդհանրական աթոռի եւ համազգային հեղինակութեան դերի վերացումը»* (էջ 224):

Այդ գործողութեան նպատակը բնութագրելու համար Խառատեան աչքի առջեւ ունեցած է գործողութեան հետեւանքները:

Վերլուծած է Եղիազարի գործունէութեան հետեւանքները Էջմիածին-Կ.Պոլիս-Երուսաղէմ յարաբերութիւններում:

Այստեղ արժէքաւոր են հեղինակի եզրայանգումները. *«Թուլանում են էջմիածնի դիրքերը Կ.Պոլսի եւ Արեւմտահայաստանի թեմերում, եւ էջմիածինն իր ողջ ուժերն ու կարողութիւնները ծախսում է իր, թէկուզ եւ անուանական ազդեցութիւնը այստեղ պահպանելու վրայ: Թուլանում է եւ Կ.Պոլսի պատրիարքութիւնը, որը պարզապէս կորցնում է իր ինքնուրոյնութիւնը եւ դառնում սոսկ միջոց կամ յենակէտ էջմիածնի եւ Եղիազարի ու սրանց սատարող ուժերի ղէմ մղուող բախումներում: Երուսաղէմի պատրիարքութիւնը եւս, Կ.Պոլսի պատրիարքութեան հետ, կրում էր այդ անպտուղ պայքարի դառը հետեւանքները»* (էջ 224):

«Եղիազարի եւ Մարտիրոսի պատրիարքութիւնից յետոյ՝ 1680ական թթ. Երուսաղէմը վերածուեց Կ.Պոլսի հոգեւոր եւ աչխարհիկ վերնախաւի անճանչ չահատակութիւնների հրապարակի, եւ այստեղ ծաւալուող թալանի ու կողոպուտի, կամայականութեան ու չահամոլութեան խրախճանքը պէտք է վիթխարի պարտքերի տակ գցէր Երուսաղէմի միաբանութեանը՝ մինչեւ Յովհաննէս Կոլոտի ու Գրիգոր Շղթայակրի ժամանակները (1710ական թթ.)» (էջ 224-225):

«Եղիազարի եւ էջմիածնի հակադրութիւնից մեծապէս տուժեց Կ.Պոլսի պատրիարքութիւնը, որին տիրելու համար ներհակ կողմերի դրածոները սկսեցին մի ծանր եւ երկարատեւ պայքար՝ թուլացնելով եւ կասեցնելով օսմանեան Թուրքիայի հայ վիճակները համախմբելու կոչուած Կ.Պոլսի պատրիարքութեան գօրացման հնարաւորութիւնները՝ մի քանի տասնամեակ չարունակ» (էջ 225):

Առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում մենագրութեան Գ. գլուխը՝ «Սոցիալ-տնտեսական Կեանքը» վերնագրով, ուր հեղինակը քննարկում է արհեստաւորական-առեւտրական էսնաֆը, հայ վաճառականութիւնը Կ.Պոլսում, հարկային համակարգը Կ.Պոլսի հայ գաղթօճախում հարցերը:

Հեղինակը գտնում է, որ Կ.Պոլիսը գրաւելուց ի վեր արհեստաւորութիւնը կազմել է նրա բնակչութեան, այդ թւում հայ համայնքի ամենամարդաշատ տարրը: Հիմնուելով պատմագիտական եւ աղբիւրային հարուստ տուեալների վրայ, Խառատեան շեշտում է, որ *«վերածուելով հայութեան աչխարհագրական եւ ազգագրական տարածքները ամփոփող մի մանրակերտի՝ Կ.Պոլսի հայ արհեստաւորական ու առեւտրական խաւերը, իրենց թուաքանակի համեմատութեամբ, ներկայացնում էին զրաղմունքների չատ մեծ բազմազանութիւն,- եւ, որ,- իրենց սոցիալական կացութեամբ եւ կարգավիճակով նրանք ինչպէս եւ*

օսմանեան կայսրութեան միւս հպատակ ժողովուրդների նոյնական խաւերը, մանուկ էին այսպէս կոչուած էնաֆի (ասնաֆ) առեւտրաարհեստաւորական կազմակերպութիւնների մէջ» (էջ 248): Առկայ տուեալներից դատելով, հեղինակը գտնում է որ *«որոշ արհեստների խմբում քրիստոնեայ, այդ թւում եւ հայ արհեստաւորները միաւորուել են մահմետական արհեստակիցների հետ՝ կրօնական տեսակէտից կազմելով խառն կազմակերպութիւններ: Արհեստների մէկ այլ խմբում նրանք գործել են առանձին՝ իրրեւ գաղտ եւ անկախ էնաֆութիւններ»* (էջ 252):

Խառն էսնաֆութեան մէջ գտնուելը *«նշանակում էր երկու տարբեր կրօնաբարոյական նորմերի համատեղ գոյութիւն, մահմետական եւ ոչ մահմետական բարոյական նորմերի զուգահեռ գործողութիւն, որտեղ պէտք է իրեն գգացնել տար կրօնական հակամարտութիւնը՝ մահմետականների անհանդուրժողականութիւնը այլահաւատների նկատմամբ»* (էջ 254), եզրակացնում է հեղինակը:

Խառատեանը նշում է որ Կ.Պոլսի հայ էսնաֆը ունէր կազմակերպական որոշակի կառուցուածք. *«Արհեստաւոր արտադրողների գլուխ էր կանգնած վարպետը, նրանից ներքեւ՝ ենթավարպետը, եւ ստորին աստիճանին՝ աշակերտը (չրագ)»* (էջ 255):

Արժէքաւորը հեղինակի այն ընդգծումն է, որ *«էնաֆի բարոյական վարքագծի նորմերն ամփոփող կանոնադրութիւնից բացի եւ դրա կողքին գործում էին նաեւ օսմանեան օրէնքները, որոնց միջոցով պետութիւնը վերահսկում էր արհեստաւորի արտադրական գործունէութիւնը, գլխաւորապէս արդիւնքների համար անհրաժեշտ հումքի հայթայթումը, իրացումն ու դրան առնչուող պայմանները»* (էջ 257):

Հեղինակը այստեղ բացայայտում է իշխանութիւնների կողմից ոչ-մահմետական արհեստաւորի եւ սպառողի նկատմամբ խտրականութիւն կիրառելու իրողութիւնը: Այս գլխում հեղինակը ցոյց է տալիս, որ ոչ-մահմետական ժողովուրդներն (այդ թւում եւ հայերը) էին, որ ամէնից առաջ ընթացք եւ ուղղութիւն էին տալիս ամէնուրեք՝ կայսրութեան մէջ, արհեստների եւ առեւտրի զարգացմանը:

Այս գլխում ուշադրութեան կենտրոնում են պահուել նաեւ գաղթօճախի հայ վաճառականութեան եւ հարկային համակարգի հարցերը:

Հեղինակը պատմաբան մասնագէտի բծախնդրութեամբ է լուսաբանում այդ հարցերը:

Անդրադառնալով հարկային համակարգին՝ Խառատեանը ընդգծել է այն միտքը, թէ մահմետականների համեմատութեամբ, ոչ-մահմետականների ստորադաս վիճակը օսմանեան Թուրքիայում ի յայտ էր գալիս հարկային համակարգում:

Հեղինակը հարուստ նիւթերի օգտագործմամբ, ամբողջացնում է Կ.Պոլսի հայութիւնից գանձուող հարկատեսակների, տուրքերի գանձման եղանակների եւ դրանց հետեւանքների պատկերը:

Խառատեանի մեկնաբանութիւնները հնարաւորութիւն են ընձեռում ճիշտ հասկանալու այդ հարցերի հետ կապուած բոլոր իրողութիւնները:

Մենագրութեան վերջին գլուխը կրում է՝ «Կ. Պոլսի Հայ Հանրութիւնը եւ Օսմանեան Սահմանադրական Հասարակութիւնը» խորագիրը:

Այս գլխի առաջին ենթաբաժնում հեղինակը բազմակողմանի մեկնաբանել է գաղթօճախը օսմանեան հասարակութեան մէջ հարցը:

Խառատեան նշելով որ օսմանեան մայրաքաղաքում ոչ-մահմետական միլլէթները մի յայտնի չափով օգտւում էին մշակութային ինքնավարութիւնից՝ տրուած արտօնութիւնների շնորհիւ, ընդգծում է այնուհետեւ հետեւեալ միտքը, որ «*միլլէթների համակարգի ինքնավարութիւնը, սակայն, չափազանց փխրուն բնոյթ ունէր օսմանեան պետութեան մէջ*» (էջ 307):

«*Հենց միայն այն իրողութիւնը, որ չերիի դատարանն իրաւասու էր քննութեան առնելու եւ վճիռ կայացնելու ոչ-մահմետական միլլէթներին վերաբերող որեւէ գործի նկատմամբ, ինքնին վկայում էր տիրապետող կրօնի՝ օսմանեան բոլոր հպատակների հանդէպ գրաւած գերակայ դիրքի մասին*» եզրակացնում է հեղինակը (էջ 307-308):

Այս բաժնում Խառատեան լուսաբանում է օսմանեան պետութեան մէջ մահմետականների հետ ոչ-մահմետականների կենցաղային յարաբերութիւնների, պաշտամունքային կառոյցների նորոգման, տարազի, հագուստի, գոյների վերաբերեալ օրէնսդրական նորմերի հարցերը:

Ուշագրաւ է հեղինակի եզրակացութիւնը. «*Մահմետականների հետ ոչ-մահմետականների կենցաղային յարաբերութիւններում, պաշտամունքային կառոյցների նորոգման սահմանափակումներում, տարազի հագուստի գոյների վերաբերեալ օրէնսդրական նորմերը օսմանեան պետութեան մէջ հանդէս էին գալիս որպէս բռնութեան արտատնտեսական միջոցներ*» (էջ 378):

Այս գլխի երկրորդ ենթաբաժնում պատշաճ լուսաբանուած է գերութեան համակարգը օսմանեան կայսրութիւնում, որը ըստ հեղինակի «*սկիզբ էր առնում եւ վերարտադրւում երկու հիմնական ուղղութիւններով՝ պատերազմի միջոցով գերեվարութիւնների (ռազմագերիներ, պարտուած երկրների ազգաբնակչութեան ստրկացում) եւ արդէն նուաճուած ու կայսրութեան տարածքում ընդգրկուած ոչ-մահմետական ժողովուրդների հաշուի (դեւշիրմէ, մանկահաւաք)*» (էջ 328):

Հեղինակը ընդունելով որ Օսմանեան Կայսրութեան մէջ գերեվարութեան համակարգի հիմնական աւանդոյթն ու բաղկացուցիչ մասը կազմում է *դեւշիրմէն*, յանգում է այն եզրակացութեան, որ *դեւշիրմէն* «*կայսրութեան ոչ մահմետական ժողովուրդների իրաւազրկութեան ամենաակնառու եւ բարբարոսական դրսեւորումն էր, որի միջոցով պետութիւնը ռազմավարչական եւ տնտեսական բնագաւառներն անընդմէջ լրացնում էր մարդկային ռեսուրսներով,- եւ որ,- դեւշիրմէն հանդէս էր գալիս որպէս միջոց՝ մահմետականացած երիտասարդութեամբ լրացնելու ոչ-հարկատու ասկերների դասը*» (էջ 340, 378):

Այս բաժնում գնահատելին նաեւ այն է, որ հակառակ թուրք եւ արեւմտեան որոշ ուսումնասիրողների կեղծ տեսակէտերի, թէ իբր նուաճուած ժողովուրդները իրենք էին ձգտում *դեւշիրմէի* յանձնել իրենց երեխաներին՝ եւ փորձել են նոյնիսկ «*կաշառքով ենիչերիների զօրակոչի մէջ մտցնել*» հասարակութեան մէջ նրանց համար դիրք եւ պաշտօն ապահովելու համար, Խառատեան ներկայացնում է օտար ողջախոհ հեղինակների ուսումնասիրութիւնները, որոնց մէջ բերուած համոզիչ փաստարկներն ու բազմաթիւ օրինակները ապացուցում են, որ «*յոյները ու միւս ընկճուած ժողովուրդները*

դեւչիրմէն համարել են դժբախտութիւն՝ բռնակալների կողմից պարտադրուած անարդ հարստահարում եւ հնարաւոր բոլոր միջոցներով ընդդիմացել դրան» (էջ 341):

Առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում եւ պակաս կարեւոր չէ նաեւ մենագրութեան այս գլխի վերջին ենթաբաժինը՝ «Հայ-յունական Եկեղեցական Յարաբերութիւնները (XVIIդ.)» վերնագրով, ուր հեղինակը հարուստ նիւթերի հիման վրայ բացայայտում է օսմանեան տիրակալների վարած «զգուշօրէն տարբերակուած» քաղաքականութիւնը միլլէթների նկատմամբ՝ հարկ եղած դէպքում ինչպէս հեղինակն է նշում՝ *«միլլէթներին հակադրելով միմեանց, բորբոքելով նրանց միջեւ եղած փոխադարձ անվստահութիւնն ու հակասութիւնները»* (էջ 349):

Գլխում մանրակրկիտ ներկայացուած եւ մեկնաբանուած են կրօնաղանային հակասութիւնները հայ-յունական յարաբերութիւններում, որ «XVI-XVIIդդ. *տեւականօրէն սրուեցին Երուսաղէմի Ս. Տեղեաց խնդրի շուրջ՝ սեփականատիրական անհաշտ վէճերի պատճառով»* (էջ 351):

Հեղինակը հանգամանալից անդրադարձել է սուր եւ ողբերգական հետեւանք ունեցող 1634ի Ծռագատկի ընդհարումներին յոյների եւ հայերի միջեւ Երուսաղէմում եւ Կոստանդնուպոլսում՝ Գրիգոր Պարոնտէր պատրիարքի ժամանակ, ինչպէս նաեւ 1650ականներին դարձեալ հայերի եւ յոյների միջեւ նոր ուժով բորբոքուած Ս. Տեղեաց սեփականութեան խնդրին՝ որ այս անգամ կենտրոնացաւ այսպէս կոչուած *«հարէչական ժառանգութեան վրայ»* (էջ 354):

Այստեղ գնահատելին այն է, որ հեղինակը վերհանելով հայ-յունական յարաբերութեանց իրողութիւնները եկած է այն եզրայանգման, որ *«Օսմանեան կայսրութիւնում հայ-յունական փոխյարաբերութիւնների մէջ չէր անտեսւում կեղեքուող ժողովուրդների՝ միմեանց հանդէպ քրիստոնէական ու մարդասիրական վերաբերմունքի գործօնը»* (էջ 361):

Աւելացնենք, որ մենագրութիւնում տեղ են գտել Կ.Պոլսի եկեղեցիների լուսանկարները՝ արտատպուած Բարսեղ Թուղլաճեանի Իսթանպուլում 1991ին հրատարակած *Istanbul Ermeni Kiliseleri* հրատարակութիւնից: Մենագրութեան վերջում զետեղուած է Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկութեան հովանաւորութեամբ Երեւանի Պետական Համալսարանի Հրատարակչութեան լոյս ընծայած գրքերի ցանկը՝ 1988-2007ին:

Ինքնաւորիրում պահանջող նման տարողունակ գիտական աշխատանքը պատուով է կատարել հեղինակը:

Ալբերտ Խառատեանի պատմագիտական լայնածաւալ այս մենագրութիւնը ծանրակշիռ մի ներդրում է հայ պատմագրութեան՝ հայկական գաղթավայրերի պատմութեան բնագաւառում:

ԱՐՇԱԼՈՅՍ ԹՕՓՈՒԼԵԱՆ

Վարագ Ներսիսեան, *Հայ Միջնադարեան Տաղերգութեան Ժանրերն ու Տաղաչափութիւնը*, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, 2008, 222 էջ:

Առեղծուածներով եւ բազում մեծ ու փոքր խնդիրներով է լի հայ միջնադարեան գրականութիւնը: Ուստի այն լուսաբանող իւրաքանչիւր հետազօտութիւն՝ տեսական, բնագրագիտական, թէ բանասիրական, ներկայացնում է առանձնայատուկ հետաքրքրութիւն: Իսկ եթէ ուսումնասիրութիւնը կատարուած է սկզբնաղբիւրների քաջիմացութեամբ եւ գրականագիտական հմտութեամբ, ապա ի յայտ են գալիս նաեւ որոշակի խիզախում, մեծ ջանք եւ նոր խօսք, ինչը վկայում է կայացած արժէքաւոր աշխատանքի մասին: Այդպիսին է Վարագ Ներսիսեանի *Հայ Միջնադարեան Տաղերգութեան Ժանրերն ու Տաղաչափութիւնը (X-XVIIIդդ.)* ուսումնասիրութիւնը:

Տաղերգութեան խնդիրներին Վարագ Ներսիսեանը նուիրել է տասնամեակներ, աստիճանաբար յաղթահարել թեմայի բարդութիւնը, խորացել նրա այլազան ծալքերի մէջ եւ ի վերջոյ հասել ցանկալի հանգրուանի, որ է սոյն ուսումնասիրութիւնը:

Ի՞նչ է տաղը. հայ միջնադարեան բանաստեղծութեան առանձին տեսա՞կ, տարբեր տեսակների մի ամբողջութի՞ւն, թէ՞ նոյնական է ընդհանրապէս չափածոյ խօսք հասկացութեանը: Սոյն հիմնահարցին այս կամ այն չափով անդրադարձել է հայ գրականագիտութիւնը՝ հիմնականում առանձին տաղերգուների գեղարուեստական ժառանգութիւնը քննելիս:

Ինչպէ՞ս են տաղ հասկացութիւնն ըմբռնել նոր շրջանի ուսումնասիրողները եւ ի՞նչ իմաստներով է այն գործածուել հին աղբիւրներում: Այս խնդիրն է արծարծում ուսումնասիրութեան առաջին գլխում: Բերելով մի շարք գրականագէտների կողմից արտայայտուած կարծիքներ ու դատողութիւններ, ատենախօսութեան հեղինակը արձանագրել է, որ բանասիրութեան մէջ չի եղել տաղի ընդհանրական ըմբռնում: Պատճառն այն է, որ *«գրականագիտական միտքը գէթ մէկ անգամ դեռ հիմնաւոր կերպով ու հետեւողականօրէն ձեռնամուխ չի եղել հասկացութեան հետ առնչուող գրաւոր վկայութիւնների, անցեալում արուած տեսական բացատրութիւնների եւ նրա գեղարուեստական կոնկրէտ դրսեւորումների, իբրեւ մէկ միասնական երեւոյթի, համադրական, մանրազնին ու քննական ուսումնասիրութեանը»* (էջ 10):

Լրացնելով բացը, Ներսիսեանը կատարում է երեւոյթի իսկապէս մասնրագնին եւ համադրական քննութիւն: Նա անդրադառնում է տաղ հասկացութեան հնագոյն գործածութիւններին ու բացատրութիւններին՝ սկսած առաջին բերականական ու տեսական թարգմանական գործերից մինչեւ միջնադարեան որոշ հայ մատենագիրների կատարած բնութագրումները, ապաւինելով նաեւ բուն տաղերգութեան տիպաբանութեանը: Ըստ այդմ, բերուած բազում փաստերի «ճնշմամբ ու թելադրանքով» հեղինակը գալիս է այն եզրակացութեան, թէ *«տաղը իր բովանդակութեամբ նոյնական է «չափածոյ կամ ռիթմիկ կազմակերպուածութեամբ օժտուած ստեղծագործութիւն» ըմբռնմանը եւ իրրեւ գրականագիտական հասկացութիւն չի մտնում ժանր կատեգորիայի մէջ»* (էջ 23):

Միանգամայն հասկանալի եւ ընդունելի է, որ տաղը առանձին գրական ժանր չէ եւ չունի ժանրային որոշակի իմաստ ու բովանդակութիւն: Սակայն այստեղ նշենք մի կարեւոր հանգամանք:

Դեռեւս աշխատութեան առաջաբանում Ներսիսեանը նկատել է, որ տաղ երեւոյթը *«գլխաւորապէս կապւում է Գրիգոր Նարեկացու գործունէութեան հետ»* (էջ 4): Այսինքն՝ սկիզբ է առնում Ժ. դարում եւ ամփոփւում ԺԷ. դարով: Իսկ վերջաբանում («Ապարտ») հեղինակն ասում է աւելին, թէ՝ տաղի հնագոյն նմուշները ստեղծուել են *«Գանձարան» ժողովածուի կազմաւորման պահանջով, որպէս տուեալ ժողովածուի առանձին մասերը ներկայացնող կանոնների բաղկացուցիչ միաւորներ»* (էջ 197): Այս միտքը պէտք է յստակ արտայայտուէր ատենախօսութեան առաջաբանում կամ առաջին գլխում, որպէսզի ի սկզբանէ չառաջանար այն տպաւորութիւնը, թէ տաղը նոյնական է առհասարակ չափածոյ խօսքին եւ հայ տաղերգութիւնը ընդգրկում է միջնադարեան ողջ բանաստեղծական արտադրանքը: Վստահ ենք, որ հեղինակը այդ կարծիքին չէ, եւ նրա ուսումնասիրած նիւթն էլ այդ մասին չի վկայում, բէեւ առաջաբանում, թերեւս վրիպելով, նա գրել է. *«Ներկայ աշխատութեան մէջ ուսումնասիրութեան նիւթ է ծառայում այս ողջ ժամանակաշրջանի* (Ժ.-ԺԸ. - Հ.Ք.) *բանաստեղծական արտադրանքն իր լաւագոյն դրսեւորումներով»* (էջ 4):

Տաղերը հայ միջնադարեան բանաստեղծութեան մէջ ներկայացնում են, Ներսիսեանի խօսքերով ասած, *«մէկ միասնական երեւոյթ»*,- եւ,- *հայ բանաստեղծութեան արժէքաւոր, անբաժանելի մասն են»* (էջ 5):

Չլինելով առանձին ժանր, տաղերգութիւնն ունի իր ժանրային համակարգը, ինչը եւ մանրամասն դիտարկուած է աշխատութեան երկրորդ գլխում:

Ներսիսեանը, մատենագրական փաստերի բաշագիտութեամբ, մատնանշում է միջնադարեան հեղինակների ու գրիչների կողմից տաղի տարբեր տեսակաւորումները: Ընդ որում հիմք են ընդունուել թէ՝ կառուցուածքը եւ թէ՝ ընդհանրական բովանդակութիւնը, գործառնութիւնը եւ այլ յատկանիշներ: Քննութիւնը բերել է այն համոզմունքին, որ *«հայ միջնադարը գործնականօրէն վաւերացրել է տաղերի ժանրային տեսակաւորման բաւականաչափ ընդարձակ մի համակարգ»* (էջ 30):

Տաղի հիմնական ժանրերի համակարգում հեղինակն իրաւամբ առանձին տեսակներ չի համարել ծիսական նշանակութիւն ունեցող մեղեդին, փոխը եւ յորդորակը, որոնք *«գեղարուեստական պատկերման ու կառուցուածքային չափանիշներով չեն սահմանազատւում գրական միւս, աւելի հաստատուն ու առերկրայելի տեսակներից»* (էջ 34): Իսկ որո՞նք են այդ հիմնական տեսակները: Հեղինակը դրանց անդրադառնում է երրորդ գլխում:

Այստեղ ընդհանրական-բովանդակային հիմքի վրայ առանձնացուած են գովեստը, պարսաւը, խրատը, ողբը, աղաչանքը, գանգատը: Առաւել մեծ ուշադրութեան են արժանացել այն ժանրերը, որոնք նախորդների կողմից համեմատաբար աւելի քիչ են հետազօտուած: Ներսիսեանը բացայայտում է խնդրոյ առարկայ ժանրերի ծագումը, զարգացումը, հիմնական ժանրակազմիչ յատկանիշները, փոխառնչութիւնները, նշում կամ վերլուծում տուեալ ժանրի լաւագոյն գործերը: Յիշատակում է նաեւ ժանրային աւանդոյթների իրագումները նոր ու նորագոյն շրջանի հայ բանաստեղծութեան մէջ: Արժէ-

բաւոր են յատկապէս գովեստ-տաղ եւ պարսաւ-տաղ ժանրերին նուիրուած հատուածները:

Հեղինակը ճիշտ է վարուել՝ չանրադառնալով պատմական ողբին. ոչ միայն այն պատճառով, որ այդ ժանրը հիմնաւորապէս ուսումնասիրել է արժանայիշատակ գրականագէտ Պօղոս Խաչատրեանը, այլեւ, քանի որ այն հիմնականում դուրս է տաղերգութեան ժանրային համակարգից եւ պատկանում է պատմա-վիպագրական (մասամբ՝ սրբախօսական) բանաստեղծութեանը: Տաղերգութեան ժանր կարող է համարուել Վարագ Ներսիսեանի առանձնացրած անձնական-քնարական ողբը, որի որոշ նմուշներ է միայն թուարկում հեղինակը: Մինչդեռ ճիշտ կը լինէր, եթէ աւելի շատ տեղ տրուէր դրանց եւ ամէնեւին չվերլուծուէր Դաւթակ Քերթողի ողբը, որը լիովին դուրս է տաղերգութեան ժամանակային ու ժանրային սահմաններից:

Լաւ կը լինէր նաեւ, եթէ ստեղծագործութիւնների ընդհանրական յատկանիշների հիման վրայ տրուէր իւրաքանչիւր ժանրի սեղմ սահմանումը (ինչը արուած է պարսաւի եւ գանգատի պարագայում): Դա կը նպաստէր նաեւ սահմանելու առհասարակ տաղերգութիւնը՝ որպէս գրական-գեղարուեստական մի որոշակի արտադրանք, գեղարուեստական ստեղծագործութեան կառուցուածքային ձեւ:

Որոշակի կայուն եւ դիմառնական կերպարների հիմքի վրայ հեղինակն առանձնացրել է տաղերգութեան եւս մի ժանր՝ վարդի ու սոխակի այլաբանութեամբ տաղերը: Փաստօրէն է գրուած այս ընդարձակ հատուածը: Այնտեղ բացայայտւում են հայ տաղերգութեան մէջ այդ այլաբանութեան անցած ուղին, նրա տարբեր իմաստաւորումներն ու բանաստեղծական կատարումները: Պարսկերէնի ու պարսկական պոեզիայի իմացութիւնը ուսումնասիրողին հնարաւորութիւն է տուել կատարելու մի շարք կարեւոր գուգահեռներ ու բաղդատումներ: Ընդգրկուն քննութիւնը բերել է այն համոզման, որ մեր տաղերգուների *«տուեալ ժանրով յօրինած գործերը պէտք է դիտել իրբեւ միանգամայն ինքնուրոյն ստեղծագործութիւններ, իրբեւ հայ մտքի, հայ իրականութեան ծնունդ»* (էջ 91):

Վարագ Ներսիսեանը, ըստ տաղաչափական կառուցուածքի, տաղի տեսակ է համարել նաեւ հայրէնը: Յայտնի է, որ Նարեկացուց սկսած մեր մի շարք բանաստեղծներ հայրէնի չափով յօրինել են տաղեր եւ այլ չափածոյ գործեր: Սակայն մի բան է հայրէնի չափը, մէկ այլ բան՝ բուն հայրէնը (նաեւ հեղինակային հայրէնը), որն ունի այլ ծագումնաբանութիւն (ժողովրդա-գուսանական երգ) եւ գրեթէ կանոնիկ կազմուածք: Հետեւաբար հայրէնը դուրս է տաղերգութեան ժանրային համակարգից: Մեր կարծիքով, այդ համակարգից դուրս են նաեւ «բանքերը» («բանք չափաւ»), որոնք նշանաւորում են բանաստեղծական խօսքի անկախացումը մեղեդուց: Մինչդեռ տաղը (ինչպէս շարականը) հիմնականում մեղեդային, երգուող բանաստեղծութիւն է, որը «բանք»երին զուգահեռ շարունակել է իր գոյութիւնը: Օրինակ, ԺԸ. դարի բանաստեղծ Պաղտասար Դպրի (եւ ոչ միայն նրա) բոլոր տաղերն անխտիր երգուել են...

Ուսումնասիրութեան յաջորդ երեք գլուխներն արծարծում են տաղաչափական խնդիրներ:

Վարագ Ներսիսեանը երկար տարիներ խորացել է նաեւ տաղաչափագիտութեան ասպարէզում, ուստի եւ այս գլուխներում իշխում է մասնագէտի

լրջմիտ հայեացքը, առաջադրուած խնդիրների վարժ քննութիւնը: Նրան նախ եւ առաջ զբաղեցրել է այն հարցը, թէ տաղաչափական ի՞նչ ըմբռնումներ են եղել հայ միջնադարում: Հարցի լուսաբանման համար վկայակոչւում են հնագոյն եւ հին աղբիւրների տեղեկութիւնները բանաստեղծական չափի, կշռի, ոտքի եւ յանգի վերաբերեալ: Ըստ հարկի, անդրադարձ է կատարւում նաեւ յունական եւ արաբական տաղաչափութեանը:

Թէեւ հայ հին մտածողների տաղաչափական ըմբռնումների վերաբերեալ տուեալները սահմանափակ են, սակայն բուն գեղարուեստական նիւթի ուսումնասիրութիւնը հեղինակին բերել է այն ճիշտ եզրակացութեան, որ հայ միջնադարում *«գոյութիւն է ունեցել խօսքի ռիթմիկ կառուցման որոշակի ձեւաւորուած գաղացողութիւն»*,- եւ,- *հայ տաղասացները լիովին օժտուած են եղել այդ զգացողութեամբ եւ դա համօրէն կիրառել են իրենց չափածոյ գործերում»* (էջ 121):

Վերը ասուածը փաստելու համար հեղինակը քննում է այն գործօնները (չափ, տուն յանգ), որոնց միջոցով հայ տաղերգուները կազմակերպել են իրենց չափածոյ խօսքի ռիթմը: Գեղարուեստական վիթխարի նիւթի հիման վրայ ներկայացուում են տաղերգութեանը բնորոշ բանաստեղծական չափերը, դրանց յաւագոյն նմուշները, իւրայատուկ դրսեւորումները տարբեր հեղինակների տաղերում: Ընդհանրականն այն է, որ տաղերը *«հիմնականում ունեն անդամաւոր կազմութիւն, բանաստեղծական տողերի միակերպ ամդամհատուածիւնը իրագործւում է խօսքի քերականական չեչտերի կայուն դասաւորութեամբ»* (էջ 252): Դա հայ տաղերգութեան եւ առհասարակ հայ բանաստեղծութեան ամենաբնորոշ տաղաչափական առանձնայատկութիւնն է:

Առանձին գլուխ է յատկացուած նաեւ յանգ եւ տուն տաղաչափական միաւորներին: Այստեղ էլ նոյն մասնագիտական հմտութեամբ քննուած են այդ միաւորների առաջացումն ու այլազան դրսեւորումները տաղերգութեան մէջ:

Հեղինակը որոշակի օրինակներով ցոյց է տալիս, որ մեր տաղերգուները բանաստեղծական տները կառուցել են որոշակի կայուն սկզբունքով. *«Տողերի ռիթմը ամբողջանում է տան մէջ, եւ իրրեւ առաւել բարդ ռիթմական միաւոր, կրկնւում յաջորդ տների ձեւով»*: Իսկ տողերի ու տների ռիթմը մեր քերթողները հարստացրել են *«յանգի գործածութեամբ, որը հաստատապէս մուտք էր գործել հայ գրաւոր բանաստեղծութեան մէջ X դարից ի վեր»* (էջ 126):

Մենք նշեցինք Վարագ Ներսիսեանի *Հայ Միջնադարեան Տաղերգութեան Ժանրերն ու Տաղաչափութիւնը (X-XVIIIդդ.)* ուսումնասիրութեան մի շարք արժանիքներ, որոնք, անշուշտ, բոլորը չեն: Յրնթացս կատարեցինք նաեւ որոշ դիտողութիւններ, որոնք, մեր համոզմամբ, լրջօրէն չեն ստուերում աշխատութեան անուրանալի արժէքը. աշխատութիւն, որ լուսաբանում է բազում կնճռոտ հարցեր եւ քննուող երեւոյթի մասին յիրաւի տալիս է ամբողջական եւ յստակ պատկերացում:

ՀԵՆՐԻԿ ԲԱԽՉԻՆԵԱՆ
litart.yerevan@gmail.com

ՇԱՄԱԽՈՒ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԷՅՍԱՐԻ ՍԲ. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՎԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

ԳԷՈՐԳ ՍՏԵՓԱՆԵԱՆ

Շամախու հայոց թեմի վանքային համալիրների մէջ մշակութային եւ ուսումնագիտական նշանակութեամբ առանձնայատուկ դեր է ունեցել Շամախու գաւառի Մէյսարի գիւղի հիւսիս-արեւմտեան խոր կիրճի ծորաբերանում գտնուող Մասանց կամ Մէյսարի[1] վանքը, որը յայտնի է եղել գլխաւոր եկեղեցու՝ Սբ. Աստուածածնի անունով[2]: Այն համարուել է ինչպէս միջնադարեան Հայաստանի, այնպէս էլ Շիրուանի հայութեան հոգեւոր, կրթական եւ մշակութային արգասաւոր կենտրոններից մէկը: Շամախու թեմի 1887-1895ի առաջնորդ Մեսրոպ Արք. Սմբատեանցի (Նախիջեւանցի) վկայու-թեամբ. «*Մէյսարու վանքը նախապատիւ լինելով Շամախուոյ թեմի մէջ ըստ աւանդութեան՝ Սաղիանի վանքի վանահարց ցուցակի մէջ յիշեալ եպիսկոպոսաց եւ վարդապետաց մեծ մասն համարուում են Մէյսարու վանքի վանահայր...*»[3]: Մատենագրական աղբիւրները եւ ձեռագիր յիշատակարանները վանքի վանական կառոյցներից Սբ. Աստուածածին եկեղեցու կառուցման ստոյգ թուականի վերաբերեալ տեղեկութիւններ չեն հաղորդում: Թերեւս առաջին յիշատակութիւնը կապուած է Աղուանից Սիմէոն Դ. Խոտորաշենցի կաթողիկոսի եւ Շամախու թեմի առաջնորդ Անտոն վարդապետի օրօք (1667-1681)[4] վանքի Սբ. Աստուածածին եկեղեցու 1680 թուականի նորոգման հետ: Այդ մասին եկեղեցու մուտքի վերնամասում կայ հետեւեալ արձանագրութիւնը. «*Քրիստոսի թվին ՌՈՁ* (1680)։ *Արդ ես Հուսկ Անտոն վարդապետս նորոգեցի զԱստուածածնի վանքս, որք հանդիպեցի սմա յաղօթս յիշեցէք, ի Տէր, ի ՌՃԻԹ* (1680) *թվին Հայոց*»[5]: Ղեւոնդ Ալիշանը Մէյսարիի վանքի վերաբերեալ գրել է. «*Կայ եւ այլ մենաստան ի Մասերի գիւղ ի հարաւոյ քաղաքին* (Շամախու - Գ.Ս.), *նորոգեալ յամին* 1680»[6]: 1680ը վանքի նորոգութեան թուական է համարել նաեւ ԺԹ. դարի վերջին Մէյսարի գիւղ այցելած հայ բազմավաստակ գրող Գաբրիէլ Տէր-Յովհաննիսեանը (Քաջբերունի), որն իր ճամփորդական նոթերում գրել է. «*Սուրբ Աստուածածնի վանքը* 1680 *փրկչական թուականին նորոգել է Անտոն վարդապետը...*»[7]: Թեմի առաջնորդ Վլաս Վրդ. Շամախեցին (1688-1701) Անտոն վարդապետի հետ միասին վանքի վանահայր Տէր Երեմիայի օրօք կառուցել է խորանը: Սբ. Աստուածածին եկեղեցու տանիքի վրայ՝ գմբէթից բացուող մուտքի ճակատին այդ մասին արձանագրուած է. «*Շնորհօքն Քրիստոսի կառուցաւ Սուրբ խորանս անուամբ հրեշտակապետացն եւ երկնային զօրացն, աղօթիւք եւ բարեխօսութեամբ սոցա ողորմեայ Տէր Աստուած Անտոն եւ Վլաս վարդապետացն, մանաւանդ Սուրբ ուխտս աշխատաւորացն, եւ նուէրք եւ ընծայ բերողացն եւ հաւատացելոցն ի Յիսուս Քրիստոս, ի հայրապետութեան Աղուանից Տեառն Սիմէօնի եւ յառաջնորդութեան Տէր Երեմիային, Թվ. ՌՃԼԷ*

(1688թ.)»[8]: Սբ. Աստուածածին եկեղեցու բեմն ու դուռը պատրաստել է ջուղայեցի Խոջա Շահվէլին: Եկեղեցու ներսի բեմի արեւմտահայեաց երեսին արձանագրուած է եղել. *«Յիշեցէք ի քրիստոս զՋուղայոց դաչտեցի Բանդուրի որդի խոջայ Շահվէլին, որ չինեաց զբեմն եւ զդուռն յիշատակ համօրէն ննջեցելոցն, Թվ. ՌՃԿԶ (1717)»*[9]:

Վանքի համակառոյցներից էր հիմնական յուշարձանախմբից հարաւարեւելք 1719ին կառուցուած Սբ. Նշան եկեղեցին, որի մուտքի վրայ փորագրուած է եղել. *«Թվին ՌՃԿԸ (1719) չինեցաւ սուրբ Նշան եկեղեցին յիշատակ ամենայն Քրիստոնէից ննջեցելոց՝ եկաց եւ բնակաց, արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց. մանաւանդ Ջուղայեցի Գէորգի որդի պարոն Պետրոսին. եւ Շամախեցի Յակոբի որդի Թամուրին եւ Օհանին եւ ծնողացն Եղիսաբեթին, եւ հանգուցեալ որդւոյն Մատթէոսին. ո՛վ ընթերցօղք յորժամ ընթեռնաք, յիշեցէք յաղօթս ձեր Անտօն անարժան քահանայն. յիշեալ լինիք առաջի գառին Աստուծոյ, ամէն»*[10]:

Մեսրոպ Արք. Սմբատեանցը հետեւեալ նկարագիրն է տուել վանքի տեղադրութեանը. *«Մէյսարու վանքի տեղն ու դրութիւնը բարձրահայեաց եւ արտաբաց լինելով, եւ օդն ու ջուրն աւելի առողջարար, նոյնպէս եւ տաճարի եւ սենեկաց չէնքերն սրբատաշ քարով ու կրով շինած եւ կանգուն մնացած լինելով՝ շատ գերազանց է եւ վայելուչ բնակութեան համար...տեսարանը արտաբաց, իսկապէս բանաստեղծի բնակավայր...»*[11]: Վանքի Սբ. Աստուածածին եկեղեցին եղել է ընդարձակ կառոյց եւ ունեցել է սրածայր կաթողիկէ: Վանքը ներսից եւ դրսից կառուցուած է եղել սրբատաշ քարերով եւ կրաշաղախով: *«Տաճարը, անուն սուրբ Աստուածածնի ընդարձակ եւ հոյակապ է առանց սեան, որին կից է եւ միւս տաճարն իրրեւ գաւիթ նորա վեց սեանց վրայ, իսկ տաճարի տանեաց վրայ չինուած է կաթուղիկէն քարայ, որոյ մէջը սեղան յարմարացրած, անուն Հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի»*[12],- գրում է Մեսրոպ Արք. Սմբատեանցը:

Վանքը հռչակաւոր էր իր միաբաններով: Վանքի հիւսիսային եւ արեւմտեան կողմում միաբանների համար կառուցուած է եղել երկյարկ շինութիւն՝ մի շարք սենեակներով, ուր բնակուել է նաեւ վանահայրը[13]: Վանքը եղել է նաեւ գրչութեան արդիւնաւէտ կենտրոն[14]: *«Այս վանքն յառաջ ժամանակաւ ունեցած է բաւական վարդապետ միաբան ինչպէս երեւում է խցերի աւերակներից եւ գերեզմանատնից...Այս վանքն նոյնպէս եւ սուրբ Ստեփաննոսի Սաղիանու վանքն մինչ ի հաստատութիւնն հոգեւոր Աթոռին ի Շամախի՝ չէն են եղած եւ լի բաւական միաբանութիւնով»*[15],- գրել է 1865 Սեպտեմբերին գիւղ այցելած բեմի 1863-1868ի առաջնորդ Դանիէլ Արք. Շահնազարեանցը (Տարօնեցի): Վանքին կից սրբատաշ քարերով կառուցուած են եղել միաբանների ութ սենեակները[16]: Վանքի նշանաւոր միաբաններից է եղել Գրիգոր վարդապետը, որի մասին միաբանութեան սենեակի որմին արձանագրուած է եղել. *«Ես Գրիգոր վարդապետս գրեցի ի ՌՃԿ. Թվ. (1711)»*[17]:

Մէյսարիի վանքն իր վանական դպրոցով նախապատիւ է եղել Շամախու բեմում[18]: Դատելով վանքի ունեցած կրօնա-մշակութային մեծ դերից՝ կարելի է ենթադրել, որ այն գործել է վաղ միջնադարից: Դպրոցը պատրաստել է ոչ միայն եկեղեցականներ, այլեւ մատենագիրներ, գրիչներ ու ծաղկողներ: Այդտեղ ուսում առած մարդիկ իրենց արժանի նպաստն էին բերում Շիրվանի եւ

հայաբնակ այլ վայրերի մշակութային կեանքի առաջընթացին: Թէեւ աղբիւրները մանրամասն տեղեկութիւններ չեն հաղորդում դպրոցի գործունէութեան մասին, սակայն դատելով նրա մեծ հռչակից, ենթադրում ենք, որ այնտեղ դասաւանդել են ժամանակի նշանաւոր գիտնականները: Թերեւս կարելի է եզրակացնել, որ վանական դպրոցում դասաւանդուել են միջնադարին բնորոշ գիտութեան շատ ճիւղեր: Դրանց մէջ աստուածաբանութեան եւ կրօնագիտութեան կողքին պիտի յիշատակել փիլիսոփայութիւնը, տոմարագիտութիւնը, երաժշտութիւնը, քերականութիւնը, ճարտասանութիւնը, գրչութեան արուեստը եւ տրամաբանութիւնը: «*Նորհաստատ կամ նորոգած վանքերն*,- գրել է Կարապետ Կոստանեանը,- *եղան պատսպարան Մ. Գրքի ուսումնասիրութեամբ եւ մանուկների դաստիարակութեամբ պարապող կրօնաւորների*»[19]: Ըստ Մեսրոպ Արք. Սմբատեանցի՝ հայոց կաթողիկոս Յակոբ Շամախեցին (1759-1763) սկզբնական կրթութիւնը ստացել է Մէյսարիի վանքի վանական դպրոցում, այնուհետեւ եղել է վանքի միաբաններից, իսկ դպրոցի արգասաւոր գործունէութեան ժամանակաշրջանը հիմնականում կապում է նրա անուան հետ[20]. «*...մի ձեռագիր Աւետարանի յիշատակարան ասում է. «ունէր* (Յակոբ Շամախեցին - Գ.Ս.) *բազում աշակերտս ուսման», որոյ դրպ-րոցն երեւի լինել ի Մէյսարու վանս եւ շատ յարմար է*»[21]: Արդիւնաւէտ գործունէութեան շնորհիւ, վանքը Աբրահամ Եպս. Շաքեցու եւ Յարութիւն Վրդ. Շաքեցու կողմից 1791ին կազմուած պաշտօնական գրագրութիւնների «*Զեւք Նամակաց եւ Գրութեանց*» *ժողովածուի անթուակիր նամակներից մէկում յիշատակւում-մեծարւում է «Մէկհիսարու գերահռչակ Սուրբ Աստուածածնի...*»[22] պատուանունով: Հարկ է նշել, որ երկրամասի քաղաքական անկայուն դրութիւնը, պարբերաբար կրկնուող ասպատակութիւնները, մասնաւորապէս հայ բնակչութեան նկատմամբ թուրք-պարսկական բռնապետերի վարած հալածանքի քաղաքականութիւնը յետագայ ժամանակներում անելանելի վիճակ էին ստեղծել վանական դպրոցի համար, որի պատճառով էլ նրա գործունէութիւնը յաճախ ընդհատուել եւ կասեցուել է: Ի դէպ, նշուած ժողովածուի անթուակիր գրութիւնից յայտնի է դառնում նաեւ ուշագրաւ այն տեղեկութիւնը, որ երկրամասում Շաքիի եւ Շամախու հայոց թեմերից զատ, Դերբենդ, Մուսկուր, Ղուբա եւ Ղստանի կամ Ղոշուն գաւառների շրջատարածքներում գործել է նաեւ մէկ այլ թեմ, որը պատկանել է Մէյսարիի Սբ. Աստուածածին վանքին: Ինչպէս ասուած է ձեռագրում. «*Մէկհիսարու գերահռչակ Սուրբ Աստուածածնի վանից բոլոր թեմի եւ վիճակին, այսինքն Ղօշունու օրհնեալ երկրին եւ Մուսկուրու եւ այլ չրջակայ գաւառաց եւ գիւղօրէից դոցին...գսիրելի որդեակն իմ, զԴաւիթ հանճարաշատ վարդապետն ձերումդ սրբոյ վանից վերատեսուչ եւ կառավար, եւ ձեր իսկ հովիւ եւ առաջնորդ կարգեցաք*»[23]: Դատելով մատենագրական աղբիւրի հաղորդած տեղեկութիւնից, Դաւիթ վարդապետը կարգուել էր եւ՛ վանքի վանահայր, եւ՛ միաժամանակ թեմի առաջնորդ, իսկ թեմը հաւանաբար կոչուել է առաջնորդանիստ վանքի՝ Մէյսարիի անունով: Մէյսարիի վանքի՝ վերոնշեալ շրջատարածքների համար եպիսկոպոսական թեմի առաջնորդանիստ կենտրոն լինելու փաստի վերաբերեալ տեղեկութիւն է թողել նաեւ Մեսրոպ Արք. Սմբատեանցը, որը, խօսելով Դերբենդ, Մոլլա-Խալիլ, Պօղոս Քեանդ գիւղերի հայ բնակչութեան՝ Ղզլար, Պետրովսկ եւ Սուրբ Խաչ գաղթելու մասին, գրում է. «*...եւ այդ բոլոր գաղթած ժողովուրդը թեմ ու վիճակ կազմելով Աղուանից աշ-*

խարհքում՝ պատկանում էին Մէյսարի սուրբ Աստուածածնի վանքին...»[24]: Մատենագրական աղբիւրները այլ տեղեկութիւններ չեն հաղորդում այդ թեմի ինչպէս սկզբնաւորման, այնպէս էլ թեմակալ առաջնորդների ու թեմական կեանքի մասին ընդհանրապէս:

Մէյսարիի վանքն ունեցել է վանական հարուստ տնտեսութիւն, վարելահողեր, այգիներ ու ջրաղաց: Ըստ Մեսրոպ Արք. Սմբատեանցի՝ վանքի վանքապատկան հարուստ կալուածքներից 1890ին մնացել էին ընդամէնը 19 անուն վարելահող ու մի այգետեղ, որոնք վանքի չգործելու պատճառով տրուած են եղել կապալով[25]:



Մէյսարի Ս. Աստուածածին վանքի տեսքը ԺԹ. դարավերջին

Մէյսարիի վանքը եղել է նաեւ երկրամասի ձեռագրային մշակոյթի կենտրոններից եւ ունեցել է գրչանոց ու գրատուն: Այդտեղ արտագրում, թարգմանում եւ կազմում էին ձեռագիր գրքեր: Դրա խօսուն վկաներն են վանքում 1671ին Վլաս վարդապետ Շամախեցու արտագրած *Հոգեաց Գիրքը*[26], գրիչ Կիրակոս Երէցի 1695ին ընդօրինակած *Աւետարանը*[27] (ստացող՝ Սալվար), եւ Վլաս գրչի ընդօրինակած *Ժողովածուն* (ԺԷ. դ.)[28]: Ըստ Մեսրոպ Արք. Սմբատեանցի՝ Մէյսարիի վանքում է գործել Յակոբ վարդապետ Շամախեցի անունով մէկ այլ գիտնական-վարժապետ, որը 1728ին վանքում արտագրել է *Մեկնութիւն Ժամագրքի* ձեռագիրը եւ գրել *Պատմութիւն Ժամանակագրական* աշխատութիւնը[29]: Վանքի գրչատան հարուստ ձեռագրերի մասին, ցաւօք, մատենագրական աղբիւրները սակաւ տեղեկութիւններ են հաղորդում եւ մեզ դրանց չնչին մասն է հասել միայն: Այդ փրկուած մասունքներն էլ, ինչպես տեսնում ենք, հիմնականում վերաբերում են ԺԷ. դարին: Ենթադրում ենք, որ վանքում ստեղծուած կամ ի պահ դրուած ձեռագրերը յաճախակի ոչնչացուել եւ թալանուել են զաւթիչների ասպատակութիւնների հետեւանքով: Այս առու-

մով Մակար Վրդ. Բարխուտարեանցը գրում է. «*Որքան փառաւոր եղած է վանուցս անցեալն, այնքան տխուր եւ սրտաճմլիկ է այժմեան երեւոյթն։ Որքան կենդանի եղած է Աղուանից կաթողիկոսութիւնն, նոյնքան պաչծառ եղած են եւ Աղուանից վանքերն։ Բայց այս կաթուղիկոսութեան մահից յետոյ՝ օրէցօր յափշտակուած են վանօրէից կալուածներն, ցրուած են միաբանութիւնները եւ քայքայուած վանքերն*»[30]: Մէյսարիի վանքի միաբանութիւնը գործել է մինչեւ 1851[31]:

Վանքը մեծապէս տուժել է 1869ի երկրաշարժից[32]: Հին եկեղեցու տեղում վերստին նոր եկեղեցի կառուցելու խնդրով մէյսարցիք 1874ին դիմում են Շամախու թեմի խորհուրդին, որը եւ նոյն թուականին տալիս է թոյլտուութիւնը[33]: Մակար Եպս. Բարխուտարեանցը 1890ին Մէյսարիում եղած ժամանակ վանքը տեսել է քայքայուած վիճակում. «*Այժմ բոլորովին քայքայման վիճակի մէջ է եւ վանքս եւ սենեակներն եւ պարիսպն*»[34]: Սաղիանի վանքի վերաշինումից յետոյ Մեսրոպ Արք. Սմբատեանցի մտահոգութիւնն էր վերաւորոգել նաեւ ամայի վիճակում գտնուող Մէյսարիի վանքը եւ այնտեղ նոյնպէս բացել վանական դպրոց: Վանքի շինարարական աշխատանքները ձեռնարկելու համար Մեսրոպ Արք. Սմբատեանցը ակնկալում էր Բաքուի հայ բարերարների աջակցութիւնը: Թեմակալն անգամ այդ առիթով իր բողոքն է յայտնել թեմի հայութեան դէմ՝ մեղադրելով նրանց եկեղեցին նման վիճակի մէջ թողնելու եւ անտարբերութեան համար. «*...խեղճ չամախեցիք, ու՞ր էք մոլորուում,*- գայրոյթով գրում է թեմակալը,- *է՞ր էք թողնում ձեր բարեպաշտ եւ քաջ պապերի քաղցր յիշատակը եւ 1900 տարուայ բարի ճանապարհը, եւ մուրացկանի նման ուրիշ ազգերից հոգւոյ ողորմութիւն էք խնդրում, ամօթ ձեզ, ձեր պապերը այնքան դառն ու դժուար միջոցներում, հեթանոս, բարբարոս ազգերի մէջ ապրելով՝ երբեք չմտածեցին անգամ եկեղեցին ուրանալ, այլ իրենց կարմիր արիւնով, նահատակութեամբ պահեցին եկեղեցին եւ հասցրին իրրեւ սուրբ աւանդ մեզ, իսկ դուք ապերախտ որդիք, այս ազատ միջոցում, քրիստոնէութեան ամենափառաւոր ժամանակամիջոցում, քրիստոնեայ տէրութեան ձեռքի տակ, ուրացաք ու մոռացաք եկեղեցին... ինչպէս Մէյսարու սուրբ Աստուածածնի վանքը ահա բողոքում է ձեզանից...*»[35]: Սակայն, վանքի վերաշինման աշխատանքները ձգձգւում են: Այդ է վկայում այն փաստը, որ 1895ին այն դեռեւս գտնւում էր քայքայուած վիճակում. «*...խարխուլ, հողէ կտուրով, ցած պատուհաններով եւ դռներով մի խոնաւ եկեղեցի...*»[36]. սակայն ըստ երեւոյթին յաջորդող տարիներին վանքը վերաւորոգուել է. այդ է վկայում *Մշակում* լոյս տեսած մի թղթակցութիւն, որի հեղինակը գրելով 1902 Յունուարի 12ի երկրաշարժի աւերների մասին գրում է, թէ «*...նորաչէն եկեղեցին ստացել էր մեծ ճեղքուածքներ...*»[37]: Մէյսարիի վանքը մեծ վնասներ կրեց նաեւ 1918ին Բաքուի դէմ թուրքական արշաւանքի ժամանակ: Թուրք զինուորներն ու բաթար (աղրբեջանցի) հրոսակախմբերը ամբողջովին կողոպտեցին վանքը: Վանքը ընդհուպ մինչեւ Ի. դարի 70ականները գտնուել է կանգուն վիճակում, սակայն 1970ականների սկզբներին աղրբեջանցիները վայրենաբար պայթեցրել են վանքի Սբ. Աստուա-ծածին եկեղեցին եւ վանական կառոյցները: Այդ բարբարոսութեան հետեւանքով ոչնչացել են նաեւ եկեղեցիների որմերին փորագրուած՝ ԺԷ.-ԺԹ. դդ. վերաբերող բազմաթիւ արձանագրութիւններ: Եկեղեցու սրբատաշ քարերը

այլ շինութիւններ կառուցելու նպատակով տեղափոխել են աղյբեջանցիները[38]:

Ինչպէս երեւաց շարադրանքից, Մէյսարիի վանքը, որպէս առաջնորդանիստ եւ մշակութային օջախ, յիրաւի նշանակալից դեր է ունեցել Շամախու հայոց թեմում:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Սարգիս Արք. Ջալալեանցը Մէյսարի անուան ստուգաբանութեան վերաբերեալ գրել է. «...*գիւղն Մէյսարի, որ առեալ է զանուն իւր ի հեղիկ հոդմոց հանապազ հնչելոց...*» (Սարգիս Արք. Ջալալեանց, *Ճանապարհորդութիւն Ի Մնձն Հայաստան*, Բ. մաս, Տփխիս, 1858, էջ 397): Մեսրոպ Արք. Սմբատեանցը Մասերի կամ Մէյսարի անուններին տուել է հետեւեալ բացատրութիւնը. «...*ես կարծում եմ թէ ի պատիւ Մասանց սրբոյ որ այն վանքումն են եղել, անուանել են Մասերի վանք, կամ Մեսրաւանք այն է Մեսրովբայ վանք, ինչպէս Գողթանեանց գաւառի Մսրվան գիւղը, որ իսկապէս Մեսրովբավանէ. Մեսրովբ թարգմանչի այն տեղ մնալու եւ աշակերտներ պատրաստելու համար՝ որով եւ գիւղը, իսկ թէ այլագգական բառ համարելով Մէյսարին այնպէս բացատրենք. հետեւեալը դուրս կը գայ: Մահսերի՝ նշանակէ հանրախօսական ստորագրութեան թուղթ, բազմակնիք, զամէն մահսերագրութիւն, որ-պէս երեւի վանքի մօտի ժողովուրդ լինելով Մէյսարեցիք՝ սովրած են եղել միշտ մահսերագրութեամբ բողոքել վանահօրից, որպէս եւ Սաղիանցիք եւ այլք*» (Մեսրովբ Արք. Սմբատեանց, *Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի Վանաց Սաղիանի եւ Միւս Վանօրէից եւ Ուխտատեղեաց Եւս եւ Քաղաքացն եւ Գիւղօրէից Որք ի Շամախւոյ Թեմի*, Տփխիս, 1896, էջ 143): Ըստ Մակար Եպս. Բարխուտարեանցի՝ «*Պարսկերէն մէյ նշանակում է գինի եւ սէար՝ գլուխ, իսկ Մէյսարի՝ գլխաւոր գինի*» (Մակար Բարխուտարեանց, *Աղուանից երկիր եւ Դրացիք (Միջին Դաղստան)*, Թիֆլիս, 1893, էջ 169): Մէկ այլ մեկնաբանութեամբ Մէյսարին բաղկացած է «Մէյ», որ նշանակել է գեփիւռ, եւ «սար» բառերից (*Մշակ*, 21.03.1902, թիւ 62):

[2] *Տոմար Ընտանեկան* օրացոյցում պահպանուած մի տեղեկութեան համաձայն՝ Մէյսարիի վանքը կոչւում է նաեւ Սբ. Գաբրիէլի եւ Սբ. Միքայէլի անուամբ (*Տոմար Ընտանեկան 1874-1875 թթ.*, Հտր. Ա., աշխատասիրեց Տ. Սրբուհի Ա. Երիցեանց, Թիֆլիս, 1874, էջ 144): Անտարակուսելի է, որ վանքը կոչուել է գլխաւոր եկեղեցու՝ Սբ. Աստուածածնի անունով:

[3] Սմբատեանց, էջ 156:

[4] Նոյն, էջ 33:

[5] Յովհաննէս Շահխաթունեանց, *Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ Հինգ Գաւառացն Արարատայ*, Հտր. Բ., Էջմիածին, 1842, էջ 381. նաեւ՝ Սամուէլ Կարապետեան, *Բուն Աղուանքի Հայերէն Վիմագրերը*, Երեւան, «Գիտութիւն», 1997, էջ 49:

[6] Ղեւոնդ Ալիշան, *Տեղագիր Հայոց Մնծաց*, Վենետիկ, 1855, էջ 92:

[7] Գ. Քաջբերունի, *Բազմամիւիոն Ժառանգութիւն*, Հայաստանի Ազգային Արխիւ (այսուհետեւ՝ ՀԱԱ), ֆ. 56, ց. 1, գ. 439, թ. 37:

[8] Ջալալեանց, էջ 399-400:

[9] Նոյն, էջ 399: Հմմտ.՝ Սմբատեանց, էջ 148:

[10] Շահխաթունեանց, էջ 381: Հմմտ.՝ Սմբատեան, էջ 158-159, 161: Ջալալեանց, մասն Բ., էջ 399, նաեւ՝ Կարապետեան, էջ 50:

[11] Սմբատեանց, էջ 27, 146:

[12] Նոյն, էջ 146:

[13] Բարխուտարեանց, էջ 172:

[14] Սմբատեանց, էջ 145:

[15] Դանիէլ Արք., «Այցելութիւն Եկեղեցեաց Գիւղօրէից Վիճակին Հայոց Շամախւոյ», *Արարատ*, 1871, Մարտ, էջ 352:
[16] Նոյն, էջ 71, 144, 149. նաեւ՝ Ջալալեանց, մասն Բ., էջ 398:
[17] Սմբատեանց, էջ 149:
[18] Նոյն, էջ 145:
[19] Կարապետ Կոստանեան, *Հայոց Վանքերը (Համառօտ Տեսութիւն)*, Մոսկով, 1886, էջ 43:
[20] Սմբատեանց, էջ 150, 156-157:
[21] Նոյն, էջ 268:
[22] Մատենադարան, ձեռագիր թիւ 3452, էջ 15ա-16բ:
[23] Նոյն:
[24] Սմբատեանց, էջ 513-514:
[25] Նոյն, էջ 71, 150-151:
[26] Նոյն, էջ 157:
[27] *Յուցակ Ձեռագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի*, կազմեցին՝ Օնիկ Եգանեան, Ա. Ջէյթունեան, Փայլակ Ալեքսեան, Հտր. Ա., Երեւան, Հայկ. ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիա, 1965, էջ 958:
[28] *Յուցակ Ձեռագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի*, կազմեցին՝ Օնիկ Եգանեան, Ա. Ջէյթունեան, Փայլակ Ալեքսեան, Հտր. Բ., Երեւան, Հայկ. ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիա, 1970, էջ 230:
[29] Սմբատեանց, էջ 32, 157:
[30] Բարխուտարեանց, էջ 172:
[31] Կովկասեան Օրացոյց (ռուս.), Թիֆլիս, 1851, էջ 271:
[32] ՀԱԱ Ֆ. 56, ց. 1, գ. 2596, թ. 1:
[33] ՀԱԱ Ֆ. 56, ց. 1, գ. 6442, թ. 1:
[34] Բարխուտարեանց, էջ 172:
[35] Սմբատեանց, էջ 154-155:
[36] «Նամակ Բագուից», *Նոր-դար*, 1895, թիւ 160:
[37] Ս. Սարգիսբէկեան, «Աղէտի Շրջանից (Նամակ Շամախուց)», *Մշակ*, 12.02.1902, թիւ 32:
[38] «Հայկական Պատմական Յուշարձանների Վիճակը Հայաստանի Հարեւան Երկրներում», *Նոր-Հար*, 2003, թիւ 4, էջ 376:

FROM THE HISTORY OF MEISARY'S ST. ASTVATSATSIN MONASTERY OF THE ARMENIAN DIOCESE IN SHAMAKHI

(Summary)

GEVORG STEPANYAN

Among the churches in the Armenian Prelacy of Shamakhi, the monastery of Masantz or Meisary had both architectural, cultural and educational importance. The monastery is situated near the North-Western deep canyon of the village of Meisary, known also by the name of its main church, Surp Astvatsatsin (Holy Madonna). The monastery was a religious, educational and cultural center in medieval Armenia and for Armenians in the Shirvan region. The monastery and its school were the primary educational center in the Prelacy of Shamakhi. The school graduated both renowned clerics and chroniclers.

The monastery structure was standing until the early-1970s. However, as of the 1970s the Azeris brutally demolished the construct of St. Astvatsatsin. As a result many inscriptions on the walls of the monastery dated 17-19th centuries disappeared. As for the stones, the Azeris moved them to build other constructions.

ՈՐՈՇ ՁՈՒԳԱՀԵՌՆԵՐ ԿՈՄԻՏԱՍԻ ԵՒ ԲԵԼԱ ԲԱՐՏՈԿԻ ՄԻՋԵԻ[1]

ՏԱԹԵՒԻԿ ՇԱԽԿՈՒԼԵԱՆ
shakhkulyan@yahoo.com

«...Ես դեռ երբեք էկզոտիկ երաժշտութեան այդպիսի նրբաճաշակ մշակումներ չեմ տեսել, բացառութեամբ, հաւանաբար, Բելա Բարտոկի...»: Այսպիսին են գերմանացի կոմպոզիտոր, խմբավար, երաժշտական քննադատ Ալօիզ Մելիշարի տպաւորութիւնները Կոմիտասի ստեղծագործութիւնների մասին[2]: Երաժշտական ֆոլկլորագիտութեան ներկայացուցիչների՝ հայ եւ հունգարացի երկու հանճարների հարեւանցի համեմատութիւնը վերաբերում է միայն մշակումներին, մինչդեռ նրանց ընդհանրութիւնը շատ աւելին է[3]:

Արեւմտեան իրականութեան մէջ Կոմիտասի վերաբերեալ անմիջական եւ դիպուկ պատկերացում տալու համար, յատկապէս վերջին տարիներին, մի շարք խտապնակներում եւ եւրոպական լեզուներով տարբեր կայքէջերում, յաճախ օգտագործում է «հայկական Բարտոկ» բնորոշումը եւ կատարում են զուգադրումներ հունգարացի կոմպոզիտորի հետ՝ յատկապէս նշելով՝ որ ինչպէս Բարտոկը Հունգարիայում, այնպէս էլ Կոմիտասը հայերի մէջ հիմնադրեց երաժշտաստեղծման ազգային բազմաճայն ուղղութիւն, որ երկու երգահաններն էլ անխոնջ հետազօտողներ էին, որ ճանապարհորդում եւ գրառում էին ազգագրական նիւթեր եւ բազմաճայն նոյն սկզբունքով եւն.: *«Նրա* (Կոմիտասի - Տ.Շ.) *աշխատութեան որակը եւ քանակը կարող է համեմատուել ԺԹ. դարի վերջի եւ Ի. դարի սկզբի այնպիսի մեծ էթնոերաժշտագէտների գործի հետ, ինչպիսին էր Բելա Բարտոկը»*[4]: *«Ինչ նա* (Կոմիտասը - Տ.Շ.) *տուեց հայ ժողովրդին, նման էր նրան, ինչ որ Բարտոկը տուեց Հունգարացիներին՝ ազգային ոգու ձայնը»*[5]:

Հայ կոմպոզիտոր եւ խմբավար Կոմիտասը (Սողոմոն Սողոմոնեան, 1869-1935) ծնուել է Թուրքիայում, 11 տարեկանից տեղափոխուել է Էջմիածին, սովորել է տեղի Գէորգեան Ճեմարանում, ապա՝ Բեռլինում՝ մասնաւոր կոնսերվատորիայում եւ Հումբոլդտի Համալսարանի փիլիսոփայութեան բաժնում: Ապրել է Էջմիածնում, ապա նաեւ Կոստանդնուպոլսում: Ստեղծագործական կեանքն ընդհատուել է 1915ի Մեծ Եղեռնի հետեւանքով: Կեանքի վերջին տարիներն անց է կացրել Փարիզում՝ հոգեբուժարանում:

Հունգարացի կոմպոզիտոր եւ դաշնակահար Բելա Բարտոկը (1881-1945) ծնուել է Տրանսիլվանիայում՝ այժմեան Ռումինիայի տարածքում: Սովորել է Բուդապեշտի Երաժշտութեան Արքայական Ակադեմիայում: Ապրել է գլխաւորապէս Հունգարիայում, իսկ կեանքի վերջին տարիներին՝ ԱՄՆում:

Երկու կոմպոզիտորներն էլ ծնուել են իրենց պատմական հայրենիքից[6] դուրս, սակայն ապրել են հայրենիքում, երկուսն էլ աւելի ուշ, տարբեր պատճառներով, տեղափոխուել են այլ երկիր: Երկու հեղինակներն էլ վախճանուել են ոչ իրենց հայրենիքում (Բարտոկը՝ Նիւ Եորքում, Կոմիտասը՝ Փարիզում) եւ երկուսի աճիւնն էլ յետմահու տեղափոխուել է հայրենիք: Պատահական նմանութիւնների այս շղթան դեռ կարելի է լրացնել:

Թէ՛ Կոմիտասի, թէ՛ Բարտոկի երաժշտական գործունէութեան կարեւոր բնագաւառներից է ֆոլկլորային երաժշտական նիւթի հաւաքումն ու ուսումնասիրումը: Երկուսն էլ նուիրուել են այդ աշխատանքին, ճանապարհորդել են տարբեր վայրեր՝ հաւաքելով, գրի առնելով եւ գիտականօրէն հետազօտելով գեղջկական երաժշտութիւն: Երկուսն էլ իրենց ազգայինից բացի բարձր են գնահատել եւ սիրել են հարեւան ազգերի երաժշտութիւնը: Երկուսին պարտական ենք ժողովրդական երաժշտութեան մինչ այդ աննկատ եւ անծանօթ շերտերը դուրս հանելու, կորստից փրկելու համար:

Կոմիտասը ժողովրդական երգի գրառումները սկսել է 1880ականներին, երբ դեռ Էջմիածնի Ճեմարանի ուսանող էր: 1890ականների սկզբին Կոմիտասն արդէն կիրառում էր իր գրառումները դասաւանդման նպատակով: Այնուհետեւ այս բնագաւառում ունեցած նրա գործունէութիւնը աստիճանաբար աւելի հետեւողական ու պարբերական բնոյթ է կրում: Նա նպատակաուղղուած մեկնում է Հայաստանի եւ յարակից երկրների տարբեր գաւառներ, այնտեղ հաւաքում երաժշտական նիւթ, դասակարգում է եւ ուսումնասիրում: Այդ աշխատանքով Կոմիտասը զբաղուել է ստեղծագործական կեանքի ողջ ընթացքում: Միեւնոյն ժամանակ Կոմիտասն արդէն գիտակցում է, որ հայ ազգային երաժշտութեան առանձնայատկութիւնները ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է ուսումնասիրել նաեւ հարեւան ազգերի երգերը՝ պարզելու համար հարեւանութեամբ կենցաղավարող երգերի փոխազդեցութիւնները: Այդ նպատակով Կոմիտասը հաւաքում եւ ուսումնասիրում է քրդական, յունական, արաբական, թուրք-տաճկական, պարսկական, ասորական եւ այլ ազգերի ժողովրդական երգերն ու եղանակները: Միջազգային լսարանների համար կարդացած իր դասախօսութիւններում Կոմիտասը ցոյց էր տալիս այդ երգերի միջեւ եղած տարբերութիւնները: Այսպէս, 1899ին Բեռլինի Կոնսերվատորիայում հայ երաժշտութեան մասին դասախօսութեան ընթացքում Կոմիտասը ներկայացրել է հայերէն, արաբերէն, տաճկերէն, պարսկերէն երգեր՝ ցոյց տալով դրանց տարբերութիւնները: Նոյն տարի, Ճեմարանի 25ամեակին նուիրուած տօնակատարութիւնների շրջանակներում Կոմիտասը կարդացել է «Խօսգարմունք Հայոց Եկեղեցական Երգեցողութեան» թեմայով դասախօսութիւն, որտեղ համեմատել է հայ եւ ասորի երգերն ու ձայները: Կայ նաեւ յիշատակութիւն այն մասին, որ Բեռլինի Համալսարանում Կոմիտասի դիպլոմային աշխատանքը նուիրուած է եղել քրդական երաժշտութեանը: Տարբեր ազգերի երգերի առանձնայատկութիւնների մանրազնին ուսումնասիրութեան ճանապարհով Կոմիտասը փնտռում էր հայկական երգերի առանձնայատկութիւնները:

Բարտոկը ժողովրդական երգերի հաւաքումով եւ ուսումնասիրութեամբ սկսել է զբաղուել 1904ից: Կոմիտասի նման, նա եւս ժողովրդական երգին առաջին ծանօթութիւնից սկսած անյետադարձ նուիրուել է այդ բնագաւառին: Բարտոկը հունգարացի կոմպոզիտոր Զոլտան Կոդայի հետ պարբերաբար ձեռնարկում էր այցելութիւններ դէպի հունգարացի նրանց եւ հարեւանութեամբ ապրող այլ ազգերի բնակավայրեր՝ երաժշտական նիւթ հաւաքելու նպատակով: Հունգարականից բացի, նա ուսումնասիրում էր ռումինական, սլովակեան, ուկրաինական, սերբական, հորվաթական, թուրքական եւ այլ ազգերի երգեր՝ նրանց փոխազդեցութիւնները պարզաբանելու համար:

Բարտոկը եւս դասախօսութիւնների եւ յօդուածների միջոցով հրապարակում էր իր հետազօտութիւնների արդիւնքները:

Երկու գիտնականներն էլ ժողովրդական երգերում ազգայինից բացի ուշադրութիւն են դարձրել որոշակի տարածքներում ձեւաւորուող առանձնայատկութիւններին: Այսպէս, Կոմիտասը դիտարկում էր մեղեդիների «բարբառային» յատկանիշներն ըստ տեղանքների՝ Ակնի, Վանայ, Շատախի եւն.: Բարտոկն ուսումնասիրում էր, օրինակ, Մեզիւշէգի, Մարամարոշի ռումինացիների, Սիլադեական եւ Սատմարական շրջանների ժողովրդական երաժշտութիւնը, եւն.:

Դիտարկենք երկու գիտնականների բանահաւաքչական աշխատանքի մի քանի համընկնումներ:

Երկու հեղինակներն էլ բազմիցս, տարբեր առիթներով նշել են, որ խուլ գիւղերն ամենանպատակայարմարն են երգեր հաւաքելու համար, քանի որ այնտեղ արտաքին ազդեցութիւններ չկան կամ քիչ են:

Երկուսն էլ նշում են գլխաւոր դժուարութիւնը. գիւղացիները հրաժարւում են երգել առանց առիթի՝ տեղից ու ժամանակից դուրս:

> Կոմիտաս. *«Շատ դժուարութիւնով կամ ամէնեւին չեն երգում, նոյնիսկ ծաղր են անում, եթէ մի ոչ գիւղացի խնդրէ, որ, օրինակ, մի չինական երգ ասեն, երբ գործի չեն, այն էլ՝ տանը: ... Ոչ մի գիւղացի, տանը նստած, կալի երգ չի ասի. որովհետեւ կալերգն ստեղծելու եւ ասելու տեղն է կալը»*[7]:
>
> Բարտոկ. *«Կատարել երգեր-ասքեր, հարսանեկան երգեր կամ բերքահաւաքի երգեր մէկ այլ առիթով, քան Մ. Մնուշկն է, հարսանիքը կամ հունձը միայն այն պատճառով, որ ինչ-որ մէկը պարզապէս ուզեց երգել, անհնարին էր համարւում, անգամ անվայել»*[8]:

Թէ՛ Կոմիտասին, թէ՛ Բարտոկին մտահոգել է այն իրողութիւնը, որ պաշտօնեաների ճաշակով աղաւաղուել է ազգային երաժշտութիւնը: Ստորեւ բերուող Կոմիտասի խօսքը հոգեւոր, ոչ թէ գեղջկական երաժշտութեան մասին է, ինչը այս դէպքում էական չէ:

> Կոմիտաս. *«Կ. Պոլսի տիրացուները ամիրաներին դուր գալու եւ նրանց գուարճացնելու համար, սկսել են եկեղեցական եղանակները չարքիների, թիւրքիների եւ մանիների ազդեցութեան տակ կլկլացնել, գարդարել. այդպիսով չարականների, մանաւանդ տօնականների վրայ պատուաստուել է օտար ոճը եւ պղտորել նրանց հարազատութիւնը»*[9]:
>
> Բարտոկ. *«Հիմքեր կան ենթադրելու, որ իշխող դասերը մեծ դեր են խաղացել օտար երաժշտական տարրերի մուտքագրման մէջ»*[10]:

Երկու երաժիշտները գրել են ազգայինի անուան տակ մատուցուող օտար երաժշտութեան մասին:

Այդ հարցին է նուիրուած, օրինակ, Կոմիտասի "Receuil de Chants Populaires Armeniens" յօդուածը[11], որտեղ նա քննում է *Հաւաքածոյ Հայոց Ժողովրդական Երգեր* գրքոյկի բովանդակած երգերը, որպէս մի դէպքում այլ ազգերի նորագոյն երգերի թարգմանութիւն, միւս դէպքում՝ կոմպոզիտորական ստեղծագործութիւն:

Բարտոկ. «Մ՛ր երգերն էին այդ երաժիշտներն այդ ժամանակ ընդունում որպէս ժողովրդական։ Դժուար թէ որեւէ այլ, քան նորագոյն գերմանական եւ նրանց նման արեւմտեան ժողովրդական երգեր... Նաեւ իրենց երկրի կոմպոզիտորների երգերը»[12]:

Ժողովրդական երգի ուսումնասիրութիւնը թէ՛ Կոմիտասի, թէ՛ Բարտոկի ստեղծագործական ձեռագիրը ձեւաւորող գլխաւոր գործօնն է հանդիսացել: Թէ՛ Կոմիտասը, թէ՛ Բարտոկը ստեղծել են երաժշտական ինքնատիպ մտածողութիւն համաշխարհային երաժշտութեան մասշտաբով: Երկու դէպքում էլ նորարարութիւն է առաջադրուել երաժշտական տարրեր բաղադրիչներում՝ այդ թւում հարմոնիայում, պոլիֆոնիայում, ռիթմում եւ մետրում, ֆակտուրայում:

Այսպէս, Կոմիտասը հայ երաժշտութեան կառուցուածքի ուսումնասիրման արդիւնքում եկաւ այն գաղափարին, որ հայ ազգային երաժշտութեան ձայնակարգերը չեն ենթարկւում արեւմտաեւրոպական երաժշտութեան հիմք հանդիսացող եւ համաշխարհային երաժշտութեան առաջատար մաժորա-մինորային համակարգին: Ի տարբերութիւն վերջինների՝ հայ երաժշտութեան ձայնակարգերը կազմուած են միմեանց կցուող, այլ ոչ թէ հարեւանութեամբ գտնուող քառալարերից[13]: Հայ երաժշտութեան ձայնակարգերից Կոմիտասն ածանցեց դրանց բնորոշ ներդաշնակում եւ ֆակտուրային-ձայնակարգային նոր, մինչ այդ չլսուած միջոցներ:

Նմանապէս, Բարտոկի հետազօտութիւնները բերեցին հունգարական երաժշտութեան՝ մաժորա-մինորային համակարգի նկատմամբ ունեցած հակասութեան մասին եզրակացութեանը: Մինչ Բարտոկի հետազօտութիւնները, հունգարական երաժշտութեան մասին այն կարծիքն էր հաստատուել թէ դրանց ձայնակարգերն ունեն գնչուական երաժշտութեանը բնորոշ երկու մեծացրած սեկունդաներով կառուցուածքը, որը ստացել է «հունգարական ձայնակարգ» անուանումը: Բարտոկը ցոյց տուեց, որ խորքային, «հին հունգարական երգեր»ի հիմքում ընկած են պենտատոնային համակարգեր: Բուն ժողովրդական երգերի հնչիւնները ուղղահայեաց դիրքով կազմակերպելու միջոցով Բարտոկն ստացաւ նոր հարմոնիաներ:

Երաժշտագէտ Սվետլանա Սարգսեանը նկատում է մի հետաքրքիր օրինաչափութիւն: Կոմիտասի ստեղծագործութիւններում ձեւաւորուել են կուարտային եւ խառը կառուցուածքներով ակորդներ, բայց Ի. դարի կէսերին հայ կոմպոզիտորների ստեղծագործութիւններում կուարտակորդների կիրառման «ռացիոնալ անհրաժեշտութիւնը» գիտակցուել է Բարտոկի աւանդոյթի բարենպաստ ազդեցութեամբ[14]:

Եթէ Բարտոկը պէտք է բացայայտէր իսկական հունգարական երաժշտութեան էութիւնը, ապա Կոմիտասի գործն այս հարցում կրկնակի բարդ էր այն իմաստով, որ նա պէտք է ապացուցէր հայ ինքնուրոյն երաժշտութեան գոյութիւնը՝ նրա էութիւնը պարզաբանելուն զուգընթաց:

Կոմիտասի աշխատանքը յայտնի հանգամանքների բերումով աւելի վաղ է ընդհատուել, մինչդեռ Բարտոկը շարունակել է աշխատել ֆոլկլորագիտութեան բնագաւառում մինչեւ 1940ականները: Դեռ աւելին, հանգամանքների բերումով Կոմիտասի հաւաքած նիւթերից առայժմ յայտնի է մի մասը միայն, իսկ Բարտոկի աշխատանքային պայմաններն աւելի բարենպաստ են եղել, եւ

նրա հատաքած նիթերը պահպանում են տարբեր գրադարաններում եւ գրապահոցներում:

Եթէ երկու կոմպոզիտորների կենսագրական տարրերում նմանութիւնները պատահականութիւնների մի շղթայ կարելի է համարել, ապա ժողովրդական երգի նպատակամիտուած ուսումնասիրութիւնը պատահական չէ, դա նրանց գեղագիտական մօտեցումների ընդհանրութիւնն է:

Երկու հեղինակները շատ են ճանապարհորդել եւրոպական տարբեր երկրներում՝ ներկայանալով թէ համերգերով, թէ դասախօսութիւններով: Թէ Կոմիտասի, թէ Բարտոկի կատարած աշխատանքը իրենց ժամանակ արդէն բարձր է արժեւորուել մասնագէտների կողմից: Կոմիտասին որպէս ֆոլկլորագէտ գնահատել են գրող Ռոմէն Ռոլանը, յայտնի երաժշտագէտներ Լուի Լալուան, Օսկար Ֆեյայէրը եւ այլք: Կոմիտասն արեւելեան երաժշտութեան ամենավստահելի եւ ամենահեղինակաւոր ներկայացուցիչն էր, եւ եթէ արեւելեան երաժշտութեան մասին որեւէ հարց էր առաջանում, ապա դիմում էին նրան: Ինչ վերաբերում է Բարտոկին, ապա նա աշխարհի ամենաճշգրտաւոր ֆոլկլորագէտն է:

Զարմանալի հարց է առաջանում, թէ ինչպէս է պատահել, որ այդքան նման յատկանիշներով օժտուած եւ ընդհանուր գործով զբաղուած երկու անհատներ, լինելով ժամանակակիցներ, երբեւէ չեն հանդիպել եւ միմեանց մասին չեն արտայայտուել, կամ գոնէ յայտնի չէ նրանց փոխառնչութեան որեւէ փաստ: Կոմիտասը չինական երաժշտութիւնը քննարկելիս նշում է, որ դրանից բացի պենտատոնի հնչիւնաշարեր կան նաեւ ֆիննական երաժշտութեան մէջ[15], եւ որեւէ խօսք չի գրում հունգարականի մասին: Բարտոկը գրում է այն մասին, որ այնպիսի երկրներ, ինչպիսիք են Յունաստանը, Թուրքիան եւ Միջին Ասիայի երկրները, չեն ուսումնասիրուել ժողովրդական երաժշտութեան տեսանկիւնից[16]: Կրկին խօսք չկայ Կոմիտասի կատարած աշխատանքի մասին:

Կոմիտասին եւ Բարտոկին միաւորում է նաեւ ընդհանուր հետաքրքրութիւնը թուրքական երաժշտութեան նկատմամբ: 1936ին Բարտոկը ճանապարհորդել է Թուրքիայում՝ երաժշտութիւն հաւաքելու նպատակով[17]: Իսկ յայտնի է, որ Թուրքիայում եւս Կոմիտասը բարձր էր գնահատւում: Անգամ Թուրքիայի կառավարութիւնն ուզում էր ստեղծել ազգային կոնսերվատորիա՝ Կոմիտասի ղեկավարութեամբ: Թուրքիայում Կոմիտասի բարձր գնահատելու մասին է վկայում նաեւ այն փաստը, որ նրան Եղեռնի ժամանակ աքսորից վերադարձնելու համար միջնորդել է թուրք բագաժառանգը: Եթէ անգամ Թուրքիա կատարած այցելութեան ժամանակ Բարտոկը Կոմիտասի մասին լսել է, ապա այդ մասին տեղեկութիւն չկայ:

Առայժմ փաստ է, որ Մելիշարի ակնարկը Կոմիտասի եւ Բարտոկի մշակումների մասին հիմքեր ունի: Քրտնաջան աշխատանքով ուսումնասիրել ազգային երգերը ստեղծման պահին, կենցաղի մէջ եւ վերարտադրել նրանց բովանդակային եւ կառուցուածքային էութիւնը ստեղծագործութիւններում. սա է պարզ թուացող բանաձեւը թէ՛ Կոմիտասի եւ թէ՛ Բարտոկի գործունէութեան մէջ:

[1] Շնորհակալութիւն եմ յայտնում բանասիրութեան թեկնածու Արծուի Բախչինեանին, որի առաջարկով եւ խորհուրդներով է գրուել սոյն յօդուածը եւ իմ գիտական ղեկավարին՝ արուեստագիտութեան թեկնածու Մեր Նաւոյեանին:

[2] Ալօիզ Մելիշարի՝ Երեւանի Գրականութեան եւ Արուեստի Թանգարանում պահուող երգչուհի Մարգարիտ Բաբայեանին ուղղուած նամակից (Azat Ordukhanyan, "Briefe über Komitas: die Briefe Alois Melichars an Margarit Babajan," *Armenisch-Deutche Korrespondenz*, 2006, Heft 3 & 4, S. 24). Ժամանակին Բաբայեանը մամուլում հատուածաբար հրատարակել է այդ նամակից՝ Բարտոկին վերաբերող հատուածը՝ («*Բացի Բելա Բարտոկի (Հունգարացի մեծ երաժիշտ) գործից, երբեք այդպիսի նուրբ եւ կատարեալ՝ արեւելեան երաժշտութեան վարպետական ներդաշնակման* (Meisterhaft) *չեմ հանդիպած*» (Մ. Բ., «Երաժշտական Տպաւորութիւններ Հայաստանի Միջով Ճանապարհորդելիս: Յաւելուած», *Ազատիտ*, 1930, Յուլիս-Օգոստոս, էջ 82):

[3] Երաժշտագէտ Սվետլանա Սարգսեանը, ուսումնասիրելով Բարտոկի ազդեցութիւնը Ի. դարի հայ երաժշտաստեղծական դպրոցի վրայ, նկատել է նաեւ երկու ազգութիւնների՝ հայերի եւ հունգարացիների խառնուածքի որոշ նմանութիւններ (տե՛ս՝ Svetlana Sarkisyan, *Armyanskaya Muzika V Kontekste 20-go Veka* (Հայ երաժշտութիւնը Ի. դարի համատեքստում), Մոսկուա, «Կոմպոզիտոր», 2002, էջ 75).

[4] Rita Soulahian-Kuyumjian, *Archeology of Madness: Komitas, Portrait of an Armenian Icon*, Gomidas Institute, Princeton, New Jersey, 2002, էջ 6.

[5] Նոյն, էջ 214:

[6] Հայրենիք ասելով պայմանականօրէն նկատի ունենք կոմպոզիտորների նախնիների երկիրը, ոչ թէ ծննդավայրը: Յայտնի է, որ Կոմիտասը «հայրենիք» էր անուանում իր ծննդավայր Քէօթահիան:

[7] Կոմիտաս, «Հայ Գեղջուկ Երաժշտութիւն», *Ուսումնասիրութիւններ եւ Յօդուածներ*, Գիրք Ա, Երեւան, «Սարգիս Խաչենց», 2005, էջ 377:

[8] Bela Bartok, *Zachem i Kak Sobirat' Narodnuyu Muziku* (Ինչու եւ ինչպէս հաւաքել ժողովրդական երաժշտութիւնը), Մոսկուա, «Պետական Երաժշտական Հրատարակչութիւն», 1959, էջ 26:

[9] Կոմիտաս, «Հայ Ժողովրդական եւ Եկեղեցական Երգերը», *Ուսումնասիրութիւններ եւ Յօդուածներ*, էջ 329:

[10] Bela Bartok, *Narodnaya Muzika Vengrii i Sosednikh Narodov* (Հունգարիայի եւ հարեւան ժողովուրդների ազգային երաժշտութիւն), Մոսկուա, 1966, էջ 18:

[11] Կոմիտաս, էջ 133:

[12] Bela Bartok, *O Vliyanii Krestyanskoy Muziki na Muziku Nashego Vremeni* (Գեղջկական երաժշտութեան՝ մեր ժամանակի երաժշտութեան վրայ ունեցած ազդեցութեան մասին), նրա *Sbornik Statey* (Երկերի ժողովածու) գրքում, Մոսկուա, 1977, էջ 247:

[13] Կոմիտաս, *Ուսումնասիրութիւններ եւ Յօդուածներ*, «Երգեցողութիւնը Ս. Պատարագի», էջ 90-119. նաեւ՝ «Հայ Եկեղեցական Երաժշտութիւն», էջ 120-131:

[14] Sarkisyan, էջ 88.

[15] Կոմիտաս, «Պատմութիւն Երաժշտութեան», *Ուսումնասիրութիւններ եւ Յօդուածներ*, էջ 147:

[16] Bartok, *Zachem*, էջ 15.

[17] Բարտոկի «թուրքական ժողովրդական երգերի» առնչութեամբ երաժշտագէտ Լիլիթ Երնջակեանը տարակուսելի է համարում դրանց որոշակի խմբի ծագումը՝ հաշուի առնելով նաեւ Բարտոկի կասկածները: «*Մեզ համար աւելի քան տարակուսելի է, որ Բարտոկը նչելով եւ թուելով բոլոր հնարաւոր քոչուոր ու նստակեաց ցեղերի ու ազգութիւնների անունները, որոնց հետ թուրքերը չփուել են դարեր շարունակ, գէթ*

մէկ անգամ չի յիշատակում հայերի անունը: Հետաքրքիր է, որ դա նաեւ «լուրջ» խմբագրական աշխատանքի արդիւնք է» (Լիլիթ Երնջակեան, «Աշուղական Սիրավէպը Հայ-արեւելեան Երաժշտական Փոխառնչութիւնների Համատեքստում», դոկտորական ատենախօսութիւն, Երեւան, 2004, էջ 181):

SOME PARALLELS BETWEEN KOMITAS AND BELLA BARTOK

(Summary)

TADEVIK SHAKHKULYAN

The article brings to light the various similarities and parallels that existed between the great Armenain and Hungarian musicologists, Komitas (1869-1935) and Bella Bartok (1881-1945).

Both were the founders of their national polyphonic music, both were devout researchers and ethnographic song collectors, both were born outside their historic fatherland, yet both performed in their countries and abroad, died abroad and eventually were reburied in their fatherland. Both collected and studied folkloric songs and music and saved them from disappearance, and they loved and appreciated the music and songs of their neighboring nations, as they believed that music and songs of neigboring nations interact and influence each other. This is why, alongside Armenian ethnographic songs, Komitas collected Kurdish, Greek, Arabic, Turkish, Persian, Assyrian and other popular songs and music. Likewise, Bartok used to pay visits to neigboring nations, like the Romanians, Slovaks, Ukrainians, Serbs, Croats, and Turks. He too, like Komitas, highlighted the similarities and differences in his public lectures. Furthermore, both paid special attention to the minute and specific peculiarities of the music of each region and found that remote and distant villages were the best places to look for ethnographic songs, since these places were less influenced by foreign penetration and their music was well preserved. Both complained that their national music has been tarnished by foreign influence, and both created a unique national musical mentality and offered innovative ideas for the diverse particulars of music, including harmony, polyphony, rhythm, etc.

Having said this, it seems strange that these two contemporaneous musicologists never met and never referred to each other's works.

ՀԱՅԵՐԸ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ, ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՒ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՓՐԻԿԷՈՒՄ

ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ
artsvi@yahoo.com

Սոյն հաղորդման մէջ ի մի են բերուած պատմական եւ մշակութային ցաքուցրիւ փաստեր, որ վերաբերում են հիւսիսային, կենտրոնական եւ հարաւային Ափրիկէի երկրների հետ հայերի ունեցած առնչութիւններին: Մեր տեսադաշտից դուրս ենք թողել Եգիպտոսի, Եթովպիայի եւ Սուդանի հետ հայ ժողովրդի ունեցած կապերի եւ հայ համայնքի պատմութիւնը, որոնք բազմիցս ուսումնասիրուել եւ հետազօտուել են[1]:

Վաղ միջնադարում եւ յետագայ դարերում հայերը բազմապիսի առնչութիւններ են ունեցել Ափրիկէում բնակուող ժողովուրդների հետ՝ բիւզանդական պատերազմների, առեւտրի, ինչպէս նաեւ հայ գաղթօջախների հաստատման հետեւանքով: Մասնաւորապէս այլազան շփումներ են եղել Եթովպիայի եւ եթովպացիների (հաբէշների) հետ, որոնց հայերն անուանել են խափչիկ: Յետագայում այս անուանումը տարածուել է առհասարակ բոլոր սեւամորթների վրայ...

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՓՐԻԿԷ

Հայերի ներկայութիւնը հիւսիսային Ափրիկէում (ներկայիս Լիբիա, Ալժիր, Թունիս եւ Մարոկկո երկրները) շատ հին է: Այս թեմային անդրադարձել է Հրաչեայ Աճառեանը[2], որից էլ օգտուելով՝ նոյն տուեալները կրկնել է նաեւ պատմաբան Աշոտ Աբրահամեանը[3]:

Հիւսիսային Ափրիկէի հետ հայ ժողովրդի ունեցած վաղնջական աղերսը վերաբերում է մի հաւանաբար կիսաառասպելական պատմութեան, որն աւանդել է հռոմէացի պատմիչ Գայիոս Սալիւստիոս Կրիսպուսը *Եուգուրտական Պատերազմը* աշխատութեան մէջ: Այդ պատերազմը տեղի է ունեցել Ք. ա. 115-105ին, Հռոմի եւ Ափրիկէի տարածքում գտնուող Նումիդիա պետութեան միջեւ եւ յայտնի է Նումիդիայի թագաւոր Եուգուրտայի (կամ Եուգուրտէնի, մօտ 160-104 Ք.ա.) անունով: Հռոմէացի պատմիչի վկայութեամբ՝ հայերը մասնակցութիւն են ունեցել մաւր ժողովրդի կազմաւորման մէջ: Նկատի ունենալով, որ այդ հետաքրքիր հատուածը տեղ չի գտել *Հայ Ժողովրդի Պատմութեան Քրեստոմատիայի* առաջին հատորում (Երեւան, 1981), այն բերում ենք ամբողջութեամբ. «*Նախնի բնակիչք Ափրիկեայ էին գետուղացիք եւ լիբէացիք՝ ազգք վայրագ եւ բիրտ... Այլ ի մեռանել Հերակլի ի Սպանիա, որպէս ափրիկեցիքն պատմեն, անգօրաւար մնացեալ բանակ նորա՝ որ խմբեալ էր ի բազում ազգաց, վարատեալ ցրուեցաւ վասն բազմաց անկարգս իմն եւ խառն ի խուռն գայնր իշխանութեան թեկնածելոյ: Ի սոցանէ Մարք, Պարսք եւ Հայք նաւեալ յԱփրիկէ, գմերձակայ գաւառս մերոյ ծովուս կալան: Բայց Պարսք... տակաւ ամուսնութեամբ ազգախառնեալ ընդ գետուղացիս, եւ գի յաճախ ի խնդիր լաւագունից վայրաց աստանդականք չրջէին, վասն որոյ եւ նումիդացիս գինքեանցս կոչեցին: ...Իսկ Մարք եւ Հայք յաւելեալ ի լիբէացիս (գի սոքա ի ծովափնեայս անդ Ափրիկեայ թափառէին, եւ գետուղացիք առաւել հաս ընդ*

արեգակամբ ոչ հեռի 'ի հասարակածէն), վաղ ընդ փոյթ կանգնեցին քաղաքս... Զորոց տակաւ լիբէացիք աղաւաղեալ գանուանս 'ի խուժ բարբառ իւրեանց, զՄարս 'ի Մաւրիս փոխեցին»[4]:

Այսպիսով, հռոմէացի պատմիչի վկայութեամբ, Ք.ա. Առաջաւոր Ասիայի երկու հնագոյն ժողովուրդներ՝ հայերը եւ մարերը, սկսնաւորել են Օթելլոյի ցեղը...:

Ափրիկէի հիւսիս շատ անգամ հասել են հիմնականում Բիւզանդական Կայսրութեան եւ Եգիպտոսի հայազգի ռազմական գործիչներ: Այսպէս, երբ 545ին կայսրութեան նահանգ Հիւսիսային Ափրիկէն ապստամբել է Բիւզանդիայի Յուստինիանոս կայսեր դէմ՝ Գոնթարիսի ղեկավարութեամբ, կայսրը նրա դէմ ուղարկել է մի զօրք, որի մէջ եղել է հայկական գունդ՝ Արովբինդ Ծերակուտականի հրամանատարութեամբ, որի կազմում էին զօրավար Արտաւան (Արտաւազդ-Արտաբանէս) Արշակունին, նրա եղբայր Վահանը, Գրիգոր եղբօրորդին եւ ազգական Արտաշիրը: Գոնթարիսը, մաւրիտանացիների հետ միաւորուած, յաղթել է յոյներին: Արտաւանը եւ միւս հայերը առերես նրան յայտնել են իրենց զինակցութիւնը՝ շահելով Գոնթարիսի վստահութիւնը, որը հայկական գնդին ուղարկել է իր դէմ ապստամբած մաւրիտանացիներին ճնշելու: Պատերազմից յետոյ Կարթագէնում/Կարկեթոնում (Թունիս) խնջոյքի պահին Արտաւանը հայ զինուորների հետ ոչնչացրեց Գոնթարիսին եւ իր զինակիցներին՝ այդպիսով վերականգնելով Յուստինիանոսի տիրապետութիւնն Ափրիկէում: Կայսրը բարձր է գնահատել հայ զօրավարի ծառայութիւնները եւ նրան նշանակել է Լիբիայի ընդհանուր կառավարիչ՝ կոչելով Ափրիկէի դուքս: Այնուհետեւ շնորհազրկուելով՝ Արտաւանը «հիւպատոս» տիտղոսով դարձել է բանակի հրամանատար: 548-549ին բանտարկուել է, ապա Թրակիայի ընդհանուր սպարապետի կոչումով ուղարկուել է Սիցիլիա՝ գոթերի դէմ: 553ին եղել է Սիցիլիայի բիւզանդական զօրքերի հրամանատար եւ տաս տարի կառավարել է կղզին[5]: Նոյն Զ. դարում Ափրիկէի հիւսիսում ռազմական առաքելութեամբ գտնուել է Նարսէս Պատրիկը (յետագայում Իտալիայի փոխարքայ):

Հիւսիսային Ափրիկէում արաբական տիրապետութեան ժամանակաշրջանում հատուկենտ հայեր են այցելել նոյնպէս այդ երկրներ: Է. դարում Մարոկկոյում է յայտնուել եգիպտական ռազմական գործիչ Ռիւսթէմ բին Բեհրամը, որը, պատմաբան Արշակ Ալպոյաճեանի ենթադրութեամբ, եղել է հայ Ռոստոմ որդի Վահրամի անունով: Այս Ռիւսթէմի որդին կամ թոռը՝ Մէյմունը/Մէ'մունը, Թահերթում (Մարոկկո) հիմնել է անկախ թագաւորութիւն եւ իրեն խալիֆա է հռչակել: Նրա թագաւորութիւնը կործանուել է Ֆաթիմեան առաջին խալիֆայի՝ Մահդիի օրօք (908-933)[6]: ԺԲ. դարում Եգիպտոսի հայազգի ռազմական գործիչ Ղարաղուշ ալ Արմանին նուաճել է մի քանի քաղաքներ եւ նահանգներ ներկայիս Լիբիայի տարածքում, իսկ 1190ին Եգիպտոսը միաւորել է Այմոհադամների պետութեան հետ (Հիւսիսային Ափրիկէ) եւ նրանց կողմից ընդունուել Թունիսում: Այստեղ հարկ է նշել, որ Թունիսը Դունիս ձեւով երկու անգամ յիշատակուած ենք գտնում արդէն ԺԳ. դարի հայ մատենագրութեան մէջ, երկուսն էլ կապուած 1270ի Մարտին Ֆրանսիայի Լիւդովիկոս թագաւորի արշաւանքին դէպի Թունիս, որի նուաճումը չի իրականացել, քանի որ զօրքի մէջ հիւանդութիւն է ընկել եւ շատերը մահացել են: Հեթում Կոռիկոսցու *Ժամանակագրութիւն*ի մէջ (1296) յիշուած է, որ Լիւդովիկոսը (Լա-

ւիզ ըռէ տը Ֆրանս) ծրագրել է արշաւել Սիրիա. իր զօրքով նախ մեկնել է Սարդինիա կղզի, «*եւ անտի խլեցան եւ գնացին ի Դունիզն եւ առժամայն առին զԳարթաչճն*»[7]: Վերջինս նոյնինքն Կարթագէնն է, որ ֆրանսիացիները գրաւել են. «*Եւ յետ մահուան ըռէ տը Ֆրանսին եկն ըռէ Ջաոլն ի հեծելն եւ արար հաշտութիւն ընդ Դունիզին սուլտանն*»[8]: Նոյն ԺԳ. դարում ստեղծուած Հեթում Բ.ի *Ժամանակագրութիւն*ի մէջ կարդում ենք միեւնոյն տեղեկութիւնը. «*ՋԺԹ (1270) ոէ տէ Ֆրանցն պաշարեաց զԴունիզ եւ անդ մեռաւ*»[9]:

Ըստ լրագրային մի յօդուածի՝ ԺԷ. դարում հայեր են բնակուել Լիբիայում, որոնք 1665ին այնտեղ իրենց դրամով մի մատուռ են կառուցել: Գաղութը եղել է մեծ եւ ինքնաբաւ, սակայն յետագայում գրուել է[10]: Այս տեղեկութեան բուն աղբիւրը մեզ չյաջողուեց ճշտել: Լիբիան յիշուած է 1624ին գրչագրուած մի Աստուածաշունչ մատեանի յիշատակարանում՝ կապուած ժամանակի պատմական իրադարձութիւնների հետ. «*Ջի գկողմն արեւմտեան գկլիմն եւ գգերմասն Ասիական տիրեալ է հանդերձ Լիբիայիւ, գնահանգն Եգիպտական...*»[11]: Նոյն ԺԷ. դարում ստեղծուած մի հայերէն ժամանակագրութեան մէջ, որ վերագրւում է Անանուն Լիվոռնոցուն, յիշւում է նաեւ Մարոկկօն. «1577 - *թագաւորք Փորթուկալին բազում անգամ, բազում գօրօք յարեան ի վերայ Արաբացւոց, որ մերձ է առ նոսա եւ կոչին Մարօքօ եւ Ֆէսա եւ բազում պատերազմ պատերազմեցան, բայց ոչ ինչ օգտեցան եւ անկան անդրէն երեք թագաւորք եւ զօրք բազումք իւրեանց Երկիրն այն Ափրիկէ կոչի*»[12]:

Հայերի ներկայութեան յաջորդ փուլը վերաբերում է հիւսիսային Ափրիկէում օսմանեան տիրապետութեանը, երբ ԺԶ. դարում Օսմանեան Կայսրութիւնը գաւթել է այդ շրջանի երկրները: Հայաստանից այնքան հեռու գտնուող այս ժողովուրդները՝ լիբիացիները, ալժիրցիները եւ այլք, մի քանի դար շարունակ հայ ժողովրդի ստուար մի հատուածի հետ միասին ենթարկուել են միեւնոյն վարչակարգին: Օսմանեան շրջանում հիւսիսային Ափրիկէի երկրները՝ Տրիպոլին (Լիբիա), Թունիսը, Ալժիրը եւ Մարոկկօն յայտնի են եղել Թարապլուս, Թունուզ, Ջեզայիր եւ Մարոք անուններով: Ալժիրում հայութեան գոյութեան մի ապացոյցն է ճէզայիրլեան ամիրաների տոհմը, որ ծագել է Ալժիրում եւ ապա գաղթել Կոստանդնուպոլիս[13]:

Տիգրանակերտցի Աւետիք Բաղդասարեանը 1682-1704ին եղել է Եթովպիայում, Նուբիայում, Սուդանում, ներկայիս Չադ հանրապետութեան տարածքում, ապա Սահարա անապատով հասել է Ափրիկէի հիւսիսային շրջանները, մինչեւ Ջիբրալթարի նեղուց[14]: Թունիսի մասին նա գրել է հետեւեալը. «*...Ձերմակ ծովեզերն Թօնուզին օճախն է. Օսմանլիէն փաչա կու նստի, եւ է հնազանդ Օսմանլուին. Թօնուզի ազգն արապ են. եւ ունին լայն եւ արձակ օլքա (իւլքէ, վիճակ) գեղօրայիւք. եւ ունին աւի (ապստամբ, անհնազարտ) արապ. թէ չկամին՝ չեն հնազանդիր: Եւ Թօնուզն ծովուն վերայ գալէօն ունի (մեծ նաւ, galeon), կու ծեծվի Ֆռանկին հետն*»[15]:

Ալժիրում հաստատուած հայ կաթոլիկների մասին արդէն 1855ին ֆրանսիացի հեղինակ Վ. Ա. Բարբի Դիւ Բոկաժը գրել է 48 էջանոց գրքոյկ[16]:

1885ին Թունիսում բնակուել են 7 տուն հայ եւ 20 պանդուխտ՝ վաճառականներ եւ արհեստաւորներ: Մեծ մասը եղել է Սեբաստիայից, մնացեալը՝ Պոլսից, Իզմիրից, Ռոդոսթոյից, Կարինից եւ Վանից: Նախապէս նրանց կրօնական կարիքները հոգացել է տեղի յունական եկեղեցին, այնուհետեւ 1901ին

Պոլսի պատրիարքարանը նրանց է ուղարկել մի հայ քահանայ, կազմուել է նաեւ առանձին հոգաբարձութիւն[17]: Իսկ Լիբիայի հայկական համայնքները հիմնադրուել են 1888ին, Տրիպոլիում եւ Բենգազիում (որն օսմանեան կառավարութեան աքսորավայրերից էր), երբ Օսմանեան Կայսրութիւնը այդ շրջաններ է աքսորել հայերի, որոնք իրենց հետ տարել են իրենց ընտանիքները: Այդ դատապարտեալներից են եղել Սարեան, Ճիպանկուլեան, Մուրատ եւ այլ ազգանուններ կրող հայեր[18]:

ԺԹ. դարի վերջին-Ի. դարի սկզբին դիպուածով հիւսիսային Ափրիկէի երկրներում որոշ գործունէութիւն են ծաւալել մի քանի հայորդիներ: Լիբանանեան տպագրութեան հիմնադիր Ջորջ Մկրտը (Մկրեան), որը գործել է նաեւ Ֆրանսիայում եւ Հոլանդիայում, որոշ ժամանակ աշխատել է նաեւ Թունիսում, որտեղ իտալական քարոզչութեանը հակազդելու համար հրատարակել է արաբերէն թերթ[19]: Պոլսահայ երաժիշտ Գրիգոր Սինանեանը (1836-1914) գրել է Թունիսի քայլերգը, որը յետագայում տարածում է գտել որպէս «Իզմիրի Քայլերգ»:

Առաջին արուեստագէտը, որ արաբերէնով թատերախաղեր է ներկայացրել արաբախօս Ափրիկէում, եղել է Սուէյման Քըրտահի անունով մի քրիստոնեայ: 1968ին նրա մասին յօդուած է գրել սիրիացի մտաւորական Սալման Քաթայան: Ըստ նրա՝ Սուէյման Քըրտահին նախ գործել է Եգիպտոսում, ապա անցել է հարեւան երկրներ: Թունիսում ֆրանսիացիների հիմնադրած թատրոնում ներկայացուել են միայն ֆրանսիական թատերախաղեր եւ իտալական օպերաներ: Քըրտահին 1907ին ժամանել է Թունիս եւ սկսել արաբալեզու ներկայացումներ բեմադրել նախ երկրի երկրորդական քաղաքներում, ապա՝ մայրաքաղաքում, ինչպէս նաեւ Ալժիրում: Յատկապէս մեծ յաջողութիւն է ունեցել նրա «Սալահ Էդդին Էյուբի» ներկայացումը: Մարոկկոյի թագաւոր Բայը նրան արժանացրել է ոսկէ մեդալի: Քըրտահին մահացել է 1909ին: Միայն մահից յետոյ է յայտնի դարձել նրա քրիստոնեայ լինելը (քանի որ նրան բոլորը Շէյխ Սուէյման են անուանել), ուստիեւ թաղուել է քրիստոնէական գերեզմանատանը: Թունիսում շատերն են կարծել, որ նա հայ է: Վերոյիշեալ դոկտոր Քաթայան այդ կարծիքին չի եղել, սակայն յիշել է, որ Քըրտահիին հայ է համարել նաեւ Թունիսի Դերասանական Կաճառի Թատրոնի Պատմութեան դասախօս, բատերագէտ Մոհամմէդ Հաբիբը: Ենթադրում է, որ իսկական անունը եղել է Սողոմոն, թերեւս Քըրտահեան[20]:

Ի. դարի սկզբին հիւսիսային Ափրիկէի երկրներ է այցելել մէկ այլ հայ դերասան՝ Վահրամ Փափազեանը (1888-1968), որը Միլանի Գեղարուեստի Ակադեմիայում ուսանելու երկրորդ տարում, 1909ին, էրմետ Նովելլիի խմբի կազմում մասնակցել է հիւրախաղերի: Շեքսպիրեան վենետիկցի մաւրի անգուգական մեկնաբանը ստեղծագործական մեծ լիցք է ստացել Օթելլոյի հայրենիքում: Իր *Յետադարձ Հայեացք* յուշագրութեան մէջ նա գրել է հետեւեալը. «*Ուզում եմ մի քանի խօսքով ծանօթացնել մի այլ ժողովրդի հետ, որոնց մօտ այդ վեցամսեակին ապրեցի մի-երկու չաբաթ, այն է՝ մաւրերի հետ: ....Միանգամից ընկայ հազարաւոր օթելլօների մէջ: ....Սրանից աւելի լայն ուսումնասիրութեան դաշտ անհնարին էր գտնել: Եւ ես, ինչպէս ասում են, ո՛չ կերայ, ո՛չ խմեցի, այլ ամբողջ քսան օր, անընդհատ, գիշեր, թէ ցերեկ խառնուեցի նրանց: Մասնակցեցի նրանց նիստուկացին, կերուխումին, վշտերին եւ ուրախութիւններին: Ալժիր հասած օրս իսկ, ինձ տարեկից մի մաւրի՝ Իրն Հասանի հետ ծանօ-*

թացայ.... Նրա հետ եղայ նրանց տներում, մօտից տեսայ նրանց կենցաղը, եղայ աղօթատեղերում, տեսայ եւ ուսումնասիրեցի նրա հօրը... Միշտ հորիզոններ դիտող աչքերով, արքայի քայլուածքով այդ մարդուն՝ չատ դժերով է պարտական իմ Օթելլօն: Մալապատիկ նստեցի ժողովրդի հետ հասարակ սրճարաններում, համրիչը մատներիս ու ծխամորճը շրթներիս, առանց ծխող լինելու... Եւ երբ հեռացանք այդ երկրից, թէեւ Օթելլօն դեռեւս չէր ծնուել իմ մէջ, ճիշտ է, բայց նրա էութիւնը, նրա բնոյթը, մաւրը, այդ երջանիկ ափերից՝ ես տարայ իմ հոգու մէջ»[21]:

1913ին Ռաբաթից Կ.Պոլիս ուղարկուած մի մասնաւոր նամակում նշուել է, որ արեւելքցիներից (հաւանաբար նկատի ունի Մերձաւոր Արեւելքի ժողովուրդներից) այնտեղ կան մօտ 20 յոյն, 3-4 սիրիացի եւ երեք հայ: Վերջիններս բնակուել են Կասաբլանկայում: Ֆրանսիացիները Մարոկկոյում մեծ ճակատամարտ են մղել Զայիան ցեղի դէմ, Միւէյայի մօտ: Զօրագնդի մէջ եղել է նաեւ մի աղանացի հայ, որը փրկուել է Կիլիկիայի կոտորածից եւ Ֆրանսիայում զինուորագրուել է օտար լեգէոնում: Զօրավարը նրան հրամայել է պաշտպանել միակ աղբիւրը, իսկ մարոկկօցիները ցանկացել են ամէն կերպ խլել այդ աղբիւրը, ուստիեւ անխնայ գնդակոծել են հայ զինուորին: Վերջինս իր կեանքի գնով պաշտպանել է աղբիւրը եւ գոհուել՝ եօթ գնդակից զարկուած: Ֆրանսիացիները պատուով յուղարկաւորել են նրան, իսկ զօրավար Դալբիէն յայտարարել է, որ եթէ մարոկկօցիները պարտուել են այդ օրը, եղել է հայ զինուորի քաջութեան շնորհիւ[22]:

Թուրքիայից աքսորուած ամասիացի Խաչիկ Յովհաննէս Պուլտուգեանը (ծն. 1906) եւ աղանացի Յարութիւն Մալեանը (ծն. 1904) առաջին Աշխարհամարտից յետոյ յայտնուել են Մարոկկոյի Սեֆրու քաղաքում: 1920ի Մայիսի 18ին նամակով դիմել են Փարիզի Հայ Ազգային Պատուիրակութեանը՝ խնդրելով իրենց անձնագրեր տալ: Մայիսի 25ին նոյն պատուիրակութեանը գրած նամակով նրանք տեղեկացրել են, որ Սեֆրուի «զինուորական յարկում» գտնւում են վեց հայեր, որոնք կամ որբ են, կամ անչափահաս՝ զինուորութեան համար: Դիմել են՝ նրանց եւս անձնագիր տալու եւ հայրենիք վերադառնալու խնդրանքով[23]: Պօղոս Նուպար փաշային են դիմել նաեւ Ալժիրում ապաստանած Ոսկան Միքայէլեանը (Կոնստանտինայից) եւ Թորոս Դիլանեանը (ծն. 1900) Սիղի-Բէլ-Աբբէսից[24]:

Մարոկկոյում 1907ին Ատլանտեան Ովկիանոսի ափին հիմնուած Կասաբլանկա քաղաքում արդէն 1910ականներից բաւական հայեր են բնակուել, բոլորն էլ բարեկեցիկ կեանքով ապրող: Հայ շինարարներ մասնակցել են քաղաքի մի քանի շէնքերի կառուցմանը: Զբաղուել են սուրճի եւ նպարեղէնի առեւտրով: Դրիգորիսեան եւ Չաքրեան ազգանունով հայերը ունեցել են գրավաճառանոցներ: Իսկ Ֆրանսիացիների բարեկարգած Մազագան քաղաքում 1922ին բնակուել է սամսունցի մի գաղթական՝ Տօնիկեան ազգանունով[25]:

1920ականներին պոլսահայ գործիչները հարց են բարձրացրել հայ գաղթականների մի մասին բնակեցնել Մարոկկո՝ պատճառաբանելով այնտեղ տիրող կրօնական ազատութիւնը[26]:

1922ի Հոկտեմբերի 18ին Թունիսի Ֆերիվիլ քաղաքից Իզմիրի Ռամկավար Ազատական Կուսակցութեան ակումբի երբեմնի ատենապետ Նշան Վարդանեանը հայ ազգային գործիչ Գաբրիէլ Նորատունկեանին գրած նամակում վկայել է, որ Իզմիրի հրկիզումից յետոյ շոգենաւով Մարոկկո են ժա-

մաճել մօտ 200 հայեր, որոնք իրենց քաղաքը լքել են Սեպտեմբերի 20ին: Նրանց տարաբաշխել են երեք զինուորական կայանների մէջ, որոնցից երկուսում կեանքը տանելի է եղել, մէկում՝ գրեթէ զինուորական[27]: Մարոկկոյում ապաստանած այս հայերից Արմենակ Գարանֆիլեանը 1922ի Հոկտեմբերի 28ին գրած նամակում վկայել է, որ Սիղի-Աբդալլահ բնակավայրում մնացել են 189 հայեր. նամակում գրել է անունները[28]: Այս հայերի մեծ մասը նաւով մեկնել է Մարսէյ, եւ բարեբախտաբար ոչ ոք թշուառ վիճակում չի եղել:

1934ին Մարոկկոյից Փարիզի *Ապագայ*ին ուղարկուած թղթակցութեան մէջ նշուել է, որ Կասաբլանկա քաղաքում բնակւում է շուրջ 50 հայ, ընտանիքները քիչ են եւ հայերի մեծ մասն ամուսնացած է օտարուհիների հետ: Ընդհանրապէս իզմիրցի են, քեմախցի, պոլսեցի, մարզուանցի եւ սամսունցի: Հայ ընտանիքների զաւակները ստիպուած յաճախում են օտար վարժարաններ, միայն մի ընտանիք կարողացել է զաւակին ուսման ուղարկել Սեւրի Մխիթարեան վարժարան: Հայերը սեփական գործի տէր են, մեծ մասամբ՝ սուրճի եւ հին հագուստեղէնի վաճառականներ: Կայ մէկ բժիշկ, մէկ ատամնաբոյժ եւ ամենատարբեր զբաղմունքների տէր անձինք (մանուֆակտուրայի խանութի տէր, գարաժիստ, սափրիչ, մածնագործ, յանձնակատար): Ոչ մի բանուոր չկայ: Չաքրեան ազգանունով մի հայ գրախանութ ունի քաղաքի ամենաբանուկ փողոցում: Գործում է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան մասնաճիւղը, որ կազմուել է Էսմերեանի այցելութիւնից յետոյ: Տեղացիները շատ համակրում են հայերին եւ բարեկամական յարաբերութիւնների մէջ են նրանց հետ[29]:

Արդէն երկու անգամ յիշուած գրավաճառ Աւետիս Չաքրեանը եղել է ազգային բարերար, Մարոկկոյի շրջանի ազգային երեսփոխան եւ հայ համայնքի վարչութեան ատենապետ: Նա վախճանուել է 1941ին, Կասաբլանկայում՝ իր հարստութեան մեծ մասը կտակելով Բէյրութի Հայ Ճեմարանին[30]:

Առաջին Համաշխարհային Պատերազմի հետեւանքով օսմանեան հայ գաղթականների խմբեր հիւսիսային Ափրիկէի երկրներ են հասել ծովային ճանապարհով: Մարսէյի *Արմենիա* թերթը վկայել է, որ Ալժիրում յայտնուած հայերին տեղական իշխանութիւնները նեղութիւններ են պատճառել՝ որպէս բրքահպատակների: Սակայն յետագայում ալժիրեան կառավարութիւնը հայերի մասին աւելի մանրամասն եւ ստոյգ տեղեկութիւններ ստացած լինելով՝ սկսել է համակրութեամբ նայել հայերին եւ դիւրութիւններ տալ տարբեր գործերում: Այդ թերթին ուղարկած թղթակցութեան մէջ Ֆիլիպվիլի բնակիչներ Միքայէլեան եղբայրները տեղեկացրել են, որ ֆրանսիացիները համակրում են տեղացի հայերին եւ նոյնպէս փափագում են Հայաստանի ազատագրումը[31]: Նոյն պարբերականին 1918ին ուղարկուած մէկ այլ թղթակցութիւն տեղեկացրել է, որ Օրանի եւ շրջակայքի հայերը կատարել են իրենց հայրենակցի՝ Սիղի-Բէլ-Աբբէսի բնակիչ կեսարացի Յարութիւն Թորոսեանի յուղարկաւորութիւնը ֆրանսիացի քահանայով[32]:

1929ին հայ մամուլը տեղեկացրել է, որ Ալժիրի Բլիդա քաղաքում բնակւում են 15 հայ ընտանիք եւ երիտասարդ՝ ընդհանուր 45-50 հոգի: Քանի մօտ երկսեռ մանուկներ յաճախում են ֆրանսիական վարժարաններ: Ազգային կազմակերպութիւններ չկան, ոչ իսկ յոյս, որ կը լինեն այդպիսիք: Թորոսեան անունով մի հայի պատկանել է նպարեղէնի մի մեծ խանութ: Մի հայ տնօրինել է մետաքսեղէնի գործարան, երկուսը՝ հագուստի խանութ: Երեք հայ

զբաղւում են ոսկերչութեամբ, երկուսը՝ կօշկակարութեամբ, չորսը՝ շրջում լուսանկարչութեամբ, մի քանիսը՝ շրջում մանրավաճառութեամբ[33]: Որոշ ժամանակ Ալժիրում գործել է Հայ Օգնութեան Կոմիտէի մասնաճիւղը[34]:

1931ին ալժիրահայութեան թիւն ունեցել է հետեւեալ պատկերը.- Ալժէ՝ 20, Բլիդա՝ 80, Պորճպու Առեռիճ՝ 15, Սեքիֆ՝ 25, Սենք Առնօ՝ 3, Գուրապս՝ 3, Կոնստանտինա՝ 15, Ֆիլիպվիլ՝ 2, Պոն՝ 8, Սուդարաս՝ 5: Հայերը բնակուել են ծովափնեայ քաղաքներում: Համայնքի անդամները եղել են առեւտրականներ, բոլորն էլ բարեկեցիկ վիճակում: Եկեղեցի եւ դպրոց չեն ունեցել. մանուկներին մկրտել են ֆրանսիական եկեղեցում, երեխաները յաճախել են ֆրանսիական դպրոց: Շատ հայեր ընդունել են ֆրանսիական քաղաքացիութիւն[35]:

Ալժիրում ծնուած հայերից կարող ենք յիշել ֆրանսիացի կինօդերասան Իւ Վենսանին, ծնուած 1921ին, Ալժէում (հայրը՝ դամասկոսցի հայորդի Ալֆրէդ Վենսանը ֆրանսուհի կնոջ հետ Ալժիր էր տեղափոխուել՝ խուսափելով Ֆրանսիայում տիրող ազգայնական տրամադրութիւններից[36]), ինչպէս նաեւ Ալժիր քաղաքում 1923ին ծնուած պատմաբան, Պորտուգալիայի եւ Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի անդամ Ռոբերտօ Կիլպենկեանին:

Նոյն 1931ին Բլիդայից հայ մամուլին ուղարկուած «Անշէն Որբուկ» ստորագրութեամբ մէկ այլ թղթակցութեամբ հաղորդուել է թէ[37] Ալժէում բնակւում են մի քանի ընտանիք եւ մի քանի երիտասարդ, որոնք զբաղւում են սուրճի վաճառքով եւ այլ առեւտրական գործերով: Կայ ներկայացուցչի մի ճաշարան: Ազգային կապն այնքան էլ սերտ չէ, բոլորը մտածում են միայն ապրուստ հայթայթելու մասին, մոռացած կամ մոռացումի տուած ամէն ինչ: Ալժէից 60 կիլոմետր հեռու գտնուող Բլիդայում ամենամեծ հայկական համայնքն է: Կան 15 ընտանիք եւ նոյնքան էլ ամուրի երիտասարդ: Քաղաքի հնագոյն հայ բնակիչը Գ. Թորոսեանն է, որ հասել է որոշակի դիրքի եւ վայելում է օտարազգիների յարգանքը: Բլիդայի միւս յայտնի հայորդին Ղ. Ալակոզեանն է, որն ութ տարի է տնօրինում է մի հիւսուածեղէնի գործարան: Քաղաքում կան նաեւ հայ ոսկերիչներ, հանդերձեղէնի վաճառողներ եւ կօշկակարներ: Հայ ամուրիների մի մասը զբաղուել է լուսանկարչութեամբ՝ շրջելով գանազան վայրեր: Անգամ այդ փոքրիկ կղզիացած հայագաղութում բոյն է դրել ազգային անհամերաշխութիւնը, ինչի մասին էլ ցաւով արձանագրում է Անշէն Որբուկը:

1935ին Մարոկկօ, Ալժիր, Լիբիա եւ Թունիս է այցելել Մարսէյի Ազգային Վարչութեան հոգեւոր հովիւ Եղիշէ քահանայ Մխիթարեանը՝ հանգանակութեան համար: Նա իր տպաւորութիւն-զեկոյցն ամփոփել է Փարիզի *Յառաջ* օրաթերթում[38]: Ըստ Մխիթարեանի՝ Ալժիրի հայութեան կենտրոնը եղել է Ալժէ Բլիդա քաղաքը, որտեղ բնակուել են 37 ընտանիք, ունեցել երեք թաղային խորհուրդ: Բուն Ալժէում ապրել է 14 հայ ընտանիք՝ երկու ապահովագրական պաշտօնեայ, երկու դերձակ, չորս լուսանկարիչ, մէկ առեւտրական, մէկ պաշտօնեայ, երկու աղիքի գործարանի տէր: Նրանցից հանգանակուել է 490 ֆրանկ: Բլիդայում բնակուել է 23 հայ ընտանիք՝ մի քանի առեւտրական, 5 ոսկերիչ, 2 ճաշարանատէր, մէկ սափրիչ, երեք հին հագուստի վաճառական: Ազգային կեանքի եռանդուն գործիչ Քերովբէ Թորոսեանն ունեցել է առեւտրական մեծ տուն: Հայերն ունեցել են վարչական միութիւն: Հանգանակել են 1330 ֆրանկ: Պորճու Առեռիջ քաղաքում բնակուել է ութ հայ ընտանիք, սեփական գործի տէրեր, վեց առեւտրական տուն, երկու հին հագուստի վաճառական եւ մէկ փաստաբան: Վարչական մարմին է ընտ-

րուել, կենտրոնը՝ Պորճ-Սեթիֆում: Հանգանակել են 1860 ֆրանկ: Կոնստանտինա քաղաքի հայերից հանգանակուել է 730, Ֆիլիպվիլից՝ 1825, Բոնից՝ 200, Սուք Ահրասից՝ 530 ֆրանկ: Հայերը ցրուած ապրել են նաեւ Միղի-Բէլ-Աբբէս, Օրեանվիլ, Աֆրովիլ, Սեթիֆ եւ Սաո Առնօ բնակավայրերում[39]:

Թունիսում 1936ին բնակուել է 17 ընտանիք, շատերը՝ սեփական գործի տէր: Ընտրել են վարչական մարմին եւ հանգանակութիւն կատարել: Թունիսի հայերը նոյնպէս կապուած են եղել Ֆրանսիայի թեմին: Յանկացել են մշտական քահանայ ունենալ, այդ հարցով դիմել Մարսէյի Ազգային Կենտրոնական Վարչութեանը[40]:

Ինչ վերաբերում է Մարոկկոյին, ապա այս երկրի հայերի մասին Եղիշէ քահանան յայտնել է թէ Կասաբլանկայում բնակւում է 23 հայ ընտանիք՝ առեւտրականներ եւ տարբեր զբաղմունքների տէր անձինք (երկու սափրիչ, երկու բժիշկ, մէկ ատամնաբոյժ, մէկ մեքենագէտ): Գործում է մէկ եւրոպական տիպի գորգավաճառատուն: Սեպտեմբերի 24ին գումարել են ընդհանուր ժողով, որի ընթացքում մարոկկահայերը հանգանակել են 2020 ֆրանկ: Ռաբաթում բնակուել է 9 հայ տուն՝ վաճառականներ, խանութպաններ եւ արհեստաւորներ, որոնցից հանգանակուել է 1050 ֆրանկ: Մազագան քաղաքում բնակուել է չորս ընտանիք եւ մէկ ամուրի: Նրանցից էդիրնէցի Յ. Սարկաւագեանն ունեցել է երկաթի եւ աղիւսի մի մեծ գործարան: Այս քաղաքի հայերը հանգանակութեանը մասնակցել են 300 ֆրանկով: Սաֆիում ապրել է երկու կեսարացի ընտանիք, որոնք նուիրել են 300 ֆրանկ, իսկ Մոքադորում բնակուող մէկ հայ ընտանիքը՝ 100 ֆրանկ: Մարակէշի հայ ընտանիքների թիւը եղել է չորս, երկուսը՝ դարաբաղցի, մէկը՝ իգմիրցի եւ միւսը՝ բաբերդցի: Նրանք Եղիշէ քահանային նուիրել են 170 ֆրանկ: Երկու հայ ընտանիք է ապրել Ֆէսում, որոնցից ձեռք է բերուել 300 ֆրանկ, մէկ ընտանիք եւ երկու ամուրի՝ Մեքնէսում, որոնք էլ նուիրաբերել են 650 ֆրանկ: Այդպիսով, Մարոկկոյի հայերից ֆրանսահայ հոգեւորականը ժողովել է ընդհանուր 4890 ֆրանկ: Նա կազմել է մարոկկահայ համայնք, որի կենտրոնը դարձել է Կասաբլանկան: Նրանք ընտրել են իրենց պատգամաւորին Մարսէյից, որը պէտք է կապ պահպաներ Ազգային Վարչութեան հետ[41]:

Երկրորդ Աշխարհամարտի տարիներին հիւսիսային Ափրիկէում տեղակայուած տարբեր երկրների զօրքերի կազմում եղել են մի շարք հայորդիներ: Այսպէս, Բուենոս Այրէսում հաստատուած ծնունդով զէյթունցի Գէորգ Սեթեանը 1941ին անգլիական բանակի կազմում մասնակցել է ռազմական գործողութիւնների Լիբիայում:

Երկրորդ Աշխարհամարտի տարիներին հիւսիսային Ափրիկէի հայ բնակիչների վերաբերեալ տեղեկութիւններ չկան, դրանք ի յայտ են եկել 1940ականների վերջին, որից կարելի է եզրակացնել, որ թուային պատկերը գրեթէ մնացել է նոյնը: Այսպէս, 1949ին Թունիս քաղաքում հաշուուել է 15 հայ ընտանիք, ընդ որում՝ երկու բժիշկ, երկու ատամնաբոյժ, մի քանի պաշտօնեայ, մնացածը զբաղուել են առեւտրով: Մի քանի հայ ընտանիքներ էլ բնակուել են Թունիսի ներքին գաւառներում: Թունիսահայերն ապրել են համերաշխ, սերտ ընտանեկան յարաբերութիւններով եւ վառ ազգային զգացումներով[42]: Նոյն 1949ի Յունուարին Կասաբլանկա է այցելել հայր Մեսրոպ Աւետիսեանը: Նա տեղի յունական եկեղեցում պատարագ է մատուցել, որից

յետոյ նրա նախագահութեամբ կայացել է գաղութահայ ժողով: Ընտրուել է նոր վարչութիւն հետեւեալ կազմով՝ կոմսուհի Արաքսիա Պատրիմոնիօ (պատուաւոր նախագահ), Ժան Միրան, Թ. Արթինեան, Պ. Վարժապետեան, Մ. Շաքարեան, Ե. Գարապետիքեան եւ Ա. Սիրմէեան (անդամներ), Տիկ. Պալթայեան եւ Մելիքով (խորհրդակցական ձայնով): Համայնքը 15 տարի հայ քահանայ չի տեսել, 12 մկրտութիւն է կատարել[43]: Ի դէպ, կոմսուհի Պատրիմոնիօն (ծն. Էսմերեան) եղել է Մարոկկոյում Ֆրանսիական Կարմիր Խաչի նախագահը:

1951ին սոցիալիստական հռչակուած Հարաւսլաւիայից Մարոկկօ է տեղափոխուել ժողովրդական վրիժառու Սողոմոն Թեհլերեանը (1896-1960)՝ կնոջ եւ որդիների հետ: Նրանք հաստատուել եւ մինչեւ 1957ը բնակուել են Կասաբլանկայում: 1952ի մի օր, տեղի փոքրաթիւ համայնքը պատիւ է ունեցել ճանաչել Թեհլերեանին: Հեռու մնալով հերոսի հովերից, սակայն տեղի տալով Կասաբլանկայի հայութեան թախանձանքներին՝ Թեհլերեանն ընդամէնը մէկ անգամ է հրապարակայնօրէն պատմել Թալէաթ փաշայի սպանութեան եւ Բեռլինում իր դատավարութեան մասին[44]:

Ի դէպ, նահատակ բանաստեղծ Դանիէլ Վարուժանի այրին՝ Արաքսի Վարուժանը (1892-1967), երկրորդ անգամ ամուսնացել է Ժիրայր Աբիկեանի հետ եւ տասնամեակներ շարունակ բնակուել Կասաբլանկայում[45]: Տիկին Արաքսիի մահից յետոյ Վարուժանի արխիւի եւ գրադարանի մի մասը ձեռք բերելու նպատակով Երեւանի Գրականութեան եւ Արուեստի Թանգարանի ֆոնդապահ Գոհար Ազնաւուրեանը 1969ին մեկնել է Մարոկկօ եւ ձեռք բերել վարուժանեան բանկագին մասունքներ:

Կասաբլանկայի հայ համայնքի ակտիւ գործիչներից է եղել ծնունդով երզնկացի Գրիգոր Յարութիւնեանը, որը 1914ին հաստատուել է Ալժիրում, ապա՝ Մարոկկոյում: Նա զբաղուել է հայ գաղթականների խնդիրներով, կրթական եւ կրօնական հարցերով: 1969ին նամակ է գրել Երեւան՝ Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէին, ցանկութիւն յայտնել հայրենադարձուել[46]:

1933-1969ին Կասաբլանկայում է բնակուել պոլսեցի արուեստագէտ Վահան Մարգարեանը: Նա կերտել է թանկարժէք քարերից եւ ջնարակից աշխատանքներ, հիմնականում՝ աստուածաշնչեան մոտիւներով («Քրիստոսի Կեանքը», «Դրախտ»): Յուշահանդէսներ է ունեցել 1962-1964ին: Մարգարեանը 1969ին վերադարձել է Ստամբուլ[47]:

Ֆրանսահայ իրաւաբան եւ գրող Վահան Համբարձումեանը 1939ին մեկնել է Ալժիր՝ պաշտպանելու իր մի հայրենակցի շահերը: Պատերազմի պատճառով նա մնացել է Ալժիրում, որտեղ ամուսնացել է ֆրանսուհու հետ, ունեցել մի դուստր՝ Միրէյ Համբարձումեան: Խաղաղութեան հաստատումից յետոյ նա մեկնել է Մարոկկօ՝ Կասաբլանկա, որտեղ ստեղծել է իր իրաւաբանական կենտրոնը: Այստեղ էլ Համբարձումեանը վախճանուել է 1964ին: Թաղուած է Կասաբլանկայի ԷլՀաճք գերեզմանատունը[48]:

1956ին *Արմենիայի* թղթակիցը տեղեկացրել է թէ Մարոկկոյի հայ գաղութը, հիմնադրուած 1920ին, 1956ին ունեցել է շուրջ 80 հայ ընտանիք, մօտ 400 անձ՝ առեւտրականներ եւ արհեստաւորներ, որոնք ջերմ յարաբերութիւններ ունեն տեղացիների հետ: Ռաբաթում ապրել է 15 հայ ընտանիք: Նոյն 1956ին Կասաբլանկայում գումարուել է մարոկկահայերի տարեկան ընդհանուր ժո-

ղովը: Հայեր կան Մազագան քաղաքում (7 ընտանիք), Մարակէշ՝ 6, Մեքնէս՝ 6, Սաֆի՝ 4, Ֆէս՝ 4 եւ Մոկատար՝ 2 ընտանիք: Նոյն թղթակիցը նաեւ նշել է, որ հայերն Ալժիրում եւ Թունիսում հաստատուել են 1920ից յետոյ. 1956ին Ալժիրում ապրել է շուրջ 120 հայ ընտանիք (մօտ 500 հոգի): Բոլորը եղել են բարեկեցիկ վիճակում. մեծ մասամբ առեւտրականներ: Ալժէ մայրաքաղաքում ապրել է 20 ընտանիք, Բլիդայում 25 (5ը՝ ոսկերիչ), Պորճպու Առեռիջում՝ 10 (բոլորն առեւտրականներ), Կոնստանտինում՝ 8, Ֆիլիպվիլում՝ 5, Սուգաիրասում՝ 8, Աֆրովիլում՝ 5, Սիդի-Բէլ-Աբէսում՝ 4 եւ Օռլեանվիլում՝ 5: Ողջ Թունիսում բնակուել է 25 ընտանիք՝ շուրջ 80 հոգի[49]:

1959ի տուեալով Կասաբլանկայի հայերի թիւը եղել է մօտ հարիւր, մեծ մասամբ առեւտրականներ, որոնց թւում յիշւում են Ազատ Սուրմէնեանը (Կասաբլանկայում հաստատուած առաջին հայերից), Հայկազ Ասատուրեանը, Պերճ Վարժապետեանը, Յաւակ Արթինեանը, Ժիրայր Սուրմէնեանը, Վ. Թորոսեանը եւ այլք: Ընտանիքով այստեղ է հաստատուել նաեւ նկարչուհի Վաւա Սարգիս Խաչատուրեանի եղբայրը՝ Կարօն: Քանի որ Մարոկկոյում գոյութիւն չի ունեցել հպատակութեան մասին օրէնք, հայերը մարոկկոցի չեն համարուել[50]:

1950ին Ալժիրի բոնցքամարտի ախոյեան է հռչակուել Էդուարդ Աճեմեանը, որն առաջնութիւն է շահել Ալժիրի արեւմտեան շրջանի մրցումներում՝ մարզիկներ Դամիայի եւ Թահարայի դէմ տարած յաղթանակներով: Կէս միլիոնից աւելի արաբներ հետեւել են այդ մենամարտին[51]: 1951ին Կասաբլանկայում հայ հօր եւ ֆրանսուհի մօր ընտանիքում է ծնուել ներկայումս Ֆրանսիայում ճանաչուած քաղաքական գործիչ Ռոժէ Կարուչին, որը վճռակամօրէն դէմ է հանդէս գալիս Եւրոպայի Խորհրդին Թուրքիայի անդամակցութեանը: 1982ին Ալժիրի Բաբ էլ Ուէդ բնակավայրում ալժիրցի հօր եւ հայ մօր ընտանիքում է ծնուել այսօր Ֆրանսիայում ճանաչուած հիփ-հոփ եւ սթրիփդանս պարերի յայտնի կատարող Սոֆիա Բուտելլան[52]:

Տարբեր երկրների հայ մտաւորականներ եւ արուեստագէտներ զանազան առիթներով ապրել եւ աշխատել են հիւսիսային Ափրիկէի երկրներում՝ որոշակի հետք թողնելով այնտեղ: Երկու ֆրանսահայ դերասաններ՝ Հիւգ դը Բագրատիդը (Սվաճեան) եւ Մաքս Մաքսուտեանը, 1920ականներին Հիւսիսային Ափրիկէում նկարահանուել են ֆրանսիական արտադրութեան ֆիլմերում եւ երկուսի հետ էլ արտառոց դէպքեր են կատարուել[53]: Հաւանաբար 1930ին Ալժիրում եւ Թունիսում համերգներով հանդէս է եկել քամանչահար Ռուբէն Գաբախանեանը (1892-1983)[54]: 1930ին ֆրանսաբնակ քարտէզագիր Զատիկ Խանզատեանը Ֆրանսիայի կառավարութեան յանձնարարութեամբ եւ ֆրանսիական զօրքերի կողմից Ալժիրի գրաւման հարիւրամեակի հանդիսութիւնների առթիւ կազմել է Ալժիրի շքեղ ատլասը: Հատորը պարունակում է Ալժիրի աշխարհագրութեանը, ազգագրութեանը եւ պատմութեանը վերաբերող էական տեղեկութիւններ, Ալժիրի բոլոր քարտէզների հաւաքածուն (հնագոյններից մինչեւ նորագոյնները): Ատլասը գեղազարդուած է արաբական ոճի զարդանկարներով, որ պատկերել են Խանզատեանին գործակցող հայ գծագրիչները: Ֆրանսիական Ակադեմիան այդ հատորն արժանացրել է մրցանակի[55]:

1949ին Մարոկկոյում նկարահանուած «Մարակէշի Պարուհին» կինօնկարի գլխաւոր՝ բերբէր պարուհու դերը կինօբեմադրիչ Լէոն Մաշօն վստահել

է հայազգի գեղեցկատես պարուհի Սիրէն Աճեմովային (ծն. 1928, Փարիզ)[56]: Նոյն ֆիլմում հանդէս է եկել նաեւ հայազգի դերասան Իւ Վենսանը՝ արաբի դերով[57]: Ալժիրի եւ Թունիսի թատրոններում է աշխատել նաեւ ֆրանսիական թատերական բեմադրիչ հայազգի Էդմոն Թամիզը (Թահմիզճեան)[58]: Ֆրանսահայ երգչուհի-պարուհի Ամի Անահիտը մանկուց բնակուել է Ալժէում, որտեղ հետեւել է պարի դասերի, յետագայում այստեղ ամուսնացել երգահան Արման Կանկորայի հետ: 1950ականների վերջին Մարոկկոյում մեծ ժողովրդականութիւն են վայելել Սայեաթ-Նովայի երգերը՝ ֆրանսահայ երգչուհի Աիդա Ազնաւուրի (ծն. 1923) կատարմամբ, որոնք տարածուել են մեծ համեմատութեամբ[59]: Ֆրանսահայ գրող եւ պատմաբան Ժերար Շալեանը (ծն. 1934) որոշ ժամանակ ապրել է Ալժիրում, այստեղ խմբագրել է *Révolution Africaine* թերթը, հեղինակել է պատմագիտական, տնտեսագիտական աշխատութիւններ, որոնցից *Համայնավարական խնդիրներն Ալժիրում* ֆրանսերէն ուսումնասիրութիւնը (1964) թարգմանուել է նաեւ արաբերէն:

Աշխատանքի բերումով հիւսիսային Ափրիկէի պետութիւններին առնչուել են նաեւ այլ երկրների հայ մտաւորականներ: Տակաւին Ի. դարի սկզբին Ալժիրում կառուցուել են չէնքեր ֆրանսաբնակ ճարտարապետ Լեւոն Նաֆիլեանի (1877-1937) նախագծերով: 1950ականներին մի քանի տարի Մարոկկոյի Տանճէ քաղաքում է աշխատել իտալաբնակ հայ ճարտարապետ Արմէն Զարեանը (1914-1994), որը յետագայում հայրենադարձուել է: Տանճէում մի քանի չէնք է կառուցուել նրա նախագծով: Այստեղ է ծնուել նրա դուստրը՝ ներկայումս կանադաբնակ բանաստեղծուհի Սիրվարդ Զարեանը: Մի քանի տարի Մարոկկոյի ազգային ռադիո-հեռատեսիլի թղթակից է եղել Լեւոն Քեշիշեանը (1917-1984), որը մարոկկահայութեան վերաբերեալ թղթակցութիւններով աշխատակցել է հայ մամուլին: Նա նաեւ նկարահանել է «Թունիսը ՄԱԿում» 20 րոպէանոց արաբերէն եւ ֆրանսերէն ֆիլմը, որը ներկայացնում է Թունիսի գործունէութիւնը ՄԱԿում, նախագահ Պուրկիպայի այցելութիւնը եւ ֆրանսերէն ճառը ՄԱԿում, թունիսցի այլ դեկավարների աշխատանքային գործունէութիւնը: Այս փաստագրութիւնը ՄԱԿի Գլխաւոր Քարտուղար Ու Տանի՝ Թունիս կատարած այցելութեան առթիւ ցուցադրուել է Թունիսի 24 կինօթատրոններում[60]:

Ալժիրում եւ Թունիսում շատ հայ մասնագէտներ են աշխատել նաեւ Խորհրդային Միութիւնից: 1968-1977ին Ալժիրում է աշխատել խորհրդահայ երկրաբան Սերգէյ Դանիլեանցը, որը եղել է երկրախուզական արշաւախմբի դեկավար: Ալժիրի Բատնա քաղաքում 1970ին ծնուել է նրա դուստրը՝ մոսկուացի բանաստեղծուհի եւ շարժանկարչուհի Տատիանա Դանիլեանցը[61]: 1964-1967ին երեւանցի պարող Վարդգէս Ռաշիդեանը Մարոկկոյում կազմակերպել է ժողովրդական պարի խումբ: 1978ին Մարոկկոյի ԽՍՀՄ դեսպան է եղել Եւգենի Ներսէսովը (ծն. 1921, Մոսկուա): Լիբիայում որոշ ժամանակ ԽՍՀՄ դեսպան է եղել Պօղոս Ակոպովը (Յակոբեան, ծն. 1926):

1955ի տուեալով՝ հիւսիսային Ափրիկէի մէկ այլ երկրում՝ Լիբիայում, բնակուել է 70-80 հայ ընտանիք, տարբեր վայրերից գաղթած: Նրանք չեն ունեցել ո՛չ եկեղեցի, ո՛չ դպրոց, ոչ էլ որեւէ ազգային կեանք: Հայերի երեխաները յաճախել են օտար վարժարաններ[62]: 1964ին նախկին լիբիաբնակ, ծնունդով սեբաստացի Պօղոս Ալպահեանը Լոս Անջելըսի հայ մամուլին յայտնել է, որ Լիբիայի մայրաքաղաք Տրիպոլիում բնակւում է 12 հայ ընտանիք՝ մօտա-

տրապէս 60 հոգի, որոնք զբաղւում են առեւտրով եւ արհեստներով: Կան հայ պաշտօնեաներ, որոնք աշխատում են նաւթային ընկերութիւնում, սակայն նրանք երկրի մնայուն բնակիչներ չեն: Ազգային կեանք գոյութիւն չունի, հայ ընտանիքների գաւակներն իտալերէն են խօսում, պատկանում են յունական եկեղեցուն[63]: 1967ին Լիբիայի Պարի Պետական Համոյթին համագործակցել է լիբանանահայ պարարուեստ Սարգիս Բասքալեանը:

Լիբիահայերից Յակոբ Նշանի Օղաբաշեան Վիզիանօն (ծն. 1904ին, զբաղմունքով՝ լուսանկարիչ) 1969ին գաղթել է Հայաստան, կնոջ՝ իտալուհի Կարմելլա Պուտչինա Ջովանի Օղաբաշեան-Վիզիանոյի հետ (ծն. 1919, մասնագիտութեամբ՝ հաշուապահ): Նրանք բնակուել են նախ Աբովեանում, ապա՝ Երեւանի Նորքի 4րդ զանգուածում[64]:

Հիւսիսային Ափրիկէում բնակուող հայերից ոմանք ըստ երեւոյթին ձգտել են կապ պահպանել Հայաստանի եւ միւս գաղթավայրերի հետ: Ալժիրի բնակիչ Արշակ Գրիգորեանը բաժանորդագրուել է *Հայրենիքի Ձայն* եւ *Սովետական Գրականութիւն* պարբերականներին: 1971ի Մարտի 18ին այդ պարբերականների խմբագրութիւններին յղած նամակում յիշել է, որ Ալժիրում կայ 3-4 հայ տուն եւ հայկական ոչ մի ձեռնարկ:

1979ին Թունիսի մայրաքաղաքում արաբ բժիշկների համագումարին մասնակցող սիրիահայ բժիշկ եւ գրող Թորոս Թորանեանը վկայել է, որ քաղաքի հեռախօսագրքում փնտռել է հայկական ազգանուն եւ հանդիպել մի հայրենակցի, որը, պարզուել է, եղել է Թունիսի Համալսարանի դասախօս, իրանահայ, ծնուած Թաւրիզում[65]: Թորանեանը հանդիպել է նաեւ Կասաբլանկայի բնակիչ բժիշկ Թուրեանին: Նա խոստովանել է, որ ափրիկեան ափերում «*դրամ չահեցայ, բայց հուժիւնս կորսնցուցի*»[66]: Այս խօսքերն ապացուցում են այն համատարած ուծացումը եւ օտարացումը, որին ենթարկուել են հիւսիսային Ափրիկէի փոքր հայագաղութները:

Ներկայումս Թունիսի Սուս բնակավայրում է ապրում ամերիկահայ բեմադրիչ, դերասան Էդուին Ջերարդը (Համամճեան), որը 2008ի տուեալով մտադիր է տեղական թատերական ուժերով բեմադրել հայ պարուհի Արմէն Օհանեանի (1887-1976) կեանքը եւ արուեստը պատկերող մի ներկայացում[67]:

Հայաստանի յարաբերութիւնները հիւսիսային Ափրիկէի երկրների հետ նոր փուլ են մտել 1991ին անկախութեան հռչակումից յետոյ: Թունիսը, Ալժիրը եւ Մարոկկօն Հայաստանի անկախութիւնը ճանաչած առաջին 50 երկրների մէջ են մտնում (համապատասխանաբար՝ 1991ի Դեկտեմբերի 26ին, 27ին եւ 31ին): 2005ին Ռուբէն Կարապետեանը նշանակուել է Մարոկկոյի Հայաստանի դեսպան (նստավայրը՝ Կահիրէ): Նա այցելել է Մարոկկօ, հանդիպել արտաքին գործերի, մշակոյթի եւ արտաքին առեւտրի նախարարներին, հանդիպում է ունեցել նաեւ Մարոկկոյի հայ համայնքի ներկայացուցիչների հետ[68]: Այդ երկրներում հայերի թուի վերաբերեալ պաշտօնական տուեալներ չկան:

ՀԱՅԵՐԸ «ՍԵՒ» ԱՓՐԻԿԷՈՒՄ

Ամստերդամում 1699ին լոյս տեսած Ղուկաս Վանանդեցու *Գանձ Ճափոյ, Կշռոյ, Թռոյ եւ Դրամից Բոլոր Աշխարհի* գրքում յիշուած են նաեւ մի քանի ափրիկեան երկրներ (Կոնգօ, Անգոլա, Զանզիբար) եւ հակիրճ տուեալներ

դրանց բնական պաշարների, նաեւ բնակիչների վերաբերեալ. «*Կօնգ առատ ամէն սերմամբք, պտղովք եւ տնկօք, ունի թամար հինդի, շաքար ջօվգհնդի, պղինձ, երկաթ, արծաթ, լաւ մարմառ, յասպիս քար եւ այլ պատուական ջաւահիր. զանազան եւ գարմանալի գազանք: Են կէսակէս Քրիստոնեայք: Նոյնպէս եւ Անգօլա, որ եւ Դօնգ ասի: Քաբրատանու* (կաֆրերի երկիր - Ա.Բ.) *մարդն է դժնեայ եւ մարդակեր, երկիրն գազանաբնակ: Մօնօմօթապա կամ Բէնօմօթա է բարեխառն երկիր փոքր ինչ. առատ արօտիւ, ցորենով, բուսով, պտղով, եղեգնաշաքարով եւ այլ զանազան մրգօք. ունի պատուական մաղան ոսկւոյ, եւ այլ. իւրեանց լեզուաւ Աստուծոյ ասեն Ատունօ, հաւատով՝ չատն կռապաշտ է: Մօնօյմուգ փոքր կղզի Քրիստոնեայ ունի Փորթուգէզի ազգէն. վայելուչ, պտղաբեր եւ չատամեղր, ոսկի, արծաթ, պղինձ եւ այլ զանազան թռչուն՝ եւ գազան, ընտանի եւ վայրի: Ջանգէբար է առատ ոսկւով, եւ ֆլիկեռիք չատ, բնակօղք են Սէյիսի, որ է Մահմեդական. կան եւ փոքր Քրիստոնեայք յ՝ազգէն Փորթուգալլիոյ, որք ունին բերդս եւ չէնս ոչ սակաւ*»[69]:

1730ականներին Լոնդոնի Թագաւորական Ափրիկեան Ընկերութիւնը փնտռել է մէկին, որը կը հեշտացնէր իրենց գործարքները Գամբիայի մահմեդական գերեվաճառների հետ: Նրանք վարձել են Մելքիոր Դէ Ջասպասին (Melchior de Jaspas), մի արաբախօս հայի (հաւանաբար՝ Մելքոն Գասպարեան): Նա մինչեւ մահ ծառայել է Լոնդոնի Թագաւորական Ափրիկեան Ընկերութեանն Ափրիկէում: Ըստ պատմաբան Ֆիլիպ Քըրթինի, Մելքիորի գործունէութիւնը, որպէս միջմշակութային միջնորդի Ափրիկէում, այնուամենայնիւ, աւելի լաւ կամ վատ չէր իր անգլիացի գործընկերների աշխատանքից[70]:

Հայերի խմբային ներկայութիւնը «սեւամորթ» Ափրիկէում վերաբերում է Ի. դարի առաջին քսանամեակին: Հատուկենտ հայեր յայտնուել են աւելի վաղ ժամանակներում: 1891ի տուեալով արեւելեան Ափրիկէի Լիւնդի քաղաքում բնակուել է մի հայ առեւտրական: Մարոկկոյում, ապա Մադագասկարում ֆրանսիական պետութեան պաշտօնեայ է եղել Մկրտիչ Անաշիկեանը, որ մահացել է 1893ին, Մադագասկարում: Ռուս-թուրքական պատերազմից յետոյ մի սամաթիացի հայ երիտասարդ ծառայել է անգլիական նաւերում, հասել Բարեյուսոյ Հրուանդանը, այնտեղ ամուսնացել իրլանդուհու հետ եւ հիւրանոց բացելով՝ դարձել է հարաւային Ափրիկէի առաջին հայ բնակիչը: 1896ին Քէյփքաուընում բնակուել է մի հայ արհեստաւոր, որը թղթակցել է Պոլսի *Արեւելք* օրաթերթին: 1904ին հարաւ-ափրիկահայերի թիւը տաս էր, որոնցից երկուսը բնակուել են Դելագոաբա քաղաքում, ուրը՝ Եոհաննէսբուրգում: Դելագոաբայում բնակուող պոլսեցի Հ. Ազնաւուրեանը քաղաքից երկու ժամ հեռաւորութեան վրայ գտնուող Քաթեմբէ վայրում հողատարածութիւն է վերցրել եւ Թրանսվաալում առաջինը սկսել բանջարեղէնի եւ պտղատու ծառերի մշակութիւնը: Հաւանաբար նա է կառուցել «Արմենիա» կոչուող ամբարտակը Վաալ գետի վրայ[71]: 1901ին կազմաւորուել է Դար-էս-Սալամի (Տանգանիա) հայկական փոքրիկ գաղութը, բաղկացած եգիպտահայերից եւ հնդկահայերից[72]:

ԺԹ. դարի վերջին կամ Ի. դարի սկզբին աշխարհի տարբեր երկրներում դեգերած պոլսեցի Երուանդ Յակոբեանը (յետագայում ամերիկաբնակ գործարար եւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան բարերար անդամ) որը եղել է ականաւոր լեզուաբան Հրաչեայ Աճառեանի դասընկերը Պոլսի Սամաթիայի վարժարանում, 1915ին մի անգլիացու հետ մեկնել է Ափրի-

կէի անծանօթ տարածքներ, այցելել Խաղաղական Ովկիանոսի կղզիներ, հաւաքել վագրի մորթի, աղամանդ, փղոսկր, ուղարկել Եւրոպա վաճառելու: Յակոբեանը հանդիպել է արկածների, նաւակով այցելել է մարդակերների կղզի, ենթարկուել յարձակման, մի բարձր ծառ բարձրանալով՝ հրազէնով սպաննել եւ քշել է վայրենիներին: Հարաւ-Ափրիկէի Եոհաննէսբուրգ քաղաքում նա հանդիպել է «Մարտիրոս» մորթու գործարանի տիրոջը՝ բնիկ հայաստանցի Մարտիրոսին: Վերջինս ունեցել է կաֆրերից բաղկացած մի զօրագունդ, որոնք իր համար վայրի գազաններ են որսացել[73]:

Մէկ այլ պոլսեցի հայորդի՝ սկաուտական շարժման գործիչ, Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան անդամ Լեւոն Սապունճեանը շրջագայել է հիւսիսային Ափրիկէում: Մաւրիտանիայում, իր 25 ընկերների հետ յարձակման է ենթարկուել մի կիսավայրենի ցեղախմբի կողմից: Խումբը երեք զոհ տալուց յետոյ լիակատար ոչնչացումից ազատուել է մի ֆրանսիական ջոկատի շնորհիւ: Յետագայում Սապունճեանը 1922ին հաստատուել է Փարիզում, որտեղ հայերէն եւ ֆրանսերէն լեզուներով գրել է իր ուղեգրութիւնը[74]:

«Սեւ» Ափրիկէի երկրների փոքրաթիւ հայ համայնքներն սկսել են կազմաւորուել արդէն 1920ականներից: Յետագայ տասնամեակներին, հիմնականում Բ. Աշխարհամարտից յետոյ, մեծ մասամբ Մերձաւոր Արեւելքի երկրներից, նաեւ Յունաստանից եւ Ռումինիայից հարիւրաւոր հայեր, հիմնականում՝ արհեստաւորներ եւ առեւտրականներ, գաղթել են Նիգերիա, Քենիա[75] եւ Հարաւ-Ափրիկեան Հանրապետութիւն (ՀԱՀ): Նրանց մի զգալի մասը յետագայում տեղափոխուել է ԱՄՆ, Կանադա կամ եւրոպական երկրներ: 1940ականներին ՀԱՀում բնակուել է 10 հայ ընտանիք[76]:

1951ին Նիգերիայի Լագոս քաղաքում բնակուել է 12 հայ ընտանիք՝ առեւտրականներ եւ պաշտօնեաներ, բոլորը՝ կեսարացի, կիպրացի եւ կոնիացի: Քանօ քաղաքում բնակուել է նաեւ մէկ ատամնաբոյժ: Բոլորն էլ բարեկեցիկ վիճակում են եղել[77]:

Ափրիկէհայ համայնքներից միայն նիգերիահայ գաղթավայրի մասին գոյութիւն ունի առանձին մենագրութիւն, որ հեղինակել է Նիգերիայի բնակիչ Սուրէն Ա. Տատրեանը տպագրել 1958ին[78]: Գրքի երկրորդ մասն ամբողջովին նուիրուած է Նիգերիայի հայ համայնքին, իսկ վերջում տրուած է այդ երկրում բնակուած հայերի ցանկը (անուն-ազգանուն, ծննդավայր, Նիգերիա ժամանելու թուականը, զբաղմունքը): Այդ ցանկում կայ 34 հայի անուն՝ տիկնանց եւ ամուսինների անունների հետ մէկտեղ: Առաջին հայը Նիգերիայում հաստատուել է 1925ին՝ Մանչեսթրի Օղաբաշեան առեւտրական հաստատութեան հիմնադիր Արտաշէս Նազարէթ Օղաբաշեանը (1880ականներ, Կեսարիա - 1937, Լագոս), որը Արեւմտեան Ափրիկէում՝ Լագոսում եւ Աքրայում հիմնել է իր ընկերութեան մասնաճիւղերը, կերպասեղէնի ներմուծման Ardeno Limited & Otako Limited ընկերութիւնները, յետագայում իր մօտ բերել տասնեակի չափ հայեր: Օղաբաշեանի շնորհիւ Նիգերիայում եւ Կոտ դ'Իւուարում ստեղծուել է փոքրաթիւ հայ համայնք, որի անդամներից ոմանք առաջնակարգ դիրքի են հասել: Օղաբաշեանի բերած առաջին հայերից են եղել երիտասարդ գործունեայ Յակոբ Գարագաշեանը, որը դարձել է Օղաբաշեան Առեւտրական Հաստատութեան Նիգերիայի մասնաճիւղի ղեկավար (մահացել է 1937ին, Մանչեսթրում), նոյն ընկերութեան պաշտօնեաներ Մինաս-Գրիգոր Մելիքեանը եւ Նազարէթ-Եսայի Արրճեանը[79]: Վերջինս Լագոսում ունեցել է

կերպասեղէնի վաճառատուն, տնօրինել «Բրիսթոլ» հիւրանոցը, Մինաս Մելիքեանի հետ հիմնել է աճշարժ գոյքի ընկերութիւն: Այդ ընկերութեան բաժնետէր, ինչպէս նաեւ Մելիքեանի եւ Արրճեանի վաճառատների Բենինի եւ Սաբլէի մասնաճիւղերի տնօրէն է եղել Հրանդ-Գրիգոր Մելիքեանը: Նա է եղել նաեւ Armels Transport Limited ընկերութեան հիմնադիր տնօրէնը եւ բաժնետէրը:

Նիգերիայի հայերի մեծ մասը եկել է 1930ականներին, եղել են ծնունդով Իզմիրից, Կեսարիայից, Մարզուանից, Աղանայից եւ Կիպրոսից: Տատրեանն իր գրքում յիշատակել է նաեւ հետեւեալ անունները՝ Ardeno Limited ընկերութեան պաշտօնեաներ Միհրան-Պետրոս Գալէնտէրեան, (1953ին տեղափոխուել է Հարաւային Ռոդեզիա), Մասիս-Լեւոն Գարագաշեան, United America ընկերութեան ձայնասփիւռի բաժնի դեկավար Լեւոն Փափազեան (1949ին տեղափոխուել է Կահիրէ), Royal եւ Palm հիւրանոցների տէր Անդրանիկ-Սեդրակ Պասմաճեան, 1945-1947ին Otako Limited ընկերութեան տնօրէն եւ բաժնետէր Ռիչարդ Օղաբաշեան (1949ին տեղափոխուել է Քենիա), Լուսիա Գալէնտէր (1952ին տեղափոխուել է Աքրա՝ Գանա):

Նիգերիայի հայերը չեն ունեցել ազգային որեւէ կազմակերպութիւն: Այն հարցին, թէ ինչու գոնէ գերեզմանատուն չունեն, նիգերիահայ Հրանտ Մելիքեանը պատասխանել է. *«Որովհետեւ, հոս մեռնելու նպատակ չունենք»*[80]: Հայերն իրենց պսակը եւ մկրտութիւնը կատարել են օտար եկեղեցիներում, ակումբի պակասը լրացրել են բարեկամական հաւաքոյթներով: Բարգաւաճ այդ համայնքն ապրել է հաշտ եւ համերաշխ:

Ի դէպ, Տատրեանի գրքում ծանուցուել է թէ հեղինակը պատրաստում է հրատարակել «Կիկոյի Արկածներ (Նիկերիացիներու Կեանքէն)» վերտառութեամբ հատոր, սակայն նման գիրք մեզ առայժմ չի հանդիպել:

2009ի տուեալով՝ Լագոսում ապրում է շուրջ 60 հայ, գաղթած հիմնականում Լիբանանից, մի մասն էլ՝ Սիրիայից եւ Կիպրոսից: Հայերը հիմնականում ներգրաւուած են նաւթային ընկերութիւններում եւ առեւտրում: Հայերից ոմանք զաւակներին տանը սովորեցնում են հայերէն գրել եւ կարդալ[81]:

1955ին Քենիայում բնակուել է տաս տուն հայ ընտանիք, գործարարներ եւ պաշտօնեաներ, բոլորն էլ բարեկեցիկ վիճակում: Մայրաքաղաք Նայրոբիից 28 կիլոմետր հեռու գտնուող Թիքա բնակավայրի «Բլու Փոսթս» հիւրանոցը պատկանել է Երուանդ Սաաթճեանին: Նայրոբիում լուացքատան եւ քիմիական մաքրման կենտրոն է ունեցել Մովսէս Հենտոյեանը: Տրդատ Թրգրեանը եղել է ինքնաշարժի ընկերութեան տնօրէն, իսկ տիկին Մերի Բէյցը (Տասնապետեան) կարեւոր պաշտօն է զբաղեցրել Գաղթականութեան Ազգային Բաժանմունքում[82]: Քենիայում 1950ականներին բնակուել է նաեւ վերոյիշեալ նիգերիահայ Արտաշէս Օղաբաշեանի դուստրը՝ Նենսի-Մերին ամուսնու՝ Արմենակի հետ[83]:

1960ականների վերջին Եոհաննէսբուրգում եւ շրջակայքում բնակուել է 100ից աւելի հայ՝ մեծ մասամբ պետական ծառայողներ, առեւտրականներ եւ գործարարներ: 1970ականներին նրանց թիւը համալրուել է Եթովպիայից գաղթած ընտանիքներով: 1970ին ստեղծուել է Հարաւային Ափրիկէի Հայկական Ընկերութիւնը՝ կիրակնօրեայ դպրոցով, հայկական պարերի եւ այլ խմբակներով: Գործել է ՀԲԸՄ մասնաճիւղը[84]: 1979ին հարաւ-ափրիկեան *South Africa Panorama* պարբերականում Լ. Քափսքիքդէյլի ստորագրութեամբ

լոյս է տեսել «Հայերը Հարաւային Ափրիկէում» յօդուածը, որը թարգմանաբար տպագրուել է հայ մամուլում: Հարաւ-ափրիկահայ Ն. Փամպուքեանը գաղութի անունից ասել է. «*Իւրաքանչիւր հայ ընտանիք սերտ կապեր հաստատած է ափրիկեաններուն եւ անգլիախօս հարաւ-ափրիկեցիներուն հետ: Մեր երիտասարդներէն չատեր միջամուսնութիւններ կնքած են եւ կազմած ընտանիքներ: Մենք կը սիրենք այս ընտանիքը եւ իր ժողովուրդը, եւ մեծ հաւատք ունինք իր ապագային հանդէպ*»[85]:

1990ի Ապրիլի 24ին հարաւ-ափրիկահայերը ցոյցի են դուրս եկել Եոհաննէսբուրգում՝ պահանջելով դատապարտել հայերի ցեղասպանութիւնը Թուրքիայում: 1992ին Եոհաննէսբուրգում կայացած ՀԱՀի ազգութիւնների փառատօնում հայկական ցուցափեղկը ճանաչուել է լաւագոյնը: 1993-1995ին 20-25 հայ ընտանիք ՀԱՀ են տեղափոխուել Բուլղարիայից եւ Հայաստանից, սակայն յետագայում ՀԱՀի կառավարութիւնը խստացրել է ներգաղթային քաղաքականութիւնը, եւ հայերի հոսքը նուազել է: 2003ի տուեալով՝ ՀԱՀում բնակւում է շուրջ 300 հայ[86]:

Հարաւ-արեւմտեան Կոտ դ'Իւուարի մայրաքաղաք Աբիջանի հայերի մասին 1990ականների կէսի սփիւռքահայ մամուլում տպագրուած մի բոքակցութեան մէջ ասուած է, որ հակառակ քոի սակաւութեան եւ միմեանց հետ ոչ շատ կապուածութեանը, նրանք նուիրուած են հայ կեանքին, հայ ոգին վառ է նրանց մէջ, հնարաւորութիւններ են ստեղծում հաւաքուելու, կատարելու հայկական երգեր, պատրաստում են հայկական ճաշատեսակներ, քննարկում Ղարաբաղի խնդիրը եւն.: Ափրիկէի այդ ամէնից եւրոպականացած քաղաքում հաստատուել են հայեր Բէյրութից, Ստամբուլից, Ամմանից, Ֆրանսիայից եւ Արգենտինայից: Յատկապէս Լիբանանի քաղաքացիական պատերազմի հետեւանքով տասնեակ հայեր են հաստատուել այս երկրում: Գործել է «Կարօ» վարսաւիրանոցը, որի յաճախորդները եղել են Աբիջանի աւագանիի տիկնայք[87]:

Արտառոցութեան աստիճանի է հասնում հայ առաքելական եկեղեցու ներկայութիւնը... Չաիրում (այժմ՝ Կոնգոյի կազմի մէջ): Այս մասին վկայել է արգենտինահայ պատմաբան Նարսիսօ Բինայեան-Կարմոնան, որն այդ մասին անձամբ լսել է 1968ին Վազգէն Ա. Կաթողիկոսից, վերջինիս Արգենտինա կատարած այցելութեան ժամանակ: «*Մի խումբ նորադաւաններ հասան Սուրբ Էջմիածին եւ խնդրեցին ընդունուել եւ ձեռնադրուել այնտեղ: Վազգէն Կաթողիկոսը փաստի առաջ կանգնեց. Հայաստանեայց Եկեղեցին ազգային է, սակայն նաեւ Տիեզերական եկեղեցու մաս է կազմում եւ չի կարող չրջանցել Աւետարանը քարոզելու պարտականութիւնը: Հետեւաբար ընդունեց գաւիրցիներին, որոնք ուսումնասիրեցին ամէնը, ինչ որ պէտք էր ուսումնասիրէին, ձեռնադրուեցին եւ ապա իրենց երկիրը մեկնեցին, որտեղ կազմակերպեցին Զաիրի Հայաստանեայց Եկեղեցին, որ, առանց ենթակայութեան յարաբերութեան, հին հայերէնով արարողութիւններ է կատարում եւ գործադրում է աւանդական բոլոր օրէնքները: 1985ին Լագոսում (Նիգերիա) պրոֆեսոր Բուակասան Կինչասայից* (Չաիրի այդ ժամանակուայ մայրաքաղաքը - Ա.Բ.) *հաստատեց նրա* (Չաիրի Հայաստանեայց Եկեղեցու - Ա.Բ.) *գոյութիւնը եւ երկու օր անց, անվերջանալի հարցումներ տուեց անյագ հետաքրքրութեամբ, հայկական հարցերի եւ խնդիրների ամենաբազմապիսի երեսների մասին*»[88]:

Հայկական եկեղեցի գոյութիւն ունի հարաւային Ափրիկէի Սուազիլենդ պետութիւնում: Գրամեքենաների առեւտրական, այժմ հանգուցեալ Գրիգոր Դերքալեանը Սայբեբէի (սոճիների հովիտ) կոչուող անբնակ վայրում կառուցել է Սուրբ Յարութիւն փոքրիկ եկեղեցին: 1989ին այնտեղ այցելել է մի յոյն քահանայ եւ մկրտել երկու հոգու:

Ըստ Հայաստանի Հանրապետութեան Արտաքին Գործերի նախարարութեան www.armeniadiaspora.com կայքէջի՝ 2002ին ափրիկեան երկրների հայ բնակչութիւնն ունեցել է հետեւեալ պատկերը՝

ՀԱՀ՝ 200, Զիմբաբուէ՝ 28, Կոտ դ'Իւուար՝ 20, Գանա, Սենեգալ՝ 15, Զամբիա՝ 10, Սուազիլենդ՝ 8[89]:

Ափրիկահայերից կարող ենք յիշել հետեւեալ անունները.- իրաւաբան Վահէ Պայրամեանը (ծն. 1900, Կիպրոս) 1944ին տեղափոխուել է Նիգերիա, պաշտօնավարել «Արտենօ» ընկերութիւնում, եղել հողային կոմիսարի իրաւաբանական խորհրդատու, Գերագոյն Ատեանի Ոստիկանական Դատաւոր եւ Աւագ Քարտուղար: Մի քանի տարի բնակուել է ափրիկեան Սիէռա-Լէօն պետութիւնում, աշխատել որպէս իրաւաբանական խորհրդատու, Գերագոյն Դատարանի Աւագ Քարտուղար, Ոստիկանական Դատարանի Դատաւոր եւ գլխաւոր դատաւոր:

1948ին հարաւային Ափրիկէում է հաստատուել ծնունդով տրապիզոնցի գործարար Վաչէ Գարագաշեանը, որը Բ. Աշխարհամարտից առաջ յաջողապէս հիւսուածեղէնի արտադրութեամբ է զբաղուել Ռումինիայում: Խուսափելով համայնավարական համակարգից՝ նա մեկնել է նախ Անգլիա, Եգիպտոս, այնուհետեւ հաստատուել է ՀԱՀում: Հիւսուածեղէնի ճարտարարուեստի իր գիտելիքները նա գործադրել է նախ Քիմբըրլիում, որտեղ հիմնել է մի փոքր գործարան: Նրա գործունէութիւնը գրաւել է «աղամանդի արքայ» Սըր Էռնըսթ Օփենհայմէրի ուշադրութիւնը: Վաչէ Գարագաշեանը բացել է հարաւային Ափրիկէում մետաքսեայ շալի արտադրութեան առաջին գործարանը, որը տարեկան արտադրել եւ վաճառել է երկու միլիոն մետաքսէ շալ: Որոշ ժամանակ անց Գարագաշեանն իր արտադրութիւնը տեղափոխել է Ռոսլին (Փրեթորիայից 20 կմ. հիւսիս-արեւմուտք), իրականացնելով կառավարական ծրագիրը՝ բաջալերելու ճարտարարուեստի ապակենտրոնացումը սեւամորթների նահանգների սահմանների վրայ: Այդ ժամանակ Ռոսլինը ամայի մի վայր էր, եւ ոչ ոք չէր կարող գուշակել, թէ մի օր այն դառնալու է արդիւնաբերական մեծ կենտրոն: 1970ականներին Վաչէ Գարագաշեանի ընկերութիւնը միակն է եղել ՀԱՀում, որ հիւսուածեղէնի ճարտարարուեստի համար արտադրել է ջերմափոխադրիչ տպագրական թուղթ, տարեկան երկու միլիոն մետր սաւան, հագուստեղէն եւ բազմատեսակ տպագրուած կտորեղէն, որը մինչ այդ ՀԱՀը ներածել է[90]:

Հաւանաբար միեւնոյն անձն է (եւ կամ ազգակցական կապ ունի) Ռոլանդ Գարագաշեանը, ՀԱՀի «Մետաքսի եւ Տեքստիլի Արդիւնաբերութիւն» գործարանի տնօրէնը: Սա միակ գործարանն է հարաւային Ափրիկէում, որ արտադրում է խանգա (զգեստի տեսակ, որ հագնում են յատուկ առիթներով, նաեւ որպէս առօրեայ հագուստ): Ի դէպ, Ռոլանդ Գարագաշեանը եղել է ՀԱՀի Գաղութային Վարչութեան ատենապետը:

Քենիայի հայերի մէջ յիշում է նաեւ առեւտրական Արեւանոյշ Բիլինգէմը (ծնեալ Գալստեան): Իրանահայ այս կինն ամուսնացել է անգլիացի գինուո-

րականի հետ, հաստատուել Նայրոբիում, զբաղուել սուրճի առեւտրով: Ջարգացած կին է եղել: Արեւանոյշ Բիլինգէմն ունեցել է մի որդի՝ Դոնալդ, որը 1955ին զոհ է գնացել քենիական Մաու Մաու շարժմանը[91]:

Ի. դարի կէսին տաս տարի Ափրիկէում է բնակուել փարիզաբնակ հայ լրագրող Գէորգ Վարդանեանը: 1961ին Փարիզի ռուսական մամուլում հրատարակած մի յօդուածում նա վկայել է, որ շատ եւրոպացիներ եւ ռուսաստանցիներ Ափրիկէում իրենց շատ աւելի վատ են պահել, քան սպիտակամորքները Ամերիկայի հարաւային նահանգներում[92]:

Ներկայումս բելգիաբնակ, ծնունդով սիրիահայ գործատէր Հայկ Արսլանեանը ճանապարհորդել է Հնդկաստանում, Եմէնում, Գամբիայում: Ափրիկէում զբաղուել է աղամանդի հանքախուզմամբ եւ գնել ալմաստի հանքեր: Առեւտրական կեդրոններ է հիմնել Կեդրոնական Ափրիկեան Հանրապետութիւնում, Չահրում եւ Կոնգոյում: Աբիջանում նրա գրասենեակի դեկավարը 1990ականներին եղել է Վիգէն Տէր-Սարգիսեանը[93]:

1960ականների կէսերից Արեւմտեան Ափրիկէի երկրներում եւ մասնաւորապէս Կոտ դ'Իւուարում է իր գործունէութիւնը ծաւալել ֆրանսահայ գործատէր Ռայմոն Եզեկիէլեանը: Ծնուել է Փարիզում, աղրիանապոլսեցի հօր ընտանիքում: Կոտ դ'Իւուարում նա բացել է 30ից աւելի գրասենեակներ, Revelon ֆիրման, ներմուծել վիաքի եւ այլ ըմպելիքներ: Նրան են պատկանել նաեւ մի շարք շտեմարաններ: Եզեկիէլեանին անուանել են արեւմտեան Ափրիկէի հայոց դեսպան: Առաջին՝ ճապոնուհի կնոջից ունի Վարդուհի դուստրը, իսկ մարիտանուհի կնոջից՝ Անոյշ դուստրը, ծնուած Սենեգալում: *«Երկուքն ալ հայերէն կը խօսին: Հայաստան այցելած են եւ իմ հայերէնս կը սրբագրեն: Հայ մնալը կարեւոր է, ու հայ կրնանք մնալ մեր լեզուն սորվելով միայն: Հպարտ եմ, որ երկու աղջիկներս ալ հայերէն կը խօսին ու հայ կը զգան: Դիւրին չէր այս ընել, բայց ըրի»*,- ասել է Եզեկիէլեանը[94]: Ի դէպ, Անոյշ Եզեկիէլեանն այժմ մասամբ բնակւում է Հայաստանում, 2007ին նկարահանուել է Վրէժ Քասունիի Maybe Love, Maybe Not շարժանկարի գլխաւոր դերում: Այժմ Ռայմոն Եզեկիէլեանը մեծ աշխատանք է տանում յատկապէս յանուն Արցախի տնտեսական զարգացման:

Կոտ դ'Իւուարում է բնակւում նաեւ հայազգի երգչուհի Մալաք Մաջարը, ծնուած Լիբանանում: Աբիջանի արաբական գաղութի այս սիրուած երգչուհին կատարում է արաբական եւ լիբանանեան հայրենասիրական եւ սիրային երգեր, յատկապէս Ըմ Քալսումի, եւ լիբանանցի երգչուհիներ Սաբահի, Ֆէյրուզի երգացանկից[95]:

1960ից, երկրի առաջին նախագահի՝ Ֆելիքս Հուֆուէ-Բուանյիի եւ նրան յաջորդած երեք նախագահների օրօք Կոտ դ'Իւուարի Նախագահական Պալատի Արձանագրութեան Բաժնի դեկավարն է եղել Ժորժ Ուենիէնը որը կէսհայ է, Աւետիքեան ազգանունամբ մի լիբանանցի հայուհու որդին[96]: 2007ին իր ծառայութիւնների համար Ուենիէնը Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիի կողմից պարգեւատրուել է «Պատուոյ Լեգէոն»ի Սպայի շքանշանով:

1967ին արեւելեան Ափրիկէի Տոգօ պետութեան մայրաքաղաք Լոմէում հաստատուել է գործարար, ծնունդով բէյրութցի Վարդգէս Պագալեանը: Լիբանանում նա առաջինն է բացել մակարոնի գործարան եւ ալրաղաց: Տոգոյում զբաղուել է ցորենի եւ ալիւրի արդիւնաբերութեամբ եւ վաճառքով: Կարճ ժամանակում դարձել է այդ բնագաւառում մենիշխան ոչ միայն Տոգոյում, այ-

լեւ հարեւան Գանայում եւ Բենինում: Լոմէի միակ հայ բնակիչ Վարդգէս Պագալեանը եւ իր կին Լիզբէթը յարգուած անձինք են Տոգոյի հանրապետութեան կողմից, լաւ կապեր են ունեցել կառավարական շրջանակների եւ մասնաւորապէս նախագահ Այասիմայի հետ: Որդին շարունակել է հօր գործը[97]: Այսօր Լոմէում գործում է Societé Générale des Moulins du Togo-ն, որի գլխաւոր տնօրէնը նոյնինքն Վարդգէս Պագալեանն է:

Աքրայում (Գանա) շինարարական մեծ գործունէութիւն են ծաւալել Գասարճեանները, որ մտերիմ են եղել երկրի նախագահ Ջերի Ռոլինգզի հետ: Նուիրուած են եղել հայ ազգային կեանքին, Բէյրութում հաստատել են մի վարժարան[98]:

Ճարտարագէտ, առեւտրական Գուրգէն Գործունեանը եղել է սուրճի առաջին արտածողը Կամերունում: Արժանացել է «Արժանեաց Կարգի Ասպետ»ի շքանշանի: Կամերունի առեւտրական կեանքում աչքի է ընկել նաեւ եղբայրը՝ Սուրէն Գործունեանը[99]:

Մօտ 1956ին Լիբանանից արեւելեան Ափրիկէի Լիբերիա պետութիւն է տեղափոխուել աղամանդագործ Արտաւազդ Տապպաղեանը: Նա դարձել է երկրի նախագահ Ն. Վ. Թուպմէնի անձնական ոսկերիչը: Նրան է պատկանել մայրաքաղաք Մոնրովիայի միակ գոհարավաճառատունը: Մասնակցել է միջազգային ցուցահանդէսների (Նիգերիա, Քենիա, Գանա, Ջահիր)՝ ներկայացնելով Լիբերիան: 1971ին Լիբերիայի նախագահ Թոլպերտին նուիրել է վերջինիս դիմանկարով բրոնզէ մեդալ: Այս իրողութեանը յայնօրէն անդրադարձել է լիբերիական մամուլը[100]:

Ալեքսանդրիայում ծնուած Յովհաննէս Յովհաննիսեանը (Օհաննէս Օհանիսեան) կրթութեամբ իրաւաբան է: Նա հարաւ Ափրիկէում հաստատուել է 1967ին եւ սկսել զբաղուել գործարարութեամբ: Եոհաննէսբուրգի կենտրոնում է գտնւում նրա հիմնած ընկերութիւնը, որը զբաղւում է ճամպրուկների արտադրութեամբ եւ վաճառքով: Եղել է Հարաւային Ափրիկէի Հայկական Ընկերակցութեան ատենապետը[101]:

Մասնագիտութեամբ քարտէզագիր Գրիգոր Էօճիւրեանը որոշ ժամանակ բնակուել է Զիմբաբուէում, այնուհետեւ 1980ականներին տեղափոխուել Լոս Անջելըս: Կազմել է Մեծ Եղեռնի քարտէզը: Նրա վկայութեամբ՝ Զիմբաբուէում հայութիւն չկայ, եղել է 12-15 հայ ընտանիք, որ յետագայում գաղթել է ԱՄՆ, Կանադա եւ ՀԱՀ: Վերջինում, Էօճիւրեանի վկայութեամբ, բնակւում են մօտ 120 հայեր[102]:

Զամբիայում է բնակւում վիրաբոյժ, College of Surgeons of East, Central and Southern Africa (COSECSA)ի նախագահ Գրիգոր Երզնկացեանը (Ertzingatsian): Ծնուել է Ադիս Աբեբայում: Հաւանաբար որդին է եթովպահայ նկարիչ Հայկ Երզնկացեանի: Ստացել է վիրաբոյժ-ուռուցքաբանի մասնագիտութիւն Իրլանդիայում, որի քաղաքացի է: 1979ին հաստատուել է Զամբիայում: 1995ին ստացել է աւագ ուսուցչապետի աստիճան: Նա Վիրաբուժական Քոլէջների Միջազգային Դաշնութեան անդամ է: 2006ին Երզնկացեանն ընտրուել է ափրիկեան ութ երկրներ (Եթովպիա, Քենիա, Տանզանիա, Ուգանդա, Մալաուի, Մոզամբիկ, Զամբիա, Զիմբաբուէ) ընդգրկող COSECSA վիրաբուժների միասնական կազմակերպութեան նախագահը: Երզնկացեանը բազմիցս եղել է Հայաստանում, մասնակցել հայ բժիշկների համագումարներին[103]:

Ուշագրաւ է, որ ափրիկեան երկրներում եղել են հայերէն ստեղծագործող բանաստեղծներ. Յովհաննէս Հայկազունը Նիգերիայում, Յովսէփ Թրգրրեանը (աշխատակցել է ամերիկահայ *Հայաստանի Կոչնակին* եւ *Նոր Օրին*[104]) Քենիայում եւ Խ. Լուսիկեանը Մադագասկարում[105]: Ի դէպ, Յովսէփ Թրգրրեանի թոռը՝ Եսօ Թրգրրեանը, եղել է ֆրանսիական օդանաւային մի ընկերութեան առեւտրական ներկայացուցիչը Քենիայում, Ուգանդայում եւ Տանգանիայում:

Ափրիկեան երկրներում եղել են նաեւ հայ արուեստագէտներ եւ գիտնականներ: 1961ին Նիգերիայում է հաստատուել լիբանանահայ գեղանկարիչ Վահէ Կէօքկէօզեանը (ծն. 1937), որը դարձել է տեղի յայտնի նկարիչներից:

Երաժիշտ եւ ճարտարապետութեան լուսաւորութեան մասնագէտ է Փոլ Հայկ Փամպուքեանը, ծնուած 1949ին, Եոհաննէսբուրգում: Ծնողները հարաւային Ափրիկէ են գաղթել 1948ին, Աբէնքից (հայրը եղել է ծագումով Մարաշից, մայրը, ծնեալ Վարվառեան, Բուրսայից): Հինգ տարի երաժշտութիւն է ուսանել Քէյփթաունի Համալսարանում, սովորել է նուագել կլառնէտ, այնուհետեւ մասնագիտացել է Լոնդոնի Գիլդհոլ երաժշտական դպրոցում: Երաժշտութիւն է գրել թատրոնի եւ հեռատեսիլի համար: Զբաղուել է նաեւ հայ երաժշտութեամբ, հետաքրքրուել յատկապէս հայ հոգեւոր երգարուեստով: 1970ականների վերջին հարաւ-ափրիկեան հեռատեսիլով ելոյթ է ունեցել նուագավար Լորիս Ճգնաւորեանի հետ (վերջինս հարաւ Ափրիկէ էր եկել ոաղիօկայանի սիմֆոնիկ նուագախումբը ղեկավարելու համար): Առաջին անգամ բամաթիւ հարաւ-ափրիկացիներ ճանաչել են իրենց մէջ բնակուող փոքրաթիւ համայնքին[106]: 1977ից զբաղուել է լուսաւորութեան ձեւաւորմամբ, դարձել Փրեթորիայի Պետական Թատրոնի գլխաւոր լուսային ձեւաւորողը: Եղել է համահիմնադիրը Production Projects լուսաւորման եւ բեմադրութեան ընկերութեան, որ մասնագիտացած է լուսաւորման ձեւաւորման եւ վաճառքի մէջ: Այս ընկերութեան կազմում Փամպուքեանը մասնակցել է աւելի քան 500 արդիւնաբերական ծրագրերի՝ միջազգային մի շարք խոշոր հաստատութիւնների (BMW, Mercedes Benz, Ford, Toyota, VW, Alfa Romeo, IBM, SAPPI, World Gold Council) հետ, որոնք նախագծեր են իրականացրել Փարիզում, Նիւ Եորքում, Բազէլում, Վենետիկում, Հաուայում եւ Բեռլինում: 1990ին Եոհաննէսբուրգում հիմնել է Paul Pamboukian & Associates Lighting Design լուսաւորութեան ձեւաւորման կենտրոնը, որ զբաղւում է ճարտարապետական կառոյցների, ներքին յարդարման, բնապատկերի եւ թատերական լուսաւորութեան ձեւաւորմամբ: Այդ թուականից ի վեր աշխարհի բազմաթիւ երկրներում Փամպուքեանը իրականացրել է 600ից աւելի ճարտարապետական նախագծեր (հիւրանոցներ, առողջարաններ, հանրային շինութիւններ եւն.): Հայազգի մասնագէտը յաճախակի հանդէս է գալիս լուսաւորութեան ձեւաւորման վերաբերեալ դասախօսութիւններով եւ արհեստավարժ անդամ է Եւրոպական Լուսաւորութեան Ձեւաւորողների Ընկերակցութեան (ELDA)[107]:

Ափրիկեան պետութիւններում աշխատել են նաեւ ամենատարբեր երկրների հայեր, յատկապէս Ֆրանսիայից: Այսպէս, ֆրանսահայ արդիւնաբերող Միհրան Էկնայեանը (ծն. 1892, Փարիզ) զբաղուել է ադամանդի արդիւնաբերութեամբ, մինչեւ 1945ը եղել է Կոտ դ'Իւուար պետութեան Հանքավայրերի Հետազօտման եւ Շահագործման Միութեան նախագահը: Ֆրանսահայ պետական գործիչ Արշակ Ժաք Մուրատեանը (ծն. 1910, Կոնշ, Օռ նահանգ)

պաշտօնավարել է ափրիկեան Չադ, Սենեգալ, Մադագասկար պետութիւններում, Ալֆոնս Գույի ծածկանունով հրատարակել է արեւելագիտական աշխատութիւններ, այդ թւում՝ *Իսլամն Արեւմտեան Ափրիկէում*[108] գիրքը: Ֆրանսահայ ճարտարապետ Ժորժ Արսենեանի նախագծով շէնքեր են կառուցուել Կոնգոյում[109]:

Որոշ ժամանակ Կամերունում է բնակուել լիբանանահայ, ներկայումս կանադաբնակ քանդակագործուհի Եւգինէ դը Գրէֆը (Եփրեմեան, ծն. 1934): Ճարտարագէտ, Երեւանի Ճարտարագիտական Ինստիտուտի շրջանաւարտ, նոյնպէս ներկայումս կանադաբնակ Անահիտ Քէօսէեանը (ծն. 1940) 1972-1973ին աշխատել է Ալժիրում, իսկ 1973-77ին՝ Նիգերիայում, դասաւանդել Ահմէդու Բելլօ Համալսարանում: Այնտեղ ծրագիր է մշակել Մաքուրդիում (Նիգերիա) 20 հազար բնակիչների բնակավայր կառուցելու համար[110]:

Լիբանանահայ երեք գրող՝ Պօղոս Գուբելեանը, Հայկ Նագգաշեանը եւ Արամ Սեփեթճեանը, որոշ ժամանակ բնակուել են ափրիկեան երկրներում՝ (առաջինը՝ Սիէռա-Լէօնում, միւսները՝ Նիգերիայում) եւ իրենց ստեղծագործութիւններում պատկերել են այդ երկրի եւ նրա բնակիչների կեանքը: Սեփեթճեանի *Ես Սեւ Եմ, Բայց Գեղեցիկ*[111] վիպակը պատկերում է Նիգերիայում հաստատուած հայերի կեանքը: Հայկ Նագգաշեանի *Ափրիկէի Անտառներու Մէջ*[112] պատմուածքների ժողովածուն (առաջաբանը՝ Վախթանգ Անանեանի) եզակի է հայ գրականութեան մէջ, քանի որ ներկայացուող որսորդական պատմուածքների միջավայրը ոչ թէ հայաստանեան բնաշխարհն է, այլ ափրիկեան ջունգլիները եւ սաւաննաները...

Տարբեր առաքելութիւններով ափրիկեան երկրներում գործել եւ պաշտօնավարել են հայեր աշխարհի տարբեր երկրներից, նաեւ Հայաստանից: Ամերիկահայ բժիշկ-ախտաբան Ռոբերթ Նալբանդեանը (ծն. 1922, Միչիգան) 1970ին ղեկավարել է ափրիկեան երկրներից մէկում համաճարակի դէմ տարուող պայքարը[113]: Տարիներ շարունակ ախտաբանութիւն է դասաւանդել Միչիգանում: Մէկ այլ ամերիկահայ բժիշկ եւ կենսաքիմիկոս Միհրան Կիւլեանը (ծն. 1930, Ուեհոքըն), տարիներ շարունակ պաշտօնավարել է ափրիկեան երկրներում, համագործակցել հումանիստ Ալբերտ Շուայցէրի հետ[114]: 1980ին Մադագասկարում օգտակար հանածոների արշաւախումբը ղեկավարել է հայաստանցի երկրաբան Լեւոն Յակոբեանը: Մադագասկարում այդ արշաւախումբը յայտնաբերել է բիւրեղապակու հանքավայրեր: Այդ առիթով Մադագասկարի եւ ԽՍՀՄի միջեւ կնքուել են պայմանագրեր, արշաւախմբի գլխաւոր ճարտարագէտ Լեւոն Յակոբեանին յանձնուել է երկրի բարձրագոյն պարգեւը՝ «Ասպետ»ի շքանշանը եւ Մադագասկարին մատուցած ծառայութիւնները վաւերագրող մի պատուոգիր[115]:

Պատմաբան Հմայեակ Մարտիրոսեանը (1926-2008) 1973-1976ին եղել է Գանայում ԽՍՀՄ դեսպանատան Առաջին Քարտուղար: Շուեդիայում բնակուող ճարտարապետ Պիէռ Տէր-Յակոբեանը (ծն. 1927) որոշ ժամանակ եղել է Գաբոնի ներկայացուցիչը Շուեդիայում՝ շնորհիւ Փարիզում իրեն դասընկեր եղած Գաբոնի նախագահ Օմար Բոնգոյի[116]:

Եղել են նաեւ հայազգի ափրիկագէտներ: Ֆրանսիայի ճանաչուած ափրիկագէտներից է պատմաբան, լրագրող, պետական գործիչ, Ժաք Բուլիւնը (Յակոբ Բաթմանեան, ծն. 1924, Հելիոպոլիս, Եգիպտոս): Նա 1963-1969ին եղել է Կոտ դ'Իւուարի նախագահ Հուֆայէբ Բոիճիի, 1965-72ին՝ Նիգէրի նա-

խագան Դիորի Համանիի քաղաքական եւ տնտեսական խորհրդականը: Փարիզում հրատարակել է թերք Նիգէրի համար, տեղեկատու գրականութիւն՝ Կոտ դ'Իւուարի վերաբերեալ: 1962ին Լոնդոնում հրատարակել է *Արաբական Գործօնն Ափրիկէում* անգլերէն գիրքը, արժանացել է Կոտ դ'Իւուարի, Նիգէրի եւ Գաբոնի հանրապետութիւնների ազգային շքանշաններին:

Ռուսաստանի յայտնի ափրիկագէտներից է հայազգի պատմաբան Կարէն Բրուտենցը (ծն. 1924), որը Մոսկուայում լոյս է ընծայել *Ասիայի եւ Ափրիկէի Ազգային-ազատագրական Պայքարը* (1959), *Ընդդէմ Ժամանակակից Գաղութատիրութեան Գաղափարախօսութեան* (1961), *Գաղութատիրութիւն Առանց Դիմակի* (1963), *Ժամանակակից Յեղափոխական Ժողովրդավարութիւնը* (1968), *Ժողովուրդների Ստրկացման Մի Նոր Ձեւ* (1969), *Գաղափարների Պայքարն Արդի Աշխարհում* (1978), *Ազատագրուած Երկրները 70ական Թուականներին* (1979) եւ այլ ռուսերէն աշխատութիւններ:

Ափրիկեան մշակութային ժառանգութեան պահպանման գործին իրովսաննն նպաստել է նաեւ հայազգի ռուս բանասէր Գայիանէ Անպէտրովա-Շառովան (1925-2004), որը Պետերբուրգի Համալսարանում աշխատելու տարիներին ափրիկեցի ուսանողներից գրառել է հեքիաթներ, ամփոփել *Մամպրուսիի Հեքիաթներ* (1967) եւ *Անգոլայի Ժողովուրդների Հեքիաթներ* (1975) ռուսերէն ժողովածուներում[117]:

Տարբեր երկրների հայ մտաւորականներ եւ արուեստագէտներ ներշնչուել են Ափրիկէով, սեւամորթների պատմութեամբ եւ ինքնատիպ մշակոյթով: Դեռ 1936ին տնտեսագէտ Վահան Տոտոմեանցը հանդէս է եկել «Քոռփերացիան Նեգրերի Մէջ» յօդուածով[118]: Ամերիկահայեր Եգնիկ Ազնակեանը բանախօսել է սեւամորթների գրականութեան վերաբերեալ, Քերոլ Սարգսեանը Ֆլորիդայում 1963ին՝ սեւամորթների հակամարտութեան մասին[119] եւն.: Ռուսագիր հայ գրող Պետրոնի Ամատունին (1916-1982) օդաչուի մասնագիտութեան բերումով շրջել է Այժիրում, Քենիայում եւ այլ ափրիկեան երկրներում, տպաւորութիւնները ամփոփել գրքերում[120]: Խորհրդային երգահան Կարէն Խաչատրեանը (ծն. 1920) գրել է Զանզիբարի (1964) եւ Սոմալիի (1972) պետական օրհներգերը[121]: Ամերիկահայ պարուհիր Լէօ Ղարիբեանը 1976ին Նայրոբիում բեմադրել է «Կաբարէ» ներկայացումը: Ամերիկահայ երաժշտագէտ Ջոն Սարեանը աշխատութիւն է գրել ափրիկեան երաժշտութեան մասին, իսկ ռուսահայ երգահան Սերգէյ Բալասանեանը (1902-1982), ի թիւս աշխարհի տարբեր ժողովուրդների երգերի, ձայնագրել եւ մշակել է նաեւ ափրիկեան ժողովուրդների մի շարք երգեր: Ամերիկահայ բեմադրիչ Քարլա Կարապետեանը նկարահանել է «Իմ Ընկեր Վարձկանը» վաւերագրութիւնը (2005)՝ Հասարակածային Գինիայում յեղաշրջման փորձի մասին[122]:

Նորագոյն ժամանակներում, Հայաստանի Հանրապետութիւնից, եղել են նաեւ Ափրիկէ արտագաղթի դէպքեր: Սակաւաթիւ հայուհիներ ամուսնութիւններ են կնքել ափրիկէցիների հետ: Այսպէս, 1988ից Անգոլայի մայրաքաղաք Լուանդայում է ապրում ծնունդով բաքուեցի հայուհի, անգոլացու հետ ամուսնացած Լարիսա Աւակիմովա-Ժօաօն (Յովակիմեան, ծն. 1964), որը դաշնամուրի դասեր է աւանդում Լուանդայի երաժշտական քոլէջներում: Ստոյգ թուաբանակ չկայ այդ երկրի հայերի վերաբերեալ[123]. բոլորը նշում են 300-400 հոգի, որոնք հիմնականում գրասենեակային աշխատողներ են, առեւտրականներ եւ արհեստաւորներ: ՀԱՀի հայերը միաւորուած են Եոհաննէսբուր-

գում գործող Հարաւային Ափրիկէի Հայեր կազմակերպութեան մէջ[124]: Նրանք նշում են Հայաստանի Հանրապետութեան անկախութեան եւ միւս ազգային տօները: Երեւանցի Նաիրա Տէր-Մարգարեանը աւարտել է Եոհաննէսբուրգի Համալսարանի Տնտեսական եւ Կառավարման Գիտութիւնների բաժինը: 1989-2006ին Մոզամբիկի Կրթութեան նախարարութիւնում են աշխատել Վրէժ եւ Ժաննա Յակոբեանները (ներկայումս բնակւում են Միացեալ Թագաւորութիւնում): Երեւանցի Կարէն Բարսամեանը 2008ի դրութեամբ աշխատում է Մոզամբիկի ՄԱԿի պարենային ծրագրում որպէս հաղորդակցութեան տեխնոլոգիաների ղեկավար: 1995ից Զիմբաբուէում է բնակւում տեխնիկական գիտութիւնների թեկնածու, երեւանցի Էդուարդ Մայիլեանը, որ զբաղւում է առեւտրով: 2001ին հայ մամուլին տուած հարցազրոյցում նա պատմել է, որ հայերը հիմնականում աշխատանքի են մեկնում հիւսիսային Ափրիկէի երկրներ եւ Նիգերիա: Հայերը Զիմբաբուէում զբաղւում են գրասենեակային աշխատանքով, առեւտրով, ոսկերչութեամբ եւ այլ արհեստներով, աշխատում շինարարութիւնների վրայ: Ըստ նրա՝ *«Ափրիկէում մեծացող հայերի զաւակները ոչ իսկ ցանկանում են վերադառնալ Հայաստան»*[125]:

Հայերի անունները ԻԱ. դարի սկզբի Ափրիկէում յիշատակւում են նաեւ ոչ-դրական կողմերով: 2007ի Մարտի 15ին «Արմէնպրէս»ը հաղորդագրութիւն է տարածել Քենիայում ծագած քաղաքական գայթակղութեան մասին, որի կիզակէտում են յայտնուել հայաստանցիներ Արթուր Սարգսեանը եւ Արթուր Մարգարեանը, որոնց միջազգային լրատուամիջոցներն ու քենիական մամուլը ներկայացրել են որպէս եղբայրներ: Քենիայի ընդդիմութեան առաջնորդներից մէկը՝ Ռէյլա Օդինգան, հայազգի եղբայրներին մեղադրել է, որ նրանք որպէս վարձկաններ օգտագործուել են Քենիայի իշխանութիւնների կողմից որոշ լրատուամիջոցների վրայ յարձակումներ գործելու համար: Սարգսեանը եւ Մարգարեանը հերքել են մեղադրանքները[126]:

ՀԱՅ-ՍԵՒԱՄՈՐԹ ՇՓՈՒՄՆԵՐ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Հայերը սեւամորթների հետ շփուել են բոլոր ցամաքամասերի ամենատարբեր երկրներում, ընդսմին՝ Հայաստանում եւ յարակից երկրներում...: Աղասի Այվազեանն իր «Նեգրոնք» պատմուածքում ներկայացրել է ԺԹ. դարում գինուորական Մեժումովի կողմից Իրանից Հայաստան բերուած սեւամորթ քոյր եւ եղբօր՝ Ալիի եւ Լէյլայի կեանքի պատմութիւնը, որը պատմական հիմք ունի: Այդ սեւամորթներն ապրել են Ալեքսանդրապոլում, եւ նրանց տոհմն այդուհետ կոչուել է «Նեգրոնց Մեժումովներ»: Լէյլան մի հայից ունեցել է երկու զաւակ, իսկ Ալին յետագայում բնակուել է Թիֆլիսում: Հատանաբար հենց այդ սեւամորթին է նկատի ունեցել արձակագիր Միքայէլ Մանուէլեանն իր «Նեգրը» մանրապատումում. *«Ջեմ յիշում երբ էր, քանի տարի առաջ, բայց վաղուց էր, շատ վաղուց: Նա միշտ նստած էր իր տան դռան առջեւ արեւի տակ, տաքանում էր, նա փաթաթուած էր տաք վերարկուի մէջ, բայց գարնան արեւը նրա պաղած արիւնը չէր կարողանում ջերմացնել: Ժամերով նստած էր արեւի տակ, բայց չէր տաքանում: Այնքան մռայլ ու տխուր էր նրա դէմքը: Ես երբեք նրան չեմ մոռանալ. սեւ դէմքի վրայ ճերմակած գանգուր մազերը, աւելի էին խտացնում նրա թշուառութիւնը: Նա յիշեցնում էր մայր երկրից խլուած տրոպիք բոյսի, որ խամրում մեռնում է հիւսիսում: Նա արեւի տակ նստած երազում էր իր երկրի տաք արեւը... Ով գիտէ բախտի որ քմահաճոյքովն էր նա*

ընկել այս ցուրտ երկիրը: Ես նրան տեսնում էի ամէն օր իր դուան առաջ կծկուած: Բայց մի շաբաթից աւելի է, որ նա այլ եւս չկար. ամէն օր տուն գնալիս էլ չէի հանդիպում նրան: Նա մեռաւ: Այնքան չտաքացաւ, որ վերջը մեռաւ»[127]: Յայտնի է նաեւ, որ 1910ին մի վրացի վաճառական Թիֆլիս է բերել մի վեցամեայ սեւամորթ երեխայի՝ Բաշիր Չամբէին, «վասն զուարճութեան», ինչպէս ինքն է ասել: Այս սեւամորթը տարիներ անց դարձել է հրշէջ: Ամուսնացել է հայուհու՝ Ելենա Դանիէլեանի հետ: Նրանց սերունդները խառնուել են ռուսների եւ վրացիների հետ[128]:

Նուազ հետաքրքիր չեն հայ-սեւամորթ առնչութիւնները վաղ Խորհրդային Հայաստանում: Դեռեւս 1923ին գրաքննադատ Արտաշէս Կարինեանը հանդէս է եկել «Նեգրերի Գրականութիւնը» յօդուածով[129]: 1927ին Խորհրդային Հայաստան է այցելել Ամերիկայի սեւամորթ կոմերիտականների ղեկավար Ջոնսոնը, որը սովորելիս է եղել Մոսկուայում: Նա ծանօթացել է Հայաստանի Կոմերիտմիութեան աշխատանքներին: Յատուկ Երեւանի *Աւանգարդ* թերթի համար գրել է մի յօդուած, որ սկսել է *«Ամերիկայի ճնշուած նեգր երիտասարդութեան անունից ես ողջունում եմ ձեզ՝ Հայաստանի ընկերներ»* կոչով, այնուհետեւ ներկայացրել սեւամորթների հանդէպ կիրառուող ցեղային խտրականութիւնն ԱՄՆում, նրանց լինչահարման, մարդկային իրաւունքների պայքարի մասին: *Աւանգարդ*ում յօդուածի հետ մէկտեղ տպագրուել է Ջոնսոնի լուսանկարը ՀԼԿԵՄ Կենտկոմի Քարտուղար Լ. Մարտիրոսեանի հետ[130]: Յիրաւի, չափազանց տարաշխարհիկ է թւում սեւամորթ կոմերիտականի ներկայութիւնը 1920ականների վերջի նոր խորհրդային տարազի մէջ մտնող գաւառական Երեւանի խորքին...

1935ին Հայֆիլհարմոնիայում համերգով հանդէս է եկել սեւամորթ երգչուհի Արլէ Տիցը, որին նուագակցել է ամուսինը՝ ռուս դաշնակահար, պրոֆեսոր Բ. Բ. Տիցը: Սեւամորթ երգչուհին ի թիս ափրիկեան, հնդկացիական, Հերրիոեան կոզիների բնիկների երգերի եւ Չայկովսկու ռոմանսների՝ կատարել է նաեւ Կոմիտասի «Գարուն Ա» երգը[131]: Նմանապէս աւելի քան հետաքրքիր մի պատկեր՝ կոմիտասեան երգը սեւամորթ երգչուհու շուրթերին 1930ականների Երեւանի նորաստեղծ ֆիլհարմոնիայում...

Հայ գրականութեան մէջ եւ շարժանկարում երբեմն ներկայացուել են սեւամորթ հերոսներ: Դեռեւս 1930ին նկարահանուած Ա. Դանիէլեանի՝ պիոներական ճամբարի առօրեան ներկայացնող «Առաջին Ճառագայթներ»ը կամ «Ա՛յ Քեզ Տղաներ» խաղարկային շարժանկարի հերոսներից է եղել մի սեւամորթ (դերակատար՝ Հ. Դանիէլեան)[132]: 1956ին Ստեփան Կէորկովն էկրանաւորել է Պ. Աբրահամսի *Ամպրոպի Արահետով* վէպը, որի գործողութիւնները կատարւում են ՀԱՀում եւ ներկայացնում են սպիտակամորթ աղջկայ եւ սեւամորթ երիտասարդի սիրոյ պատմութիւնը: Երեւանից դուրս ստեղծուել են ափրիկեան բնապատկերներ պատկերող տաղաւարներ, նկարահանուել են ոչ միայն հայ եւ ռուս դերասաններ, այլեւ ափրիկեցի ուսանողներ, որոնց մէջ՝ Մակոյի դերակատար Տիտօ Ռոմալիօն[133]:

Ստեփան Ալաջաջեանի *Անապատում* վէպի գործողութիւնները կատարւում են 1942ին լիբիական անապատներում. գործող անձինք են բրիտանական վաշտի զինուորները, որոնց մէջ է նաեւ հայորդի Տիգրան Արագեանը, ինչպէս նաեւ կամերունցի սեւամորթ Քոմօն: Վերջինիս մասին հեղինակը նշել է. *«Նա յարգանք է ունեցել եւ յարգանք ունի դէպի սպիտակները: Սպիտակ ցե-*

ղը ինչ-որ բարձր արարած է, այդպէս ասել են հենց իրենք՝ կամերունի սպիտակները, այդպէս են ներչնչուել իրենք՝ նեգրերը, եւ նա հաւատում է այդ բանին. չէ՞ որ կամերունում մի սպիտակ պահում է մի քանի նեգրի, կարող է այդ նեգրերին սպանել, ծեծել, աշխատեցնել ինչպէս սեփական հորթուկին, չէ՞ որ սպիտակները կարող են գրքեր կարդալ, գրել են օգտագործում ճաշի համար, լաւ են հագնւում, իսկ ի՛նչ գեղեցիկ կանայք ունեն, ձիւնի պէս սպիտա՛կ»[134]:

Առանձնակի հետաքրքրութիւն են ներկայացնում հայերի եւ սեւամորթների առնչութիւնները Ամերիկայի Միացեալ Նահանգներում (որի հայ գաղթականներին, ի դէպ, ժամանակին եանկիները սեւամորթների տեղ դրած՝ ենթարկել են ցեղային խտրականութեան): ԱՄՆում բնակուող նախկին հայաստանցիները տեղի ափրիկեան ծագումով բնակչութեան համար նոր բառ հնարեցին՝ «սեւական», մինչ արեւմտահայերէնում շարունակում է գործածուել «խափշիկ» բառը: ԱՄՆի քաղաքացիական պատերազմի տարիներին (1861-1865) Լուիզիանա նահանգում բնակուել է հարուստ ագարակատէր Կիրակոսեանը: Նա ունեցել է սեւամորթ ստրուկներ, որոնց ազատութիւն է շնորհել: Սակայն հաւատարիմ ծառաները չեն ցանկացել լքել տիրոջը, շարունակել են ապրել նրա մօտ եւ կրել են նրա հայկական ազգանունը: Զարմանալի է, որ այդ սեւամորթների մօտ աւանդոյթ է դարձել իրենց զաւակներին հայկական անուններ տալը: 1950ին սեւամորթ Կիրակոսեանները բնակուելիս են եղել Փենինգ նահանգի Սենթ Հիլի շրջանում, Սենթ Լուիզ քաղաքում եւ Եուֆալա գիւղում: Սեւամորթ Պետրոս Կիրակոսեանի եւ խափշիկուհի Ջորջիանա Ուայթի զաւակները կոչուել են Խաչիկ, Հրանտ, Զաքար, Գարեգին, Անդրանիկ, Զաբէլ, Հայկանոյշ եւ Վերգինէ: Նրանց մասին պատմել է «Հայ Ազատ» ծածկանունով հանդէս եկող մի ամերիկահայ յօդուածագիր «Հայ անուն Կրող Խափշիկներ» յօդուածում[135]: Մի ամերիկահայուհի՝ Աստղիկ Սուրեանը, գրել է «Խափշիկ «Հայուհին», մի ամերիկացի սեւամորթուհու հետ իր հանդիպման մասին, որի մեծ հայրը հայ է եղել[136]:

1927ին 30ամեայ բեմադրիչ Ռուբէն Մամուլեանը (1898-1987) Նիւ Եորքի «Գիլդ» թատրոնում բեմադրել է Դիւբոուզ Հէյուրդի «Փորգի» պիէսը՝ արուեստի պատմութեան մէջ առաջին անգամ բեմ հանելով սեւամորթներից բաղկացած ոչ-պրոֆեսիոնալ մի դերասանակազմ: Լաւագոյնս ուսումնասիրած լինելով Չարլսթոնի սեւամորթների կեանքն ու կենցաղը՝ Մամուլեանին յաջողուել է ամենայն հարազատութեամբ վերարտադրել այդ մշակոյթն ամերիկեան բեմահարթակում: Ներկայացումը հսկայական յաջողութիւն է ունեցել եւ համարուել աննախադէպ երեւոյթ ամերիկեան թատրոնի պատմութեան մէջ: Ի՞նչն է սակայն յատկապէս նշանակալից տուեալ դէպքում. Մամուլեանի բեմադրութեան շնորհիւ ամերիկեան մտայնութեան մէջ նշմարուել է որոշ յեղաշրջում դէպի սեւամորթները, ամերիկացիները սկսել են համակրանքով եւ մարդավայել վերաբերուել նրանց հետ: Մամուլեանը բեմում ներկայացրել է արժանիքներ, որին մինչ այդ անհաղորդ էին մնացել սեւամորթներին վերից նայող սպիտակամորթները՝ նրանց ազգային ծէսերի գեղեցկութիւնը, երգ ու պարի իւրատեսակ թովչանքը, հոգեկան եւ մշակութային արժէքների ինքնատիպութիւնը: Սեւամորթներն իրենք էլ չէին կարող երախտապարտ չմնալ երիտասարդ հայորդուն, որը սիրային մի մելոդրամ կարողացել էր վերածել իրենց ազգային արժանապատուութիւնը շեփորող մի ասքի: Մամուլեանն իր բեմադրութեան լաւագոյն պարգեւը համարել է սեւամորթների անհուն սէրը եւ

նուիրուածութիւնն իր հանդէպ, որոնք հոգի չեն խնայել իր համար: Ինչպէս վկայել են բեմադրիչի ծնողները՝ *«Իւր խմբի սեւամորթները պաշտում են Նորան ու անուանում են իւրեանց ազատարար: Աքանչելի է տեսնել այն յարգանքն ու սէրը, որով շրջապատուած է Նա սեւամորթների կողմից»*[137]:

1970ականներին համայն աշխարհում մեծ հռչակ ձեռք բերեց սեւամորթ արձակագիր Ալեքս Հէյլիի *Roots* (Արմատներ) վէպը՝ ԱՄՆում սեւամորթների հանդէպ խտրականութեան մասին: Այն թարգմանուել է 17 լեզուներով, ներկայացուել հեռուստատեսութեամբ: Այդ ստեղծագործութիւնն արձագանգ է գտել նաեւ հայ իրականութեան մէջ, որպէս թերթօն, հատուածներ են տպագրուել Ստամբուլի *Մարմարա* օրաթերթում, Ռոբէր Հատտէճեանի թարգմանութեամբ, 1977 Յուլիսին: Ստեղծագործութեան ամերիկեան հեռուստաբեմադրութեան առթիւ ամերիկահայ հեղինակ Հոիփսիմէ Այվիսլեմը գրի է առել իր մտորումները. *«Այդ վայրկեանին, երբ դի-տում էի նկարը, ցանկութիւն ունէի ինձ մօտ նստած ունենալ մի սեւամորթ մամիկ: Ուզեցի ձեռքս դնել նրա ուսին, սեղմել նրան կրծքիս, սփոփելու համար եւ իրրեւ միխիթարանք բանալ նրա առաջ եթէ ոչ մեր հայոց պատմութեան անցեալի հատորները, այլ գոնէ 20րդ դարի դէպքերը, համեմատելու համար իրենց տառապանքը մերին հետ»*: Զուգահեռներ անցկացնելով հայոց եւ սեւամորթների պատմութեան մէջ՝ Այվիսլեմը շեշտում է, որ եթէ խափշիկների հանդէպ մեծագոյն անարդարութիւնն իրականացուել է ԺԷ.-ԺԸ. դարերում, ապա հայերի հանդէպ՝ «լուսաւորեալ» Ի. դարում: Նա բաղդատում է սեւամորթներին տուած նեգր անուանումը «գեաուր»ի հետ, եւ ապա եզրակացնում է. *«Երանի՛ ձեզ, որ վերջապէս Ալեքս Հէյլի ունեցաք եւ պիտի ունենաք ուրիշ «Արմատներ», ուրիշ արդարութիւն որոնողներ: Երանի՛ ձեզ, որ կարողացաք ցուցադրել ձեր մեծ վիշտը աշխարհով մէկ, չահեցիք նոր բարեկամներ, նոր ցաւակցողներ, նոր համակիրներ»*:

Սակայն հայերը մնում են սպիտակամորթ, ուստիեւ 1994ին Լոս Անջելըսում տեղի ունեցած սեւամորթների խռովութիւնը չէր կարող չաւարտուել նաեւ հայ զոհով (մոլեռանդների կողմից իր տանը սպանուել է հայուհի Լուսին Մարոնեանը, եւ համապատասխան «զրոյց» է տեղի ունեցել հայ եւ սեւամորթների խմբաւորումների միջեւ): Անյաջողութեամբ է պսակուել Հայաստանում սեւամորթ ուսանողներ ունենալու հարցը, չնայած վերջին տարիներին սեւամորթ ֆուտբոլիստներ են սկսել հանդէս գալ Հայաստանի ֆուտբոլի տարբեր խմբերում:

Աշխարհի տարբեր երկրներում, Ափրիկէից բացի, յայտնի են հայերի հետ սեւամորթների հետ ամուսնութիւնների դէպքեր (ԱՄՆ, Ֆրանսիա, Եթովպիա, Շուեդիա): Ուշագրաւ է, որ այդ ընտանիքների մեծ մասը կարողանում է արտայայտուել հայերէն: Հայ գրականութեան դասականներ Լեւոն Շանթի եւ Մուշեղ Իշխանի՝ Ֆրանսիայում եւ ԱՄՆում բնակուող սերունդների մէջ կան մոլատներ[138]: Մէյրի Լու Աւագեանը առաջին հայ օրիորդն էր ԱՄՆում, որ 1968ին ամուսնացել է սեւամորթի՝ Մոնթերէյի Լեզուագիտական Դպրոցի շրջանաւարտ Գորդոն Ջեքսոնի հետ[139]: Հատուկենտ սեւամորթներ կարելի է հանդիպել նաեւ Հայաստանում (որդեգրուածներ կամ հայ մայր ունեցողներ), ինչպէս՝ դերասան Հրանտ Ջաքարեանը, որ նկարահանուել է Տիգրան Խզմալեանի «Պիէռեկինօ Կամ Օղից Թեթեւ» կինոնկարում, իր սեւամորթ քրոջ հետ հանդէս եկել հայկական երգերի կատարումներով, 2003ին թողարկել «Hrant+Gayane» խտասկաւառակը (Parseghian Records): Հայ-սեւա-

մորք ծուլումի արդիւնք են նշանաւոր ֆրանսիացի կատակերգու Պասկալ Լեժիտիմուսը (ծն. 1959, Փարիզ), դուստրը անթիլցի Թէօ Լեժիտիմուսի եւ Մադլէն Քամպուրեանի, որ կապուած է ֆրանսահայ գաղութին, ամերիկեան կինոբեմադրիչ-օպերատորներ Այէն եւ Ալբերտ Հագս երկուորեակ եղբայրները (ծն. 1972)՝ ծնունդով իրանահայ Աիդա Մկրտչեանի որդիները: Արդի ռուսագիր բանաստեղծ Կ. Ս. Ֆարայը (ծն. 1971, Մոսկուա), նոյնպէս ունի հայ-ափրիկեան ծագում: Նրա հայրը եղել է գիմբաբուէցի, մայրը՝ հայուհի, ռուսագիր բանասէր, բանաստեղծուհի Ելենա Ազիզեանը (1931-1984): Ֆարայը բնակուել է ՀԱՀում, այժմ՝ ԱՄՆում, գրաղում է անգլօ-ամերիկեան բանաստեղծութեան ռուսերէն թարգմանութեամբ, *Լիմբ* ժամանակակից պոեզիայի հանդէսի գլխաւոր խմբագիրն է, հեղինակ է *Հրաժեշտ Կուրքերին* բանաստեղծութիւնների ժողովածուի:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ Ափրիկէ մայրցամաքը, բնակլիմայական եւ աշխարհաքաղաքական իր առանձնայատկութիւններով հանդերձ, միւս աշխարհամասերի նման հնագոյն ժամանակներից մինչեւ ԻԱ. դարի սկիզբը պարբերաբար գրաւել է հայ ժողովրդի ներկայացուցիչներին՝ ապահովելով հայկական փոքրաքանակ ներկայութիւն: Եթէ միջին դարերում հայերը հիմնականում յայտնւում էին Ափրիկէի հիւսիսում, ապա Ի. դարի սկզբից, տարբեր երկրների հայեր հաստատուել են ափրիկեան ամենատարբեր երկրներում՝ գբաղուելով հիմնականում առեւտրով եւ արհեստներով, ստեղծելով կարճատեւ գոյութեան դատապարտուած համայնքներ: Կարեւոր է նաեւ աշխարհի տարբեր երկրների հայ մասնագէտների մասնակցութիւնը ափրիկեան տարբեր պետութիւններում շինարարական, ճարտարապետական եւ գիտական ոլորտներում:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Եգիպտոսի հայ գաղթավայրի պատմութեան վերաբերեալ առկայ է հարուստ գրականութիւն, ինչպէս՝ Նազարէթ Աղազարմ, *Նորեր Եգիպտոսի Հայ Գաղութին Վրայ*, Գահիրէ, Զարեհ Ն. Պէրպէրեան, 1911. նաեւ՝ Ա. Գարտաշեան, *Նիւթեր Եգիպտոսի Հայոց Պատմութեան Համար*, Գահիրէ, Նուպար, 1943. նաեւ՝ Գ. Մըսըրլեան, *Ականաւոր Հայեր Եգիպտոսի Մէջ*, Գահիրէ, 1947. նաեւ՝ Արշակ Ալպոյաճեան, *Արաբական Միացեալ Հանրապետութեան Եգիպտոսի Նահանգը եւ Հայերը*, Գահիրէ, 1960. նաեւ՝ Յ. Թոփուզեան, *Եգիպտոսի Հայկական Գաղութի Պատմութիւն (1805-1925)*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ, 1978. նաեւ՝ Նուպար Տէր-Միքայէլեան, *Եգիպտահայ Գաղութը 10-15րդ Դարերում*, Պէյրութ, Տօնիկեան, 1980: Եթովպիայի հայ գաղթավայրի մասին տե՛ս՝ Յակոբ Գրիգոր, *Եթովպիոյ Հայ Եկեղեցին եւ Հայերը. Քննադատական Ուսումնասիրութիւն*, Վենետիկ, 1927. նաեւ՝ Հ. Բաբաբան, *Արդի Եթովպիան եւ Հայ Գաղութը*, Վենետիկ, 1930. նաեւ՝ R. Pankhurst, "The History of Ethiopian-Armenian Relations: Ancient Times," *Revue des études arméniennes*, Paris, vol. 12, 1977, vol. 13, 1978-1979: Վերջին ժամանակներս Եթովպիայի եւ Սուդանի հայ համայնքների վերաբերեալ ուսումնասիրութիւններով հանդէս են եկել անգամ ռուս հետազօտողներ՝ Իրկուցկի *Diaspori* (Սփիւռքներ) անկախ գիտական ամսագրում (տե՛ս՝ Eleonora Lvova, "Armianskaia Koloniya v Efiopii (Po Materialam Polevykh Issledovaniy)" [Եթովպիայի հայկական գաղթավայրը. ըստ դաշտային հետազօտութեան նիւթերի], *Diaspori: Nezavisimiy Nauchniy Jurnal*, no. 1-2, 2000, էջ 160-167; V. Gusarov, "Zarisovki Iz Jizni Armianskoi Obshchini v Khartume (seredina 70-kh gg.)"

(Պատկերներ Խարբումի հայ համայնքի կեանքից [1970ականների կէսեր]), նոյն տեղում, էջ 167-172):

[2] Հրաչեայ Աճառեան, *Հայ Գաղթականութեան Պատմութիւն*, Երեւան, 2002, էջ 464-466:

[3] Աշոտ Աբրահամեան, *Համառօտ Ուրուագիծ Հայ Գաղթականութեան Պատմութեան*, Հտր. Բ., Երեւան, Հայպետհրատ, 1967, էջ 97-98 :

[4] Կայիոսի Սալուստիոսի *Պատմութիւն Կատիլինեան Դաւակցութեան եւ Եուգուրթեան Պատերազմին*, թարգմ. Հ. Աբրահամ Վ. Ճարեան, Վենետիկ, 1856, էջ 176-178: Տե՛ս նաեւ՝ ռուսերէն թարգմանութիւնը՝ Gayus Sallyustii Krisp, *Sochineniya* (Երկեր), Մոսկուա, 1981, էջ 50-51:

[5] Աճառեան, *Հայ Գաղթականութեան*, էջ 464-465:

[6] Արշակ Ալպօյաճեան, *Պատմութիւն Հայ Գաղթականութեան. Հայերու Յրտումը Աշխարհի Զանազան Մասերը*, Հտր. 1, Եգիպտոս, Սահակ-Մեսրոպ եւ Նոր Աստղ, 1941, էջ 383-384:

[7] *Մանր Ժամանակագրութիւններ*, XIII–XVIII դդ., կազմեց Վ. Ա. Յակոբեան, Հտր. 2, Երեւան, Հայկ. ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիա, 1956, էջ 74:

[8] Նոյն:

[9] Նոյն, էջ 97:

[10] «Հայ Գաղութը Լիպիոյ Մէջ», *Ասպարէզ*, 12.05.1964:

[11] *Հայերէն Ձեռագրերի Ժէ. Դարի Յիշատակարաններ (1621-1640 Թուականներ)*, Հտր. Բ., կազմ. Վ. Յակոբեան, Ա. Յովհաննիսեան, Երեւան, Հայկ. ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիա, 1978, էջ 149:

[12] *Մանր Ժամանակագրութիւններ*, Հտր. 1, էջ 274:

[13] Աճառեան, *Հայ Գաղթականութեան*, էջ 465:

[14] «Աւետիք Բաղդասարեան Ընթերցող Տիգրանակերտցի, Վասն Որ Կամի Ի Հեպէշին Երկիրն Գալ, Ասպես Է», *Բազմավէպ*, 1897, թ. 10, էջ 459-463:

[15] Նոյն, էջ 463:

[16] V. A., Barbie Du Bocage, *De l'Introduction des Arméniens Catholiques en Algérie*, Paris, Amyot, 1855.

[17] Աճառեան, նոյն:

[18] Նոյն: Տե՛ս նաեւ՝ «Լիպիա. Ափրիկեան Տրիպոլիսի Հայերը», *Պայքար*, 23.07.1955:

[19] Սիսակ Յակոբ Վարժապետեան, *Հայերը Լիբանանի Մէջ*, Հտր. Ա., Պէյրութ, «Վանքէք», 1951, էջ 251:

[20] Մովսէս, «Հայ... Սուլէյման Քըրտահին», *Այգ*, 5.10.1968:

[21] Վահրամ Փափազեան, *Երկեր Հինգ Հատորով. Հտր. 1*, Երեւան, «Սովետական Գրող», Հրատ., 1979, էջ 126-128:

[22] «Հայ Զինուորի Մը Հերոսութիւնը Մարոքի Մէջ», *Հորիզոն*, 9.11.1913 (արտատպուած Պոլսի *Բիւզանդիոն*ից): Տե՛ս նաեւ՝ Աճառեան, *Հայ Գաղթականութեան*, էջ 466:

[23] Հայաստանի Ազգային Արխիւ, Պֆոնդ 430, ցուցակ 1, գործ 853:

[24] Նոյն, գործ 855:

[25] *Ճակատամարտ*, 28.04.1922 :

[26] *Լուսարձակ*, 23.07.1924. նաեւ՝ Ալ. Մարտունի, *Կուսակցութիւնները Գաղութահայութեան Մէջ*, Թիֆլիս, Պետական Հրատարակչութիւն, 1924, էջ 44-45:

[27] Հայաստանի Ազգային Արխիւ, Պֆոնդ 430, ցուցակ 1, գործ 856: Վարդանեանը կարեւոր տուեալ է յայտնել Իզմիրի հրդեհի մասին, գրելով. «*Պէտք է միշտ ուժգնօրէն հերքել ամէն տեսակ հրատարակութիւն, թէ հայերն են այրած Իզմիրը, տրուած ըլլալով, որ քեմալականները իրենց Ա. օրէն սկսան հայերը խողխողել եւ հազիւ հայեր իրենց թաքստոցները գտած կը պահուէին, յետոյ կրակը Քեմալի գրաւման 5րդ օրը պատահած ըլլալով անկարելի էր եւ հայ մը ոչ մէկ ատեն պիտի ուզէր իր բնակարանը ոչնչացնել։ Ատկէ մեծ սուտեր մ'ալ* Frank. Bouillon *կ'ընէ օրագրողներու յայտարա-*

բուֆեանց՝ յոյներու վրայ թողնելով կրակի հարցը: Իգմիր յաւագոյն Fire Brigade *մ՚ունենալով ուրիշ ատեններ երեք տունէ աւելի չէր այրեր, եւ այս անգամ 48 ժամ ուժանակ եւ* Benzine*ով կառավարութիւնը, անչուշտ քեմալական, ինք մասնաւոր ծրագրով մը այրեց: Ջմոռնամ ըսել, թէ ինքս* Alliance Francaise *(Իգմիր) ապաստանողներէն ըլլալով* Lucas Essayan *տան փաստաբան իտալացի* Ricchi, *իբր տոյն տան պաշտօնեան կիրակի օրը եկան ինձ ըսել, թէ հայերու բնաջնջման ծրագիր կայ, քառորդ ժամ չմնաք եւ մեկնիք»*:

[28] Նոյն:

[29] Անցորդ, «Հայերը Քասապլանքայի Մէջ», *Արեւելք*, 22.12.1934:

[30] «Հայ Բարերար Մը», *Հայաստանի Կոչնակ*, 9.08.1941, էջ 787:

[31] «Հայերն Ալժերիի Մէջ», *Արմենիա*, 26.05.1915:

[32] «Նամակ Ալժերիէն», *Արմենիա*, 8.05.1918:

[33] «Յիրուցաւ Հայեր Ալժերիոյ Մէջ», *Հայրենիք*, 25.08.1929: Նոյնը տե՛ս *Եփրատ*, 24.08.1929:

[34] Հայաստանի Ազգային Արխիւ, Պֆոնդ 374, ցուցակ 1, գործ 13-15:

[35] «Հայերը Ալճերիոյ Մէջ», *Հայրենիք*, 30.07.1931:

[36] Սերովբէ Մխիթարեան, *Թրանսերէնով Արտայայտուող Հայ Արուեստագէտներ*, Փարիզ, Արաքս, 1969, էջ 302-303:

[37] Անշէն Որբուկ, «Նամակներ Ալճերիայէն. Հայկական Գաղութը», *Յառաջ*, 10.03.1931:

[38] Տե՛ս «Երեք Շէն Գաղութներ. Մարոք, Ալժիրիա եւ Թունիս», *Ալիք*, 19.01.1936:

[39] «Ալճերիոյ եւ Թունուզի Հայերը», *Հայրենիք*, 28.01.1936: Ի դէպ, 2007ին շուշեցի մեքենավար Սուրէն Բաղդասարեանը անձնական զրոյցում մեզ յայտնել է, որ 1970ականների սկզբին, ծառայելով Եգիպտոսում տեղակայուած խորհրդային նաւատորմում, հնարաւորութիւն է ունեցել այցելել Ալժիրի եւ Թունիսի նաւահանգիստները եւ Բոն (ներկայումս՝ Անաբա) քաղաքում իրեն է մօտեցել տեղաբնակ մի հայ եւ ասել, որ ունի սեփական ոսկերչական խանութ:

[40] «Հայ Բարերար Մը»:

[41] «Յանուցիր Հայեր Մարոքի Մէջ», *Հայրենիք*, 8.01.1936:

[42] «Հայերը Թունուզի Մէջ», *Հայաստանի Կոչնակ*, 27.08.1949, էջ 836:

[43] Թղթակից, «Գազապլանքայի Հայ Գաղութի Կեանքէն», *Ձայն Փարիզի*, 4.02.1949:

[44] Թեհլերեանի կենսագրութեան այս շրջանը մինչեւ վերջերս մնում էր անծանօթ, մինչեւ որ ի յայտ եկան Կասաբլանկայի երբեմնի բնակչուհի Պերճուհի Սիմոնեանի յուշերը, որը նա տրամադրել է 1990-1992ին Մարոկկոյում բնակուած Սեդա Գրիգորեանին: Տե՛ս Արտակ Մաղալեան, «Մոռացուած Էջեր (Սողոմոն Թեհլերեանի Կեանքից)», *Դրօշակ*, 2004, թ. 4, Հոկտեմբեր-Դեկտեմբեր, էջ 75-79:

[45] Ժամանակին մամուլում աչքով ընկել են Արաբսի Վարուժանից բանաստեղծութիւններ, որոնք կրել են «Կասաբլանկա» նշումը:

[46] Տե՛ս Հայաստանի Ազգային Արխիւ, գործ 875, ցուցակ 4, գործ 360, թիւ 2-4 :

[47] Արծուի Բախչինեան, *Հայազգի Գործիչներ Հնագոյն Ժամանակներից Մինչեւ Մեր Օրերը. Կենսագրական Բառարան*, Երեւան, Զանգակ-97, 2002, էջ 104-105:

[48] Վահան Համբարձումեան, *Գիտաշխարհ*, Երեւան, Ամարաս, 2000, էջ 7: 2000ի Սեպտեմբերին Երեւանում հանդիպել ենք Միրէյ Համբարձումեանին, որը մեզ որոշ տեղեկութիւններ է յայտնել մարոկկահայ համայնքի մասին:

[49] «Հայերը Հիւսիսային Ափրիկէի Մէջ», *Հայաստանի Կոչնակ*, 27.10.1956, էջ 929:

[50] «Մարոքի Հայերը», *Ազդակ*, 22.09.1959: Աւելի վաղ նոյն *Ազդակում* տպագրուել էր, թէ այդ թուականին Մարոկկոյում բնակուել է մօտ հարիւր հայ ընտանիք (տե՛ս «Հայերը Կը Պատուեն Քազապլանքայի Կառավարիչ Սի Ահմէտ Պարկաշը», *Ազդակ*, 14.07.1959):

[51] «Հայ Կոփամարտիկ Մը Ալճերիոյ Ախոյեան», *Հայաստանի Կոչնակ*, 26.08.1950, էջ 811:

[52] http://www.thefitblog.net/2009/02/the-fit-blog-spotlight-sofia-boutella.html

[53] 1928ին նկարահանուած «Արեւմուտք» շարժանկարում Բագրատիդը կատարել է մարոկկացի էմիր Թայէբ ալ Հանիի դերը: Նկարահանումները կատարուել են Սահարայում, Մարակէշի շրջանում, որտեղ արաբական ցեղերից մէկի մարդիկ հայազգի դերասանին ճմաճեցրել են իրենց հակառակորդին եւ բիչ է մնացել սպանեն նրան («Պ. Տը Բագրատիդ Մեր Մէջ», *Կամոջ*, 3.06.1928): Իսկ Աբէլ Գանսի «Արաբը» («Արաբների Կառավարիչը») շարժանկարի՝ Հիւսիսային Ափրիկէում նկարահանումների ժամանակ թուրք կառավարիչ Ռեթս Իճգրամի դերակատար Մաքս Մաքսուտեանին են մօտեցել մի քանի թուրքեր, որոնք դերասանին իրենց վաղիի տեղն են դրել: Նրանք մի շնորհագիր են ներկայացրել Մաքսուտեանին՝ Անկարա ուղարկելու համար, եւ դերասանին չի մնացել անել ոչինչ, եթէ ոչ լրջօրէն վերցնել թուղթը ու դնել գրպանը (*Mon Ciné*, Paris, 31.12.1925, տե՛ս՝ «Դերասան Մաքսուտեան», *Արագած*, Փարիզ, 1-15.01.1926, էջ 12):

[54] Յակոբ Մանուկեան, *Քեմանչիստ Ռուբէնի Յուշերը*, Պէյրութ, 1989, էջ 83:

[55] «Մեր Արուեստագէտներն ու Մտաւորականները Արտասահմանի Մէջ», *Անահիտ*, 1930, Մայիս-Յունիս, թիւ 1, էջ 126:

[56] Արծուի Բախչինեան, *Հայերը Համաշխարհային Կինոյում*, Երեւան, Գրականութեան եւ Արուեստի Թանգարանի Հրատարակչութիւն, 2004, էջ 420:

[57] Նոյն, էջ 372:

[58] Միսիքարեան, *Թրանսերէնով Արտայայտուող*, էջ 159:

[59] Գառնիկ Ստեփանեան, *Կենսագրական Բառարան*, Հտր. Ա., Երեւան, «Հայաստան» Հրատ., 1973, էջ 36:

[60] «Թուճուճ», Լեւոն Քեշիշեանի Նոր Ժապաւէնը», *Ասպարէզ*, 8.05.1964:

[61] Անձնական էլ-գիր, 15.03.2009:

[62] «Լիպիա. Ափրիկեան Տրիպոլիսի Հայերը», *Պայքար*, 23.07.1955:

[63] «Հայ Գաղութը Լիպիոյ Մէջ»:

[64] Հայաստանի Ազգային Արխիւ, գործ 362, ցուցակ 13, գործ 54 [էջ 9բ]:

[65] Թորոս Թորանեան, «Առօրեայ Խօսակցութիւն», *Նոր Օր*, 9.12.2006:

[66] Թորոս Թորանեան, *Ուղեւորութիւն Դէպի Թայլանտ ու Չինաստան*, Հալէպ, Կիլիկիա, 2004, էջ 47:

[67] Անձնական էլ-գիր, 6.11.2008:

[68] Armenian ambassador to Morocco handed copies of credentials to Moroccan FM, Pan Armenian 31.10.2005 23:39 GMT+04:00 (PanARMENIAN.Net), տե՛ս նաեւ՝ http://www.armtown.com/news/am/pan/20051031/15252/

Մեր օրերում Մարոկկոյի հայերի մասին մի բոլոցիկ տեղեկութիւն ենք հանդիպել ֆինլանդարնակ նկարիչ Արամայիս Աւետիսեանի՝ հայ մամուլին տուած հարցազրոյցում: Մարոկկոյի Կասաբլանկա քաղաքում ֆինն նկարիչների ցուցահանդէսին նրան է մօտեցել Մարոկկոյում Եւրոմիութեան ներկայացուցիչը եւ հետը խօսել վարժ արեւմտահայերէնով, յետոյ կարդացել Սիամանթոյի եւ Վարուժանի բանաստեղծութիւնները: Ապա նրանց գրոյցին է միացել մէկ ուրիշը եւ յայտնել, որ ինքն էլ ֆրանսահայ է (Ռուբէն Հայրապետեան, «Յանկարծ Գիւմրիում Չիմանան», *Ազգ*, 21.09.2007):

[69] Ղուկաս Վանանդեցի, *Գանձ Ցափոյ, Կշռոյ, Թուոյ եւ Դրամից Բոլոր Աշխարհի*, Ամստերդամ, 1699, էջ 55-56:

[70] Philip D. Curtin, *Cross-Cultural Trade in World History*, Cambridge University Press, 1994, էջ 200:

[71] Զոհրաբ Նալբանդեան, «Հարաւ-Ափրիկեան Հանրապետութիւն», *Հայ Սփիւռք Հանրագիտարան*, Երեւան, Հայկական Հանրագիտարան Հրատարակչութիւն, 2003, էջ 351:

[72] Աճառեան, *Հայ Գաղթականութեան Պատմութիւն*, էջ 473-474:

[73] Ե. Գ. Աղաթօն, «Ո՞վ է Երուանդ Յակոբեան եւ Ի՞նչպէս Բարերար Անդամ Եղաւ Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան», *Միութիւն*, 1913, թ. 14, էջ 41. Նաեւ՝ Հրաչեայ Աճառեան, *Կեանքիս Յուշերից*, Երեւան, «Միտք», 1967, էջ 39-40:

[74] Լէօն Սապոնճեան, *Իսթանպուլահայ Սբառւտի Մը Հետիոտն եւ Արկածախնդրական Շրջապտոյտը*, ֆրանսերէնէ թարգմանեց՝ Թ. Գառնիկ, Կ.Պոլիս, Տողու, 1956:

[75] «Քենիայի Հայերը», *Նոր Աշխարհ*, 6.05.1967:

[76] Թէոդիկ որդի, «Հարաւային Ափրիկէի Հայերը», *Հայաստանի Կոչնակ*, 22.01.1944, էջ 82-83, 29.01.1944, էջ 107-109:

[77] «Նիկերիոյ Հայ Գաղութը», *Հայաստանի Կոչնակ*, 9.06.1951, էջ 549:

[78] Սուրէն Ա. Տատրեան, *Նիկերիա եւ Նիկերահայ Գաղութը*, Պէյրութ, Լա Ֆոթօ-բրէս, 1958:

[79] Նոյն ժամանակահատուածում սփիւռքահայ մամուլն էլ վկայել է, որ Նիգերիայում 1928ին 2000 սպիտակամորթ բնակչութեան մէջ եղել է ընդամէնը երեք հայ (տե՛ս՝ «Յիրուցաւ Հայեր. Երեք Հոգի Ալ՝ Նիկերիա», *Յառաջ*, 23.06.1928):

[80] Տատրեան, *Նիկերիա եւ Նիկերահայ*, էջ 115:

[81] Մովսէս Խեչօ, «Մանուէլը՝ Լագոսից», *Առաւօտ*, 2.04.2009:

[82] «Լուրեր Քենիայէն», *Հայաստանի Կոչնակ*, 27.08.1955, էջ 837. նաեւ՝ «Հայերը Քենիայի Մէջ», *Պայքար*, 2.11.1955:

[83] Տատրեան, *Նիկերիա եւ Նիկերահայ*, էջ 12:

[84] Նալբանդեան, «Հարաւ-Ափրիկեան Հանրապետութիւն», նոյն:

[85] Արտատպութիւնը տե՛ս՝ *Զարթօնք*, 27.08.1981, նաեւ՝ *The Armenian Reporter*, 28.08.1980.

[86] Նալբանդեան, «Հարաւ-Ափրիկեան Հանրապետութիւն», էջ 352:

[87] Յակոբ Վարդիվառեան, «Ապիճանը Իր Հայութեամբ», *Զարթօնք*, 15.11.1995: Նոյնը տե՛ս անգլերէն՝ "Abidjan With Its Armenians," *The Armenian Reporter*, 1.09.1999:

[88] Narciso Binayan Carmona, *Entre el Pasado y el Futuro: Los Armenios en la Argentina*, Buenos Aires, 1996, էջ 48:

[89] Յովսէփ Խուրշուդեան, «Սփիւռքահայ Գաղթօջախների եւ Համայնքների Կապիտալի, Ինովացիոն-Տեխնոլոգիական եւ Մտաւոր Ներուժի Հաշուառում, Քարտէզագրում եւ Դասակարգում», *Հայաստան 2020. Զարգացման եւ Անվտանգութեան Ռազմավարութիւն*, Երեւան, 2002, էջ 365:

[90] Լ. Քափսքիքդէյլ, «Հայերը Հարաւային Ափրիկէի Մէջ», *Զարթօնք*, 27.08.1981:

[91] «Հայ Գաղութ Մը Հարաւային Ափրիկէի Մէջ», *Յառաջ*, 7.09.1957: Մաու Մաու շարժումը սկիզբ է առել Քենիայում 1950ականներին, որի գլխաւոր նպատակն էր երկրից հեռացնել բրիտանական կառավարումը եւ եւրոպացի բնակիչներին:

[92] G. Vardanian, «Iz Amerikanskoy Jizni» (Ամերիկեան կեանքից), *Russkaya Misl*, 17.08.1961.

[93] Վարդիվառեան, «Ապիճանը» :

[94] Վարդիվառեան, «Ապիճանը»: Ի դէպ, Խորհրդային Միութեան ժամանակա-շրջանում սեւամորթ Ափրիկէի երկրներում աշխատել են մի շարք հայ մասնագէտներ՝ բժիշկներ, գիտնականներ, արուեստագէտներ: Երբեմն աֆրիկեան երկրներում անց են կացուել ԽՍՀՄ օրեր՝ Հայկական ԽՍՀ օրինակով: 1983ին Մադագասկարում կազմակերպուել են երեւանեան օրեր, ներկայացուել են Հայաստանը պատկերող լուսանկարներ, ցուցադրուել են Երեւանի Մանկական Պատկերասրահի աշխատանքներից (տե՛ս՝ «Տար. Ջերմ Օրեր Անտանանարիվոյում (sic)», *Սովետական Արուեստ*, 1983, թ. 12, էջ 50): 1989ին հայաստանեան օրեր են կազմակերպուել Ան-

գոլայում եւ Կոնգոյում: Հայաստանեան պատուիրակութեան մէջ եղել են մշակոյթի գործիչներ, ներկայացուել է «Հայաստան. Երկիրը եւ Մարդիկ» լուսանկարչական ցուցահանդէսը, նկարչուհի Լաւինիա Բաժբէուկ-Մելիքեանի ցուցահանդէսը, «Ափրիկէն Հայ Երեխաների Աչքերով» ցուցահանդէսը, գորգեր, ասեղնագործութիւն, ելոյթներ է ունեցել «Երեւան» ջազ համոյթը: Երեխաների 10 աշխատանք նուիրուել է Կոնգոյի կառավարութեանը: Միջոցառումներին ներկայ են եղել նաեւ Կոնգոյում բնակուող հայերը («Հայկական Օրեր Ափրիկէում», *Հայրենիքի Ձայն*, 27.12.1989):

[95] Յակոբ Վարդիվառեան, «Հայոց «Կռունկ»ները Ապիճանէն... Փարիզ», *Ապագայ*, 9.09.1991:

[96] Վարդիվառեան, «Ապիճանը»:

[97] Յակոբ Վարդիվառեան, «Արեւմտեան Ափրիկէի Ջաղացպան Հայը», *Նոր Մարմարա*, 6.07.1988:

[98] Վարդիվառեան, «Ապիճանը»:

[99] Բախչինեան, *Հայազգի*, էջ 104:

[100] «Մոնրովիայի Հայ Գոհարավաճառին Նուէրը Հանրապետութեան Նորընտիր Նախագահին», *Մշակ*, 14.11.1971:

[101] Քափսիքրդէյլ, «Հայերը Հարաւային»:

[102] «Եղեռնի Քարտէսագիր Էօճիւրեան», *Հորիզոն*, 23.03.1987:

[103] «Հայ Պրոֆեսորը Ափրիկեան 8 Երկրների Վիրաբուժական Կազմակերպութեան Նախագահ. Հարցազրոյց Պրոֆ. Գրիգոր Երզնկացեանի Հետ», վարեց Յակոբ Ծուլիկեանը, *Ազգ*, 12.07.2007:

[104] Տե՛ս նրա «Պարտէզիս Թառամած Ծաղիկները» բանաստեղծութիւնը, *Նոր Օր*, 6.05.1969:

[105] «Հայ Բանաստեղծ Մը Ի Մադագասկար», *Հայաստանի Կոչնակ*, 1968, էջ 358: Մադագասկարում հայերի բնակութեան մի լրացուցիչ ապացոյց է Ստեփան Ալաջաջեանի «Մայրիկի Համար» պատմուածքը, որը ներկայացնում է Մադագասկարին մերձ Կոմորէզ կղզում ապրող երկու հայերի՝ Մարկոս-Մարկիճ եւ Թովմասիճ (տե՛ս՝ Ստեփան Ալաջաջեան, *Մաղէնն Ապրում Է Փարիզում*, Երեւան, Հայաստան Հրտ., 1975, էջ 64-71):

[106] Քափսիքրդէյլ, «Հայերը Հարաւային»:

[107] Ազգային էլեկտրոնային նամակ Փոլ Հայկ Փամպուքեանից, 25.11.2007:

[108] «Արշակ Ժաք Մուրատեան Նոր Հեպրիտեան Կղզիներու Կառավարիչ», *Ջահակիր*, Կահիրէ, 24.11.1966:

[109] Տ. Ծ. Միսաքեան, «Արդիական Ճարտարապետութեան Վարպետ Մը. Գէորգ Արսէնեան», *Յառաջ*, 11.08.1954:

[110] Բախչինեան, *Հայազգի*, էջ 208:

[111] Արամ Սեփերճեան, *Ես Սեւ Եմ Բայց Գեղեցիկ*, Պէյրութ, Տպարան Զարթօնք, 1985:

[112] Հայկ Նազգաշեան, *Ափրիկեան Անտառներուն Մէջ*, Երեւան, Սովետական Գրող, 1982: Այս հատորի բնօրինակը հրատարակուել է է Բէյրութում, 1979ին՝ *Որսորդի Ուղիներով*: Նազգաշեան հրատարակել է նաեւ նման բնոյթի մի այլ հատոր՝ *Մարկերիբայի Առիւծները*, Բէյրութ, 1981ին:

[113] Բախչինեան, *Հայազգի*, էջ 71:

[114] Նոյն, էջ 40:

[115] Ա. Խրիմեան, «Մադագասկարի Շքանշանը», *Սովետական Հայաստան*, 1986, p. 2, էջ 7:

[116] An Architect and Artist from the Middle East Call Sweden "Home," *AGBU*, volume 10, no 1, February 2000, p. 6.

[117] http://opionteke.narod.ru/gayana.html

[118] Վ. Տոմոմեանց, «Քոմփերացիան Նեգրերի Մէջ», *Հայրենիք*, 8.02.1936:

[119] "Carole Sarkisian Speaks at Negro Conference in Florida", *Լրաբեր*, 9.07.1963:

[120] Բախչինեան, *Հայազգի*, էջ 275:
[121] *Հայկական Սովետական Հանրագիտարան*, հատոր 6, Երեւան, 1979, էջ 20:
[122] *Ոսկէ Ծիրան. Երեւանի Հիմներորդ Միջազգային Կինոփառատօն, 13-20 Յուլիս, 2008. Կատալոգ*, Երեւան, 2008, էջ 19:
[123] Ըստ ՀԱՀի հայերի հետ ունեցած ելեկտրոնային նամակագրութեան:
[124] Ըստ նրանց պաշտօնական կայքէջի՝ http://www.armeniansa.co.za/ կազմակերպութիւնն ունի հետեւեալ վարչական մարմինը՝ Մարթին Սուսմայեան (նախագահ), Գուրգէն Ճաղլասեան (փոխնախագահ), Վիգէն Տէր-Սարգսեան (գանձապահ), Էրիք Գայայեան, Վլադիմիր Յակորեան, Էդուարդ Սիրակաճեան եւն.:
[125] "Armyanin, On i V Afrike Armyanin" (Հայը նաեւ Ափրիկէում է հայ), *Novoye Vremya*, 16.11.2001.
[126] Bling-bling Boys From Abroad; Kenya. (Armenians Deported From Kenya), *The Economist* (US), June, 2006, տե՛ս՝ http://findarticles.com/p/articles/mi_hb5037/is_200606/ai_n18252302.
[127] Միքայէլ Մանուէլեան, «Նեգրը», *Գեղարուեստ*, 1911, p. 4, Թիֆլիս, էջ 112:
[128] Van Baiburt, "An African in Tbilisi", *Armenian Mirror-Spectator*, 12.01.1985.
[129] Արտաշէս Կարինեան, «Նեգրերի Գրականութիւնը (Ըրնէ Մարաճ, «Բատուալա», վէպ)», *Պայքար*, 1923, p. 1, էջ 4-5:
[130] «Ինչպէս է Ապրում Նեգր Երիտասարդութիւնը. Սեւամորթ Կոմերիտական Ընկ. Ջոնսոնի Յօդուածը», *Աւանգարդ*, 9.07.1927:
[131] «Երգչուհի Արլէ Տիցի Համերգները», *Խորհրդային Արուեստ*, 1935, p. 4, էջ 12:
[132] *Հայկական Կինօ 1924-1999. Լիակատար Կատալոգ*, Երեւան, Արտագերս, 2000, էջ 11:
[133] Նոյն, էջ 19:
[134] Ստեփան Ալաջաջեան, *Երկեր երեք Գրքով. Գիրք 1*, Երեւան, Սովետական Գրող, 1976, էջ 38:
[135] *The Armenian Mirror-Spectator*, 11.08.1951:
[136] Աստղիկ Սուրեան, «Խափշիկ «Հայուհին», *Հայաստանի Կոչնակ*, 18.07.1942, էջ 986:
[137] Հայաստանի Ազգային Արխիւ, Պֆոնդ 395, ցուցակ 1, գործ 77, վաւերագիր 10:
[138] Ըստ այդ անձանց անձամբ ճանաչած մարդկանց կողմից կատարուած բանաւոր վկայութիւնների:
[139] «Միացեալ Նահանգներու Մէջ Առաջին Հայ Օրիորդը Ամուսնացաւ Սեւամորթի Մը Հետ», *Արեւ*, 12.04.1968:

THE ARMENIANS IN NORTHERN, CENTRAL AND SOUTH AFRICA
(Summary)

ARTSVI BAKHCHINYAN
artsvi@yahoo.com

The article is a compilation of data and information about Armenian travelers, inhabitants and communities in Northern, Central and Southern Africa, a change from the history of Armenians in African countries like Egypt, Ethiopia and Sudan, which are relatively better researched.

The first evidence of the Armenian presence in Africa is in the Jugurthine War (between Rome and Numidia) in 115-105 B.C., when Armenian soldiers remained in Northern Africa and participated in the formation of the Moor nation. In the early Middle Ages several Armenian military figures from the Byzantine Empire led military operations in Northern Africa.

During the medieval period a few Armenians appear occasionally in various parts of the African continent. The first Armenian settlements in Algeria and Libya are dated in the 1880s. Groups of Armenian survivors from the genocide in the Ottoman Empire in 1915-1922 settled in Algeria, Tunisia and Morocco, after arriving there by sea. In 1955-1956 there were 80 Armenian families (about 400 people) in Morocco, 120 families (circa 500 people) in Algeria, 25 families (around 80 people) in Tunisia and 70-80 families in Libya.

At the beginning of the 20th century some Armenians settled in different parts of "black" Africa. Some of the ethnic Zairians belonged to the Armenian Apostolic Church. Large Armenian communities existed in Nigeria and South Africa.

Generally, the Armenians were involved in business, trade and crafts. Armenian artists and intellectuals contributed to the growth and development of local architectural, public health and scientific activities in diverse African states.

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՌՆԱԴԱՏՈՒԱԾ ՓԻԼԻՍՈՓԱՅ ՄԻՍԱԿ ԽՈՍՏԻԿԵԱՆԻ ԿՈՐՍՈՒԱԾ ՀԱՄԱՐՈՒՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ[1]

ՆԱՏԱԼԻԱ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
harutyunyan.natalie@gmail.com

Ի. դարի 30ականների ստալինեան հալածանքների զոհերի՝ բռնադատուած մտաւորականների անուանների վերականգնման եւ նրանց գիտական, ստեղծագործական եւ բարոյական ժառանգութեան իմաստաւորման հարցերը Հայաստանում սկսել են հրապարակաւ արծարծուել միմիայն 1960ականներին: Մինչ այդ ժամանակը տիրում էր որոշակիօրէն ձեւակերպուած պաշտօնական մի «կարծիք», ըստ որի բռնադատուածներն ու նրանց ընտանիքների անդամները «ժողովրդի թշնամի» էին: Այդ կարծիքին, որն արդէն կարծրատիպի էր վերածուել, այն տարիներին որեւէ այլ կարծիք հակադրելն իմքնին վտանգաւոր էր: Բնականաբար, նման քաղաքականութիւնը չէր կարող բոլորովին կասեցնել գիտութեան զարգացումը, բեւ ծանրագոյնս անդրադարձաւ գիտնականների հոգեվիճակի եւ ինքնագիտակցութեան վրայ:

Փիլիսոփայ, պատմագէտ, բանասէր եւ մանկավարժ դոկտոր Միսակ Խոստիկեանն այդ տարիներին բռնադատուած հազուադէպ մտաւորականներից մէկն է, որի մտքերի ու գործերի ճակատագիրը համանման է Խորհրդային Միութեան բոլոր ազգերի մտաւորականների ճակատագրերին, որոնք կամ մոռացուել կամ էլ այս կամ այն կերպ խեղաթիւրուել են: Այսօր, փորձելով վերականգնել պատմական ճշմարտութիւնը, մենք պիտի նկատի ունենանք, որ մեզ հասանելի ստոյգ տեղեկութիւնները շատ սուղ են եւ նրանց մեկնաբանումը շուրջ 70 տարի յետոյ կարող է ճշգրտուել միայն պատմական եւ հոգեբանական այդ բարդ համատեքստում: Այս առումով սոյն յօդուածի նպատակն է հարցի բարձրացումը եւ բանավէճի հնարաւոր ուղղութիւնների նշմարումը, այլ ոչ հարցերի վերջնական պարզաբանումը:

Առաջին հրապարակումներից մէկը, ուր խօսւում էր ստալինեան զոհերի մասին, դարձաւ Լուդուիգ Ղարիբջանեանի գիրքը՝ հիմնուած Երեւանի Պետական Համալսարանի արխիւի մանրակրկիտ ուսումնասիրման վրայ[2]: Նման փաստացի նիւթի հրապարակումն ինքնին մեծ իրադարձութիւն էր եւ մեծ ոգեւորութիւն առաջ բերեց[3]: Յիշատակուած մօտ 20 բռնադատուած անուանի գիտնականների մի մասը գնդակահարուած, միւսները՝ աքսորավայրերում մահացած կամ յետագայում արդարացուած էին եղել: Սակայն Խոստիկեանի անունը այդ գրքում յիշատակուած չէր: Ըստ գրքի հեղինակի բացառիկ վկայութեան՝ նրա անունը *«չի յիշատակւում Երեւանի Պետական Համալսարանի արխիւի որեւէ փաստաթղթում, նոյնիսկ առճակատուկաններում»*:

Մէկ այլ գրքում՝ նուիրուած Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի յոբելեանին, կան այլ տուեալներ: Մասնաւորապէս ասուած է. *«յատկանշական է, որ Ներսիսեան դպրոցի նախկին ուսուցիչներ Մանուկ Աբեղեանը, Յակոբ Մանանդեա-*

նը, Գուրգէն Էդիլեանը, Ստեփան Լիսիցեանը, Ստեփան Մալխասեանը, Արշակ Տոնեանը, Միսակ Խոստիկեանը, Տիգրան Մուշեղեանը, Աւետիք Տէր-Պօղոսեան եւ ուրիշներ ակտիւ մասնակցութիւն են ունեցել Երեւանում Պետական Համալսարանի կազմակերպման գործում եւ հանդիսացել են այն կորիզը, որի շուրջը համախմբուել եւ ստեղծուել է համալսարանի պրոֆեսորա-դասախօսական կազմը (ընգծումը մերն է - Ն.Յ.)»[4]:

Հետաքրքրական է, որ Պետական Անվտանգութեան Կոմիտէում պահուող Միսակի կնոջ՝ Օլգա Խոստիկեանի նամակներից մէկում պարզորոշ կերպով գրուած է, որ «վերջին տարիներին» իր ամուսինն աշխատել է *«Մոլոտովի անուան Երեւանի Պետական Համալսարանում եւ Բժշկական Ինստիտուտում՝ կրթելով հազարաւոր մասնագէտների»*[5]:

Հայաստանի Ազգային Արխիւում այժմ գտնւում են ՊԱԿից բերուած երկու թղթապանակներ, որոնցից մէկում միաւորուած են Խոստիկեանի կնոջ նամակներին պաշտօնեայ անձանց կողմից տրուած գրաւոր պատասխանները: Դրանց համաձայն ՀԽՍՀ յատուկ եռեակի կողմից 1938 Օգոստոսին որոշում է կայացուել Խոստիկեանին գնդակահարելու մասին[6]: Հնարաւո՞ր է արդեօք, որ 1938ի Օգոստոսին կայացուած գնդակահարման որոշումը յետագայում վերանայուած լինէր՝ փոխարինուելով որեւէ այլ պատժամիջոցով, ստոյգ պատասխան չկայ: Օլգա Խոստիկեանի մէկ այլ նամակում կայ տեղեկութիւն թէ 1938 Օգոստոսին իր ամուսնուն տեղափոխել են Ներքին Գործոց Ժողկոմխորհրդի նկուղից քաղաքային բանտի շէնքը, որից յետոյ պատրաստում էին ուղարկել նրան դէպի *«հեռաւոր ճամբարներ՝ առանց նամակագրութեան իրաւունքի»*[7]: Անորոշութիւնն այս հարցում որեւէ կերպ չի պարզաբանում նաեւ *Հայկական Համառօտ Հանրագիտարանում* զետեղուած յօդուածը[8]: Այնուամենայնիւ, նկատի առնելով *Հանրագիտարանի* մէջ տեղ գտած տեղեկութիւնների կարեւորութիւնը որեւէ այլ պաշտօնապէս ընդունուած կենսագրականի բացակայութեան դէպքում[9], ինչպէս նաեւ նրա հանրամատչելիութիւնը, յարմար ենք գտնում բերել ամբողջութեամբ՝ քննարկելի դարձնելու եւ լրացնելու նրանում եղած վիճելի կամ թերի տուեալները:

«Խոստիկեան Միսաք Թովմասի (1881, Վան-1938), փիլիսոփայ, մանկավարժ: Աւարտել է Էջմիածնի Գէորգեան Ճեմարանը, ուսումը շարունակել Շուէյցարիայում: Դաւիթ Անյաղթի ժառանգութեան առաջին ուսումնասիրողներից է. «Դաւիթ Անյաղթի Փիլիսոփայութիւնը» թեմայով 1907ին Գերմանիայում պաշտպանել է դոկտորական դիսերտացիա: 1908ից դասաւանդել է Գէորգեան Ճեմարանում, Թիֆլիսի Ներսիսեան, Ցուխնանեան դպրոցներում, Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից յետոյ՝ ԵՊՀում եւ այլ ԲՈՒՀերում: Անհիմն բռնադատուել է, յետագայում արդարացուել:

Երկ. David Der Philosoph. Bern.1907»[10]:

Համեմատենք այս տեքստը Խոստիկեանի ձեռքով գրուած կենսագրութեան հետ[11]:

Curriculum Vitae

Կենսագրութիւն

Ծնուել եմ 1881 թուին Փետր. 20ին (Ն.տ.) Վան քաղաքում, արհեստաւորական ընտանիքում: Նախնական կրթութիւնս ստացել եմ նոյն քաղաքի տարրա-

կան դպրոցում։ 1896 թուից անցել եմ Կովկաս ու Վաղարշապատի Գէորգեան Ճեմարանում ստացել եմ միջնակարգ եւ բարձր կրթութիւն։ 1902 թուին աւարտելով Ճեմարանի յարանական բաժին, նոյն հիմնարկութեան ստորին բաժանմունքում մի տարի (1902/03) ուսուցչութիւն անելուց յետոյ՝ գնացել եմ արտասահման բարձրագոյն կրթութիւն ստանալու։ Աւարտել եմ Բեռնի Համալսարանի պատմա-փիլիսոփայական Ֆակուլտէտը՝ ստանալով փիլ(իսոփայութեան) դոկտորի աստիճան 1907 թուի Մայիսի 19ին։ Նոյն թուի Սեպտեմբերին հրաւիրուել եմ իբրեւ Ճեմարանի դասախօս, որտեղ մնացել եմ մինչեւ 1912 թիւ։ 1912ից մինչեւ 1919 թ. եղել եմ ուսուցիչ Թրխլիսի Յովնանեան, Գայիանեան դպրոցներում եւ Ներսիսեան Սեմինարիայում։ 1919ից մինչեւ 1930 թիւ եղել եմ ուսուցիչ Երեւանի II° աշխատանքային դպրոցներում, տեխնիկումներում եւ բանֆակներում[12] եւ դասաւանդել եմ գլխաւորապէս պատմութիւն, հայոց լեզու եւ գրականութիւն ու գերմաներէն։ 1930 թուից մինչեւ այսօր դասաւանդում եմ բացառապէս գերմաներէն Երեւանի ԲՈՒՀերում, ներկայումս Պետ. Համալսարանի Տնտեսագիտական Ֆակուլտէտում։ 32 տարի անընդհատ ուսուցչութեամբ պարապելով չատ քիչ ժամանակ եմ ունեցել գրական աշխատանքներին նուիրուելու... սկզբում մասնակցել եմ «Արարատ», «Աղբիւր-Տարագ» եւ «Նոր Դար» թերթերին։ Գրել եմ իմ "David der Philosoph" դիսերտացիան, որը տպուել է "Berner Studien für Philosophie" գիտական թերթում։ Թարգմանել եմ Նիկոլսի «Քրդերի Մասին» աշխատանքը, Վիպպէրի Ընդհ(անուր) Պատմութեան դասագիրքը, Լունաչարսկու «Քրիստոնէութեան Մագումը»։

Կարդացել եմ Երեւանի պատմութեան ուսուցիչների համար դասընթացների մի չարք II° աշխատանքային դպրոցում պատմութեան դասաւանդութեան մասին, ինչպէս եւ կազմել եմ այդ առարկայի ծրագիրը։ Վերջին երեք տարիներում կազմել եւ հրատարակել եմ գերմաներէնի 3 դասագիրք[13]։

1938 19/Ի

Համառօտ այս կենսագրականի շնորհիւ մի քանի հարցեր իրենց պատասխանները են ստանում։ Նախ, ճշգրտում են ծննդեան օրն ու վայրը, հաստատւում ու լրացում են տեղեկութիւնները Վաղարշապատի Գէորգեան Ճեմարանում, ինչպէս նաեւ Թիֆլիսի հայկական մի շարք դպրոցներում, այդ թւում նաեւ Ներսիսեան Սեմինարիայում եւ յետագայում Երեւանի Պետական Համալսարանում եւ այլ ԲՈՒՀերում նրա դասաւանդման մասին։ Պարզորոշ երեւում է նաեւ Շուէյցարիայի Բեռն քաղաքի կապը *Berner Studien für Philosophie* համալսարանական գիտական թերթի եւ այնտեղ լոյս տեսած նրա "David der Philosoph" պատմա-փիլիսոփայական աշխատութեան միջեւ։ *Հանրագիտարանի* տեքստը, որտեղ նշուած է Գերմանիան, այս դէպքում տարակուսանքի առիթ էր տալիս, որից արդէն «օգտուել» է մի հեռուստաֆիլմի հեղինակ[14]։ Տուեալ դէպքում շփոթութեան պատճառն այն էր, որ *Հանրագիտարանի* յօդուածում չէին նշուած թէ՛ Գերմանիայում եւ թէ՛ Շուէյցարիայում նրա այցելած քաղաքների անունները։ Այնինչ դրանք պարզորոշ կերպով ներկայ են նոյնպէս Խոստիկեանի ձեռքով լրացուած հարցաթերթիկի երկրորդ էջում. *«Գերմանիայում. Մարբուրգ, Շտրազբուրգ, Շուէյցարիայում. Բեռն, Ֆրանսիայում. Փարիզ»*[15]։ Բոննի Համալսարանի որեւէ հետք չկայ նաեւ միւս գտնուած նիւթերում ի տարբերութիւն Մարբուրգի[16], Ստրասբուրգի[17]

եւ, յատկապէս, Բեռնի, որի մասին վկայում են եւ լատիներէնով գրուած հինաւուրց յայտագիրը[18], եւ այդ գրքոյկի վրայ մի քանի անգամ ամրագրուած քաղաքի անունը[19], եւ, վերջապէս, Բեռնի Համալսարան ուղարկած մեր խնդրանքի պատասխանը՝ Միսակ Խոստիկեանի աշխատութեան եւ նրա ուսանողական տարիների հետ կապուած նիւթերի վերաբերեալ:

Խմանալով գրքի ստոյգ անուանումը, դժուար չէ մեր օրերի Երեւանում գտնել այն[20]:

Նոյն՝ 1907 տարուայ Հոկտեմբերին գերմաներէնով գրուած եւ երիտասարդ հեղինակի գրաբարի, հին յունարէնի, լատիներէնի եւ ֆրանսերէնի ազատ տիրապետման մասին վկայող "David der Philosoph" աշխատութեան դրոյթների քննարկմամբ հանդէս եկաւ Գարեգին վարդապետ Յովսէփեանը՝ Վաղարշապատի *Արարատ* ամսագրում: Բաւականին խստապահանջ մօտենալով *«Ճեմարանի նախկին սան եւ այժմ ուսուցիչ Պ. Մ. Խոստիկեանի»* կատարած աշխատանքին, նա, այնուամենայնիւ, փաստում է. *«Նորա գրքոյկը, որ բաղկացած է երեք գլուխներից եւ ընդամէնը 80 երես է, շատ կարեւոր տեղ կը բռնի Դաւիթ Փիլիսոփայի անձնաւորութեան եւ երկերի ուսումնասիրութեան պատմութեան մէջ* (ընդգծումն իմն է - Ն.Յ.)»[21]:

Երբ մեզ, Գրականութեան եւ Արուեստի Թանգարանում պահպանուած այդ գրքոյկի մէկ օրինակի շնորհիւ[22] հնարաւորութիւն ընձեռնուեց ծանօթանալու այդ աշխատութեանը, առաջին տպաւորութիւնն այն էր, որ այս 80 էջերում ներկայացուած է ոչ թէ ատենախօսական աշխատութիւնն ամբողջապէս, այլ դրա սեղմ տարբերակը[23]: Նրա շարադրանքում համատեղուած էին եւ Դաւիթ Անյաղթին վերաբերող հին յունարէն ու հայերէն ձեռագրերը, եւ յոյն, գերմանացի, ֆրանսիացի, ռուս ու հայ գիտնականների ուսումնասիրութիւններում արտայայտուած տարբեր, յաճախ իրարամերժ կարծիքները Անյաղթի մասին: Աշխատութիւնը խստօրէն ենթարկուած է եռամաս կառուցուածքային սկզբունքին: Գիտնականի կուռ տրամաբանական հետեւութիւնները, կարծես, հեղինակի գեղարուեստական պատկերաւոր մտածողութեան հետ դրամատիկ պայքարի մէջ են գոյանում: Մանաւանդ, որ գիտահետազօտական առումով նա ընդունում է եւրոպական տեսակէտը, որն հակասում է իր հայ հոգուն հարազատ առասպելներին: Աշխատութիւնը կազմուած է երեք գլուխներից. Ա. Դաւիթ փիլիսոփան հայկական աւանդոյթներում, Բ. Յոյն Դաւիթ փիլիսոփան Գ. Դաւիթը որպէս փիլիսոփայ[24]: Յատկապէս հետաքրքրական է երրորդ մասը, որտեղ բաւականին մեծ ուշադրութեամբ քննում են Դաւթի փիլիսոփայութեան 4 հիմնախնդիրները. ա՝ Էութիւն, բ՝ Որակ, գ՝ Քանակ, դ՝ Նպատակ, որոնցից Դաւիթը, ըստ Խոստիկեանի, չափազանց կարեւորում է էութեան խնդիրը: Փիլիսոփայ դառնալու համար հարկաւոր է Աստծոյ օգնութիւնը, եւ հենց էութեան (Das Sein) խնդրի հիմնաւորումն է, որ ստիպում է հաւաքել սեփական բոլոր ուժերը, *«քանի որ կան մարդիք, որոնք ուզում են դա ձեր մէջ ոչնչացնել»*[25]:

Աշխատութիւնը հետաքրքրական է նաեւ լեզուաբանական առումով, նկատի ունենալով յունական եւ հայկական տեքստերի զուգահեռ շարադրանքը (օրինակ, 28-30 էջերում):

Այս համառօտ անդրադարձում աւելորդ չէ նկատել, որ Խոստիկեանի "David der Philosoph" ատենախօսական թեզը իր յագեցուածութեամբ կարող էր կողմնացոյցի կամ քարտէզի դեր կատարել Դաւթի հետ կապուած աղ-

բիւրներին եւ կարծիքներին ծանօթանալու գործում: Այս յօդուածում հնարաւոր չէ ներկայացնել այդ աշխատութիւնը ամբողջապէս, դա առանձին մասնագիտական ուսումնասիրութեան նիւթ է:

Որքանո՞վ է ուսումնասիրուած Խոստիկեանի աշխատութիւնը իր յետնորդների կողմից եւ ի՞նչ գնահատական է այն ստացել Հայաստանում խորհրդային տարիներին:

Նկատի ունենալով ստալինեան բռնապետութեան ժամանակ ընդունուած վարուելաձեւը մեղադրեալների գիտական եւ գրական ժառանգութեան հանդէպ, կարելի է ենթադրել, որ, ըստ երեւոյթի, Խոստիկեանի բոլոր աշխատութիւնները՝ լինէին դրանք տպագրուած թէ ձեռագիր, նրա ձերբակալման օրը բռնագրաւուած էին եղել իր տնից:

Բռնագրաւուած գրքերն ու ձեռագրերը յատուկ ծառայութիւնների աշխատակիցներն իրենց պարկերն էին նետում եւ դրանք շրջանառութիւնից առհասարակ հանւում էին: Ձերբակալուած ձեռագրերի եւ գրքերի յետագայ ճակատագրի մասին ստոյգ տեղեկութիւնների բացակայութեամբ ոմանք կարծում էին, որ դրանք վառում էին յատուկ վառարաններում, ուրիշներ հաւատում էին, որ գոյութիւն ունի ինչ-որ մի անձեռնմխելի փակ արխիւ, որտեղ այդ ամէնը հաւաքագրուած է եւ պահպանւում է յատուկ նպատակներով: Այսօր կարելի է վստահօրէն ասել, որ պահպանուել են տպագրուած կամ ձեռագիր այն նիւթերը միայն, որոնք ձերբակալման պահին որեւէ պատճառով գտնուել են *այլ* անձանց մօտ: Ի հարկէ, դա վտանգաւոր էր նրանց համար, սակայն այսօր միմիայն մարդկային այդ ջերմութեան շնորհիւ պահպանուած մասունքներն են, որ հասու են մեզ որպէս ճշմարիտ աղբիւրներ՝ այդ հակասական շրջանի իրողութիւնները որեւէ չափով հասկանալու համար:

Հաւանաբար, Խոստիկեանի աշխատութիւնը պահպանուել էր ոչ միայն նրա ուսուցիչ՝ Մ. Աբեղեանի (տե՛ս՝ ծանօթ. 20ը), այլ նաեւ Վազգէն Չալոյեանի մօտ, որն կարող էր նրա ուսանողը լինել Համալսարանում[26]:

Մի գուցէ, դրանո՞վ է բացատրւում այն, որ 1946ին հրապարակած իր *Դաւիթ Անյաղթի Փիլիսոփայութիւնը* գրքում[27] Դաւթի մասին գիտական գրականութեան իր քննական վերլուծութիւններում Չալոյեանը, ի տարբերութիւն միւսների, հնարաւորութիւն է ունեցել անդրադառնալու Խոստիկեանի "David der Philosoph" աշխատութեանը (որն այն ժամանակ, ըստ պարզ տրամաբանութեան, արգելուած պիտի լինէր), որպէսզի բանավէճի բռնուի նրա հետ: Սակայն տարբերութիւնը այդ երկու հեղինակների աշխարհայեացքների եւ մտածողութեան ոճերի միջեւ այնքան մեծ էր, որ գրքում ծաւալած բանավէճը դժուար է երկխօսութիւն անուանել:

Դիտելով Խոստիկեանի աշխատութիւնը այլ պատմական իրավիճակում եւ բոլորովին այլ գաղափարախօսական դիրքերից, Չալոյեանը յարմար է գտնում քննարկել այն աշխատութեան դրոյթները մէկ այլ աշխատութեան զուգահեռ (խօսքը Ա.Գարագաշեանի *Քննական Պատմութիւն Հայոց*ի մասին է, Թիֆլիս, 1895): Երկուսն էլ մեղադրում էին հեղինակի կողմից Դաւթի խնդրի «*գռեհիկ պարզունակեցման*» մէջ եւ այլ «*մեղքերում*»: Անձամբ Խոստիկեանին ուղղուած են հետեւեալ տողերը. «*Մ. Խոստիկեանը առհասարակ չի վստահում հայկական լեգենդին Դաւթի մասին, եւ դա նաեւ այն պատճառով, որ վերջինիս ստեղծագործութիւնները երկար ժամանակ մնացել էին անանուն եւ միայն Ժ. դարից է, ինչ Դաւիթը, իբրեւ թէ, ճանաչուել է որպէս այդ*

ստեղծագործութիւնների իսկական հեղինակը»[28]: Հետաքրքրական է նաեւ, որ Չալոյեանը Խոստիկեանի աշխատութեան մէջ դիտում է միմիայն Դաւթի կենսագրութեան պատմական եւ առասպելական տուեալները, որեւէ կերպ չանդրադառնալով Դաւթի փիլիսոփայութեան դրոյթներին՝ նրա մեկնաբանումներին:

Մէկ այլ հեղինակի՝ Հենրիկ Գաբրիէլեանի աշխատութեան մէջ, արդէն յիշատակուած Խոստիկեանի յայտնաբերած փաստերը՝ Հայաստանում Դաւթին մոռացութեան մատնելու եւ յետոյ՝ Ժ. դարից սկսած, նրան ազգային կուռք դարձնելու մասին, բաւականին հետաքրքրական այլ մեկնաբանութիւն են ստանում: *«Ինչո՞ւ մինչեւ Ժ. դարը Անյաղթի մասին քիչ էին յիշում*, - հարցնում է նա:- *Դա բացատրւում է յուրջ պատճառներով: Թէեւ հայոց եկեղեցու պետականացման գործընթացը Ե. դարում արդէն աւարտուած էր եւ նա արդէն ունէր իր ազգային կադրերը, գրականութիւնը եւ կատարում էր ժամերգութիւնն մայրենի լեզուով, նա, այնուամենայնիւ, դեռ այնքան հզօրութիւն չունէր, որպէսզի թոյլ տար փառաբանել մի մարդու, որի պատկանելիութիւնը քրիստոնէական եկեղեցուն կասկածելի էր: Դրանից բացի, Անյաղթը ալեքսանդրիական նէոպլատոնիզմի հետեւորդ էր, որը սերտօրէն կապուած էր անտիկ հեթանոսական մշակոյթի հետ, եւ այդ իմաստով նրա ուսմունքը վտանգաւոր էր համարւում եւ հետապնդւում էր Յուլիանոս կայսեր կողմից: Չէ՞ որ ալեքսանդրիական նորպլատոնականները փիլիսոփայութեան՝ որպէս գիտութեան ինքնուրոյնութեան կողմնակից էին: Անյաղթի Մահմանք իմաստասիրութեանը այդ դրոյթի հիմնաւորումն էր: Կարո՞ղ էր արդեօք եկեղեցին, որը պայքարում էր իր գաղափարախօսական ամրապնդման համար, թոյլ տալ, որ Անյաղթի գործերը ուսումնասիրուէին դպրոցներում կամ որ Անյաղթը յայտնի գիտնական դառնար այդ երկրում: Կոնիբէրն*[29] *ասում է, որ Անյաղթը դէմ էր Մեսրոպ Մաշտոցի դպրոցին, որը եկեղեցու այն առաջնորդներից էր, որոնք հրով եւ սրով էին խօսում հեթանոսների հետ: Ահա թէ ինչու գրաւոր աղբիւրներում այդքան քիչ է խօսւում Անյաղթի մասին»*:[30] Կարծում ենք, որ բերելով Կոնիբէրի հենց այս խօսքերը (ի դէպ, Գաբրիէլեանը, հաւանականօրէն, ազատ վերաշարադրում է Կոնիբէրի միտքը՝ որովհետեւ համապատասխան յղում տեքստում նշուած չէ), հեղինակը նպատակ ունէր ցոյց տալու ոչ այնքան Ջ.-Ժ. դարերի իրողութիւնները, այլ նաեւ, օգտուելով այլաբանութեան հնարաւորութիւնից, մեկնաբանել Ի. դարի Խորհրդային Հայաստանում ընթացող անգիջում պայքարը «այլախոհական» փիլիսոփայութեան դէմ: Յամենայն դէպս, Գաբրիէլեանին յաջողուել է իր մօտեցման մէջ զգացնել տալ իր կողմից մշակուած *տարբեր վերաբերմունքը* փիլիսոփայութեանը որպէս «գիտութիւնների գիտութեան» եւ որպէս գաղափարախօսութեան: Ուրիշ բան, որ հասկանալով գաղափարախօսական միթոսների դէմ միանձնեայ իր պայքարի որեւէ հեռանկարի բացակայութիւնը, նա բացայայտօրէն չի գնում ժամանակի իրամայականի դէմ, ընտրելով խելամիտ փոխզիջումի ճանապարհը, որի շնորհիւ կարողացել էր ապրել եւ ստեղծագործել:

Վերջերս Ռուբէն Սահակեանի յօդուածում հրապարակուած են 1923-30 թուականների մի խումբ մտաւորականների կողմից նախաձեռնուած եւ այդպէս էլ կառավարութեան կողմից պաշտօնապէս չհաստատուած «Հայ Փիլիսոփայական Ընկերութեան» նախագծի փաստաթղթերը[31], որոնց շնորհիւ կա-

րելի է պատկերացում կազմել Հայաստանում տեղի ունեցած գաղափարական պայքարի բնոյթի մասին:

Ներկայացուցիչ խմբի ցուցակում, որն յանձնուել էր ՀԽՍՀ Ներքին Գործերի ժողովրդական կոմիսար Շաւարշ Ամիրխանեանին՝ Ընկերութիւնը գրանցելու համար, փիլիսոփայ-հասարակագէտ Վարազդատ Տերոյեանի (1887-1938), փիլիսոփայ, գրականագէտ եւ երաժշտագէտ Յակոբ Յարութիւնեանի (1889-1944), հայագէտ (յետագայում ԽՍՀ ԳԱ ակադեմիկոս) Կարապետ Մելիք-Օհանջանեանի (1893-1970), ականաւոր վիրաբոյժ Յարութիւն Միրզա-Աւագեանի (1879-1938) եւ բժիշկ Խուրշուդ Մելիք-Փարսադանեանի (1885-1958) կողքին կար եւ փիլիսոփայ Միսակ Խոստիկեանի անունը:[32] Ընկերութեան ներկայացրած կանոնադրութեան նախագծում ասուած է, որ «*ընկերութեան նպատակն է փիլիսոփայական գիտութիւնների եւ խնդիրների ուսումնասիրութիւնն ու համապատասխան գրականութեան զարգացումը հայ լեզուով*» (ընդգծումն իմն է - Ն.Յ.): Այդ նպատակին հասնելու համար Ընկերութիւնը նախատեսում էր դասախօսութիւններ կազմակերպել, գրքեր եւ թերթեր հրատարակել, կազմել հայերէն փիլիսոփայական բառարան, մեծ փիլիսոփաներին թարգմանել հայերէն եւն.: Նախատեսուած էր նաեւ «*միջոցներ ձեռք առնելու մի կենտրոնատեղ ունենալու*» իր գրադարանն եւ արխիւը պահելու համար, ինչպէս նաեւ կապ հաստատել «*այլերկրեայ նման ընկերութիւնների հետ*»[33]:

Պարզ եւ խաղաղ այս ծրագրում, սակայն, դեռ չկայունացած եւ *սկզբունքորէն ռուսաց լեզուով* տարածուող նոր, սոցիալիստական գաղափարախօսութեան համար բազմաթիւ կասկածելի եւ ուղղակիօրէն նրա ինքնահաստատմանը սպառնացող կէտեր կային: Դրանցից մէկը, ի հարկէ, կապուած էր հայոց լեզուի եւ, աւելի լայն, ժողովրդի ուրոյն լեզուամտածողութեան, եւ, հետեւաբար, նրա բնականոն քաղաքակիրթ զարգացմանն էր վերաբերում[34]: Երկրորդը հենց փիլիսոփայութեան եւ գաղափարախօսութեան «*տարածքների բաժանման*» խնդիրն էր թերում, որտեղ զուտ փիլիսոփայական եւ, հետեւաբար, քննող հայեացքը կարող էր հակադրուել մարքս-լենինեան տեսութեանը, որն, ըստ նրա յետնորդների, ներկայացնում է «*միակ ամենազօր եւ ճշմարիտ*» փիլիսոփայութիւնը: Վերջապէս, չի կարելի անտեսել այն փաստը, որ նախաձեռնող խմբի իւրաքանչիւր անդամը եւրոպական կրթութիւն ստացած անձնաւորութիւն էր եւ բարձր հեղինակութիւն ուներ իր ասպարէզում: Այն պայմաններում, երբ նոյնիսկ հայոց տառերը կարող էին փոխարինուել լատիներէն տառերով, իսկ ինքնուրոյն փիլիսոփայելը ինքնին վտանգաւոր էր դարձել որպէս այլախոհութեան կամ նոյնիսկ հերետիկոսութեան մի տեսակ, Հայ Փիլիսոփայական Ընկերութեան հիմնումը կարող էր յանգեցնել միայն հետապնդումների՝ յետագայ էլ աւելի անկառավարելի հետեւանքներն կանխարգելու համար: Նախաձեռնող խմբի վեց մտաւորականներից երեքը բռնադատուած են եղել եւ իրենց մահկանացուները կնքել են 1938ին: Վիրաբոյժ Միրզա-Աւագեանն, որն իր գործընկերների հետ հրաժարուել էր հաստատել Աղասի Խանջեանի «*ինքնասպանութիւնը*», մահացել է քաղաքային բանտում, Տերոյեանը չորս անգամ անհիմն մեղադրուելուց յետոյ ձերբակալուել եւ աքսորուել է Սիբիր, ուր եւ մահացել է Փետրուարի 6ին, իսկ Խոստիկեանին ձերբակալել են նոյն թուի Փետրուարի 5ի լոյս 6ի գիշերը: Մեղադրանքներն,

որոնք նրանց ներկայացուած էին եղել, կապուած էին, հաւանաբար, նախաձեռնող խմբի կազմած կանոնադրութեան մէջ ամրագրուած է. կէտի հետ այլերկրեայ փիլիսոփայական ընկերութիւնների հետ կապերի հաստատում, որը մեկնաբանուած էր որպէս լրտեսութիւն:

Ուշագրաւ է, որ ներկայացնելով փիլիսոփայական ընկերութեան նախագիծը, նրա հեղինակները գրել են փաստաթուղթը ներկայ, այլ ոչ ապառնի ժամանակով: Այսպէս, գրուած է.

«Ընկերութիւնը

ա. Կազմում է դասախօսութիւններ, դիսկուսիաներ, գրոյցներ եւն.:

բ. Գողծող օրէնքների սահմաններում հրապարակում է գրքեր եւ թերթեր:

գ. Յատուկ ժամանակ է նուիրում փիլիսոփայական բառարան կազմելուն՝ հայ լեզուով (...)

ե. Մեծ փիլիսոփաները թարգմանում հայերէն:

զ. Հաւաքում է հայ փիլիսոփայութեան վերաբերեալ վաւերագրեր եւ տեղեկագրեր ու արժէքաւորները հրատարակում» եւն.:

Փաստօրէն, շարադրման մէջ արձանագրուած է *գործող* մի ընկերութիւն, որը գիտակցում է իր նպատակը եւ աշխատում է այն արդէն իսկ իրագործելու համար: Այդ առումով հարկաւոր է յիշատակել, որ Օլգա Խոստիկեանի նամակներից մէկում գրուած է, որ նրա ամուսինը *«մանկավարժական գործունէութեանը զուգահեռ գիտական-գրական աշխատանք էր տանում: Իր դոկտորական ատենախօսութիւնից բացի ... որը տպագրուած էր գերմաներէն եւ հայերէն լեզուներով, նա Մարքսիզմ-լենինիզմի Ինստիտուտի առաջադրանքով թարգմանել է գրաբարից աշխարհաբար Դաւիթ Անյաղթի երկերը եւ մեկնաբանել է դրանք, թարգմանել է գրաբարից աշխարհաբար Ե. դարի փիլիսոփայ Եզնիկ Կողբացու Երծ Աղանդոց-ը, գրել է մի շարք հետաքրքիր յօդուածներ եւ հետազօտութիւններ, նուիրուած հայ բանասիրութեան եւ ագգագրութեան խնդիրներին»*[35]:

Այս թարգմանութիւններն, հաւանաբար, Խոստիկեանը նախաձեռնել եւ կատարել էր հենց այդ փիլիսոփայական ընկերութեան ծրագրի համաձայն, մանաւանդ որ այն համապատասխանում էր իր հետաքրքրութիւններին եւ լուսաւորչական մղումներին: Մենք տեղեկութիւն չունենք թէ ի՞նչ յանձնարարական էր տուել Մարքսիզմ-լենինիզմի Ինստիտուտը Խոստիկեանին, որովհետեւ Ինստիտուտի պահպանուած արխիւում այդ թուերի աշխատակիցների ցուցակը բացակայում է: Սակայն շատ հաւանական է, որ այդ թարգմանութիւնները նա կատարած լիներ վերոյիշեալ փիլիսոփայական ընկերութեան յանձնարարականով: Այսօր բոլոր այդ ձեռագրերն անյայտ կորած են համարում: Յամենայն դէպս, ո՛չ Կողբացու, ո՛չ էլ Անյաղթի երկերի որեւէ յետագայ հրապարակումներում Խոստիկեանի անունը երբեւիցէ չի յիշատակուել:

Տիրող կարգերի հանդէպ անհանդուրժողականօրէն տրամադրուած եզակի անձնաւորութիւններից մէկը, որը կարող էր եւ ինչ-որ տեղ կոտրել Խոստիկեանի անուան շուրջ բանձրացած լռութեան շղթան, փիլիսոփայ, բանաստեղծ եւ բանասէր Էդմոն Աւետեանն էր (1929-2002): Խորհրդային բանտի եւ հոգեբուժարանի դժոխքի միջով անցած մտաւորականը, որը դուրս էր եկել այնտեղից իր մարդասիրական էութեանն ու մտածողութեան բարձր չափանիշներին անդաւաճան, օրերից մի օր անսպասելիօրէն յստակ ձեւակերպու-

մով, առաջին անգամ հնչեցրեց Միսակ Խոստիկեանի անունը՝ «Մարդու Ժամանակը» հեռուստահաղորդման մէջ[36]: Այդ հաղորդումը անակնկալ յայտնութիւն էր: Հաղորդումը չափազանց խիտ էր ու յուզիչ: Վերջում, պատասխանելով հաղորդավարի հարցին՝ Հայաստանի փիլիսոփայական մտքի ներկայ վիճակի մասին, նա ասաց բառացիօրէն հետեւեալը. *«Ես որքան գիտեմ, Հայաստանում վերջին փիլիսոփան Միսակ Խոստիկեանն է եղել: Նրան 1938ին գնդակահարեցին: Դրանից յետոյ փիլիսոփայ ես չեմ տեսել Հայաստանում:»*- Ակնարկելով Նարեկացու, Դաւիթ Անյաղթի, Յովհաննէս Երզնկացու անունները՝ նա աւարտեց իր խօսքն այսպիսի հարցադրումով.- *Ժամանակակից Հայաստանում ես չգիտեմ, կա՞ն փիլիսոփաներ թէ՞ ոչ: Հայերը փիլիսոփաների ազգ չեն, նրանք աւելի շուտ բանաստեղծների ազգ են, քան փիլիսոփայութեան»*:

Աւետեանի ցնցող խօսքերը մտածելու տեղ տուեցին եւ ես յիշեցի նման մի դիպուած իմ ուսանողական տարիներից: Մեր դասախօս երաժշտագէտ դոկտոր Նիկողայոս Թահմիզեանը միջնադարի երաժշտութեանը նուիրուած իմաստալի իր դասախօսութեան մէջ յանկարծ յիշատակեց յայտնի կատակերգու Արմէն Խոստիկեանի անունը: Մինչ այդ նա յիշատակեց իր յօդուածը Մեսրոպ Մաշտոցի մասին իբրեւ երաժշտի, այնուհետեւ ոգեշնչուած խօսում էր: Խօսքը անանուն երաժիշտների մասին է: Նրանց մասին, ասում էր, որ, գուցէ, մարդկութեան պատմութեան մէջ բարձրագոյն ստեղծագործողներն անանուն են մնացել, երբ, ճարահատուած լինելով ընտրութիւն կատարել գործի շարունակելիութեան եւ սեփական անուան փառքի միջեւ, կարողացել են յաղթահարել իրենց հոգու ամենամեծ կապուածութիւնը՝ իր հարազատ անուան հնչիւնից հրաժարուելով: *«Ամէն մարդ չի կարող անել դա, դա ահաւո՛ր բան է»*,[37] շեշտեց նա եւ աւելացրեց, որ դա մի գուցէ մարդկային հոգու բարձրագոյն մաքրմանն հասնելու միակ միջոցն է: Այդ խտացեալ հոգեւոր մթնոլորտում էր, որ, խօսելով Անյաղթին նուիրուած գիտաժողովի մասին, նա յիշատակեց Խոստիկեանի անունը եւ ասաց, որ խօսքը, Արմէն Խոստիկեանի հօր մասին է: Մինչ այդ լսարանում տիրող խոհեմ լռութիւնը յայտնի կատակերգուի՝ Արմէն Խոստիկեանի անունից անմիջապէս պայթեց՝ սկսուեցին կատակներ, աշխուժութիւն առաջացաւ... Դա, կարծես, վիրաւորեց ուսուցչին: Նա լռեց: Այդ օրն այլեւս նա մեզ ոչինչ չասաց: Յետագայում նա նոյնպէս այդ հարցին չվերադարձաւ, իսկ ես միջանցքում հարցրեցի նրան այդ մասին, նա զարմացրեց ինձ իր պատասխանով: Նա ասաց միայն, որ հարկաւոր է կարդալ հին պարբերականները, եւ որ միայն նրանցում հնարաւոր է պատասխանը գտնել: Խօսակցութիւնը շուտով ընդհատուեց, իսկ հարցն, այդպիսով, կախուած մնաց օդի մէջ:

Երբ Աւետեանն Խոստիկեանին անդրադառնալով յիշեցրեց գրեթէ մոռացուած այդ դրուագը, ես սկսեցի լրջօրէն զբաղուել փիլիսոփայի ի սպառ կորսուած հսմարուող գիտական եւ գրական ժառանգութեան որոնումներով: Ինչպէս պարզուեց, հին պարբերականներում իրօք գտնուեցին Խոստիկեանի մի շարք յօդուածներ, եւ դրանցից մէկը՝ հենց Թահմիզեանի շնորհիւ[38]:

Այդ որոնումների արդիւնքում գտնուեց ոչ միայն Խոստիկեանի ատենախօսութեան գերմաներէն բնագիրը, այլեւ մի շարք յօդուածներ՝ Վաղարշապատի *Արարատ* ամսագրում, Թիֆլիսի *Վան-Տոսպ* թերթում եւ *Ազգագրական Հանդէսում*: Բոլոր այդ յօդուածները գրուած են մինչ 1918 թուականը: Մենք

մէկտեղել ենք Խոստիկեանի յօդուածները, որոնց մեծ մասը գտնուել է Բախտիար Յովակիմեանի *Հայոց Ծածկանունների Բառարանի* շնորհիւ: Ի դէպ, Յովակիմեանը գտել է, որ Մ. Խ. ծածկանունով գրել է ոչ միայն Միսակ Խոստիկեանը, այլ նաեւ երեք այլ անձնաւորութիւններ, որոնց ամէնքի կենսագրութեան եւ գործունէութեան բնոյթի մասին նա որոշ տեղեկութիւններ է ներկայացնում: Բացի դրանից, նրա կարծիքով, Խոստիկեանի գրչին են պատկանում Խոստիկ եւ Խոստուկ ծածկանուններով գրուած նիւթերը: Մի քանի յօդուածներ ստորագրուած են առանց ծածկանուան: Յամենայն դէպս, ամէն մի գտնուած նիւթի կողքին նշուած է, ծածկագրո՞վ է այն տպագրուած թէ՞ ազգանունով, իսկ եթէ ծածկագրով՝ ապա դրանցից ո՞ր մէկով:

Յօդուածներ եւ Թարգմանութիւն

1. *Նիգէ Բ. Հելենեկանութեան Դարը (Քաղուած Մարբուրգի Համալսարանի յունա-հռովմէական ուսուցչապետ Բ. Նիգէի Տեսչական Ճառից, որ նա խօսել է 1900 թուի Հոկտեմբերի 13ին: Թարգմանութիւնը գերմաներէնից՝ Միսակ Խոստիկեանի), Արարատ* 1905, № 4, էջ 374-379, *Վաղարշապատ*[30]. (*Մ. Խ.*):
2. *Արարչագործութեան Պատմութեան Գեղարուեստական եւ Հոգերանական Ըմբռնումը, Ըստ Հանս Թովմայի, Արարատ* 1908, № 2, էջ 165-170, *Վաղարշապատ*. (*Մ. Խոստիկեան*):
3. *Պրոֆ. Հիւբշման (Հայագէտ, Մահուան Առթիւ), Արարատ* 1908 թ. № 2, էջ 199-203, *Վաղարշապատ*. (*Մ. Խոստիկեան*):
4. *Քննադատութիւն եւ Գրախօսութիւն, Histoire des Armeniens par Noël Dolens et A. Khatch (Հին Հայոց Պատմութիւն, Նոէլ Դոլան եւ Ա. Խաչ), Հրատարակութիւն Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան, Ժընեւ*, 1907, *Արարատ* 1908, № 2, էջ 218-220, *Վաղարշապատ*. (*Մ. Խոստիկեան*):
5. *Գրախօսութիւն*, Das Armenische Himnarium, von Nerses Ter-Mikaëlian (*Հայկական Շարական, հեղ. Ներսէս Տ. Միքայէլեան*), Leipzig, 1905, *Արարատ* 1908, № 10, էջ 939-914, *Վաղարշապատ*. (*Մ. Խոստիկեան*):
6. *Մոդեռն Մարդն ու Քրիստոնէութիւնը, Արարատ* 1908, № 12, էջ 1090-1094, *Վաղարշապատ*. (*Մ. Խոստիկ*):
7. *Ազգագրական Նիւթեր Եգնիկի «Եղծ Աղանդոց» Երկի Մէջ, Ազգագրական Հանդէս*, 1916, էջ 137-147, *Թիֆլիս*. (*Մ. Խոստիկեան*):
8. *Ողջո՛յն Այն Մանկան, Որ Ծնուեց, Բայց Չմեռնի, Վան-Տոսպ*, № 7, 1917, (*Մ. Խ.*):
9. *Գրախօսական, «Ռագմական Պատկերներ Վ. Վալադեանի», Թիֆլիս*, 1917, *Վան-Տոսպ*, № 9, 1917. (*Մ. Խ.*):
10. *Գրախօսական, «ԳՈՐԾ Գրական, Գիտական, Հասարակական եւ Քաղաքական Ամսագիր. Խմբագիր՝ Կրասիլնիկեան, Հրատարակիչ Ս. Տէր-Ղազարեան, № 1, 1917 Յունուար, Բաքու», Վան-Տոսպ*, № 10, 1917, (*Մ. Խ.*):
11. *Գրախօսական, Semiramita (Shamiram) Temuchin (Chingis-khan)* K. Korotkov, Moscow, 1917 (*ռուսերէն լեզուով երկու պատմական պոէմներ*):
12. *«Վանի Գոյամարտի Առիթով, 1915 Ապրիլ 7-7 Մայիս 1917», Վան-Տոսպ*, № 22, 1917. (*Մ. Խ.*):

13. *«Մի բանավէճի առիթով. (Գ. Վեչապելիի «Տաճկական Վրաստան» Գրքի մասին)»*, *Վան-Տոսպ*, № 23, 1917. (*Մ. Խոստիկեան*):
14. *Գրախօսական, «Վարդանանք» Լէօի Պատմական Դրամա, 3 Գործողութեամբ, Նախերգանքով եւ Վերջաբանով»*, *Թիֆլիս*, 1917, *Վան-Տոսպ*, № 24, 1917. (*Մ. Խ.*):
15. *«Լէօ, Հայոց Պատմութիւն»*, 1917, *Թիֆլիս*, *Վան-Տոսպ*, № 42, 1917. (*Մ. Խ.*):

Բացի գիտական եւ գրական յօդուածներից գտնուել են նաեւ երկու բանաստեղծութիւններ.՝

1. *«Ապրել Գործել Դեռ կ՚ուզեմ»*, *Հումայ*, 1905, № 8, էջ 3. (*Խոստուկ*):
2. *«Սրտիս Տենչանքը»*, *Հումայ*, 1906, № 4, էջ 3. (*Խոստուկ*):

Բացի այս յօդուածներից եւ բանաստեղծութիւններից, որոնք շատ լաւ պահպանուած են եւ այսօր էլ հետաքրքրական են շնորհիւ մտքի հեռահար սլացքի եւ արտայայտուած կարծիքների հիմնաւորուածութեան, Ազգային Գրադարանում գտնուեցին Թիֆլիսում նրա վարած դասախօսութիւնների տեքստերը: Դրանք պատկանում են «Կրօնա-Պատմական-Փիլիսոփայական Գրադարան»ի հանրամատչելի դասախօսութիւնների շարքին, որն հիմնադրուել է Թիֆլիսում գրերի գիւտի 1500ամեակի եւ տպագրութեան 400ամեակի առթիւ եւ որի բացմանն ելոյթ է ունեցել Մարբուրգի Համալսարանի պրոֆեսոր Dr. D. M. Radeն: «Ի՞նչ է Կրօնը եւ Ի՞նչ է Բարոյականութիւնը» - այսպէս է վերնագրուած Թիւ 1 համարը[40]: Յայտնի 7 գրքոյկներից, որոնք պատկանում են Խոստիկեանի գրչին, մեզ յաջողուել է գտնել միայն երեքը[41].-

Թիւ 2. «Սրբազան Պատմութիւն Իսրայէլի»:
Թիւ 3. «Ի՞նչ է Աստուածաշունչը»:
Թիւ 5. «Ինչպէ՞ս Ստեղծուեց Աչխարհը»:

Բոլոր այս տեքստերը գրուած են 1913ին: Առաջին երկուսը լոյս են տեսել 1913ին, երրորդը՝ 1914ին Թիֆլիսում:

Դասախօսութիւնների տեքստերը վկայում են պատմական առասպելները՝ այդ թւում նաեւ աստուածաշնչեան եւ աշխարհի արարման հետ կապուած նիւթերը գիտական տեսանկիւնից դիտելու միտումի մասին: *Ի՞նչ է Աստուածաշունչը* գրքոյկի նախաբանում, օրինակ, ընդունելով, որ *Աստուածաշունչը* սուրբ գիրք է եւ կրօնի միակ գրաւոր աղբիւրը, նա ներկայացնում է այն ոչ միայն *«որպէս հրէական եւ քրիստոնէական կրօնի կանոնական աղբիւր»*, այլեւ որպէս *«մի թանկագին ժողովածու մի հին ժողովրդի գանազան տեսակ գրական երկերի»*: Ի վերջոյ, գրքոյկի նպատակը նա բացատրում է որպէս Աստուածաշնչի վրայ *«թափուած գիտական ուսումնասիրութիւնների եզրակացութիւններին»* հետ ծանօթութիւնը:

Նոյն այս կերպով ներկայացուած է աշխարհի արարման խնդիրը յաջորդ գրքոյկի մէջ[42]: Քննելով պոլինեզիական, գերմանական, եգիպտական, հրնդկական, յունական, բաբելական, փիւնիկեան եւ այլ առասպելները, նա անցնում է հին յունական, եւ, այնուհետեւ, նորագոյն փիլիսոփայութեանն ու բնագիտութեանը, եւ, վերադառնալով Աստծոյ գաղափարին, գտնում է, որ *«մարդ-*

կային հոգում ծնուող վեհ իդէալներն եւ արժէքներն են աստուածային,- եւ որ Նա,- *Տիեզերքի եւ բարոյական անձնաւորութեան արարիչն է*»:

Հեղինակը չի թաքցնում, որ իր դասախօսութիւններում օգտագործուած են թարգմանական նիւթեր գերմաներէնից, բացի *Սրբազան Պատմութիւն Իսրայէլի* դասախօսութիւնից, որը Հին Կտակարանի բովանդակութեան պարզ վերարտադրութիւնն է՝ հեղինակի նոր մեկնաբանութիւններով:

Հետաքրքրական է այստեղ հին տեքստերի պատմական, գրական եւ գեղարուեստական արժէքների գնահատումը՝ անկախ նրանից, թէ ովքեր կը ճանաչուեն նրանց հեղինակները գիտահետազօտական աշխատանքների արդիւնքում. «... *եթէ ապացուցուի, որ Մննդոց Գիրքը Մովսէսը չի գրել, դրանով Մննդոց Գրքի արժէքը չի կորչի, ինչպէս չի կորչի Խորենացու գրքի արժէքը, եթէ ապացուցուի, որ այդ գրքի հեղինակը Խորենացին չէ*»:

Ծանօթանալով պատմութեանն առնչուող Խոստիկեանի յօդուածներին՝ Նոէլ Դոլանի եւ Ա. Խաչի պատմութեան գրքի քննադատութեանն ու գրախօսութեանը, Լէոյի *Հայոց Պատմութիւն*ի Ա. հատորի մասին գրուածին, «Վանի Գումարտակի Առիթով» յօդուած-մտորումին, «Մի Բանավէճի Առումով» վրաց պատմաբանի թեզերի քննարկումին եւայլն, կարծես հաղորդակից ենք դառնում նրան մշտականօրէն մտահոգող հարցերին: Դրանցից մէկը «Պատմութիւն» առարկայի դասաւանդման հետ է կապուած, իսկ միւսը՝ պատմական ճշմարտութիւնը առասպելներից տարանջատելու խնդրին: Էլ աւելի կարեւոր էր նրա համար միաւորել այդ երկուսի խնդիրները, արդէն իսկ դպրոցական տարիքից լիարժէք գիտական մտածողութիւն սերմանելու նպատակով: Առաջարկուող դասագրքով նա յարմար է գտնում պատմութեան դասերին տրամադրել երեք եռամսեակ, իսկ չորրորդի ընթացքում «*Ծանօթացնել Հայկի, Արամի, Արայի, Վահագնի, Տիգրանի եւ ուրիշ առասպելներին աշակերտների բովանդակութեան հետ*,- եւ յետոյ,- *միջոց տալ նրանց որ նրանք ամէն անգամ որոշել կարողանային, թէ իրենք դիցաբանակա՞ն, դիւցազնակա՞ն, պատմակա՞ն, ընտանեկա՞ն առասպելների, թէ՞ դոցանից ոչ մէկի, այլ մի որեւէ միտումնաւոր կեղծիքի հետ գործ ունեն: Այս ձեւով աշակերտը ոչ միայն կը ծանօթանայ այդ առասպելների հետ, այլ եւ ձեռք կը բերի քննադատական հայեացք*»[43]: Կարելի՞ է արդեօք զարմանալ, որ նման ուսուցիչը, որին 1930ից «ազատել» (կամ, աւելի ճիշտ, հեռացրել) էին պատմութեան դասաւանդումից, ինքնուրոյն ծրագիր էր կազմել դպրոցի դասատուների համար եւ հրաւիրել Երեւանի պատմութեան ուսուցիչների համար դասընթացների մի շարք: Այդ նախաձեռնութիւնը կարող էր կապուած լինել Կրթութեան Ժողկոմխորհում նրան յանձնարարուած պատմութեան դասագիրք գրելու հետ: Միւս կողմից, եթէ այդ դասագիրքը Ժողկոմխորհրդի հաւանութիւնը չէր ստացել, ապա իր ծրագիրը ուսուցիչներին տալու նպատակը կարող էր մեկնաբանուել որպէս ինքնակամութիւն եւ կ'ունենար ոչ-ցանկալի հետեւանքներ:

Լէոյի «Վարդանանք» թատերախաղի մասին գրախօսականն ընթերցելիս, հասկանում ես, որ դա ոչ թէ պիէս էր՝ թատրոնում բեմադրուելու համար, այլ մի բեմագիր շարժանկարի համար: Արդէն, Լէոյի հետ Խոստիկեանը աշխատել էր եւ՝ Ներսէսեան Ճեմարանում, եւ՝ Համալսարանում: Հաւանաբար, նրանք ընկերներ են եղել, որովհետեւ գրախօսականի խիստ տոնի մէջ կարելի է գտնել եւ հիացմունքի նշաններ՝ ընկերոջ ծաւալուն, լայն մտածողութեան

կապակցութեամբ: Գուցէ, ընկերոջը, որի գործը հրատարակուել էր 730 մեծադիր էջերով, շուտով ոգեւորելու ցանկութեամբ է բացատրում Լէոյի *Հայոց Պատմութիւն*ի Ա. հատորի գրախօսականի, կամ, աւելի ճիշտ՝ ողջոյնի խօսքի հապճեպութիւնը, որը հեղինակը փորձում է ինչ-որ կերպ բացատրել ընթերցողին. *«Գրախօսական գրել մի գործի, որի միայն չորրորդ մասն է լոյս տեսել, կարող է մի գուցէ վաղաժամ համարուել. բայց քանի որ Լէօն սկսնակ հեղինակ չէ եւ միւս կողմից այս հատորը իւր ծաւալով ու արժէքով լիուլի գաղափար է տալիս հեղինակի պատմագիտական ընդունման, մատենագրական ուղղութեան եւ ճաշակի մասին, թող ներուի մեզ ծանօթացնել «Վան-Տոսպ»ի ընթերցողին այս հատորի հետ»*: Սակայն դա չի խանգարում նրան վիճելի հարցերը վեր հանելու եւ քննարկում սկսելու դրանց շուրջ:

Շատ հետաքրքրական է Վանի 1915ի պաշտպանութեան երկրորդ տարեդարձին նուիրուած Խոստիկեանի յօդուած-մտորումը: Լինելով արմատներով վանեցի, Խոստիկեանը գրել է այն կարծես մի շնչով, յոյզերն ու մտքերն այստեղ միաձուլուած են եւ յօդուածի ոճը միանգամայն տարբերւում է միւս յօդուածներից. *«Ինչպէս անհատի, նոյնպէս էլ ժողովուրդների եւ ազգերի կեանքում կան րոպէներ, որ յաւիտենականութիւն արժէն»*,- այս կիզակէտից սկսուած լինելով, յօդուածի լարումը մի վայրկեան չի դադարում. *«փաստ է այն, որ վանեցու այն հերոսական կռուի օրերին՝ Թիֆլիսի թէ՛ տեղացի եւ թէ՛ գաղթական հայութիւնը յոյսի եւ յուսահատութեան փոփոխակի զգացումների մէջ, տարուբերելով հանդերձ, ցեղային հպարտութեամբ էր լեցւում»*: Հասկանալի է, որ յաղթանակի լուրը ստանալուց յետոյ Թիֆլիսի ժողովուրդը ցնծում էր. *«կեցցե՛ն վանեցիները, ասում էին նրանք, գոնէ մի րոպէ ցոյց տուին, որ հայը ոչխար չէ, հարուած ստանալ, բայց եւ հարուած տալ գիտէ: Հիացմունքի արժանի է նրա հերոսական քաջութիւնն ու կազմակերպչական հնարագէտ ոգին»* (շեղագիրը՝ Խոստիկեանի – Ն.Յ.): Սակայն նրա աչքից չէր վրիպել եւ հակառակ շարժումը. *«անցան օրեր. եւ քանի գնաց՝ Թիֆլիսի հայի տօնական տրամադրութիւնը տեղի տուեց սառը կշռադատութեան ու լքման. իսկ յայտնի է, որ լքուած հոգին հիանդ է լինում: Եւ ասում էին. «Շատ վատ արաւ վանեցին, նա իւր յանդուգն կռուով ինքն իրեն փրկեց, բայց դրանով ակամայ պատճառ դարձաւ մի միլիոն հայերի կոտորածին, առհասարակ տաճկահայի բնաջնջման»*: Ամէն մի խօսք, կարծես, հայի սրտին ու խղճին ուղղուած մի հրազարկ լինի: Յօդուածի աւարտը նոյնքան ազդեցիկ է. *«Ազգեր եւ ժողովուրդներ պատմութեան քուրայում մաքրւում են ու գտնւում աւելի բարձր մի գոյութեան համար: Վանեցու, գարահիսարցու, եդեսացու եւ սուեդիացու հերոսական կռիւները երաշխիք թող լինեն այն բանի, որ հայը արժանի է մի այդպիսի բարձր գոյութեան»*:

Խոստիկեանի արուեստագիտական յօդուածներում արծարծուած թեմաները բազմազան են՝ պոէզիա, երաժշտութիւն, թատրոն, գրականութիւն, աստուածաբանութիւն, սակայն, իր սրտում մի տեղ գտնելով ամէնքի համար, նա, այնուամենայնիւ, չէր մոռանում անդրադառնալ դրանց հետ կապուած պատմական իրողութիւններին: Այսպէս, խօսելով Ն. Տէր-Միքայէլեանի շարականոցի մասին, նա գրում է. *«Պէտք է պատմական յայն հայեացք ունենալ եւ յիշել, որ մեր կուլտուրան եւ հետեւապէս հայ եկեղեցին կապ ունի հարեւան երկրների կուլտուրայի հետ եւ շատ անգամ նրանց զարգացումով պայմանաւոր-*

ուած։ Ջպէտք է մեր պատմութեան մէջ յառաջ եկած կուլտուրական երեւոյթները տնաբոյս եւ կղզիացած նկատենք, այլ ընդհանուր կապակցութեան մէջ փորձենք ըմբռնել»[44], այս մօտեցումը կարելի է տարածել ոչ միայն մեր երաժշտագիտութեան, այլ նաեւ պատմագիտութեան, փիլիսոփայութեան եւ այլ հումանիտար գիտութիւնների վրայ:

Արժէքաւորելով Վալադեանի[45] *Ռազմական Պատկերներ* պատմուածքների շարքը, նա հիացմունքով է խօսում պատերազմի թեմայի հանդէպ զգոյշ, մարդկային մօտեցման մասին: Յատկապէս նա գրում է, որ գիրքն *«ընթերցողի առաջ բաց է անում մեր հայ կամաւորների հոգեկան աշխարհը, որից կ՚երեւայ որ հայ գինուորը միայն թշնամու արիւնը վոխող չի այլեւ ունի գգայուն, ներող, մեծ սիրտ»*: Իսկ Վալադեանի գրական լեզուի երաժշտականութեան մասին խօսելիս, նա գալիս է այսպիսի եզրայանգման. *«Պարզ է, որ մեր հեղինակը լաղտական տիպի է- աշխարհը եւ նրա անցուդարձը ըմբռնում է իբրեւ երաժշտութիւն, ձայնեղ երանգներ, բառեր ունի արտայայտելու իւր երաժշտական հոգու ըմբռնումները»*: Զգացում է, որ Խոստիկեանի համար դա բարձրագոյն գովեստի խօսքեր են: Ակամայից մտածում ես Կոմիտասի հետ նրա ընկերակցութեան մասին, որի մասին այժմ վկայում է միայն մէկ լուսանկար:

Խոստիկեանի յօդուածներից մէկում ներկայացուած է հարաւային Գերմանիայի անցած դարասկզբի նշանաւոր նկարիչ Հանս Թոմմայի «Արարչագործութեան Վեց Օրերը» յօդուածի մեկնաբանութիւնը, որի հիմքում ընկած է մարդու կեանքի առաջին փուլերի համեմատութիւնը աստուածաշնչեան աշխարհի արարման օրերի հետ: Այդ յօդուածի ուրոյն հմայքը, որի մէջ միաւորուած են ամենամեծի (Աստծոյ) եւ ամենափոքրի (երեխայի), կամ, այլ կերպ ասած, մակրո- եւ միկրո-տիեզերքների ընդհանրական կողմերը, յուզում է հենց այդ հակադրութեան շնորհիւ: Նոյն թեմային նուիրուած դասախօսութիւնը, որի մասին արդէն խօսուել է, յենուած է Բազէլի աստուածաբանութեան պրոֆեսոր J. Wendlandի *Die Schoepfung* գրքի թարգմանութեան վրայ, եւ աւելի առարկայական բնոյթ ունի:

Յատուկ ուշադրութեան է արժանի 1916ին *Ազգագրական Հանդէս*ում հրատարակուած «Ազգագրական Նիւթեր Եգնիկի «Եղծ Աղանդոց» Երկի Մէջ» ծաւալուն յօդուածը, որը Խոստիկեանի բուն հայկական պատմական աղբիւրների հետ աշխատելու իրագործուած ոճի եզակի, բայց եւ խօսուն օրինակ է: Այս պատառիկը թոյլ է տալիս գնահատելու նրա թարգմանական եւ մեկնաբանական աշխատանքի գիտական խորութիւնը, եւ, միաժամանակ, այն հոգատարութիւնը, որով նա անմիջականօրէն, գեղարուեստականօրէն հաճելի եւ հնարաւորինս մատչելի լեզուով ներկայացնում է ընթերցողին Ե. դարի հայ փիլիսոփայի ժառանգութեան էական բովանդակութիւնը: Յատկապէս կարեւոր է նշել, որ հեղինակը, շեշտելով, որ *«այդ գիրքը մի հայ էր գրում եւ հայերի համար էր գրում»*, այս յօդուածը նուիրել է Եգնիկի գրքում տեղ գտած հին հայ սովորութիւններին. *«հաւատալիքներին, աւելորդապաշտութիւններին կամ սնոտիպաշտութիւններին»*, որոնք անուղղակիօրէն անգնահատելի նիւթ են տալիս հայ ազգագրական նիւթի ուսումնասիրութեան համար:

Ինչպէս երեւում է, Խոստիկեանը բազմակողմանի գիտնական էր՝ բանասէր, պատմաբան, աստուածաբան, փիլիսոփայ օժտուած նաեւ գեղարուես-

տական շնորհներով: Որքան հնարաւոր էր, մենք մէկտեղեցինք եւ համադրեցինք այն սուղ տուեալները, որոնք դեռ պահպանուել են նրա կեանքի եւ ստեղծագործութեան մասին: Յաւօք, այն մարդիկ, ովքեր անձամբ ճանաչել էին Խոստիկեանին, այսօր գրեթէ մահացել են:

Արմէն Խոստիկեանը ընդհանրապէս շատ չէր խօսում հօր մասին: Նա ութ տարեկան էր, երբ նրան «տարան»: Ասում էր, որ հայրը վանեցի է եղել: Կէսկատակ-կէսլուրջ պատմում էր, որ երբ ինք ծնուել է, հայրը յուզմունքից, տուն դառնալիս շրջել էր իրեն եւ որ ինքն աշխարհին առաջին անգամ գլխիվայր էր տեսել: «*Ուրեմն, պիտի կոմիկ դառնայի*»՝ եզրակացնում էր նա, ժպիտի տակ թաքցնելով տխրութիւնը:

Միսակ Խոստիկեանի 1956 Փետրուարի 3ին ստորագրուած արդարացման փաստաթուղթը, ինչպէս նաեւ դրա հետ կապուած վկայութիւնները նոյնպէս պահւում են Ազգային Անվտանգութեան Նախարարութիւնում եւ դեռեւս անյայտ են յայն հասարակութեանը: Որպէս ազնիւ մարդու եւ բարեխիղճ մանկավարժի, նրան ներկայացրել է Վահան Սարգսեանը (յայտնի դաշնակահար Վիլլի Սարգսեանի հայրը), որն յիշում էր նրան որպէս համբնդհանուր պատմութեան իր ուսուցչին նոյն ճեմարանում: Արուեստի վաստակաւոր գործիչ Մ. Աղայեանը նրան բնորոշել է որպէս իր հայրենիքին նուիրուած բարեխիղճ գիտաշխատողի եւ Մարքսիզմ-լենինիզմի Ինստիտուտի[46] աշխատակցի: Ծանօթանալով Խոստիկեանի կեանքի եւ գործունէութեան վկայագրերին, պարզ է դառնում, որ գործ ունենք խոշոր մտաւորականի եւ յայն սիրտ ունեցող անձնաւորութեան հետ:

Նկատի ունենալով այս յօդուածում արծարծուած բազմաբովանդակ հարցերը, կապուած Մ. Խոստիկեանի անհատականութեան եւ նրա գիտական եւ գրական ժառանգութեան ամբողջական պատկերի վերականգնման հետ, յուսանք, որ դրանք կը նպաստեն որոշակի քննարկումների, որոնց արդիւնքում գրեթէ մոռացուած այդ փիլիսոփայի կեանքի եւ գործունէութեան խնդիրները էլ աւելի կը ճշտուեն ու կը պարզաբանուեն:

Կոմիտաս եւ Խոստիկեան՝ մի խումբ երիտասարդ հայ մտաւորականների հետ

QUOD BONUM FAUSTUM FELIX FORTUNATUMQUE SIT[47]
AUCTORITATE
HUIC LITTERARUM UNIVERSITATI
ANNI MDCCCXXXIV ÐIE XV NOVEMBRIS
A
SENATU POPULOQUE BERNENSI
CONCESSA
RECTORE LITTERARUM UNIVERSITATIS MAGNIFICO
ADOLFO THÜRLINGS
PHILOSOPHIÆ DOCTORE THEOLOGIÆ SYSTEMATICÆ PROFESSORE
PUBLICO ORDINARIO
DECANO PHILOSOPHORUM ORDINIS MAXIME SPECTABILI
GUSTAVO TOBLER
PHILOSOPHIÆ DOCTORE HISTRIÆ PATRIÆ
PROFESSORE PUBLICO ORDINARIO
SENATUS LITTERARUM UNIVERSITATIS
AMPLISSIMO PHILOSOPHORUM ORDINE AUCTORE
VIRO PRÆNOBILISSIMO ATQUE DOCTISSIMO
MISSAQ KHOSTIKIAN
VANENSI
PROPTER DOCTRINAM PHILOSOPHÆ
HISTORIÆ UNIVERSALIS LINGUARUM
LITTERARUMQUE SEMITICARUM PRÆCIPUAM
CUM DISSERTATIONE
QUAM INSPIRIT
"DAVID DER PHILOSOPH"
TUM EXAMINE SEVERO
MAGNA CUM LAUDE
PROBATAM
DOCTORIS PHILOSOPHIÆ
DIGNITATEM JURA PRIVILEGIA
DETULIT
ÐELATA
PUBLICO HOC DIPLOMATE
PROMULGAVIT
BERNÆ DIE XV MENSIS MAI I ANNI MDCCCCVII

Sigillia –
Academia Bernensis
Philosophische facultet

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆԵՐ

[1] Հեղինակը խորին շնորհակալութիւն է յայտնում Խոստիկեանի մասին ֆիլմերի հեղինակներ Գոհար Յարութիւնեանին եւ Հ2 հեռուստաալիքի գլխաւոր խմբագիր Կարինէ Սարգսեանին, բանասիրական գիտութիւնների թեկնածու Արծուի Բախչինեանին, բատերագէտ Բախտիար Յովակիմեանին, փիլիսոփայական գիտութիւնների դոկտոր Լեւոն-Յարութիւն Աբրահամեանին, ինչպէս նաեւ երաժշտագիտութեան

դոկտոր Նիկողայոս Թահմիզեանին, առանց որոնց օժանդակութեան անհնարին կը լիներ այս հետազօտութիւնը:

[2] Լ. Պ. Ղարիբջանեան, *Երեւանի Պետական Համալսարանը*, Երեւան, 1965:

[3] Աշոտ Արծրունու «Սթալինեան Աւերները Համալսարանին Մէջ» յօդուածը Բուենոս Այրէսի *Արմենիա* թերթում (25.03.1966): Յօդուածի 4/5 մասը նուիրուած է բռնադատուած մտաւորականներին եւ ընդամէնը 1/5ը՝ գրքի բուն էութեանը:

[4] Ս. Աւագեան, Գ. Փերիխանեան, *Ներսիսեանցիներ. 1824-1924*, Երեւան, 1975, էջ 269:

[5] «Արմէն Խոստիկեան՝ Ժպիտով Ասել Ճշմարտութիւնը» վաւերագրական յուշաֆիլմի 4րդ մաս:

[6] ՀՀ Ազգային Արխիւ (այսուհետեւ՝ ՀԱԱ), ֆոնդ 571, ցուցակ 5, գործ 189: Սակայն հիմնական աղբիւրը, որը նշուած է այնտեղ՝ թիւ 4743 գործը, շարունակում է պահուել ԱԱՆում եւ դրան մանրամասն ծանօթանալը դեռեւս անհնարին է, որովհետեւ համապատասխան բաժնի պետը պնդում է, որ գործը ուղարկուած է Ազգային Արխիւ, իսկ Արխիւում թիւ 4743 գործը ներկայացուած է ուրիշի անունով: Այնուամենայնիւ, Հ2 հեռուստաալիքի նկարահանող խմբին մէկ անգամ թոյլատրուել է տեսագրել այդ նիւթերից մի քանիսը՝ «Արմէն Խոստիկեան՝ Ժպիտով Ասել Ճշմարտութիւնը» հեռուստաֆիլմի համար: Կարինէ Սարգսեանի վկայութեամբ, նրանց յատուկ թոյլատուութիւն էր տրուել նկարահանելու այն էջերը, որոնք ՊԱԿի աշխատակիցը յարմար է գտել ցուցադրելու:

[7] ՊԱԿ, գործ թիւ 4743:

[8] *Հայկական Սովետական Հանրագիտարան*ում որեւէ տեղեկութիւն չկայ Միսակ Խոստիկեանի մասին: *Համառօտ Հանրագիտարան*ը կազմելիս, ըստ Արման Խոստիկեանի կնոջ՝ Աղաւնի Կոշկարեան-Խոստիկեանին, հեղինակները նկատի ունէին միայն դերասան Արմէն Խոստիկեանին: Սակայն վերջինս անսպասելիօրէն յամառում է եւ պահանջում նախ եւ առաջ իր հօր մասին գրել: Հեղինակներն ու խմբագիրները համաձայնւում են դրան: Բայց եւ այնպէս, այդ յօդուածի պատրաստումը արդէն հիւանդ Արմէն Խոստիկեանին տանջում է 3-4 ամիս, մինչեւ նա կը կարողանար անհրաժեշտ տեղեկութիւններ մէկտեղել իր հօր մասին:

[9] Դեռեւս յայտնի չէ, որտեղ է թաղուած գիտնականը, հետեւաբար նրա զաւակի՝ Ժողովրդական Արտիստ Արմէն Խոստիկեանի (1929-2003) համար այդ յօդուածը շիրմաքարի նշանակութիւն ունէր: Հասկանալի է, որ ստոյգ տուեալների սուր անբաւարարութեան դէպքում յօդուածը չէր կարող լինել անթերի:

[10] *Հայկական Համառօտ Հանրագիտարան*, Հտր. 2, Երեւան, 1995, էջ 524:

[11] ՀԱԱ, ֆոնդ 20, ցուցակ 10, գործ 273, վաւերագիր 1: Հրապարակւում է առաջին անգամ: ՊԱԿից բռնադատուածներին վերաբերող նիւթերը սկսել են տեղափոխուել ՀՀ Ազգային Արխիւ 1980ականների կէսերին կառավարութեան համապատասխան որոշումից յետոյ, սակայն այդ գործընթացը դեռ չի աւարտուել:

[12] Բանֆակ՝ յապաւում է Բանուորական Ֆակուլտէտ արտայայտութեան. այդպէս էին կոչւում Խորհրդային Հայաստանի բանուոր դասակարգի տեխնիկական եւ գաղափարա-բարոյական զարգացմանն ուղղուած երեկոյեան դպրոցները:

[13] Միսակ Խոստիկեան, *Դասագիրք. Գերմաներէն Լեզու Միջնակարգ Դպրոցների 8րդ Դասարանի Համար, Բանֆակների եւ Տեխնիկումների 1ին Կուրսի Համար*, Երեւան, 1935: *Գերմաներէն Լեզուի Դասագիրք Միջնակարգ Դպրոցների 5րդ Դասարանի Համար, Երկրորդ Վերամշակուած Հրատարակութիւն*, Երեւան, Պետհրատ, 1936: 1937ին լոյս տեսաւ միջնակարգ դպրոցի 5րդ դասարանի համար գրուած մէկ այլ դասագիրք: Ինչ վերաբերում է նրա կազմած պատմութեան դասագրքին, որը, ըստ Օլգա Խոստիկեանի նոյնպէս գրուած է եղել Կրթութեան Ժողկոմիսարիատի պատուէրով, ապա դրա հրապարակման մասին մեզ յայտնի չէ: Հաւանաբար, հեղինակի մասնագիտական կարծիքը եւ նրա մեկնաբանութիւնները պատմութեան ասպարէզում այնքան էին հակասում տիրող գաղափարախօսութեանը, որ այն վերամշակե-

լու տալն անիմաստ էր, եւ գիրքը կամ լոյս չի տեսել, կամ էլ հրատարակուելուց յետոյ անմիջապէս դուրս հանուել շրջանառութիւնից: Այս համատեքստում Խոստիկեանի դասընթացները կարող էին ընդվզումի նշան լինել եւ նոյնիսկ ձերբակալման բուն հիմքը հանդիսանալ:

[14] Խօսքը «Արմէն Խոստիկեան՝ Ժպիտով»ի հեղինակ Կարինէ Սարգսեանի մասին է, որը, յենուելով տեքստում ամրագրուած «Դաւիթ Անյաղթի Փիլիսոփայութիւնը» թեմայով 1907ին Գերմանիայում պաշտպանել է դոկտորական դիսերտացիա» բառերի վրայ եւ համեմատելով դրանք *David Der Philosoph. Bern.1907*ին այդ աշխատութեան հրապարակման ժամանակին եւ վայրին, փոխել է *Բեռն* տեղանունը *Բոննի*՝ համաձայնեցնելու համար բաղաքի անունը նշուած երկրի հետ:

[15] ՀԱԱ, նոյն, վաւերագիր 4:

[16] Խոստիկեանի՝ Մարբուրգում ապրած տարիների մասին վկայում է Մարբուրգի Համալսարանի յունա-հռոմէական ուսուցչապետ Բ. Նիզէի «Հելլէնականութեան Դարը» տեսչական ճառը (զեկուցուած 1900ի Հոկտեմբերի 13ին), որը գերմաներէնից թարգմանել է Խոստիկեանը եւ հրատարակել Վաղարշապատի *Արարատ* ամսագրում (1905, թիւ 4, էջ 374-379): Բացի դրանից, նա, հաւանաբար, հանդիպել է Թիֆլիսում Մարբուրգի Համալսարանի պրոֆեսոր Dr. D. M. Radeին, որը, ըստ նրա դասախօսութեան նախաբանի անյայտ հեղինակի, «*Գերմանիայում ծանօթ ազատամիտ հրապարակախօս եւ քաղաքական գործիչ էր, որին գերմանացիները իրաւամբ անուանում էին «մեր խիղճը»*: Չի բացառում նաեւ, որ պրոֆեսորը (որը ներկայացնում է Dr. Rohrbach, Pastor Lepsius, Stierի կողքին որպէս այն մարդկանցից, որոնք ոչ միայն «*անթիւ յօդուածներով թուլացրին այն սխալ կարծիքը, որով Համիդի բարեկամները հայերին իրրեւ ստոր վաճառական ժողովուրդ էին ներկայացնում, այլ եւ դրամական մեծ օգնութիւն կազմակերպեցին թիւրքահայերի համար*») *Թիֆլիս էր ժամանել իր նախկին սաների՝ Խոստիկեանի եւ Գալուստի* (Գալուստ Տէր-Գրիգորեան Իսկանդերեան - Ն.Յ.) *հրաւէրով*»: Մարբուրգի Փիլիսոփայական Ֆակուլտետի՝ իր վրայ գործած մեծ ազդեցութեան մասին պատկերաւոր պատմել է ռուս բանաստեղծ Բորիս Պաստերնակը (Boris Pasternak, *Okhrannaya Gramota* (Պահպանիչ թուղթ, Հռոմ, 1970, էջ 24-27):

[17] Պատմելով Ստրասբուրգի Համալսարանի իր սիրելի դասախօսներից մէկի, նշանաւոր հայագէտ Հայնրիխ Հիւբշմանի մասին, Խոստիկեանն ակամայից պատմել է նաեւ իր Ստրասբուրգում ուսանելու տարիների մասին: «*Իմանալով, որ ես մտադիր եմ Դ. Անյաղթով գրաղուել, եռանդով խորհուրդ էր տալիս ձեռք վեր առնել այդ դժուար աշխատութիւնից,*- գրել է նա,- *որովհետեւ նա չէր հասկանում Դաւթի լեզուն, իւր կողմից առաջարկում էր ինձ գրաղուել Բարթուղիմէոս Առաքեալի հայկական աւանդութեամբ եւ այդ աւանդութեան չուրջ եղած գրականութեամբ: Երբ ես այնուամենայնիւ Անյաղթով գրաղուել աւելի հետաքրքրական համարեցի, նա հարցրեց՝ թէ յունարէն գիտե՞մ. եւ երբ դրական պատասխան ստացաւ՝ շատ զարմացաւ, որովհետեւ նրան յայտնի էր, որ մեր միջնակարգ դպրոցներում յունարէն եւ լատիներէն լեզուները չեն աւանդւում: Նորա կարծիքով հայագիտութեամբ գրաղուել առանց այդ լեզուներն իմանալու՝ անհնար բան է: Հայոց միջնակարգ դպրոցներում անպատճառ պիտի աւանդուին այդ լեզուները, որովհետեւ հայագիտութեամբ գրաղուելը ամէնից առաջ հայերի պարտքն է: Շատ խղճալի տպաւորութիւն է թողնում, ասում էր նա, որ հայ ուսանողներ մեզ մօտ են գալիս բարձրագոյն կրթութիւն ստանալու, լեզուաբանութիւն կամ պատմութիւն ուսումնասիրելու, այն ինչ դասական լեզուներից ոչ մէկը չգիտեն: Չնայած որ նորա մեծ եռանդ եւ հետաքրքրութիւն են ցոյց տալիս, բայց, այնուամենայնիւ, մեծ հետեւանքների չեն հասնում, որովհետեւ այդ հասակում լատիներէնն կամ յունարէնն սովորելը անկարելի է. եւ պէտք է ասել, որ հայ ուսանողները միշտ աւելի տարիքով են լինում քան մերոնք»: *Իմ առաջին ծանօթութիւնից յետոյ ես յա-*

ճախ առիթ ունէի նրան այցելելու, մանաւանդ երբ նրան մի գրաբար կամ աշխարհաբար հատուած էր պատահում, որ նա չէր կարողանում հասկանալ. նա հրաւիրում էր ինձ կարեւոր կտորը թարգմանելու, եւ այդպիսի առիթներով մենք երկար խօսում էինք գրաբարի եւ աշխարհաբարի եւ յետոյ զանազան գաւառաբարբառների քերականական տարբերութիւնների մասին»:

Հասկանալի է, որ հայոց լեզուի եւ առհասարակ լեզուների հանդէպ ունեցած նման վերաբերմունքը չէր կարող չանդրադառնալ նրա աշխատանքի բնոյթի վրայ:

Այսինքն, լինելով պատմա-փիլիսոփայական ֆակուլտետի ուսանող, նա փիլիսոփայութեան պատմութեան խնդիրները պարզելու համար դիմում էր լեզուաբանական բննութեանը, ինչպէս դա տեղի է ունեցել, երբ իր ուսումնասիրութեան մէջ նա անդրադարձել էր Դաւիթ Անյաղթի յունարէն եւ հայերէն լեզուներով պահպանուած բնագրերին: Դա հաստատում է նաեւ յայտնի հայագէտ Գարեգին Վրդ. Յովսէփեանը, որի կարծիքով Դաւիթ Փիլիսոփայի *«հայերէն բնագիրն արդէն յունարէն թարգմանութեան կնիք էր կրում, բայց գիտնականների մէջ տարաձայնութիւն կար վերջնական եզրակացութեան վերաբերութեամբ»*: *Եւ Խոստիկեանը այս կնճռոտ խնդիրը պարզելու համար ուղիղ ճանապարհ է ընտրել. յունարէնն ու հայերէնը համեմատելով միմեանց հետ, եկել է այն հաստատուն եզրակացութեան, որ «հայերէնը պարզ թարգմանութիւն է յունարէնից»* (Խոստիկեան, Պրոֆ. Հիւբշման, *Արարատ*, Վաղարշապատ, Փետրուար, 1908, էջ 200-201. նաեւ՝ Գ. Վ. Յովսէփեան, «David der Philosoph, von Dr. Missak Khostikian, Bern, 1907. Դաւիթ Փիլիսոփայ. Դոկտ. Միսակ Խոստիկեան, Բեռն, 1907», *Արարատ*, 1907, Հոկտեմբեր-Նոյեմբեր, էջ 965):

[18] Ժամանակից խուճապած այս յայտագիրը ինչ-որ հրաշքով փրկուել է խուզարկումների ընթացքում Խոստիկեանի անձնական արխիւի բռնագրաւումից: Այն հրատարակում ենք յօդուածի վերջում:

[19] M. Khostikian, *David der Philosoph*. Bern: Scheitlin, Spring &Cie. 1907, Berner Studien zur Philosophie und ihrer Geschichte. Band LVIII, Herausgegeben von Dr. Ludwig Stein, Professor au der Universität Bern.

[20] Գրքի օրինակներից մէկը գտնուեց Եղիշէ Չարենցի Անուան Գրականութեան եւ Արուեստի Թանգարանի Մանուկ Աբեղեանի (1865-1944) ֆոնդում՝ հեղինակի հետեւեալ մակագրութեամբ. *«Խոր յարգելի ուսուցիչ Պ. Մ. Աբեղեանին հեղինակ՝* Dr. Missak Khostikianից 4 *Մեպտ.* 1907. *Էջմիածին»*: Հաւանաբար, այն նուիրաբերուել էր Էջմիածին վերադառնալուց անմիջապէս յետոյ, երբ եւրոպական բարձրագոյն կրթութիւն ստացած Գէորգեան Ճեմարանի նախկին շրջանաւարտը վերադարձել էր հայրենի կրթօջախ՝ իր նոր գիտելիքներով ժողովրդին լուսաւորելու ցանկութեամբ: Մէկ ուրիշ օրինակ՝ արդէն իմտերնետի միջոցով հաստատուած կապի շնորհիւ մեզ տրամադրեց Բեռնի Համալսարանը:

[21] Գարեգին Վրդ. Յովսէփեան, «David der Philosoph», էջ 962:

[22] Ի դէպ, գրքի այս օրինակում նշուած է, որ այն հրապարակուած է Բեռնի Համալսարանի պրոֆ. Դր. Լիւդուիգ Շտայնի կողմից: Բացի դրանից, գրքի սկզբում կայ գերմաներէնով մակագրութիւն պրոֆ. Դր. Կարլ Մարտիի հասցէին. "Dem hochverehrten Herrn Prof. Dr. Karl Marti vom verfasser Hochachtung und dankbarkeit Gewidmet" (նուիրում է մեծարգոյ պարոն Դր. Կարլ Մարտիին՝ անկեղծ յարգանքով եւ շնորհակալութեամբ հեղինակից):

[23] Դա մեզ դրդեց իմտերնետի միջոցով կապ հաստատել Բեռնի Համալսարանի հետ եւ հարցում անել նրա արխիւի աշխատակիցներին. արդեօ՞ք չեն պահպանուել այնտեղ որեւէ այլ նիւթեր, որոնք վերաբերէին Խոստիկեանին, նկատի ունենալով աշխատութեան նախնական կամ լրիւ շարադրանքը: Պարզուեց, որ Համալսարանում պահպանուել են միայն երկու օրինակներ նոյն այդ գրքոյկի, որոնցից մէկը ուղարկուեց Երեւան: Ի տարբերութիւն ԳԱԹում պահուող օրինակի, որն հրապարակուած

էր Բեռնում, այն հրատարակուած է եղել Լայպցիգում, նոյն 1907 թուին: Փաստօրէն գրքոյկը տպագրուել է ոչ միայն Շուէյցարիայում, այլեւ Գերմանիայում, հնարաւոր է, իր ներկայացրած գիտական արժէքի պատճառով. այդ է վկայում գրքի առաջին էջի վրա տպագրուած համառօտ, բայց շատ խօսուն յատելումը. "Von der philosophischen Fakultät auf Antrag des Herrn Prof. Dr. Stein angenommen.Bern, 17. May 1907. Der Dekan: Prof. Dr. G. Tobler" (Ընդունուած է Փիլիսոփայական Ֆակուլտետի համար պ. Պրոֆ. Դր. Շտայնի առաջարկի համաձայն: Բեռն, 17 Մայիսի, 1907: Դեկան՝ Պրոֆ. Դր. Գ. Թոբլէր): Ուշագրաւ է, որ Խոստիկեանների ընտանիքում պահպանուած յայտագրի վրայ կայ Պրոֆ. Թոբլէրի անունը: Հաւանաբար, Դր. Գուստաւօ Թոբլէրը ներկայացնում էր քննական յանձնաժողովի փիլիսոփայական մասը, իսկ Ադոլֆօ Թիւրլինգսը (Adolfo Thürlings)՝ բանասիրականը: Դա անհրաժեշտ էր, քանի որ աշխատութիւնը եւ՛ բանասիրական, եւ՛ փիլիսոփայական բնոյթ ունէր:

[24] Հաւանական է, որ Խոստիկեանը հասուն տարիքում, աւելի խորն ուսումնասիրելուց յետոյ նաեւ Հայաստանում գտնուող Անյաղթի աշխատութիւններն ու մեկնաբանելով դրանք, այլ եզրակացութիւններ էր արել որպէս գիտնական: Սակայն, քանի դեռ յետագայում կատարած նրա աշխատանքը չի գտնուած, որեւէ պարզաբանում այս հարցում լինել չի կարող: Յամենայն դէպս, Բեռնի Համալսարանի դեկանին ուղղած իր նամակում, Խոստիկեանը գրել է, որ դեռ 1906ին նա իմացել էր իր ծեր հօր հիւանդութեան մասին եւ խնդրում է, որ պաշտպանութեան օրը հնարաւորինս շուտ նշանակուի, որպէսզի նա կարողանայ տեսնել հօրը: Բնականաբար, նա ստիպուած էր որոշ հարցերում ընդունել եւրոպական հեղինակութիւնների՝ օրինակ, Կոնիբէրի տեսակէտը Անյաղթի մասին, քանի որ ժամանակ չունէր ապացուցելու հակառակը: Ըստ երեւոյթին, նրա հայրը մնացել էր Վանում կոտորածից յետոյ, որովհետեւ Խոստիկեանը գրում է, որ «*չի տեսել հայրենիքը 11 տարի*» - եւ դա համընկնում է 1896ից մինչեւ 1907 անցած ժամանակին:

[25] *Missak Khostikian „David der Philosoph"*, Leipzig, 1907, էջ 61-62:

[26] Խոստիկեանն իր հարցաթերթիկում նշել է, որ 1938 Յունուարին դասաւանդել է Համալսարանի Տնտեսագիտական Ֆակուլտետում: Ինչպէս յայտնեց մեզ Վազգէն Չալոյեանի դուստր՝ գեղագէտ Ծովինար Չալոյեանը, նրա հայրը աւարտել էր Համալսարանի Տնտեսագիտական Ֆակուլտետը 30ականներին:

[27] V. K. Chaloyan, *Filosofiya Davida Nepobedimogo* (Դաւիթ Անյաղթի փիլիսոփայութիւնը), Մոսկուա, 1946, էջ 75-77:

[28] Նոյն, էջ 77:

[29] Խօսքը բրիտանացի արեւելագէտ Ֆրեդերիկ Կորնելիս Կոնիբէրի մասին է (Frederick Cornwallis Conybeare, 1856-1924), որը դասաւանդել է Օքսֆորդի Համալսարանում եւ հեղինակ է մի շարք նշանակալի ուսումնասիրութիւնների, այդ թում նաեւ՝ Արիստոտէլի *Կատեգորիաների* եւ դրանց մեկնաբանողների մասին, որտեղ ներկայացուած է նաեւ Դաւիթ Փիլիսոփան որպէս Արիստոտէլի ուսմունքի մեկնաբան-յետնորդներից մէկը, որի ուսմունքը, սակայն, ինքնուրոյն արժէք չի ներկայացնում:

[30] G. Gabrielyan, *David Nepobedimyj* (Դաւիթ Անյաղթ), Երեւան, 1980, էջ 22-23: (թարգմանութիւնը ռուսերէնից եւ ընդգծումը մերն է - Ն.Յ.):

[31] Ռ. Օ. Սահակեան «Հայ Փիլիսոփայական Ընկերութեան Ստեղծման Պատմութիւնից», *ՀՀ ԳԱ Լրաբեր Հասարակական Գիտութիւնների*, 2007, № 3, էջ 224-229:

[32] ՀԱԱ, ֆոնդ 112, ցուցակ 2, գործ 12, թուղթ 76: Բնագիր: Ձեռագիր:

[33] Նոյն, թուղթ 77-78:

[34] Մ. Ռոզենտալի եւ Պ. Եուդինի կազմած *Համառօտ Փիլիսոփայական Բառարանը* (Երեւան, 1940) վառ ապացոյց է փիլիսոփայական գիտելիքի նմանօրինակ միտումով ներկայացումին: Հայերէնով հրատարակուած *Փիլիսոփայական Բառարանը* նոյն Ռոզենտալի խմբագած համեմատաբար աւելի մեծ բառարանի երրորդ հրա-

տարակուբեան բարգմանութիւնն է (Երեւան, 1971, բարգմանիչ՝ Վ. Բաղդասարեան)։ Հայաստանում մինչեւ օրս էլ հայերէնով դեռ չի գրուել որեւէ լուրջ գիտական փիլիսոփայական բառարան։ Հայերէն լոյս է տեսել միայն Դաւիթ Անյաղթի երկերի լեզուի բառարանը (Երեւան, 1980, Ակադ. Ա. Ս. Ղարիբեանի խմբագրութեամբ)։ Ի դէպ, մինչ 1980 Հայաստանում գրուած ուշագրաւ փիլիսոփայական երկերը, այդ թւում եւ Դաւիթ Անյաղթին նուիրուած Վ. Չալոյեանի ուսումնասիրութիւնը, ինչպէս նաեւ Սէն Արեւշատեանի գրաբարից բարգմանած եւ խմբագրած Դաւթի երկերը (*Opredelenia Filisofii* (Սահմանք իմաստասիրութեան), 1960, *Tolkovanie "Analitiki" Aristotelya* (Մեկնութիւն ի «Վերլուծականն» Արիստոտէլի), 1967, *Analiz "Vvedenia" Porfiria* (Վերլուծութիւն «Ներածութեանն» Պորփիւրի), 1976) լոյս են տեսնում բացառապէս ռուսերէնով կամ Մոսկուայում։ Միայն 1980ին լոյս տեսաւ Անյաղթի որոշ երկերը հայերէնով՝ Մատենադարանի տնօրէն Սէն Արեւշատեանի աշխարհաբար բարգմանութեամբ եւ մեկնաբանութեամբ։

[35] Նամակը ցուցադրուած է եղել «Ժպիտով Ասել Ճշմարտութիւնը» ֆիլմում։

[36] Խօսքը Հայաստանի հանրային հեռուստատեսութիւնում Գոհար Յարութիւնեանի «Մարդու Ժամանակը» հաղորդաշարի 2000ին նկարահանուած «Էդմոն Աւետեան» հեռուստաֆիլմի մասին է։

[37] Թահմիզեանի վաղեմի բարեկամ եւ *Սովետական Արուեստ* ամսագրի խմբագիր Կարպիս Սուրէնեանը իր *Օրագիր*ում յատուկ անդրադարձել է իր ընկերոջ կեանքի մի դէպքի, որը կարող է լոյս սփռել աւանունների խնդրին Թահմիզեանի ուշադրութեանը։ 1962 Մայիսի 23ին *Սովետական Հայաստան* թերթում հրապարակուեց այն ժամանակ Հայաստանի Մշակոյթի Նախարարի տեղակալ, երաժշտագէտ Սամսոն Գասպարեանի մի յօդուածը «Մեսրոպ Մաշտոցը՝ Երաժիշտ» վերնագրով, որն *«ակնյայտ ծայրէծայր բանագողութիւն էր»* Թահմիզեանի օրիգինալ յօդուածից, որը նա յանձնել էր ընկերոջը՝ *Սովետական Արուեստ*ում տպագրելու համար։ Յետագայում Սուրէնեանին յաջողուեց համոզել իր «հոգեղբայր» ընկերոջը տպագրել իր տարբերակը նոյն այդ ամսագրում, սակայն ապրումները, որոնք կապուած էին այդ անախորժ դիպուածի հետ, ծանր հետեւանքներ ունեցան երկուսի համար եւ կարող էին նպաստել աւանունների խնդրի նման խորաթափանց ընբռնմանը (Կարպիս Սուրէնեան, *Օրագիր*, Հտր. Բ, էջ 143-149)։

[38] Թահմիզեանի *Ներսէս Շնորհալին երգահան եւ երաժիշտ* (Երեւան, 1973) գրքի աւանանացանկում կայ *Խոստիկեան* ազգանունը՝ առանց անուան կամ անուանատառի։ Իսկ, գրքի համապատասխան էջում դրուած է Խոստիկեանի Ներսէս Տէր-Միքայէլեանի *Հայկական Շարական* գրքի գրախօսականը։ Այնտեղ, տողատակում, կրկին առանց հեղինակի անունը լիովին ներկայացնելու, Թահմիզեանը բառացիօրէն գրել է հետեւեալը. *«Խոստիկեանի թէեւ խիստ, բայց չահեկան գրագատութիւնը «Արարատ»ում*, 1908, № 10»։ Այստեղից էլ սկսուեցին գտնուել եւ միւս յօդուածները։

[39] Թարգմանութիւնը կատարուած է եղել Խոստիկեանի Մարբուրգում ուսանելու տարիներին եւ յետագայում, հաւանաբար, նկատի առնելով նրա լուսաւորչական արժէքը հայ հասարակութեան համար, որպէս յայնախոհ գիտնականի հայասէր տրամադրութիւնների ոգեւորիչ ազդեցութիւնը, որոշել է մշակել տպագրութեան համար։

[40] Վերջերս մեզ յաջողուել է որոշ չափով վերծանել Բեռնի Համալսարանից ստացուած պրոֆ. Ռադէի նամակը, ուղղուած Բեռնի Կանտոնի Դասաւանդումների Նախարարութեանը, որում խնդրում է ընդունել Խոստիկեանին մինչեւ նրա դոկտորական թեզի պաշտպանութիւնը։ Նամակը ուղարկուած է եղել 1907ի Ապրիլի 16ին Մարբուրգից։ Մասնաւորապէս, նամակում ասուած է, որ հայերը քրիստոնէական աշխարհի բարեկամներն են եւ ներկայացրել է Խոստիկեանին որպէս Թուրքիայում հայոց ցեղասպանութիւնից (Armenianmorder) տուժուած մի անձի, ըստ երեւոյթի, կանխելով վճարման հետ կապուած հարցերը։ Նամակում յիշատակուած է նաեւ Էջմիածինը։ Պրոֆ. Ռադէի մասին տես նաեւ՝ ծանօթ. 17։

[41] Երեւանի Համալսարանում Դր. Ռադէի դասախօսութիւնը սխալմամբ վերագրուած էր Մ. Խոստիկեանին, եւ միայն նրա շապիկի վրա յիշեցում կար յաջորդ համարների մասին, որոնք արդէն իրաւամբ Խոստիկեանինն էին:

[42] Բազէլի աստուածաբանութեան պրոֆեսոր J.Wendland *Die Schoepfung* գրքի թարգմանութեան վրայ:

[43] Խոստիկեան, *Histoire des anciens Armeniens*, *Արարատ*, 1908, Փետրուար, էջ 218-220: Բերուած հատուածից կարող ենք տեսնել, որ առասպելների նկատմամբ նրա մօտեցումը զուրկ էր որեւէ միակողմանիութիւնից, ինչպէս, թերեւս, եւ նրա պատմագիտական ուսումնասիրութիւնները:

[44] Խոստիկեան, "Das armenische Hymnarium," *Արարատ*, 1908, թ. 10, էջ 941:

[45] Հայաստանի որեւէ հանրագիտարանում չկար այդ գրողի անունը: Բախտիար Յովակիմեանի *Հայ Ծածկանունների Բառարանից* պարզուեց, որ խօսքը վերաբերում էր դրամատուրգ եւ գրող Սկրտիչ Վանեցեանին, որը ծնուել է 1883ին Թիֆլիսում եւ մահացել 1974ին Բոստոնում: *Ռազմական Պատկերներից* (1917, Թիֆլիս) բացի նա գրել էր *Բժիշկը* 3 գործողութեամբ դրաման (Թիֆլիս, 1913): Նրա *Լրտես Աղջիկը* (1931), *Գործակալ Թիւ 33* (1944), *Աւետեաց Երկիր* (1946) *Ընկերոջ Կինը* (1947) լոյս են տեսել Բէյրութում, իսկ *Կարմիր Աստղի Տակ* վէպը՝ Կահիրէում 1926ին:

[46] Ցաւօք, Մարքսիզմ-լենինիզմի Ինստիտուտի արխիւում մեզ չի յաջողուել որեւէ տեղեկութիւն գտնել Խոստիկեանի մասին:

[47] «Դաւիթ Փիլիսոփայ» ատենախօսութեան յայտագրի ամբողջ տեքստը: Հրատարակւում է առաջին անգամ: Այնտեղ հաստատւում է որ 15 Մայիս 1907ին, Գրականութեան Համալսարանի, Բեռն քաղաքի Ծերակոյտի եւ ժողովրդի, ինչպէս նաեւ Համալսարանի գլխաւոր տնօրէն, փիլիսոփայութեան եւ աստուածաբանութեան պրոֆեսոր Ադոլֆո Թիւրլինգսի, եւ Փիլիսոփայութեան Ճիւղի տնօրէն Գիւսդաւ Թոբլէրի կողմից վաճեցի Միսակ Խոստիկեանին տրւում է փիլիսոփայութեան դոկտորի իրաւունք, որը արդիւնք էր նրա Դաւիթ Իմաստասէրի նիւթով տուած խիստ ու լուրջ քննութեան, որը ընդունուեց բարձրագոյն նիշով:

THE SCIENTIFIC AND LITERARY HERITAGE OF PHILOSOPHER MISSAK KHOSTIKIAN REPRESSED IN THE 1930'S IN SOVIET ARMENIA WHICH WAS CONSIDERED ENTIRELY LOST

(Summary)

NATALYA HARUTUNIAN

The research is dedicated to one of the most enigmatic personalities in Soviet Armenia, philosopher, philologist, and historian Missak Khostikian (born in Van, 1881, died probably in 1938, location unknown). According to official data, after February 6, 1938, when he was arrested, Khostikian's scientific and literary works in Armenia disappeared. His name disappeared from Yerevan State University documents too. Though Khostikian was rehabilitated in 1956, details of his biography and several files were kept locked in KGB archives until the late 1980s. Still, the most important documents (the file № 4743) are locked in KGB archives. Fortunately, some of these were filmed for a documentary film featuring his son, the renowned actor Armen Khostikian (2007).

The biography in the abridged version of the Armenian Encyclopedia is the only data available for the public about M. Khostikian.

Through archival materials and extended research in the Museum of Art and Literature, the author discovered significant information about Khostikian which he put together in this report. This report rectifies some informastion and clarifies other uncertainties regarding Khostikian's biography. Bakhtiar Hovakimian's *Armenian Pseudonyms Dictionary* enabled the author to trace back and uncover a number of Khostikian's articles and research papers, which she listed and analyzed. These shed light on aspects of Khostiokian's philosophical views and his concerns regarding the methodology of educating the young Armenian generation. Among the finds were three lectures dated 1913-14 and three textbooks for studying German in Soviet Armenian schools dated 1935-37. However, the scientific works of Khostikian that covered the first fifteen years of the Soviet period in Armenia (1920-1935) and included translations of medieval texts of Armenian philosophers and his comments have not been recovered and could be truly lost.

Khostikian was one of the very first scholars to present a Ph.D. dissertation, entitled "David der Philosoph", on the late-fifth century Armenian philosopher, David the Invincible, which was presented to Marburg University (Germany) and was defended in Bern University (Switzerland) in 1907.

Harutunian assesses the extent to which Khostikian's philosophical heritage was evaluated by scholars who wrote about David the Invincible. She believes that through this article she has raised problems, made data available and aimed at triggering further discussions on the problems of black holes and blind spots regarding a number of scholars who disappeared during the Stalin purges.

ՍԱՀԱԳՐԱԿԱՆ

ԱՇՈՏ ՍՈՒՔԻԱՍԵԱՆ
(1922-2007)

Գիտութեան վաստակավոր գործիչ, Երեւանի Պետական Համալսարանի Հայոց Լեզուի Ամբիոնի պրոֆեսոր, բանասիրական գիտութիւնների դոկտոր Աշոտ Մուրադի Սուքիասեանը ծնուել է 1922 Օգոստոսի 18ին, Թբիլիսիում, բանուորի ընտանիքում: 1940ին գերազանց գնահատականներով աւարտել է միջնակարգ դպրոցը եւ ընդունուել ԵՊՀ Բանասիրական Ֆակուլտէտ: Բ. կուրսի ուսանող էր, երբ զօրակոչուեց բանակ եւ ուղարկուեց Կովկասեան Ռազմաճակատ: Մինչեւ ծանր վիրաւորուելը նա մասնակցում էր մարտերին, իսկ 1944ին զօրացրում է բանակից՝ որպէս պատերազմի հաշմանդամ: Ուսման տենչը 23ամեայ երիտասարդին կրկին բերում է համալսարան. շարունակում է կիսատ թողած կրթութիւնը եւ 1948ին աւարտում է այն: 1950-1953 «բառարանագրութիւն» մասնագիտութեամբ սովորում է ասպիրանտուրայում: Նրա գիտական ղեկավարը մեծանուն հայագէտ Հրաչեայ Աճառեանն էր: 1954ին Աշոտ Սուքիասեանը պաշտպանում է թեկնածուական ատենախօսութիւնը եւ սկսում է աշխատել ՀՍՍՀ ԳԱ Լեզուի Ինստիտուտում՝ սկզբում որպէս կրտսեր, ապա՝ աւագ գիտաշխատող:

Սկսած 1966ից Սուքիասեանի աշխատանքային գործունէութիւնը շարունակւում է ԵՊՀ Հայոց Լեզուի Ամբիոնում, իսկ 1971ին՝ դոկտորական թեզը պաշտպանելուց յետոյ, դառնում է նոյն ամբիոնի պրոֆեսոր: 1976-1991 Սուքիասեանը ղեկավարել է ԵՊՀի Հայոց Լեզուի Ամբիոնը՝ մինչեւ իր կեանքի վերջը շարունակելով գիտամանկավարժական գործունէութիւնը:

Սուքիասեանը հեղինակ է շուրջ յիսուն աշխատութիւնների, որոնք նուիրուած են հայերէնագիտութեան կարեւորագոյն խնդիրների: Հայերէնի բառարանագրութիւն, հայոց լեզուի բառագիտութիւն, գիտաուսումնական գրականութիւն՝ ահա այն գլխաւոր ուղղութիւնները, որոնք ուղեկից են եղել Աշոտ Սուքիասեանի գիտամանկավարժական ողջ գործունէութեանը:

1967ին ՀՍՍՀ ԳԱ հրատարակութեամբ լոյս ընծայուեց Սուքիասեանի՝ այսօր արդէն կոթողային համարուող *Հայոց Լեզուի Հոմանիշների Բառարան*ը, որն ընդգրկում է 83,000 բառ եւ դարձուածային միաւոր: Այս բառարանն իր ընդգրկմամբ եւ հոմանիշների տարբերակման գիտական սկզբունքներով նոր խօսք էր հայ բառարանագրութեան մէջ: Բառարանի կազմութիւնը մեծապէս նպաստեց հոմանիշների տեսութեան մշակմանն ու կիրարկմանը: Նրա հիմնական կորիզը արեւելահայ գրական լեզուի գործուն եւ ոչ գործուն բառապաշարն է՝ ներկայացուած 83,000 բառայօդուածներում, որոնցից իւրաքանչիւրում ներկայացուող հոմանիշները ընտրուած ու դասաւորուած են ըստ հայերէնի պատմական փուլերի, ըստ գործունէութեան աստիճանի, ըստ հասկանիշների աստիճանականութեան: 2003ին այն վերահրատարակուեց՝ մեծ լրացումներով եւ յաւելումներով: Իր 130,000 բառերով այն իր նախորդից տարբերւում է նրանով, որ աւելի ծաւալուն է, բացատրւում են հոմանիշ բառերի իմաստային նրբերանգները: Բառարանը իր ընդգրկումով, նիւթի քննարկ-

ման խորութեամբ իր արժանի տեղն ունի հայ բառարանագրութեան մէջ, եւ պատահական չէ, որ 2004ին արժանացել է ՀՀ Նախագահի մրցանակին՝ «Մարդկային զարգացման եւ հումանիստական արժէքների, այդ թւում հումանիտար գիտութիւնների զարգացման բնագաւառում ձեռք բերուած նուաճումների համար»:

1975ին լոյս տեսաւ Սուքիասեանի եւ Սերգէյ Գալստեանի *Հայոց Լեզուի Դարձուածաբանական Բառարանը*, որն ընդգրկում է շուրջ 20,000 դարձուած: Այս ծաւալուն աշխատութիւնը հայ ժողովրդի պատկերաւոր մտածողութեան, ազգային ինքնատիպութեան իւրատեսակ արտայայտութիւնն է, իսկ նրա գործնական նպատակը՝ ժամանակակից գրական հայերէնի արեւելահայ եւ արեւմտահայ տարբերակներում տարածուած դարձուածային հարստութիւնը հայոց լեզուով խօսողների եւ գրողների սեփականութիւնը դարձնելը, որն իրականացուել է դարձուածքային միաւորների բառարանագրական մշակմամբ, այսինքն՝ նրանց իմաստների բացատրմամբ, յուզարտայայտչական ու ոճական-կիրառական, ինչպէս նաեւ ըստ լեզուական տարբեր շերտերի եւ գործածութեան ոլորտների բնութագրմամբ եւ այլ միջոցներով:

Այս բառարանի համար աղբիւր են ծառայել Խաչատուր Աբովեանից մինչեւ մեր օրերի հայ գեղարուեստական գրականութիւնը, հին եւ ժամանակակից մամուլը, հրապարակագրութիւնը, բացատրական, գաւառական, երկլեզուեան բարգմանական բառարանները:

Ժամանակակից Հայոց Լեզուի Բացատրական Բառարանի (հրատարակուած 1974ին) նախապատրաստման եւ ստեղծման գործում եւս մեծ է Սուքիասեանի աւանդը: Այս բառարանի Գ. հատորի Կ տառով սկսուող բառայօդուածներն ամբողջութեամբ եւ շուրջ 20 մամուլ Ա. հատորից (Ա եւ Գ տառերով բառայօդուածներից) կազմել է Սուքիասեանը եւ կազմել է մասնագիտական մշակման բարձր մակարդակով, լուրջ գիտնականին բնորոշ բարեխղճութեամբ:

2002ին Սուքիասեանի եւ նրա դուստր Քնարիկ Սուքիասեանի համատեղ ջանքերով լոյս ընծայուեց *Արդի Հայերէնի Ուղղագրական-Յեւակազմական Բառարանը*, որը պարունակում է արդի գրական արեւելահայերէնի գրաւոր խօսքի համար կարեւորութիւն ունեցող աւելի քան 76,000 բառարանային միաւոր: Այս բառարանն արժեւորում է նաեւ նրանով, որ միօրինակացուած են բառերի հնչիւնական տարբերակները, ներկայացուած է բայական համակարգը՝ նշելով բայերի սեռը, անկանոն բայերի եւ պակասաւոր բայերի անհրաժեշտ ձեւերը, որոշ բառերի հոլովման, յոգնակիի կազմութեան օրինաչափութիւնները: Բառարանն ունի նաեւ յաւելուած, որտեղ տրուած են հայերէնի ուղղագրութեան, կէտադրութեան, տողադարձի, մեծատառերի գործածութեան կանոններ, տարածուած անձնանունների, տեղանունների, աշխարհի պետութիւնների եւ մայրաքաղաքների անուանումներ եւ այլ ցանկեր:

Սուքիասեանի տեսական ուսումնասիրութիւնների մեծ մասը նուիրուած է հայոց լեզուի բառագիտութեանը: *Հոմանիշները Ժամանակակից Հայերէնում* մենագրութիւնը (1971) նրա նոյնանուն բառարանի նիւթի տեսական ամփոփումն է, մի ծանրակշիռ աշխատութիւն, որի համար նրան շնորհուեց բանասիրական գիտութիւնների դոկտորի աստիճան: Հայերէնագիտութեան մէջ առաջին անգամ Սուքիասեանը կատարեց հոմանիշների խոր վերլուծութիւն, բազմակողմանիօրէն քննարկեց նրանց առնչուող բոլոր խնդիրները:

Աշոտ Սուքիասեանը նաեւ ճանաչուած ու սիրուած դասախօս էր: ԲՈՒՀերի բանասիրական բաժիններուն ուսանողներուն համար շուրջ քառորդ դար որպէս ուսումնական դասագիրք է ծառայում *Ժամանակակից Հայոց Լեզու (Հնչիւնաբանութիւն, Բառակազմութիւն)* ուսումնական ձեռնարկը (ԵՊՀ, 1982, Բ. հրատարակութիւն՝ 1989): Փաստական հարուստ նիւթի բազմակողմանի քննութեան, այդ նիւթի նորովի մատուցման, պարզ ու յստակ շարադրանքի շնորհիւ այսօր էլ գիրքը չի կորցրել թարմութիւնը եւ յաջողութեամբ ծառայում է իր նպատակին:

Պրոֆեսոր Սուքիասեանը նաեւ գիտամանկավարժական աշխատանքների հմուտ կազմակերպիչ էր: Շուրջ 15 տարի նա ղեկավարել է ԵՊՀի Հայոց Լեզուի Ամբիոնը: Նրա ղեկավարութեան օրօք հրատարակուել են հայոց լեզուի ԲՈՒՀական շատ դասագրքեր, ձեռնարկներ, պաշտպանուել են դոկտորական, թեկնածուական ատենախօսութիւններ: Նա Ուսուցիչ էր երիտասարդ լեզուաբանների համար՝ սկզբունքային, խստապահանջ, միաժամանակ՝ բարի, քաջալերող:

Աշոտ Սուքիասեանը մահացաւ 2007 Յունուար 13ին, Երեւանում:

ՍՈՖԻԿ ԲԱՂՈՒՄԵԱՆ
arusus@yahoo.com

ՄԱՐԹԻՆԻԱՆՕ ՌՈՆՔԱԼԻԱ
(1923-2008)

Հմուտ արեւելագէտ, գրադարանապետ եւ դասախօս Մարթինիանօ Փելեկրինօ Ռոնքալիա ծնած է 1923ին, Րեճիոլօ, Իտալիա: Ծննդավայր երկրին մէջ ստանալէ ետք իր դպրոցական ուսումը, Սորպոնի եւ Միւնիխի համալսարաններէն կը վկայուի որպէս արեւելեան քրիստոնէական գիտութիւններու, եկեղեցիներու պատմութեան եւ քաղաքակրթութեան մասնագէտ:

1963էն մինչեւ 2000, դասախօսած է Եգիպտոսի, Գերմանիոյ, Իտալիոյ, Ֆրանսայի, Զուիցերիոյ եւ Լիբանանի տարբեր համալսարաններուն մէջ, ուսուցանելով յատկապէս արեւելեան քաղաքակրթութեան առնչուող նիւթեր: 1961էն 1972 եւ այնուհետեւ մինչեւ իր մահը ապրեցաւ Պէյրութ: Ռոնքալիայի անունը անբաժան պիտի մնայ Պէյրութի Գերմանական Արեւելագիտական Հիմնարկէն, որուն հիմնադիրներէն ու երկարատեւ մատենադարանապետն էր: Ան անդամ էր եւրոպական արեւելագիտական ընկերութիւններու:

Հեղինակ է մօտ երեք տասնեակ գիրքերու եւ հարիւրաւոր յօդուածներու, խմբագրած է բազմահատոր արեւելագիտական հրատարակութիւններ:

Ուսումնասիրութիւններուն ընթացքին, Ռոնքալիայի ուշադրութենէն չէ վրիպած նաեւ հայոց պատմութիւնը. հայութեան առնչուող իր առաջին յօդուածը լոյս կը տեսնէ 1957ին, *Studia Orientalia* հանդէսին մէջ "Les Franciscains et les Armeniens Catholiques" վերնագրով: 1962ին *Oriens* հանդէսին մէջ լոյս կը

տեսնէ "Itinerario in Egitto di Simeone, Viaggiatore Polacco (1615-1616)" (Սիմէոն լեհ ճամբորդի ճանապարհորդութիւնը Եգիպտոս) ուսումնասիրութիւնը. կրկին *Orients*ի մէջ 1962ին կը հրատարակուի Մեսրոպ Եպս. Թերզեանի *Le Patriarcat de Cilicie et les Armeniens Catholiques (1740-1812)* գիրքին գրախօսականը, իսկ 1972ին՝ Լիւիս Միսիրի *Arbre Genealogique de la Famille Missir (1671-1969)* գիրքին գրախօսականը *Parole d l'Orient* հանդէսին մէջ: Նոյն հանդէսին մէջ 1998ին կը հրատարակէ "L'Armenie de Cilicie et les Croisés, Apres la Chute d'Acre (1291)" յօդուածը:

Ռոնքալիա աշխատակցած է նաեւ *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին: ԺԳ. հատորին մէջ լոյս կը տեսնէ "Marino Sanuto 'Il Vecchio', detto Torsello e Gli Armeni di Cilicia. Qualche Informazione" (Կարգ մը ծանօթութիւններ Թորսելլօ անուանուած ծերուկին եւ Կիլիկիոյ հայերուն մասին) ուսումնասիրութիւնը, իսկ ԺԸ. հատորին մէջ՝ "Massacres et Deportations d'Armeniens au Moyen-age d'apres *Le Liber Peregrinationis* de Jacopo de Verone, 1335" (Հայոց ջարդերն ու տեղահանութիւնը միջնադարուն, 1335ին, ըստ Ժաքոփօ Տը Վերոնի) հրապարակումը:

Իր անտիպ աշխատանքներուն մէջ ալ կը գտնուին այլ հայագիտական ուսումնասիրութիւններ:

Գերմանական, իտալական եւ լիբանանեան պետութիւններուն կողմէ շքանշաններու արժանացած Մարթինիանօ Ռոնքալիա մահացաւ 11 Յունուար 2008ին, Պէյրութի մէջ:

ՀՀՀ

ԵՂԻԱ ՆԱՃԱՐԵԱՆ
(1933-2008)

Արեւելագէտ, խմբագիր Եղիա Յովսէփի Նաճարեան ծնած է 17 Ապրիլ 1933ին, Պէյրութ, ատենացի ծննդէ:

Նախնական ուսումը ստացած է Ազգային Աբգարեան Վարժարանին մէջ, իսկ երկրորդականը՝ Անթիլիասի Դպրեվանքի Ճեմարանին մէջ:

1950ականներէն դասաւանդած է Պէյրութի եւ Դամասկոսի Աբգարեան եւ Թարգմանչաց վարժարաններուն մէջ, միաժամանակ վարած է Պէյրութի *Այգ* օրաթերթի խմբագրապետի պաշտօնը, ուր կատարած է նաեւ ֆրասերէնէ հայերէն թերթօնային գրականութեան թարգմանութիւններ: Աշխատակցած է նաեւ Պէյրութի *Ազդարար* օրաթերթին:

1957ին Պէյրութի մէջ հրատարակած է *Դաշնակ Ղեկավարութիւնը Օտարի Ծառայութեան Մէջ* գրքոյկը, որ յաջորդ տարի լոյս տեսած է արաբերէն: 1959ին ընտանեօք հայրենադարձած է Հայաստան: Ուսումը շարունակած է Երեւանի Պետական Համալսարանի Բանասիրութեան Ֆակուլտետին մէջ, ուրկէ շրջանաւարտ եղած է 1963ին:

Աւելի քան քառասուն տարի աշխատած է Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի Արեւելագիտութեան Ինստիտուտի Արաբական Բաժնին մէջ:

Դասաւանդած է ԵՊՀի Արեւելագիտութեան Ֆակուլտէտին մէջ:

1974ին պաշտպանած է դոկտորական թեզը՝ «Արաբական Ազգային Մշակութային Զարթօնքը» նիւթով: Գիրքին արաբերէն թարգմանութիւնը լոյս տեսաւ 2005ին Դամասկոսի եւ Գահիրէի մէջ միաժամանակ: 1985ին ՀՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիան հրատարակած է Նաճարեանի *Լիբանանը 18րդ Դարի Վերջին եւ 19րդ Դարի Սկզբին* ուսումնասիրութիւնը:

Ան 1988էն սկսեալ աշխոյժ մասնակցութիւն ունեցած է Ղարաբաղեան Շարժման մէջ: 1989ին Պէյրութի մէջ հրատարակած է *Արցախեան Հարցի Մեւ Թղթածրարը* գիրքը, որ առջինեկն է արցախեան հարցի պատմութեան մէջ:

1989-92 հիմնադիր-խմբագիրը եղած է Երեւանի *Փիւնիկ* շաբաթաթերթին (լոյս տեսած 19 Մայիս 1990-22 Հոկտեմբեր 1991 շրջանին):

1991ին մասնակցած է Հայաստանի մէջ ՍԴՀ Կուսակցութեան հիմնադրման աշխատանքներուն եւ վարած անոր նախագահի պաշտօնը մինչեւ 1998: 1991-98 եղած է հիմնադիր-խմբագիրը Երեւանի *Հնչակ Հայաստանի* շաբաթաթերթին (20 Հոկտեմբեր 1990-1998ի կէսերը): Օգնած է *Եզդիներու Ձայն* օրաթերթի հիմնադրման:

Ան աշխատակցած է *Հայկական Սովետական Հանրագիտարան*ին, ուրկէ Ա. եւ Բ. հատորներուն մէջ լոյս տեսած են Լիբանանի եւ Արեւելքի մասին իր ստորագրած կարգ մը յօդուածները:

Հայաստան հաստատուած առաջին տարիներուն գրած է պատմուածքներ, որոնք 1965ին լոյս տեսած են *Ջրապտոյտ* վերնագրեալ գիրքով:

1995-99՝ եղած է Հայաստանի Ազգային Ժողովի պատգամաւոր, ինչպէս նաեւ անոր Արտաքին Յարաբերութիւններու Յանձնաժողովի անդամ: 1999ին վերադառնալով Պէյրութ, լոյս կ'ընծայէ ՍԴՀԿի Հայաստանի Հանրապետութեան մէջ վերականգնումին ու կուսակցութեան Սփիւռքի եւ Հայաստանի ղեկավարութեանց միջեւ յարաբերութիւններու պատմութեան գրքոյկը՝ սահմանափակ տպաքանակով:

1986ին պարգեւատրուած է Սովետական Հայաստանի Գերագոյն Խորհուրդի Աշխատանքի Վետերանի շքանշանով:

Եղիա Նաճարեան մահացաւ 6 Յունուար 2008ին, Պէյրութ:

ՀՀՀ

ՆԵԼԼԻ ՅԱԿՈԲԵԱՆ
(1936–2008)

Բանագէտ, Երեւանի Պետական Համալսարանի երկարամեայ դասախօս Նելլի Արմենակի Յակոբեանը ծնուել է 1936 Հոկտեմբերի 5ին, Բաքուում: Հայրը ծագումով Ղարաբաղի Մարտունու շրջանի Մուշկապատ գիւղից էր, մայրը՝ Շուշիի Քարինտակ գիւղից, ազգակից Լէոյին եւ բժշկութեան պատմաբան, ակադեմիկոս Լեւոն Յովհաննիսեանին:

Նելլի Յակոբեանը 1943-1953 սովորել է Երեւանի Պուշկինի անուան դպրոցում: 1953-1958ին սովորել է ԵՊՀ Բանասիրական Ֆակուլտէտի Ռուսական Բաժնում, որը գերազանց աւարտելուց յետոյ դասաւանդել է ռուսաց լեզու՝ ԵՊՀում եւ այլ ԲՈՒՀերում:

1969ին թեկնածուական ատենախօսութիւն է պաշտպանել «Երգիծանքը եւ Հումորը Սասնայ Ծռերում» թեմայով (գիտական ղեկավար՝ ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանեան):

1968ից մինչեւ 2007 հայ ժողովրդական բանահիւսութիւն է դասաւանդել ԵՊՀում՝ կրթելով բանասէրների մի քանի սերունդ եւ պատրաստելով բանագէտ-բանահաւաքներ, ովքեր այսօր աշխատում են ՀՀ տարբեր գիտական հիմնարկներում:

Հեղինակ է մի շարք մենագրութիւնների եւ մօտ չորս տասնեակ գրականագիտական եւ բանագիտական յօդուածների, որոնցում գիտական մշակման են ենթարկուած բանահիւսութեան գեղարուեստական արժէքի, բանահիւսութեան եւ գրականութեան առնչութիւնների, բանահաւաքութեան պատմութեան եւ ասացողական արուեստի հետ կապուած հարցեր:

1970-1980ականներին կազմակերպել է ԵՊՀ Բանասիրական Ֆակուլտետի բանահիւսական գրառումների ամէնամեայ ամառային աշխատանքները Հայաստանի տարբեր շրջաններում: Իր անմիջական ղեկավարութեամբ հսկայական ծաւալի նոր գրառումներ են կատարուել, որոնցից նա հրատարակել է հեքիաթների երկու ժողովածու՝ *Հիմա՛ ես ուզում, թէ՛ չեստոյ* (Երեւան, 1977, խմբագիր՝ Մանուէլ Ասատրեան) եւ *Հայկական ժողովրդական հեքիաթներ* (Երեւան, 1980, խմբագիր՝ Հրանտ Մաթեւոսեան):

Այս ժողովածուներից առաջինում ներկայացւում են կատարուած գրառումների վերապատումները, որոնցում, սակայն, հեղինակները աշխատել են առաւելագոյնս հարազատ մնալ հեքիաթների ասացողական արուեստին, պատումի ոճին եւ նպատակին, որի համար վերաշարադրանքում գրական լեզուին միահիւսուած օգտագործուել են նաեւ ժողովրդախօսակցական լեզուի տարրեր. երբեմն անգամ իրար կից բերւում են միեւնոյն արտայայտութեան գրական եւ բարբառային ձեւերը, որոնք ժողովրդական շունչ եւ բոյր են հաղորդում գրական շարադրանքին: Ժողովածուի նպատակն է եղել ոչ միայն ներկայացնել հայկական ժողովրդական հեքիաթների կենդանի շունչը, այլեւ ընթերցողներին մղել բանահիւսական նիւթերի գրառմանը՝ նրանց ներշնչելով այն միտքը, որ իրենք պէտք է դառնան ժողովրդական ստեղծագործութիւնների մերօրեայ գրառողներն ու փրկողները:

Յաջորդ ժողովածուն ներկայացնում է գրառուած հեքիաթները՝ հրատարակութեան ընդունուած գիտական սկզբունքներով երեք ճիւղերի (Ում, Էլ, Կր) բարբառներով: Գրքի վերջում ներկայացւում է ոչ միայն դժուար հասկանալի բարբառային բառերի բառարանը, այլեւ իւրաքանչիւր հեքիաթ օժտուած է ծանօթագրութիւնների համապատասխան համակարգով, ուր տեղեկութիւններ են տրւում գրառողի եւ ասացողի, նաեւ թէ՝ ասացողն ումից եւ որտեղ է լսել այն: Մատնանշւում են նաեւ տուեալ հեքիաթների՝ ԵՊՀի բանահիւսական արխիւում եղած եւ միջնադարեան աղբիւրներից ու հայ ժողովրդական հեքիաթների հրատարակութիւններից յայտնի տարբերակները: Գրքում բերուած են գրառուած 49 հեքիաթ, որոնց հրատարակութիւնը կարեւորւում է ոչ միայն նրանց գեղարուեստական, այլեւ բարբառագիտական արժէքով, քանի որ նրանցում ի յայտ են գալիս բարբառների աստիճանական գրականացման

միտումները: Այդ հեքիաթներում դրսեւորում են Յեղասպանութիւնից ու ներգաղթից յետոյ եւ ժողովրդագրական տեղաշարժերի հետեւանքով Խ. Հայաստանում բարբառների միախառնումով առաջացած բարբառային փոխազդեցութիւնները:

1970ականներին Յակոբեանը հեռուստատեսութեամբ վարեց ուսումնական հաղորդումների տեւական մի շարք (գլխաւոր ռեժիսոր՝ Արթուր Մինասեան), որն իր կարեւոր նպաստը բերեց բանահիւսութեան տարբեր սեռերի հասարակական ճանաչողութեան, դրանց գրական-գեղարուեստական մշակման, երաժշտական կատարման եւ ընդհանրապէս ժողովրդական ստեղծագործութիւնների հանդէպ 1970-1980ականների աննախադէպ հետաքրքրութիւն բարձրացնելու գործում: Կարելի է ասել, որ 1970ականների Խորհրդային Հայաստանում առաջացած ազգագրական շարժման ակունքներում է գտնւում Նելլի Յակոբեանի գործունէութիւնը:

Գրականագիտական, ի մասնաւորի՝ կերպարային վերլուծութեան վիպական գեղարուեստական խօսքի պատմահամեմատական քննութեան լաւագոյն օրինակ է Յակոբեանի *Կերպարների Կերտման Սկզբունքը Սասնայ Ծռերում* (Երեւան, 1983) ուսումնասիրութիւնը: Այստեղ հանգամանալից քննութեամբ ցոյց է տրւում մեր ազգային դիւցազնավէպի գլխաւոր հերոսներից իւրաքանչիւրի գործողութիւնների եւ պահուածքի ներքին պատճառաբանուածութիւնը ժողովրդի գեղագիտական հաւաքական ըմբռնումների եւ դարաւոր աշխարհայեացքի շրջանակում:

Նելլի Յակոբեանի ղեկավարութեամբ իրականացուած գրառումների բարձրակէտն է ժողովրդական խաղիկների հաւաքածուն: Մանուկ Աբեղեանի նշանաւոր *Ժողովրդական Խաղիկներ* ժողովածուն, որը պարունակում է 4500 միաւոր, օրինակ է ծառայել կազմելու մի նոր ժողովածու, որը ոչ միայն ունի Աբեղեանի ժողովածուում ներկայացուած գրեթէ բոլոր միաւորները իրենց փոփոխակներով, այլեւ բազմաթիւ նոր միաւորներ՝ գրառուած ազգագրական տարբեր շրջաններում եւ տարբեր բարբառներով: Տակաւին անտիպ այս ժողովածուում ի մի են հաւաքուած հինգ հազար միաւոր խաղիկներ, որոնք տարբեր շրջաններում գրառուած իրենց փոփոխակների հետ ներկայացնում են 25,000 խաղիկ՝ ցոյց տալով ժողովրդական քնարական փոքրիկ այս ստեղծագործութիւնների կենսունակութիւնը, պոէտիկ գրաւչութիւնը եւ որոշակի թեմատիկ փոխակերպումները Խորհրդային Հայաստանի գիւղական նոր կեանքի եւ միջավայրի պայմաններում: Աբեղեանի ժողովածուում առկայ նիւթի ներառմամբ կազմուած խաղիկային միաւորների այս նոր հրատարակութիւնը, որը կ'իրականանայ Յակոբեանի ուսանողների ջանքերով, կը դառնայ իրենց ուսուցչի յիշատակին կանգնեցուած մնայուն մի յուշարձան:

Ալեքսանդր Նիկոլաեւիչ Աֆանասեի՝ ռուսական ժողովրդական հեքիաթների ժողովածուից Նելլի Յակոբեանի անմիջական ղեկավարութեամբ ընտրուեց հեքիաթների մի փունջ եւ հայերէն թարգմանութեամբ (թարգմանիչներ՝ Արծրուն Սահակեան, Ա. Սեդրակեան) հրատարակուեց *Ռուսական Ժողովրդական Հեքիաթներ* (Երեւան, 1987) գիրքը «Աշխարհի Ժողովուրդների Հեքիաթները» մատենաշարով:

Շուրջ չորս տասնամեակ իր դասախօսութիւններով, գիտա-մանկավարժական գործունէութեամբ ու մտաւորականի էութեամբ ուսանողների համար բարձր արժէքային համակարգի կենդանի կրողը եւ փոխանցողը եղաւ Նելլի

Յակոբեանը, ուսուցանելով, որ գիտնականի կեանքում անբաժանելիօրէն իրար միահիւսուած պէտք է լինեն գիտական խստապահանջութիւնը, քննականութիւնը եւ մարդկային ու հասարակական բարոյական բարձր նկարագիրը:

Նելլի Յակոբեանը մահացաւ 2008 Փետրուարի 25ին, Երեւանում:

ԱՐԾՐՈՒՆ ՍԱՀԱԿԵԱՆ
ՎԱՐԴԱՆ ԴԵՒՐԻԿԵԱՆ
devrikyan@yahoo.com

ՎԱՐԱԶԴԱՏ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
(1909-2008)

Կեանքի 99րդ տարին չբոլորած վախճանուեց ճարտարապետութեան դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի ակադեմիկոս Վարազդատ Մարտիրոսի Յարութիւնեանը:

Նա ծնուել է 1909 Նոյեմբերի 29ին, Վան քաղաքում եւ իր հազարաւոր բախտակից հայրենակիցների հետ 1915ին բռնել գաղթի ճանապարհը՝ ժամանակատրապէս հաստատուելով Թբիլիսիում: Այստեղ ապագայ գիտնականն աւարտել է միջնակարգ դպրոցը, ապա Երեւանում ընդունուել Պոլիտեխնիկական Ինստիտուտ, որը 1937ին գերազանց դիպլոմով աւարտել է եւ ստացել ճարտարապետի կոչում: 1938ին նոյն ինստիտուտում Վարազդատ Յարութիւնեանը սկսեց իր մանկավարժական աշխատանքը, որը եւ շարունակեց մեծ ջանասիրութեամբ շուրջ հօր տասնամեակ, մինչեւ 1999: 1945-90 նա Ճարտարապետութեան Ամբիոնի վարիչն էր:

Դեռ ուսանողական տարիներին դրսեւորուել են Յարութիւնեանի սէրը եւ ձգտումը դէպի հայկական միջնադարեան ճարտարապետական յուշարձանների հետազօտումը: Դա 1939ին նրան բերեց ԽՍՀՄ Գիտութիւնների Ակադեմիայի Հայկական Մասնաճիւղի ասպիրանտուրա, որն աւարտեց՝ գրելով եւ 1946ին պաշտպանելով որպէս ատենախօսութիւն՝ «Դուինի Ճարտարապետական Յուշարձանները» աշխատութիւնը (այն հրատարակուեց առանձին գրքով 1950ին՝ *Դուինի V-VII Դարերի Ճարտարապետական Յուշարձանները* վերնագրով):

Չկտրուելով գիտական-հետազօտական եւ մանկավարժական գործունէութիւնից՝ Յարութիւնեանը 1945ից դրանք յաջողութեամբ զուգակցել է ճարտարապետական հաստատութիւններում ղեկավար աշխատանքի հետ: 1945-1951, նա գլխաւորել է Հայաստանի Յուշարձանների Պահպանութեան Կոմիտէն, 1962-1974՝ եղել է Հայաստանի Ճարտարապետների Միութեան նախագահ եւ 1977ից մինչեւ մահը՝ Հայաստանի Պատմութեան եւ Մշակոյթի Յուշարձանների Պահպանութեան Ընկերութեան նախագահ:

Յարութիւնեանը մօտ կէս դար եղել է Երեւանի Պոլիտեխնիկական Ինստիտուտի Ճարտարապետութեան Ամբիոնի վարիչը, առաջինն է մշակել հայ-

կական ճարտարապետութեան պատմութեան եւ տեսութեան դասընթացների հիմունքները, մտցրել Հայաստանում խիստ անհրաժեշտ՝ յուշարձանների վերանորոգման եւ վերականգնման գործի դասաւանդումը: Իր հետազօտական աշխատանքի հենց սկզբից գիտնականը դրսեւորեց իրեն ոչ միայն որպէս հայկական ճարտարապետութեան իսկական գիտակ, այլեւ, որը շատ կարեւոր է, իսկական հայրենասէր: Նրա «Արուճի Տաճարի Թուագրման Առթիւ» 1946ին ռուսերէն տպագրուած աշխատանքը վրացի գիտնական Գէօրգի Չուբինաշուիլու՝ հայկական մշակոյթի հանդէպ կատարած ոտնձգութիւններին պատասխան էր, որի համար այդ տարիներին քաղաքացիական խիզախութիւն էր պահանջւում:

Փորձ կատարելով Հայաստանի ճարտարապետութեան քիչ-ուսումնասիրուած առանձին խնդիրների հետազօտութեան ասպարէզում, Յարութիւնեանը 1951ին Մոսկուայում (Ս. Սաֆարեանի հետ համատեղ) հրատարակեց ռուսերէն *Pamiatniki Armiasnskogo Zodchestva* (Հայկական ճարտարապետութեան յուշարձաններ) գիրքը հարուստ պատկերազարդումով եւ գիտական բարձր մակարդակով շարադրուած:

Յարութիւնեանի գիտահետազօտական աշխատանքում արժէքաւորն այն է, որ նա ուշադրութիւն էր դարձնում հայկական ճարտարապետութեան չուսումնասիրուած կամ քիչ ուսումնասիրուած հարցերի վրայ: Այնպիսի թեմաներ, ինչպիսիք են միջնադարեան Հայաստանի քաղաքաշինութիւնն ու աշխարհիկ ճարտարապետութիւնը, դարձան նրա երկարատեւ հետազօտութիւնների հիմնական բնագաւառները, որոնց արդիւնքները հեղինակը տպագրեց որպէս մնայուն արժէքի գործեր՝ առանձին գրքերով եւ յօդուածներով: Այդ մենագրութիւններից *Միջնադարեան Հայաստանի Քարաւանատներն ու Կամուրջները* գիրքը (Երեւան, 1960) եղաւ ներդրում՝ հայկական աշխարհիկ ճարտարապետութեան ուսումնասիրութեան գործում:

Յարութիւնեանի, որպէս գիտնականի, նշելի գծերից է նաեւ այն, որ նա հիմնականում զբաղուելով Հայաստանի հին եւ միջնադարեան ճարտարապետութեան խնդիրներով, իր այդ աշխատանքն արդիւնաւէտ զուգակցել է նաեւ հայկական ժամանակակից ճարտարապետութեան հարցերի հետազօտութեան: Դրան են նուիրուած ամսագրերում եւ թերթերում լոյս տեսած՝ նրա հարիւրաւոր յօդուածները, տպագրած զեկուցումները եւ *Խորհրդային Հայաստանի Ճարտարապետութիւնը* մենագրութիւնը, տպագրուած Երեւանում, 1955ին (Կ. Յովհաննիսեանի հեղինակակցութեամբ): Այս գիրքը եղաւ Ի. դարի հայկական ճարտարապետութեան կազմաւորման ու զարգացման պատմական գործընթացի գիտական համակարգման առաջին փորձը:

Յարութիւնեանի՝ 1960ականների հետազօտութիւնների շարքում ամենանշանակալիցը *Քաղաքաշինութիւնը Հին եւ Միջնադարեան Հայաստանում* խոշոր մենագրութիւնն էր, որը հեղինակը 1964ին յաջողութեամբ պաշտպանեց որպէս ատենախօսութիւն Լենինգրադում եւ ստացաւ ճարտարապետութեան դոկտորի գիտական աստիճան: Այս աշխատութեան է առնչւում նրա գրչին պատկանող, նոյն թուին Երեւանում տպագրուած *Անի Քաղաքը (Միջնադարեան Հայաստանի Քաղաքաշինութեան Պատմութիւնից)* գիրքը՝ նուիրուած Հայաստանի երբեմնի մայրաքաղաքին: Իսկ այժմեան մայրաքաղաքին է նուիրուած 1968ին Մոսկուայում լոյս տեսած *Երեւան* գիրքը (հեղինակակիցներ՝ Մ. Հասրաթեան եւ Ա. Մելիքեան), որտեղ առաջին անգամ ներկայացւում

է Երեւանի ճարտարապետութիւնը քաղաքի հիմնադրումից մինչեւ նրա 2750ամեայ յոբելեանը: 1964ին նա հրատարակութեան պատրաստեց եւ խմբագրեց վաղամեռիկ Էմին Յակոբեանի *Աշտարակի Երջանի ժողովրդական Բնակարանի Ճարտարապետութիւնը* հատորը:

Սփիւռքի հայութեանը եւ ընդհանրապէս արտասահմանեան ընթերցողին Հայաստանի ճարտարապետական ժառանգութեանը ծանօթացնելու գործում խիստ կարեւոր էր 1975ին, Մեծ Եղեռնի 60ամեակին, Բէյրութում լոյս տեսած նրա *Monuments of Armenia (From the Prehistoric Era to the 17th Century) Հայաստանի Յուշարձանները* (Մօրուս Հասրաբեանի մասնակցութեամբ) շքեղ պատկերազարդ գիրքը՝ հայերէն, անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներով:

1978ին Յարութիւնեանը հրատարակեց *Հին Աշխարհի Ճարտարապետութիւնը* ուսումնական ձեռնարկը՝ հիմնականում գրուած իր արտասահմանեան ուղեւորութիւնների ժամանակ կատարած սեփական դիտարկումների հիման վրայ: 1988ին լոյս տեսաւ *Եկայք Շինեցուք* գիրքը՝ նուիրուած Վազգէն Ա. Կաթողիկոսի գահակալութեան տարիներին Էջմիածնի Մայր Աթոռի շինարարական գործունէութեանը:

Յարութիւնեանի կէսդարեայ ուսումնասիրութիւնների հաւրագումարը եղաւ 1992ին տպագրուած *Հայաստանի Ճարտարապետութեան Պատմութիւն* կոթողային մենագրութիւնը (գրքի ռուսերէն համառօտ տարբերակը՝ *Kamennaya Letopis Armyanskogo Naroda* (Հայ ժողովրդի քարակերտ պատմութիւն) հրատարակուել էր Երեւանում 1985ին): Այս հիմնարար աշխատանքում տրուած է Հայաստանի շինարարական արուեստի ստեղծման, կազմաւորման եւ զարգացման փուլերի ողջ պատկերը: Գրքի իմացաբանական արժէքը կրկնապատկւում է հարուստ փաստագրական նիւթով, գիտական եւ միաժամանակ մատչելի շարադրանքով. այն հաստատուել է որպէս դասագիրք ճարտարապետութեան մասնագիտութեան ուսանողների համար:

Վարազդատ Յարութիւնեանը մեծ աւանդ ունի ճարտարապետութեան տեսական խնդիրների ուսումնասիրման գործում. մի բնագաւառ, որով շատ քչերն են զբաղուել: Նրա «ժառանգորդութիւնը միջնադարեան հայկական ճարտարապետութեան մէջ» թեմային նուիրուած ուսումնասիրութիւնների շարքը այդ բարդ եւ այժմէական հիմնահարցին վերաբերող լաւագոյն հետազօտութիւնն է:

Ուշագրաւ է, որ վերջին տարիներին, երբ զգալի նուազել էին հայագիտութեան բնագաւառում նոր աշխատութիւնների ստեղծումը եւ դրանց հրատարակումը, նա կրկնապատկուած եռանդով ու երիտասարդական աւիւնով, մինչեւ իր բեղմնաւոր կեանքի աւարտը, մէկը միւսի ետեւից տպագրում էր ինչպէս գիտական ուսումնասիրութիւններ (օրինակ՝ *Սուրբ Էջմիածնի Շինարար Գահակալները*. Ս. Էջմիածին, 1996), այնպէս էլ իր ուղեգրութիւնները, Հայաստանի՝ վերջին կէսդարեայ մշակութային կեանքի տարեգրութիւնը հանդիսացող յուշագրութիւնները:

1991ին նրան բախտ վիճակուեց լինել իր ծննդավայր Վանում, տեղում ուսումնասիրեց հայկական ճարտարապետութեան գլուխգործոցներ Աղթամարի տաճարը, Անիի յուշարձանները, Կարսի եկեղեցին, Վարագավանքը եւ իր դիտարկումները հրատարակեց *Նախնեաց Ոտնահետքերով* (Երեւան, 1995) գրքում:

1979ին Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիան Վարագդատ Յարութիւնեանին շնորհեց Թորոս Թորամանեանի անուան մրցանակ՝ «Հայաստանի ճարտարապետութեանը եւ տեսութեանը նուիրուած գիտահետազօտական նոր եւ մեծարժէք աշխատութիւնների համար», որը նրան հանդիսաւոր պայմաններում Զուարթնոցում յանձնեց ակադեմիայի նախագահ Վիկտոր Համբարձումեանը: Բեղմնաւոր գիտական եւ հասարակական աշխատանքի համար Վարագդատ Յարութիւնեանը պարգեւատրուել է մի շարք շքանշաններով ու մեդալներով, արժանացել Հայաստանի Արուեստի Վաստակաւոր Գործչի պատուաւոր կոչման: Իսկ Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Ա. Կաթողիկոսը նրան՝ հայ ազգին մատուցած մեծ ծառայութիւնների համար պարգեւատրել է «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» շքանշանով:

Հայագիտութեան ասպարէզում ունեցած մեծ աւանդի ու բեղմնաւոր աշխատանքի համար 1996ին պրոֆեսոր Վարագդատ Յարութիւնեանը միաձայն արժանի՝ ընտրուեց Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի անդամ:

Նրա մտքի ու գրչի արդիւնք են նաեւ *Ալեքսանդր Թամանեան* (Երեւան, 1958), *Թորոս Թորամանեան* (Երեւան, 1959), *Էջմիածնի Ճարտարապետական Յուշարձանները* (Երեւան, 1969), *Հայ Ժողովրդի Ճարտարապետական Ժառանգութիւնը (Համառօտ Ակնարկ)* (Երեւան, 1979), *Makaravank* (Միլանօ, 1994), *Բոսֆորի եւ Մարմարայի Ափերով (Ճամփորդական Օրագրութիւն)* (Երեւան 1996), *Կեանքիս Քառուղիներում (Կենսագրական Յուշագրութիւններ). Գիրք Առաջին*, (Երեւան, 1996), *Երեւանի Եկեղեցիները (Հանրամատչեի Տեղեկագիր)* (Երեւան, 1997), *Անմոռաց Հանդիպումներ. Յուշագրութիւններ* (Երեւան, 1998), *Աշխարհի Ճամփաներով* (Երեւան, Մասն Առաջին 2000. Մասն Երկրորդ, 2000), *Արուեստակից Ժամանակիցներս. Յուշեր, Բնութագրումներ, Գիրք Ա.* (Երեւան 2001), *Ճարտարապետական Յուշարձանների Վերականգնումը* (Երեւան, 2003) եւն.:

Վարագդատ Յարութիւնեանը մահացաւ 2008 Մարտի 19ին, Երեւանում:

ՄՈՒՐԱԴ ՀԱՍՐԱԹԵԱՆ
muradhasratyan@rambler.ru

ՉԱՐԲԵԱՋ ՄՍՏՈՅԵԱՆ
(1955–2008)

Քուրդ գրականագէտ, հայագէտ-քրդագէտ, բանաստեղծ եւ թարգմանիչ Չարբեազ Մստոյեանը (Չարբեազէ Ռաշ) ծնուել է 1955 Օգոստոսի 25ին, Էջմիածնում: 1977-1978ին ուսանել է Երեւանի Խ. Աբովեանի անուան Հայկական Պետական Մանկավարժական Ինստիտուտի Բանասիրական Բաժնում, որն աւարտել է առաջին կարգի դիպլոմով: 1977-1978ին աշխատել է նոյն ինստիտուտի հրատարակչութիւնում որպէս խմբագիր: 1980-1984ին դասախօսել է Մանկավարժական Ինստիտուտի Գորիսի Մասնաճիւղում (2001-2002ին եղել Հայոց Լեզուի եւ Գրականութեան Ամբիոնի վարիչը): Հայաստանի տարբեր բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում դասաւանդել է հայ

գրականութիւն, գրականութեան տեսութիւն, հայոց լեզուի ոճաբանութիւն, արեւելքի գրականութիւն, գեղագիտական ուսմունքների պատմութիւն, մանկավարժութեան պատմութիւն եւ այլ առարկաներ: 1990-1992 հիմնադրել է Դաւիթ Անյաղթ Համալսարանի Քրդագիտութեան Բաժինը: 1992-1993ին քրդերէն լեզու եւ քրդական գրականութիւն է դասաւանդել Մոսկուայի Ժողովուրդների Բարեկամութեան Պետական Համալսարանում: 1993-1997ին եղել է Մոսկուայում հրատարակուող քրդական ռուսալեզու *Kurdistan Rapport* ամսագրի խմբագիրը: 1999ից խմբագրել է քրդական հայալեզու *Արեւի Երկիր*, 2003ից՝ *Միջագետք* թերթերը: 1997ից ղեկավարել է «Քուրդիստան Կոմիտէ» հասարակական կազմակերպութիւնը:

Մստոյեանի առաջին ոտանաւորները տպագրուել են դեռեւս դպրոցական տարիներին: 1968ից նրա ստեղծագործութիւնները տպագրուել են Հայաստանի հայկական եւ քրդական եւ արտասահմանի քրդական մամուլում: Բանաստեղծութիւնների առաջին գրքոյկը տպագրել է 1983ին: Ստեղծագործութիւններն առանձին գրքով լոյս են տեսել 1986ին՝ «Քառերի Ապստամբութիւնը» վերնագրով (քրդերէն): Քրդական *Նոր Գարուն* ալմանախի 10 գրքերի համահեղինակներից մէկն է: Մամուլում եւ տարբեր ժողովածուներում լոյս են տեսել հայ բանաստեղծների (Նալբանդեան, Թումանեան, Իսահակեան, Տէրեան, Չարենց, Սահեան, Պարոյր Սեւակ, Վահագն Դաւթեան), նաեւ ռուս քնարերգուների մի շարք ստեղծագործութիւններ: Քրդերէնից հայերէն եւ ռուսերէն է թարգմանել եզդիական ծիսական բնագրեր եւ քրդական միջնադարեան քնարերգութեան նմուշներ: Կատարել է նաեւ ԺԷ. դարի քուրդ բանաստեղծ Ահմադէ Խանիի «Մամ ու Ջին» եօթ հազար տողանի վիպերգի ամբողջական հայերէն թարգմանութիւնը:

1980ին Մստոյեանը հրատարակել է *Քրդական Բանահիւսութեան Մշակոյթները Սովետահայ Գրականութեան Մէջ* գրականագիտական աշխատութիւնը: 1984ին թեկնածուական ատենախօսութիւն է պաշտպանել «Քուրդ Ժողովրդի Կեանքի Արտացոլումը Հայ Գրականութեան Մէջ» թեմայով: Գրականագիտական յօդուածներով եւ ուսումնասիրութիւններով հանդէս է եկել հայկական եւ քրդական մամուլում:

Դոկտորական ատենախօսութեան համար պատրաստել է «Քառեակի Ժանրը Հայ Գրականութեան Մէջ» ուսումնասիրութիւնը: Անտիպ են մնացել նաեւ Մստոյեանի «Քրդական Միջնադարի Գեղագիտութիւնը եւ Խօսքարուեստը», «Քրդական Գրականութեան Պատմութեան Ուրուագծեր», «Հայկական Աղբիւրները Քրդերի եւ Քրդստանի Մասին», «Քրդական Մանկական Գրականութիւն» եւ այլ աշխատութիւններ:

Ստանձնել էր նաեւ Գրիգոր Նարեկացու *Մատեան Ողբերգութեան* եւ հայ միջնադարեան քնարերգութեան տարբեր նմուշների քրդերէն թարգմանութեան աշխատանքը, սակայն մահը թոյլ չտուեց իրականացնել այդ ծրագիրը:

Չարքեազ Մստոյեանը յանկարծամահ եղաւ 2008ի Մարտի 20ին, Արմաւիրի մարզի Ջուարթնոց գիւղում:

ԵԼԵՆԱ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ
(1933-2008)

Գրականագէտ, թարգմանչուհի Ելենա Աշոտի Ալեքսանեանը ծնուել է 1933 Դեկտեմբերի 18ին, Երեւանում: 1955ին աւարտելով Երեւանի Պետական Համալսարանի Բանասիրութեան Ֆակուլտէտի Ռուսաց Լեզուի եւ Գրականութեան Բաժինը՝ աշխատանքի է անցնում համալսարանի հրատարակչութիւնում իբրեւ խմբագիր: 1957-1963ին աշխատում է ռուսալեզու *Komunist* թերթի խմբագրութեան գրականութեան եւ արուեստի բաժնում: Այնուհետեւ շարունակում է ուսումը ԵՊՀ ասպիրանտուրայում, իսկ 1963ին մեկնում է Մոսկուա՝ Մաքսիմ Գորկու անուան Համաշխարհային Գրականութեան Ինստիտուտում ստաժաւորում անցնելու: Վերադառնալով՝ 1964-66ին Երեւանի Վալերի Բրիւսովի անուան Ռուսաց եւ Օտար Լեզուների Մանկավարժական Ինստիտուտում ռուս գրականութիւն է դասախօսում: 1965ին բանասիրական գիտութիւնների թեկնածուի կոչում է ստանում՝ պաշտպանելով «Կոնստանտին Պաուստովսկին Նովելիստ» թեմայով ատենախօսութիւն:

Ալեքսանեանի տարերքը գիտութիւնն էր, եւ 1967ից որպէս աւագ գիտաշխատող աշխատանքի է անցնում ՀԽՍՀ ԳԱ Մաշտոց Աբեղեանի անուան Գրականութեան Ինստիտուտի Գրական Կապերի Բաժնում:

Տարիների գիտական որոնումների արդիւնքը ի մի բերելով՝ 1978ին պաշտպանում է դոկտորական ատենախօսութիւն՝ «Հայկական Ռէալիզմը եւ Ռուս Գրականութեան Փորձը» թեմայով:

Նա աւելի քան չորս տասնամեակ հայ գրականագիտութեան նուիրեալներից էր: Հայ գրականութեան արժէքները գիտնականը քննաբանում էր համաշխարհային գրական մթնոլորտի նկատառումով՝ հայ գեղարուեստական մտածողութեան ինքնատիպութիւնը դիտարկելով համամարդկային գրական աւանդոյթի ծիրում: Այս ինքնայատուկ մօտեցումը յատկորոշում է առհասարակ Ալեքսանեանի գիտական հայեացքի թափանցումներն ու խորաչափումները:

Համեմատական մեթոդաբանական սկզբունքների կիրարկումը գիտնականին հնարաւորութիւն է տուել իրովսանն որոշարկել համաշխարհային գրական գանձարանի հայ ժողովրդի չափաբաժինը՝ առանց ազգային սնապարծութեան, մեծամտութեան կամ ճնշուածութեան բարդոյթների:

Լայն է Ալեքսանեանի գիտական հայեացքի հորիզոնը: Հայ, ռուս եւ համաշխարհային գրականութեան քաջիմացութիւնը, պրպտող միտքը, համարձակ մօտեցումը գիտական մտայայտնութիւնների մեծ հնարաւորութիւն են տուել նրան: Հայ հոգին եւ իր գրական-գեղարուեստական իրացումները դիտուել են օտար եւ ներազգային տեսանկիւններից: Գիտական բարեխղճութիւնը, ճկուն լեզուամտածողութիւնը, մեղմ յուզականութեամբ բնորոշուող ոճը, հոգեբանական նուրբ դիտարկումները շահեկանօրէն են անդրադարձել Ալեքսանեանի ուսումնասիրութիւնների վրայ ամենատարբեր թեմաների իրացման ժամանակ՝ լինեն ԺԹ. դարի ռուս դասական թէ Արծաթէ Դարի գրականութիւնը, Յեղասպանութեան թեմայի հայ եւ օտար գեղարուեստական մշակումները թէ ֆրանսիական եւ հայկական խորհրդապաշտութեան զուգահեռումները, Բոդլէր-Վերլէն-Տէրեան-Թէքէեան-Մեծարենց, Աբովեան-Գոգոլ,

Զօհրապ-Մոպասան առնչութիւնները կամ բուլղարական, չեխական գրական իրողութիւնները:

Ելենա Ալեքսանեանը հեղինակել է *Ճանապարհի Դէպի Տուն* (Երեւան, 1966, 1996), *Կ. Պաուստովսկին Նովելիստ* (Մոսկուա, 1969), *Հայկական Ռէալիզմը եւ Ռուս Գրականութեան Փորձը* (Երեւան, 1977, 2007), *Հերոսի եւ Ոճի Որոնումների Ճանապարհին* (Երեւան, 1984), *Գրականութեան Շարժումը. Յօդուածներ* (Երեւան, 1985), *Հայաստանը Իմ Հոգում Ապրում է Հզօրաբար* (Երեւան, 2002) գրքերը (բոլորը՝ ռուսերէն): Հայերէնից ռուսերէն է թարգմանել Աւետիք Իսահակեանի, Պերճ Զէյթունցեանի, Ռաֆայէլ Արամեանի, Սերօ Խանզադեանի, Վարդգէս Պետրոսեանի ստեղծագործութիւններից:

Ելենա Ալեքսանեանը մահացաւ 2008 Յուլիսի 24ին ծանր հիւանդութիւնից՝ շատ գիտական մտայղացումներ թողնելով անաւարտ, միաժամանակ բարեխիղճ գիտնականի վաստակ, լաւ մարդու եւ ազնիւ ընկերոջ անուն թողնելով մեր յիշողութեան եւ յաւերժական ժամանակի մէջ:

ԼԻԼԻԹ-ԼՈՒՍԻՆԷ ՍԷՅՐԱՆԵԱՆ

ԵՈՒՐԻ ԲԱԲՍԵՂՈՎ
(1925–2008)

Իրաւաբանական գիտութիւնների դոկտոր, միջազգային իրաւունքի պրոֆեսոր Եուրի Գէորգիի Բաբսեղովը ծնուել է 1925ի Մարտի 7ին, Թբիլիսիում: Մայրական գծով նախապապը՝ Առաքել Քարամովը, ԺԹ. դարի սկզբին կռուել է Կովկասի լեռնականների առաջնորդ Շամիլի դէմ, պարգեւատրուել երեք Գէորգիեւեան Խաչով եւ մեդալներով: Հայրը՝ Գէորգի Բաբսեղովը (Գէորգ Բաբսեղեան), եղել է գինուորական, այնուհետեւ՝ Թբիլիսիի Օդանաւային Գործարանի փոխտնօրէն: Մայրը՝ Սուսաննա Բաբսեղովան, եղել է հայոց լեզուի ուսուցչուհի Թբիլիսիի հայկական դպրոցներից մէկում:

Միջնակարգ կրթութիւնն ստացել է Թբիլիսիի թիւ 47 ռուսական դպրոցում: 1943-1945՝ ծառայել է բանակում, արժանացել «Գերմանիայի Դէմ Տարած Յաղթանակի» եւ «Կովկասի Պաշտպանութեան Համար» մեդալներին:

1950ին աւարտել է ԽՍՀՄ Արտաքին Գործերի Նախարարութեան Միջազգային Յարաբերութիւնների Մոսկովեան Պետական Ինստիտուտը՝ «իրաւաբան-թարգմանիչ Ֆրանսիայի գծով» մասնագիտութեամբ, այնուհետեւ շարունակել է ուսումն Միջազգային Իրաւունքի Ամբիոնի ասպիրանտուրայում: Այս ժամանակաշրջանում Բեռլինի (Պոցդամի) կոնֆերանսում դրուած է եղել պատմական անարդարութիւնները ուղղելու հարցը, որի հանդէպ խորհրդային կառավարութիւնը հետաքրքրութիւն է ցուցաբերել: 1950ին Ստալինը դաշնակից տէրութիւնների առջեւ դրել էր հայկական տարածքները վերադարձնելու հարցը: Բաբսեղովը, օգտուելով ստեղծուած յարմար պահից, տուել է հարցի տեսական եւ իրաւական վերլուծութիւնն ու գնահատականը՝ գրելով «Հայկական Տարածքները Միջազգային-իրաւական Գործերում» թեմայով դիսերտա-

յին աշխատանք, այնուհետեւ՝ ատենախօսութիւն: 1953ին այն պատրաստ է եղել պաշտպանութեան, սակայն պաշտպանութիւնից մէկ շաբաթ առաջ խորհրդային կառավարութիւնը հրաժարուել է Թուրքիայի հանդէպ տարածքային պահանջներից, եւ պատրաստի ատենախօսութիւնը դարձել է անընդունելի: Այդժամ Բարսեղովը վեց ամսուայ ընթացքում գրել է նոր ատենախօսութիւն՝ «Տարածքը Միջազգային Իրաւունքում» եւ 1953ի վերջին պաշտպանել: Այն առանձին գրքով լոյս է տեսել 1958ին:

Ասպիրանտուրան աւարտելուց յետոյ Բարսեղովը դարձել է Մոսկուայի *Innostrannaya Literatura* (Արտասահմանեան գրականութիւն) հրատարակչութեան վարիչի տեղակալ, այնուհետեւ՝ Միջազգային Յարաբերութիւնների, Դիւանագիտութեան եւ Իրաւունքի Խմբագրութեան վարիչ:

1962-1968՝ Եուրի Բարսեղովն աշխատել է ՄԱԿի քարտուղարութիւնում: 1969-1972՝ ԽՍՀՄ Գիտութիւնների Ակադեմիայի Համաշխարհային Տնտեսութեան եւ Միջազգային Յարաբերութիւնների Ինստիտուտում Բարսեղովը զբաղեցրել է Միջազգային Կազմակերպութեան Բաժնի վարիչի պաշտօնը: 1972ին վերադարձել է ՄԱԿ՝ Գլխաւոր Քարտուղարի տեղակալի իրաւական յատուկ խորհրդականի եւ Քարտուղարութեան Իրաւական Բաժնի նախագահի պաշտօնով (մինչեւ 1978): Մասնակցել է ծովային իրաւունքին նուիրուած ՄԱԿի երրորդ համաժողովի եւ այլ գիտաժողովների կազմակերպմանը: 1979ին վերադարձել է Համաշխարհային Տնտեսութեան եւ Միջազգային Յարաբերութիւնների Ինստիտուտի Համաշխարհային Ովկիանոսի եւ Շրջակայ Միջավայրի Միջազգային Հիմնահարցերի Բաժին՝ որպէս Միջազգային Ծովային Իրաւունքի Բաժանմունքի վարիչ, այնուհետեւ՝ Համաշխարհային Ովկիանոսի Բաժնի վարիչ: Նոյն տարուանից սկսել է դասաւանդել Մոսկուայի Ժողովուրդների Բարեկամութեան Ինստիտուտի (այժմ՝ համալսարան) Միջազգային Իրաւունքի Բաժնում՝ ստանալով ուսուցչապետի կոչում: 1984ին պաշտպանել է դոկտորական ատենախօսութիւն «Համաշխարհային Ովկիանոսի Նուաճման Համընդհանուր Հիմնախնդրի Լուծման Միջազգային-իրաւական Հիմունքները» վերնագրով: 1987-1991՝ ՄԱԿի Ընդհանուր Ժողովի կողմից ընտրուել է Միջազգային Իրաւունքի Յանձնախմբի անդամ:

Եուրի Բարսեղովը հեղինակ է մի շարք մենագրութիւնների եւ 300ից աւելի յօդուածների՝ նուիրուած միջազգային յարաբերութիւնների, դիւանագիտութեան եւ իրաւունքի տարբեր խնդիրներին: Դրանք տպագրուել են ինչպէս Ռուսաստանում եւ Հայաստանում, այնպէս էլ այլեւայլ երկրներում (ԱՄՆ, Ֆրանսիա, Գերմանիա, Նորուեգիա, Շուեդիա, Ճապոնիա, Ֆինլանդիա): Նրա հետաքրքրութիւնների մասնաւոր ոլորտն էր կազմում ծովային իրաւունքը. այս խնդրին են նուիրուած Բարսեղովի *Համաշխարհային Ովկիանոս. Իրաւունք, Քաղաքականութիւն, Դիւանագիտութիւն* (Մոսկուա, 1983), *Համաշխարհային Ովկիանոս. Հակամարտութիւններից Դէպի Համագործակցութիւն* (Մոսկուա, 1985), *Միջազգային Ծովային Իրաւունքի Բառարան* (Մոսկուա, 1985, համահեղինակ եւ պատասխանատու խմբագիր) եւ այլ ռուսերէն գրքերը: Ուսումնասիրել է նաեւ միջնադարեան հայկական ծովագնացութեան եւ ծովային իրաւունքի պատմութիւնը. այդ հարցին են նուիրուած նրա «Կիլիկեան Հայաստանի Պայքարը Ընդդէմ Ծովահէնութեան Միջերկրական Ծովում» ուսումնասիրութիւնը (*Պատմաբանասիրական Հանդէս*, 1973, թիւ 3, ռու-

սերէն) եւ «Ծովահէնութիւն» յօդուածը *Հայկական Սովետական Հանրագիտարանում* (հատոր 5, Երեւան, 1979, էջ 135-136):

Արցախեան շարժման տարիներին Բաբսեղովը սկսել է ակտիւօրէն զբաղուել նրա հակամարտութեան կարգաւորման գործով՝ տեսականօրէն եւ գործնականում: 1994-97՝ աշխատել է ԵԱՀԿի՝ ղարաբաղեան հիմնախնդրով զբաղուող Մինսկի Խմբում՝ միջազգային իրաւունքի ասպարէզում ունեցած իր գիտելիքների շնորհիւ լուրջ աւանդ ներդնելով խմբի աշխատանքի մէջ: 1999ին հիմնել է Ռուսաստանի Հայերի Միութեան հովանու ներքոյ ստեղծուած Միջազգային Իրաւունքի եւ Քաղաքագիտութեան Հայկական Ինստիտուտը, որը տնօրինել է մինչեւ կեանքի վերջը: Հրատարակել է *Հայերի Ցեղասպանութիւնը՝ Յանցագործութիւն Ըստ Միջազգային Իրաւունքի* (Մոսկուա, 2000), *Միջազգային Իրաւունքի Թուրքական Ուսմունքը Ցեղասպանութեան Քաղաքականութեան Ծառայութեան Մէջ (Հաշտութեան Յանձնախմբի Անդամ Գիւնդուզ Աբբասի Հայեցակարգի Մասին)* (2002) ռուսերէն մենագրութիւնները:

Եուրի Բաբսեղովի վերջին եւ ամէնից ազդեցիկ աշխատութիւնն էր երեք գրքով հրատարակուած փաստաթղթերի ժողովածուն՝ *Հայերի Ցեղասպանութիւնը. Թուրքիայի Պատասխանատուութիւնը եւ Համաշխարհային Ընկերակցութեան Պարտականութիւնը: Փաստաթղթեր եւ Մեկնաբանութիւններ* վերտառութեամբ, որը լոյս է տեսել 2002-2005ին:

2005ին Բաբսեղովն ընտրուել է ՀՀ Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի արտասահմանեան անդամ: Եղել է նաեւ Ռուսաստանի Ծովային Իրաւունքի եւ Միջազգային Իրաւունքի ընկերակցութիւնների անդամ: 2000ին ՀՀ նախագահի հրամանով պարգեւատրուել է Մխիթար Գօշի անուան մեդալով՝ «Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման հարցի գիտական հիմնաւորման եւ արցախեան հակամարտութեան կարգաւորման գործում ունեցած աւանդի համար»: Արժանացել է նաեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Մեսրոպ Մաշտոցի անուան շքանշանին (2000), Ռուսաստանի Հայերի Միութեան Ոսկէ Խաչին եւ այլ պարգեւների:

Եուրի Բաբսեղովը մահացել է 2008ի Օգոստոսի 6ին, Մոսկուայում:

ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ

ԳՆԷԼ ԳՐԻԳՈՐԵԱՆ
(1947-2008)

Պատմաբան, ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի փոխտնօրէն, պատմական գիտութիւնների թեկնածու Գնէլ Ստեփանի Գրիգորեանը ծնուել է 1947 Դեկտեմբերի 29ին, Աբովեանի շրջանի Կոտայք գիւղում: 1963ին աւարտելով տեղի միջնակարգ դպրոցը՝ ընդունուել է Խաչատուր Աբովեանի անուան Հայկական Պետական Մանկավարժական Ինստիտուտի Պատմութեան Բաժինը: 1967ին աւարտել է ինստիտուտը, ապա զօրակոչուել խորհրդային բանակ: 1969 Յունուարի 16ից աշխատանքի է անցել ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտում, մասնագիտացել միջնադարեան Հայաստանի պատ-

մութեան հարցերով: 1982ին պաշտպանել է թեկնածուական ատենախօսութիւն՝ «Տարօնի Բագրատունիների Ֆէոդալական Իշխանութիւնը IX-X դդ.» թեմայով: 1984ին նշանակուել է աւագ գիտաշխատողի պաշտօնում: 2002ին դարձել է Ինստիտուտի Գիտական Հարցերի գծով փոխտնօրէն:

Գնէլ Գրիգորեանը դասաւանդել է նաեւ հանրապետութեան ԲՈՒՀերում եւ Մայր Աթոռի Գէորգեան Ճեմարանում:

Գրիգորեանը նշանակալի ներդրում է ունեցել հայ միջնադարագիտութեան ասպարէզում: Նրա մենագրութիւնները՝ *Տարօնի Բագրատունիների Ֆէոդալական Իշխանութիւնը IX-X դդ.* (Երեւան, 1983), *Նուիրատուութիւններ Անիի Եկեղեցիներին ու Վանքերին IX-XIV դդ.* (Ս. Էջմիածին, 2002) եւ գիտական բազմաթիւ յօդուածները նշանակալի ներդրում են հայ պատմագիտութեան բնագաւառում:

Նրա առաջին գիտական մենագրութիւնը՝ *Տարօնի Բագրատունիների Ֆէոդալական Իշխանութիւնը IX-X դդ.*, նոր խօսք էր հայ միջնադարագիտութեան ասպարէզում: Ուսումնասիրութիւնը նուիրուած է զարգացած միջնադարեան Հայաստանի կարեւոր պետական կազմաւորումներից մէկի պատմութեանը: Աշխատութիւնում մանրամասն լուսաբանւում են ոչ միայն Տարօնի եւ այլ հայկական իշխանութիւնների, այլեւ հարեւան երկրների՝ Արաբական Խալիֆայութեան եւ Բիւզանդական Կայսրութեան հետ այդ հայկական իշխանութիւնների ունեցած յարաբերութիւններին առնչուող կարեւորագոյն հարցեր:

Բաւական լայն է Գրիգորեանի գիտական հետազօտութիւնների շրջանակը. գիտնականի յաջորդ մենագրութիւնը նուիրուած է Բագրատունեաց մայրաքաղաք Անիի հոգեւոր եւ տնտեսական կեանքի լուսաբանմանը: *Նուիրատուութիւններ Անիի Եկեղեցիներին ու Վանքերին* աշխատութիւնում հեղինակը կիրառել է հարցի լուսաբանման այնպիսի մօտեցում, որի շնորհիւ որոշակի են դառնում հոգեւոր մարմինների կալուածքների վերաբերեալ պատկերացումները, բացայայտւում նուիրատուութիւնների շարժընթացը, ցոյց տրւում կալուածների կառուցուածքը եւ նշանակութիւնը, եկամտաբերութիւնը, գները, նրանց նկատմամբ իրաւունքի հիմնական ձեւերը եւն.: Համակողմանի քննութեան են առնւում նուիրատուութիւնների արժէքն ու կառուցուածքը, նուիրատուների սոցիալական կազմը: Այդ առումով սոյն մենագրութիւնը հայ միջնադարագիտութեան բնագաւառում եզակի է:

Գրիգորեանը հեղինակել է նաեւ *ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի 60 Տարին* (Երեւան, 2003) աշխատութիւնը: Նա իրաւամբ այդ գիտական հաստատութեան պատմութեան կենդանի տարեգիրն էր: Այդ գրքում ի մի է բերւում ինստիտուտի 60ամեայ կենսագրութիւնը, նրա ունեցած աւանդը հայագիտութեան զարգացման գործում: Այն Ի. դարի երկրորդ կէսի հայ պատմագիտական մտքի նուաճումների մի իւրատեսակ ամփոփում է:

Գնէլ Գրիգորեան մարդուն, քաղաքացուն, գիտնականին թէկուզեւ հպանցիկ ճանաչողները առաջին հերթին կը նշեն նրա մարդկային բարձրական բարձր նկարագիրը: Նրա անսահման բարութիւնն ու հոգատարութիւնը նկատելի էր իր գործունէութեան բոլոր ոլորտներում՝ ընտանիքից մինչեւ ընկերութիւն, լսարանից մինչեւ ինստիտուտ: Գրիգորեանը յատկապէս ուշադիր էր երիտասարդ սերնդի նկատմամբ: Չափազանց մեծ է նրա վաստակը հայկա-

կան պատմագիտական մտքի գլխաւոր դարբնոցի՝ ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի գործունէութեան մէջ:

Գնել Գրիգորեանն իր երկրի իսկական քաղաքացին էր, նա ապրում եւ շնչում էր իր երկրի հոգսերով, ուրախանում յաջողութիւններով: Նրա համար հայրենիքը բարձրագոյն արժէք էր: Երկրին բաժին հասած դժուարութիւնները հատասարապէս իրենն էին:

Գնել Գրիգորեանը մահացաւ 2008 Հոկտեմբերի 4ին, Երեւանում:

ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Գնել Գրիգորեանը աշխատակցած է նաեւ Հայկազեան Հայագիտական Հանդէսին (Հտր. ԻՀ., էջ 417-419): Իր մահով, ՀՀՀՀ կը կորսնցնէ արժէքաւոր աշխատակից մը:

ՀՄԱՅԵԱԿ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ
(1926-2008)

Պատմական գիտութիւնների թեկնածու Հմայեակ Մարտիրոսեանը ծնուել է 1926 Դեկտեմբերի 21ին, Կիսլովոդսկ քաղաքում (Հիւսիսային Կովկաս), մշեցի հօր եւ կարսեցի մօր ընտանիքում: Միջնակարգ կրթութիւնն ստացել է ծննդավայրի ռուսական դպրոցում: Հայերէնը սովորել է 1947ին, Երեւան տեղափոխուելուց յետոյ: 1952ին աւարտել է Երեւանի Պետական Համալսարանի Միջազգային Յարաբերութիւնների Բաժինը, 1962ին՝ ԽՍՀՄ Արտաքին Գործերի Նախարարութեան Բարձրագոյն Դիւանագիտական Դպրոցը: 1962-1965 եղել է Իրանում ԽՍՀՄ դեսպանատան երկրորդ քարտուղար, իսկ 1973-1976՝ Գանայում ԽՍՀՄ դեսպանատան առաջին քարտուղար:

Մարտիրոսեանը գիտական աշխատանքն անցկացրել է ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան եւ Պատմութեան ինստիտուտներում որպէս աւագ գիտաշխատող: 1969ին պաշտպանել է թեկնածուական ատենախօսութիւն՝ «Իրանահայ Գաղութի Պատմութիւնից (Նորագոյն Շրջան)» նիւթով (ռուսերէն):

Հրատարակել է «Իրանահայ Գաղութի Պատմութիւնից (Նորագոյն Շրջան)» (*Մերձաւոր եւ Միջին Արեւելքի Երկրներ եւ Ժողովուրդներ, VIII, Իրան*), (Երեւան, 1975), *Հայկական Բնակավայրերը Իրանի Տարածքում XI-XV դդ.* (Երեւան, 1990, ռուսերէն), *Մետաքսի Մեծ Ճանապարհին* (Երեւան, 1998, ռուսերէն), *Հայաստանի եւ Մերձաւոր Ասիայով Անցնող Միջազգային Ճանապարհները Ըստ Պետինգերեան Քարտէզի* (Երեւան, 2003, ռուսերէն), «Իրան» (*Հայ Գաղթաշխարհի Պատմութիւնից*, 2, (Երեւան, 2003) եւ *Իրանահայ Գաղութի Պատմութիւն* (Երեւան, 2007) աշխատութիւնները:

Մարտիրոսեանն աշխատակցել է նաեւ *Հայկազեան Հայագիտական Հանդէսին*՝ նրա էջերում հրատարակելով «Պետինգերեան Քարտէզ. Առաջաւոր Ասիայի Հատուածամասերը» (Հտր. ԻԱ., 2001) եւ «Պետինգերեան Քարտէզ. Նոր Տեղեկութիւններ Հայաստանի եւ Առաջաւոր Ասիայի Միջով Անցնող

Ճանապարհների Մասին» (Հտր. ԻԳ., 2003) ուսումնասիրութիւնները: Իր մահով ՀՀՀՆ կորցնում է իր արժէքաւոր աշխատակիցներից մէկին:

Հմայեակ Մարտիրոսեանը մահացաւ 2008ի Հոկտեմբերի 4ին, Երեւանում:

ՀՀՀ

ԿԱՌԼԷՆ ԴԱԼԼԱՔԵԱՆ
(1929–2008)

Պատմաբան, գրականագէտ, թարգմանիչ Կառլէն Լեւոնի Դալլաքեանը ծնուել է 1929ին՝ Լոռու Մարզի (նախկին Թումանեանի շրջանի) Ալավերդի քաղաքում: 1938ից ի վեր բնակւում էր Երեւանում:

1951ին աւարտել է Երեւանի Պետական Համալսարանի Բանասիրական Ֆակուլտէտի Ռոմանոգերմանական Բաժինը: Մէկուկէս տարի աշխատել է Ներքին Գործերի Նախարարութիւնում, իրականացրել է կոմերիտական գանազան աշխատանքներ՝ գուգահեռաբար սովորելով համալսարանի հեռակայ ասպիրանտուրայում: 1957ից մինչեւ 1962ի տարեվերջը աշխատել է Հայկոմկուսի Կենտկոմում որպէս հրահանգիչ, Մամուլի Բաժնի վարիչ, Պրոպագանդայի Բաժնի վարիչի տեղակալ: 1963ի Յունուարին նշանակուել է ՀԽՍՀ Մինիստրների Խորհրդի Մշակոյթի Բաժնի վարիչ: Նոյն թուականի Յուլիսից մինչեւ 1970ի Յունուարը եղել է ՀԽՍՀ Մինիստրների Խորհրդին Առընթեր Հայ Եկեղեցու Գործերի Խորհրդի նախագահ: 1970ից մինչեւ 1985ի տարեվերջն աշխատել է ՀԿԿ Կենտկոմում որպէս Պրոպագանդայի եւ Ագիտացիայի Բաժնի վարիչի տեղակալ, Բաժնի վարիչ, ՀԿԿ Կենտկոմի քարտուղար: 1985 Դեկտեմբերից մինչեւ 1991 Փետրուարը զբաղեցրել է Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէի նախագահի պաշտօնը: Զուգահեռաբար, 1986ի Մարտից մինչեւ 1995ի Հոկտեմբերն աշխատել է ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի Սփիւռքահայ Համայնքների Պատմութեան եւ Մշակոյթի Բաժնում որպէս վարիչ, ապա՝ գլխաւոր գիտաշխատող: Երեք անգամ ընտրուել է ՀԽՍՀ Գերագոյն Խորհրդի պատգամաւոր:

Գիտական ասպարէզ նա մտել է երիտասարդ հասակում: 1965ին պաշտպանել է թեկնածուական՝ «Լիբանանահայ Մամուլի Պատմութիւնը» նիւթով, 1988ին՝ դոկտորական ատենախօսութիւն բանասիրական գիտութիւնների գծով՝ «Արշակ Չօպանեանը եւ Սփիւռքահայ Գրականութեան Զարգացման Հարցերը» թեմայով: Պարբերական մամուլում սկսել է հանդէս գալ 1954ից: Հայաստանի, Սփիւռքի եւ Խորհրդային Միութեան ամսագրերում եւ լրագրերում հրատարակել է մշակութաբանական, քաղաքական եւ հասարակագիտական հարիւրաւոր յօդուածներ: Դրանցից աւելի քան յիսունը շօշափում են գրականագիտական, պատմագիտական եւ արուեստաբանական խնդիրներ:

1964ին հրատարակուել է նրա *Լիբանանահայ Դեմոկրատական Մամուլի Պատմութիւնից*, 1987ին՝ *Արշակ Չօպանեան: Կեանքն ու Գործը*, 1992ին՝ *Հայ Սփիւռքի Պատմութիւն*, 1994ին՝ *Ակնարկներ Սփիւռքահայ Մտքի Պատ-*

մութեան, 1996ին՝ *ՀԲԸ Միութեան Նախագահ Գ. Կիլպենկեանի Հրաժարականի Հարցի Շուրջ*, 1998ին՝ *Յուշապատում. Դէմքեր, Իրողութիւններ, Մտորումներ*, 1999 եւ 2007ին՝ *Ռամկավար Ազատական Կուսակցութեան Պատմութիւն* երկհատորեայ աշխատութիւնները: Հեղինակ է մշակութաբանական, պատմագիտական, հասարակագիտական 11 գիտահանրամատչելի գրքոյկների: 1987ին հրատարակել է *Հայանցիկ Դիմապատկերներ* ժողովածուն, որը պարունակում է ակնարկներ հայ եւ համաշխարհային մշակոյթի նշանաւոր գործիչների ու պատմական ականաւոր անձանց վերաբերեալ: Իրաքանչիւր աշխատութեան մէջ հեղինակը ոչ միայն շրջանառութեան մէջ է դրել նորայայտ եւ հարուստ արխիւային նիւթեր, այլեւ մեծ վարպետութեամբ գնահատել է անհատների գործունէութիւնն ու պատմական իրադարձութիւնները:

1953ից ի վեր Դալլաքեանը զբաղուել է նաեւ թարգմանչական գործով: Ռուսերէնից եւ անգլերէնից նրա թարգմանութեամբ լոյս են տեսել մի շարք վէպեր ու պատմուածքների ժողովածուներ: Ձեկուցումներով հանդէս է եկել Հայաստանում, Սփիւռքում եւ ԽՍՀՄ մի շարք գիտական կենտրոններում կազմակերպուած գիտաժողովներում ու սեմինարներում:

Անգնահատելի է Դալլաքեանի աւանդը հայ գրականագիտութեան եւ սփիւռքագիտութեան բնագաւառում: Նրա գիտական գործունէութիւնն իրապէս արժանի է հիացմունքի եւ երախտագիտութեան: Գտնուելով իշխանութեան վերին օղակներում՝ Դալլաքեան գիտնականը միշտ հաւատարիմ է մնացել գիտութեան սկզբունքներին, եւ պատահական չէ, որ նրա բոլոր աշխատութիւնները դիմացել են ոչ միայն գիտութեան եւ ժամանակի քննութեանը, այլեւ նոր շունչ ու որակ են հաղորդել հայ գրականագիտութեանն ու պատմագիտութեանը: Յանկացած խնդիր, որ չօշափում էր նշանաւոր բանաստէղծ ու պատմաբանը, հասցնում էր իր ծագմանն ու առաջացման պատճառներին, ստանում էր միանգամայն հիմնաւորուած լուծում ու գնահատական: Այն բացառիկ գիտնականներից էր, որն առաջնորդւում էր հետեւեալ սկզբունքով՝ եթէ տեսութիւնը չի համապատասխանում փաստերին, ապա անհրաժեշտ է դէն նետել տեսութիւնը, այլ ոչ թէ փաստերը:

Կառլէն Դալլաքեանը մահացել է 2008 Հոկտեմբերի 13ին, Երեւանում:

ՎԱՀՐԱՄ ՂԱՐԱԽԱՆԵԱՆ
gharakhan@rambler.ru

ՄԵՍՐՈՊ Ծ. ՎՐԴ. ՃՈՒՐԵԱՆ
(1931-2008)



Հայ Կաթողիկէ զմմառեան միաբան Հայր Մեսրոպ Ծայրագոյն վարդապետ Ճուրեան ծնած է Քեսապ, Սուրիա 1931ին: 1945-1953՝ ուսանած է Զմմառու Նորընծայարանին մէջ, ապա մեկնած Հռոմ, ուր Յիսուսեան հայրերու Գրիգորեան Համալսարանին մէջ հետեւած է իմաստասիրական եւ աստուածաբանական բարձրագոյն կրթութեան:

Կուսակրօն քահանայ ձեռնադրուած է 1959ին, ձեռամբ կարդինալ Աղաճանեանի: Աստուածաբանական ուսումը ամբողջացուցած է Յիսուսեան Հայրերու Պէյրութի Սէն Ժոզէֆ Համալսարանին մէջ:

Հովուական-ժողովրդապետական եւ կրթական բեղուն գործունէութիւն ծաւալած է Լիբանանի, Սուրիոյ եւ Հռոմի մէջ: Տարիներ շարունակ վարած է Պուրճ Համուտի Հայ Կաթողիկէ Մեսրոպեան Վարժարանի տնօրէնութիւնը: 15 տարի՝ 1983-1988 եւ 1993-2003 վարած է Հայ Կաթողիկէ *Ուետիք* Պատրիարքական պաշտօնաթերթին խմբագրութիւնը, միաժամանակ ստորագրելով տասնեակ յօդուածներ:

Ճուրեան վարդապետի գրական ժառանգութիւնը կը բաղկանայ առաւելաբար հոգեւոր-կրօնական ու եկեղեցական տասնեակ մը գիրքերէ ու հարիւրաւոր յօդուածներէ եւ թարգմանութիւններէ: Մատենագիտական իր աշխատանքին հիմնական վաստակը *Յուցակ Զմմառու Մատենադարանի Հայերէն Ձեռագրաց Գիրքերուն* արժէքաւոր աշխատանքն է (լուսատիպով հրատարակուած, 1983ին), որ կ'ընդգրկէ Զմմառու Մատենադարանին մէջ գտնուող 1512-1800 թուականներուն հրատարակուած 335 հայերէն գիրքերու ամբողջական ցուցակը, վերստուգուած Զարբհանալեանի *Հայկական Մատենագիտութիւն* եւ Անասեանի *Հայ Հնատիպ Գրքի Մատենագիտական Ցուցակ* աշխատութիւններուն տուեալներով ու հետեւելով անոնց մեթոտաբանութեան: Բաց աստի, *Ուետիքի* էջերուն մէջ գրուած կը մնան Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ պատմութեան նուիրուած իր յօդուածները, որոնք հաւանաբար փոքր մասնիկներն են *Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ Պատմութիւնը* անտիպ հատորին: Իր թուղթերուն մէջ կը մնայ նաեւ *Հայ Տիպագիտութեան Պատմութիւն* հատորի ձեռագիրը: Ճուրեան վարդապետի մահով անիրագործելի մնացին նաեւ Ե.-ԺԵ. դարերու Հայ Եկեղեցւոյ ընդհանուր պատմութիւնը գրելու իր մտադրութիւնը, ինչպէս նաեւ գանազան աշխատանքներ:

Ճուրեան վարդապետ վախճանեցաւ 16 Նոյեմբեր 2008ին, Զմմառ:

ՀՀՀ

ՆԱՐՍԻՍՕ ՊԻՆԱՅԵԱՆ ԳԱՐՄՈՆԱ
(1928-2008)

Նարսիսօ Պինայեան Գարմոնա ծնած է Պուենոս Այրէս, 24 Սեպտեմբեր 1928ին: Մեծ հայրը՝ Մկրտիչ Պինայեան, Վանէն մեկնած ու Հարաւային Ամերիկա հաստատուած է 1889ին: Հայրը՝ Նարսիսօ Պինայեան (1896-1970), արժանթինեան պատմագրութեան եւ բանասիրութեան յայտնի անուն էր, նաեւ՝ արժանթինահայ մտաւորական կեանքին մէջ իր լուման ներդրած անձնաւորութիւն: Այդ պատճառով, որդին ստորագրած է մօրենական Գարմոնա մականունին կցումով - երբեմն՝ «կրտսեր» ածականով՝ Narciso Binayan (h.):

Իրաւաբանական ճիւղին հետեւած է Պուենոս Այրէսի Պետական Համալսարանին մէջ, բայց գայն ձգած է անաւարտ: Աւելի ուշ մտած է լրագրական ասպարէզ: 1960-1991ին մաս կազմած է Արժանթինի ամենահեղինակաւոր ու հնագոյն օրաթերթերէն մէկուն՝ *La Nacion*ի խմբագրութեան: Գիտական թէ լրագրական առաքելութեամբ այցելած է մօտ հարիւր

երկիր եւ բազմահարիւր յօդուածներ գրած՝ արժանթինեան եւ հայ մամուլին մէջ:

Լրագրութեան կողքին, 1950ականներէն լրջօրէն զբաղած է պատմութեամբ: Արժանթինեան շարք մը գիտական հաստատութիւններու անդամակցութեան կողքին, բղքակից անդամ էր Փարակուայի Պատմութեան Ակադեմիային եւ Ջինանշանագիտութեան ու Տոհմաբանութեան Մատրիտեան Արքայական Ակադեմիային: Տարբեր մրցանակներու արժանացած է իր գիտական գործունէութեան համար: Ստացած է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա.ի շնորհած «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանը եւ Լեհաստանի Արժանեաց ոսկեայ շքանշանը:

Պատմագիտութեան իր հետաքրքրութեան առանցքներէն մէկը եղած է տոհմաբանութիւնը: Իր գլխաւոր գործն է *Historia Genealógica Argentina* (Արժանթինի տոհմաբանական պատմութիւն), լոյս տեսած՝ 1999ին, որ կը պարունակէ նաեւ 20 էջնոց գլուխ մը՝ արժանթինահայ համայնքի տոհմաբանութեան մասին: 1958-2000ին լոյս տեսած իր յօդուածներուն մէկ ընտրանին հրատարակուած է *Dieciséis Estudios Genealógicos* (Տասնվեց տոհմաբանական ուսումնասիրութիւններ) հատորին մէջ (2002), ուր ընդգրկած է 1978ին լոյս տեսած «Հայ Իշխանութիւն մը Սանթիակօ Տէ Կոմփոստելայի Մէջ ԺԱ. Դարուն. Իր Տոհմածառը» սպաներէն յօդուածը:

Պինայեանի հետաքրքրութեան միւս առանցքը եղած է հայոց պատմութիւնը: Հրատարակած է արժանթինահայ համայնքի պատմութեան նուիրուած երկու հատորներ՝ *La Colectividad Armenia en la Argentina* (Հայ գաղութը Արժանթինի մէջ, 1974) եւ *Entre el Pasado y el Futuro: Los Armenios en la Argentina* (Անցեալի եւ ապագայի միջեւ. հայերը Արժանթինի մէջ, 1996): Իր գրիչին կը պատկանին առանց հեղինակի յիշատակումի հրատարակուած երկու ուսումնասիրութիւններ՝ *Exterminio Armenio de 1915. El Genocidio Más Horrible de la Historia* (1915ի հայկական բնաջնջումը. պատմութեան ամենասարսափելի ցեղասպանութիւնը, անբուակիր) եւ *El Tratado de Sevres y la Cuestión Armenia* (Սեւրի Դաշնագիրը եւ Հայկական Հարցը, 1970, հեղինակակից՝ Փասքուալ Օհանեան): Ֆրանսերէնէ սպաներէնի թարգմանած է Մադաքիա Արք. Օրմանեանի *Հայոց Եկեղեցին* հատորը (անտիպ. թարգմանութիւնը կորսուած է):

Նարսիսօ Պինայեան Գարմոնա մահացաւ Պուենոս Այրէս, 1 Դեկտեմբեր 2008ին:

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ
varny1p@yahoo.com

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ
ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄԲԻՈՆԻ
ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՎՐԱՆ
(1 Յունուար - 31 Դեկտեմբեր 2008)

Յակոբ Օշական Չանղըրըի Բանտին Մէջ
Դասախօս՝ Մարկ Նշանեան
12 Մարտ 2008

2008 տարուան Հայկազեան Համալսարանի Հայագիտական Ամբիոնի հրապարակային առաջին դասախօսական ձեռնարկին բանախօսն էր Համալսարանի հիւր դասախօս՝ Դոկտ. Մարկ Նշանեան, որ 2007-2008 կրթաշրջանի ամբողջ տեւողութեան, հայ գրականութեան տարբեր նիւթեր դասաւանդեց համալսարանի հայ ուսանողներուն:

Նշանեան, որ Օշական-Չանղըրը առնչութեան անդրադարձած է նաեւ նախապէս՝ իր մենագրութիւններուն ընդմէջէն կամ դասախօսութիւններու ընթացքին, այս անսովոր վերնագիրը կրող նիւթին հիմնական մասին անցնելէ առաջ, անհրաժեշտ նկատեց հանգամանօրէն ներկայացնել Օշականի մասին կարգ մը գրական ու կենսագրական մանրամասնութիւններ, որոնք սերտօրէն կ'առնչուին դասախօսութեան նիւթին:

Առաջինը Օշականի *Համապատկեր Արեւմտահայ Գրականութեան* կոթողային շարքի Ժ. հատորին մէջ տեղ գտած մէկ ընդարձակ տողատակի ծանօթագրութենէն է (էջ 102-106): Այնտեղ, Օշական կը խօսի *Մնացորդաց* վէպի եռագրութեան երրորդ՝ բայց երբեք չգրուած հատորին՝ «Դժոխքէն»ին պարունակութեան մէկ ուրուագծումին մասին: Տեսարանը կը պատկերէ արտոբեալ մտաւորականներուն միջեւ ծաւալուն խօսակցութիւն մը, ԺԹ. դարու մեր մշակութային իրագործումներուն մասին. զրոյցը կ'առարտի Կոմիտասի մատուցած Ս. Պատարագով. «Ողջոյն»ի ժամանակ տեղի կ'ունենայ ամէնէն սրտաշարժ տեսարանը, երբ մեր մտաւորականները սրտալիօրէն կ'ողջագուրուին, մինչ աւելի ետք կը հնչէ Կոմիտասի անպատմելի «Տէր Ողորմեա»ն: Օշականի տեղեկաբերին՝ Չանղըրըէն փրկուած Բիւզանդ Պոզաճեանի վկայութեամբ, «Օրհնեալ Եղերութ»էն ետք, կը բացուի բանտին դուռը ու ոստիկանները դուրս կը հանեն ներսը գտնուողները, զանոնք շղթայակապ տանելու համար դէպի նահատակութիւն. բանտին մէջ կը մնան 3-4 հոգի, ներառեալ Պոզաճեան, որ կ'ազատի բարձրաստիճան թուրք կաթնեղբօր մը միջամտութեան շնորհիւ:

Երկրորդ՝ Կոմիտասի անձը մեծապէս հետաքրքրած է Օշականը: Ան ծրագրած էր *Մահակ Պարգեւեանի* սկիզբ առած եռանկարին Բ. հատորին ներսը դարձնել Կոմիտասը: «Դժոխքէն»ին նման, Օշականի նաեւ այս մտադրութիւնը չէ իրագործուած. *«Միշեալ [գոյգ] գործերուն անաւարտ մնալուն պատճառը կրնայ թերեւս կապ մը ունենալ Օշականի ուղեղին մէջ կազմուած Կոմիտասի կերպարին հետ»*, ըսաւ Նշանեան:

Երրորդ մանրամասնութիւնը Օշականի ինքնակենսագրական *Կեանքին Պէս* վէպէն է: Այնտեղ Օշական կը պատմէ իր ծնունդի հանգամանքներուն մասին, եւ թէ ինչպէս ինք ցոյնիսկ զրկուած եղած է մայրական կաթէն, որովհետեւ մայրը չքաւոր ընտանիքին ապրուստը հոգալու համար ստիպուած եղած է ստնտու դառնալ հարուստ ընտանիքի մը նորածինին: Այս պատմութեան մէկ մօտաւոր տարբերակը կու տայ նաեւ Օշականի մօտիկ բարեկամ՝ Գէորգ Չաքրեան:

Դասախօսութեան այս հանգրուանին Նշանեան հարկ սեպեց անդրադառնալ այն հարցին, թէ 1934էն ետք, Օշական ինչու գրեթէ վերջնականապէս կը դադրի վիպական ստեղծագործութենէ:

Իբրեւ առաջին պատճառ, Նշանեան կը նշէ Օշականի առողջական վիճակը՝ սրտի թեթեւ տագնապ մը, արդեօ՞ք հետեւանք այն պրկումին, որ ինքզինքին պարտադրեց Օշական իր հազարաւոր վիպական էջերուն արտադրութեան ի խնդիր, քանի մը տարուան մէջ: Իսկ թէ ինչ կը մնար իրեն գրելիք, ապա անիկա *Մնացորդաց*ի Գ.՝ «Դժոխքէն» բաժինն էր:

Օշական կ'ըսէ, թէ շարունակել պիտի նշանակէր շիտկէ-շիտակ քալել մահուան վրան՝ ինքնասպանութեան փորձ, որ կը ստանայ գերորոշագրուած իմաստ, քանի որ Աղէտին նիւթին մօտենալը՝ այսինքն բացէ-ի-բաց մահուան բնագաւառին մէջ մտնելը, քալել էր դէպի մահ:

Վիպական արտադրանքին կասեցումին իբրեւ պատճառ, Նշանեան մատնանշեց նաեւ Օշականի վրայ կատարուած տմարդի յարձակումները փարիզեան *Մենք*ի տղոց կողմէ, այսինքն անոնցմէ, որոնք ըստ Օշականի, պաշտօնը ունէին զինք պաշտպանելու:

Իբրեւ այլ հիմնաւոր պատճառ, Նշանեան յիշատակեց Օշականի վկայութիւնը, որ մինակ վիպող ոյժը անբաւական պիտի ըլլար Աղէտին պարագրումին: Թէեւ ահաւոր, բայց իր ահաւորութեան մէջ տարօրինակօրէն միաձեւ Աղէտը իբրեւ վէպի նիւթ, խոտոր կը համեմատի արուեստի զանազանութեան պահանջին հետ:

Կրկին Օշականը վկայելով, Նշանեան ըսաւ, թէ անոր կը պակսէին անհրաժեշտ փաստական տուեալները, վկայութիւնները, որոնք նախապայման էին Աղէտին անդրադարձող վէպի մը:

Այս բաժինը եզրափակելով, Նշանեան ըսաւ, թէ ցոյնքան բարացուցական է *Մնացորդաց*ի այս բաժնին գրուած չըլլալը, որովհետեւ *«Օշականի գործը հասած է Աղէտին ոչ թէ իր իրագործումով, այլ իր ձախողութեամբ»*:

Դասախօսութեան յաջորդ բաժնով, Մարկ Նշանեան *Համապատկեր*ի Թ. եւ Ժ. հատորներէն ընթերցումներ կատարելով, փորձեց ներկայացնել «Դժոխքէն»ի ծրագիրը. ան յիշեց Սողոմենց Սողոմի կերպարն ու անոր անցած ուղին բրքական բանտէն մինչեւ փաշայութիւն, ապա Տէր Ջօր՝ իբրեւ թուրք գինուոր, սթափում, սարսափ եւն.: Այլուր Օշական կը գրէ Չանղըրըի Պատարագին ու անոր յաջորդող ձերբակալութեան տեսարանին մասին, վկայակոչելով Պոգաճեանը:

Դասախօսութեան հիմնական՝ Օշական-Չանղըրը բաժնին հասնելով, Նշանեան ուսկնդիրներուն թողուց հետեւեալ հաստատումները.

Ա. Օշական ոչինչ գրած է առանց նախագոյ պատումի,

Բ. Այս տրամաբանութեամբ, իբրեւ տեղեկաբեր, ան վկայակոչած է Պոզաճեանը, որ ըստ Օշականի Չանղըրըէն ազատած է մայրական կաթին իրաւունքովը...

Գ. Սակայն Պոզաճեան Չանղըրը չէ գտնուած, այլ՝ Այաշ, ուստի չէր կրնար ըլլալ Օշականի տեղեկաբերը:

Դ. Օշական կարդացած ըլլալու էր Պալաքեանի, Շամտանճեանի ու Քէչեանի յուշագրութիւնները, որոնք կը խօսէին Չանղըրըի մասին:

Ուստի, ան մտովին ստեղծեր էր վիպական պզտիկ պատում մը՝ հակումպատարագ-մահ եւ քանի մը վերապրողներ, որպէսզի տեղեկաբեր մը ունենար...: Իսկ այդ տեղեկաբերը եթէ իրօք Պոզաճեանը չէր, ապա ո՞վ էր: Ըստ Նշանեանի, այդ տեղեկաբերը նոյնինքն Օշականի Չանղըրը գտնուած ցնորական կրկնապատկերը ըլլալու է (որու մէկ այլ իրավիճակի մը մէջ գտնուող օրինակին կը հանդիպինք Ժ. հատորին մէջ): Աւելին. Օշական այլուր կատարուած վկայութեամբ մը, ինքզինք ճակատագրակից նկատելով իր նահատակ գրչակից եղբայրներուն, կ'ըսէ հետեւեալ սրտաշարժ խոստովանութիւնը. «*Ես ալ անոնցմէ մէկն եմ...*»:

Ռաֆայէլ Լեմքին եւ Հայոց Ցեղասպանութիւնը.
Թէ Ինչպէս Եղեռնի Զոհերը Հարթեցին
ՄՄԿի Ցեղասպանութեան Ուխտի Որդեգրման Ճամբան
Դասախօս՝ Խաչիկ Մուրատեան
23 Յունիս 2008

2007-2008 տարեշրջանի Հայագիտական Ամբիոնի հրապարակային 2րդ դասախօսական ձեռնարկին բանախօսն էր Հայկազեան Համալսարանէն շրջանաւարտ, ներկայիս Պոսթոնի *Armenian Weekly* շաբաթաթերթի խմբագիր Խաչիկ Մուրատեանը, որ սփիւռքահայ մամուլէն ներս մնայուն եւ որակաւոր ներկայութիւն մըն է, շնորհիւ իր ուսումնասիրութիւններուն, յատկապէս Ցեղասպանութեան վերաբերող հարցազրոյցներուն, յօդուածներուն եւն.:

Բացման Խօսքը կատարեց Անդրանիկ Տագէսեան, որ զուգահեռ մը անցընելով Խաչիկ Մուրատեանի ուսանողական արժանիքներուն եւ մասնագիտական հմտութիւններուն միջեւ, բնորոշեց զինք իբրեւ «*վերջին տարիներու ազգային բերքի լաւագոյն դէմքերէն մէկը*»:

Մուրատեան իր բանախօսութեան սկզբնաւորութեան ներկայացուց այն ջանքերը, զորս կը թափէ թրքական կողմը Մեծ Եղեռնը ուրակելու ուրեւէ այլ բառով, բացի ցեղասպանութենէն, որպէսզի Հայկական Ցեղասպանութիւնը չդիտուի միջազգային իրաւական տեսանկիւնով, եւ ցեղասպանը չկրէ համապատասխան պատասխանատուութիւն: Մուրատեան թուարկեց այդ ուղղութեամբ յառաջ քաշուող կարգ մը թրքական պատճառաբանութիւններ, միաժամանակ ցոյց տալով անոնց հակագիտական ու անհամոզիչ բնոյթը:

Ապա անցնելով իր հիմնական նիւթին, Մուրատեան ներկայացուց ցեղասպանութիւն եզրին հեղինակ Ռաֆայէլ Լեմքինի կենսագրութիւնը, յատուկ ուշադրութիւն սեւեռելով եւ կարեւորութիւն ընծայելով անոր կեանքի այն հանգրուաններուն ու փորձառութիւններուն, որոնք սերտօրէն աղերս ունին Հայկական Ցեղասպանութեան հետ:

Լեմքին մանկութենէն հետաքրքրութիւն ցուցաբերած է իրաւագուրկ ժողովուրդներու հանդէպ. իր ուսանողական օրերուն Պերլինի մէջ կ'ահաբեկուէր Թալէաթ փաշա. այդ առթիւ, ան նոյնիսկ վէճի կը բռնուի իր դասախօսին հետ, պաշտպանելով Սողոմոն Թեհլիրեանը, հիմնուելով այն համոզումին վրան, թէ ինչու՞ պէտք է դատի կանչենք այն անձը, որ սպաննած է ամբողջ ժողովուրդ մը բնաջնջող մարդ մը: Այստեղ Լեմքին արդէն յստակօրէն ցոյց կու տայ իր կեցուածքը ոչ միայն հայերուն առնչութեամբ, այլ ընդհանրապէս բռնատիրական իշխանութիւններու հանդէպ, մեկնելով այն համոզումէն, որ գերիշխանութիւն կը նշանակէ ծառայել ժողովուրդին, եւ ոչ թէ միլիոնաւոր մարդ սպաննել:

Անձնական տարբեր փորձառութիւններ, հրեաներու հանդէպ ծայր առած հալածանքները կը մղեն Լեմքինը որ հրաժարի լեզուաբանութենէն եւ ամբողջովին նուիրուի ժողովուրդներու բնաջնջումը պատժող ու կանխարգիլող միջազգային օրէնքի մը յառաջացումին: 1933ին, կը փորձէ մասնակցիլ Ազգերու Լիկայի ժողովին, սակայն լեհական իշխանութիւնները չեն արտօներ իրեն. փոխարէնը, պատուիրակի մը միջոցով, Լեմքին ժողովին կը ներկայացնէ առաջարկ մը, ուր barbarism եւ vandalism բառերով կը բնութագրէ ժողովուրդներու բնաջնջման միտող փորձերը: Լեմքինի առաջարկը կ'անտեսուի:

Գերմանիոյ ներխուժումէն կարճ ժամանակ անց, Լեմքին կը յաջողի խոյս տալ Լեհաստանէն, ու ի վերջոյ կը հասնի ԱՄՆ: Այնտեղ ականջալուր կ'ըլլայ Եւրոպայի մէջ գերմանացիներուն գործադրած բռնութիւններուն: Լեմքին չէր մոռցած իր մտասեւեռումը: 1944ին առաջին անգամ *Axis Rule In Occupied Europe* գիրքին մէջ կը գործածէ genocide բառը, որ կազմուած է յունարէն ու լատիներէն արմատներէ եւ բառացիօրէն ցեղասպանութիւն կը նշանակէ:

Լեմքին կը հետեւի նիւրեմպերկեան դատավարութիւններուն: Հայկական առնչութիւն: Ամերիկեան եւ ֆրանսական մամուլը զանազան վերլուծումներով կ'անդրադառնան այս բառին: Հայկական թերթերն ալ, օգտուելով այդ աղբիւրներէն, քննարկումի առարկայ կը դարձնեն ցեղասպանութիւն բառը, արդէն սերտօրէն առնչելով անիկա Մեծ Եղեռնին: Առաջին անդրադարձումը կ'ըլլայ *Յառաջի*ն մէջ Շաւարշ Միսաքեանի գրչով: Խմբագրականին միտք բանին կը ծաւալի այն խորհրդածութեան շուրջ, որ աշխարհ արդեօք այսքան պէ՞տք է սպասէր որ այս բառը գտնուէր եւ ժողովուրդներու բնաջնջումը մուտք գործէր միջազգային ասպարէզ: Ցեղասպանութիւն բառին յաջորդ անդրադարձը կրկին Միսաքեանի կողմէ լոյս կը տեսնէ *Ազդակի* մէջ:

1946ին Լեմքին հսկայական աշխատանք կը տանի, որպէսզի որդեգրուի ցեղասպանութիւնը դատապարտող ՄԱԿի բանաձեւը: *Հայրենիք* խմբագրականով մը կ'անդրադառնայ այս բանաձեւին, եւ հայկական ցեղասպանութեան պատժելիութեան մասին ակնարկութիւններ ալ կ'ընէ, սակայն տակաւին ամէն բան յստակ չէր հայոց միտքերուն մէջ:

1948ին ՄԱԿը կ'որդեգրէ «Ցեղասպանութեան Ուխտ»ը. դարձեալ մեծ կ'ըլլայ վաստակը Լեմքինի: Մեծապէս յատկանշական է, որ ցեղասպանութիւն ըմբռնումը բնորոշող բոլոր հինգ արարքներն ալ, որոնք կէտ առ կէտ նշուած են «Ուխտ»ին մէջ, կը համապատասխանեն Հայկական Ցեղասպանութեան: Լեմքին շատ ուշադիր եղած է, որպէսզի «Ցեղասպանութեան Ուխտ»ը կանխող ՄԱԿի քննարկումներուն մէջ, թուրք, հայ, հրեայ եւ հայկական ու հրէական ցեղասպանութիւններուն ուղղակիօրէն առնչուող արտայայտու-

թիւններ չհնչեն, որովհետեւ, կ'ըսէ Լեմքին, *«ինծի համար շատ կարեւոր էր, որ Թուրքիան ստորագրէ «Ուխտ»ը»*:

Լեմքինի թողնին մէջ կը հանդիպինք բազմաթիւ վաւերաթուղթերու, որոնք կ'առնչուին հայկական կոտորածներուն, համիտեան ջարդերէն մինչեւ Մեծ Եղեռն: Ան տարբեր հարցազրոյցներու մէջ կը յիշատակէ, թէ ինք ցեղասպանութեան հարցով հետաքրքրուած է, երբ անիկա պատահեցաւ հայերուն, թէ հայերը շատ դժուար ժամանակէ անցան բայց ոճրագործները չպատժուեցան: Թեհլիրեանի դատավարութենէն ետք Լեմքին մտածած է, որ գոհը չէ, որ պիտի պատժէ ոճրագործը, այլ՝ դատարանը, օրէնքը. այս համոզումը խթան հանդիսացած է, որ ինք ոգի ի բռին լծուի իր կեանքի աշխատանքին:

Հայկազեան Հայագիտական Հանդէսի
ԻԸ. Հատորի Շնորհանդէսը

Հայկազեան Հայագիտական Հանդէսի ԻԸ. հատորի շնորհանդէսը տեղի ունեցաւ 16 Յուլիս 2008ի երեկոյեան ժամը 7:30ին, Հայկազեան Համալսարանի հանդիսասրահին մէջ, ներկայութեամբ ՄՄՀԱԵ Միութեան նախագահ՝ Վեր. Մկրտիչ Գարակէօզեանի, Համալսարանի նախագահ Վեր. Դոկտ. Փօլ Հայտոսթեանի, պետական երեսփոխան Տոքթ. Եղիկ Ճէրճեանի, ուսուցիչներու, մտաւորականներու եւ *Հանդէսի* բարեկամներու յոյլի մը:

Բացման խօսքը արտասանեց *Հանդէսի* պատասխանատու քարտուղար Անդրանիկ Տագէսեան, որ ողջունելով ներկաները ներկայացուց *Հանդէսի* խմբագրակազմի բազմերես աշխատանքներուն բնոյթը, յատուկ շեշտ դնելով խմբային աշխատանքի օգտակարութեան: Ապա ան հերթաբար ամսլիոն հրաւիրեց հանդիսութեան ելոյթ ունեցողները:

ՀՀՀանդէսի պատասխանատու խմբագիր Հայր Անդրանիկ Ծ. Վրդ. Կոռանեան, ներկայ ԻԸ. հատորը եւ ընդհանրապէս *Հանդէսի* ամբողջ 28 հատորանի հաւաքածոն համարեց հայագիտութեան հերթական ձեռքբերումներէն մին: Արդարեւ, ըստ վարդապետին, ոչ միայն այս տարի, այլեւ *Հանդէսի* Ա. հատորի հրատարակութեան օրերուն, նոյնիսկ Ոսկեդարուն, եղած է մեծամասնութիւն մը, որ արհամարհած է գիրն ու գրականութիւնը, անտեսած է միտքը: Իսկ միտքը անսահման է, որովհետեւ *«Աստուած Միտք է»*, այդպիսով, անտարբեր մեծամասնութեան կողքին, միշտ գոյութիւն ունեցած է փոքրամասնութիւն մը, որ հաւատացած է *«մտքի մեծութեան»*, նուիրուած է Մտքի զարգացման: Հայագիտութիւնը այսօր կը գոյատեւէ, պիտի շարունակէ գոյատեւել ա՛յդ փոքրամասնութեան շնորհիւ:

Օրուան զեկուցաբերն էր Տիկ. Վարդի Քեշիշեան, որ կ'ապրի Հալէպ եւ ծանօթ անուն է հայագիտութեան ասպարէզին մէջ: Ան նախ ողջունեց *Հանդէսի* անխափան հրատարակութիւնը եւ խմբագրակազմի բծախնդիր ու հետեւողական աշխատանքը, ապա նիւթերու դասակարգում կատարելով ներկայացուց հատորին բովանդակութիւնը: Տիկին Քեշիշեան կարեւորեց խմբագրակազմի այն մօտեցումը, որ իւրաքանչիւր հատորի մէջ կ'արծարծուի հայագիտութիւնը յուզող հարց մը եւ ի հարկին կ'առաջարկուին նաեւ լուծումներ: Այս հատորի խմբագրականին անդրադառնալով, ան գնահատեց այն մտածումը, որ արդի խօսակցական եւ գրական արեւմտահայերէնը աղճատումի ենթարկուած է, ու անհրաժեշտ է հիմնել համապիւռքեան «ամրոց» մը, որ

ձեռնարկէ արեւմտահայերէնի պահպանումին: Մի առ մի ներկայացնելով *Հանդէսի* բոլոր բաժիններուն մէջ լոյս տեսած երկլեզու գրութիւնները, տիկին Քեշիշեան ներկաներուն ուշադրութեան յանձնեց այն երեւոյթը, որ սոյն հատորի բովանդակութեան մէջ կարեւոր տեղ կը գրաւէ Սփիւռքի հայ գաղութներու պատմութեան ճոխրուած հարցերու քննարկումը: Եզրափակելով իր խօսքը, Վարդի Քեշիշեան հաստատեց որ *ՀՀՀանդէսը* կը շարունակէ կամրջել հայրենի ու սփիւռքահայ մտաւորականութիւնը, աւելին՝ ան կամուրջ կը հանդիսանայ նաեւ սփիւռքահայ գաղութներու հայագէտներուն միջեւ:

Եզրափակիչ խօսքը արտասանեց Վեր. Դոկտ. Հայտոսթեան: Ողջունելով ներկաները Հայկազեանի յարկին տակ, ան *Հանդէսը* նկատեց համալսարանին կարեւոր ձեռքբերումներէն մին, որ միշտ ալ հայագիտութեան պրիսմակէն կը փորձէ վերլուծել ազգային ինքնութեան զանազան հարցերը: Նախագահը վստահեցուց, որ Համալսարանը լրջօրէն այժմէական կը նկատէ *«Հայկական ինքնութեան զանազան հարցերը եւ անոնց ազդեցութիւնը հայագիտական նիւթերու վրայ»*, եւ համաձայն գտնուեցաւ որ այդ առումով նաեւ Հայկազեանէն աւելի կ'ակնկալուի:

Շնորհանդէսի աւարտին, ինչպէս միշտ, ներկաները թերթատեցին Համալսարանի հայագիտական գրադարանին 2007-2008ին ձեռք բերած նոր գիրքերէն նմոյշներ եւ հիւրասիրուեցան կարկանդակով, զոր հատեցին Վեր. Հայտոսթեան եւ Հայր Կոռնեան:

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ ԿՈՂՄԷ ՁԵՌՔ ԲԵՐՈՒԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԱՄՈՒԼԻ ՑԱՆԿ – 2008

Ա. Հայերէն Գիրքեր

Ազդակի 80ամեակին Նուիրուած Յուշահանդէս Պատկերագիրք, Պէյրութ, Համազգայինի «Վահէ Սէթեան» Տպարան, 2008, 214 էջ:

Ալպոմ Հալէպի Հայ Գաղթականներու Հիւդաւանին, Հալէպ, Օֆսէթ էլ Շարք, 1986, 92 էջ;

Աղջիկներու Յատուկ Պատմութիւններ, Կ.Պոլիս, Ամերիկեան Պորտ Ընկերութիւն, 1930, 134 էջ:

Ամէնօրեայ Լոյս Ամէնօրեայ Ճամբու Վրայ, Կոստանդնուպոլիս, Ամերիկեան Պորտ Ընկերութիւն, 1930, 381 էջ:

Անդրանիկ Ծառուկեանի Առաջին այցելութիւնը Խորհրդային Հայաստան (Փաստաթուղթեր), Երեւան, Հեղինակային Հրատարակութիւն, 2008, 48 էջ:

Ապացոյցք Ճշմարտութեան, Կոստանդնուպոլիս, Արամեան, 1882, 50 էջ:

Առաջին Ընթերցարան, Կ.Պոլիս, Դ. Յովհաննէսեան, 1934, 144 էջ:

Առաւօտեան Ջանգակներ, Կոստանդնուպոլիս, Ա.Յ.Պօյաճեան, 1884, 128 էջ:

Առիւծին Բերնէն, Կոստանդնուպոլիս, Ամերիկեան Պորտ Ընկերութիւն, 1923, 171 էջ:

Արտաշէս Տէր Խաչատուրեան. Մարդը եւ Գործը, Համազգայինի «Վահէ Սէթեան» Տպարան, 2008, 330 էջ:

Արտերկրային Էակներ Երկրի Վրայ. Փարատոններու Աշէջքը, 1985, 136 էջ:

Աւետարան Ըստ Մարկոսի Ջէյթունի Գաւառաբարբառով, Կ.Պոլիս, Ա. Յակոբ Պօյաճեան, 1913, 64 էջ:

Գիրք Գրքի Մասին, Երեւան, Հրատարակիչների Ազգային Ասոցիացիա, 2006:

Երկրորդ Ընթերցարան Մանկանց, Կոստանդնուպոլիս, Ա. Յակոբ Պօյաճեան, 1889, 201 էջ:

Երրորդ Ընթերցարան Մանկանց, Կոստանդնուպոլիս, Ա. Յակոբ Պօյաճեան, 1889, 234 էջ:

Ջօրավար Անդրանիկ կը Խօսի. եւ Յաւելեալ Յօդուածներ (Նաեւ Լուսանկարներ), Լոս Անճելըս, "Նոր Օր", 1974, 64 էջ:

Ընտրական Օրէնսդրութեան եւ Ընտրական Վարչարարութեան Մասին, Երեւան, «Տիգրան Մեծ», 2007, 318 էջ:

Իմ Աղօթագիրքս, Անթիլիաս, Կաթողիկոսութիւն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1997, 126 էջ:

Ի՞նչ է Համակարգիչը, Պէյրութ, Համազգայինի «Վահէ Սէթեան» Տպարան, 2002, 44 էջ;

Կաթն Մանկանց եւ Հաց Տղայոց, Կոստանդնուպոլիս, Ա. Յակոբ Պօյաճեան, 1897, 70 էջ:

Կաղանդը Երգով ու Ներկով, Հալէպ, Կիլիկիա, 16 էջ:

Կեանքը Նամակագրութեան Մէջ. Լեւոն Հախվերդեանի եւ Արմէն Յարութիւնեանի Նամակագրական Երկխօսութիւնը, Երեւան, «Գիտութիւն», 2008, 429 էջ:
Կենդանաբանութեան Առաջին եւ Երկրորդ Գիրք, Կոստանդնուպոլիս, Ա. Յակոբ Պօյաճեան, 1898, 134, 149 էջ:
Հաճի Պապայի Արկածները Պարսկաստանում (Վէպ Պարսկական Կեանքից), թարգմ.՝ Կարապետեան Մկրտիչ 574 էջ:
Համազգային Օրացոյց 1939, Պէյրութ, Տպարան Յոյս, 1939:
Համառօտ Կենդանաբանութիւն Առաջին Գիրք, Կոստանդնուպոլիս, Ա. Յակոբ Պօյաճեան, 1898, 134 էջ:
Համառօտ Կենդանաբանութիւն Երկրորդ Գիրք, Կոստանդնուպոլիս, Ա. Յակոբ Պօյաճեան, 1898, 149 էջ:
Համշէն եւ Համշենահայութիւն (Գիտաժողովի Նիւթեր), Պէյրութ, Համազգայինի «Վահէ Սէթեան» Տպարան, 2007, 294 էջ:
Հայոց Պատմութեան Էջեր Իտալացի Նկարիչների Կրաֆիկական Աշխատանքներում, Երեւան, Մխիթարեան Միաբանութիւն, 2007, 99 էջ:
Հարիւրամեայ Ճիգը, Նիկոսիա, Կիպրոսի Հայոց Թեմ, 2005, 111 էջ:
Հայ Պատանի – Պատկերազարդ Շաբաթաթերթ, Կ.Պոլիս, Օ. Արզուման, 1920-1921, Ա. Տարի, Հոկտ. 1920-Սեպտ. 1921 թիւ 1-51, 831 էջ:
Հայաստանի Երիտասարդութեան Ազգային Ջեկոյց, Երեւան, 2007, 205 էջ:
Հայաստանի Կոմսոգիտորները Հայրենական Մեծ Պատերազմին, Երեւան, Հայպետհրատ, 1944, 137 էջ:
Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութիւն, Երեւան, Տիգրան Մեծ, 2007, 166 էջ:
Հայաստանի Հանրապետութեան Օրէնքը Սահմանադրական Դատարանի Մասին, Երեւան, Տիգրան Մեծ, 2007, 94 էջ:
Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԻԸ., Պէյրութ, 2008, 549 էջ:
ՀԲԸՄ եւ Հայ Երիտասարդաց Ընկերակցութիւնը (Անդրանիկ) Լիբանանի Մէջ, 2006, ա.է.:
Հին Կտակարանի Պատմութիւնը, Կոստանդնուպոլիս, Ա. Յակոբ Պօյաճեան, 1895, 312 էջ:
Հոգեբանութիւն, Կոստանդնուպոլիս, Գ. Պաղտատլեան, 1899, 707 էջ:
Հոգելոյս Չարեհ Արք. Ազնաւորեան, Քալիֆորնիա, 2005, 143 էջ:
Հոգեւոր Երգարանի - Յաւելուած (Եղանակներով), 1932, 428 էջ:
Հոգեւոր Երգեր, Կոստանդնուպոլիս, Սելամէթ Տպարան, 1926, 460 էջ:
Հոգեւոր Երգեր Եղանակներով, Կոստանդնուպոլիս, Ա. Մաթէոսեան, 1912, 342 էջ:
Հոգեւոր Երգեր Եղանակներով, Դանիէլ Յովհաննէսեան, 1932, 428 էջ:
Հրաշքը (Մանկապատանեկան), Պէյրութ, Համազգայինի «Վահէ Սէթեան» Տպարան, 2008, 18 էջ:
Մահագրութիւն, Պէյրութ, Առաձգատիպ ՀՀՀ, ԻԸ. հատորի, 2008:
Մայր Յուցակ Հայերէն Ձեռագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի, *Հտր. Բ.*, Երեւան, Նայիրի, 2004, 1662 էջ:
Մայր Յուցակ Հայերէն Ձեռագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի, *Հտր. Գ.*, Երեւան, Մագաղաթ, 2007, 2002 էջ:

Յովսեփայ Պատմութիւնը, Կոստանդնուպոլիս, Ա. Յակոբ Պօյաճեան, 1887, 154 էջ:
Նիկոլ Աղբալեանի Ծննդեան 130ամեակին Նուիրուած Միջազգային Գիտաժողովի Նիւթեր, Պէյրութ, Համազգայինի «Վահէ Սէթեան» Տպարան, 2006, 277 էջ:
Նշանաւոր Ճեմարանականներ, Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, 2005, 467 էջ:
Մարի Սոմաքեան, *Պատանեկան Թատերգութիւններ*, Նիկոսիա, 2008, 197 էջ:
Պատանիներու Աստուածաշունչը. Պատմութիւններ Հին եւ Նոր Կտակարաններէն, Անթիլիաս, Կաթողիկոսութիւն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 2006, 255 էջ:
Պատկերազարդ Թուաբանութիւն Մանկանց, Կոստանդնուպոլիս, Ա. Յակոբ Պօյաճեան, 1895, 105 էջ:
Պատմութիւն Վեշտասաներորդ Դարու Բարեկարգութեանն Ի Գերմանիա, Կոստանդնուպոլիս, Ա. Յակոբ Պօյաճեան, 1895, 826 էջ:
Սուրբ Բեռնարդոս Քլեռվոցի, Կոստանդնուպոլիս, Ա.Յ. Պօյաճեան, 1894, 86 էջ:
Վեր. Մովսէս Ճամպազեան. Տեսիլքի ու Առաքելութեան Մարդը, Հայ Աւետարանչական Ընկերակցութիւն, 2002, 278 էջ:
Տարերք Երկրաբանութեան, Կոստանդնուպոլիս, Ա. Յակոբ Պօյաճեան, 1883, 237 էջ:
Յուցակ Ձեռագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի, *Հտր. Գ.*, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, 2007, 439 էջ:
Փոխանակ, Կոստանդնուպոլիս, Ամերիկեան Պորտ Ընկերութիւն, 1925, 171 էջ:
Քնար Կամ Նոր Երգարան Հանդերձ Եղանակօք. Մասն Առաջին, Կոստանդնուպոլիս, Յովսեփայ Գաւաֆեան, 1888, 24 էջ:
Քնար Սրբազան Որ Կը Պարունակէ Հոգեւոր Երգեր, Կ. Պոլիս, Սերվիչէն, 1889, 24 էջ:
Քրիստոնէական Կաթողիկէ Եկեղեցի, Վատիկան 1997, 1383 էջ:
Քրիստոնէական Նկարագիր, Կոստանդնուպոլիս, Ա. Յակոբ Պօյաճեան, 1895, 283 էջ:
Օշական Նոր Ընթերցարան. (Պատկերազարդ) Բ., Կոստանդնուպոլիս, Դանիէլ Յովհաննէսեան, 1930, 188 էջ:
Օշական Նոր Քերական, Ստամպուլ, Դանիէլ Յովհաննէսեան, 1931, 24 էջ:
Նորայր Աղալեան, *Մեր Քառակուսի Կարմիր Անապատում*, Երեւան, «Լուսաբաց Հրատարակչատուն», 2008, 287 էջ:
Զարեհ Վրդ. Ազնաւորեան, *Մանր Սրբազրութիւններ ԺԵ. Դարու Կիլիկիոյ Կաթողիկոսաց Ժամանակագրութեան Մէջ*, Անթիլիաս, Կաթողիկոսութիւն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1978, 65 էջ:
Զարեհ Արք. Ազնաւորեան, *Դիւրին Գրաբար. Հտր. Ա.*, Անթիլիաս, Կաթողիկոսարան, 1986, 204 էջ:
Զարեհ Արք. Ազնաւորեան, *Դիւրին Գրաբար. Հտր. Բ.*, Անթիլիաս, Կաթողիկոսարան, 1987, 237 էջ:

Զարեհ Արք. Ազնաւորեան, *Աստուածաշունչին Վերաբերեալ Ուսումնասիրութիւններ*, 2007, 367 էջ:

Նարեկ Ալեմէզեան, *Հայ Եկեղեցւոյ Պատասխանները Ոչ-ուղղափառ Առարկութիւններու*, Անթիլիաս, Կաթողիկոսութիւն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 2003, 119 էջ:

Հրաչեայ Ալէն, *Յուշարձան*, Կոստանդնուպոլիս, Յ. Մատթէոսեան, 1919, 95 էջ:

Պարոյր Աղպաշեան, *Ապրուած Հրապարակագրութիւն՝ Յետադարձ Հայեացքով*, Ա. Հտր., Պէյրութ, Pawo Photogravure, 2008, 270 էջ:

Հրաչեայ Ածառեան, *Բանաստեղծութիւններ, Անեկդոտներ Իմ Մասին*, Երեւան, Գրականութեան եւ Արուեստի Թանգարան, 2008, 127 էջ:

Շահէ Արք. Ածէմեան, *Յուցակ Աստուածաշունչ Մատեանի Հայերէն Ձեռագիրներուն*, Լիզպոն, 1992, CXXVIII+1073 էջ:

Հասան Ամջա, *Տեղահանութիւն եւ Ոչնչացում*, Երեւան, Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտ, 2007, 47 էջ:

Անկրսէ, *Ներածութիւն Սուրբ Գրոց Ուսման*, Կոստանդնուպոլիս, Ա. Յակոբ Պօյաճեան, 1892, 303 էջ:

Մամիկոն Աշճեան, *Յուշեր Մեծ Եղեռնէն*, Նիւ Ճըրսի, Վաչէ Ասպարճեան, 2008, 47 էջ:

Կարօ Առաքելեան, *Արդի Հայերէնի Քերականութիւն, Ա. Գիրք*, Պէյրութ, 1997, 431 էջ:

Ռոպերք Առաքելեան, *Անցեալի Հետքերով. Ուղեգրութիւն*, Պէյրութ, Համազգայինի «Վահէ Սէթեան» Տպարան, 2006, 48 էջ:

Անահիտ Աստոյեան, *Հայերն Օսմանեան Բանակում (ՀԴ. Դարից ՄԻՆչեւ 1918)*, Պէյրութ, Առաձգատիպ ՀՀՀ ԻԸ. Հատորի, 2008:

Վաչէ Ատրունի, *Անաւարտ Սկիզբ. Հնամաշ Պայուսակը. Գամիշ 1936*, Անթիլիաս, Կաթողիկոսութիւն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 2007, 186 էջ:

Արեւմտահայ Աշխարհաբարի Եզրաբանական Խորհուրդ, *Ուղեցոյց Դ.*, Մարսէյ, Էքս-Ան-Փրովանս, 2002, 123 էջ:

Յովհաննէս Արբինեան, *Աստուածաշունչի Տունկերը*, Կ. Պոլիս, Կ. եւ Մ. Յ. Քէշիշեան, 1913, 168 էջ:

Արամ Արման, *Տարիներ Ետք*, Պէյրութ, Հրատ. «Արծիւ»ի, 2007, 79 էջ:

Յարութիւն Արմէնեան, *Անցեալը Դեռ Հոս Չի Հալիր*, Երեւան, Հեղինակային Հրատ., 2007, 62 էջ:

Արմէնուհի, *Եղեռնի Օրերից Առակներ*, Երեւան, Զանգակ 97, 2007, 239 էջ:

Արմիս, *Հալէպ, 1920-1930 Արուեստագէտի Աչքով (Տեսարաններ Հալէպէն)*, Վիոլէթ Ճէպէճեան Գրադարան, 1997, 99 էջ:

Սոնա Արշունեցի, *Ո՞վ Սպաննեց Հրանդ Տինքին*, Երեւան, Նոյեան Տապան, 2008, 30 էջ:

Լեւոն Արտագեան, *Դարերու Երգը*, Պէյրութ, Հրատ. «Արծիւ»ի, 2005, 56 էջ:

Լեւոն Արտագեան, *Կենսակապ*, Պէյրութ, Համազգայինի «Վահէ Սէթեան» Տպարան, 2004, 58 էջ:

Վիգէն Աւագեան (խմբ.), *Մարգիկ Պաշտօնաթաթերթի Խմբագրականներ, Հտր. 2*, Պէյրութ, 2007, 263 էջ:

Աւետիս Աւետիսեան, *Առակներ*, Լառնաքա, 2006, 160 էջ:

Եուրի Աւետիսեան, *Արեւմտահայ Բանաստեղծութեան Լեզուն*, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, 2002, 497 էջ:
Ալեքսան Բաբայեան, *Ես Դեռ Յիշում Եմ Հայ Զինուորի Ողիսականը*, Երեւան, Մուղնի, 2007, 231 էջ:
Լիա Բալագեան, *Գալուստ Կիլպենկեան*, Երեւան, Զանգակ 97, 2004, 301 էջ:
Արծուի Բախչինեան, *Հայ-Հարաւսլաւական Առնչութիւնների Պատմութիւնից*, Պէյրութ, Առաւծնատիպ ՀՀՀ ԻԸ. հատորէն, 2008:
Արծուի Բախչինեան եւ Վալդան Մատթէոսեան, *Շամախեցի Պարոնիին*, Երեւան, ԳԱԹ, 2007, 221 էջ:
Հենրիկ Բախչինեան, *Հայ Օրհներգութեան Սկզբնաւորումը*, Պէյրութ, Առաւծնատիպ ՀՀՀ ԻԸ. հատորէն, 2008:
Էլինըր Բորթըր, *Միայն Դաւիթ*, Կոստանդնուպոլիս, Ամերիկեան Պորտ Ընկերութիւն, 1928, 235 էջ:
Աւետիս Գալայճեան, *Թուրք Թուրանական Շաւալապաշտութիւնը եւ 70 Նահատակ Ազգերը*, Երեւան, Տիգրան Մեծ, 2008, 572 էջ:
Սերգէյ Գալոյեան, *Պարոյր Սեւակ. Ջուտ Սովետական Սպանութիւն*, Երեւան, Հեղինակային Հրատ., 2007, 116 էջ:
Շնորհք Գալուստեան, *Աստուածաշնչական Սուրբեր*, Թեհրան, 2008, 226 էջ:
Շնորհք Գալուստեան, *Աւագ Շաբաթ*, Թեհրան, 2005, 330 էջ:
Շնորհք Գալուստեան, *Համաքրիստոնէական Սուրբեր*, Թեհրան, 2008, 309 էջ:
Շնորհք Գալուստեան, *Հայազգի Սուրբեր*, Թեհրան, Հրատ. Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունք, 2008, 425 էջ:
Սիրանոյշ Գալստեան, *Փաստի Որոշակիութիւնը եւ Փոխաբերականութիւնը (Հայկական Որոշ Ֆիլմերի Օրինակով)*, Պէյրութ, Առաւծնատիպ ՀՀՀ ԻԸ. հատորէն, 2008:
Հիլտա Գալֆայեան, *Լեզուէն Անդին*, Տէր Ակոբեան, 1980, 87 էջ:
Հիլտա Գալֆայեան, *Կաթիլ Մը*, Տէր Ակոբեան, 1980, 56 էջ:
Հիլտա Գալֆայեան, *Մեսրոպեանը Ազգային Միասնութեան Նախապայման. Յօդուածներ եւ Նամակներ*, Երեւան, Նախիջեւան, 2005, 277 էջ:
Արամ Գամպուրեան, *Թարգմանութիւններ եւ Ուղեորութիւններ*, Իսթանպուլ, Մուրատ, 2008, 287 էջ:
Պօղոս Գուրէյեան, *Փասփորք*, Երեւան, «Եօթնագիր» Հրատ., 1999, 216 էջ:
Յասմիկ Գուլակեան, *Դարը՝ Մեր Մէջ, Մենք՝ Դարի. Հրապարակախօսութիւն 4 Հատորով - Գիրք 4*, Երեւան, ՀՀ ԳԱԱ, 2007, 226 էջ:
Գրիգոր Գուրզադեան, *Խոհեր...Խոհեր*, Երեւան, Զանգակ 97, 2007, 239 էջ:
Վահագն Գրիգորեան, *Առաջնորդի Կեանքն ու Մահը*, Երեւան, Նայիրի, 2006, 422 էջ:
Էլգին Գրոսքոոս, *Արարատ. Վէպ*, Երեւան, Հայաստան, 2005, 430 էջ:
Կարլէն Դալլաքեան, *Յուշապատում. Դէմքեր, Իրողութիւններ, Մտորումներ*, Երեւան, 1998, 367 էջ:
Կարլէն Դալլաքեան, *Ռամկավար Ազատական Կուսակցութեան Պատմութիւն 1921-1940, Գիրք 1*, Երեւան, Գիտութիւն, 1999, 308 էջ:
Կարլէն Դալլաքեան, *Հայ Սփիւռքի Պատմութիւն. Համառօտ Ակնարկ*, Երեւան, Զանգակ 97, 2004, 286 էջ:

Դանիէլ Երաժիշտ, *Ամէնէն Մաքուր Հայերին Յեղին...*, Երեւան, Գրականութեան եւ Արուեստի Թանգարան, 2008, 275 էջ:
Ժիրայր Դանիէլեան, *Գրական Որմնումներ*, Անթիլիաս, Կաթողիկոսութիւն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 2007, 475 էջ:
Մելանիա Դաւթեան, *Շրջակայ Միջավայր եւ Բնապահպանութիւն*, Երեւան, Դար, 2007, 190 էջ:
Աստղիկ Դաւիթեան, *Տրամախօսութիւններ Նախակրթարանի Փորրերուն Համար*, Անթիլիաս, Կաթողիկոսարան, 1988, 146 էջ:
Յ. Մ. Դիշդիշեան, *Տէր Զօրի Անապատում Յիշողութիւններ*, Երեւան, ԳԱ Գիտութիւն, 2006:
Մերիլ Դոնի, *Ինչպէս Է Մեզ Հասել Աստուածաշունչը*, Թեհրան, Միջ Եկեղեցական Հրատարակութեան Բաժանմունք, 2006, 20 էջ:
Վարդգէս Եղիայեան, *Նրանք Երբեք Չեն Մեռնելու*, Երեւան, Փիւնիկ, 1992, 252 էջ:
Զապէլ Եսայեան, *Աներակներում Մէջ*, Պէյրութ, Էտվան, 1957, 226 էջ:
Զ. Հ. Եսայեան, *Պատմաաշխարհագրական Տուեալներ Հայոց Յեղասպանութեան Մասին*, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, 2005, 162 էջ:
Վ. Երանգեան, *Հայ Լուսաւորութեան Կեդրոններ*, Մոնթրէալ, Հորիզոն Հրատ., 1996, 101 էջ:
Հենրիկ Էդոյեան, *Երկու Կեանք*, Հալէպ, Տպ. Արեւելք, 2006, 207 էջ:
Լայման Էպրթ, *Մեծ Ընկեր*, Կ.Պոլիս, Յ. Մատթէոսեան, 1921, 61 էջ:
Սենք Էքզիւպերի, *Փոքրիկ Իշխանը*, թրգմ.՝ Թերէզ Ոսկերիչեան, Փարիզ, Ոսկետառ, 2007, 92 էջ:
Վահան Թամարեան, *Արիւնաբաւնութիւն*, Երեւան, Նոր Դար, 1999, 197 էջ:
Վարդան Թաշճեան, *Միրերգ*, Նիկոսիա, 2008, 62 էջ:
Թէոդիկ, *Ամէնուն Տարեցոյցը*, 1910 Դ. Տարի, Հալէպ, Կիլիկիա, 2007, 447 էջ:
Թէոդիկ, *Ամէնուն Տարեցոյցը*, 1912 Զ. Տարի, Հալէպ, Կիլիկիա, 2008, 478 էջ:
Կարօ Թիւթիւնճեան, *ՀՄԸՄ եւ Ազգային Մեծ Դէմքեր*, Պէյրութ, 2003, 120 էջ:
Գ. Բ. Թոսունեան, *Գրաբարի Բառարանագրութիւնը*, Երեւան, «Զանգակ-97», 2006, 228 էջ:
Թորոս Թորանեան, *Պատիւ Այնթապահայութեան*, Հալէպ, Տպ. Արեւելք, 2008, 71 էջ;
Շաղիկ Թորիկեան, *Կը Հաւատամ*, Անթիլիաս, Կաթողիկոսութիւն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 2007, 23 էջ:
Շաղիկ Թորիկեան, *Կը Յուսամ*, Անթիլիաս, Կաթողիկոսութիւն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 2007, 23 էջ:
Յովհաննէս Թումանեան, *Հատընտիր*, Երեւան, 1969, 140 էջ:
Նշան Եպս. Թոփուզեան, *Պօղոս Առաքեալի Հովուական Նամակները. Ա. եւ Բ. Տիմոթէոսի եւ Տիտոսի. Ներածութիւն*, Թեհրան, Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունք, 2007, 117 էջ:
Հենրիք Իբսէն, *Մեծ վարպետ Սոլնէս*, Պէյրութ, Մեսրոպ, 1969, 54 էջ:
Մ. Իշխան, *Տուներու Երգը*, Պէյրութ, Համազգայինի «Վահէ Սէթեան» Տպարան, 1936, 84 էջ:
Խաչիկ Իշխանեան, *Գրական Արեւմտահայերէն*, Պէյրութ, 2008, 230 էջ:
Աւետիք Իսահակեան, *Ուստա Կարօ*, Երեւան, Տիգրան Մեծ, 2006, 575 էջ:

Ստեփան Իւրիճեան, *Ծագումն եւ Ընթացք Աւետարանականութեան Ի Հայս*, Կ.Պոլիս, Արաքս, 1914, 292 էջ:
Էօժէն Լապիշ, *Յարղէ Գլխարկը*, Պէյրութ, Մեսրոպ, 1969, 82 էջ:
Լեո Կամսար, *Մահապուրծ Օրագիր*, Երեւան, Լուսաբաց, 2008, 294 էջ:
Լ. Լեւոնեան, *Ի՞նչ է Կրօնքը*, Կ. Պոլիս, Դանիէլ Յովհաննէսեան, 1929, 16 էջ:
Լ. Լեւոնեան, *Ի՞նչ է Մեղքը*, Կ. Պոլիս, Դանիէլ Յովհաննէսեան, 1929, 19 էջ:
Լ. Լեւոնեան, *Կրօն եւ Ընկերային Հարցեր*, Կ. Պոլիս, Դանիէլ Յովհաննէսեան, 1929, 16 էջ:
Լ. Լեւոնեան, *Կրօնի Ազդեցութիւնը*, Կ. Պոլիս, Դանիէլ Յովհաննէսեան, 1929, 18 էջ:
Լուբֆի Լեւոնեան, *Կրօնական Հարցեր Նորագոյն Ըմբռնումով Ուր Ուսումնասիրութիւններ*, Կ.Պոլիս, Դանիէլ Յովհաննէսեան, 1929, 115 էջ:
Լուբֆի Լեւոնեան, *Քրիստոսի Կեանքը*, Կոստանդնուպոլիս, Ա.Յ. Պօյաճեան, 1898, 142 էջ:
Եուրի Խաչատրեան, *Ազատ Էջեր..*, Երեւան, Սարգիս Խաչենց, 2008, 615 էջ:
Եուրի Խաչատրեան, *Ստորագրատում*, Հեղինակային Հրատ., 2007, 116 էջ:
Հենրիկ Խաչատրեան եւ ուրիշներ, *Յաղթանակներն Ինչպէս Եղել Են. Ազգականչ 44*, Երեւան, Հայկական Հանրագիտարանի Հրատ., 2008, 383 էջ:
Գէորգ Խուդինեան, *Հ.Յ.Դաշնակցութեան Քննական Պատմութիւն. Սկիզբներից Մինչեւ 1895 Թուականի Վերջերը*, Երեւան, Հ.Յ.Դ. Հրատ., 2006:
Սամուէլ Կարապետեան, *Թիֆլիսի Քաղաքագլուխները*, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն», 2003, 119 էջ:
Կամիլա, *Բառահանդէս*, Երեւան, Ամարաս, 2007, 154 էջ:
Եոսէֆ Կարստ, *Կիլիկեան Հայերէնի Պատմական Քերականութիւն*, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., 2002, 410 էջ:
Սարգիս Կիրակոսեան, *Այս է Մարմին Իմ*, Պէյրութ, Համազգայինի «Վահէ Սէթեան» Տպարան, 2004, 159 էջ:
Սարգիս Կիրակոսեան, *Հայ Լեզուն՝ Աղբիւր Յաւերժութեան*, Անթիլիաս, Կաթողիկոսութիւն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 2007, 134 էջ:
Ուաշինկթըն Կլետըն, *Կեանքի Դպրոցը*, Կոստանդնուպոլիս, Յ. Մատթէոսեան, 1921, 34 էջ:
Կոմիտաս Վարդապետ, *Ուսումնասիրութիւններ եւ Յօդուածներ Գիրք Ա.*, Երեւան, Սարգիս Խաչենց, 2005, 517 էջ:
Կոմիտաս Վարդապետ, *Ուսումնասիրութիւններ եւ Յօդուածներ Գիրք Բ*, Երեւան, Սարգիս Խաչենց, 2007, 574 էջ:
Ճորճ Կորտըն, *Երրորդութիւնը Մարդկութեան Հիմք*, Կոստանդնուպոլիս, 1921, 32 էջ:
Ճորճ Կորտըն, *Յննդեան Երկիր*, Կոստանդնուպոլիս, Յ. Մատթէոսեան, 1921, 14 էջ:
Կր. Ուիլֆրէտ Կրենֆէլ, *Մարդու Մը Հաւատքը*, Կ. Պոլիս, Յ. Մատթէոսեան, 1922, 56 էջ:
Հայ Թատրոնի Ընկերակցութիւն, *Մէկ Արար. Հատ. 1*, Փարիզ/Երեւան, Հայ Թատրոնի Ընկերակցութիւն, 2001, 303 էջ:

Հայ Թատրոնի Ընկերակցութիւն, *Մէկ Արար, Հտր. 2*, Փարիզ/Երեւան, Հայ Թատրոնի Ընկերակցութիւն, 2001, 343 էջ:
Հայ Թատրոնի Ընկերակցութիւն, *Մէկ Արար, Հտր. 3*, Փարիզ/Երեւան, Հայ Թատրոնի Ընկերակցութիւն, 2003, 375 էջ:
Պետրոս Հաճեան, *Կարկեմիշ*, Հալէպ, Կիլիկիա, 2005, 227 էջ:
Պետրոս Հաճեան, *Հարաւը Սփիւռքի Մէջ*, Հալէպ, Կիլիկիա, 2008, 527 էջ:
Համաստեղ, *Մոռցուած Էջեր Հտր. Դ.*, Երեւան, Երեւանի Պետական Համալսարան, 2007, 348 էջ:
Միսաք Հայկենց, *Անուրջ Գետին Կամուրջները*, Մայրենի Փրէս, 2007, 103 էջ:
Մեսրոպ Հայունի, *Գերապայծառ Դոկտ. Հայր Սահակ Եպիսկոպոս Կոզեան*, Ճիւնի/Այնճար, Մոտեռն Քրէյմ, 2008, 687 էջ:
Վաւոիմիր Հայրապետեան, *Նորագոյն Գտակարան*, Երեւան, Առագաստ, 1992, 78 էջ:
Ռոպէր Հատտէճեան, *Ուղեւորութիւն՝ Դէպի Միասնութիւն եւ Կարօտ. Թարգմանչաց Տօն Մը՝ Թեհրանահայութեան Համար*, Իսթանպուլ, Մարմարա-Մուրատ Օֆսէթ, 2006, 223 էջ:
Ռոպէր Հատտէճեան, *Ինչե՞ր Տեսանք, Ինչե՞ր Լսեցինք*, Իսթանպուլ, Մուրատ Օֆսէթ, 2007, 302 էջ:
